



This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at <http://books.google.com/>

WIDENER LIBRARY




HX 7UVC 1

OL 41905.52



HARVARD
COLLEGE
LIBRARY



ԾԱՂԿԱՔԱՂ ՀԱՏՈՒԱԾՔ

ՅՕՏԱՐԱԶԳԻ ՄԱՏԵՆԱԳՐԱՑ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

ՄԻԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆԻՑ



ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ



Ք Ե Ր Դ Ո Ւ Ա Ծ Ք



ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍՍ ՂԱԶԱՐՈՒ

1883

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Քանզի կարևոր պէտք են համբակաց և յուսումն գրագիտութեան վարժիլ սիրողաց՝ ընդելանալ ընդ հանճարեղ և չքնաղ գրութիւնս բանահիւսից և բազմազան քերթութեանց, որովք ճոխացեալ են մատենագրութիւնք ազգաց՝ հնոց և արդեաց, ծաղկաքաղ առնելով 'ի նոցուն տամք 'ի լոյս զառաջիկայս, ուչ եղեալ կրկին և նորանոր խնամովք զպատրաստեալն 'ի բազում ամաց հետէ գրեա թէ բովանդակապէս նորաճոյլ յօրինել:

Եւ արդ նախընտիր արարեալ եղաք 'ի սմա փոքր 'ի շատէ հատուածս զանազան ոճոյ և տեսակի բանաստեղծականին, քաղեալ մանաւանդ բազում ինչ յիմաստալից քերթութեանցն Հովմերի, Վիրգիլեայ, Սոփոկլի, Ռասինի, Միլտոնի, Սլփիերեայ և այլոց. որոց սքանչելի թարգմանութիւնք արդիւնք են քաջ և ճարտար գրչաց նորոյս Բագրատունւոյ և Գերպ.

Եդուարդայ Հիւրմիւզ, գերագոյն վարժապետաց
յաւուրս մեր արուեստի տաղաչափութեան, և ճըշ-
գրիտ և հայկաբան թարգմանութեանց:

Առ այսոքիւք ծանուցանեմք զի և զհամառօտա-
գոյնն սորին խորհեցաք յառանձինն ընծայել 'ի լոյս
յառձեռն 'ի գիւրութիւն նախնական վարժոցաց,
ստուար յոյժ համարեալ վասն նոցա զառաջիկայս:

Իցիւ յընթերցումն սոցին սիրավառեալ սիրտք
մերազնեայ պատանեաց, արծարծեսցին և միտք իւ-
րեանց 'ի խանդ ստոյգ գեղեցկին, ըստ օրինակի Ա-
րեմտեայց զարգացելոց, 'ի վսեմագոյնս միշտ նկըր-
տելով և 'ի ճշմարիտ բարգաւաճանս, նահանջեալք
'ի նկնախոհ և 'ի ստորաքարչ ընթերցմանց:

ՀԱՄԱՌՕՏ ԵԱՆՕԹՈՒԹԻՒՆԵՐ

ԶՄԱՏԵՆԱԳՐԱՑ ԾԱՂԿԱՔԱՂԻՍ

ԱԼԵԱՐՏԻ Ալտարոյ. — Եւանգուս բերթող իտալացի. գրեաց երգս
Հայրենասիրականս՝ առ ՚ի վառեւ զոգիս ազգակցացն ՚ի խորհուրդ.
ազատութեան Հայրենեաց: (Մն. 1812 — Մեռ. 1878):

Ալֆիէրի Վլտարոյ. — Գերահռչակ թատրերգակ բերթող իտա-
լացի. հրաշալիք ՚ի բազմաթիւ թատրերգութեանց սորա համա-
բին Սառազ, Մերովլի, Փիլիպպո, Պուլնիլիո, Անտիոնի, Ու-
րբոտի, Աֆիտի: Գրեաց և երգիծաբանութիւնս և զվարս իւր,
և այլն: (1749-1803):

ԱՌՆՈՑ Ափոն: — Թատրերգակ բանաստեղծ և առակախօս գաղ-
ղիացի. անգամ Գաղղիական կաճառոյն: (1766-1834):

ԲԵԴՐԱՐՔԱ Փրանկոն. — Մին ՚ի շորից գլխաւոր բերթողաց և
պարծանաց իտալից. ՚ի բազմաթիւ մատենագրութիւնս սորա
զառաջին տեղի ունին բնարերգական Նոտոֆն և Տաղ էրգեալք
՚ի գովեստ և ՚ի յիշատակ Լաւրա տիկնոջ գաղղիացւոյ: (1504-1574):

ԳՈՌՆԵՑԼ Պարոն. — Գերահռչակ թատրերգակ գաղղիացի, ան-
գամ Գաղղիական կաճառոյն. հրաշահիւք են ՚ի թատրերգու-
թիւնս սորա Սիք, Ուրտիոն, Կլիննա, Պուլիպոն, Պոլիպո. էյնզ
՚ի գաղղիական չափս և զսոկեղինիկ մատենան Նոնոն-Ֆիտան Քրիս-
տոսի. (1606-1684):

ԴԱՍՍՈՑ Դորլոտոյ. — Մին ՚ի շորից գլխաւոր բերթողաց իտա-
լից, դիւցազներգակ. գլուխ գործոց և անմահացուցիչ համբաւոյ
նորա է բերթուածն անուանեալ Երոտոպիժ ազատեալ և հո-
վուերգութիւնն Ափոփոս, և այլն: (1544-1595):

Ը.

ԵՈՒՆԿ ԵԳՈՒՐԳ. — Անուանի քերթող անգղիացի. գլխաւորը ի մասնագրութիւնց սորա են Վլէրլին Գոփոսոսան, և գլուխ գործոց Կորին Գիլլը + Եղերերգութիւնքն: (1681-1765):

ԵՒՐԻՊՏԻՒԵՍ. — Գերահռչակ յոյն սղերբգակ. երեւելք յոյերբգութիւնս սորա են Ալիոս, Մերեա, Հելեթի, Հերալիանտ, իէթիէնի: — (Ն. Ք. 480-407):

ԺԻԼՊԵՐ ՅՈՒԵԻՒ ԼԱՐԻԿԻՆ. — Երգիծարան քերթող գաղղիացի. ՚ի գրութիւնս սորա երեւելք են Դարն Ունիսսանիցորգ, Զոփոսոսանիան իժ, Յոփոսոսանիանտ Սալոսոսո: (1751-1780):

ԼԱՐՈՍ ՎԷԻՄԵՐ ԿԸ. — Կենդանի քերթող գաղղիացի. անգամ Գաղղիական կաճառոյն: Գլխաւոր մասնագրութիւնք սորա են Փոլիս, Տադ և Քիլիսանիանտ, Քիլիսանտ + առփոսանիանտ, Նոսոփիլիսանիանտ, և այլն: (Մն. 1812):

ԼԱՄԱՐՏԻՆ ԱՎԻՆՈՍ. — Գերազանց եղերբգակ և քնարերգակ գաղղիացի, և պատմաբան: Հռչակապանն ՚ի մասնագրութիւնս սորա են Քիլիսանիանտ իորհրդանիանտ, Քիլիսանիանտ և Կրոնիանտ Գաղղիանիանտ, Չանպարհորհրդանիանտ յԱրիսի, Պոփոսոսանիանտ Ժիլիսանիանտ, Ուսոսոսանիանտ Գրոնիանիանտ: (1790-1869):

ԼԱՅՈՒԹ ԵՆ ՅՈՒՄԱՆԻՆ ԿԸ. — Աշխարհահռչակ առակախօս գաղղիացի, մին ՚ի պարծանաց Լուգոլիկեան գարուն, անգամ Գաղղիական կաճառոյն: (1621-1695):

ԼԵՄԻԵՐ ԱՆԿԱՆ. — Թարբերգակ գաղղիացի: Երեւելք յոյերբգութիւնս սորա են իոլիսիցորգ, Գոլիսի Թիլ, Արիլ Մոլպոփոց: (1721-1793):

ԼԵՎԱՎԱՍԵՐ ՊԵՆՆԱՐԻՆ ՅԻՆԱՆԻ. — Քերթող Գաղղիացի: ի մասնագրութիւնս սորա ընտիր Ե Գիլիս Յոլիսոյ յեղեալ ՚ի չափս գաղղիականս: (1785-1830):

ԿԵԹԵ ՅՈՒՄԱՆԻՆ ՎՈՒՍԻՆԻ. — Հանճար մեծ և գլուխ քերթողաց Գերմանիոյ, Թարբերգակ, եղերբգակ, և անուանի բնագետ: Յանթիլ մասնագրութեանց սորա հրաշահիւս են Թարբերգութիւնքն Փոսոսոս, իէթիէնի ՚ի Տոսիս, գիլիսանիանտիւնն Հիլիսան և Տոսիս, և ամենայն բնագիտական գրութիւնքն: (1749-1852):

ԿՈՂՄԻԹ ՕԼԻՒԷՐ. — Գրիչ անգղիացի: Ընտիրք են ՚ի գրութիւնս սորա Գիլիս անոյի, Հոնիլիանտ պոփոսոսանիանտ, Պոփոսոսանիանտ Յոլիսոս, Պոփոսոսանիանտ Անիլիոց (1728-1774):

ԿՐՈՍՍԻ Թովմա. — Սրտասուչ քերթող և վեպասան խաւացի: Գլուխ գործոց սորա է Մարիս Վլոփոփէ գեղեցիկ վեպասանութիւն: (1791-1853):

ՀԱՏՆԷ Հիւրիլո. — Անուանի բանասեր Հրեայ, ծնեալ 'ի Գերմանիա: Ընտիրք են 'ի գրութիւնս սորա Լիտեր կամ Տաղտ անուանեալ քերթուածքն: (1797-1856):

ՀԻՒԿՈՑ Վլիտոր. — Հաշականուն կենդանի բանաստեղծ գաղղիացի, անդամ Գաղղիական կաճառոյն: Երեւելք են 'ի մատենագրութիւնս սորա Տերևտ անայիտ, Պարս, Երէթն արևմտից, և այլն: Են սորա և բազում արձակ վեպք, այլ բազում ինչ գոյ 'ի նոսա ընդդէմ կրօնից: (Մե. 1802):

ՀՈՄԵՐՈՊ. — Տիեզերահաշակ քերթողհայր յոյն, անմահացեալ իւրեան և Որդեան կրկին քերթուածովքն: (Ն. Բ. 900):

ՄԱՆԱՐԱ Բլոփերոյ. — Քերթող խաւացի. Թարգմանեաց յիտալական շափս զՀովտերիֆոփիւնս և զՄլախանս Վիրգիլեայ: (1714-1800):

ՄԱՆՑՈՆԻ Ալիտանոր. — Հաշականուն վեպասան և Թատրերգակ և քնարերգակ քերթող խաւացի: Գեղեցիկ է յոյժ պատմական վեպասանութիւն սորա Խոսիցիլոն. և Արելի, Մարիոյ Ֆալիերոյ Թատրերգութիւնքն, և Տաղն արձակովտ, և ասղն 'ի Հիւրիլո Մոյիտ: (1784-1875):

ՄԵԹԱՍԹԱՋԻՈՑ Պարո. — Թատրերգակ խաւացի: Երեւելք են յոյ քերգութիւնս սորա Որիլի Էփերիտի, Հոփոնլո, Ալիտանորի Հոփիլո, և այլն: (1698-1782):

ՄԻԼՎՈՒԱ Կարոլո. — Եղերերգակ քերթող գաղղիացի: Անուանիք են 'ի գրութիւնս սորա Երջանիլոփիւն Կրիլոլի, Ճանապարհորդն, Մահ Հոգորոսոյ, Ժանտան Մարիլիոյ, Անիոն տերևոյ, և այլն: (1782-1816):

ՄԻՏՈՆ Յովանի. — Ալիտահաշակ գիւցազներգակ անգղացի. յօրինեաց զհրաշալի քերթուածն Կարոսոյ Գրափոփէ՝ գլուխ գործոց իւրոց: (1608-1674):

ՄԻՏՈՑ Յովեփ. — Պատմաբան և բանաստեղծ գաղղիացի, անդամ Գաղղիական կաճառոյն: Ի մատենագրութիւնս սորա երեւելք են. Պարտափիւն խոսրափիւն Միլորոյ ('ի Հոփիլո), և Պարտափիւն Խալիլոց: (1767-1839):

ՄՈՆԹԻ ՎԻՆՅԵՅՅՅ. — Հռչակաւոր քերթող խտաւացի: Հրաշալի է 'ի մատենագրութիւնս սորա խաւերէն թարգմանութիւն իլիակա- նին Հոմերի, և յողբերգութիւնսն՝ Սքիտոպեթ, և այլն: (1734-1828):

ՇԻԼԿԻՐ ՓԵՐԳԵՐԷԻՍ. — Աշխարհահռչակ թատերգակ քերթող և պատմարան գերմանացի: Երևելիք են 'ի մատենագրութեանցն Ճառ- յաղթոս Կիլերալան պարմա-նեան, Պարմա-նեան երեւոմոյ պարբազմին: Ի թատերգութիւնսն հրաշահուք են Մարգա- ողան, Տծն Քարլոս, Վալլենլեյն, Մարիա Սարաաբո, Գուլեիլմ թել: (1759-1803):

ՈՎԻԴԻՈՍ ՆՊՈՆ. — Հանճարեղ քերթող հռովմայեցի. երևելի են յոյժ Այլաբանութիւնս սորա: (Ն. Ք. 42-18):

ՈՐԱՏԻՈՍ ՓԼԱԿՈՆ. — Մեծանուն քերթող հռովմայեցի: Հրաշալի են 'ի մատենագրութիւնս սորա Արհոս Կերթուլան, Երէտ և Եր- փեթաբանութիւնս: (Ն. Ք. 64-7):

ՈՒԻԼԼԻՍ ՆՊՈՆՅԵԼ Բարտե. — Քերթող ամերիկացի, ծնեալ 'ի Միացեալ-Նահանգս: Նշանաւոր է 'ի գրութիւնս սորա Ժամալա- մառութիւնս և անապահարգութեանց: (1807-1835):

ՊԱՅՐՆ ԳԻՐԵՔ ԿՐԵՐՆ ԼԵՐԿ. — Անուանի քերթող անգղիացի. գլուխ գործոց սորա է Ճանապարհորդութիւն Զայլ- Հարսլոս ասպտի: (1788-1824):

ՊԱՐԹԵԼՏՄԻ ՅՈՒՏ. ՅՈՒՐՈՆ. — Պատմարան և հնագէտ գաղղիացի: Գլուխ գործոց սորա է Ուղեւորութիւն իրերոյն Առտարեսոյ: (1716-1795):

ՊԱՐՈՅ ՅՈՒՐՈՆ ՎԱԼԷՐ ԿԵ. — Հռչակաւոր եպիկուրեան, որ ուր ու- բեմն գարձեալ 'ի զգաստութիւն 'ի վտանգի մահուն յօրինեաց զզղձական նուագն՝ զոր եղաք 'ի Մազկարագիտ: (1608-1675):

ՊԱՐՊԻԵՐԻ ՅՈՒՏԵՔ. — Քերթող խտաւացի. 'ի գրութիւնս սորա երևե- լիք են Ելանալիս, Նոմալանի և Քառասներորդան ճառս: (1783-1852):

ՊԻՆԿՍՄՈՆԻ ՀԻՎՊՐԷՐ. — Անուանի քերթող խտաւացի: Նշանաւոր են 'ի մատենագրութեանցն, Գերեզմանն և Արմինոս ողբերգու- թիւնն, և գերազանց թարգմանութիւն Որթալանին Հոմերի յի- տաւական շափս: (1753-1828):

ՊՐԱՅԵՆԻ ՈՒԼԼԷՐ. — Քերթող ամերիկացի. գրեաց հասակաւոր

երգս, յորս նշանաւորք են Մարգարէտին, Հողմ երկոյն, Մահ ծաղանց, և այլն: (1794-1878):

ՌԱՍԻՆ Յովհաննէս. — Աշխարհահաշտակ թատրերգակ գաղղիացի, անգամ Գաղղիական կաճառոյն: Ի հրաշահիւս թատրերգութիւնն զլուի գործոց համարին Գովնուէտ, Պայելէտ, Բրէտանէի, Իֆէֆէի, Միհրդատ, Փերբա, Անդրոմատ: (1639-1699):

ՌԱՍԻՆ Լուդուիկոս. — Հաշակաւոր քերթող գաղղիացի, որդի վերնոյն: Գլուի գործոց սորա է Երէ 'ի կրօն, քերթուած հրաշահիւս արդարեւ: (1692-1763):

ՌԸՊՈՒԼ Յովհաննէս. — Քերթող գաղղիացի. գրեաց հատակոտոր երգս, յորս գեղեցկագոյնք են Հրէշտախ և Ճանկի, Ողբաձայնաւ սա Քրիստոս, Կանխիզն Բիլբրոյ, և այլն: (1796-1860):

ՍԵՍԻԻՆԻ Բարդուղէմոս. — Քերթող իտալացի: Գեղեցիկ և շնորհալից է Փիտանուանեալ վիպասանական պատմութիւնն, և կրկին թատրերգութիւնքն Գոմիտոյ տի Մանֆրէի, Յաղթանակ Ս. Ռուզոյ: (1792-1822):

ՍՈՒՄԷ Ալտիսիմո. — Նշանաւոր քերթող գաղղիացի. անգամ Գաղղիական կաճառոյն: Անուանի է յամենայն գրութեանց սորա երգն 'ի վերայ Անհատոսութան, և թատրերգութիւնքն Սառու, Կլիտիսիտա, Կլիտոպա, Յովհաննա Տ'Արտ, Ելիսիէի Փրանկոյ: Ունի է քերթուած մի անուանեալ Քրիստոս ստոստայն: (1788-1843):

ՍՈՓՈՎԼԵՍ. — Գերահաշտակ թատրերգակ յոյն: Հրաշալիք են 'ի թատրերգութիւնս սորա Իդիլոս Լաֆաոր, Անտիպան, Էլիտրա, Իդիլոս 'ի Կրօն և այլն: (Ն. Ք. 498-405):

ՎԻՐԳԻԼԻՈՍ Պոլլիո Մարն. — Աշխարհահաշտակ դիւցազներգակ, հովուերգակ, քերթողահայր հռովմայեցի, անմահացեալ երբեակ մասնիւքն Ենեալան, Մլախան, Հովուերգալան: (Ն Ք. 70-19):

ՎՈՂԴԻՆ Փրանկոն Արոն. — Գերահաշտակ թատրերգակ քերթող, իմաստասեր, պատմարան գաղղիացի, զլուի աստուածեան աղանդաւորաց: Ի բազմաթիւ մասնապրութեանց սորա հաշակեալք են յոյժ Հանրալան դիւցազներգութիւնն, Պատմալան Կարլոնի ժԲ, Դարն Լուդուիկոս ժԳ, և 'ի թատրերգութիւնն Ջայլա, Ալլէրա, Միհիտ, Մերովի. 'ի վերջնս յայտոսի միայն չք բնչ ընդդէմ կրօնից: (1694-1778):

ՏԱՆՌԷ ԱԼԻՔԵՐԷ — Ալեաբազազաչակ քերթողհայր խառնացի, գլուխ գրականական պարծանաց խառնայ: Ի բազմաթիւ մասերնազրութիւնան գլուխ գործաց և անմահացողիչ համբաւոց նորա և կարալիբոնիւն ասրոսանայն: (1265 - 1324):

ՏԵՆԱ ՌԻՒՐԻ ՀԻՆՐԻՆԱ — Քերթող ամբրիկացի. գրեաց հասակասոր երգս, յորո նշանաւորք են Անմահոնիւն, Արտան օրհասան, և այլն: (1787-1830?):

ՏԵՇԱՆ ԱՆՏՈՒՆ — Քերթող գաղղիացի. թարգմանեաց զԱսրոսանայն կարալիբոնիւնն Տանգէր, գրեաց և երգիծաբանութիւնս, և այլն: (1800 — ?):

ՏԸԼԻԼ ՅԱՒԵ — Անուանի քերթող գաղղիացի. թարգմանեաց ըզ-Միլան և զՎերդիլ: գրեաց զԲարասրան: (1738-1813):

ՓԵՆՐՈՍ ՅԱՒԻՆԱ — Հաչակաւոր առակախօս հոովմայեցի, ազատագիր Մեծին Օգոստոսի:

ՓԻՆՅՕԹԹԻ ԼՊՐԻՆԻՒՆԱ — Զուարթամիտ առակախօս խառնացի: (1759-1812):

ՔՈՒԼՈՎ ԻՄԱՆ — Հաչակաւոր առակախօս ռուս: (1768-1844):

ՔՍԱՎԻԷ ՏԸ ՄԵՍՐԻՆ — Նշանաւոր բանասէր գաղղիացի: Հաչակաւոր են ի մասեանազրութիւնս սորա Շրջագոյնիւն զԻնիլատիմ, Գերէի կովտոս, Օրիորդի Սիպրիոյ, Բորդի Աստուայ: (1764-1852):

ՖԼՈՐԻԱՆ ՊԵՐՏՈՒ ՔԻՐԻՆ ԿԸ — Անուանի առակախօս գաղղիացի: (1755-1794):

ԾԱՂԿԱՔԱՂ ՀԱՏՈՒԱԾՔ

ՅՕՏԱՐԱԶԳԻ ՄԱՏԵՆԱԳՐԱՑ

ԲԱՆՍՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

ԳԱՏՈՒԷՐԳ ԱՌ ԱՅՍ

Գորով թիւնս այս մտաց գեղափայլ՝ առաւել քան յիրականն՝ պարապէ ի կարելին, որոյ ընդարձակագոյն են սահմանք քան զիրականին. և քան զկարելին ևս նախամեծար առնէ յաճախ զկեղծիս, որոց չիք սահման:

Բարբառ նորա բնակեցուցանէ զանապատս, կենդանացուցանէ զանզգայագոյնս յէից, փոփոխէ այլ յայլմէ ըզհանգամանս և զգոյնս՝ որովք զանազանին, և կուռ զհետ մի մեանց այլակերպութեամբք՝ ձգէ զմեզ ի կայս կախարդաց՝ յաշխարհն մտացածին, ուր քերթողք մուացեալ զերկիր, մուացեալ զանձինս՝ ընդ իմանալիս և եթ գերակայս հազորոք գտանին:

Անդ զաազս իւրեանց ի բուրաստանաց մուսայիցն ծաղկաքաղ առնեն, և վտակք խաղաղաւէտք մատուցանեն նոցա ուլիս կաթին և մեղու, և Ապոլոն իջանէ յերկնից՝ աւանգել նոցա զքնար իւր, և յանկարծակի շուշ աստուածային Ղիջուցեալ զլոյս մտաց նոցա՝ արկանէ զնոսա ի ցնորս սաստիկս, և բռնադատէ խօսել ի բարբառ գիւցական՝ որոյ այնուհետև գործարան և եթ գտանին ինքեանք:

Այլ են ի նոսա վարեալք ի խանդից, որ աստուածային կոչի կամ աւիւն քերթողական: Եսքիւ, Պինդարե այլք առհասարակ ի քերթողաց մերոց երեւելիք այնու հրոյն վառէին, որ և ի դիրս նոցա փայլէ անդ: Եւ զի՞ զնոցանէ ասեմ. Իեմնսթենէս ի բեմիւ աննշանաւորք ոմանք յակումբս՝ ցուցանեն զայն հանապազ: Եւ գու ինքն նկարագրել կամիցիս զբռնութիւն և զաղէտս, որք ի ծայրագոյն սաստկութեան ոչ ևս բերեն յիւրեանս զնշմարանս ազատութեան. բոց ի շրթանց և յաչաց քոց հատանիցի, և ցոլք բանիցքոց զկատաղութեան կամ զզառանցանաց բերցեն զնմանութիւն: Անդ գու ոչ ինչ աւելի քան զբռնութեան բերես բարբառ:

Հուրս այս, որում պարտն է կենդանացուցանել զամենայն արգասիս մտաց, արծարծանի ի բանաստեղծութեան առաւել կամ նուազ սաստկութեամբ՝ ըստ պահանջելոյ իմաստիցն առաւել կամ նուազ քան զարժանն. և ըստ առաւել կամ նուազ վսեմութեան հանձարոյ քերթողին՝ որ բնաւորութեան կրիցն պատշաճիցի, և տպաւորագոյն ըզգացման՝ որ յանկարծ ի սիրտ նորա զարթուցեալ, և անդէն ի մերս ազդիցի:

Այլ ոչ միշտ երկոքին բարեմասնութիւնքս այսոքիկ՝ պատահեն ի միասին: Տեսի ես քերթող զոմն սիրակուսացի, զի ոչ երբեք տուզս յոյնպիսի գեղեցիկս յօրինէր, որպէս յորժամ խտնդք սաստիկք զառանցուցանէին զնա:

Բանաստեղծութեան՝ գնացք և բարբառ առանձինն է: Ի գիւցազներգութեան և յողբերգութեան՝ յանդիման առնէ նա արութիւն ինչ քաջոյաղթ՝ կապակցելով ըստ հաճոյից զմանունս նորա, փոփոխելով զծանօթ հանգամանսն և յաւելլով առաւել հոգեշարժս, և պայծառացուցանելով զայնոսիկ մերթ գրուագօք, զարմանալեօք, և մերթ բազմայեղանակ ասացուածոյն վայելչութեամբ, կամ գեղով իմաստիցն և ազգեցութեանց: Բազում այն է, զի վէպքն՝ տյսինքն է ելանակ յօրինուածոյ գործողութեան՝ առաւել աշխատ առնէ զքերթողն և յաճախէ նմա փառս՝ քան ըզյօրինուած տաղիցն:

Այլոց ազգի ազգի բանաստեղծութեանց կազմութիւն ոչ այնչափ տաժանելի է քերթողին. սակայն պարտ է նմա

գիւտս իմն ամենայն ուրիք յանդիման առնել, և նորապէս կեղծեօք կենդանացուցանել զամենայն՝ զորմէ բուռն հարկանէ. զքերթութիւն բոցոյ իւրոյ ազգել ի մեզ, և յուշի ունել հանապազ՝ զի որպէս Սիմոնիգէս սսէ. Քերթութիւն՝ է նկար խօսուոն, և նկար՝ է քերթութիւն համր: Բանաստեղծութեան, որպէս ասացի, է լիզու առանձինն: Ի բաժանել քերթութեան և շարագրածոյ յիւրեանս զբարբառ, բաժին ել նմա՝ երևել միշտ ի ճոխ կամ յընտիր պաճուճանս, և աւանդեցան նմա ամենայն երփն երփն երանգոց էից, հարկ ի վերայ եդեալ վարել նոքօք անխափան, և ի զեղծանելն նոքօք՝ գոլ անըստգիւտ:

Արկ նա ընդ իշխանութեամբ իւրով զբազմութիւն յոյժ բառից, որ արգելեալ են շարագրածոյ, և զյուզմս ևս ի բառից երբեմն ձգտէ իջրև զերկարս և երբեմն զսպէ իջրև զսուզս՝ յաւելմամբ կամ բարձմամբ տառից կամ վանկից: Իշխանութիւն է նմա և նորս ստեղծելոյ, և ազատութիւն պահեալ նմա ի կիր արկանելոյ զխափանեալս, կամ որ յօտար գաւառս ուրեք վարին, համանշանակս զբազումս գործելոյ, և նորածն իմն դասակարգելոյ զսոսա, և վարելոյ ամենայն համարձակութեամբ՝ որովք քերթողականն պերճախօսութիւն զանազանի ի հասարակաց բարբառոյ:

Իիւրութեանցն շնորհելոց հանձարոյ՝ հազորգին և նուագարանք առ հասարակ, որ օգնեն նմա: Աստի տաղիցն այլափոխութիւնք, ազգի ազգի զանազանեալք ի բնէ ի տիպս կերպարանացն: Քանզի դիւցազնականն չափ ոտին՝ ահաւոր իմն ձեռով և մեծավայելուչ ճեմի, և սահմանեցաւ այն յերգս վիպասանականս. մեծավերջն ի ճահ պտտահէ խօսից, և թատերականն քերթութիւն վարի նովաւ: Իսկ այլք ի չափուց պաշաճին ի պարերգութիւնս, և վարին անաշխատ ի տաղս և յօրհնութիւնս:

Այսու օրինակաւ յաճախեցին քերթողք զհնարս ախորժելի առնելոյ զերգսն:

ՊԱՐԹԵԼԸՄԻ

ՅԱՂԱԳՍ ԳԵՐԹՈՂԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՑԻ

Նըկարաց և քերթողաց յոր ինչ և գամ մի կամ իցե
 Եղև միշտ հասարակ համարձակել իշխանութիւն: —
 Գիտեմք իսկ, և ըզգոյն հայցեմք և տամք միմեանց օձան.
 Այլ ոչ թէ անհամարյրք զի խառնեսցին ընդ համբուրից,
 Ոչ զինգ հաւս օձք զուգեսցին և ոչ գառինք ընդ վագերաց:
 Վեհից ինչ ըսկըզբանց և մեծամեծս յանձն առելոց
 Մի և միւս ծըւէնք կըցի սակալ ծիրանի մեծապայծառ
 Մինչ անտառն և բագին նըկարագրի անահաական
 Եւ ընդ մարգ ծաղկազըւարձ ոլորտապտոյտ զեւուռն վրտակ
 Կամ թէ գեարն Հուհնոս և կամ աղեղն անձրևածին:
 Լիցի աղէ զոր կամիս՝ եթէ միայն պարզ ինչ և մի: ...
 Բարուոյն կերպարանօք պատրիմք բազումք ի քերթողաց.
 Ի հակիրճըն նըկըրտեալ՝ լինիմ մըթին խըրթնածածուկ.
 Որ ի նուրբըս գընէ գէմ՝ ջիլք և ոգիքըն լըբանին,
 Պերձագունից դաւանեալն այանու փըլմամբ փըքոցուուոյց,
 Սողինգ երկիր յոյժ անքոյթն և երկիւզածն ի մըրըրկէ:
 Որ հրաշիւքն ըղձանայ փոփոխել զիրըն միաբուն,
 Գըլփին ի մայրիս կենդանագրէ՝ յալիս վարազ:
 Անարուեստ փախուստ մեղաց յայլ իձն ածէ մոլորութիւն:
 Վերջինըն ճարտարաց առ եմիլեանն հանգիսարան
 Զեզընգունս և ըզգիրգ հերս ի պըղընձին ճըլքըրտեսցէ,
 Ի կատար գործոյն յեանեալ՝ թէ չգիտիցէ զքոլորն ածել: ...
 Աւէք, բանահիւսք, ուժոյ ձերուժ նիւթ ի կըլիւ,
 Քըննելով ի ձիգ իմուսքդ իցեն բերող, իմ հեստ ըմբոստ:
 Ում ըստ կարի իւր ի գէպ՝ իրն ընարեսցի ուշի ուշով,
 Ոչ բանից յորդ աղբիւր՝ ոչ կարգ յըստակ պակասեսցէ:
 Կարգին, եթէ չխաբիմ, այս ընարութիւն է և շընորհ,
 Զի զոր աստ այժմէ ասել՝ այժմ ասասցէ զայն աստանօր,
 Բազում ինչ յամեցուցեալ՝ յառաջիկայն թողցէ պատեհ.
 Զայս սիրեալ՝ զայն հերքեսցէ աւետաւոր տաղիցք քերթող: ...
 Զպայմանեալ յեղանակս և զքերթածաց պահել զերանգս
 Թէ չկարեմ կամ թէ չգիտեմ՝ ընդէր քերթող ես ողջունիմ:
 Հիմ ընարեմ թիւր ամօթով անգիտանալ քան ուսանել:

Կատակաց իրք չառնուն յանձն ոգեւ տաղիւք ողբերգական .
 Բայց սակայն ամբառնայ և կատակերգ երբեմն ըզձայն
 Եւ ուռուցիկ բերանով կազի Քրեմէս ծանրացասունն .
 Եւ հեռակի մընչէ բանիւ բազում անգամ ողբերգակ :
 Պելէոս և Տելեփոս վրտարանգին և տառապեալ
 Մերժեն երկոքեան ըզփուք և զբարըս կանգնաւորս ,
 Թէ փոյթ վայիւքն առնիցեն շարժել ըզսիրտ ըստարանին :
 Քերթածաց չէ բաւական գեղեցիկութիւն , լիցին քաղցունք ,
 Եւ զոգի ունկընդրին յո և կամին առեալ ամցեն : [կան .
 Զերդ խընգան ընդ խընգացող՝նոյն ընդ լացող լան գէմք մարդ .
 Արտօսր յինէն թէ խընդրես՝ նախ քեզ վայեալ է սուգ ունեւ .
 Յայնժամ քոյգ աղէտք հարցեն զիս Պելէաս գու կամ Տելեփէ .
 Զանկարդ անձահ թէ խօսիս՝ ծիծաղեցայց կամ նիրհեցից :
 Թաղծադիմին՝ դէպ են սըխուր , սըրտմըտեկոյ՝ սպառնալից
 [ձայնք ,

Խայտացելում՝ ցընծալի , ծանրաբանին՝ լուրջ և ըզգօն :
 Զի բնութիւն նախ ընդուստ առ ամենայն բախտի պայման
 Յերիւրեալ ըզմեզ բերկրէ , կամ թէ դըրդէ ի բարկութիւն ,
 Կամ յերկիր ծանրութախիծ սըգով հակէ տառապագին ,
 Ապա լեզուին թարգմանաւ ըզկիրս հոգւոյն բերէ ի դուրս :...
 Խըտիւր մեծ է թէ սարուկ և թէ դիւցալն զք խօսիցի ,
 Մեր հասուն , թէ՛ ծաղկափթիթ ախօք աշխոյժ երիտասարդ ,
 Եւ տիկին տիրուհի , եթէ գայեակ ոք ժըրագլուխ ,
 Թանգար աստանդական , թէ բուսաբեր անգոյ մըշակ ,
 Ասորի , եգերացի , յԱրգոս սընեալ թէ ի Թեբէ : [Թող .

Կամ համբաւոյն հետեւեա կամ թէ պատեհս յօդեա , քեր .
 ԶԱքիլէսըն փառացի եթէ յատեան երբէք հանես ,
 Անվհհէր , բարկասիրտ և ամեհի և անողոք՝
 Ոչ օրէնս իւր գիտիցէ , յոյս զամենայն գիցէ յիւր զէն :
 Մեզէ լիցի անողորմ և աննըկուն , ինով ողբարկ ,
 Նենգաւոր Իքսիոն , Յով թափառոտ , տըրտում Որեսա :
 Թէ անփորձ և անսովոր ինչ ընծայես ի տեսարան ,
 Եւ դէմս ինչ նորագիւտ կերպարանեւ համարձակիս ,
 Նոյն նըման պահեսցի միշտ՝ ի սկըղբանէ ցըկատարած :
 Դըժուարին զհասարակացն է տիրապէս ստեղծաբանեւ .
 Լաւ իցէ զիւրեականն արկանեւ քեզ տազս ի հանդէս ,

Քան անըուրս ի մէջ բերել և անծանօթս յառաջագոյն :
 Որ ինչ նիւթ աշխարհալիք՝ քեզ սեփական ինչ եղիցի ,
 Յարհամարհ ի բացերև գու սահմանին թէ կացցես ոչ ,
 Ոչ թարգման հարազատ բառ ընդ բառի փոխել առցես ,
 Ոչ ի կիրթ նրմանուծեան վարեալ անկցիս յանձուկ ուրեք ,
 Ուստի ելս ոչ ներեացեն ամօթ և կամ գործոյն օրէնք :
 Մի որպէս պարբերական քերթողն երբեմն ըսկըսանիր .
 « ԸջՊրիամոնն երգեցից բախտ և զմեծապանձ ճակատաւ
 [մարտ] :

Ձինչ պարծօզդ այգ արժանի այգքան պոռոտ բերցէ գոչման .
 Ճըչեացեն լերինք յերկունս և ծընցի մուկըն ծաղրալից :
 Քանի՞ն վայելուչ ևս այն որ ոչ ինչ նիւթեալ անդէպ .
 « Զայրն ասա , Մուսա , ինձ՝ որ յետ աւուրց առման Տրովայ
 Ըզբազուժ որերոյ ետեն ըզբարս և ըզբաղաք » :
 Ոչ ծուխ ի փայլականց , այլ ի ծըխոյ հնարի տալ լոյս .
 Ձի սքանչելիս զարմազան բերցէ ի վեր այնուհետե ,
 ԶԱնտիփատն և զըՍիլլայն ընդ Կիկլոպայ և զՔարիբգիս :
 Ոչ ըզգարձ Դիոմիդեայ ի մահուանէն Մելէագրի ,
 Ոչ ըզմարտն տրովական ի յերկուորեակ ձըւոց հինու :
 Միշա ի կէան իւր փուծացեալ և զունկընդիրն յափըշտահէ
 Ի խուան անդ իրացն ի մէջ՝ ոչ ինչ ընդհատ իբր ի յայանիտ :
 Զոր չյուսայն յօրինուածով դեղեցկանալ թողու ի բաց .
 Եւ այնպէս իմըն սրեւ՝ պատիրս ի ստոյգըն խառնելով ,
 Ձի ոչ մէջն ըսկըզբան՝ ոչ միջոյն վերջն օտար գըտցի : ...
 Կամ գործին իբք ի թատերս և կամ եզեալք վիպասանին :
 Թուլագոյն շարժեն զոգիս որ ընդ ականջսն անցանեն
 Քան որ դընինն ինքնագէժ հաւատարիժ աչաց հանդէպ ,
 Եւ անձամբ հանգիսատեսն անձին իւրում աւանդէ զայն :
 Սակայն մի զարժանն ի ներքս անդ գործելոյ՝ տար ի տեսիլ .
 Եւ բարձեալ շատ ինչ յաչաց՝ պերճ ապա բան պատմեսցէ

[յայտ :

Մի զմանկունսն ակն յանդիման ժողովրդեան ըսպանցէ
 [Մեդէ ,

Յայտնապէս Ատրևս ժըպիրհ մարդկան ընդերս եփիսցէ մի ,
 Կամ դարձցի Պրոկնէ ի հաւ կամ թէ Կագմոս ի վիշապ օձ :
 Զոր այսպէսն ինչ ցուցանես՝ անհաւատեալ և տտեամիսկ : ...

Որ ընդ անարգ նոխազին ողբերգական տաղիւ մարտեաւ,
 Հուանեաց ըզկնի ուրեմն և զայժամարդսն վայրենիս,
 Եւ անվըթար ծանրութեամբն խրատակրօն էառ խաղալ:
 Զի յախորժ նորութիւն զքօսեցուսցէ և ի հրապոյրս
 Զհանդիսատեսն յետ զոհից ըզգինեզէն զապերասան:
 Այլ օրէն ըզմարգապայսն ազալեզուս և զծաղրածուան
 Ընծայել այնպէս իցէ, այնպէս ըզլուրջն ի խաղ շըրջել:
 Զի օր աստուած ոք ի մէջ և որ դիւցազն ոք մատուցի
 Յառաջն յոսկի պայծառ ու ի ծիրանիս արքունական,
 Յաշխարհաւանգս 'ի նըսեմ մի զառածցի նըւաստ բանիւ,
 Կամ յերկրէ ի բաց անցեալ՝ զհողմըս և զամպս ըմբռնեսցէ:
 Թեթևութեան վիժեալ տաղս ողբերգութեան լեալ անպատեհ
 Իբր յաւուրս տօնական հարկաւորեալ բամբին ի խաղ՝
 Այնպէս գոյզն ինչ ամօթխած ի խեղկատակսն խառնեսցի:
 ԶանՊաճոյճ և զտիրական բռնիկ անուանս և զբայս և եթ
 Զաւեշտարար բանահիւս ոչ սիրեցից ես, Պիսոնեանք:
 Յերանգոցն ողբերգական ոչ ճըգնիցիմ ցայն որոշել,
 Մինչ ոչինչ գընել խրաիր՝ Իաւոս իցէ որ խօսիցին,
 Թէ յանդուգըն Պիւթիաս կըթեալ քանքար ի Սիմոնէ,
 Թէ սանական գից Սիլէն դաստիարակ և սպասաւոր:
 Ի յայտնեաց տաղ ըստեղծից՝ զոր ամենայն ոք յուսացի,
 Եւ սակայն ձեռն արկեալ տաժանեսցի զբաշան քըրտամբք:
 Այնչափ է զօրութիւն կարգի բանից և հիստուածոյ,
 Այնչափ յիրս հասարակաց յանկչին շնորհք վայելութեան:
 Ի մայրեաց ելեալ պայք ըզգոյշ կացցեն յիմ դատակնիք,
 Զի մի գուեհկաց ինչ հանգոյն և գոգ մանկանց հրապարակի
 Կամ կարի գողտրիկ տաղիւք լըկնեալ երբէք խենեշասցին,
 Կամ զազիրըս ժայթքեսցեն և լուտանայ խօսք խայտառակ:
 Զի ոյց հայր և ստացուած և երիվար է՝ զայրտնան,
 Ոչ յօր ինչ սիսուան մըրկի կամ ըզնըլին հաճի գընօզ՝
 Ընդունին մըտադիւր և ոչ պըսակըս տան պարգև: ...
 Ոչ ամենայն դատաւոր խըւպոտ տաղից լինի հասու,
 Եւ հռոմ քերթողաց շնորհեալ ներուամն է տարագէպ:
 Իսկ արդ յայդ ինչ ապաստան մոլորիցիմ ըստ քիմն ի գիր,
 Կամ թէ զմեղս ակընյայանի համարեցայց ամենեցուն՝
 Յուսով թողութեան աներկեան և յապահովս:

Ի սոգիւտից ազատ գըտայ, իսկ Կովովեան ոչ արժանի :
 Ի ուր զհելէն տիպարս ի ձեռս ամէք ըզտիւ ամէք գդիշեր :...

Ոչ թողին ինչ անգործ և մերասեր ըստեղծաբանք :

Եւ ոչ փոքր առին պարծանս հարկանելով ձեռն յանձին
 Լըքանել զհելէն շաւիղս և զառարնին իրս հըռչակել :

Եւ զլօգկեանս որ ուսուցին և որ գամ մի զպատմութեանեալս :

Ոչ պերճ զինուք ու արուածեամբ վեհ քան լեզուաւ գոյր Լս
 [տիոն ,

Թէ գեգեր և խարտոցի ճիգըն սասան չէր քերթողաց :

Ո՛վ արիւն պոմպիլեան, լերուք տաղից գուք պարասաւիչ

Ջոր ոչ աւուրք յուրովք և ոչ քերուծն ընկձեաց երկար ,

Եւ ոչ տասնիցս եղընգամբք յըղկեալ կոկեաց յամբոկ գոր-

[ծոյն :...

Ըսկիզբն ուղիզ քերթութեան է և ազբիւր՝ իմաստութիւն :

Սոկրատեան մատեանքն իցեն քեզ բաւականն ի թ ընծայել ,

Եւ իրին հիւթելոյ՝ բառքն ինքնակամ գայցեն ըզհետ :

Որ ուսաւ զինչ հայրենեաց՝ բարեկամաց զինչ իցէ պարտ ,

Ո՛ր սիրով ծընօղն իցէ՝ որով եղբայր, հիւր սիրելի ,

Ձինչ ատենակալ, զինչ դասաւորն ունիցին գործ ,

Ձինչ պայմանք զօրավարին առաքելոյ ի պատերազմ ,

Նա գիտէ իւրաքանչիւր ումեք զարժանըն տալ անշուշտ :

Նըմուտ նըմանողին ըզվարս և զբարըս տաց պատուէր

Աըրկըտել, և անգուստ ի գուրս բերել ճըջգրիտ բարբառ :

Է զի աստ անդ զօշոտիչ վէպ և բարուց նըմանահան ,

Ոչ շընորհ ինչ ունելով ոչ մէտ կըշուոյ և ոչ արուեստ ,

Քաղցր ի քիմն է մեծապէս ժողովըրգեան և զբօսուցիկ ,

Քան թէ ասղք անհիւթաւորք և նուագաւոր անտեաց

[հընմունք :

Ջհանձար Յունացեա Մուսա՝ Յունաց ողորկ լեզուով խօսել :

Այն որ ոչ յայլ ինչ բընաւ քան ի գովեստ էին ագահ :

Մանկտին հոռովէական կըրթի յուսուծն երկայն հաշուիւ

Ըզգըրամն ի մասունըս կոտորել հարիւրաւոր :

Ի հընգից եթէ գարեաց բարձցին երկուքըն՝ զի՛նչ մընայ .

Գողցէ որդին Ալբենի . — կարօզ էիր ասել թասու .

Վա՛շ քաջիդ , գու զօրաւոր լիցիս պահել ըզմեծութիւնդ :

Այլ անգրէն գառնայ գայ մի գարին , արդ զի՛նչ լինի . — կէս

[գանգ :

Ուր միանգամ ժանգ և հոգ ըստացուածոց յայս ի տոգորս
 Զոգիտն արբուսցեն, իցէ տաղից յոյս քերթածաց
 Որ օծմամբ եղևնիւ կրնքեալ պահեստ փայլուն նոճոյ :
 Կամ օգտել կամփն քերթողք կամ հեշտուծիւն մատուցանել :
 Կամ զօգուտ խօսել կենաց և զախորժակ միանգամայն :
 Որ զինչ պատուիրեսցես՝ հակիրճ խօսիւք լեր համառօտ,
 Զի փոյթ առցեն միտք հըլուք և անկորուստ կալցին ըզբանն .
 Ամենայն աւելորդ ի թաթաղուն սըրտէ զեղու : [մարտին :
 Պաճոճեացքն ի զուարճութեան պէտքս՝ լիցին հուպ ճըլ :
 Մի զորպէս պահանջեսցէ գոլ առասպելք հաւատարիմ,
 Մի զկերեալ վըհուկ ճուղանն ողբ ի պորայն հանցէ մա .
 Երտխանք այլևոր՝ զտազս հալածեն անշահեկանս , [նուկ :
 Ասպետք վըսեմական՝ զարտպատեսակս յընչաց քերեն .
 Զամենայն լընու զհաճոյս որ զպիտանին խառնէ նդ անոյշ ,
 Ընթերցողին ի հեշտանս ընդ նըմին զոյգ և առ ի խրատ :
 Այն մատեան շահի Սոսեանց արծաթ , ընդ ծով այն անցանէ ,
 Եւ երկայն յաւիտեանս հըռչակելու՞մ նօթճէ գըրչին :
 Սակայն են և յանցանք որոց հաճոյ թըւի ներել .
 Զի և ոչ լար զոր կամի ձեռնըն և միտք՝ արձակէ ձայն ,
 Եւ ըզթաւ պահանջողին ըզսոսկըն տայ բազում անգամ .
 Եւ ոչ ազեղն հարցէ միշտ՝ ում միանգամ ըսպառնասցի :
 Բայց ուր բազում ինչ փայլէ ի քերթածի՝ չտարայց ընդ միտ
 Ըզսակաւ ինչ արատ զոր կամ եհեղ անհոգութիւն ,
 Կամ թէ բնութիւն մարգկային ըստ արժանի ըզգըուշացաւ :
 Զինչ ապա զոր օրինակ գրագէտ գըպիր՝ թէպէտ խրատեալ ,
 Եթէ զնոյն մեղիցէ ցանգ՝ ոչ արժանի է թողութեան ,
 Եւ ծաղըր կայ քնարահար՝ որ միշտ ի նոյն լար սըխալէ ,
 Այսպէս ինձ գըթեալն յաճախ լինի վրիպակն այն Քիրիլոս
 Զոյր լաւութիւն երկից ու երիցս հանդերձ ծաղու զարմա .
 [նամ ,
 Եւ նոյն ինքնըս ցաննում յորժամ նիրհէ քաջըն Հովեր :
 Սակայն յերկար ի վաստակ մարթի թէ քուն սըպըրդիցի :
 Քերթուած , որպէս նըկար , է ինչ՝ որ մօտ եթէ կայցես ,
 Եւ է՝ որ քաջ ի բաց կացեալ ըզքեղ յինքն յանգուսցէ .
 Սիրէ այս ինչ ըզմուծ , լուսով կամի գալ այն ի տես
 Որ ի նօւրբըն սրութենէ դատաւորին երկընչի ոչ :

Գամ մի եղև սա հաճոյ, նա տասն անգամ լիցի՝ կըրկնեալ :
Ո՛վ երէջըդ պատանեաց, թէ և ձայնիւ հայրականաւ
Յուդիդ անգըր թեքիս և գու քեզէն ետ իմաստուն,
Ջայս քեզ առջիր ասացեալ՝ յեռեալ ի միտսըդ անմոռաց .
Են են ինչ՝ որոց ուղիդ շնորհի միջակն և տանելին .

Չափաւոր իրաւագէտ և դատասաց ոք ապաքէն
Ի պերճախօս Մեսաւայն հեռի դընի քաջութենէ,
Եւ չէ գիտուն յԱւլոսի Կասկեղեայ չափ, սակայն յարգի,
Քերթողաց՝ ոչ մարգ ոչ գիք ոչ սիւնք ներեն լինել միջակ :
Իբր ի հեշտ խընջոյս մնասեն անմիտքան արուեստակաւնք
Եւ թանձր օծանելիք և ընդ սարգիկ մեղու խաշեալ,
Ջի էր և առանց սոցին յընթրիսըն խրախանալ . [րեալք
Այսպէս աաղք ի հեշտութիւն ոգւոյ ծընեալք և ճարտաւ
Եթէ գուն ինչ ի բարձունէն ընկըրկեացին՝ գըլին ի ստոր :

Որ խաղուց չիցէն տեղեակ՝ յասպարիսին խորշի զինուց,
Անհրմուան անուոյ՝ գընգի և շուրնչանան նըստի հանգարտ,
Ջի մի քըրքիջ աներկիւղ բարձցեն ակումբք կուռ բողորեալք .
Որ անգէտն իցէ տաղից՝ ժրտի սակայն ըտեղծանել :
Ընգէր ոչ . ազատ՝ ազնիւ և մանաւանդ գրամից գըլիսով
Սակեալ թիւ ասպետական և անարատ ամենեին :
Գու մի խօսիր կամ առներ ինչ յակամայս Աթենասայ .
Այն քո խելք և այն է միտք . իսկ եթէ ինչ հարցես ի գրի,
Իջէ յունկըն գատողին Մետեայ՝ ի հօր քոյ և ի մերս,
Եւ զինն ամ, մագաղաթիցդ ի ներքս արկեալ, կացցէ ի պահ .
Գոյ ջընջել զանտեսն ի լոյս . ձայն արձակեալ չունի գառ .
[նալ . . .

Խընդիր է, բնութեամբ լիցին թէ արուեստիւ տաղք գովելիք,
Ոչ ուսումըն կըրթութեան առանց առատ ճոխ երակաց
Եւ ոչ թէ զինչ բիրտ հանձար օգուտ իցէ՝ տեսանեմ ես .
Այսպէս սիրով գաշնաւոր զմիմեանց նըպաստ հայցեն գոքա :
Նըկըրտեալն ի ցանկալի ասպարիսին ժամանել կէտ,
Վաստակեաց յոյժ ի աղայ տիս՝ ի քիրտն ի ցուրտ համբէ .
[րատար,

Ժուժկալեալ հրաժարեաց յԱստըղկանէ և ի գինւոյ .
Որ զպիթեանս երգէ մողար՝ ուսաւ սաստիւ նախ վարժողին :
Ջարգիս շատ է ասել՝ ես հրաշալի տաղս յօրինեմ .

Ըզյեաննայլն քոս առցէ, ամօթ է ինձ յեարս մընալ՝
 Ըստուգիւ յոր ոչն ուսայ զանգիառութիւն լեալ խոստովան : .
 Որպէս ոք զի չարակեղ բոր կամ գալուկըն ատնջիցէ
 Կամ շամբուչ բանգագուշանք և զայրագինն Անահիտ,
 Ի մոլին հըպեւքերթող խիթանն ուշիմք փախչին ի բաց,
 Խուճապէ մանկըսին և անըզգոյշք պընգին ըզհետ :
 Բարձրավիզ սա յորժամ տաղս ըզգայուելով շըրջի Թափառ,
 Ձերգ հաւորս պիչ ի կեռնեխս եթէ ի գուբ անկցի կամ հոր,
 Քէպէս յերկար գոչիցէ՝ ձեռնն տուք, ո՛վ քաղաքացիք :
 Մի գըացի ոք բընաւ՝ որ զնա հանել արասցէ փոյթ : . . .
 Արգարե մոլի նա, և օրինակ իմն իբր արջոյ [խամս,
 Ձգայուագղին Թէ խորտակել զընգգիմակաց զօրեաց խաղ-
 Ըշտըգէտն և բանիբուն փախուցանէ ժանտ տաղասաց :
 Իսկ կալեալ զոք՝ պինդ ունի և ընթերցմամբ ըսպանանէ,
 Տըզբուկ անբաժ ի մորթոյ մինչև արեամբ յագուրգ առեալ :

ՈՐԱՏԻՈՍ . Արուեստ փերթղական :

Ա Ռ Ա Կ Ք

ԳԱՅԼ ԵՒ ԳԱՌՆ

Ի նոյն գեատփն հասին վարեալք ի ծարաւոյ գայլ և գառն-
Գայլ ի վերոյ ըզկայ էա, գառն ի բացեայ ի ստորե: [րոյն,
Հէնն ի հրապոյր յայնժամ գըրգեալ յարիւնախանձ որկո-

Գըրգիւ ի մէջ էարկ բողոք բառնալով:

« Ընդէր զալիսըգ պըղտորես ինձ ի յուսմա »:

Պատասխանի ետ գեզմնաբարձն ահարեկ:

« Յիս, գայլ, զիարգ կարեմ զոր գուգ բողոքես,

Զ'իքէն ալիքգ ինձ ի յարբուսն իջանեն »:

Յազթահարեալ փաստիցն ի սաստ գայլն յաւել:

« Այլ անիծեր գու զիս, ամիսք են վեցեակ »: [ժամ »:

Աըրկնեաց գառնիկն. « Եւ ոչ ծընեալ դեռ ևս էի ես յայն-
Իսկ նա երգուեալ. « Օ՛ն և Օ՛ն, հայրքո ուրեմն անէծ զիս »:

Եւ ժանաաժուու ժանեօքն ըզնա յօշատեաց:

Ի ճահ առակս այս այնոցիկ պատահէ,

Արոց զանմեղքս կեղեքեն բարրանօք:

ՓԵՂՐՈՍ

ՇԱԻՆ ՊԱՅՐԵԱԼ

Ար զօտարին յափըշտակել ինչ խնորէ,

Իրաւապէս զիւրն իսկ մասնէ ի կորուստ:

Ընդ գեա ի լոզ միս ի բերան անկեալ շուսն,

Ետես ի ջուրցն անդ հայելու զըստուեր իւր:

Եւ այլ յիւրմէ անտի զաւարն համարեալ:

Հասեխած առնել և զայն խորհեցաւ .
 Այլ ի պատրանս ագահութիւն ըմբռնեալ,
 Զոր ունէրն ի բերանի՝ ելիք զայն .
 Եւ ոչ միւսումըն զոր խնդրէր պատահեաց :

ՓԵՒՐՈՍ

ՔԱՂԱՔԱՅԻ ՄՈՒԿՆ ԵՒ ԴԱՇՏԵՑԻ

Քաղաքացի մոռնալ ազնիւ
 Ընդեւական հեշտ բանիւ
 Զգեղջուկն ի տուն հրաւիրեաց
 Ի ճաշկերոյթ փըշրանաց :
 Ի կապերտի պարսկական
 Ճաշք համադամք սըփուեալ կան .
 Ո՛հ քաղցրութեանն յոր անդէն
 Սերտ բարեկամք վայելեն :
 Էր անթերի այն ըսպաս,
 Եւ չէր խորաիկ ինչ պակաս .
 Այլ վաղ էարկ անդ ժըխոր
 Ոմն արտաքուստ եկաւոր :
 Քանզի առ գուրս աաճարին
 Յարեաւ շըսինդն ահագին .
 Խոյս ետ ի ծակ կոչնատէրն .
 Եւ հիւրն ըզհետ մըտանէր :
 Լըսեաց շըշուկ . ոչ դք է .
 Մըկունքն ելին ի ծակէ .
 Ասէ կոչողն հիւրասէր .
 « Եկ բազմեսցուք ի ճաշ մեր » :
 « Շատ է, ասէ գաշտեցին ,
 Եկ գու վաղիւ ի տուն իմ .
 Թէ և իմ սէր աղքատին՝
 Զինչ առ կոչնովթըդ քոյին :
 Այլ իմ անդորր է սեզան ,

Յոր վայելեմ անխափան,
Այն ըզբօսանք քաւ յինէն,
Զոր ահ'ւ երկիրւ շըփոթեն » :

ԼԱՅՈՆՔԵՆ

ԳԱՌՆ ԵՒ ԴՃՆԻԿ

Շանթք և ամպրոպք որոտընդոսս,
Հողմ ըզմայրիս տատանէր,
Օդ մըրըրկեալ ի խիստ շառաջ
Նըւագս ահեղ յօրինէր :
Ահաբեկեալ ի թաւ մայրիս
Գառն ի հօտէն իւր մողար,
Յայս կոյս և յայն փռութայր ճեպէր
Անքոյթ խընդրեւ իւր գադար :
Դըժնիկն անգէն ձայնեալ առ նա,
« Եկ մուտ, ասէ, յիմն ի ծոց .
Ես պահեցիք ըզքեզ յամբի
Ի սպառնալեաց խեռ ամպոց » :
Եմուտ անմեղ գառն ընդ նովաւ
Եւ ժանտ փըշոցն ի բերան
Գըզեալ կըռուեալ պատտակեցաւ
Այն ասրանիւթ պատմուճան :
Անց գադարեաց թափ մըրըրկին .
Գառն ելանել կամեցաւ .
Այլ ի ժանտ փըշոցն անգութ
Այնպէս անզերծ արգելաւ՝
Զի և ապրել այլ չէր հընար
Յանագորոյն ի մագլաց,
Թէ ոչ ըզգեղմն ի նա թողոյր
Գուցէ և զմորթն ի թիկանց .
Իայց քըճքըճեալ եւ ի վերջէ
Եւ կողավէր եղկելին .

Եւ քան հողմոց նըզովս կարգայր
 Դըժնեայ բարուց վանաարին :
 Հէգ դատախազք քան ի դատոյց՝
 Ի պաշտպանաց իր(Թաոյցին :

ՓԻՆԵՕԹՔԻ

ԳՈՅԼ ԵՒ ՀՈՎԻՒ

Գայլ քանասար ալևոր
 Ի սպանդ գառանց լեալ անզօր ,
 Ազգ զայս առնէր առ հովիւ .
 « Ահա խոնարհ բեկ սըրտիւ
 Ես զըզանամ ի մեղաց ,
 Ոչ ևս առնեմ շար խաշանց .
 Բայց գիր ընդ իս գու պայման՝
 Կարգել ինձ դոյզն ինչ դարման » :
 Ասէ հովիւն իմաստուն .
 « Աղէ հարցէք ծեր գայլուն ,
 Զի չեղեն բա՛նք այդպիսիք
 Մինչ ողջ էին քո ժանիք » :

ՏԵՐՈՍՍԻ

ԱՂՈՒԷՍ ԵՒ ԱՐԱԳԻԼ

Խրատէ առակս ումեք երբեք մի փնասել .
 Իսկ որ փնասէն՝ արգարապէս սուժեսցի :
 Աղուիսու առի ի ճաշ նախ հրաւիրեալ զարագիլ ,
 Լոյծ ի պնակի պատրաստելով նըմա ումպ ,
 Զոր ճաշակել երբեք նըմա չէր հընար :
 Հրաւէր ասպ արար և ինքն արագիլ ,
 Եւ մատուցեալ լի փըշքանօք շիշ ի մէջ ,
 Կըատուց ի ներքս արկանէ . ինքն ի յագուրդ ,

Սովորելուկ ըզճաշակից իւր թողեալ.
 Եւ մինչ ի զուր լիզոյր նա զուլն անօթոյն,
 Աւանդի չըքնաղազիւս հաւոյն այսպէս խօսեցեալ.
 « Համբերութեամբ պարտի կլրեւ որ ինչ այլուժոք տրար »:

ՓԵՂՐՈՍ

ԷՇ ԵՒ ԱՌԻԻՄ ՈՐՍՈՐԴՔ

Այր անբարի յախուռնախօս խրոխտապանծ
 Պատրէ զանգէտս, այլ առ գիտնոց է ծանակ:
 Առիւծն ընդ էշոյրս արշաւել կամեցեալ՝
 Թագոյց ըզնա ի թուփ մացառս, ետ խըրատ
 Սարսել զերէս եդեալ կառաջ անսովոր,
 Զինդ սըրանալն ինքն ըզնոսին որսասցի:
 Անդուստ ապա մեծունկն ուժգին զօրութեամբ
 Բարձեալ ի վեր յանկարծ զըռինչ անհեթեթ,
 Եւ նոր հրաշիւք խռովէ զերէս ի մտեաց.
 Որք մինչ ահիւ ընդ հետ ծանօթ գիմէին,
 Յոխորտ վազիւք տագնապէին առիւծուն:
 Եւ երբ ապա ի Զարգոցաց խոնջեցաւ,
 Զէշըն կարգաց և ըզղօղանջն ետ լըռել:
 Արդ նա յայնժամ հարց ըզնա խրոխտաբար.
 « Այսքեզ ձայնիս գիտո՞ղ արգիւնք թըլիցին »:
 « Ո՛հ, արգարև էր ահագին, ասէ նա,
 Զի թէ ծանօթ սիրտքո և ազգ ինձ ոչ էր՝
 Նովին ահիւ և ես ինքնին փախչէի »:

ՓԵՂՐՈՍ

ԳԱՅԼ ԵՒ ԿՌՈՒՆԿՆ

Որ փափագէ յանօրինէն վարձըս բարեաց,
 Կըրկին մեղաւ. զի չարժանւոյն իսկ նախ օգնեաց,
 Եւ զի չունի անսըխուրան երթալ ի բաց:

Ոսկր ի կոկորդ մըխեալ գայլոյն մինչ կըլանէր .
 Ի տանջանաց ցաւոցն յաղթեալ նըկուռ լինէր ,
 Ապա սկըսաւ մէն մի առ իւր ի սակ ձըգեւ ,
 Զայն ցաւս ախտին յիւր որկորոյն ի բաց խըլել :
 Հուսկ ապա խորդն երգմամբ մեծաւ եղեալ ի բան ,
 Եւ զայնչափ ինչ երկայնութիւն իւրում ուլան
 Հաւատացեալ անդր ի յորկորն այն ահագին
 Բազմավըտանդ բըժըշկութիւն գործեաց նըմին :
 Որում փոխան մինչ թախանձէր ըզսակն ի վարձ ,
 « Ապախաաւոր իսկ ես , ասէ , շնորհաց ի դարձ ,
 Որ ողջ ըզգընտիդ ի քեզ տարեալ ի մեր ժանեաց ,
 Եւ առկաւին վարձըս խընդրես փոխարինաց » :

ՓԵԳՐՈՍ

ՀԳԱՐՅՆ ՃԱՅ ԵՒ ՍԻՐԱՄԱՐԳ

Մի յօտարին պանծալ բարիս ցանկալի ,
 Իւրով գոյիւք կեալ միշտ զաւուրըս կենաց ,
 Զայս Եսոպոս երգեաց մեզ քաջ յարացոյց :
 Յաւակնութեամբ զուր յօրացեալ վէսըն ճայ՝
 Սիրամարդի անկեալ փետուրս արկ զիւրեաւ .
 Պըճնեալ զարդուքն յընչաց քերէր զիւրն երամ ,
 Երթեալ խառնէր սիրամարգաց յազնիւ տարմ :
 Նոքա հասեալ թափեն ըզգարդ լիրբ հաւուռն
 Եւ չարագան կըտցօք տանջեալ վըտարեն :
 Ճայն անշընորհ յազգ իւր դառնայր՝ կորակոր .
 Ու անտի վանեալ լինէր տըխուր նըշաւակ :
 Մի ոմն անդուստ յորոց երբեմն անգոսնեաց ,
 « Թէ գոհ ընդ մեր էիր , ասէ , աստիճան ,
 Եւ ըզբնութեան տուրսն ըստանձնեւ ընտրէիր ,
 Ոչ այն ընդ քեզ բասիր ձաղանք անցանէր ,
 Յազէտսըգ ոչ և այս աքսոր գայր գիզոյր » :

ՓԵԳՐՈՍ

ՇՈՒՆ ԵՒ ԳՍՅԱՆ,

Թէ քանի՛ն ազատութիւնն ցանկալի՛
 Յուցից զայն համառօտիւ աստուհոր :
 Շան գիրացելը պատահէ գայլ նիհարեալ .
 Եւ ողջունեալ ըզմիմեանս՝ իբրև կացին , ասէ գայլ .
 « Ի՞բր աղէ գու այգքան գտանիս յօրացեալ ,
 Եւ որո՞վք խորտկօք իրան քեզ արարեր այգպիսի ,
 Զի սովամահ ես կորընչիմ որ քան ըզքեզդ եմ հըզօր » :
 Պատասխանեաց նա պարզօրէն . « Նոյն հասանէ և քեզ բախտ՝
 Թէ զնոյն պաշտօն յանձն առնուցուս հարկանել » :
 Զոր , ասէ նա : — « Զի պահակեր լիցիս գրան .
 Եւ գիշերի ի գողոց պահպանեսցես զապարանս » :
 « Աւասիկ կամ , արգէն ընդ ձիւն արգէն ընդ բուք մաքառիմ՝
 Դըժընդակ վարեալ կենցաղ ի յանտառս .
 Քանի՛ն ինձ գիւրագոյն լիցի բնակել ընդ յարկաւ ,
 Եւ պարապորդ յապել առատ կերակրով » :
 « Աղէ ապա եկ գու ընդ իս » , յաւել շուն :
 Բայց գայլ ի գնալըն տեսեալ ըզպարանոց ուղեկցին ,
 Զի էր մաշտեալ ի շողթայէն . հարցանէ .
 « Առ ի՛նչ է այգ , բարեկամ » : — « Այ ինչ բնաւին » , ասէ շուն :
 Կըրկնէ գարձեալ գայլ . « Այլ ասա աղաչեմ » :
 « Զի ամեհի թըւիմ , կապեն զիս ցերեակ .
 Հանգչիմ ի տուէ , հըսկել ի գալ գիշերոյ ,
 Եւ ընդ երեկս արձակեալ շըրջիմ ուր կամք և իցեն .
 Ինքնին ինձ գայ նըկանակ ,
 Ի սեղանոյ իւրմէ ինձ տէրն իմ ընձեռէ ոսկրոտի .
 Ընկենուն և ընտանիք ինձ պատառս ,
 Եւ զանախորժն այլոց քաքար ի ճաշակ .
 Այսպէս անջան փոր իմ լըցեալ յադենայ » :
 « Իսկ թէ ուրեք կամք իցեն գնալ , աղէ ասա , գո՞յ հրաման » :
 « Բնաւին ոչ » , ասէ շուն : Յայնժամ ընկերըն կըրկնէ .
 « Վայելեսըիր քեզէն , ո՞վ շուն , յոր գովեսսգ .
 Թագաւորել իսկ ոչ կամիմ , եթէ չիցեմ ինքնիշխան » :
 ՓԵՂՐՈՍ

ՍԱՐԳՆ ԵՒ ԾԻԾԱՌՆ

« Ո՛վ գուհ Արամազդ, որ ի քոյ ուղղոյդ,
 Նորահնար գիւտիւ՝ ի նորոգ ծընունդ
 Ածեր ըզՊալլաս, զիմ չին թըշնամի,
 Լուր արգ բողոքոյս ի կեանսդ անգամ մի:
 Պրոկնէ զիմ պատառս տանի կորզելով:
 Շո՛ւրջ յածեալ, հատեալ զայերս և ըզծով,
 Զիմ ճանճս ըմբռնէ հուպ գրանս առ երի:
 Այնք բաժին իմ են. և ցանցիս պատատ՝
 Լի նոքօք լինէր, թէ չէր հաւդ այդ ժանտ:
 Զի ես պընդակազմ՝ նիւթով զայն յեռիս:
 Այսպէս յանգուգն ի բերան
 Սարգն՝ ոստայնանկ երբեմն՝ ունէր ըզքսողք. »

Որ լեալ զարգիս մանող ոք
 Ժըպրհէր կապել զամէն միջատ թեւական:
 Փիլոմելայ քոյրն՝ ունելով որոյն ուշ,
 Առ սարգն հետեալ՝ չորթէր ըզճանճ յայերաց,
 Վասըն մանրիկ ծնընդոցն և իւր, վայելք գուժ.
 Զոր որկորուստ ձագունքն՝ ի կտուց մըշտաբաց
 Ճըռուողելով՝ թսթովախօս երամ խուն,
 Թախանձէին յանյօգաբոր գեռ ի ճիւ:
 Ի սարդըն չէգ չըմնայր ինչ
 Բայց գլուխն և ոտք միայն, անդէպ գարմանիւ:
 Ածաւ ընդ քարշ ինքն համբուն.
 Ծիծառն անցեալ՝ տարաւ զոստայն և զայլ ախ,
 Սարգն ըզծայրից առ ի կախ:

ԼԱՅՈՆԹԷՆ

ՍԻՐԱՄԱՐԳ ԵՒ ՀԵՐԱ

Տըրտունը կալաւ սիրամարգ
 Առ գիցուհին իւր Հերա,
 Զի ձայն խըռպոտ և անարգ
 Դըժոխալուր ետ նըմա:

« Եւ իբր, ասէ, լուսինեակն
 Այն չբքոտի հէգ հաւիկ՝
 Զայն ընկալաւ ներդաշնակ
 Լինել գարնան երգեցիկ » :
 Յասեաւ Հերա մեծապէս .
 « Կարկեսց, ասէ, ապաշնորհ .
 Խանդալ զիւրդ չամաչես
 Զայլոց ըզձայն գեղաւոր ,
 Որ ըզլանջօքն սիրուն
 Մանեակ ունիս հիասքանչ,
 Քան զծիածան գոյն ի գոյն
 Փայլ արձակեալ և ճաճանչ :
 Ոյր ի աըտան շողշողին
 Ակնախըտիղ այդ պիսակք .
 Ո՞ւմ ի հաւուց օգեղէն
 Քոյդ շնորհեցան պերճ գիսակք :
 Ոչ ամենայն կենդանւոյ
 Զիրք ամենայն են բաժին .
 Եւ քեզ զիւրդ միայնոյ՝
 Պարգեք ամէն շնորհեցին :
 Թեթևաթուիչ է բաղէ ,
 Արծուոյ տըլաւ սիրտ արի ,
 Եւ զերգ խուժանն իսկ ասէ՝
 Ագուաւ՝ գուշակ է չարի .
 Արդ ո՞ երբէք ի աըրտունջ
 Հատաւ զիւրոյ կարկաչէն :
 Հապա լըռեա, կամ թէ ոչ՝
 Կաստին՝ փեաուրքդ առ ի քէն » :

ԼԱՅՈՆԴԻՆ

ԿՆՏԱԿՔ ԵՒ ՍԱՆԴՐ

Կընտակք երկու գըւին փըզոսկը ի բացի.
 Այր յընկերէն կորզել շըդնէր մուրցացի:
 Կորոյս յազթողն և զոր ունէր խուռն գիսակ.
 Եւ ահա սանդր էր պայքարին մըրցանակ:

ՏԼՈՐԻԱՆ

ԷՇ ԵՒ ՍՈՒԱԿ

Էջ սոխակի պատահեալ.
 « Ըզքէն, առէ, սյլ ընդ այլ
 Չըրոյց անբաւ
 Ֆարգ ընթացաւ,
 Թէ ես երգիչ քաջուր.
 Այլ դիւրհաւան ես ոչ եմ
 Մինչև և ունկամբս իմ լըսեմ.
 Դու ինձ հապա
 Երգ ինչ ասա.
 Տեսցուք իցէ գաշնաւոր ր:
 Յայնժամ սոխակ հրաշապէս՝
 Յիւր մըխեցաւ ի հանդէս.
 Ուռնոյր փափուկ գեղգեղէր,
 Բիւր գայլայլիկս յօրինէր
 Պարզեալ ըզձայնն և գեղոյր,
 Հընչէր հովիտ և բըլուր.
 Այն այգածնին
 Այն երգեցկին՝
 Բնութիւնք համայն կան ի լուր:
 Հողմք լըռեցին, հաւուց պարք,
 Մակաղեցան և ոչխարք.
 Ի հաւն հարեալ զաշս հովիւ,
 Նորին գերեալ էր ձայնիւ.

Լրուեաց Թըռչուն.

Լրուէր բնութիւն.

Էշն ետ պատգամ սուղ բանիւ.

« Զըրոյցքն, այժ, են արգար,

Եւ չէ տաղտուկ քոյգ բարբառ.

Այլ լինէիր դու քաջուս

Ի նուագ երգոց բազմահիւս,

Թէ վարժէիր

Առ ոտս ընտիր

Աքաղաղի մեր տեղւոյս » :

Լըւեալ զվրձիւ զայս անկարծ՝

Թըռեաւ սոխակ քաջ ի բաց :

Մի տար և զմեզ, ո՛վ Աստուած՝

Ի ձեռս անմիտ դատողաց :

ՔՌԻՒՂՈՎ.

ԳՈՐՏՔ Ի ԽՆԴԻՐ ԹԱԳԱՒԱՐԻ

Մինչ ծաղկէին Աթէնք արգար օրինոք,

Աղատութիւն խեռ ըզքաղաքն ազմըկեաց.

Եւ ժբպիրհ յանդըգնութեան ըզվաղեմին լուծեալ սանձ,

Պառակտեցան գունդք այլ և այլ դաւակցաց.

Գրաւեաց զամրոցըն Պիսիստրատ բըռնաւոր :

Եւ մինչ ընդ գառըն գերութեամբն աստիկեցիք հեծէին,

Ոչ զի անգութ և անողորմ ոք էր նա,

Այլ զի բնաւից է ծանրակիր բեռըն նոր.

Ի բառնալ նոցին բողոք զայնմանէ,

Զայս յայնժամ նոցին Եսովպ արկ առակ :

Թափառական ի լայն ճահիճս ազգ գորտոց՝

Թագաւոր ի Դիոսէ ճըչիւ մեծաւ խընդրեցին,

Սանձտհարեւ զապերասան իւրեանց բարո :

Միծաղեցաւ հայրն աստուածոց ի վերուստ,

Եւ ետ գերան փոքրիկ նոցին Թագաւոր.

Որ անդր ի հունն յանկարծակի ընկեցիկ,

Դըզըրդեւրձ և ճըղփմամբ ահարեկեաց զազգն երկչոտ :
 Եւ մինչ ի տիղմն անկեալ գընէր խորասոյզ՝
 Ո՞նք ի գորտոց լըւիկ մընջիկ հանեալ ըզգլուխն ի լըճէն ,
 Եւ զթագաւորն հետազօտեալ կոչէ զընկերսն համօրէն :
 Նոքա ի բաց եդեալ զերկիւղ , անդր ի լոյլ
 Աճապարեն ընդ հակառակս իրերաց ,
 Եւ ըզփայտին ընդոստ ամբոխն ըստահակ ,
 Թըշնամանեալ զայն բազմաբիւր լուտանօք ,
 Արաբեն առ Արամազդ միւս այլ խնդրել թագաւոր ,
 Զի անպիտան նախընծայեալն էր նոցին :
 Յայնժամ յըզեաց նոցա Դիոս ըզվիշապ .
 Որոյ սկսեալ գըժնեայ ժանեօքըն խածատել ըզգորաեարն ,
 Ընդ վայր յայնժամ ի հարուածոյն խոյս ապիկարքըն տային .
 Հեզձամըզձուկ ըզկուիչ նոցին արար ահ :
 Աղերսաւոր գազտ առ աստուածն ապա յըզեն ըզՀերմէս ,
 Տառապելոցըն ժամանել յօգնութիւն :
 Զայս Արամազդ յայնժամ նոցին եա պատգամ . [րին] :
 « Զի ապաշնորհք բարւոյն գըտայք , ժուժկալիցէք արդ չա .
 « Եւ գուք իսկ , ո՛ք քաղաքացիք , յաւել նոցին Եսովպոս ,
 Համբերեցէք չարին , զի մի՛ ձեզ չարագոյն ինչ հասցէ » :

ՓԵՂՐՈՍ

ԵՐԱԺԻՇՅԳ

Ընչապըտուկն ապուզնայ ,
 Նոխազ մորուեզ ,
 Ուէշ ականջեզ ,
 Եւ արջ թաթեզ ընդ նոսա՝

Դաշնակաւոր խընդրեցին երգ յօրինել :
 Գըտին թըմբուկ ծակ և գավին կիսաթեւ ,
 Տիկ խըլաձայն , և սրինգ ջախջախ միջաբեկ .
 Նըստան ի մարդ , յուռւոյն ի ստուեր դիւրաթեք :
 Հարկանէին ջանիւ զանցնիւր ըզգործին ,
 Բայց արտանուագ երգոցըն ձայնք հընչէին :

Ի վեր վազէալ անդէն ճապուկըն կապիկ ,
 « Կացէք, ասէ, զուր մըրցակիցք իմ ճըգնիք .
 Ի՞բր իցէ մարթ նուազաց մերոց գուդ զաշնակ .
 Մինչ խառն ի խուռըն մեք նըստիմք այսգուռնակ .
 Դու արջ եղբայր, նիստ քո թըմրկաւ գ ընդ աջմէ ,
 Փողարն իշակ թող բազմեսցի ի ձախմէ ,
 Ես նոխազին նըստայց հանդէս աստանոր ,
 Հնապա նըւագս առեալ հարցուք նորանոր » :
 Փոփոխեցան տեղիք, այլ ոչ եղանակք .
 « Ոչ այգպէս, ո՛չ, էշն անդ գոչեաց, բարեկամք .
 Գեղոնս ընտիրըս թէ կամիմք գեղգեղել ,
 Հարկ ըստ կարգի աւագութեան է բազմել » :
 Զուր անսացին իշոյն խրատու և յարեան ,
 Դարձեալ ազմուկ, գարձեալ շըփոթ խառնածայն :
 Անդ ուռենւոյն յանկարծ ի յոստ էջ սոխակ .
 Սոքա անդէն բարձեալ առ նա աղաղակ՝
 « Ողջամբ եկիր խօսնակդ, արա մեզ շընորհ ,
 Դիր կարգ ի մեզ, զի նուագքս իցեն գաշնաւոր .
 Են ասա վիհք առ մեզ և տիկ և թըմրուկ ,
 Միայն ասա թէ մեք զիմրդ բազմեսցուք » :
 « Առ յօրինել, ասէ, նըւագ գեղեցիկ ,
 Ճարատութիւն խընդրի և կիրթ լըսեղիք .
 Իսկ գուք եղբարք ո՞րպէս զիարգ և նըստջիք ,
 Ոչ լինիցիք երբեք ճարտար երգեցիկք » :

ԳՌԻԼՈՎ

 ՓԻՂ ԵՒ ՇՆԻԿ

Ընդ պողոտայս փիղ ածէին
 Հասարակաց ի հանդէս,
 Քանզի առ մեզ յաղթ կենդանին՝
 Հազիւ երբէք գայ ի տես :
 Խըռնէր խուժան ըզհետ փըղին
 Ի վիթխարին կալեալ գէտ .
 Բայց և շընիկ մի ել շընչին

Դէմ կենդանւոյն անհեթեթ :
 Տեսեալ ըզփիղն ընդ ամբօխին
 Հալէր ճրչէր վազվազէր,
 Խոռն ինչ մեկնէր, գառնայր կըրկին.
 Փիղն անխըռով յառաջէր :
 « Ա՛խայտառակ գըծուծդ ի շանց,
 Կոչեաց առ նա այլ մի շուն.
 Ի փիղ հաջէլ ի սիգապանծ
 Ձէ քեզ ի ճահ քաջութիւն.
 Ո՛չ տեսանես, մինչ գաս ի վէգ.
 Ընդ հըսկայիդ պընգահոռչա՝
 Դա քեզ չառնէ երես երբեք,
 Ձայնիդ չտնայ բանգագուշ » :
 « Ահա այդ իսկ է իմ խրախոյս,
 Կըրկինեաց շքնիկն ըզբարբառ,
 Ձի գէմ փըղնն ես սինըքորս՝
 Համարձակիմ ի պայքար.
 Ձինէն այլ շունք առցեն ճառել,
 Թէ վա՛ջ շքնիկ քաջարի,
 Որ անվեհէր ի կըռիւ ել
 Ընդ գէմ փըղնն վիթխարի » :

ՔՌԻԼՈՎ

ԵՂՋԵՐՈՒ ԵՒ ԱՐՋԱՌՔ

Եջէրու հալածական ի Թաւամուր անտառաց,
 Խոռսափեալ ի յորսողացըն մօտալուռ մահուանէ,
 Կոյր ահիւ դիմեաց ի գիւղ մօտաւոր,
 Եւ ի գոմ ուրեք անկաւ ի դիպան :
 Եւ մինչ Թաքչէրն անգանօր, ասէ արջառ. « Եղճիկ գու,
 Ձի գործեցեր. քեզէն ի մահ ընթացար,
 Ընդ յարկաւ մարդկան եղեալ անձնատուր » :
 Իսկ նա աղերս արկեալ ասէ ջ « Դուք ևեթ յիս Թէ խնայէք,
 Ժամ առեալ սրացայց գարձեալ ի փախուստ » :

Գիշեր տուընջեան յաջորդեալ,
 Ածէ մըշակըն տերև, և ոչ ի նա ակնարկէ.
 Երթեկեկեն շինսկանք, ոչ ուրուք լեալ իրազեկ.
 Գերգաստանիկն իսկ անցեալ, և չաեսանէ ինչ բընաւ:
 Յայնժամ հըրձուեալ երէոյն,
 Ծնորհակալիս մընջիկ եզանցըն կալաւ,
 Ձի յերեսաց արկածիցն ասպընջականք եղեն իւր:
 Պատասխանի ետ նըմա մին ի նոցունց.
 Օ՛ն և օ՛ն թէ ոչ քեզ կեալ ըզձանամք.
 Այլ բազմաչեայն եթէ երբեք եկեացէ,
 Ի վտանգի մեծի լիցին կեանք քոյին:
 Մինչ այս մինչ այն, գառնայ ինքնին տէրն յընթրեաց,
 Եւ հիւժ զեզինսըն տեսեալ՝ մատչի ի մսուրն, և օտօտէ.
 « Աւ իմէ՛ տերևք սակաւ, և չիք յարգ.
 Իցէ՛ ինչ աշխատութիւն առնուլ զոտայնըս սարգի »:
 Եւ ի շուրջ յածել իւր յայց ի խնդիր,
 Դիպեալ աչացըն բարձր եղջերք եզջերուին,
 Տանի զաւարն, և տայ զենուլ ազգատոհմին ի կոչունս:
 Այգէ առակս այս՝ զի յիւրում իւրաքանչիւր ոք ի տան
 է առաւել շըրջանայեաց և առաւել քաջատես:

ՓԵՂՐՈՍ

ԿՈՒԻ ԵԱՆՑ ԸՆԴ ԿԱՏՈՒԱՑ ԵՒ ԿԱՏՈՒԱՑՆ ԸՆԴ ՄԿԱՆՑ

Ձիք տեղի չիք ժամանակ՝
 Յորում չիցեն լեալ կըռիւք.
 Եթէ խընդրես օրինակ,
 Ըչքե իսկ կան բիւրք անթիւք.
 Ի տարերաց ըսկիզբն առնեմ թէ կամիս,
 Ձի ցանգ անհաշտք հակառակին իրերաց.
 Նոյնպէս և բնաւ արարածք այսր աշխարհիս՝
 Յար ի մըրցանս են յար ի կռիւ ի հերձուած:
 Երբեմն ուրեմն էր ապօրանք մեծաշէն
 Ուր բազմութիւն շանց և կատուաց գըտանէր.

Բայց այնչափ կարգք եղան ի տանըն տեառնէն
 Եւ այլ ոչ ևս անգ կըռուոյ ձայն ոք լըսէր .
 Անգ պաշտամունք իւրաքանչիւր սահմանեալ,
 Եւ կերակուրք շափով կըշռով բաշխէին .
 Եւ որ կագէր յտնկարծ՝ գանիւ հարուածեալ
 Ըջանցուածոյն վրէժ լուծանէր զարժանին .
 Եւ էր զնոսին այնուհետև տեսանել
 Ոչ իբր ըզուունս և ըզկատուս ոխերիմ .
 Այլ զի զմիմեամբք առնէին միշտ ելևել
 Իբրև եղբարք եղբորորգեակք մըտերիմ :

Բայց ահեաց ոչ ընգ երկար
 Խաղաղութիւնն այն և սէր .
 Զի թանըն չէր հաւասար ,
 Կամ ոսկր ումեք պակասէր .
 Այլք յաւելուն թէ և քած
 Կորեանցն՝ ի հոգս ի շքնասան
 Քաղցեալ նըքթէր՝ զի չէր հաց ,
 Եւ թէ կատուք զայն կերան :
 Անգ յազմըկէն վեր ի վայր
 Պալատն ողջոյն գըղըրգէր .
 Հընչէր գաւիթն և գահիճ ,
 Քընդայր մառան , խոհարան :
 Շանցն և կատուաց յուժգին ճիչ՝
 Դրացիքն ամէն խռովեցան .
 Կատուաց կանչիւն և բողոք՝
 Ըզկանոնացն էր նորոց .
 Եւ շանց հաջիւն անողոք՝
 Լի էր ցասմամբ ի զայրուց :
 Խըփընկեցից փաստաբանն
 Ասէր՝ թէ գատ պարտ է տալ ,
 Եւ 'ստ օրինաց տանուտեառն՝
 Ի պատուհաս շանց փութալ :
 Սակայն եկ տես նոր արկած ,
 Զի այն թըղթեանն ամենայն ,
 Մուրհակք և գիւրք օրինաց ,
 Զորս ծառայից պալատանն

Էր ամփոփեալ ի մի խորշ,

Մըկանց էին լեալ կըրծօն :

Դարձեալ բողոք բարձրագոչ .

« Բարձցին մըկունք օն և օն » :

Յայնժամ կատու մի, կատու ծեր խորագէտ,

Յանձն առ շըգնել ունել զմըկունս մի առ մի,

Մինչև անհետ լեալ ջընջեսցի նոցին ճետ :

Եւ ասնուտէրն հանգեալ հոգոց առ վայր մի :

Եկից գարձեալ ես յիմ բան՝

Թէ ընդ երկնիւք չիք էակ

Որ չունիցի ախոյեան

Իւրում բնութեան ընդգիմակ .

Այլ գու ջանաս վայրապար՝

Եթէ զպատճառըն խընդրես .

Ձոր Տէրն արար՝ լաւ արար,

Այսչափ միայն գիտեմ ես :

Այ՛ո՛ գիտեմ և զայս յաճախ պատահար,

Ձի զոչընչից կագին բազումք չարաչար .

Մարգիկ, մարգիկ, ըզձեզ պիտէր տիս յսւթսուն՝

Դարձեալ յըզել ի ձեր նախկին գըպրատուն :

ԼԱՅՈՆԹԵՆ

Հ Ո Վ Ո Ւ Ե Ր Գ Ա Կ Ա Ն Ք

ԴՐՈՒԱՑ ԵՐԱԿԱՆ ԿՆԱՑ

Վաչ երջանիկ մըշակաց՝ զիւրեանց նըսիհ թէ գիտիցեն,
Ոյց ինքնին երկիր արգար ի մարտամբոխ զինուց փարաա
ի ծոցոյ հողոյն բըխէ գիւրապատրաստ պարէն կենաց:
Ապարանք բարձրաձեղունք աշխարհամուտ գրամբք հոյա-
[կապ

Թէ հոսեն ոչ ի գաւթաց զայգորելեացն ուզից կոհակս,
ի գրանգիս ոչ պակշտին կամարաշէն պերճ նըկարէնս.
Ոչ ի պըղննձս եփիւրացիս և ի հանդերձս ոսկեճամուկս,
Եւ ոչ ասըր լուսաներկ յասորնական գեղ շըպարի, [նին.
Ոչ ծորածոյ իւղոյն պարզուածք կասեաւ ի պէտս տպակա-
Այլ հանգիստ յապահով, կեանք անպատիր ճոխ ընչաւէա,
Այլ անդորր ի գիւր վիճակս, անձաւք և լիճք ջուրց կենգանի,
Այլ հովիտք հովանաւորք և անդէոց մեղմիկ բընչիւնք,
Եւ ընդ ծառով հեշտալի քուն հանգըստեան ոչ պակասեն.
Անք արօտք և անտառք և երէոց որլք և մորիք,
Եւ արբուն ժիր մանկութեան սակաւապէա և երկասէր,
Աստուածոց պաշտամունք և սըրբանուէր հարց ալեւոյթք.
Արգարութիւն զվերջին հետս առ նոսին արկ մեկնեալ յեր-
[կրէ:

Ձիս սակայն անոյշ Մուսայք գեր ի վերոյ քան զամենայն,
Որոց կամ պաշտան տանիմ՝ յանհընարին ի սէր հարեալ,
Ընկալցին նախ և ցուցցեն զերկնից շաւիղս և զարփից պար,

Ըզպէսպէս զարեգական նըւազուծիւն և զլուսնի կիրս.
Թէ ուսաթի գողումի երկրի, ծովք ըզթուսքս իւ փլուզեալ
[ուժով

Ունուն կուտակագէզ և յինքն անգրէն իջեալ նըստին.
Ձի այնպէս ձըմեռնական ճեպին արեք թանալ յանգունգս,
Եւ կամ ընդգէմ ինչ արգել զի յամրային կայ գիշերաց:
Իոկ թէ յայդ ոչ զօրեցից ժաման լինել բնութեան սահմանս,
Ձի ցուրտ արիւն զառագաստ սըրտիս պատեալ անկցի կըր-
[ճիմ,

Գեղօրէք, պեռք ի հովիտս ինձ քաղցրասցին վըտակահոռք,
Ըզխոթող ջուրց սիրեցից և ըզմայրիս անփառունակ:
Օչ, ուր դաշտք և ըՍպերք և Տայիգեա գեղապարեալ
Ի կուսից լակոնուհեաց, ու ի հովասուն ծործօրս Հեմեայ
Ո՛վ տարցի զիս և ոստովք պաշտպանեսցէ մեծ հովանեալ:
Երանի ում պատճառաց էից գիտաց գող իեւամուտ:

Եւ զարհաւիրս ամենայն և զանողոք ճակատագիր
Եւ զանյազ արարարոսի շէինդ և շըռուկ առ ոտն եհար:
Նա և այնմ իսկ երանի որ զգաշտային ծանեալ ըզգիս,
ԸզՊան, ըզԾեր Շահարիկ և զքոյր հարսունս յաւերժական:
Ոչ ըզնա խուրձ ամբոխին, ոչ թագաղանցըն ծիրանիք
Եւ գրուժան հարազատից ընկճեաց երթեք վըրդովի խազմ,
Ոչ Դակեանն հինախազաց ի գաշնաւորն իջեալ Խտորեայ,
Կամ հռովմական պերճութիւնք ուարբայութիւնք կորըս-
[տականք.

Ոչ ի գուծ հեծեաց մուրկին կամ մտխացալ ընդ գոյաւոր:
Ձոր ուղէչք մըտագիւր և զոր բերին անգք ինքնակամ
Ձարդիւնսըն ժողովեաց, և ոչ օրէնս ինչ երկաթիս,
Ոչ զատեանն աղխաարոյզ կամ զաշխարհին ետես գիւան:
Այլք թիակօք ըզկոյր յորձանս յուզեն ուի զէնըս խիզա-
Սըպըրգեն ի դահլիճս և ի տաճարս արքունականս: [խեն,
Է որ սուր ածէ շինից և չուառական երգումարգաց՝
Ըմպել ակամքք ուի ծուրացի նընջել ի քուն ծիրանես:
Այլ ոք ըզգանձսըն խորեալ և յորջասոյզ ոսկին գըրգայ,
Որ յակճիւս ի բեմս է պիշ, որ ի թատերս բերանաբաց
Ընգ կըրկին ծափս ըզմայլեալ՝ ժողովըրգեան ուաւագան-
Խընգան թաթաւեալք ի ճապաղիս արեան եղբարց, [ւոյն:

Եւ ըզտունս և զանուշակ գրանգըս սեմոց փոխեալ յաք-
[սորս՝

Ընդ այլով արեգակամբ ըզհայրենին խընդրեն յաասկ:
Մըշակն արգիւնարար կոր արօրով վարէ զերկիր:
Անդուստ ամին արարք, անտի զթուռնեակս և զհայրենիս,
Տածէ անտի զընկնախրաց և զգըւարակս արժանաւորս:
Եւ ոչ դուլ առնու երբեք՝ մինչև տարին մըրգովք զեզու-
կամորգւովք խաշանց և կամ ի գեմեարեան հասկաց որայս,
Եւ ծանրէ տոհմականօք զակօսս՝ յաղթօղ լեալ համբարաց:
Եկըն ձըմեռն, ի մամուլս՝ հաաքըն լեսուն սիկիոնեանք,
Խոզք գառնան կազնով բերկրեալ, անտառք մաթուղ մա-
[տուցանեն,

Եւ աշունն առաջի զազգ աղգ պըտղոց հասուցանէ,
Եւ ի մարմանգըս բըլբոց եփին անոյշ բարձր այգեկուծք:
Անգ քաղցրիկ մանկըտեակք շուրջ ի համբոյր կախին շըր-
[ծանց,

Պարկեշտ և ծընգասէր պահէ տընակն ըզսըրբուծիւն:
Կածնարուխ տարածեն ըստինս երինջք, և գէր ամիկք
ի զըւարթ մարգագետին կան ոգորեալ խեթկիչ եղբէրք:
Նա զաօնուտ խըմբէ զաւուրս և զանձն հեղեալ ի գալարիս,
Ուր հըրատ անգ ի միջի, լընուն ընկերք տաշտ թաթաղուն,
Քեղ, Սպանգարամետ, ձօնեալ նըւէր՝ ըզքեզ կարգայ,
Եւ հովուաց սուր սըլաքաց գընէ հանդէս ի նըշգարին,
Եւ զբիրտ անգամն հոլանէ ի շինական ըմբըշամարտս:

Ձայս երբեմըն վարեցին կենցաղ նախնի սաբինեցիք,
Ձայս Հռեմոս և եղրայրն, այսպէս աճեաց քաջն Ետրուրէ,
Եւ Հըւովմ՝ քան զամենայն գեղեցկագոյն էից ցուցեալ՝
Եօթնաթիւ ի մի բըլուրս յինքըն պատեաց շուրջ պարըսպաւ:
Եւ յառաջ քան զգաւազան գիկտեական թագաւորին,
Մինչ չև ազգ ամպարիշտ ի զուարակաց շուրջտեալ ըսպանդ,
Ձայս ոսկեղէնըն Ձըրուան անցուցանէր ըզկեանս յերկրի:
Եւ ի լուր չև էր եկեալ փըքոցուռոյց փողոց գոշիւն,
Եւ յանոստ սալըս գարբնաց կայծակնացայտ շաչել սուսերց:

ՎԻՐԳԻԼԻՈՍ . Մախիսիս:

ՄԵԼԻՐԷՆՈՍ ԵՒ ՏԻՑԻՐՈՍ

ՄԵԼԻՐԷՆՈՍ

Տիտիրէ, գու ընդ յարկաւ լայնատարած բազմեալ փիճւոյդ,
 Ըզմուսայդ վայրենի ի նուրբ եղէգն եղանակես.
 Ըհչայրենի մեք ըզսահման թողաք և զանգըս ցանկալիո.
 Մեք՝ փախըստականք ի հայրենեաց, գու Տիտիրէ՝
 Հանգուցեալ ընդ հովանեալ՝ ըզգեզանւոյն Ամարիլլեայ
 Մառոց անառիգ ուսուցանես կըրկնեւ զանունն:

ՏԻՑԻՐՈՍ

Աստուած, Մելիրէէ, եա մեզ զանգորըր զայս կենցաղ.
 Զի ինձ միշտ լիցի նա ինքն աստուած, և ստէպ ամիկ մատաղ
 Ըզնորայն թացցե բազին ի փարախէ աստի մերմէ.
 Նա իմոցս այսոցիկ թոյլ արջառոց եա թափառել,
 Եւ գեղըուկ եղեգամբ զոր ինչ կամիմըս նըւագեւ:

ՄԵԼԻՐԷՆՈՍ

Ոչ խանգամ ընդ բազդքոյին, նա աւանիկ զարմանք են ինձ:
 Ուր այսքան յուզի ազմուկ ընդ արաորէքս առ հասարակ.
 Զայծերամն Կահ ընդ իս անեմ աբխուր ճեպով ի բաց.
 Եւ զայս իսկ, Տիտիրէ, հազիւ բերիմ մազապուր այծ, [ուին
 Որ այժմիկ լուծեալ զերկունս՝ եթող, աւանդ, ի մերկ ժայ.
 Երկուորեակս ի յոյս հօսին ընդ տընկախիտ արքակաղնեզք:
 Զաղէտըս զայսոսիկ, եթէ չէին մեզ միտք ահեակ,
 Յիշեմ զի գուժեցին յաճախ կաղնիք ամպահարեալք.
 Եւ ստէպ ի փապարեալ սղոցւոյն ձախող գուժեաց ագուաւ.
 Այլ ասա մեզ, Տիտիրէ, ո՞վ դք աստուածն այն քո իցէ:

ՏԻՑԻՐՈՍ

Ըզքազաբըն զայն որ Հուովմ յորջորջի, ո՞վ Մելիրէէ,
 Անմիտըս կարծէի մերուժն այսմիկ հանգունատիպ,
 Յոր հովիւքս ըզխաշանց մատաղ երկունս անեմք յաճախ.
 Իբր ըզգամիւ առ ըսկունգ, իբր ուլս առ մարսըն գիտէի,
 Իբր ըզնը ընդ մանունց սովոր էի համեմատել.
 Այլ այնչափ ի մէջ այլոց նա քաղաքաց գլուխ ամբառնայ,
 Որչափ նոճք ի մէջ ճապուկ ուռեաց սովոր են ամբառնալ:

ՄԵԼԻԻՐԻՈՍ

Եւ ուստի այդքան քեզ հարկ հասեալ ըզՀոովմ տեսանելոյ :
ՏԻՏԻՐՈՍ

Յըզձից ազատութեան . այն որ թէպէտ և անագան , [տակք
Սակայն հաշտ ի պարապորգս յիս ակնարկեաց , մինչ ըսպի-
ի վիրաւ մորուացըս վաղ կըտուրք ի վայր անկանէին .

Սակայն հաշտ յիս ակնարկեաց , հաս պարագայց նա զհետ
Մինչ եթող Գալատէ , և զմեզ ունի Ամարիլլես . [ամաց ,
Զի ցորչափ գրաւեալ ունէր զիս Գալատէ , ոչ իսկ ժըխած ,
Ոչ ինձ յոյս ազատութեան , ոչ պախրեից էին խընամք .

Թէ և շատք ի մերմէ զոհք ի բուկէ ելանէին ,
Եւ մակարդէր պանիր պարարտ վասն ապաշնորհըն քաղաքի ,
Ոչ աջ ծանրաբեռն ինձ պըղընձեօք ի տուն գառնայր :

ՄԵԼԻԻՐԻՈՍ

Զարմանայի , Ամարիլլեակ , հիմկարգայի որ խոտը առ դիս ,
Ո՛ւմ ըզմիրգըս կախեալ զիւրիանց կողերըն թողուիր .
Զի ի բաց կայր Տիտիր : Ըզքեզ շոճիքս իսկ , Տիտիրէ , [րէին :
Մառքս իսկ ըզքեզ , և զքեզ աղբերքս իսկ այսոքիկ հրաւի-

ՏԻՏԻՐՈՍ

Եւ զինչ , Մելիբէէ , առնել էր ինձ . չէր իսկ հընար
Այլազգ ինձ մերկանալ յանձնէ ի բաց զըստըրկութիւն ,
Եւ ոչ հաշտս ընդ իս այլուր գտանել երբեք ուրեք ըզգիս .
Անգանոր ըզսպատանեակըն զայն եղև ինձ տեսանել ,
Ում բագինքս ամի ամի կըրկին վեցեակ ծըխեն աւուրս .
Անգանոր նախ քան զաղերս ասաց նա ցիս . Արածեցէք ,
Մանկտի , զնախիր որպէս յառաջ , և զեզնամուլըն լըծեցէք :

ՄԵԼԻԻՐԻՈՍ

Մերունիգ բարեբառտիկ , մնասցեն ապա քեզ անդք քոյին ,
Եւ նոքին լայնալիւք , թէպէտ և մերկ ապառաժուտք ,
Եւ ի կընիւն արզմաթաթաւ զարօտըս շուրջ ծածկեսցէ լիճ .
Մի ի ճարակ անընգել տուժեսցի խաշըն սաղմնառիկ ,
Եւ մի ժանտք գրացուոյ հօտին վարակեսցեն ըզնա ախտածք :
Մերունիգ բարեբաստիկ , գու աստ ի մէջ ծանօթ գետոց ,
Դու ի մէջ սուրբ աղբերաց վայելեսցես զով հովանի .
Աստի ցանկ սահմանակից , ուրանոր շուրջ ճարակաւոր

Ի ծաղկունս ուռեստանին պարեն յաւերժ հիբլեան մեզուք՝
 Ըզքեզ մեղմ ի բըզզիւն յորդորեսցէ յաճախ ի նիրհ,
 Երգս անտի տերևաքաղն արկցէ հողմոց բարձր ընդ ժայռիւ:
 Ոչ կերկերեալք, զորքս խնամես, յայնժամ զայրի ազաւնիք,
 Ոչ աստրական իսկ լըռեսցէ ի յերկնաբերձ բարաւոյն հեծել:

ՅԻՑԻՐՈՍ

Եղջերուք ապա թեթևք ճարակեսցին նախ ընդ եթեր,
 Մերկըս ծողք ըզձըկունս արկցեն յեզերս արտակիտեալ,
 Եւ ի բնիկ սահմանաց մոլորակոնք՝ Պարթեւըն նախ
 ԶԱրարիս արրցէ նըժգեհ, և ըզՏիգրիս Գերմանիա,
 Քան թէ բնաւ ի սըրտէս մերմէ նորայն սահեսցին գէմք:

ՄԵԼԻԲԵՈՍ

Իսկ մեք ի ծարաւուտն աստի գնասցուք կէսք յԱփրիկէ,
 Այլք ի Սկիւթըս տարագէմք և ի սըընթաց կրեաեանն Ու
 կամ ի բնաւ տիեզերաց տարաշխարհիկն ի Բրիտանէ: Վաքս,
 Ո՛չ իսկ յեա երկայն ամաց լիցի զսահմանս ինձ հայրենիս,
 Եւ ո՛չ զտղքատին հիւզիս գըմբէթ սիզակուտակ,
 Յետ հընձոց ինչ տեսանել, զիմպետութիւն, և զարմանալ:
 Զանդաստանըս զայսոսիկ ըզմըչակեալս ի մէնջ այսպէս
 Զօրականըն ժանտ կայցի, խո՛ւժըն զորայքըս զայսոսիկ
 Ահա ո՛ւր հերձուտծ ըզհէք քաղաքացիս զառածեցոյց,
 Ահա ո՛յց ոմանց ի հունձըս զարտորայս սերմանեցաք:
 Պատկինեա արդ ըզտոնձի, Մեղիբէէ, արկ զորթս ի կարգ.
 Երթայք, ո՛վ գեղանըսիհ երբեմն իմ հօտ, երթայք՝ իմ ուլք.
 Ոչ ևս ընկողմանեալ գալարագեղ ի քարայրի,
 Տեսից ըզձեզ ի հեռուստ ըզմացառուա կախեալ ժայռէ:
 Ոչ երգս արկից ի մըրմունջ, ոչ ևս յինէն գուք արածեալք
 Ըզծազկաւէս, այժք, ըզսինձ ճարակիցիք և զգառն ուռի:

ՅԻՑԻՐՈՍ

Այլ գու աստ ի գիշերիս հանգիր առ իս, Մեղիբէէ,
 Ի գալար տերևակոյտ. են իսկ հասուն մեզ աստ խընձորք,
 Են քընքուչ աստ շագանակք, է մեզ կալթին կիթ յորգա-
 Բարձրածայրք ի բացէ ահա ծըխեն գըմբէթք շինից, լաւտ.
 Եւ ձըգին երկայնին ըստուերք լերանց ահա բարձանց:

ՎԻՐԳԻԼԻՈՍ. Հովուերգական:

ԳԱՐՈՒՆ

ՀՈՎԻՒՆ

Ո՛վ գոււ պարարա հօտի խաշանցդ հովուուհի,
Եթէ այսրէն ըստ գիպուածոյ ինչ տեսեր
Զանցս ընթացից փախուցելոյ երընջի:

Իբր ըզմաշեալ լուսնի բերէ ըզպատկեր
Ուլանըն գեղ, իսկ գոյն մորթոյն ըսպիտակ,
Բայց ունեւո՛վ լոկ թոյրաթուխ նիչ յազդեր:

Խուռն ըզկողիւքըն խոյացան բովանգակ
Մեղուք բըլրին, և զօրն ի բուն վայրապար
Արկեալ խընդիր, արդ կամ ահա խոնջ վաստակ:

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Ընդ եղք ընդ այս չէանց բընաւ նախրաց պար.
Այլ որպէս միշտն՝ ընդ հանգըրուանն ի ժամս արդ.
Երինջ քոյին՝ անշուշտ անգրէն գարձ արար:

Արդ ի գալարգ ըսփիւ պըճնեալ ծաղկազարդ.
Ընդ վերագարձ պայծառ աւուրց, ե՛կ բազմեաց
Ի հեշտաշունչ մեղմիկ օգոյն սիւք զըւարթ.

Ի մախաղէգ ըզքաղցրաձայնգ առ ի բաց
Զընտել սըրինգ, և կաշկանդեա զերգ կամք են՝
Զոգիս համայն, ըզբնաւ բերկրեալ զարարած:

ՀՈՎԻՒՆ

Ահա բազմիմ. և զըլանալ քաւ յինէն,
Զոր ինձ աստուածքըն պարգևեն մարգասերք
Առ քաղցըր բանս և առ հայցուածն որ ի քէն.
Իւ արեգակն ընթանայցէ, կացցեն գետք:

Դաշտք գալարագեղք, բըլուրք ծաղկաբերք,

Պարեխք խորափիտք, մենաւոր անձաւք.

Ալէ տուք ողջոյն օգոցն անուշակ՝

Որ ածեն այսրէն զեղանակ զըւարթ:

Ո՛չ ևս այլ լըսի ի թաւ անտառին

Խորտակիչ բընոց հողմ մըրըրկալից,

Այլ դաշնակաւոր երգոց և ձայնից

Շուրջ քաղցրանըւագ ծաւալի հընչիւն:

Մագէ արեգակն ի մայրեաց բըլբոյն ,
 Ի սըրբանըշոյլ լոյս գեղապարոյր ,
 Եւ ահա զարթնու բընութիւն տըխուուր ,
 Զըմբրեանն ի Թըմբիր և ձըմեռնահար :
 Պըսակին ի գեղ դալար փափկասուն
 Լեռնաբերձ կատարբ , խորածորբ հովտաց .
 Պըճնին յերերուն ոստ տերևազգեաց
 Մայրբ անտառախիտբ՝ պողեալք սառնահար :
 Ըզցըրասասառոյց բեռնըն Թօթափեալ
 Գետբ երագընթացք վազնն ճեպըշտապ .
 Եւ ջուրցն հոսանաց մօտ քերեալ զափամբ ,
 Զարգարին եղերբ վառ ծաղկածաւալ :
 Նաւազն ի բացէ Թողեալ ըզցամաք ,
 Յանգոյր կեզակարծ՝ սըրտիւն ապաստան ,
 Պարզէ զառագաստս ի հանգարտուԹեանն ,
 Ընդ անծանօթ ուհս ալեացն անգընդոց :
 Հաւք յիւրեանց դադարս առնեն վերագարձ ,
 Եւ անդեայբ գառնան ի մարգագետին ,
 Գայ ընտելական սըղոխ զեփիւռին
 Ի մայրս անտառին՝ ի հոգմոց աստան :
 Եւ ի համօրէն արծարծի մարգիկ
 Հոգեռանդն աշխոյժ՝ յորգորիչ մըտաց
 Ի հեշտ վայելումն անմեղ քաղցրութեանց ,
 Զոր ածեալ Ապրիլ պտրզեաց ընդ երկիր :
 Որ ի սերկեանս օգք քաղցրասիք շընչէին
 Ըզմիջաուուրբ , յոր բերկրէին հօտք անգեայբ .
 Ընդ մարգ դալար և ընդ բըլուր ծաղկածին .
 Եւ ձայն ալեաց ծովեղերաց , և շառաչք
 Հեղեղասասա ուղեից զափամբք քարախիտ ,
 Ո՛չ յիս բերկրանս ազգեն երգոյս հանգունակ :
 Այլ քնասակար շոգի պատէ ըզսոճիգ .
 Դարձցուք ի շէնս ուստ ամբառնայ ծուինն ահա .
 Գիշերավարն յառնէ , ծածկի արփեննիգ ,
 Եւ ի լերանց մըռայլ ըստուեր իջեալ գայ :

ԵՂՋԵՐՈՒ ՅԱՓՇՏԱԿԵԱԼ

Սգջերուին այնորիկ չքքնաղագեղ էր կերպարան, [ռեայ
Սղջերք բարձունք, և տածէին ըզնա մանկունք որգիք Տիւ-
Քեցեալ ի ստեանցըն մայրենի, տածէր և հայրն ինքնին Տիւ-
Որուժանդեայն հնազանդէր արքունական, և լայնալիբ [ռէ,
Դաշտորայք նրմա յանձն էին ի պահ. և քոյր նոցին

Սիլուհա զամենայն ածեալ խընամ գարմանէր
Ձուսեալն ի հլութիւն, և բոլորիւք փափկիկ Ծաղկանց
Ձեղջերս երէոյն գեղազարգէր, սանդրէր ըզնա, [րեալ
Լուսնայր յաղբիւր ականակիտ. նա ձեռնընդել կայր սովո-
Առ սեզանովըն տէրունի, և ընդ անտառքս [Թափառեալ՝
Դառնայր ինքնին ապա անդրէն ի տուն ի սեամս ընտանիս,
Անագան իսկ մընացեալ ի տարածամ երեկոյի:

Սըմա բարակք Յուլեայ յորսըս կատաղիք, մինչ գեգերէր
Ըստ գիպուածոյ ի բացեայ՝ ընդ հեզասահ լուղեալ ընդ գեա
Եւ զգետեղեր ի դալարուղ մեղմէր ըզութ, մըտին ըզհետ:
Ինքն իսկ Յուլոս, գեղեցիկ գովից յայնժամ վառեալ ի սէր,
Ոստոյց ի կսր եղջրէն սըլաք, և ոչ աստուածուհին
Եթող անօգնական վրիպել աջոյն, [Թըռեաւ ծըզօտն
Ի շըկահիւն սաստիկ, էանց ընդ փոր նորին և ընդ երանս.
Կարեվէր քառոտանին գիմեալ ի յարկ անդր ի Ծանօթ,
Անկաւ հառաչանօք ի գոմ՝ յարին [Թաթառեալ,
Ելից ըզյարկն ի պոռոջ՝ իբր օգնութիւն պաղաստելով.
Նախ Սիլուհա քոյր ըզԾըղիս հարեալ զուսովք ձայնէր նը-
[պասս

Աղաղակաւ, և զտոկս ի ճիգն ըզչինականըս կարգայր:
Նոքա իսկոյն գան հասանեն, զի հրապուրիչն անողորմ՝
Կայր գարանեալ ի լուռ մայրիս. կէսք ի խանձոյըս կիսայ-
Այլք ի կոճեղս ոստալիցըս զինուորին, հայթայթէ [րեաց,
Ձայրոյթ ի գէն որ ինչ ումեք և պատահէ առ ձեռին:
Եւ Տիւռոս ի պատառել ըզբուն կաղնւոյ քառահերձ՝
Սեպս ի ներքս արկեալ ուժգին, մոլեգնոտի զարհուրելի,
Յափըշտակէ ըզտապար, կոչէ զամբոին անդր ի մի վայր:
Յայնժամ պատեհ գըտեալ յեղեւըն ժանտաժուտ աս-

[տուածուհին,

Իջանէ ի բարձուէ գիտանոցին, և զկայ առեալ
 Ի գըմբեթարգ յարկ գոմոյն՝ տայ ի ծայրէ անտի նըշան
 Հովուական, և կոր եզերբ անդընդային ածէ շառաչ.
 Շուրջ ընդ անտառն առ հասարակ գընայ յանկարծ սոսա-
 [ւիւն մեծ,

Մայրիք խորինք տան արձագանգ, եռուզեկան աստուա-
 [ծուհւոյն

Լըսէ լիճ ի հեռուստ, լըսէ սպիտակ ծըծըմբայնով [կուռք-
 Ջուրը գեառն Նար, և վեղինեանք լըսեն ի բաց ազդերա-
 Սըրտաթուռնգ ահիւ փարին մարք ըզմանկամբքըն գըրկա-
 [պինգ:

Յայնժամ մըշակք ամեհիք գիմնն ի ձայնըն երագուռք,
 Համախըմբին ուր եզերեայն կոչ առնէ փող ահեղագոչ.
 Նոյն և արբուռնք արովացի բացեալ ըզգրուռնըս պատնիշաց՝
 Հրոսեն ի յօգն Ասկանեայ, և յարգարեն ճակատամարտ,
 Ոչ ևս ի կուր գեղջկային ըսպառագէնք ի բիրտ մահակս
 Եւ ի խանձողըս կիսակէզ, այլ երկսայրեզք գոռան սուսերք-
 Նիզակախուռն յառնէ հունձ սեաւ, փայլեն պըղինձք յար-
 [փւոյն ի ցոլ,

Լոյս մինչև յամպս արձակեն. որպէս մինչ ծուփք նախկին
 [հոզմով

Ըսպիտակեւ առնուն, ուռնու ապա տակաւ ծով, կուտակէ
 կոհակս ի վեր, և յանդընդոց մինչև յաստեզս անգր ամ-
 [բառնայ:

ՎԻՐԳԻԼԻՈՍ . Ենեակն:

ԱՅԳԵԿՈՒԹ

Այլ զուարթալից աշնայնոյն ահա գըշխոյ այգեկութ՝
 Սըփո՝ ի լերինս, ըզծափաձայն գոչիւնն հընչեն լերինք հա-
 [նուր,

Եւ այգեկութ, այգեկութ՝ ընդ գիւղօրէն լըսի համայն:
 Ո՛ւմ ոչ, մհ, սիրտ խընգութեամբ գեղազըւարճ զեզու նո-
 [րագ:

Մինչ լերինք մի քան ըզմի՛նգ այգեայ պերճանըս ճոխանան:

Գեղայօրէն վայրայած կախեալ նոցին կան ի կողաց
 Պարոյրք չբքնաղք առ ի շեղ. կարակնաձև ի դրրասանդս
 Եփին այգիք արեգակամբ գեղերփնելով զոգկոյզսն ի կախ,
 Եւ որթատունկ ամուսնոյն ծառոյ ի ծառ յուռ սաղարգուց
 Տաշտագեղ բազկատարած զուգախառնին նոր բարունակք,
 Եւ բուրեն հոտ մեղրահամ յեւս մայիսի այգեաց ծաղկունք
 Բուրուձն անոյ՛ ըր ի զմայլումըն զազգելիս յափըշտակէ:
 Այլ զինչ խօսիմս. ո՛հ, ամենուսա ձեռն ի ձեռին ընգ գիրգ
 [հարսունս

Մանկունք և հարք ալևորք և առոյգանձըն պտտանեակք
 Եւ սպասեակք՝ դաս ժիրաժիր, ի կութս այգեաց դիմն
 [ի ճահ.

Սա կապակ ըզձողաբարձս՝ ոմն այլ լընու ըզսակառիս.
 Եւ թիկնաւէտ ուսք և բազուկք խըրախաճիտք ածեն բե-
 Որպէս ճնպեն ի ծաղկունս ապրիէլի գործօն մեղուք [րեն:
 Սաւառնեալք ամպանըման, կոծին յայերս օգք ի արզգիւն.
 Ոմանք մեկնին, դարձ տունեն յաճախագունգ այլք եկաւորք.
 Սա ոք ըզրեանըն դրնէ, և նա ըզծուծըն ժողովէ, [նոյշ:
 Եւ իմաստունք խորհին ճըգնին, փեթակն ողջոյն բուրէ ա-
 կամ որպէս երկայնագիծ տողեալ ի շար ընգ արտորէս
 Ի ներքին զթւանաց շարժի մըրջմանց ազըն մանրիկ
 Առնել համբար ձմերանի, հըպին ընգ ուզն յունչըս միմեանց.
 Մինչ այս մինչ այն խորքըն լընուն և դիզանայ կոյտ մըթեբին:
 Այգեկութըն վախճանեալ ւ՛ ի կարգ ածեալ գործք շինա-
 [կանք.

Մարք աընարարք կախեն ընգ յարկն ընտիր ոգկոյզըս խա-
 [ըողոյ,

Եւ եփեն թանձր ըզխազմուզ. մինչ կաշըմբուռըն պտտանիք
 Փոխանակաւ ճըգնելով հընձան հարեալ զհիւթըն քտմն,
 Ըզգիոխեալն ի գինի տապով ի ջեր արեգական:
 Դըզըրգին ի թընդիւն նըկուզք գինւոյն և շտեմարանք.
 Եւ ամենուսա լըսին ընգել բաքոսական ասնք շըւայտոտք:

8. ՊԱՐՊԻՆԻ

ԵՐՄԻՆՆԱՅ ԱՊԱՍՏԱՆԵԼՆ Ի ՄԱՅՐԻՍ

Իսկ յայնժամ Երմինիա յերիվարէն առաջնորդեալ՝
 Հասանէ ի հինաւուրց մայրեաց անտառ հովանաւոր-
 Եւ գողգոթուն ի ձեռանէն անկանին թոյլ երասանակք,
 Ընդ մէջ մահու և կենաց բերեալ ըզտիպ կիսակենդան-
 Երիվարն ըզգարձադարձ ճանապարհօք ըզնա վարեալ
 Յձ և պէտ առեալ տանէր, աներևոյթ ծածկեալ յաչաց-
 Եւ համբուն չէր իսկ վրտանգ թէ հետամուտ ինչ ոք իցէ :
 Որպէս ըզհետ բազմատաժան որսոցն յերկար արշաւանաց,
 Հասկըլեալ՝ շունչ ի բերան դառնան բարակք յոքնատը-
 [խուր-

Կորուսեալ ըզգազանին հետս ընթացից փախըստահան,
 Մայառաղօղ ընդ անտառ ի բացարձակ դիւրից գաշաց-
 Սպայէս հեծեալքն քրիստոնեայք դարձ արարեալ գան ա-
 [մօթով

Կորակոր զայրոյթ ի սիրտ՝ վաստակաբեկ խոնջք յընթացից :
 Իսկ կուսին ճեպիտալ անգուլ զարհուրագին և թափառոտ,
 Ոչ իսկ ընդ կրունկ դառնայ նայել թէ ոք ըզհետ իւր պըն-
 [դիցի :

Ճեպ ըզգիշերն ի բուն աըւեալ, և զբովանգակ օրն ի գլուխ՝
 Աստանգական թափառէր անառաջնորդ և անխորհուրդ,
 Ոչ այլ ինչ լըւեալ և կամ տեսեալ զիւրև էից պատկեր՝
 Բայց զաչացն իւր արտասուս և զհեկեկանըս հեծու թեան :
 Այլ մինչ արև ի լուսազարդ լուծեալ կառացն յառեղանէն
 Զերիվարաց զամոլան ի բաց՝ խորասուզի յալիս ծովուն,
 Հասեալ կոյսն յալիս վըճիտ գեղապարոյրն Յորգանանու,
 Եւ իջեալ յեզըր գետոյն՝ անկեալ գընէր ընկողմանեալ :
 Ոչ ինչ բընաւ ճաշակեաց՝ յիւրոց վըշտաց գըտեալ ճարակ,
 Եւ արտասուաց լոկ ծարաւի . այլ քուն անգէն խաղաղաւէտ,
 Հէգ մահացուաց անգորրու թիւն՝ թեատարած փարեալ զնո-
 Ի թըմբիր ըզգայու թեանց՝ յախորժական ի մոռաց [վիմբ,
 Արկեալ համայն և լըւեցոյց ցաւոցն ի նմա ըզխըստու թիւն :
 Այլ և ի նինջ խաղաղ քընոյն ոչ անխըլիբտ գագարե սէր՝
 Երևոյթ կերպարանօք զանգորրու թիւնըն վըրգովել :
 Ոչ թափեաց ըզքունն յաչաց, մինչ ի գեզգեզ հաւուցն
 [ի ձայն

Որք զըւարթ ողջունէին ըզժառատունի սասա անտառաց,
 Եւ ի մըրմունը յորձանաց գետոց մայրեաց տերևախիտ,
 Եւ ի խայտալ քաղցրիկ օգոց վէտ վէտ յալիս և ընդ ծաղ-
 [կունս,

Ի բանալ աչացն՝ ի տես գան մենաւոր դագարք հովուաց.
 Եւ ձայն արխուր թըւի լըսել խառն ընդ ոստոց ուալեաց
 [մըրմունը,

Իբր ի հրաւէր ողբոց ըզսիրտըն շարժելով ի հեկեկանս:
 Եւ մինչ գեռ լայրն, այլ իմն անգուստ աղքողագոյն ձայնից
 [հընչիւն՝

Ընդմիջեալ և հատանէր զիւրոց լալեացն ըզհեկեկանս,
 Պէս գունակ, որպէս էրն իսկ, հովուականաց երգոց նըւագ,
 Սըրընգացն անտառային խառնեալ ընդ վանգս անփառու-
 ի վեր վազեալ և ձայնին գընայ ըզհետ յուշիկի քայլ, [նակ:
 Եւ տեսանէ ալեւոր ընդ հովանեաւ բազմեալ ախորժ
 Աւ երի մակաղելոց խաշանցն՝ ի հիւսըս կողովից
 Եւ ի լուր գեղգեղելոյ երից մատաղ իւր որգեկաց:

Ըզգողի հարան սոքա նորոց զինուց ի տեսն յանկարծ.
 Ոջըոյն նոցա քաղցր ի ժըպիտ տայր ի խրախոյս Երմինիա,
 Եւ ըզհերան ոսկեծըզիս և ըզծաւի աչս հոլանեալ՝
 « Աղէ զհեա լերուք, ասէ, ախորժ ձերոցըգ պարապմանց,
 Ո՛ր բարեբաղգ ընտանեակ, և սիրեցեալ առ ի յերկնէ.

Ոչ խազմարար մարտից վըրգով կազմածք զինուցս իմ այս
 [ածեն

Հեշտալի ձեր վաստակոց և ոչ երգոցըգ քաղցրութեան »:
 Յաւելեալ ապա ի բանս՝ « Իսկ զիսորդ այս, ասէ, հայրիկ,
 Զի բոց ուժգին մարտից ծաւալ շուրջանակի ըզսահմանօքս՝
 Եւ ձեզ անգորր իցէ առտէն խաղաղաւէտ ի յօթեան,
 Աներկիւղ յաղիտաբեր վտանգէ զինուց ասպատակաց »:
 Իսկ նա « Որգեակի իմ, ասէ, այս ընտանեակքս և հօտքս աս-
 [տէն

Անվըրգով կացին միշտ զերծ յաղունց մարտից ասպատակաց,
 Եւ ոչ շըռիւնգ զինուց երթեք զայս մենաւոր ամբոխեաց խորչ:
 Այս շնորհք երկնից իցեն, որ զհէք գասակս անյանց հո-
 [վուաց խնամեալ՝

Մեծարել հաճի. և կամ որպէս շանթիք երկնատեղաց

Ոչ ի խոնարհ ճայթեւ գիտեն, այլ յերկնապիշ բարձր ի
[կատարս,

Սապէս և գոռ տարաշխարհիկ ի փայլ զինուցըն բարկաճայթ
Ըջգոռոզ թագաւորաց և եթ ընկճէ պերճ գագաթունս,

Եւ ոչ անյագ զօրականին աւարառու տենչ ի հրապոյր:
Անարգ և անտեսեալ յայլոց, այլ ինձ ցանկալի՝ յոյժ. [նաց,

Փարթամ գանձուց չեմ ցանկապող, ոչ արքունի գաւազաւ
Եւ ոչ անյագ տենչ փառասէր, ոչ հոգք յանքոյթ սիրտս
[օթեցան:

Յականակիւս վիժեալ առուաց արծաթափայլ ջրոց վրտակ
Անկասկած ի չար թունից հարկունէ զիմ պէտս ի ծարաւ.

Եւ խաշինքդ իմ այգոքիկ և բանջարոցըդ պարտեղիկ՝
Անարծաթ ինձ պատրաստեն գոյզըն սեղան սակաւապէտ:

Չեմք յուրվից ցանկացողք, կեամք սակաւուք ասա շատաւ
[ցեալ.

Դոքս որգեակք իմ են ահա, որք ըզխաշանցն ունին ըզպահ-
Չեն իմ ծառալք, կեամ ինքնսւրոյն աստ ի խըշտիս յայս մեւ
[նաւոր

Կացեալ գէտ թեթև այծից և եզլերուացն ոստոստելոյ,
Եւ ձըկանցըն կայտաւելոյ ի թինդ յալիս գետոյս այսմիկ,
Եւ հաւուցն ընդ երկին թևս ի թըռիչքս պարզելոյ:

Եզեն երբեմն յառոյգ յիմ տիս, յոր զառանցէ անփորձ
[հասակ,

Իզճք այլ ի սիրտ, և զխաշնարած արհամարհեալ կեանս հո-
[վուական՝

Խոյս ի յերկրէն իմ հայրենի ետու վարել կեանս ի Մեմփիս.
Անդ ի գրանիկ խուճր ի իշխանաց խառնեալ և ետառ ի պատիւ,
Եւ թէպէտ պարտիզաց և ծաղկոցաց վերակացու,

Տեսի սակայն և ծանեայ անդ զարքունեաց չարեաց ոճիր:
Եւ ի հրապոյր փառաց՝ յանդուգն ի յոյս եզեալ ապաստան՝
Ժուժկալեցի ընդ երկար անբերելի չարեաց ի տոկ.

Այլ տակաւ ի թառամեւ ծաղկափրթիթ առոյգ տիոց
Ընդ անէակ ակընկալեաց շիջեալ յիս հուր բուռն եռանդան,
Ողբս առեալ լայի զխոնարհ կենցաղ զիմ զայս անգորրաւէտ,
Եւ անձկայրեաց խաղաղութեանն իմոյ ըզհետ զոր կորուսի՝
Ասեմ. Մնասջիք բարեաւ, մնասջիք գուր արքունիք. և այս
[գունակ՝

Աս ծանօթ մայրիս գարձեալ՝ գըտի զաւուրս երջանկու-
[Թեան]:

Ի խօսել ծերոյն այսպէս, Երփնիա յակճիւս եղեալ [նէր-
Ի քաղցուենի շըրթանցն ի կախ կայր անշըշունջ ունկըն գը-
Եւ բանիցն իմաստու(թեան (թափանց ի սիրան եղեալ ի խոր
Խաղաղէր իմն ի մասնէ զամբոխ կըրից բազմավըրգով:
Կայր մըտախոհ ցըմեծ ժամս. և հոսկ ուրեմըն հաստատէր՝
Յայնմ ի (թաքուն մեծու(թեան առ ժամանակ գագարել գէթ,
Մինչև բազցն հեշտարար զելս ըզգարձին գիւրացուացէ:
Ապա խօսել կալեալ, ասէ. « Ո՛րարեբազգ գու ծերունի,
Պր անցեալ էրբեմն ընդ փորձ չարեաց՝ եղեր գու խելամուս,
Ի գու(թ գորովանաց ընդ տառապանս իմ՝ շարժեսցիս.
Ժողովեա և զիս ընդ քեզ յայս օթեանըս ցանկալի,
Մեծ է ինձ գու քեզ բնակակից ընդ հովանեօքըս հեշտարար.
Թերևս լիցի գիւր սակաւուք մահաշըշուկ կըրից սըրախս:
Թէ ցանկալի ինչ քեզ իցեն ակունք և կամ օսկի, արծաթ,
Ոյց խաժամուժըն՝ գիցական ասնի պաշտօն իբր աստուա-

[Ժոց,

Շատ ինձ գեւ և ս են ի լընուլ նոքօք ըզձիցգ ըզցանկու(թիւն)»:
Եւ բանիցն ըզհեա կայլակըս սըրտառուլ ցաւոց ընդ այտս՝
Ի դեղանի աչացն ուրան ուրան հեղեալ բիւրեղափայլ.
Պատմէր ըստ մասնէ զիւրոյ բազգին ըզչար արկածս.
Ընդ որ հովիւըն գորովեալ՝ լաց ընդ նորս լալիս խառնէր:
Կարեկից գըթով ապա քաղցըր բանիւք տայր մըխի(թար,
Եւ հայրենի խանգաղանօք սիրողարար հիւրընկալեալ՝
Աւեալ ըզիս մուծանէր տա տարևոր իւր ամուսին,
Զոր ըստ սըրախի իւրում երկինք էին շնորհեալ համանըման.
Կոյսն ազատ՝ ըզգեզկականն առնու զանձամբ գըրգչեակ

[Խոշոր,

Եւ զհերօքն ամեալ ձըգէ անփառունակ քօզ ի ծածկոյթ.
Այլ աչացն ի շարժել և անգամոցըն վայելուչ՝
Եղանէր շատ իսկ յայտնի ոչ անտառաց գու բնակաւոր:
Ոչ հանգերձ գըձուձ քողարկ լինէր գեղոյն չըքնաղափայլ,
Եւ ոչ վեհիցն որ ի նմա ազնուականըն պերճու(թեանց.
Ի գուզնաքեայ իսկ ի վաստակս անփառունակ աշխատու-

[Թեանց

վեհ իմն ի նմա արտափայլէր վայելու(թիւն արքայակերպ:

Հօտիցն իւրոց ոչխարաց ի մարմանդ վայրս առաջնորդեալ,
 Ի փարախ ցանկապատին անշուք ցըպոյնն ածէր անգրէն,
 Իւ ըզթաւ ըստինսըն նախ մեղկաշօշափ ճըմլեալ մատամբ՝
 Ափոյնն ապա շուրջանակի սեղմեալ կըթէր ըղկաթն ի գոյլ:
 Յաճախ զամառնային սոթածամաւըն կիզանուտ,
 Մինչ ոչխարակքն հանգչէին մակաղեալ շուրջ ընդ հովա-
 Ի կեզւս հասասըուն կաղամախից և սարգենեաց [նեօք,
 Բազմօրինակ քանդակօք գրոշմէր զանունըն տարփելի,
 Եւ բիւրից ծառոց ի բունըս փորագրեալ աւյր ի քանդակ
 Ըզգըժնեայ ելըս զխաճանի խիստ և ողորմ տարփիցն իւրոց,
 Եւ այսրէն մատուցեալ ի քանդակացն իւր յընթերցուածն՝
 Ի դեղահոս շիթս արտասուլաց ըզնազելի այտս ոռոգէր.
 Եւ յաւելոյր լալագին. « Ո՛ր ծառատունկդ իմ ընծանի,
 Անջինջ ի ձեզ կալարուք զայս ցաւագին վըշտաց իմ վէպս.
 Ձի թէ յանկարծ ըստ գիւպաց հաւասարիմ ոք տարփածու
 Ընդ ախորժ ձեզ հովանեալ թափառական հիւր օթեսցի,
 Ընդ բազմագէժցաւոց ազէտս իմ գըթացեալ քաղցր ի գորով
 Ասասցէ. Ո՛հ, եղեռնաւոր և ամպարիշտ դառն հատուցուածն
 Ի բաղգէն և ի սիրոյ տըւեալ աննենգ սիրեցողին:
 Ո՛ր գիւէ: Եկեսցէ օր, թէ հաճեսցին երբեք երկինք
 Գըթածաբար լըսել զաղերս ըզօրրառուչ մահկանացուի,
 Ձի և նոյն ինքն՝ ում զարգիս ի մոռացօնս իցեմ թերևս,
 Եկեսցէ՝ գիւպացն ի տալ՝ այսր ի մայրիս յայց ի զընին.
 Եւ յածել շուրջանակի աչացն՝ ի տես գայցէ նըմա [մին:
 Ուր անկեալ կայցէ նոք հողով գիւրաթառամայս հէգ մար-
 Եւ ի կաթել գոյզն արտասուլաց հառաչախառըն հծու-
 [թեամբ,
 Ձանագանն հատուցէ սակ դառն աղիտիցըս վըշտամբեր:
 Եւ այսպէս, թէ կենդանեալ հէք և թըշուառ դըսայ սըր-
 [տիւ,
 Ի մահուն իմում հոգիս գէթ բարեբախտ երջանկացի.
 Եւ ոսկերացըս ցուրտ աճիւն վայելեսցէ ի ցանկալին
 Գութ տարփանաց սիրելւոյն՝ յոր վայելել այսրէն ինձ չիք:
 Սապէս կուսին խուլ ծառոց ողորմագին արկեալ բարբառ,
 Արտասուլաց կըրկին ազբիւրս ի գեղանի աչացն հասէր:
 ԴԱՍՈՍՑ. Երուսաղէմ աշտեալ:

ՄԱՅՐԵՒՈՐՆ

Ընդ դաւորիս կաղնին բազմոսս մեռեալ կայ,
Բայց ճիգն յետին մայրևորին հինօրեայ.
Որ ի տապարն գ' երկայն մեզեխն յենու զանթ,
Հառաչակուլ ոտն զոստով կըքեալ անգ.
Եւ ըզվազուեան շահեալ կոտոր սեաւ հացին՝
Ըզճակատուն քիրտըն սըրբէ գառնագին.

« Արուեստ գըժնեայ տապարակիրըն լինել.
Ո՞ր գիք կընքեաց զիս յայս վաստակ մահառիթ.
Ես ըզպայծառ մանկուհսդ հարի անարգել,
Այլ ուր ծընայս՝ սիրեմ ըզքեզ դեռ մայրիգ:

Քոյդ հովանի աշխարհ է իմ ուր հնացայ.
Գիտեմ զհասակ շուրջ ըզդարիւս յաղթ կաղնեաց:
Երբեք ի նիրհ գ' սրմովք շինի ոչ հանգեայ.
Ոչ քաղեցի զերկըս անգոց կամ այգեաց:

Ձիս սրորեաց մայրս ի մամուռ է՝ ի կեզէ.
Հանգոյն ի բոյն տեսի նընջել զորգեակս իմ,
Որ իբրև զիս վըստահք յիւրեանց ոյժ թեթև՝
Ընդ ծառս ի վեր զոր հատանեմ սողային:

Եզեն և իմ աւուրք բարեաց, ո՛հ և սեաւք,
Ձոր գիտեն մայրքս, հազորդք չարեաց կամ վըկայք.
Կրեցի աստէն ըզսով, ըզվիշտս և ըզցաւք.
Են, են այո՛ և մարմինք խիստ հոգւոյ կայք:

Վարանի նա կապեալ յիս բուռն ընդ լըծով.
Իսկ ծառն յոգւոց ելեալ՝ դ հարուածս յար ընդ նոյն,
Իբր առ արմոյն ցնորեալս յորսայս առ սիզով՝
Խօսի առ սեաւն այն պատառող զսիրտ կաղնւոյն:

Առ ձեօք և իմ գարուն, երազք և ցընորք
Անցին, ս՛վ ծառք, որ ամբէք զցուրտ և ջեր.

Զոտաւըդ թացի գառնահոտան արտասուզք.
Սահայն վանն իմ կաթեացյաճախ մեղըր ձեր:

Գամոռ գամոռ յունկն իմ հընչեն ձայնք շինից,
Գոչիւնք ցաւոց խոռոն ամբարձեալք ի յերկին.
Հեշտ է ինձ յոյժ խարշափ դողդոջ սազարդից,
Ուսա քաղցր հոսէ քունն ի հոգի և՛ ի մարմին:

Բայց սուր սօսիւն սուլեալ ընդ սօսն ընդ հացի,
Զայն ողբական սարոյն մեղմիկ ի շըշունջ՝
Խոր և անճառ յիս արձագանգս իմն ունի,
Զյր ամենուտ լրսեմ զանվերջն ըզմըրմունջ:

Են իմ բազուկք ձեր ոստազուարճ և վարսք պինդ,
Երգոց աւաչք և նըւագք լուրջք և՛ անուշիկք.
Եւ ընդ կընճռեալ ճակատս ընդ ձերն իբր ի թինդ
Հողմ՝ մենութեանց սահի, եղբարք իմ կաղնիք:

Այլ զերգ ոսոխյազարտ վարեալ ըզլերինս,
Տապարյաջում՝ զասպընջականս իմ սիրունս
Հարեալ համայն՝ կապեմ խըրձունըս ջընջինս
Ըստ ռիչք հարկին, և շեղեմ զոստս և ըզբունս:

Տըրտում է արգ հոգիս և աչք մըթազգեաց.
Քանգիչ մայրեացս ես ատելի եմ անձին.
Վտաւանս հարիւր մերկեալ նոցուն յըստուերաց,
Բացի տեղի մարդկան. ներհամն աստուածքք իմ:

Առ տնանկութեան ամբարըշտիմ ի ձեր ծոց,
Ո՛վ սըրբարանք մայրեաց, սիրունքդ ինձ ընդ վայր.
Վասըն մանկանցս յողորմ հիւզիս սովեւոց,
Կոտոր ինչ է հացի անկեալ մէն մի ծառ:

Տընանկութիւն՝ ընդ ում երկաթս ոգորի,
Եւ զոր գիտեմ՝ տայ մոռանալ ինձ բնաւին.
Նա թաւալէ, լացեալ զանկեալն ի յերկրի,
Ի պէաս աւուր հարիւրեմեան ըզկաղնին:

Ո՛հ երանի, — [Թ՛ երանուածիւն է ճոխից
 Յաստուածախօս չին ծրմակաց բացական, —
 Վա՛յ մըշակին, վա՛յ սերմնացան բողորից
 Որք ի հաւուց ձըլեալ ըզգաշան ընկալան:

Չամպարըշան նոքա առ դիւա ինչ հացի.
 Ի ճիգն անհոգ, անփորձք կարեացս իմ գողով,
 Չարկին [Թաւալ դարկն ապաւէն ընտանի,
 Ըզծանօթս հին՝ զորս հատանեմ գողալով:

Ոգըլերուք բունք՝ անհուն ազգաց գուք սուրբ յարկք,
 Մեղուաց, մարդկան և [Թըռչնեկաց եթերին.
 Ճօճեալքդ ի ճեմ հողմածածան աշտարակք,
 Յերգս և ի մեղը ոյց կողք խայտան զովագին:

Մի այլ մընայ գաւըն կընքով գրոշմեալ արդ ...
 Հարից ընդ փոյթ ըզսիրալիրս յիշատակ ...
 Չասպընջականս՝ զհայր անտառիս և ըզզարգ.
 Անկցի և նա ... յետոյ և ես նոյնգունակ » :

Մայրեւորդ չին՝ հար կործանեա անբարբառ .
 Են հինաւուրց անտառք գիպողք առ տապար .
 Դու զերգ մըրրիկ՝ ես բարեգործ լ՛ ահարկու ,
 Դառն է պաշտօնդ և ծանր երկաթ քո հատու .
 Ձի սըրբանուէր են քեզ շիրմօք անտառքս այս
 Եւ աղանեացդ ի բոյն ուղէչք ետուն կայս :
 Կազնին ինքնին պաշտեալ ի կրօնս հայրագուծ ,
 Ձօնեաց սէզ խիտ վասն հարսանեաց անկողնոյդ .
 Ի հեշտ ի քուն ընդ հովանեաւ անդ նորին
 Արբուն ախոցդ երազք ի ցնորս երկայնին :
 Խիստ է խըլել, ծախել ի բոց անխընայ
 Չաստուածընկալ տաճարի սիւնս հինօրեայ .
 Բայց այսակիր հովտաց ձորոց անարև
 Հարկ է պարզել զգըմբեթս ի լոյս ոսկեթև .
 Ձի բեզնաւոր յարփւոյն ծագել կըշուակի ,
 Յերկրէն նամէտ փախիցեն դէք խաւարի ,
 Եւ պատրաստեալ նովաւ ի հունձ գաշտք անդէն ,

Արքայապանժ կաղնեաց մարգիկ իշխեսցեն :
 Ասառած կամի, կանգնին ստանք ընդ մայրեաց ,
 Ի՛ մայք յաճախ չեն ի շինից ինչ ի բաց :
 Զերգ ծառ 'ստ աւուրց (Թափէ տերես լ' ընձիւղէ ,
 Եւ ոչ ըզկամս և զգործ մեղուաց ինչ խըտրէ ,
 Սապէս աշխարհ հըլու ի շունչ փոթորկի ,
 Նորոգանալ միշտ ի սլարոյրս իւր պարտի :
 Զի աճեսցին ազգք ընդ բըլըոցն հովանեալ ,
 Արբուն տոհմիդ սլարզեա տեղիս տապարաւ .
 Ընդ կեռասիւքն անդ սլըտղաւէա կարմրեփեան
 Իիւր սեալ արտունձք առցեն ընթրիս մեծաձայն .
 Յոյր գեղանի մանկունք 'դ երեկս յիւրեանց դարձ
 Երգովքն ընդոստ ի սայլս ելցեն վերամբարձ ,
 Եւ իւրմբեսցին ի ճաշ գրացեք զուտրթագոյն
 Բեկեալ զձերմակն հաց առ ոտիւք ձիթենւոյն .
 Եւ ժողովուրգս այս համօրէն ցիր դաշտաց ,
 Ընկերացեալք սիրով ի գործըս ձեռաց ,
 Լըցցեն Երգովք ըզնահապեան այն արի՛
 Մըրըրկալից տեսող աւուրցն երկաթի ,
 Որ յարգարեաց զամայս ի վար մարգկային ,
 Եւ առ գործել ազատ որգւոցն ըզբաժին ,
 Առ ոտն եհար կոծովք զպաշտեալն հովանի
 Ըզսէր և զահ բազմադարեանն անտառի :

ՔՆ ԱՐԵՐ ԳԱԿ ԱՆՔ

ԱՌԱՒՈՏՈՒ ԱՂՕԹՔ Ի ԴՐԱՒՏԻՆ

Արդ լըրջացաւ ամենայն և ի դաշտ անդըր փոռթացան .
Իսկ ելեալ ըստ կամար տընկասաղարթ հովանոցին ,
Յանարգել գըտան տեսիլ այգուն ծագման և արևու ,
Որ գեռ ելեալ անուօք կառայն առ եզերօք քերէր ծովուն .
Եւ յերեսս երկրին ընդ լայն ըզճառագայթսըն ցողախառն
Արձակեալ մերկանայր յանպարագիր դաշտավայրի
Զարևելս ողջոյն դրախտին և զբազմերան մարգս Յգեմայ :
Խոնարհեալ պագին երկիր և աղօթիցն ըսկիզբն ետուն՝
Որ այգուն այգուն մտաչէր ըստ արժանի յոճ կերպակերպ .
Զի ոչ ոճ նորանոր և ոչ եռանդըն սըրբանուէր
Պակասերնոցա յօրհնեղ զշաստիչն իւրեանց ի սերտնըւագս ,
Որ ի թիւ խօսեալ բարբառ և որ երգեալ յանպատրաստից :
Պերճ և արագ ի շըրթանցըն խաղային բանիցն հոսանք
Հետևակ կամ ի չափով տունս յօրինեալ գեղգեղաձայնս ,
Անկարօտըս տաւղի և կամ փանդուան քաղցրերգութեան .
« Քոյ են այս հրաշակերտք , ծընօղ բարւոյն , Ամենակալ ,
Քոյ է այս տիեզերացըս յօրինուած չըքնաղագեղ :
Զի սքանչելի դու ինքնին իցես էակգ անճառելի՝
Որ ի վեր քան զերկինս նըստեալ հանգչիս աներևակ ,
Կամ ընդ աղօտ ինչ նըլմարեալ մեզ ի տըրուպս արարալ
[Ժոցք ,
Որ և անդր իսկ քաջ ի բաց քան զամենայն մըտաց հասումն
Ըզքո փայլեն բարութիւն և զգօրութիւնդ աստուածեղէն :

Որ հըմուտ ևս էք ի բան, որդիք լուսոյ, գուք հրեշտակք,
Խօսեցարուք. քանզի զնա տեսանէք գուք, և խուճբ առեալ
Բողորեալ կայք զաթոռոմն յերգ պարաւոր հընձմանց յեր-
[կինս,

Անգիշեր և բերկրալից տուընջեան ի լոյս մեծապայծառ:
Ըզնա յերկրի արարածք փառաբանսցեն համարողոր, [ճան:
Ձինքն առաջին, զինք վերջին, զինքըն միջին, զինքն անվախ-
Դու յաստեղան ամենագեղ, ցայգոյն յեախնգ յուզարկաւոր,
Եթէ ոչ առ աշալուչն պատշաճիս գու մանաւանգ,
Տըւընջեանն առ հաւատեցայդ, որոյ բողորքո լուսալիր
Ձայդ պըսակէ դեղածիծաղ, ըզնա գովեա ի քուժ շըրջանգ՝
Յելս անգ առաւօտուն, յայն նախընծայ ժամ դեղեցիկ:
Արեգակն, աչք և հոգի մեծամարմին տիեզերացս, [ձրացո՛
Եւ գու զնա մեծ ծանիր քան զքեզ, և զգովութիւնսըն բար-
Յարշաւանգ յաւէժընթաց, ի վերանալդ յերկինս ի վեր,
Ի բարձունսըգ ժամանել ի միջօրէ, և կարճատել:
Դու լուսին, որ հանգիպիս հապ յարեգակն ընդ արևելս,
Հապ փախչիս անշարժ արփեզն ի սրավար ճախրըն պընգե-
[լովք.

Օն և գուք միւս հընգեքին մոլորահետ բոցք թափառիկ,
Որ յօրինէք խորհըրդաւոր պար իմն անխուղ գեղայարմար,
Երգեցէք զնորին գովեստ որ զլոյս կոչեաց ի խաւարէն:
Օդք և տարիք, անգրանիկք ծոցոյ բնութեան չորեքգիժիք,
Ընթացեալք քառահողով ի շըրջանակ յաւերժական,
Ո՛վ գուք բազմակերպիք, որ զընաւս յօդեալ և սնուցանէք,
Յեզմունքդ անզրաւ՝ փոփոխեսցեն մեծի Հասաչիս նոր նոր
[գովեստ:

Եւ գուք մէգ և շամանդաղ, որ յայս կէտ թուխ և խըրթ,
[նեքանգք

Ի բըլբոց ուի ծըխաշունչ լըճէն ելեալ վերասլանայք,
Մինչև արև՝ ոսկեգոյն ներկանէ զծոպարդ ասրակերպ,
Հապ՝ օն արիք ի պատիւ տիեզերաց մեծ Արարչին:
Եւ իցէ զի թէ յարկըք ամպովք զերկին այլագունեալ,
Կամ իցէ թէ արբուօլիք զերկիր պասքեալ ի տեղ տարափ,
Յեղանեղք եւ յիջանեղք՝ հանջիք յաւէժ զնորա գովեստ:
Ձգովեստ նորա, գուք ի քառից ծագաց երկրի շընչեալ
[հողմունք,

Հընչեցէք մեզմ կամ ուժգին, խոնարհեցէք ըզլուխսըդ,
[շոճք,

Տունիք ազգի ազգի, և գուք ճօճեցարուք յերկրպագել:
Դուք ևս, աղբիւրք յընթացըս ձեր կարկաշատահք, քաղցր
[ի մըրմունջ

Օ՛ն առեալ ի ձեր խոխոջսրդ պատմեցէք զնորա գովեստ:
Խառնեցէք ըզձայնսդ ի մի, առհասարակ շունչք կենդանիք,
Թըռչունք որ երգ ի բերան յերկնից ի դրունսըն վերանայք,
Ի ձեր թեւ և յօրհնութիւնս բարձր արարէք զնորա գո-
[վեստ;

Որ ի ջուրսըն զեռունք, և որ յերկիր շըրջիք ի ճեմ,
Որ կոխէք զայն սիգապանծ և որ սողիքըդ նուստաբար,
Վըհայ լերուք զի չըլըռեմ, ոչ վաղորդայն, ոչ ընգ երեկս:
Բըլլոյն զբարբառս իմ կամ հովտին, և աղբերաց կամ հո-
[վանւոյն

Տամ ի փոխ, և եղանակքս ուսուցանեն զնորա գովեստ:
Խընգա, Տէր տիեզերաց, լեր միշտ բարեաց առատաշնորհ.
Եւ թէ գիշեր գումարեաց և կամ թաքոյց ինչ չար, ցըրուեա,
Ձոր օրինակ ըզխաւարն աւասիկ արդ հալածէ լոյս ։
ՄԻՆՏՈՆ. Կորսոսք Դրախտին:

ԵՆՈՒՆԴ ՑԵԱՌՆ

Որպէս խարակ ի ծագաց
Բարձու լերին առապար
Անկեալ թափով դըզըրգման,
Թաւալագլոր սըրաւար,
Դ՛որ ոլորտապտոյտ ափափայտ
Ճախր ի հովիտըն յորսայտ
Առեալ՝ մըխի և մընայ.

Անդ ուր անկաւն անցարիւր
Կայ ծանրաբեռն յիւր կուտակ.
Եւ ոչ դարուց ի շըրջել
Ի վազեմին անդր ի ծագ՝
Տեսանէ զակն արեռու,

Թէ զօրուծիւն ձեռնտու

Ոչ վերառնուլ զինք ջանայ .

Սապէս անկեալ որդին հէք

Կայր յանցանացն առաջին ,

Յօրէ՛ յորմէ խոստացեալ

Յասումն անճառ , գառնագին

Արկ զինքն յազէտըս ցաւոց ,

Ուստ զիւրն խրոխտ պարանոց

Չմարթէր այլ և ըս կանգնել :

Ո՛վ յատել ծընելոց ,

Ո՛վ ոք ուրեք էր կարող՝

Ասել առ Սուրբըն սըրբոց

Յանմատչելին՝ Ներեա՛ , Թո՛ղ .

Կըռել նոր գաշն յաւիտեան ,

Եւ զգըժոխոց յաղթական

Առնուլ զաւարն և կորզել :

Ահա Մանուկ մեզ ծընաւ

Ահա աըւաւ մեզ Որդի .

Դողան ոսոխ զօրուծիւնք

Շարժման յունիցն առ ահի .

Նա զձեռն առ մարդ կարկառէ ,

Որ ողջացեալ և յառնէ

Քան ըզնախկին փառաւոր :

Յեթերական կոյեներից

Բըզիւէ աղբիւր վայրիջեալ .

Ընդ ապալերըս վըշոց

Կենդանացայտ ծաւալեալ .

Կողերք ըզմեղըր ծորեն՝

Եւ տատասկաց փոխարէն

Փըթթի ծաղիկ անդանօր :

Ո՛վ դու Որդի , էակից

Մըշարնջենին , միշտ իւրև .

Ո՛ր դար կարէ քեզ ասել՝

Ըսկիզբն եղև քո ինև :

Որ էսդ յերկնից լայնասփիռ

Անպարագիծ դու ի ծիր ,

Զոր բանք քշին ըստեղծին .
 Եւ գու զգենուլ յաճնճն առեր
 Հողազանգուած զայս մարմին .
 Զինչ արժանիք . ո՞ր շքնորհ
 Յայսքան պատիւ զնա հանին .
 Թէ ի խորհուրդս իւր թաքուն
 Յազթող գտանի թողու թիւն .
 Անհուն է յոյժ գու թ նորին :
 Ծընաւ նա՛ յօօր . յԵփրաթա
 Ի նըկատեալ անդ տեղին
 Կոյս ոք վեհազն ել գընաց
 Իսրայելի փառք տոհմին ,
 Յըզի որգուով այնքանեաւ .
 'Ստ իւրոց խոստմանց նա ծընաւ .
 Յորմէ սպասեալն էր՝ եկաց :
 ԶԱստուած որգին՝ մայրն անճառ
 Պատեաց ի կտաւըս գըձուձ ,
 Եւ ի մըսուրն աղքատին
 Մեղմտգորով եդ , հանգոյց .
 Եւ , երանի՛ , գետնամած
 Երկիր եպագ առ Աստուած ,
 Զոր սուրբ արգանգ իւր եբաց :
 Հրեշտակ յերկնից առ մարգիկ
 Աւեաաւոր բասախս այս ,
 Ոչ հըզօրաց սաւառնի
 Պահպանական անգր ի կայս ,
 Այլ յերկիւղած մէջ հովուաց ,
 Խիստ աշխարհի անգիտաց ,
 Լուսապայծառ երևի :
 Զորով ընդ ցայգըն ծաւալ
 Երամովին շուրջ գալով
 Բիւր գունդք զուարթնոց փարեցան
 Հրացայտ թևօքն յածելով .
 Եւ վառ յեռանգն հեշտային՝
 Փառս առ Աստուած երգեցին ,
 Որպէս յերկինս անդ երգի :

Կըրկնեցին զերգն հըրճուական ,
 Դարձ արարեալ ի բարձունս .
 Ընդ անցեալ ամսսն փեռեկ
 Համբառնալով և յանհունս
 Ձայնն հեռացաւ սըրբանուէր ,
 Մինչ զի ոչ ևս այլ լըսէր
 Դասակ հովուացն երջանիկ :
 Փուծանակի ի խընդեր
 Օթևանին այն հիբի
 Ելին նոքա և տեսին՝
 Ստ ասացելոյն օրինի .
 Խանձարրապատ անդ տեսին
 Տաղաւարեալ ի մըսրին
 Ճըչել զերկնիցն արքայիկ :
 Նընջեա՛ , Որդեակ , և մի լար ,
 Նընջեա՛ , Ձաւակդ երկնաւոր .
 Ոչ իշխեսցեն ըզգըլխովդ
 Շաչել մըրրիկք ահաւոր .
 Կազմք յամսարիշտ ի յերկրի ,
 Հանգոյն ձիոց ի մարտի ,
 Վազել քոյին յանդիման :
 Նընջեա՛ , ո՛վ Դու երկնային .
 Ազգք և ազինք ոչ գիտեն
 Ո՛վ ոք ծընաւ . այլ ընդ փոյթ
 Վեհ ըստացուած քո իցեն .
 Եւ զթապաւոր իմասցին
 Անդ ի խոնարհ հանգըստին
 Եւ ընդ հողով ծածկուծեան :

Ա. ՄԱՆՑՈՂԻ

ՊԵՏԵԿՈՍԵՒ

Ո՛վ դու ծընող մայր սրբաց ,
 Պատկեր վերնոյ քաղաքին ,
 Անապական սուրբ արեան
 Աւանդապահ յաւէտ հին .
 Որ ընդ յոլով շարս ամաց
 Կըրես , մըրցիս և հայցես ,
 Եւ ըզխորանսըդ լայնես
 Ծովէ մինչև անդր ի ծով .
 Հանդիսարան յուսողաց՝
 Տուն Աստուծոյ կենդանւոյ ,
 Ո՛ւր էիր բնաւ , ո՞ր եղև
 Վայր նորածնիդ օթելոյ ,
 Յանօրինաց մինչ ի մահ
 Վարեալ քոյին թագաւոր ,
 Ներկեաց ըզլեառն ի բոսոր ,
 Իւր գերահրաշ սեղանով :
 Եւ մինչ ի մեւթ խաւարէն
 Ելեալ մարմնովն աստուածեան ,
 Շընչեաց երկրորդ այլ կենաց
 Ըզոռնչ հըղօր զօրութեան :
 Եւ մինչ կալեալ ի ձեռին
 Ըզքաւութեան փրրկանակ ,
 Աստի առ Հայր վերելեակ
 Յերկնից գահոյսն համբարձաւ :
 Հաղորդ կարեացն հեծութեանց ,
 Քաջածանօթ գաղտնեացն իւր ,
 Յաղթանակին դու նորա
 Ծընունդ անմահ կայիր ո՛ւր :
 Հըսկողդ արթուն երկիւղիւ ,
 Յանյուշութեան լոկ անքոյթ ,
 Քըտեալ զորմունս ի ծածկոյթ
 Մնայիր ցըսուրբ օրն անձկաւ :
 Մինչև հանգեաւ քոյդ վերայ

Նոր նորոգող սուրբ Հոգին .
 Եւ զանրսպառ բոց հըրոյն
 Վառեաց քոյումդ ի ձեռին .
 Մինչև նըշան բարձր ի լեռան
 Եդ զթեզ ազգաց և աղանց ,
 Եւ ի շըրթանց քոց հոսեաց
 Բարբառեչոյ յորդ ալբիւր :
 Հանգոյն լուսոյ սըրաթև
 Անձրևեչոյ ընդ հանուր ,
 Որ յով ուրեք թէ հանգչի՛
 Երփըն ծնանի բիւրուց բիւր .
 Այսպէս եղև լըսելի
 Բազմապատիկ ձայն Հոգւոյն .
 Հայն , Արուայիկ՝ 'գ Ասորւոյն
 Լուան ի լեզուս բընատուր :
 Երկըրպագողք կըռոց ,
 Սըփռեալ համայն ընդ ափունս ,
 'Իարձ և հայեաց ի Սալէմ ,
 Ըզսըրբաձայն լո՛ւր գոչիւնս .
 Խոնջ ի յանարգ պաշտամանց՝
 'Իարձցի առ նա ինքն երկիր :
 Եւ գուք հարսունք՝ բերկրալիր
 Կենաց բացողք ըզըրջոն ,
 Որ ընդ յանկարծ ընդոսանուլ
 Զարթնուք թաքուն ձեր բեռին .
 Որ փոքր միւս ևս և բանայք
 Զարգանդ երկանց ցաւագիտ ,
 Առ սուտանունն հարսնաւէր
 Մի երգեսլիք օրհնութիւն .
 Նըւիրական է Սըրբոյն
 Որ ի ծոցիդ ձերում կայն ,
 Հիմ անազատն հեծէ գեռ
 Պաշտեալ համբոյր որգեկաց ,
 Եւ նախանձու շարժէ զակն
 Առ ծընող ծոցն ազատաց .
 Զըգիտիցէ՛ զ'ամբարձ Տէր

Յարքայութիւն զհէքս ընդ իւր .
 Զի խորհեցաւ ի ցաւս իւր
 Յողջոյն որգիս Եւայի :
 Ազատութիւն նոր երկինք
 Եւ նոր ազինս աւետեն ,
 Նորոք բաժինս , ընկձեալ փառք
 Ի շքեղ հանգէսս յոքնագէմ .
 Եւ նոր անդոյր անվերգով .
 Հրապուրանաց անլըսող ,
 Ում է աշխարհ այպանող ,
 Բայց զոր կապտել չբմօրթի :
 Աղերսաւորք , ով Հոգիդ ,
 Առ քոյ պայծառ սեպանովք ,
 Ընդ մացառուտս ամայիս .
 'Ի անմարդի ծովս յածելով ,
 Ի ցուրտ Անդեանց ցըլիբան ,
 Յիսկեանեայ ցթաւն Հայիդի ,
 Յըրուեալք 'դ համայն կողմն երկրի ,
 Միախորհուրդք կամաց քոց ,
 Հայցեմք ի քէն . Է՛ջ Հոգիդ ,
 Խաղաղաւէտ հաշտօրէն ,
 Յերկըրպագողոս քոյին
 Եւ ոյց գիտակ քեզ չիցեն .
 Է՛ջ վերածնող և վառեա՛
 Ըզսիրասս յերկբայս շիջամեռ .
 Եւ հաաուցուճն երկնանուէր
 Լիցի յազթողն ընկձելոց :
 Է՛ջ, Սէր , հանգիր ի հոգիս ,
 Ըզբարկութիւն ցածո՛ գոռ .
 Անփոխելի ատուր խորհուրդս
 Յըվերջին օրն ահաւոր :
 Քոյդ զօրութիւն բարերար
 Սընուսցէ զտուրըս քոյին .
 Հանդոյն փըթթող արեգին
 Զծաղիկ ի յամբ ընձիւղէն :
 Որ և մեռցի յամբ ապա

Ի գալարիս անտեսեալ,
 Եւ անյարիբ վառ գունսովք
 Վերջաւորացն լուծեալ,
 Թէ ոչ առ ինքն գարձցի
 Եթերային ձոյլ օգովք
 Կենդանարար լոյսն ամոք,
 Այն որ անխոնջ միշտ հաստէն:

Հայցեմք ի քէն մաղթելով.
 Առ ազօտ միտս եղկելույ
 Է՛ջ իբրև շունչ ցանկալի
 Եւ մըխիթար սիւք օգոյ.
 Է՛ջ յոխորտ միտս ուռուցիկ
 Իբրև մըլրիկ ահաւոր,
 Եւ պակուցուծն ազգեա խոր
 Զի զքոյ երկիւղք ուսուցէ:

Առ քեզ, յերկինս՝ որ իւրն է,
 Զահն ի վեր հէքն կալցի.
 Զողբսն լուծցէ ի բերկրանս,
 Խորհեալ թէ ում նըմանի.
 Ում շատ տըւաւ ի պարգև,
 Տացէ փոխան հաշտ ակամբ,
 Ամօթ իածիկն լուռութեամբ,
 Որով քեզ տուրն հաճոյ է:

Յանձնուելին ի ժըմիտ
 Շընչեա մանկանց մեր ազայոց.
 Զերփն պարկեշտ ծիրանի՝
 Օրիորդիկ սուր գեղոց.
 Տուր սուրբ հըրճուանս հոգեկիր
 Միայնասէր կուսանաց.
 Եւ սուրբ արա ըզհարսանց
 Ըզպարկեշտ սերն և գորով:

Զափ գիր յոխորտ պատանեաց
 Հոգիսն ի սիրտ խանդավառ.
 Ուզգեա ի կէտն անվըրէս
 Կորովամիտն ըզհանձար.
 Պըճնազարգեա զալուոյթ

Ամբիժ ըզձիւք հըրճուարար,
 Եւ փայլեալ յակըն թափառ
 Վախճանեւոյն լի յուսով:

Ա. ՄԱՆՅԱՆԻ

ԱՌ ԼՈՅՍՆ

Լոյս սուրբ, ողջոյն ընդ քեզ, անդրանիկ դու երկնից ծը-
 Եւ կամ մըշտընջենին յաւէտակից դու ճառագայթ. [նուռդ
 Իցէ ինձ անբասիր ի դոյն ըզքեզ կարդալ անուռ:
 Քանզի լոյս է ինքն Աստուած, և ոչ բնակեալ յաւիտենից՝
 Բայց ի լոյս անմատոյց. ի քեզ ապա բնակեաց և եթ,
 Ի քեզ, ծագումըն զըւարթ անեղական զուարթ էութեան:
 Կամ թէ լաւ և ըս սիրես ջինջ արփենի կոչիլ վրտակ,
 Ո՞ր զաղբերակնըդ պատմեսցէ. քան զարեգակն և քան զեր-
 էիր դու կանուխ, եւ յէական ձայնին բարբառ՝ [կինս՝
 Յածկեցեր որպէս օթոց ըզտիեզերս, որ ելանէր
 Ի խաւարուտ յանդընդախոր ի ջուրց ի դուրս երևեալ,
 Յանպարոյր և յանկազմ ունայնութեան ծոցոյ ստացուած:

Թրոխտագոյն թեւօք ի տեսքո վերըստին այժմ այսրէն
 Հուռկ ուրեմն աւասիկ ի դըժոխոց զերծեալ լըճէն, [գամ՝
 Թէպէտ և ընդ երկար ի մըթագին վայրն ըմբռնեալ:
 Մինչ ի թռիչս իմ վարէի նդ միջին խաւարն ու նդ արտա-
 ԸզՎիհն երգեցի և ըզԳիշերն յաւերժական [քին,
 Այլաձայն նուազօք մատանց յորփէական ի փանդառանէն:
 Երկնային ուսոյց Մուսա զիս յանգըգնել յէջսն մըռայլ
 Եւ գալ այսրէն ելանել. գործ նորացոյց և տագնապող:
 Ճողողբեալ գամ մի անգուստ՝ դառնամ առ քեզ ի քոյդ
 [տեսիլ.

Եւ քո ջահ կենդանարար եւ տիրական յիս արծարծի:
 Իսկ դու բնաւ չըգառնաս առնել աշացս այսոցիկ այց,
 Որ ի զուր թաւալին հանգիպել քոյ սուր նըշուլիցդ,
 Եւ չըգառնեն աշալուշ. այնպէս ի խոր շիջոյց խաւար
 Երլուծիւն զակնակապիճս և կամ սքողիաց ճայրոտ մըթեր:
 Այլ ես ոչ գադարեմ ըզուսածեմ փարեւ վայրօք,

Յաղբէրս ականակիտս, ի հովանուս մայրեաց անտառս,
 Եւ ի բլուրս արեգակեացս, ի սէր զմայրեալ սուրբ նըւագաց:
 Իայց գու, Սիրսն, մանաւանդ, գու և վրտակբըդ ծաղկա-
 [զարգ,

Որ Թանան զոտըս քո սուրբ և ընթանան կտրկաչահոս,
 Ոչ ապաիտս արնեմ ըզձեզ՝ գիշերայած շըրջել ըզձեզք:
 Ոչ և զնրմանս ինձ յաղէտքըս յայսոսիկ մոռանամ ինչ, —
 Ո՛ր ապր ինձ և ի փառըս պարծանացն հաւասարել, —
 Զերկոսին մահկանացուս, զմէոնէան կոյրն և զկոյր թամիր,
 ԶՏիրեսիաս և զՓինեսս, ըզհինաւուրցըն մարգարէս: [ւորս,
 Իմաստս յայնժամ որոճեմ՝ որ չտփս ինքնին տան նուագա-
 Որպէս հաւըն զըւարթուն եղանակէ զերգսն ի մըթան,
 Սաքրեալ ի Թաւ հովանոց գիշերային գեղգեղէ ձայնս:
 Այսպէս տարեաւ դառնան ժամք, սակայն առ իս տիւ-
 [չառնէ դարձ.

Ոչ ևս ըզքաղցըր եկս այդուս տեսանեմ ոչ զերեկորին,
 Ոչ ըզծաղիկ գարնայնի, և ոչ ըզվարդ ամարայնոյ, [գէմս.
 Ոչ ըզչօտս և զանդեայս, զաստուածագիծ ոչ մարդոյն
 Ամպք և աղջամուղջ մըշտագիշեր զիս պաշարեն:
 Որոշեալ ի մարդկան զըւարձալից ճանապարհաց, [կանի,
 Մատեան չըքնող հրմտութեանց համակ սպիտակ ինձ ներ-
 Ուր բնութեան ջընջեալ են գործք և կամ քերեալ վասն
 [իմ իսպառ,

Եւ բնաւ ըստ մին ի մըտիցն իմաստութիւն յինէն փակեալ:
 Վասն որոյ, լոյս երկնային, ծագեա ի ներքս յիս մանա-
 [ւանդ.

Յամենայն ի զօրութիւնս ոգւոյս մըտցեն քոյ ճառագայթք.
 Ակն ի հոգւոջս հաստեա, բարձ փարատեա զմէգս ի
 [նմանէ,

Զի զմեռոտ աչաց տեսից զաներևոյթս՝ և խօսեցայց:

ՄԻՆՏՈՆ. Կորուսոք Իբրեքին

ԹՇՈՒԱՌՈՒԹԻՒՆ ՄԱՐԳԱՆ

Մարդոյ կանանցածնի իբրև՝ զի դոյզն եդաւ սահման.
Աւուրք զոր կեայ նա յերկրի՝ աւուրք ցաւոց և տըրտմուս.
[Թեան.

Սրանայ շոյտ քան ըզփայլակն, թօթափեցաւ զէրգ ծաղիկ.
Իբրև ըստուհեր ի իուսափել՝ ո՞րչնորուն տեսցէ կընիք.
Իայց զաղփաղփուս և յայդ պատկեր՝
Խնարհիս դու, անմահ Տէր.
Ի դա զաչացդ անպարագիծ
Թօթափելով զակնարկիս:

Եւ զահեղակերպդ ըզքո գատաստան՝
Մերկապարանոց առնես յանդիման:
Իայց ո՞ զալեխրոխա բաւեսցէ սըրբել
Յընթացս անդ ըզգեա՝ ոյր պըղտորեալ ջուրք՝
Յաղբուրաց անտի վիժեն թունաբեր:

Թէ զհանգերձեալս նորուն վարես և զբողգ սանձես ի ձե-
Եւ ժամանակ նըմա չափես ընդ որ վաղել անհնարին, [ուին.
Դադարեա, թոյլ տուր աղէ, զի վայր մ՝ ի դիւր ելեալ
[մարդկան

Ըզարխուսն ամբըեսցէ իւր կեանս օտար իբրու վարձկան:
Ձի հատեալ բընոյ ծառոյն՝ ոչ մեռանի անյոյս անգարձ.
Այլ յոստաքանց նորուն ի բուն բողբոջք ի քուն կանկենաց.
Տեսցուք ըզնա միւսանգամ զի ծերայեալ նորուն կոճեղ՝
Բարունակս աճիւնաճիղ արձակեսցէ սաղարթագեղ.
Յորժամ արմատ նորս յերկար
Ի սիրտ երկրի նինջ էառ.

Եւ արմ գօսացեալ չողմոց խըստաշունչ՝
Ի հող ուի փոշի գիակն անչըշունջ:

Եթէ երբք ալիք պայծառ նըմին մերձի այցելու,
Յանկարծոյն ոգի բերեալ ըզնիր՝ թափէ նա մահու.
Եւ գարնանի հատեալ ողջսիք՝ յիւր նա շըրջի մանկուծիւն,
Եւ հերպանծ գիտակ ի վեր նա ամբառնայ ծաղկածին:
Իայց մարդոյ՝ գամ մի ընդ սեամս ըզգարշտպարս ձը-
[գեալ մահու,

Ձինչ նըմին մընասցէ այլ քան ըզգագազսըն երկրաչու .
 Հեղեղատին քան ըզջուր երագահոս սահին իւր կեանք ,
 Սահին անցանեն , սին չէ թողեալ իւր յիշատակ .

Մինչ տուընջեան աստղըն պայծառ

Յերկնից շողայ ի կամար ,

Քուռն երկարաձիգ ըզնովաւ անկցի ,

Եւ մահահանգոյն նինջ ի սիրտ երկրի :

Աստուած հըզօր , իսկ առ իմէ՛ ըզքինուդ զբէժ անտեսելոյ՝

Ոչ ի գիրկըս զիս քընոյգ թողցես սուզել աներեկոյ ,

Ժամանակեալ ինձ անգրէն ըզզարթուցման զիմ՝ ժամանակ ,

Եւ ըզպահ զայն ցանկալի յոր առնիցես ինձ յիշատակ :

Վսխճանեալ միանգամ մարդոյ զընթացս իւր համառօտ ,

Իցէ՛ թէ լուծեալ ի կապանաց աըրտմահաղորդ՝

Տեսցէ ի հանգիպոյ ըզյաւիտեանց ծագեալ արև .

Ի դոյն ես քաջայոյս ընգ մարտս անցեալ երկարատև ,

Ըսպասեմ հանգերձելոց՝ զոր կեանք անմեղ յուսան պարգև :

Ազգ ձայնիւդ առնես ինձ , Տէր , բանիցդ ես տաց պա-

[տասխանի .

Ե՛կ ազէ պարզեա բազուկ , կեանք իմ շընորհ է քում

[ձեռին .

Երբեմն առ քեզ ապախտաւոր , բայց զարդիս ծունր ի

[գեանի .

Ո՛հ , զոր յանցեայն՝ վիշտք իմ և ցաւ զայն քաւեցին բազ-

[մագիծի .

Կընիք յաւիտենից ի գըպրութիւնդ արկցես կենաց .

[րինաց :

Յոր դրոշմեր զառ քեզ յանցուածս և զանարգանս քոց օ-

Ըզգոռոզ ափափայից հարթիցեն զգլուխըս ժամանակք ,

Եւ լեռնաբերձ ծերացեալ վէմ ի վիհ սուզաւ հիմն ի յա-

[տակ .

Ձուրք ըզբարինս փորոքեցին , ծովու զեզերսըն բաղխելոյ

Յաղթական ողողեաց , զափուռնս ընկճեալ ի հանգիպոյ :

Ձայագոյն ըզմարդ եղծանես , Տէր , և գողգոջուռն նորուն

[բայլից

Հըզօր բազկիդ կարկառելոյ՝ նեցուկ նըմին յառնես յերկ-

[նից :

Դու զգէմս նորուն թարշամես, դու կերպարան փոխես նը-
 [մին,

Դու... զի՞նչ ևս այլ. հաստատեցեր ի նմա զերեսդ՝ և ել
 [ոգին:

Զիք նորա ընդ ծընընդոցն այնուհետև մասն և բաժին.
 Սա՛ւասիկ ի մահացուաց և յիւր մեկնեալ իսկ սիրելեաց՝
 Հաւասարորդ ոչ ևս ելցէ նոցայն խընդի կամ թէ վըշտաց.
 Ո՞ր այն յոյս ամոքեսցէ, յերկիր խոնարհ վիշտս ըզնորին.
 Մինչ ի հեծել լալահառաջ կենաց նորա արևու բաժին.
 Զայս նըմա ճակատագիր՝ երկնից հրամանքն կապեցին,
 Զի գառն հոգին հեծեծեսցէ, և վըշտակիր ծիւրէ մարմին:

ԼԸՎԱՎԱՍԻՐ

ԽՈՐՀՈՒՐԴՔ ՅԱՌԱՆՁՆՈՒԹԵԱՆ

Միայն կամ ես, այլ հոգիս
 Մերկացեալ յիւրն ի կաւէ,
 Ի մի խորհուրդ փայլակէ
 Որպէս ինչ էրն վեհ և սուրբ,
 Եւ զմենութիւնն ահարկու՝
 Արարածովք ինձ լընու:
 Երկնաշընորհ ինչ պատկեր
 Բերէ աչացս առաջի,
 Որ զիս զմայլեալ ի հոգի՝
 Տանի յերկինս ընդ նմա.
 Դա ինքն Ոգին է սիրոյ,
 Դա արեգակն հաւասոյ:

Սրբ նայն հեծէ՛ ես ըզբոյր
 Ըզգամ ծաղկանց համօրէն.
 Մինչ խօսի՝ գանդ մի անդէն
 Լըսեմ՝ յեթերս ես ըզսէր.
 Թէ ժըպտեսցի՛ է և շող՝
 Որ արփեհնեացն է յալթող:
 Վե՛հ զիս ըզգամ ընդ նորա
 Կարեաց կենացս ընդհանուր.

Ոտք իմ կոխեն առաժուր
 Ըզխոշտանգանս և զյանցուած .
 Իմոյ սըրտիս թըռչանոց
 Զիք ոչ մի թև զուգընթաց :
 Եւ ոչ երկիւղ ինչ ազգէ
 Մարտ սպառնոյն յիմս հագուջ .
 Մեռայց արգեօք, բայց ես ոչ
 Կարիմ ի սոոր իջանել .
 Շընչոյս ցյետին տուրևառ՝
 Կեցցէ խորհուրդս իմ իսպառ :
 Անկցի մարմին, այլ հոգի
 Ի սոյն խորհուրդ լըծորդեալ՝
 Համարեսցի յաւէժ կեալ
 Ըզնոյնգունակ ցանդ ըզլեանս,
 Զի չկարիցէ վեհագոյն
 Քտանել ուրեք խընդութիւն :

ԳԱՅՐԱՆԻՔԱ

ԿԱՆԹԵՂ ԳԻՇԵՐԻ

Քուն ընդ արթունս ի նիրհ թեթև՝ յանկողնոյդ
 Զէ՛ քոյ տեսեալ զառկայծ լապտեր շիջանուտ,
 Որ նըլաղեալ տակաւ ընդ մռայլ ըստուերին,
 Զյարկ սենեկիդ պատէ ի սուգ խաւարին,
 Իբր հուսկ ողջոյնք ականողեաց մահաքուն,
 Երբ ի ճաճանչ յետին փայլիցն երերուն՝
 Ճեմեալ ճօճին հանդերձքդ ի կախ աստ անդ ցիր,
 Իբրև զուրու՝ ըստ տապանին խուսեալ դիր :
 Անդ միտք թափառ ընդ պըտուտից ալս անբաւ,
 Ո՛չ լար ի ձեռն, ոչ ջահ՝ գընայ գիմագրաւ .
 Խորք անըսպառ, նըսեմ խորհուրդ գերադոյ,
 Ուր կանն ի չփօթ գաղսնիք մահուն խուզելոյ :
 Անդ մենաւոր պարտասելում առ խընդիր
 Երբ պատասին ոտքն ի կըտաւ մահակիր,

Խօսի ի սիրտ. Այսպէս կենացս ի զըրաւ,
 Զերդ լոյսդ աղօս՝ պասքով ձիթոյն կայ ծարաւ,
 Առ դոյզն ինչ ժամս օր մի արկցուք մեզ հայցուած.
 Այլ անարդիւն անդ ուխտք լիցին մահացուաց,
 Զի անյապաղ խաւարեսցի մեզ դիշեր:
 Իբր իժ անձկով բերեալ ի հաւ ողբանուէր՝
 Կորզէ զաւուրս մեր մեծավիհ գերեզման.
 Ոտք կից ամփոփ, ձեռք սեղմ կողից ընդ երկայն,
 Իբր այն զինև թաւալագլոր հոսի հող,
 Որպէս բացուստ դնայուն տապան սևաքող.
 Եւ յամբ հընչեն տաղք տըրտմախառն աղօթից,
 Զայն առ դապաղն արկեալ. Վիցիս դու սուն ինձ.
 Եւ առ մոռաց. Բըրեա՛ զմահիճս ի խոր դեռ,
 Զի խըզեսցի բնաւ աշխարհի շողկատ յեռ:
 Զի թէ այդէն ի կեանս առնեմ վերագարձ,
 Իբր դք օտար ումպէտ տաղտուկ թըւեցայց:
 Պակասելոցն յաչաց՝ բառնի յիշատակ,
 Եւ ըզթափուր տեղին ի կշիռ լընուն այլք:
 Վասն այն մեռետլք՝ առ խօսս ընդ մեզ զըրուցաց՝
 Գուն ինչ ուրեք թողուն ըզվիհ դամբանաց.
 Եւ էն գիտէ լոկ իբր անխտիր տարտամ սիրտ
 Ի ախուր քաղաքն յամբ յերկարէ զցաւոց վիշտ:
 Եւ զինչ տպա. փափուկ մարմինն հեշտասէր,
 Աչք թաթաւուչ յերկնից ի փայլ լուսաբեր,
 Ըզգայութիւնք՝ ի սպաս հոգւոյն կազմք յաւէա
 Եւ ընդ կենաց թելս ի կըշիռ զուգահէտ,
 Համայն վիժանք ժամանակին լինիցին,
 Եւ ի մօտոյ մատն և ապուռ օրհասին:
 Բնաւ այսսքիկ լիցին նըշխարք յերր ի փուտ,
 Ապա որդունք, ապա ոսկերք ցամաքուտ,
 Զորս ի յապայս մեռելաթաղն ի շունչ իւր,
 Սոված շիրմին յաղթ տընօրէն քաջածիր,
 Բեկցէ ջախջախ՝ ի բիր նորոգ վերապի,
 Կամ մաքրեսցէ ի ժամ թօնուտ զիւրն ըզթի.
 Ապա փոշի եղեալ ուրեմն յայն հասցեն՝
 Ում զինչ բընաւ կարգաւ անուն ոչ գիտեմ,

Խորասուզեալ անհետ ի սիրտ տարերաց,
 Ի ծոց երկրիս՝ յևս ի ծաւալ դաշտ շիրմաց,
 Ուր յամենայն դադարս ոտից գընալոյ
 Կոխան լինի մարգկան ազին հաս փոշւոյ .
 Ուր ցուցանել գոյզն ինչ տեղի չէ իսկ հնար
 Որ մեռելոց բիւրիցս եղեալ չիցէ վայր :

Նա թէ մտախոհ լիցիս, զի յայդ խուն վայրկեան
 Ամբոխ կրլից և դառնուածեանց խուժեալ գան,
 Պատեալ թափանց ըզմեօք ի խինդ վայրենի,
 Իբր անգեղաց ասարմ խոյացեալ յորս ի մի .
 Զի տաղտկուածեան որգն ոչ նընջէ բընաւին,
 Եւ յամենայն խորտիկս է դաղտ համ գառին .
 Զի անապակն ոգեպարար և մաքուր
 Ի բաժակին յատակս ունի միշտ մըրուր .
 Զի ընդ աղօտ յակն արկանել է արժան
 Ըզմաերմուծիւն սուրբ և ըզսէր քաղցրութեան .
 Զի յայտ ի լոյս ընդդէմ անէծք արձակին
 Եւ ցանդ ի մեզ ըզսէր տածեմք օտարին .
 Զի առ վայելս անարգ և խօլ հաճոյից
 Հարկ է թէ միտք անկցին յապուշ թըմբաւից .
 Իբր առիւծուց յասպարիսին դատապարտք՝
 Փոփոխ ի նուագ լի բաժակաց գինեհարք,
 Ի ցնորական և գըլխագար ծուխ շողոյն
 Յաչըս գնէին ըզմօս պատժին զահն և զհոյն .
 Թերևս ո՛հ մարգ դայր ի կենացն ըստացուած
 Իբր ի պարգև վըրէժխընդիր խիստ ձեռաց,
 Զերդ վերարկու դըժնեայ արկեալ ըզթիկամբ,
 Տակաւ ցոսկերս այրիչ ի բոց ի հրատապ :
 Այսպէս մինչ բնաւք անձկով կենաց ծարաւին
 Եւ յոր ձըգեն ըզմեզ օրէնքն Անեղին,
 Ետաք առ ի մէնջ պէսպէս չարեացն առ վըշտի,
 Կամեցան զայն կարճել ձեռօքն իւրովի .
 Յոչինչ եդեալ զմահուն ահեղն երկեան,
 Զի մի անցցեն ընդ դըժուարին հանդէսն այն :
 Եւ վատնեցին զաւուրսն հանգոյն եղծ գինւոյ,
 Յոյր ի ճաշակ կընձռին երեւք ի մօտոյ .

Եւ ըզդժժոխս արկեալ ընդ կեանս ի նըժար ,
 Վիշաք դժժոխոց թուեցան նոցա դիւրատար :
 Ո՛վ որ երբեմն եղեր ողորմ՝ նըշաւակ
 Գոռ հանգիսի այսոյն՝ էին հակառակ ,
 Որ գըլխակոր ընդ անիծիւք անիրաւ
 Լացեր տըխուր , և մահ ինքնին իսկ պակեաւ ,
 Դու Յովք արդ թուիս զերգ զըւարթուն բօթաբեր
 Ի մուշլ յաւէժ մասնեւ զգիշերն յոր եղեր .
 Խընդրեալ յերկնից եթէ բընաւ թըշուառ մարգ
 Իւրոյ ցասմանն ի բոց շանթից էր ինչ պարս .
 Գոյր իսկ ի դէպ բազկաց անմահ Անեղին
 Յար հաւածեւ ըզհողմաւար շիւղ յարդին :
 Եւ գայ ծիծաղ դառն ըզըրթամբքս արդ թափառ ,
 Ծաղը այպանաց՝ ոյր բընաւին չիք բարբառ :
 Ընդ լուսանաց դողումն ունի զիս յանկարծ ,
 Հերք քըստմընին , մարմինս ի պաղ սառնամած ,
 Եւ առ խարխափ յածիմ անբաւ ընդ ոչնս ,
 Իբր ըստուգիւ գոլ խելամոռա թէ կամ՝ ես .
 Զի ճախրասուաց միտք ընդ անլոյս վայր մըթոյն
 Զերգ զաշացու խաւարամած ձագ արծուոյն ,
 Անհուպ անտես յիւրն ի թըւիչ մենաւոր ,
 Կործան թաւալ անկեալ յերկիր խոնջ անզօր ,
 Հուսկ ի վերջէ ի նիրհ նընջէ ծանրաքուն ,
 Զար քան ըզմահ՝ թէ մնայր յաւէժ յայնմ ի բուն :
 Տէր , զի՛ հոգին յետ բնաւ ճըգանց խայտառակ ,
 Դառնայ առ սեամսդ որպէս զորդին անառակ .
 Գոյ ինչ արգեօք նըշոյլ յուսոյ ի քէն զատ .
 Բայց բնաւ դառինք են ի թախիծ սըգապատ :
 Ընդ վայր ըզմարդ խուզեն գոռոզ միտք մարդոյ .
 Առանց քո կեանք են խօլ ցընորք երազոյ ,
 Ոյր ի կափոյց տակաւ աչացն ի թըմբիւր .
 Ոչէութիւն զընդոստ լանջաց պատէ ծիր :
 Ում չես գու յայտ՝ նոյն և զանձնէն է անդէտ ,
 Եւ զոր թողուս՝ ի չիք գառնայ նա ումպէտ .
 Ո՛վ ջահ միակ յաքսորանացս ի մութ վայր ,
 Թէ դու չէիր , և այլ իսկ զի՛նչ մեղ մընայր :

ԳՆԵՐԳԱՍՏԱՆ

Մինչ երևի մանկիկ՝ շուրջ պար ընտանեաց
 Խընդան ի ծաղր. յաղու և վառ այն հայեաց
 Արծարծին աչք աճենից .

Եւ արխրագոյն բազմակընճիուն անդ ճակատ
 Պարզի յանկարծ մանկանն ի տես սըրտակաթ ,
 Կայտուեալ անմեղ հըրճուալից :

Թէ զսեամս ի մորչ պատէ յունիս , կամ ձըմեուն
 Ըղխարուկաւ ի խուղն ի ներքս՝ առ ի յեռ
 Կըցէ զաթոռս երերուն ,

Երբ գայ մանկիկ՝ խինդն հասանէ բերկրավաւ .
 Յընծան , խայտան , ըզնա ձայնեն , և անդ մայր
 Դողայ ի քայլսըն նորուն :

Մերթ արկանեմք մեք խօսս , ըզբոց շարժելով .
 Ըզհայրենեացն , ըզպըւեալից , զԱստուծով ,
 Զհոգւոյն՝ յաղօթս վերամբարծ .

Եմո՛ւտ մանուկ՝ բարեաւ մընայք զերկնից բանք ,
 Հայրենիք սուրբ , քերթողք և լուրջ հեթեթանք ,
 Ի ժմիտ փոխին յեղագարձ :

Ի գիշերի՝ մինչ փառս ոգիք երազեն ,
 Կեղերջումայն յորժամ ի սուգ հեծեծեն
 Ալիք հեծեալ յեզեզնուտ .

Թէ այգն յանկարծ յեզերց ծագէ զերդ լապտեր ,
 Ի լոյսն՝ ընդ անդ զարթնու շըշուկ խընգարեր .
 Հաւուց մըրմունջ , պղինձք ի թունդ :

Մանկիկ , գու այգն ես , և ոգիս է այն դիւր
 Որ զքաղցրաբոյր ծաղկանց շընչէ զօգս ի սփիւռ ,
 Որ առ ի քէն գայ բուրեալ :

Անձն իմ պուրակ նըսեմ ոստովք թանձրակուռ
 Ի քէն ևեթ լընու յաւաչ քաղցրալուր
 Եւ ի նըշոյլս ոսկեփայլ .

Զի քաղցրութիւն քո գեղեցիկ աչք զեղուն .
 Զի քո փափկիկ ձեռինք օրհնեալ և սիրուն
 Դեռ ևս անփորձ ընդ չարիք ,

Երբեք մատաղ հետքդ ի մեր կնւ կոխեցին .
 Գըլուխ սըրբիկ, խարտիչագեղ հերք փայլին ,
 Ոսկեպըսակ հրեշտակիկ .
 Դու տապանին ի մեզ անրիժ աղաննեակ .
 Ոչ ոտք գողարիկ դեռ շըրջելոյ ի հասակ ,
 Թևք ի կապոյտ է փետուր .
 Հայիս յաշխարհ, անգէտ ելով գեռ նըմին ,
 Կոյս երկակի . մարմին անրիժ գըլնովին ,
 Հոգի՛ անախտ և մաքուր :
 Ո՛վ, զի սիրուն քաղցր ի ժըպիտան է մանկիկ .
 Միտք գիւրալուր, ամենազգած իւր ձայնիկ
 Եւ գիւրամոք արտասուք .
 Թափառէ զաչս ի զարմացումն հիացիկ ,
 Կեանս յամենուտտ շընչէ ոգին իւր փափկիկ ,
 Եւ ի համբոյր գան շըրթունք :
 Տէր, մի տացես ինձ և որ ինձ սիրելիք
 Եղբայր, ծանօթք, բարեկամ և թշնամիք
 Անգամ ի չարն ահարկու ,
 Մի՛ տեսանել, Տէր, անծաղիկ ըզգարուն ,
 Զվանգակ՝ առանց թըռչնոց, զբըճիճն անմեղու ,
 Եւ ի մանկանց զիրկ՝ ըզտուն :

Վ. ՀԻԿՈՅ

ՅԻՇԱՏԱԿ ՄԱՆԿՈՒԹԵԱՆ

Եկայք, եկայք քաղցր իմ աւուրք մանկութեան ,
 Բերկրեւ ըզմիտս անոյշ դիմօքդ հըրճուական .
 Զերդ ի ծաւալ խոպան ամայս կիզանուտ
 Հանգչին հայեացք աչաց ընդ մարդ գալարուտ :
 Անմեղ աւուրք, պարզ ըզքօսանք ջընգեալք ցիր ,
 Իբր ի հարաւ վարին ծաղկանց բոյրքն յըսփիւ .
 Ըզձեզ իմ սիրտ, ծանրաթախիժ և աըրտում,
 Խընդրէ յօժար, յածեալ ընդ ուհն անցելոյն :
 Երբ գեղջն երէց՝ մատամբն յամաց ջըրտագին՝

Փայփայելով զայտս իմ ասէր. Լեր ուշիմ.
 Երբ ձեռքս անբիծք՝ յերեկորին պաշաաման.
 Շարժեալ զգուրվառ, արծարծէին բոցով զայն.
 Վաղայարոյց մինչ քան ըզլոյսն այգածին,
 Ի նախն իմ չու, յանկարծ ընդ քօղ գըռնակին
 Պիչ գիտէի ընդ արևելս հեռաստան,
 Նախկին նըլագ զառաւօտին երրորդ ժամ.
 Երբ ընդ պուրակս յածեալ բունոց ի խընդիր,
 Դեգերէի յեզեր վէտորեայ ամենածիր,
 Եւ ի ցըրտին ջուրսն ըզտօթոյն մեղմեալ տապ,
 Վայելէի ի խաղս աւուրն անպարապ.
 Օր ցանկալի յողջ եօթնեկին բովանդակ,
 Ի կապանացն յօր ազատեալ կայ հաւրակ.
 Ոչ անդ խոժոռ դաստիարակ ահաբեկ,
 Ոչ ընդունակք աղտոյ՝ պայծառ պերճ հանգերձք՝
 Որովք պըճնեալ ի կիւրակէս, յօր տօնի,
 Զէր ինձ ազաա զըւարճանալ ըստ կամի:
 Այլ առ իմէ՞ աւուրքն՝ որոց արդ բաղձամ,
 Ի գիւր սըրտիս ծանրատաղտուկ ձանձրութեան,
 Ածին զինև դարձեալ թախիժ սըրտամազգեաց:
 Քանզի, աւանդ, տեսի զիմ մոյր յողբ ուի լաց,
 Յորժամ բարձաւ հայրն իմ ախտիւն յամբ և չար,
 Որով տակաւ զտրփին դիտեմք լուրթ մըլթար,
 Եւ յամբ ըզցոյգս անցուցանեմք ցանգ անբուն,
 Որ առ մի մահ՝ ածեալ տագնապս յոգնաբուն,
 Խըզէ զոստայն աւուրց կենաց թել ընդ թել,
 Եւ յոր արուեստ անբաւական է յօգնել:
 Քանիցս հեռի ախտացելումն ի մահճաց
 Մայրն իմ աջօք կարօտ յուսոյն ըզձանաց՝
 Առ որ դարման տանէր բըժիշկն՝ ասէր զայս.
 Ոչ յերիկէ գըտանես լաւ: — Յոյժ պակաս:
 Եւ թանային աչքն արտասուօք. զոյգ նըմին
 Ի տես նորուն և ես լայի ողբագին:
 Նա ցիս ասէր. Առ ինչ հեծելդ այօգունակ.
 Երթաս տակաւ և թառամիս գու որդեակ.
 Ընդ հուպ կըրկին հիւանդք լեցին մեզ ի տան.

Օ՛ն երթ խաղալ ընդ համատիս մանկերամ :
 Եւ հանգըստեանն առ ի խընդիր ելեալ իմ,
 Ձայն բարբառոյ հընչէր ընդ խոր իմ սըրտին :
 Ձիարդ խընդաս մինչ քոյքդ ի տան կան ի սուգ :
 Յայնժամ տըրտում դարձեալ ի յարկ մեր անշուք,
 Ձեռք ըզդիմօք, ըզտախտական արմուկն յեց,
 Ողորմ ողորմ անգրէն լայի դառնահեծ :

ՌԸՊՈՒԼ

ՄԱՆՈՒԿ ՅՈՐՐԱՆԻ

Ի նըսեմ խըշտիկ
 Առ խոնարհ բազնաւ
 Ի նինջ կայ մանկիկ
 Մօրն ընդ ըստուերաւ .
 Եւ յանուշն ի քուն
 Բիբք իւր վարդափայլ
 Երկրայնոց փակեալ,
 Երկնի տան ողջոյն :
 Հեշտայինն յերազ
 Դիտէ մերթ մարմանդ .
 Ընդ ամամբ զաւազ
 Լըցեալ յագամանդ .
 Բոցածեմ զարփիս,
 Ուօրիորդս ընդոյր
 Ի ծղիս ձիւնաթոյր
 Գիրդ բարձեալ ոգիս :
 Ո՛վ զմայլմանց անուրջ .
 Երազէ զաղբիւր,
 Եւ ձայն քաղցրաշունչ
 Ի խորս անդ ի ջուր .
 Քորք իւր գեղազոյն
 Թըլին մերձ առ հայր,
 Եւ թեւ տռեալ մայր
 Իւր հաւուց հանգոյն :

ՔՆԱՐԵՐԳԱԿԱՆՔ

Բիւրք անդ հեշտական
 Պարզին յանգիման,
 Ի վարդ և շուշան
 Տուն լըցեալ համայն.
 Լիճք զըւարճալի
 Ուր ձրկունք սողին,
 Ալիք խորշումին
 Յեղեգանց ոսկի:
 Յերազեա մանկիկ,
 Նընջեա սըրտիս սէր.
 Դու անգէտ ողջիկ
 Ուր արփիդ հոսէր.
 Զէրդ անշունչ մամուռ
 Կընաս գու անփոյթ
 Հոսանաց ի պտոյտ.
 Այլ նընջեա համբոյր:
 Աղու զըւարթուն,
 Յուզւոջդ քունես.
 Ուանհանգըստութիւն
 Զեռամբ ջըրտակէզ
 Ի ճակատդ ազնիւ,
 Ուր ոչ մի կընճիւ,
 Եղընգամբ ժըպիրհ
 Ոչ գըրեաց. վաղիւ:
 Նընջէ՛ անմեղիկ.
 Հրեշտակք լուսագեղ
 Որ գիտեն կանխիկ
 Ըզմարդկան նըսհ,
 Զնա տեսեալ անդէն
 Անաըրաում անհոգ,
 Ի ձեռան արտասուօք
 Համբուրիկս ածեն:
 Շըրթունքն անդ հըպին
 Ընդ մեղուն ընտել.
 Սա առ ցօղ նոցին
 Մընչէ. Գաբրիէլ.

Հրեշտակն առ նըմին
 Շարժէ հուպ զորրան,
 Մի մատն ի բերան,
 Միւսոջն ի յերկին:

Այլ անդուստ մայրիկ
 Յօժար յորորեւ,
 Համարի՛ պարիկ
 Չար եկեալ ընկճեւ.
 Կայ ընդ նա յակճին,
 Եւ լըսէ մընչեւ.
 Եւ ի մի համբոյր
 Տայ նըմին ժըպտեւ:

Վ. ՀԻԻԿՈՑ

ԱՂՔՔԻ ՄԱՆԿԱՆ ԶԱՐՔՈՒՑԵՆԼՈՑ

Ո՛վ Հայր, զքեզ իմրս պաշտէ հայր,
 Քեզ ծուներ ածէ մահացուն.
 Քաղցր և ահեղ անուանդ՝ իմ մայր
 Երկըրպագէ եռանդուն:
 Ասեն թէ այս արեգ պայծառ
 Խաղ իմն է քո առաջի,
 Եւ ընդ ոտիւք քոյին անճառ
 Իբր ըզկանթեղ տատանի:
 Ասեն թէ դու և ճընճըղկաց
 Տաս ի գաշտի ծընանեւ,
 Եւ աղածրի մանրիկ մանկանց
 Հոգի՛ ըզքեզ ճանաչեւ:
 Ասեն թէ դու ես որ պըճնեսս
 Ըշքուրաստան ծաղկաւէտ,
 Եւ ոչ առանց քո տայ պարտեղ
 Ախորժ պըտուզս ի մեր պէտ:
 Ի քո պարգևըս տիեզերք
 Առ հասարակ վայելեն,

Եւ ոչ զեռուն զըրկի երբեք
 Յայսմ ի բնութեան խրախճանէն :
 Գառն իւր արօտ առնու զծոթրին ,
 Ուն ի ցըրդին ձրգտի գիւտ ,
 Ճանճ ի շըրթունըս պընակին
 Զիմոյ կաթին ծըծէ նիւթ :
 Զամբ արտուտին ետուր ըզկուտ
 Զոր սերմանող աայ հողմոց .
 Ճընճըուկ ի կալ դիմէ անձկոտ .
 Տըզայն ի մօրն իւր ի ծոց :
 Եւ իւ առնումք օր ըստ օրէ
 Զանհատական քո պարգևս .
 Այգուն ցերեկս ի միջօրէ
 Աղերսելով ցանդ ըզքեզ :
 Աստուած , և ես թոթով ի բան
 Կարդամ զանունդ ահաւոր .
 Բարէ , և ձայն տըխեզծ մանկան
 Ի նուագ խառնի երկնաւոր :
 Ասեն թէ գու , Տէր , ախորժես
 Զաղերս անզոր մանկըտուոյն ,
 Զի պարզամիտք են քաղցր և հեզ ,
 Թէպէտ ի միտ ոչ առնուն :
 Ասեն թէ մեր պաշտօն խոնարհ
 Քեզ հեշտալուր ընծայի ,
 Եւ թէ զուարթնոց յերկինս է պար ,
 Եւ մեք հրեշտակք եմք յերկրի :
 Օն թէ լըսես յայնչափ բարձանց
 Զուխտ մեր սըրտից եռանդուն ,
 Ես հայցեցից Զերմ ի թախանձ
 Զտիեզերաց պէտս համբուն :
 Տուր , Տէր , աղբերց յըստակ ըզջուր ,
 Եւ ըզփետուր ճընճըզկին ,
 Գառանց գըզաթ սուրբ և մնքուր ,
 Դաշտաց ըստուեր ցողագին :
 Տուր հիւանդին բըժըչկութիւն
 Եւ մուրացկին հաց յագուրդ .

Տուր բնակարան ողորմ որդոյն,
 Եւ գերեզոց արձակուրդ:
 Բազմածընունդ արա ըզտուն
 Հօր առ ի քէն երկիւղած:
 Տուր ինձ լինել զգօն ու իմաստուն,
 Եւ մայրս իցէ անկասկած:
 Ուշիմ եղէց, թէ և տըհաս,
 Այն տաճարի մանկան պէս,
 Այգուն այգուն զոր ի սընարս
 Մահճիս գիտեմ բերկրատես:
 Զարգարութիւն արնկեա յոգիս,
 Ճըջմարտութիւն ի չըրթունս:
 Պըտղաբերցէ բանդ ի սըրբիս
 Զերկիւզ ըզբարըս քաղցունս:
 Եւ քաղցրասցի քեզ իմ բարրառ
 Իբրև ըզծուխն այն գիզան,
 Յանուշահոտ զոր ի բուրվառ
 Ճօճեն տըղտք ինձ նըման:

ԼԱՄԱՐԻՆ

ԱԳԱՐ ՅԱՆԱԳԱՏԻ

Առաւօտեաց. ըզգենուին ամպք լոյս հրաշասփիււս,
 Եւ զբազմերանդ զգենոյր երկիր ըզպատմուճան իւր. [գոյն,
 Սաղարթք ծառոց, բողբոջք փափուկք, ծաղկունք գունա-
 Եւ ամենայն որ խոնարհեալ էր յէջըս ցօղոյն՝
 Կանգնէր ի լոյս արշալըրոց. և գեղ յաւելոյր
 Ի սիւգ քաղցրիկ առաւօտու չըքնաղն այն աւուր:
 Բայց տըրտմելոյն չիք ինչ պայծառ.
 Լոյսն այն և սէր ուօդ հեզապար՝
 Թախիծ թըւին առ հէքն Ագար:
 Ի քաղցրահոտ ծակտեաց իւրոց
 Բուրէ երկիր ճամբակ խընկոց.
 Կըրկջան երամք մատաղ թըռչնոց
 Իբր ի վայելս կենաց նորոց:

Այլ, ո՛հ, առ սիրտն այն՝ խառն ի խուռն է ամեն.
 Եւ ըզգայ նա զի գէմք զուարթունք զոր սիրէն՝
 Առ սիրտ բեկեալ՝ անկարեկիր ակնարկին :
 Եկաց Ագար առ խորսնաւն՝ ուր Աբրահամ :
 Նըրթունքն ի գող կապուտկեցան արիւնաքամ,
 Եւ ցըցուեցան երակք յերեր ջինջ ճակատուն,
 Իբրու մըղեալք ի բըռնութեանց գողոզ ոգւոյն՝
 Աչք իւր սեւաչք՝ էին պայծառք ուանարտասուս :
 Եւ լոյս երկնից որ թարգմանէ զբըբաց լեզուս՝
 Յոլայր ցայտէր յարտեանանց ձիգ և հրահիւս :
 Կայր առ երի պատանեկիկն իւր սիրուն,
 Մանեակ արկեալ ըզձեռն ի ձեռքս նորուն :
 Եւ բոլորակ և փափուկ ոտք պատանկին,
 Որք ի վրանաց կապերաս ևեթ նազէին՝
 Յուզեորի սանդալս զըսպեալք լինէին :
 Յառեալ ի մօրն իւր գէմն՝ ըզգայր կիրք վըսեր :
 Ընդ ձիւնափայլ լանջսն թընդայր սիրան ի վեր :
 Բոց գեռարծարծ ցասման զերեսսն վառէր :
 Եւ ընդ արխեղծ հասակին չափ արտավազ՝
 Գըրգռէր զոգին յառնանըման փարաւազ :
 Իսկ ընդէր գայ Նահապետն այն
 Կորաքամակ ի գաւազան,
 Աչիք ճապաղ ի կուրծս ի վայր :
 Ճակատ՝ յոր գիծք աստուածաճառ՝
 Զօրհասական առեալ տիպար :
 Նըրթունքն յերեր, և գարշապար
 Ոչ ևս յընթացս արիարար :
 Թէպէտ և քաղցր է սիւզ այգու,
 Թըւի շընչել նա զօդ մահու :
 Ահ, մարգ կարէ տանել վըշտաց,
 Եւ սիրա հըզօր իբրև Աստուած՝
 Հերքէ զհարուածսն այն մահացուաց :
 Այլ արտասուք՝ թելք և թակարգ :
 Կընոջ ի սէր գիրգ՝ կապեալ մարգ՝
 Առնու վարակ և սիրտ արի,
 Եւ եղեգան պէս երերի :

Առեալ տայ հաց և ջուր ցԱգար .

Այլ ոչ իշխէ խօսել մի բառ .

Եւ ոչ յերեսն աչս ամբառնալ .

Այլ վերառեալ զաջ իւր լըռիկ՝

Ըզժարսագեղն օրհնէ մանկիկ .

Ապա թողու զկինն առ բաղդ իւր

Յամայուլթիւն անգ թաքթաքուր

Եւ նա երթայ սեգ և յուշիկ զիւր ճանապարհ .

Կամարածէ շըրթունք զըսպեալք , աչք անխաւար՝

Գեղեցկագեղ և բարձրափայլ իբրու գոհար ,

Ընգ որ սըրաին խաղայցէ շունչ կենդանարար :

Չուգընթացիկ երթայ յերի մանկիկըն լուռ ,

Չեռն իւր ի ձեռսըն մայրենի . սակայն ժըխուր .

Քանզի կըրից նորուն լինի քաջ իրագէտ ,

Եւ սերմ վայրագ ազգի՝ յայտնի 'նմա ետ ընգ ետ :

Իսկ առաւօտ տեղի տայ .

Ուասիականն արեգակ

Յանամպ երկինս ամբառնայ ,

Տեղեալ ճաճանչ հրաքատակ :

Խուսեն պաճարք ի բըլբոց

Ի հովանիս ինչ ծառոց .

Ուարեհիւան փեարաւորք

Երանգ երանգ գունաւորք՝

Ի խընկահոտ սաղարթուն

Հանգչին ի ծոց բաբախուն .

Ժամ հանգըստեան է համբուն :

Բայց Ագարայ ոչ գըտանի

Յանապատի անգ հովանի .

Եւ ճանապարհ ծանր երկայնի .

Մինչև մանուկըն գըլխակոր

Բանայ զշըրթունս աապատոջոր ,

Չուր խընդրէ . չիք ջուր անգանօր :

Առեալ գընէ զարդայն 'նգ երկնաւ ասթափն ,

Լաւ զայն գըրեալ քան ըզջերմոտ խիտ շոճին .

Ուարգահատել զուր գուն գործէ զծարաւին :

Իսկ նա պապքեալ անհընարին՝ չարչարի .

Աչքըն կապոյտ յարիւն մածեալ խաւարի .
 Ափշեալ՝ թէ հիմ չըտայ Տէր ջուր յամայի :
 Մայրըն նըստէր , նա թալկանայր և նուազէր .
 Եւ մեռանելըն՝ վըճարել մօրն իսկ էր .
 Ապա բարձեալ տանի զորգեակն հեռագոյն ,
 Դընէ զգըլիկն ի ստուեր թըփոյ մ'ամայւոյն .
 Եւ ծածկելով զերեսս իւր՝ բաց հեռանայ .
 Նըստի անգ՝ ուր որդեակն ոչ ևս ի տես գայ .
 Եւ սպասելով մահու նորին՝ զայս մընչայ .
 « Աստուած տեսցէ յօրհաս քո , ո՛վ իմ որդեակ .
 Զի չկարեմ ես ըզքեզ գիտել մեռունակ ,
 Զիշխեմ յերեսդ ակնարկել ,
 Պըշնուլ ի մահ՝ ի ծրար խընդիցս ասպատակ .
 Եւ ոչ արբեալս յաչացգ ի ըյս կապուտակ՝
 Ըզքո շընչոյդ ըսպառել :
 Երբ վարդագոյն ժամս հոսէիր ի հօրան ,
 Կամ ծաղկաճեմ հանգոյն աղատ այծեման ,
 Զանկանէր այս ինձ ի յուշ .
 Երբ խաղայիր ի վէտս առաստ աղբերկան ,
 Երբ խոնջ՝ ի քուն մըտանէիր ժըմտական ,
 Զիարդ խորին և անուշ :
 Ո՛հ , ո՛չ . երբ անդ ըզքե և կացեալ հըսկէի ,
 Տեսեալ զմաքուր շըրթներդ ի շարժ՝ յերազի ,
 Անդ առ խաղիւ ծըմակին ,
 ՅՅգիպտոս՝ յիմ բընիկն՝ հուպ խոր Նեղոսի ,
 Քանիցս ըզհող հարցն իմոց քեզ մաղթէի
 Ժառանգու թիւն և բաժին :
 Իսկ այժմ ի ծոց իւր կոչէ զքեզ ցուրտ աապան ,
 Զանդամք քո գիրդ ճերմակ՝ երկրի աալ կոխան .
 Եւ հուսկ համբոյրս արդ ցուրտ քեզ ,
 Զի սառուցեալ ձեռք ի վերայ քո եզան :
 Այլ թողից թրք ես զիմ մանկիկ անկենդան
 Գըլուխ ի վարս խառնադէզ »
 Յարեաւ , եկաց առ ջըրրըղիկն՝ զոր անդ Տէր
 Յանսպատին խորւոջ՝ աղբիւր առսքէր .
 Եւ լըւանայր ըստէս զճակատ որդեկին .

Մինչև ժըմուէր և նա 'նդ բարի վիճակին .
 Եւ պապաջէր հըրճուալից բանս առ մայր իւր՝
 Տեսեալ զըմպակն ի ձեռս նորին զովաջուր :

Ն. ՈՒԻԼԼԻՍ

ԼՈՒԴՈՎԻԿՈՍ ԺԷ

Յայնժամ երկնից գրուոնք ոսկեզէնք բացան, և լոյսն ան-
 Երևեցաւ ի խորոց սըրբարանին գըզըրգեւլայ . [մատոյց
 Երկինք համօրէն կացին առ վայր մի հոլանի ,
 Եւ արգարոց հոյլք լուսեզէնք անսին մանկիկ փայլեալ հոգի
 Չի գայր հասանէր ընդ մանրերամ խառնէր զուարթունս
 Յաստեղազարդ անդ ի կամարս :

Ինքըն մանկիկըն գեղանի յերկրէ աստի գնայր փախըստեայ ,
 Ի կապուտակ աչկուոնս ըզխիստ վըշտակրութեան բերելով
 [նիշ :

Եւ զգուոնատեալ գիմօք խարտեաչքըն խոպոպիք գեղածը-
 Կուսանք երկնաճեմք ընդ յաղթանակ վըկայական [փեալ-
 Ածեալ բոլորէին ի գլուխ նորա զըւարթ երգովք
 Յեռեալ պըսակ անմեղութեան :

Բարբառք ընդ ամպըս լըսելի եղեն յայնժամ որ տսէին .
 « Զուարթուն պատանեկիկ , ժըպաի 'նդ անբիծ փառըս քո
 Ե՛կ արգ ի գիրկըս նորին , ուստի ոչ ևըս մեկնեսցիս . [Տէր .
 Եւ գուք որ զՏէրըն միշտ տերանց օր՛նէք , բանակ սրովբեա
 [գուոնդ ,

Հըբշտակապետք և մարգարէք , դիք արքային շուք երեսաց ,
 Առէք ի վկայն երգ յաղթական » :

Իսկ մանկիկն ասէր յսնձին . « Ո՛ւր իմ երբեք թագաւորեալ .
 Կապեալ եմ ես , չեմ ես արքայ . ի խորս անլոյս աշտարակին
 Կայի յերէկն անդ ի քուոն , ո՛ւր ապա իմ թագաւորեալ ,
 Ուսո ինձ , Տէր : ԵղճԼԿ զիս , հայր իմ ի գահճաց լեալ չարա-
 [մահ :

Նոքա լեզի ինձ արբուցին . որբ ի խընդիր մօրն իմոյ գամ ,
 Զոր ինձ յերկինս անուրջք ցուցին » :

« Զայնէ Փըրկիւքն քո զքեզ. կըրկնեն անգրէն նըմա զուար-
[Թունք.

Յեզեռնաւոր երկրէ զհողիդ հըրաւիրէ առ ինքն Աստուած.
Խոյս յամսարիշտ աուր աշխարհէ, ուր Խաշն ոտին առնի
[Կոխան,

Ուրանօր անգըր քան զմահ վազեալ եղեռն արքայասպան,
Ի գերեզմանս իսկ խիլ արկեալ ըզթագաւորս յուզէ սպա-
Գըրկախառնեալ ընգ արհաւիրս » : [նող,

Կըրկնէ մանկիկն. « Ի սակաւո՞ւն ապա լըցի երկայնաւորս,
Անցըն ուրեմըն զինե վիշտք որ կային ինձ առաջի.

Իցէ՞ Թէ ոչ ի յայգուն խըթէր զիս աջ բանտապանին,
Ի յերկնաւորս անըրջոց զարթնուլ անգէն ինձ ի չըզթայս.

Իցէ՞ Թէ լուաւ ինձ Տէր, և ոչ երազք իցեն ո՛հ այսպիկ.
Իցէ՞ Թէ հաա Տէր ըզըզթայս իմ, և վիճակ ել ինձ բարի

Զրաւել ի հէք կենաց աստի :

Զգիտիցէք դուք արգեօք իբր աւաղելի կէի կենցազ,
Օր իւրաքանչիւր ածէր ազէտս ինձ նորանոր, [զէր,

Եւ չէր ի լալ իմո՞ւմ ինձ մայր՝ որ երգս առ ողբս իմ յեղյե-
Կամ ի Ժպիտ մայրենի հնարէր զարտօսր իմ ըսփոփել.

Ի պատուհաս անվախճան մատնեալ ի զոհ, ծիւրեալ ծըն-
[գեալ,

Խըլեալ ի ընէ իմմէ ի բաց արկայ ընձիւզ գեռաբողբոջ.
Զո՞ր ի յորրանս գործեալ ոճիր, [հասեալ,

Սակայն լուարուք. մինչ արհաւիրքս այս ի վերայ իմ չե-
Յուշ ի հեռուստ գեղանըսիհքն ինձ անկանին աւուրք փա-
[ուց,

Որոց չըչունջ աղօտաձայն յիս ի նիրհել իմո՞ւմ աղգէր,
Մինչ Ժողովուրդք ցընծալից հըսկէին շուրջ զինե ի պահ :

Այլ ի նսեմ ի խորհուրդըս ծածկեցան յանկարծ բընաւք.
Տեսի զբախտին խոսամո՞ւնս ի բաց սրացեալ յիմոցս ակըն-
[կալեաց,

Եւ անտէրունջ ի յերկրի լըքեալ մանուկ զիս ապիկար.
Ո՛հ, զի եղեն ինձ Թըշնամիք :

Կենդանւոյն նոքս ի վիհ զիս ընկեցին յեղերական.
Աչք իմ նուաղեալ ի լալեաց՝ ոչ ևս ըզլոյս տեսին զարփւոյն.

Այլ դուք, զոր այժմըս ճանաչեմ, եղբայրակիցք իմ դուք
[զուարթունք.

Դուք ինձ ի քուն այց առնէիք: Յարիւնախանձ ձեռքս նոցա
 Թարշամեցան աւուրք իմ, Տէր. այլ ամպարիշտք միշտ են
 [Թըշուառ.

Մի առ մաղթանս իմ, ո՛հ, փակեր հանգոյն նոցին ըզլքսե-
 վասըն նոցին առ քեզ մաղթեմ): [Լիս,

Յայնժամ հրեշտակք երգէին. « Ե՛կ դու ըզհետ մերարի ե՛կ.
 Ահա բանայ քեզ տապանակն, և ի ճակատ քո դեզանի
 Յեռումք ըզմի յաստեղաց, ու ի թիկնամէջըս քոյին թէս
 Ընկալ ի թիւ քրովբեականըս կապուտակըս ծիրանիս,
 Եւ զմանկանն ի լալիս ե՛կ ի շարժել ընդ մեզ զորրան,
 Կամ զարփից ի լուսեղէն նորել ի շունչ ըզմանկուծիւն
 ի հրաճաճանչ կամարն իւրեանց »: [արգարք.

Եւ լըռեցին յայնժամ զուարթունք. երգոցն ի լուր կային
 Մանկիկն արկեալ զաչս ի խոնարհ ըզնըւազեալս ի յարտա-
 [սուաց,

Հոյք աշխարհաց ի խորանարգ երկնից ըզկայ առին լուռ-
 Եւ ձայն Բարձրեալն ետ այսանակ. [մուռ,
 « Ի մարգկեղէն մեծութեանց ի բացեայ զքեզ կալայ զար-
 [բայդ.

Ի գահոյից ի շըղթայս անկեալ՝ ըզքոյդ օրհնեա զարկած:
 Ըզքերագոյն գերութեան չառեր դու զփորձ թագաւորաց.
 Թէպէտ բազուկք քո զկապուտակ առեալ ըզնիշըս շըղ-
 Այլ ոչ ճակատ քո ըզթագին: [Թայից,

Դու ընդ բեռամբ կենաց, որդեակ իմ, ընկճեցար վաղամեռիկ,
 Մինչ զորրանաւ քով կայր երկիր յուզեալ ի յոյս և ի նա-
 [խանձ:

Ե՛կ արգ. և Տէր իսկ քոյին, թէպէտ անվիշտ ելով ընուծիւն,
 Եղև հանգոյն քեզ վըշտամբեր, և արքունի ցուպ ի յաջում՝
 Քո պէս փըշովք պըսակեցաւ »:

ՊՈԼԻԿՏՈՍ Ի ԲԱՆՏԻ

Աղբերք բերկրութեանց և ազուհնց մըթեր
 Պատրոզ հեշտուծիւնք, զի՞ կայ իմ և ձեր.
 Մարմնոյ ուաշխարհի սէր ամօթապարտ,
 Է՛ր լքեալք յինէն՝ ոչ թողուք զիս ցարգ:
 Օ՛ն անգր ի բացէ, գըրգանք և պատիւ,
 Որք ընդգիմամարտ բերէք ինձ կըռիւ.

Վայելք ձեր համայն

Խուսեն անկայուն

Ի քըթթել ական.

Ձերդ նուրբ ապակի

Ձի շողայ փայլուն,

Այլ վաղ խորտակի:

Ձեզ ոչ տենչացոյց, ջանայք ի նանիր
 Ի հրապոյրս ազու ածել ինձ՝ պատիր.
 Ձուր ինձ ցուցանէք զաստուածամարտից
 Ընդ ոլորտս երկրի զկենցաղ բերկրալից:
 Անդուստ և երկինք ցուցանեն փոխան
 Ձարդար վըրիժուց նոցուն դատաստան,

Որով գահավէժ

Գոռոզք տան ըզվրէժ.

Առկախեալ երկաթն

Իջանէ յանկարծ

Յերջանկին գադաթն

Երբ կայն անկասկած:

Խուժադուժ Դեկոս, վազր արիւննարբու,
 Ի՞նչ Բարձրեալն յերկար թէ զիւրսըն թողու,
 Ձերջանիկ բազդիդ զահաւոր վախճան
 Վայրիկ մի ևս այլ՝ տեսցես քեզ ժաման.
 Վրիժառուն Ըսկիւթ գայ թափել ի քէն
 Ձարեան վըկայիցն և Հայոց ըզքէն.

Փըրկուծիւն քեզ չիք.

Ճայթեցին յամպոց

Երկնասաստ շանթիք.

Ընկերկին ոչ ևս՝
 Ի զեղջ և ի հոծ
 Թէ և աշխարես :

Թող ցասմանդ ի սպանդ Փեղեքս զիս զենու .
 Զաչարն շըլայոյց նախանձորդն հուժկու .
 Թող մահուամբս ըզնա կալցի իւր փեսայ ,
 Եւ ըստըրկարար մարդիս տիրանայ .
 Ոչինչ գըժկամակ եղէց ես ընդ այն .
 Այլ են իմ տենչանք , ըղձանամ մահուան :

Ոչ ևս ինչ ունիս .
 Աշխարհ գու առ իս .
 Սիրտ իմ Աստուծոյս
 Բորբոքի ի սէր .
 Ըզհարսն իմ բարւոյս
 Համարիմ արգել :

Ո՛վ վըսեմ խորհուրդք և սուրբ հեշտութիւն ,
 Ի՞րր ըղձիւք ձեր՝ սիրտ առնի պատարուն .
 Ի սուրբ հըրպոյրս ըզմայլեալ հոգի ,
 Յէիցս ի տեսիլ ոչ ևս պարանի :
 Առատք ի խոստմունս և առատագոյն
 Պարգևաց ի սուրս յորգէք լիութիւն .

Կեանքդ այդ յամերամ
 Եւ մահ երջանիկ՝
 Որում ըղձանամ ,
 Քուն է անուշիկ ,
 Եւ անցք ի հաճոյս ,
 Յանգիշեր ի լոյս :

Քև աստուածաՎառ հուրդ անշիջական ,
 Քև ըզՊաւլինէ տեսից անսասան :
 Ահա տեսանեմ , և վառ ի սուրբ սէր ,
 Ոչ ըզգամ գեղոյն , որ զիսն գերէր
 Աչք իմ պատարուն լուսոյն երկնային՝
 Յաչացն ի շողիւն ոչ ևս բըլլակնին :

ԳՈՌՆԵՅԸԼ. ՊԵՒԿԻՄՈՍ :

ԳԱՒԻԹ ԵՐԳԷ ԶՅԱՂԹԱՆԱԿ ԵՒ ԶՀԱՆԳԻՍՑ
ՍԱՒՈՒՂԱՅ

Ո՞վ այն որ գայն, ո՞վ այն որ գայդ.
Լըսեմ և ոչ տեսանեմ.
Սեաւ ամպ փռչւոյ ի մըրրախառն
Ասպատակեալ հիւսիսոյ:
Բայց պատառի, և փայլակեն
Սուսերք ի նմա բիւրաւորք.
Ահա Սաւուղ ամբարտակեալ՝
Պատեալ ըզգլուխն հուր սըտամբ:
Երկիր թընդէ յորոտաձայնս
Երիվարաց և զինուց.
Ծով և ցամաք ուերկինք գոչեն
Նահատակացն յահեղ գոռս:
Գայ հասանէ Սաւուղ իւրով
Ահագնացայտ զօրութեամբ.
Կառս, երիվարս և հետեակս
Պուղէ զմիմեամբք խառն ի խուռն.
Գնան յերեսաց նորա քըստմոնք
Յոսկերս արանց ամենայն.
Յաչաց իւրոց ըրդիսէ ցայտէ
Ահ և դողումն Աստուծոյ:
Ո՞ւր են պերճանք ձեր ամպարիշտ,
Ո՞ւր խաղք, որդիք Ամմոնայ,
Եւ ոտընհար լինելք՝ արգար
Ժողովըրդեան Բարձրելոյն:
Ահաւասիկ անձուկ են արդ
Դաշտք դիականցըդ ձերոց.
Ահա դիզան մեզ կոճոպեալ
Կառափանցդ հունձք արիւնոտ.
Տեսէք ի սուտ աստուածըս ձեր
Վըստահութիւն՝ յի տանի:

Իսկ ուստի՛ այլ գայ մարտագոչ
 Փողոյ մռնչիւն յիս յանկարծ :
 Սուսերն ինքնին է Սաւուզի .
 Որ հողէ զազգն Եգովմայ :
 Այսպէս Մովաբ, այսպէս և Սովբ
 Ընդ անօրէնն Ամազէկ՝
 Յընգին փոշի. Սաւուղ հեղեղ
 Ի գլուխ տարւոյն ամանոր՝
 Հեղեղատէ՛ գերփէ, խըլէ,
 Եւ տապալէ զամենայն :

.

Խոնջ, ծարաւի առ տփամբ
 Իւրոյ բընիկ վըտակին
 Հանգչի քաջազն Աստուծոյ
 Ի մըշտազուարճ հովանիս
 Անձկացելոյ սարդենւոյն :
 Չաւակ նորա սիրաբուն
 Զինքն ի սփոփել մատուցեալ՝
 Ընդ վիշտ նորա ստըրջանայ,
 Այլ ընդ գալուստըն բերկրի .
 Յամենեցունց հընչեն ձայնք
 Քաղցր և անոյշ արտասուաց,
 Անհաս ի վեր քան ըզբան :
 Մինն ի գըստերց լուծանէ
 Զճաճանչաւէտ սաղաւարտն .
 Իսկ սիրատարփ ամուսինն
 Ըզթւան արկեալ՝ գիրկս ածէ .
 Այլ ոմն ի շքեղ ճակատէն
 Ըզփոշոտեալ քերտըն իւր
 Սըրբէ վըճիտ աղբերաւն .
 Այլ ոք տարափ հոտաւէտ
 Մաղկանց սըփռէ ի վերայ,
 Է որ ըզձեռան իւր արգոյս
 Ուոգանէ արտասուօք .
 Եւ է որ կայ քըրթմընջէ,
 Զի ոք զիւրև անց ի սպաս :

Սակայն արի արբուհին եռայ
 Յայլ ինչ ի դործ համախուժք :
 Մինչև դայցեն հորըն գըգուտանք,
 Աստ մին յորդուց գործէ գուն՝
 Ջինջ և փայլուն ի վերջստին
 Սըրբել ըզսուրն արիւնոտ .
 Անդ ի նախանձ միւսըն մըտեալ՝
 Ասէ . Ես ե՞րբ շօճեցից
 Ջնիգակդ՝ յոր այժմ՝ իմըս բազուկ
 Ոչ գըտանի բաւական :
 Այլ դք զասպարըն՝ մանկարբօր
 Խաղուք փորձէ զանգամովք :
 Խընդութեան արսօսր
 Յաչսըն սևուցիկս
 Արքային խաղայ .
 Գիտէ զի ազնիւ
 Տոհմին սիրելւոյ՝
 Ինքն է հոգի, կեանք :
 Ո՛վ չըքնազ հանգիստ .
 Ո՛վ քաղցր օթեան ,
 Ուր շուրջ կան ըզքե
 Սէր այգպիսի սերտ ,
 Հաւատ սըրբափայլ :
 Բայց ծածկի արև ,
 Լըռեն սիքք բողբո ,
 Եւ ի քուն խաղազ
 Նիրհեցաւ արքայ : ...

Հանգչի արքայ, սակայն անուրջք հըզօրին
 Ջարհուրագին կերպարանօք երևեալ՝
 Մահու խուճապս առնեն նըմին յանգիման .
 Ահաւասիկ պարտեալն ոսոխ բըռնաւոր ,
 Յիւրմե բազկէն սուսերահար ի մարտի ,
 Ոգի ահեզ՝ ոչ ևս ի մնաս ինչ ատակ :
 Ահա փայլակն՝ որ զքաջս ողջոյն շըլացոյց .
 Սուսերն այն իւր՝ որ ոչ խնայէ և ոչ յոք .
 Ջարին բընաւ հաւասարէ նդ վասթարին :

Այսպէս ոչ զօրհաննապազ հընչէ անտառ
 Յահաւոր՝ անհղագոչ ձայն՝ առիւծուն ,
 Ձի և նա զըղգայու թիւնն ի հանգիստ տայ .
 Նա և ոչ ամայաբնակ քարանձաւաց
 Լըռութիւն քաջալերէ զանդւոյ գասակս ,
 Ոչ սուարած աներկեան կայ յերկիւզէն .
 Ձի գիտէ՝ թէ ելունէ արիւն ուր խաղժ :
 Բայց արքայ զարթնու , զէն , զէն մըռընչէ .
 Ո՛ր արայեան կայ , կամ առ նստայ ձայն :
 Տեսանեմ ըզհետո ահագին հըրոյ՝
 Որում թըշնամի տեղի տացեն գունդք .
 Ձիսրայելեան զէնս համակ հասարակ
 Անթըլիատ արեամբ հայիմ թըխացեալ :
 Շանթեռանդ փայլակն ահա սըլանայ .
 Քար ի պարսատկէն ոչ այնչափ՝ երագ
 Ելեալ սըրասցի՝ որչափ խորտակէ
 Երկաթ ի ձեռին յազթողըն հըղօր :
 Ի թռիչ անմատոյց մինչ ի յերկինս հուպ
 Արծուր խրոխտապանծ՝ նա զթևսըն ձըգտէ
 Ըզզարմանալիսն և զքաջահընչող
 Եւ զաստուածատուրս յամպարըտաց մահ՝
 Որ ի սուտ մեհեանս անօրէն պատկերս
 Իւրեանց կառուցին ստեղծագործ աստուածս :

ԱԼՖԻԵՐԻ. Սառու :

ԳՆՐԳ ԴՍՏԵՐԱՑ ՑԵՂԻՆ ՂԵՒԵԱՑ Ի ՑԱՃԱՐԻՆ

Ա

ԳՆՐՆ ՈՂՋՈՑՆ ԵՐԳԵ

Տիեզերք առհասարակ լի են փառօք աստուածութեանն .
 Օ՛ն նըմին պագցուք երկիր և կարգասցուք ըզնա յաւէժ .
 Տէրութիւն նորա կանուխ է քան զծընունդ ժամանակաց .
 Երգեսցուք, հարցուք հըռչակ ըզբարիսն իւր :

ՄԻ ԶԱՅՆ ՄԻԱՅՆ

Զուր բըռնութիւն խիստ անիրաւ
 Օրհնաբանիչ նըմին ազգի հրամայեսցէ լեզուակապս .
 Կեցցէ անուն իւր անկորուսա :

Օր աւուր վիպասանէ զփառքս նորա և զզօրութիւն .
 Տիեզերք առ հասարակ լի են փառօք աստուածութեանն .
 Երգեսցուք, հարցուք հըռչակ ըզբարիսն իւր :

ԳՆՐՆ ՈՂՋՈՑՆ ԿՐԿՆԵ

Տիեզերք առհասարակ լի են փառօք աստուածութեանն .
 Երգեսցուք, հարցուք հըռչակ ըզբարիսն իւր :

ՄԻ ԶԱՅՆ ՄԻԱՅՆ

Նա ծաղկանց սըրտահաճոյ շնորհէ երփունս ,
 Պըտկէ զպըտուղս , հասուցանէ ,
 Եւ բաժանէ նոցա չափով
 Ըզըղիւնըս տուընջենի և զզովութիւն գիշերաց .
 Պարարեալ նոքօք անդոյ՝ հասուցանէ տոկոսեօք :

ԱՅԼ ԶԱՅՆ

Տայ հրաման արեգական կենագործել ըզընութիւն .
 Պարգէք իւրում ձեռինն է լոյս ,
 Իսկ սուրբ օրէնքն , օրէնք ամբիժ ,
 Ճոխագոյնն է ի պարգևսն ազգի մարդկան ընձեռեալ :

ԱՅԼ ԶԱՅՆ

Ո՛վ գու լեառնըդ Սինայի , պահեա՛ յաւէժ ըզյիշատակ

Մեծափառ հռոչականուն աւուրն այնմիկ յաւիտենից,
 Յորում ի գլուխ քո բոցեղէն [տուծոյ
 Թանձրախիտ մըռայլ ամպովք պարածածկեալ Տեառն Աս-
 Յաջս ընկէց մահկանացուս ըզխուռն նըշոյլ փառաց իւրոց-
 Ասա մեզ, առ ինչ այն բոց, փայլատակունք,
 Գունգագունգ ծըխոյ ցոյմունք և բարկաճայթ յօգըս չը-
 Եւ շեփորայք և որոտմունք: [ռինգ:
 Գայրարգեօք ի տապալել ըզտարերաց հաստուած եւ կարգ-
 Ի հինօրեայ հիմանց իւրոց
 Միթէ գղըրդե՛լ գայր նա զերկիր:

ԱՅԼ ԶԱՅՆ

Անգ յայնժամ իջեալ նորա՝ յայտնել մանկանցն Եբրայեցւոց
 Ըզսըբոց պատուիրանաց իւրոց ըզլոյսն անապական,
 Առ երանիկ գայր ժողովուրդն՝
 Ըզսիրոյն իւրոյ հրաման տալ, ըզսիրոյ մըշտընջենի:

ԳԱՐՆ ՈՂՋՈՅՆ

Ո՛վ աստուածեղէն օրէնք գեղաշուք,
 Ո՛վ արգարուծիւն, ո՛վ բարուծիւն վեհ: [տար՝
 Ո՛րջափ ինչ են իրաւունք, զինչ քաղցրուծիւն ծայրապա-
 Ընգ նըմին Տեառն Աստուծոյ զօգիլ սիրով և հաւատովք:

ՄԻ ԶԱՅՆ ՄԻԱՅՆ

Յանողորմ լըծոյ՝ զհարըս մեր փըրկեաց,
 Եւս և հաց անուշահամ ջամբեաց նոցա յանապատին.
 Նոյն զօրէնս իւր մեզ շնորհէ, զանձն իւր իսկ տայ գըլխո-
 [վին մեզ,
 Փոխարէն այսքան բարեաց զինքըն սիրել պատուիրէ:

ԳԱՐՆ

Ո՛վ արգարուծիւն, ո՛վ բարուծիւն վեհ:

ՆՈՅՆ ԶԱՅՆ

Զանգընդոց առ ոտս իւրեանց եհերձ գալիս,
 Յանջըրդի վիմէ վըտակս ուղխից յարբումըն բըղխեցոյց:
 Նոյն զօրէնս իւր մեզ շնորհէ, զանձն իւր իսկ տայ գըլխո-
 [վին մեզ.
 Փոխարէն այսքան բարեաց զինքըն սիրել պատուիրէ:

ՊԱՐՆ

Ո՛վ աստուածեղէն օրէնք գեղաշուք, [տար՝
Ո՛րչափ ինչ են իրաւունք, զի՛նչ քաղցրութիւն ծայրապա-
լնդ նըմին Տեառն Աստուծոյ զօգիւ սիրով և հաւատովք:

ԱՅԼ ԶԱՅՆ ՄԻԱՅՆ

Ո՛վ որ ո՛չըդ ճանաչէք բայց յերկիւզէ ծառայական,
Անշընորհք, ո՛չ կարէ զձեզ քաղցրագուլթ Տէրն ածել զիւ-
եւ իցէ՞ ինչ գըժպըհի սըրտից ձերոց սիրել ըզնա. [րև.

Սէր իւր իցէ՞ ձեզ տաժանիք:

Երկընչի ծառայատոհմ ի գըժընգակ բըռնաւորէ, [Թեան-
իսկ որգւոց՝ սէր է բաժին իւրեանց վիճակ ժառանգու-
կարօտիք՝ զի նոյն Աստուած լիացուսցէ զձեզ բարու-

եւ ո՛չ կամիք սիրել ըզնա: [Թեամբք,

ՊԱՐՆ ՈՂՋՈՅՆ

Ո՛վ աստուածեղէն օրէնք գեղաշուք.

Ո՛վ արգարութիւն, ո՛վ բարութիւն վեհ. [տար՝

Ո՛րչափ ինչ են իրաւունք, զի՛նչ քաղցրութիւն ծայրապա-
լնդ նըմին Տեառն Աստուծոյ զօգիւ սիրով եւ հաւատովք:

Բ

ՄԻՆ Ի ԴՍՏԵՐԱՑ ՊԱՐՈՒՆ

Ո՛վ աստղ ի մեզ նոր նըշողեալ,
Մանուկս այս ըսքանչելի զի՛նչ լինիցի յաւուր միում:
Դէ՛մ խրախուսէ գոռոզ պերճից,
Ոչ ի հրապոյրըս խոտորի
Վըտանգաւոր նոցին սրսոյ:

ԱՅԼ ՈՔ

Այլք զաստուածոյն մինչ Գոթողեայ
Խուռն ընթանան խընկել զբապին,
Մանուկ արի կարգայ քարոզ՝
Թէ Տէր ևեթ է յաւիտեան.
Եւ ձայն ածէ, նոր Հէղիաս,
Աւ այս երկրորդըս Յեզաբէլ:

ՄԻՒՍ ՈՄՆ

Ո՛վ յայտնեսցէ, սիրուն մանուկ, մեզ ըզճընունգ քո թա-
Իցէն արգի միում ումեք մարգարէիցըն սըրբոց: [քուն.

ԱՅԼ ՈՄՆ

Սիրելին սոյնպէս աեսաւ Սամուէլ

Աճեցեալ ի հովանիս խորանին.

Նա եղև Երրայեցւոցն յոյս և պատգամ,

Ո՛տայր քեզ՝ նըմին գունակ՝ մըխիթարել զիսրայէլ:

ԱՅԼ ՈՔ ԵՐԳԻ

Ո՛վ բիւր անգամ երանի

Մանկան զոր Տէրըն սիրէ,

Որ լըսէ զձայն նորին կանուխ,

Ում և ինքն հաճի Աստուած գաստիարակ մըտանել:

Յաշխարհէ սընեալ հեռի, յերկնից պարգևսն համօրէն

Է պաճուճեալ ի ծնընդենէ.

Եւ ժանտագործըն չարին շուգի

Ձանմեղութիւն իւր շըրջէ ոչ:

ՊԱՐՆ ՈՂՋՈՅՆ

Երանի, մեծ երանի մանկութեան՝

Ձոր Տէր ինքն ուսուցանէ նգ թևոցն իւրոց հովանեալ:

ՆՈՅՆ ԶԱՅՆ, ՄԻՍՅՆ

Նոյն ի հովիտ մի զանխուլ

Առ գետեղերբ ջինջ ուղխից

Աներկևան ի հիւսիսոյ

Փըթթի գթրգ շուշան ծաղիկ՝ սիրասընունգըն բնութեան.

Յաշխարհէ սընեալ հեռի, յերկնից պարգևսն համօրէն

Է պաճուճեալ ի ծնընդենէ.

Եւ ժանտագործըն չարին շուգի

Ձանմեղութիւն իւր շըրջէ ոչ:

ՊԱՐՆ ՈՂՋՈՅՆ

Երանի, բիւրիցըս բիւր երանի

Մանկան զոր Տէրն ուսուցանէ հըլու իւրուքն օրինաց:

ՄԻ ԶԱՅՆ ԵՒԵՔ

Ո՛վ Աստուած իմ, զօրուԹիւն դեռաբուսիկ
 Զի՛ յընԹացըս գողդոջուն յայնքան վըտանգս ընԹանայ.
 Զի՛ հոգի որ զքեզ խընդրէ՝ անբըծուԹեան տենչացեալ՝
 Գըտանէ խոջըս խորհըրդոցն,
 Եւ Թըշնամիք տան պատերազմ:
 Յո՞ սուրբքըն քո Թաքչեցին.
 Մածկեն զերկիր մեղաւորք:

ԱՅԼ ԶԱՅՆ

Ո՛վ դաւԹեան մեծ արքունիք և սիրելին իւր քաղաք,
 Անուանի լեառն յորում Տէր բնակեաց յողով ժամանակս,
 Ո՞րպէս յանձնըդ ձըգեցեր ըզբարկուԹիւնն երկնաւոր:
 Սիոմն գու, քաղցըր Սիոմն, զի՛նչ ասիցես՝ հայեցեալ՝
 Յեկամուտ կինն ամպարիշտ
 Բազմեալ, եղո՛ւկ, ի գահ՝ քոյոց արքայից:

ՊԱՐՆ ՈՂՋՈՅՆ

Սիոմն գու, քաղցըր Սիոմն, զի՛նչ ասիցես՝ հայեցեալ
 Յեկամուտ կինն ամպարիշտ
 Բազմեալ, եղո՛ւկ, ի գահ՝ քոյոց արքայից:

ՆՈՅՆ ԶԱՅՆ ԴԱՐՁԵԱԼ

Գեղապարոյր երգոց փոխան՝

Յոր ԴաւիԹ նուագէր առ քեզ ըզսըրբանուէր հիացմունան,
 Եւ օրհնէր զիւր զԱրարիչն, ըզՏէր և զհայր իւր գըԹած,
 Սիոմն գու, քաղցըր Սիոմն, զի՛նչ ասիցես հայեցեալ՝
 Զի եկամուտ ամպարըշտին գովի աստուած,
 Եւ անունն՝ որում արքայքդ երկիր պագին՝ հայհոյի:

ՄԻ ԶԱՅՆ ԵՒԵՔ

Մինչև ցե՞րբ տեսցուք, ո՛վ Տէր, մինչև ցե՞րբ
 Զամպարիշտս ամբարձեալ քե՛զ ընդգիմակ.
 Տէս զի գան մինչ ի տաճար քո խրոխտալ.
 Խօլս ունին զերկըրպագուսդ՝ ըզքո գրոհ:
 Մինչև ցե՞րբ տեսցուք, ո՛վ Տէր, մինչև ցե՞րբ
 Զամպարիշտս ամբարձեալ քե՛զ ընդգիմակ:

ԱՅԼ ԶԱՅՆ

Զինչ օգուտ ձեզ, բարբանջեն, ի վայրենի լաւութենէդ.

Յայսչտփ կենացս անուշից

Ի պիտոյիցն հիմ փախչիք.

Աստուածըգ ձեր չառնէ ինչ ձեզ:

ԱՅԼ ԶԱՅՆ

Չուարձասցուք, յերգ պարեսցուք, ասէ այն գունդ ամ.

Ի ծագկանց՝ ի հոյլ ծագկին, ի հաճոյից ի հաճոյս [պարիշտ,

Տարցուք ըզմեր ցանկութիւնս:

Ըզգայազիրկ է որ յուսայն ի հանդերձեալ.

Թիւ աւուրց ամաց մերոց անցաւորաց՝ անըստոյգ.

Ճեպեսցուք յաւուր յայսմիկ՝ կենդանութեանս ի վայելս.

Իցեմք վաղիւ, զայն ո՞ գիտէ:

ՊԱՐՆ ՈՂՋՈՅՆ

Ո՛վ Աստուած իմ, կոծեսցին, մըռընչեսցեն առ զոփալ.

Եղկելիքն որ զքաղաքին քո սըրբոյ

Ոչ տեսցեն ըզմըշտալոյս ճառագայթ:

Մեզ է անկ յերգըս պարել, մեզ՝ որոց գունն ցուցանես

Ըզճաճանչսըդ քո զանմահ,

Մեզ է անկ երգարանել զքո մեծութիւնդ և զպարգևս:

ՄԻ ԶԱՅՆ ԵԻԵԹ

Յամենայն սին բերկրութեանց՝ յոր սիրտք իւրեանց ըզմայ.

Հուսկ յետոյ՝ զինչ մընասցէ: Որ ինչ մընայն յանըրջոց՝ [լին՝

Որոյ պատրանք ի լոյս գայցեն

Ի զարթնուլն. ո՛վ զարթումն ահաւոր.

Մինչգեռ տընանկն՝ ի քուժ սեղան՝

Ճաշակեսցէ զխաղաղութեանըդ քո զանճառ քաղցրութիւն,

Արբցեն նոքա ի սոսկալի և յանըսպառ բաժակէն՝

Յորմէ դուդ մատըռուակես՝ յաւուր ահեղ քուժ ցասմանդ՝

Ողջոյն ազդին մեղաւորի:

ՊԱՐՆ

Ո՛վ զարթումն ահաւոր.

Ո՛վ երազ ցընդելի.

Ո՛վ պատիրք բոթաբերք:

Գ.

ՍԱԼՈՎՄԻՔ

Ո՛վ քանի՛ երկիրւզ, քորք իմ, քանի՛ շըշուկ անհընարին:
Ամենակալ Տէր, ա՛յս իցեն երախայրիք
Խոռնկք և կընդրուկք և պատարագք՝
Ձոր մեզ այսօր կայր ի քո նուիրել սեղանդ:

ՄԻ Ի ԴԱՏԵՐՑ ՊԱՐՈՒՆ

Ձի՛նչ յերկչոտ անջու մեր տեսիլ:
Ո՞ կարծէր բնաւ թէ շողայցեն
Սուսերք սատակիչք, տէգք արիւնահէղք
Ի տանս յայսմիկ խաղաղու թեան:

ԱՅԼ ՈՔ

Ձի՛ է զի անփոյթ զԱստուծոյ իւրմէ
Լուռ յայս ծանըր վիշտ կայ Նրուսաղէմ:
Ձի՛ է, քորք իմ, զի մեզ ի թիկունս
Արին գէթ Աբեհներ ոչ բանայ զբերան իւր:

ՍԱԼՈՎՄԻՔ

Աւաղ. յարքունիս՝ ուր չեն այլ օրէնք
Քան զուժգնութիւն և զբռնութիւն,
Յորում պատիւք, պաշտամանց բարձք
Են արիտուր անարգ և կոյր ունկընդրութեանց,
Ո՛վ կամիցի, քոյր, ձայն բառնալ
Վասն աւաղուկ անմեղութեան:

ԱՅԼ ՈՔ

Ի վըտանդի տատ և յիտին աղմըկի.
Ո՛ւմ պատրաստի արքայական սուրբ պըսակ:

ՍԱԼՈՎՄԻՔ

Տէր հաճեցաւ բարբառել.
Իսկ զոր յայանեաց մարգարէին նա իւրում,
Ո՞ կարասցէ թարգմանել մեզ,
Ձինուորիցի՞ մեզ ի նըպատ,
Ձինուորիցի՞ մեզ ի տագնապ:

ՊԱՐՆ ՈՂՋՈՑՆ

Ո՛վ աւետիք, ո՛ սպառնալիք,
 Ո՛վ մըթային գազտնի խորհուրդ.
 Քանի չարիք, քանի բարիք
 Մի՛ սա միջէ պատմեալ կանուխ.
 Զիարդ ընդ այսչափ ցասու՞մն
 Յօրինեսցի սէր այնչափ:

ՄԻ ԶԱՑՆ ՄԻՍՑՆ

Յայսմհետէ բարձցի Սիոնիւ. անագորոյն բոց հըրոյ
 Կերիցէ զզարդ իւր զամենայն:

ԱՅԼ ԶԱՑՆ

Տէր հովանի է Սիոնի,
 Հիմունք նորա են բան նորա մըշտընջեան:

ԱՌԱՋԻՆ ԶԱՑՆՆ

Զամենայն փառքս նորա յաչացս անհետ նըշմարեմ:

ԵՐԿՐՈՐԴՆ

Յամենայն կողմանց ըզըյս նորա շողեալ նըշմարեմ:

ԱՌԱՋԻՆՆ

Ի խորխորաս անդընդային սուզաւ Սիոնիւ:

ԵՐԿՐՈՐԴՆ

Սիոնի բարձր է գլուխ իւր յերկինս:

ԱՌԱՋԻՆՆ

Ո՛վ տըխուր նըլասասութիւն:

ԵՐԿՐՈՐԴՆ

Ո՛վ անմահ փառք պարծանաց:

ԱՌԱՋԻՆՆ

Ո՛վ ցաւոց գերաշխարան:

ԵՐԿՐՈՐԴՆ

Ո՛վ յազթական նուագաց երգք:

ԵՐՐՈՐԳ ՈՄՆ

Լըռեսցո՛ւք յամբոխմանէս, յաւուր միում Աստուած մեր
Չայս մերկասցի գաղտնի խորհուրդ:

ԵՐԵՔԻՆ Ի ՄԻԱՍԻՆ

Պատկառեսցո՛ւք ի ցամառնէն,
Ա՛կըն կալցուք սիրոյ իւրում:

ԱՅԼ ՈՔ

Ըզսիրաաարփ քեզ սըրտին,
Աստուած իմ, ո՞ զխաղաղութիւն վըրգովէ:
Նա զբարձրեալն յամենայնի խընդրէ զհաճոյոգ,
Եւ ոչ ուրեք խընդրէ զանձն իւր:
Մի՛թէ յերկրի, նա՛ և յերկինս,
Գուցէ՛ այլ երանուածիւն քան զանխըռով անգորր հեշտ՝
Սըրտի սիրով քո զմայլելոյ:

ՌԱՍԻՆ. Գոթուղիա:

ԵՐԳ ԱՂՔԱՏԻ

Ո՛հ, աղքատիկ եմ ես այր
Ամենեին ամայի.
Այլ իմ սըրտիս մըխիթար
Անգամ մի գէթ ըղձայի:
Ի ծընողացս անդ ի տան
Էի մանուկ հեշտածին.
Այլ արգ նոքա թաղեալ կան,
Եւ ինձ գառինք են բաժին:
Ճոխին պարտէզք ծաղկին հոյլ,
Եւ զհասկ գիտեմ ոսկեթուռ.
Այլ իմ շաւիղս է ամուլ,
Որ վիշտս ևեթ տայ տըխուր:
Սիրեմ ցաւովք լըռելեայն
Բերկրելոց կալ յերախան:

Որոց սըրտիւս ամենայն՝
 Մաղթեմ աւուրս բարու(թեան :
 Սակայն , ո՛վ Տէր , ոչ թափուր
 Ի բնաւ (թողեր զիս հեշտից ,
 Քաղցր ըսփոփանս ընդհանուր
 Յաշնարհ սըփուեալ քո յերկնից :
 Ահա յամէն գիւղորէք
 Ամբառնայ սուրբ քոյին տուն ,
 Եւ երգեհոն սաղմոսերք՝
 Համայն զականջըս լընուն :
 Ո՛չ այդ արփի և լուսին
 Եւ ինձ ծագին գը(թասէր ,
 Եւ ի զանգակ գիշերին
 Եւ ես խօսիմ ընդ քեզ , Տէր :
 Բացցին երբեմըն բարեաց
 Դուրք բարձր ի խինդ տաճարիդ ,
 Եւ ես ի զքեստ հարսանեաց
 Առբազմեցայ սեղանիդ :

ՈՒՀԼԱՆՑ

ԿԻՆ ՆԱԻԱՎԱՐԻՆ

- « Ձե՛նչ այդ գըդջիւն յանագանիս ի լըճիս .
 Դըստրիկ սիրուն , տես զե՛նչ է այդ » :
 « Բագք են գրացւոյն անկեալ ի լոյզ ընդ ալիս .
 Նընջեա՛ մայրիկ , նընջեա՛ հանդարտ » :
 « Ձե՛նչ այդ շըշուկ ի ջուրս յախուուն և ուժգին .
 Ա՛հ , զանգիտեմ ես , ո՛վ դըստրիկ » :
 « Մըշակ վարէ զհաւատարիմ իւր ըզձին .
 Նընջեա՛ ո՛վ մայր , նընջեա՛ քաղցրիկ » :
 « Մըրըրկածուփ հընչէ ահեղ շառաչիւն .
 Լ՛ուր , դըստրիկ , լ՛ուր ըզվայս և կոծ » :
 « Երգ ձըկնորսի է և թիակացըն ճողպիւն .
 Նընջեա՛ , մայրիկ , զերծ ի հոգոց » :

« Ո՛հ աղէտք, ո՛հ վըտանգք, բայց ինձ ըզդուրս,
Ձի բեկանի սիրտ ի ծոցիս »:

Եւ սըրտահար թաղծեալ թըռեալ ել ի գուրս
Ճիչ բարձեալ մայրըն ցաւալիս:

Եւ առ խաղի շամբուտ արանցն հանգարտիկ՝
Դի անկենդան տարածեալ կայր

Ի սեաւ խիճին՝ գունաթափեալ և ցըրտիկ:
« Ո՛հ, Տէր գըթած, դա իմ է այր... »

Այժմ, իմ գըսարիկ, նընջել կամիմ այժմիկ արդ,
Նընջել այժմ զգիշերն ի բուն.

Կամիմ նընջել քաղցր և յերկար և հանգարտ,
Ձանարթնականըն նընջել քուն »:

Ռ • ՎԻՑ

ԱՌ ԼՈՒՍԻՆ

Սըփուեալ այսրէն ի թուփ և ձոր

Ըզքո խաղաղ լայս միգազգած,

Ազգեցութեամբ քոյով անդոյր

Խաղազանայ սիրտ իմ յանկարծ:

Յիր ըզմարգաւս երեսքդ յածին

Ակնարկելով քաղցրահայեաց.

Ձերդ խանգակաթ աչք մըտերմին

Ձըկտեալ գէտակն յիմ բախա կենաց:

Տըխուր և զուարթ ժամուցն համայն

Աղգէ յոգիս մէն մի ձայնիկ.

Ընդ խինգ և ցաւ վարեալ գընամ

Յառանձնութեանըն միայնիկ:

Ընթա՛, ընթա՛, առուակ սիրուն.

Բերկրանք առ իս այլ ոչ գարձցին.

Խաղք և համբոյրք անցին հանդոյն,

Հանգոյն երգուեալն ուխտ սիրային:

Այլ ըստացայ ես մի նըլադ

Ըզցանկալին զայն պատուական,

Ոյր յես անեղծ կայ յեշատակ,
 Ի պատուհաս տանջողական:
 Կարկաջքդ ի սահ յեմակ հովտին
 Ոչ յընթացիցն առցեն դադար.
 Յերգս իմ մըրմունջքդ խառնեսցին,
 Դաշնակեցով բարեյարմար.
 Մինչ ընդ գիշերսն ձըմերաց
 Ունուս ըստ հունդ յարգավըսակ,
 Կամ ի գարնան պայծառազգեսաց.
 Ընձիւղես ծիւ նորագիտակ:
 Ո՛հ, երանի՛ ում վըճարին
 Յաստի կենացս՝ անքէն և հաշտ.
 Եւ կենակից ընդ մըտերմին
 Զըւարձացեալ բարեացն ի բաստ,
 Որ անծանօթ մահկանացուաց
 Եւ արհամարհք թըւին մարդկան.
 Ընդ խորշ սըրտին բազմամտուած
 Գընայ ի մուծ գիշերական:

ԿԵԹԷ

Ի ԿՈՏՈՐՈՍԾ ՄԱՆԿԱՆՆՆ ԲԵԹԼԵՀԵՄԻ

Ըզլըկայիցն հաւաքեցէք ըզծաղիկ,
 Զոյս ընդ բանալ զաշտ յարփին,
 Որպէս ըզվարդ նորափըթիթ խիստ մըրրիկ,
 Բարձ հալածիչըն Փըրկչին:
 Դուք նախընծայ սիրոյ Փըրկչին ողջակէզք,
 Մատաղերամ զոհելոց,
 Առ սեղանովըն պըսակեալք, մանկուհք հեզք,
 Արմաւենեօք պարէք հոծ...
 Մինչ բըռնաւորն ըզարարոյժըն լըւաւ,
 Թէ արքայից արքայ գայ՝
 Հնազանդ առնել ըզժողովուրդն ընդ իւրեաւ
 Եւ տալ Դաւթի զիւրըն գահ,

Մանրացասումն՝ առ գուժաբերըն գոչէր .

« Յաջորդ հասեալ զիս վանէ .

Արի դահիճ, յափըշտակեա՛ ըզսուսեր ,

Ներկեա՛ զորրանս յարենէ » : . . .

Երթեալ դահիճըն մերկացեալ ըզգաշոյն ,

Եւ խողխողէ յախերկան՝

Ըզգեռարոյս մատաղ մարմին մանկըսուոյն .

Հոգիքն ի վեր նորք դառնան :

Ա . Բ . ԿՂԵՄԷՍ

ԶԱՆԳԱԿ

Ողջոց եմ կոչեակ .

Մեաներոց սղրակ .

Կայծականց խորտակ :

Որմապատեալ պինդ ի գետնի

Կաւաթուրծ ձոյլըն խոր դընի .

Երևեսցի այսօր զանգակ :

Հապա , ընկերք , ժիր ի վաստակ :

Զերմ ի ճակատուէ

Քիրտըն կաթեսցէ .

Գործքըն գովեն ըզգործօն ,

Այլ երկինք տան զօրհնից ձօն :

Առ այսքան մեր խնամով ձեռնարկ՝

Խնամով և բան կարգել է հարկ .

Թէ խառնեսցի յայն ճառ բարի

Զուարթութեամբ գործն յառաջ վարի :

Մն արդ տեսցուք ուշիւ ուշոյ՝

Զինչ ծագեսցէ ի դոյզն ուժոյ :

Գրեսցի խոտան և այր վատթար ,

Որ ոչ խորհի զգործոյն կատար :

Պարտ և պատշաճ իսկ է մարդոյ ,

Որում տըւան ձիրք հանձարոյ ,

Ի խորս սրբախն քաջիկ քրննեւ
 Զոր ըստեղծու ձեռօքն ընտել :
 Աղէ՛, առ փայա ըզբուն շոճի,
 Այլ տէս զի քաջ ցամաք լիցի .
 Որպէս զի բոցն ընդոսս յահուր՝
 Մըացէ 'նդ երակսն զարամուր :
 Եռան եռք պըզըն՝ ձին .

Տուք զանագն ընդ նըմին :

Զի զանգակին կարծըր խառնուրդ
 Յօրինաւորն հոսեսցի ուրդ .
 Զոր ի խորուջ փոսակիս արգ :
 Ի ձեռն հըրոյ ճարտարէ մարդ .
 Ի բարձրավայր զանգակաաան ,
 Արձանասցի վկայ մեծարան .
 Կացցէ մնասցէ և յապագայն
 Յունկըն մարդկան արկանեւ ձայն .
 Գու ողբակից սըդաւորաց
 Եւ երգակից ընդ անմեղաց :
 Երկրածընացըս գէպք յողով՝
 Զոր բաղդն ածցէ գիւրահողով ,
 Բաղխեալ ընդ շուրթըն մետաղեայ
 Հընչեսցէն քաջ ի բացեսայ :

Տեսանի արգ ճերմակ փըրփուր ,
 Ուրեմն հալին քըծուարքն ի հուր .
 Օ՛ն , խառնեցէք յայն զալքալի :
 Զի ևս երագ երագ հալի :
 Ի զանգուածոյն օ՛ն անդր ի բոց
 Բարձցի փըրփուրըն թանձրամած ,
 Զի զըտագոյն մետաղն այն
 Յըստակ պայծառ տացէ ձայն . . .

Տեսէք, զիարդ փողք թըխանան .
 Մխեսցուք ի ներքս ըզգաւաղան .
 Եթէ թացեալ և փայլեսցէ ,
 Զուլմանըն ժամ հասեալ իցէ :
 Հապա ընկերք ժիր ի վաստակ ,
 Փորձեւ ըզձոյլք զայդ խառնակ ,

Թէ զուգեսցի՛ կարծր ընդ կակիցին,
Տալ մեզ նըշան թէ յաջողին:
Զի ուր հըզօր ընդ փափկին
Եւ խառնի մեղմն ընդ ուժգին,
Անտի ծնանի ձայն ներդաշնակ:...

Ժամ է սկիզբն արդ տալոյ հոսման.

Ահա նըշանք և պատասուման:
Այլ չէ հոսեալ, զն, ջերմն ուխտիւք,
Եկայք՝ ազօթքս մատուցուք:
Վէրացուցէք ըզխիցն ի բաց.
Պահէ՛ս նվըտանդ զտունս այս, Աստուած:
Զիտրդ չըչեալ խոտորն ընդ փոս
Զեռայ հրաշէկ և ալէհոս:
Հուր բարերար է զօրու(թեամբ՝
Թէ մարդ վարէ արկեալ ըզբուամբ,
Եւ զոր շինէ և զոր սանդճուն,
Է՛ր երկնաձիբ ուժով սորուն:
Այլ ձիբդ երկնից՝ ահեղ է յոյժ,
Թէ կոտորեալ զկապանսն անժոյժ՝
Ազատասուն բնու(թեան զաւակ,
Յուկամ վազէ գնայ համարձակ:
Եւ, վա՛հ, թէ զերծ և անարգեւ
Թողեալ լիցի աճնւ վարդեւ,
Կոհակակոյտ խանձիւք բոցոյ
Ընդ արահետ բազմամարդոյ.
Զի ատելի է տարերաց
Ճարտարու(թիւն մարդոյս ձեռաց:...

Կազմակերպեալ հաղոյն ի խաւ

Յաջողապէս ձեռն լըցաւ:
Գայցէ՛ արդեօք ի լոյս երազ,
Պսակեւ զարուեստն և ըզվտասակ.
Թէ անյաջող ձուլումն իցէ,
Եւ կազապարնն պայ(թիցէ.
Ա՛հ, գուցէ մեր ի յուսով կալ,
Մերձենայ վտանգ դարանակալ:...
Փլուղէք ինձ արդ զայդ դարիճակ,

Զի քաջ լըցաւ իւրըն վաստակ .
 Զըւարձասցի աչք և սիրտ արգ .
 Ի տես գործոյս գեղեցկաւարտ :
 Կոփկոփեսցէ ուռն տնդադար
 Մինչև պայթեալ ձուլոյն պատուար ,
 Փըշրեսցի ձեն անպիտան ,
 Ուելցէ զանգակն յերևան :
 Ըզգոյշ ձեռամբ՝ կարէ ճարտար
 Փըշրել ի գէպ ժամու զկաղպար .
 Այլ վայ , թէ չև պազեալ համակ՝
 Պղինձըն զերծցի բոցավըտակ :
 Շանթիւք ճայթմամբ խօլականաւ
 Պայթուցանէ զտուն շուրջ զիւրաւ .
 Իբր ի վըհիցըն սանդարաց
 Երըջացանեալ հուր ուաւերած : . . .
 Աստուածային հըրձուանք անձառ .
 Տես իբր հանգոյն առեղ պայծառ
 Ի պատենէն ոսաչի փայլուն ,
 Մետաղըն ջինջ և լըպըրծուն :
 Ի կատարէն ցըշըրջանակ
 Արեգական ցոլայ գունակ .
 Եւ ըզքալ հնարըս ճարտարին
 Նուրբ զինանշանքն այն բարբառին :
 Եկայք մըտէք արգ , ո՛վ ընկերք ,
 Ետըր բոլորեալ ակումբ առէք ,
 Ի զանգակիս մըկըրտուծիւն .
 Կոչեսցի նա Զայնայնութիւն .
 Միահաւանս և միահարթ
 Զօգել խըմբել զէնըն զըւարթ :
 Յայսմ հետէ այս պաշտօն նորին ,
 Յոր սակս ետտեղծ ձեռք ճարտարին .
 Զերկրակենցաղ թողեալ կայան՝
 Յերկնից կապոյտն հասցէ խորան ,
 Աստեղատանց գոլ գրացի ,
 Ուի խռան շանթից շարժեսցի .
 Տացէ բարբառ ի բարձանց ,

Հուլիցն հանգոյն լուսապանծ,
 Որք զԱրարիչն օրհնեն ի պար
 Եւ զամն ածեն պսակահամար :
 Յանկ առ վըսեմն և յարակայ
 Բացցի բերանըն մեռաղեայ .
 Եւ զփախըստեայն ժամանակ
 Կալցէ առ մէն ժամ երագ :
 Լիցի Թարգման և բազգին ժիր .

Այլ և անգութ ուանկարեկիր՝
 Տատանաչարժ իցէ ընկեր
 Փոփոխական կենաց Թատեր :
 Եւ ուսուսցէ Թէ որպէս ձայն
 Որ ի նմանէն՝ ցըրուի յունայն,
 Այսպէս մնայուն ինչ չիք բնաւին,
 Ուամեն երկրայքըս յապաւին :

Արդ զօրուԹեամբ ձիգ պարանաց
 Հանէք ի գրոյ զզանգակն ի բաց .
 Ի գահ ձայնից ամբարձցի վեր .
 Ոլորտանալ յօգս և յայեր :
 Հա՛ քարչեցէք, քարչեցէք ևս .
 Ահա կախեալ ճօճայ Թեթևս :
 Խաղաղ-Բիսն նախն իցէ ձայն,
 Եւ ցընծասցէ քաղաքս համայն :

ՇԻԼԼԵՐ

Ն Կ Ա Ր Ա Գ Ր Ա Կ Ա Ն Ք

ՆԿԱՐԱԳԻՐ ԴՐԱՅԻՆ

Այսպէս առ յառաջ գործեալ՝ յագինային մերձի սահ-
[մանս :
Փափկութեան գրախան հեշտավայր՝ յոր մօտ հասեալ էր
[նա յայնժամ
կանաչ ցանկովքն պըսակէր զերդ պատնիշաւ ինչ դաշտա-
[կան

Ըզգագաթըն սարահարթ երկնակատար առանձնոցին :
Թանձրախիտ կողք ամայեացս ի թաւաթուփ խողանացեալ
վայրենեալ շռայլեալ ըստ կամս՝ յարգարէին զայն անմա-
[տոյց :

Աճէին 'ի գլուխ նորա յանհաս բարձունս, անտառատուն,
Բարձրաբուն մայրք և շոճք, արմուենիք և եղևինք .
Խուռնախիտ հօծեալ կարգզքն հովանի կուռ ի հովանի,
կազմն թատր ինչ մայրեաց հրաշատեսիկ, վեհինաճեմ :
Այլ քան զգիտակս իւրեանց ի վեր կանգնէր գրախոին գա-
[լար որմած՝

Որ պարզէր նախահօր մերում անսիլ ծայրածաւալ
Շըրջասփիռ ի պարագայ կողմանս իւրում իշխանութեան :
Բարձրագոյն քան զորմածն որ ընդ իւրև պարայածէր՝
Երևէր ընտիր ընտիր գեղեցկապտուղ տընկոց պըսակ,
Յազկուռքն և միրգք ոսկեշող յօրինէին երփնից կիտուած :
Արեգակըն սըրտակաթ զայն համբուրէր ճառագայթիւք

Քան թէ զամպ երեկորոյ զգեղապարոյր յերկնից կամար,
 Կամ զազեզնն խոնաւուտ մինչ առողէ Աստուած զերկիր:
 Այսպիսի էր սիրաշարժ տեսիլ գեղոյ զբարթ վայրին:

Ըստ մօտե՛լ ի սուրբ օգոյ էր անցանեւ ի սրբապոյն՝
 Սըրտահեշա և գարնային ուրախութեամբք հոգեպարար,
 Զօրաւոր մերժեւ ըզքնաւ թախիժ, բայց ոչ զանյուսութեան:
 Հեշտաշունչ սիքք թօթափեալ ըզխնկաբոյր ըզթեւ իւ.
[բեանց՝

Հոս սրփռէին անոյշ ի բնէ, պէսպէս վայրացն եզեալ գու.
 Յորոց շորթեալ ամէին զաւարսն զայն ըզխնկաւէաւ: [չակ
 Որպէս նաւազք առխըթեալ ըստ սարաւանդն Բարեյոյս
 Եւ անցեալ ըզՊրասոնիւ, հողմք հիւսիտի մինչ անգր ի ծով
 ԸզՍաբայ բերեն բուրմունս ի խընկաբեր փփանց անախ
 Երջանիկն Արարայ, և ընդ յամբլն հեշտացեալք
 Մըտագիւր ծանրանաւեն, և հինաւուրցն Ովկիան
 Զուարճացեալ ի հոտն անոյշ ցըմծ փարսախըս ծիծաղի.
 Նոյն և այն շոգիք քաղցունք հարկանէին ի թընտմին,
 Որ գայր թունեւ զայնոսիկ, թէպէտ յաւէտ յայնս հեշտա-
[նայր

Քան Ազմոգ ի ծուխ ձրկանն՝ որ հալածեաց ըզտարփաւորն
 Ի Տովթիթեան որդւոյն հարանէ, զքինու շտապեալն փախ
[ի փախ

Ի Մարաց մինչ յԵգիպտոս՝ ուր և արկաւ ի խիստ կապանս:
 Մըտախոհ և յամրաշարժ ընդ մացառուտ և սեպացեալ
 Կողքս բըլրոյն եւ Սատան, այլ չեգիտ այլ ևս արահեա.
 Ուրք փըշոց ցանկապաա և մորննեաց շըռայլութիւնք
 Ի մորգոյ և յանասնոյ զանցըս խընուն ճանապարհին:
 Մի ևեթ էր գուռն անդէն՝ գեմ յարեւլս ի հանգիպոյն,
 Զոր տեսեալ վիրագին, ըզբուն մըտիւքըն քամահեալ,
 Եւ ի մի վազ թեթեւ անկուշեւով իմն և ընդոստ
 Ըզցանկով բըլրոյն և զբարձր որմովն անկաւ ի ներքս յոտին:
 Որպէս գայլ հուղկահարու սովալըլուկ զհեա նոր որոյ՝
 Զմակազատեղս հովուաց յանքոյթ բակս ընդ երեկս ի գաշա
[գիտեալ

Դիւրաւ սոսնու զվանգակօք ի փարախ անգըր միջամուխ.
 Կամ զերգ գող հրոսեալ ի գանձ ճոխ մեծատան յառ և յա-
[պուռ,

Ո՛ր գուրք ըստուար՝ հաստ յամրափակ նիգ շերկընչին ի
[յարձակմանց,

Ընգ պատուհան կամ ընգ երգ մագլէ սողայ գամըս գտաւ
[նեւ,

Նոյննախնի մեծն յելուզակ յաստուածեզէնն հրոսէ գաւթ(Թ,
Նոյն և ըզկնի գրոհ ետուն յեկեղեցի իւր զեղիս վարձկանք:

Նա սլացեալ ի կենաց ծառն՝ ի բարձրաբունն ի տեղուջ
[անգ,

Նըստաւ յայն իբր հողամազ, ոչ ճըջմարտին հասեալ կենաց,
Այլ կենդանեաց նիւթէ մահ, չածէ զմըտաւ զկենաստուին
[ոյժ՝

Եւ զի էր ի բարուդ պէտս՝ անմահութեան առհաւատչեայ.
Այլ գործի առ զայն ևեթ ի հեռարձակ իւր տեսութիւն:

Ոչ ոք անշուշտ, Թող զՍտուած, գիտէ զբուն յարգներկայ
[բարւոյն.

Նա և պէտք լաւագունից վարին յուճակտ կամ զեղծանին:
Ի ներքոյ իւր տեսանէ յոր հիացմամբ յանձուկ վայրի

Ձամենայն գանձք բնութեան՝ ի հեշտ մարգոյն ըզգայոււ
[Թեանց,

Նա մանաւանդ զերկինս յերկրի. վասըն զի գրախտն երաւ
[նաւէտ

Աստուծոյն էր ձեռատունկ պարտէզ յԵդեմ ընգ արևելս:
Եւ Եդեմ ընգարձակէր ընգ արեգ կոյս՝ ի յԱւրանայ

Յաշտարական արքունաշէնս Յունաց մեծին Սելևկիոյ,
Կամ մինչև ցանգր ուր որդիքն Եդեմայ նախ բընակեցին

Յերկարեալ յառաջագոյն ըզժամանակսն ի Թելասսար:
Էնն յանուշակ աստ վայրի զչըքնազ պարտէզ իւր նըկարեալ՝

Յարգաւանդ երկրէն բուսոյց զազգ ազգ ընտիր ընտիր արնւ
Ըզտոհմիկս ազնըւագոյնս ի տես, ի հոտ և ի ճաշակ: [կոց,

Ի նոցին կայր ի միջի ծառն կենաց ամբարձածիգ՝
Գեղեցիկ խայծեալ պըտողմն անմահութեան օսկերողբոջ:

Հուպ ի կեանքս մահըն մեր՝ գիտութեան ծառն աճէր ի բոյս,
Բարւոյն հանձար՝ մեծագնի գընեալ չարին ծանօթութեամբ:

Ի հարաւ կոյս ընգ Եդեմ անցանէր գետ լայնածաւալ
Անխոտոր ընթացիւք, բայց ընգ լերամբն անտառախիտ՝

Երկրասոյզ կորընչէր. արկեալ էր զայն լեառն Աստուծոյ

Իբրև թուժք ինչ ամբարտակի պարտիզին շտապ յորձանիցն :
Ուխքն ընդ երակս յոքնավըսառ երկրին ախորժ ծարաւու-
[Թեամբ

Ի վեր ծըծեալք՝ բրզխէին ակնավըճիտ ցըրտին աղբուր՝
Ըզպարատէզն առոգանել առուս առուս սըփռեալ վըտակս ,
Ոյց անտի խուժք առեալ և խուռնընթաց անկեալ ի վայր
Ընդ խոխոմս ինչ առապար՝ հանդիպէին անդէն գետոյն
Որ ելեալ ընթանայր ի մըթասոյզ ալից իւրոց :
Անդ յայնժամ ի չորս առաջըս բաժանեալ ի մեծամեծս ,
Յայլ և այլ կոյս արշաւեալ՝ փորէ ի փոր թափառէին
Եւ նդ տէրութիւնս անուանիս , զսրոց ընդ վայր է աստ
[Ճառել :

Ասասցուք մանաւանդ , թէ արուեստին ինչ իցէ հնար .
Իբր յաղբերէս շափիղեայ ուրտապտոյտ գընան վըտակք
Ընդ աւազ ոսկեհատիկ և նդ մարգարիտս արեւելեան .
Իբր ի շըրջան մանուածապատ ընդ գետնասող հովանեք
Ըզծորանսն ծաւալեն յայց ուի խնգիր մէն մի տընկոյ ,
Եւ ի սնունդ երփներանդ դրախտավայել գունից ծաղկանց ,
Զորս ոչ նուրբ ինչ յօրինեաց արուեստ ի կարգ , ի փունջ
[չքնազ ,

Այլ առատն եհեզ բնութիւն ընդ բլուր , ընդ մարգ և ընդ
[հովիտ ,

Ուր արև վաղորդայնի ջեռուցանէ զգաշտավայր նախ ,
Ուր սաղարթք թանձրախիաք ածեն մայրեաց մուծ մէջ-

Այսպիսի էր անգին , ասպընջական երանելի , [օրեայ :
Հովասուն , զարմանազան ի կերպակերպ գիմաց տեսիլ :
Անտառակք՝ որոց ճոխ փայտք ցօլեն սեւտին և հոյզ անոյշ :
Դարաստանք՝ որոց պըտուղք ոսկեկեղև և ոսկեփայլք
Առ ի կախ ճօճեալ ձեմին , սիրափափազք , քաղցրաճաշակք ,
Երեկորնեայ ստոյգ առասպելք , որ թէ իցեն՝ աստ են միայն :
Ի մայրիսն անդ ցան և ցիր կան դիւրք և մարգք անօսրա-
Եւ հօտք և անգեայք ճարակաւորք յարօտ գալար , [գեղք ,
Կամ բլլըրակք ամբառնան արմաւենեօք լի տընկախիտ :
Մազկաւէտ ծոց ջըրասուն ինչ ծործորոց սըփռէ զեւր
[գանձօ՝

Երփնազարդ ծաղկանց երանգս , և գեղափթիթ ըզվարդ ան-
[փուշ :

Յայլ ինչ կոյս՝ այրք և անձաւք հովանաւորք, զով առանձ
[նոցք,

Եւ այգի՝ զայնս օթոցիւ պատեալ իւրով տարածանէ
Ձծիրանի ողկոյզան՝ առատ սողոսկելով գեղեցկուղէչ:
Կարկաչոտ միանգամայն ալիք սահեալ ընդ բլլբոց շեւ
Ճապաղին, կամ ժողովին ի մի զհոսանս իւրեանց ի լիճ
Որ ծաւալ առեալ պարզէ զապակեղէն զիւր հայեկին
Առ դարեանդ խոտորկըտուր ամանց ի մուրա պըսակելոց:
Հաւք ի նուագսն պարապեն, որոց սըղոխք գարնանաշարժք
Ձանուշից շընչեալ բուրմունս անդաստանաց և ըզմայրեաց՝
Ի մի ձայն միաբանեն ըզծածանեալ դողդոջ տերևս,
Մինչդեռ Պան համարուր ամենավար անցեալ ի պար
Ընդ Նընորհս և ընդ ժամս ամէ գարուն՝ յաւէտազուարճ:
Ոչ Եննայ մարգ գեղեցիկ, ուր ծաղկաքաղ Պերսեփոնէ՝
Ինք ծաղիկ գեղեցկագոյն՝ խլեցաւ ի թուխ Սանդարպեաէն.
Դեմեարէ ասուպագին ընդ համաշխարհ խընդրեաց ըջնա,
Ոչ հեշատսուն անտառակըն Դափնէի առ Որոնտեաւ,
Եւ ոչ հոգիաշունչն ի Կաստալէայ բըղխեալ աղբիւր,
Ի կըշիւ ինչ մըտանել կարէ նգ դրախտին եդեմական,
Թող թէ կըզգեակըն Նիսէ՝ զորով Տըրտոն պատ առնու դետ,
Ուր հինաւուրցըն Քամ՝ Ամմոնըն կարգացեալ հեթանոսաց
Եւ Արամազդ լիւգացի՝ առեալ թաքոյց զԱմալթէա,
Եւ զորգին ծաղկափթիթ ըզպատանին Սպանգարամեա,
Ի բաց տարեալ մեկուսի յաչաց Ռէայ մօրուին իւրոյ:
Ամար լեռան՝ ուր թագաւորք Եթովպացւոց պահեն զուս.

[տերս,

Թէպէտ և կարծեցեալ ոմանց բուն գրախան իսկ Ջըմարիտ,
Ընդ երկնաւն եթովպական՝ առ Նիլոսին աղբերակամբք
Ի փայլուն պատեալ ժայռէ յոր թէ ելցէ զօրն ոք ցերեկ,
Նա իսկ համբուն չէ ինչ մօա յասորականըս դարաստան,
Ուր վիրաքն ետես զհամայն հեշտանս առանց ինչ հեշտաւ
[նաց,

Ձամենայն շունչ կենդանի՝ նորատեսիլ և չնաշխարհիկ:

ՄԻՆՈՆ

ԱԳԱՄ ԵՒ ԵՒԱ Ի ԴՐԱԽՑԻՆ

Երկուք ի նոցանէն ազնւակերպ հասակագեղ
 վըսեմարերձ աստուածանման՝ զիւրեանց բընիկ փառան
 [ըզգեցեալք,
 Ի մեծ շուք մերկամարմին՝ ամենայնին թըւեցեալ տետրք,
 Եւ պատուոյն պարծանաց երևէին արժանաւորք: [չին
 Յաստուածային չաւ իւրեանց ծագէր պատկեր վեհ Արար-
 Ուզողութեամբ և հանձարով և սերա և սեռն սրբութեամբ-
 Սեռն և սերտ, սակայն ի ստոյգ որդիական ազատութեան՝
 Որ նօթձէ ի մարգիկ ըզձըջմարիտն իշխանութիւն: [գէտ-
 Չէն հաւասար երկոքեան, որպէս բնութեամբ իսկ չեն հան-
 Այրն եղեալ ի մըտաւոր իմաստութիւն և յարութիւն,
 Կինն ի գըրգանըս քընքշանաց, ի շնորհ անոյշ սիրայորդոր.
 Այր միայն վասն Աստուծոյ, կին Աստուծոյ և առն իւրում:
 Գեղեցիկ և լայն ճակատ մարդոյն և աչք բարձրահայեաց
 Զգերագոյն իշխանութիւնն գուշակեն յայտ յանդիման.
 Յակընթեայ խոպուք վարսիցն յերկուս ջոկեալ ի ճակա-
 Տատանին ողիւզօրէն և առնացի վայելչութեամբ, [առն՝
 Սակայն ոչ ի խոնարհ քան զկորովի ուսովք իւրովք:
 Կինն ոսկի սքողեալ հերովք՝ որոց իջեալ ցիր և անզորգ
 Մինչև ի մէջսն փափուկ՝ պէսպէս ծրփին գեղագանգուրք
 Զերգ խաւարծի որթոյն ի խիղբս ոլոր՝ նըշան կապոյ հչու-
 [թեան].
 Զոր ըզգօն և մեզմական պահանջեալ առնըն տէրութիւն,
 Եւ շնորհեալ ի կնոջէն, և յառնէն լաւ և ս ընկալեալ,
 Ինքնարգոյ հնազանդութեամբ և պատկառոտ շնորհեալ
 [խրոխտով],
 Քաղցրախորժ գիմամարտիկ սիրատենչակ գանդաղանգք:
 Զև ի պարկեշտ անգամոց մարմնոյ նոցին էր ինչ թաքուն,
 Զի դեռ ևս առ նոքօք ամօթ մեղաց չէր ի միջի:
 Ամօթ՝ անվայելուչ գործոց բնութեան, շուք անպատիւ,
 Մընձուհ մեղաց, քանի՛օն աղմկեցեր գու զմարդկան ազգ-
 Սին առ աչքս պաճուճեալ անբըծութեան կերպարանգք.

Ի կենաց մարդոյն մերժեք զերջանկաւէս կեանքս նորա,
 Զպարզութիւն սեւըն և սուրբ և զանարատ անմեղութիւն:

Այսպէս զոյգն անցանէր մերկ, ոչ յերեսաց ինչ խորշը-
 [լով

Ոչ յԱստուծոյն, ոչ հրեշտակաց, զի չածէր չար ինչ ըզմը-
 [տաւ.

Այսպէս ձեռն ի ձեռն արկեալ զնային ամուլքն ամենագեղ
 Յորս իցեն երբեք զօգեալ ի գըրկախառն համբոյր սիրոյ.

Աբա՛տ՝ ամենալաւն ի մարդկանէ, յորգւոց իւրոց,

Եւա՛ չքնազագեղն յազգքս կանանց, իւրոց գըստերց:

Ընդ Թաւաթուփ հովանեաւ որ քաղցր ի սէղ շըրշէր կա-
 Բազմեցան առ ափին ականակիտ բըղխեալ աղբեր, [նա՛

Ի վասակ գեղածիծաղ պարտիզին այնչափ աշխատեալք,
 Որչափ հարկ էր յանուշել ըզգովարար օգոցըն սիք, [րար:

Առ ի քաղցր ըզքունն առնել, զծարաւ և զքաղց՝ առողջա-
 Քաղեցին անձամբ զխայրիս երեկորին ընթրեաց իւրեանց,

Պըտուղք ախորժահմբ զոր ոստք առ ձեռն ընձեռէին,

Մինչ ինքեանք ի կողմ՝ եղեալ ողն առնուին առ ի հանգիստ
 Ի փափկիկ սիզարուսակ ծաղկանըկար ի բաստեռունս:

Ծըծէին զանուշակ ուղիւղ մըրգոցն, և ծարաւեալք՝

Ըմզէին ի կեղևս նոցա զվըտակն աղբերահոս:

ՄԻՆՈՆ

ՍՏԵՂԵՍՈՒՄՆ ԹՈՉՆՈՑ ԵՒ ԶՈՐԳՈՑԱՆԵԱՑ

Եւ ասաց Աստուած. Հանցեն ջուրքըն զեռուն բազմասե-
 [րունք

Արարած կենդանացու, և Թռիցեն հաւք վերոյ երկրի
 Ի ներքոյ՝ նգարձակ երկնից հաստատութեան սաւառնա-

[Թէք:

Եւ արար վիշապաձկունս Աստուած՝ և զընաւ շունչ կենե-
 [զուս,

Զամենայն կայտառ ի ջուրս և որ անգուստ եռան ազգ ազգ.
 Ըստեղծ և ըզթըռչունըս Թեւաւորս մէն մի՛ստ տոհմից:

Եւ ետես զի էր բարի, և ըզնոսին օրհնեալ ասէ.
 Աճեցէք, բազմացարուք, լըցէք ըզըռւրսդք ծովածիրս,
 Ըզըճացդ և ըզքետոց, և բազմացին թըռչունքդ յերկրի:
 Իսկ և իսկ նեղուցք և ծովք, ծոց ամենայն, ամենայն խորշ
 Եւացին յանթիւ սերունդ ի լուղակաց խուռն յոգնահոյշ:
 Ոյց թեւզքն և ջինջ թեփովք ընդ կապուտակըն կոհակօք
 Սողառեալ վըտառ վըտառ խուժ և խըրուտս ի ծով գործեն:
 Կէսք մենակեացք կամ ընդ ընկերս ըզբուտ իւրեանց ճա-
 [րակին լօս:

Եւ շըրջին յայրուս բըստոյ, կամ խաղալով, փայլակըն սուր,
 Յուցանեն արեգական զվէտ վէտ շապիկսն ոսկեճամուկ:
 Այլք հեշտիւ ի դաղտակուր խեփոր մընան տամուկ խայծին,
 Կամ ի զրահ պատենազէն սպասեն որոշոյն ընդ խարակու:
 Կորպքամակ գելփինք և որթք ծովու խողան ի խաղաղ
 Անարի, անճոռնի և անագին վիշապ ձըկուռք [ջուրս:
 Թաւալեալ յաղթահարեալ ըզմեծածովն՝ յուզեն մըրրիկ:
 Անդանօր Լեիաթան, սոսկավիթխարն ի կենդանիս,
 Ի մփնոունն անգընդոցըն տարածեալ իբր հըրուանդան՝
 Կայ ի քուն կամ գնայ ի լիւղ, ծըփին ցամաք ինչ թըւե-
 [ցեալ:
 Ականջքն ի ներքըս ձըգեն, քթափողք ժայթքեն ծով մփ
 [ողջոյն:

Մեղմախառն անձաւք՝ ճահիճք՝ ափունք հանեն զանթիւ
 [ձագունն
 Ի ձըւոցն որ նոյնհետայն բեկեալ ի գէպ ջախջխանօք՝
 Յուցանեն ըզմերկանդամ մանկտին, որ փոյթ փեարազքեցիկ
 Եւ ի թռիչըս պատրաստեալ թեւօքն ելեալ վերասլանան,
 Եւ կանչիւք յաղթանակօք սաւառնացեալ յօգըս վերին՝
 Քամահեն զերկրաւ՝ տեսեալ զայն ի հեռուստ ընդ բարձր
 [ամպով:

Աստ արծուին և արագիլ ի քարակտուր ժայռս ափափայտ
 Եւ ի գիտակըս մայրից կառուցանեն ինքեանց գագարս:
 Ոմանք հողաթուեն յոխորտարար յօգոյն գաւառ,
 Իմաստնագոյն կէսք ի ձև մըտեալ՝ համուռ գըծեն շաւիղս.
 Խելամուտք ժամանակաց՝ ըզկարաւանսըն զօգալուս
 Արձակեն, որոց յերկրի և ի ծովուց վերայ թուուցեալ՝

Օժանգակեալ միմեանց թեօք գիւրին գործեն զիւրեանց
 [փախուսաւ:

Խոհական խորգոցըն տողք՝ այսպէս ի հողմըս վերելեակք
 Ամի ամի զհետսըն ուղղեն, յանցին ի ծուփ ծածանին օդք
 Մաղեալք և հոսեալք անթիւ փետրովքն և անհամար:
 Իսկ թըռչնիկք ոստ ի յոստոյ զգուրակս երգովքն առնեն
 [ուրախ,

Թօթափեալ զօրըն ցերեկ ածեալ ըզթեւսըն նըկարէն.
 Եւ անդէն իսկ պանծալին ծիծառնուկ ոչ լըռէ յերգոյն՝
 Գեզգեղեալ ըզցայգն ի բուն զողբանըւագ զիւր հեծու-
 [թիւնան:

Այլք յարծաթի ծովակս՝ ի գետս ի լիւղ լըւանան զմանրա-
 [թեւ լանջս.

Իսկ կարասի՝ կարակնակերտ ուլամբ՝ յերկուս լուսափայլ
 Ի լօդիկ շքեղաշուք, թեւալակաձև լայնչի թաթիւք [թեւս,
 Մըխիթ հարեալ շուրջ ածէ ի լողարանս ըզպերճանս իւր.
 Ըզխոնաւ տարրըն լըքեալ բազում անգամ թեւատարած
 Ելանէ վերանայ ի միջնաբերձ օդոյն գաւառ:
 [ջին,

Այլք երկրակոխ գեանագնաց յոտիցն ի ճեմըս պարծ շըր-
 Աքաղաղ՝ ցըցունազարդ փողակարգաց լըւին ժամուց,
 Եւ միւս այն՝ գեղատրտուն փաղփեալ ի գոյն պէսպէս երփ-
 Միրանի ծիծանին և ասաղախուռն ականոզեաց:
 [նից
 Օրինակ զայս ջուրք լըցեալ ձրկամբք և օդք թըռչնոց տար-
 Վազորգայնն և երեկոյն ըզհինգերորդ տօնեցին օր:
 [միւ՝

Հուսկ ուրեմըն վեցերորդ և վերջին օր արարչութեանն
 Ի հընչիւն երեկորենոյ ուառաւօտին տաւղաց ծագեաց.
 Եւ ասաց Աստուած. Հանցէ երկիր ազգ ազգ շուռչ կեն-
 [դանի,

Հօտ, անդեայ և սողուն, գազան երկրի զարմանազան:
 Լըւաւ երկիր, և անդէն բացեալ զարգանդն արգասաւոր՝
 Մընաւ միանգամայն արարածոց կենդանի հոյլ,
 Կատարեալ կերպարանօք՝ անդամապատ և բարգաւաճս:
 Ի հողոյն՝ իբր յիւր խըշտեաց՝ երէվայրի ել կանգնեցաւ
 Ի բնիկ կայսն յտնատառ անկոխ, ի թուփ՝ թաւութ կամ ի
 [քարայր:

Զոյգ առ զոյգ ընդ ծառովք յարեան կային և ընթացան,

Նախիրն ի գաշտ մարգագետին, կէսք ցիր ընդ ցիր առան.
[ձնակեաց,

Այլք երամ երամ հոլեալ հաւանընկեր արօտականք,
Եւ բըղխեալք ի գետնոյն ի յողնախուճք տողեալ ջրէր:
Է ուրեք զի հողակոշտք պարարտարօտ՝ ծնանին զերինջ,
Եւ է՝ զի կիտանձնեայ երևեալ շէկ առիւծ մագլէ
Ելանել զերծուցանել ըզլետակողմ՝ իւրոյ մարմնոյն.
Եւ գողցես ի կապանաց ինչ ճողոպրեալ, և ոսաուցեալ
Կանգնի կայ և թօթափէ զխայտաբզէտ բաշարն գեղապանծ:
Ինծ՝ վագր և ընծառիւծ յայտուձն ելեալ խըլըրգարար,
Սահեալ զանձամբք ընկենուն ըզփրխրեալ հողըն կոյտ ի
[կոյտ:

Երաշոտն եզերու բառնայ յերկրէ զգլուխն ոստախիտ.
Իեհմովթ, յազմանգամն յորդիս երկրի, հազիւ զօրէ
Զվիթխարի հաստին հանել թափել յիւրմէ կազապարէն:
Գեղմնաբարձ և բառաչոտ խաշն որպէս տունկըս բուսանի.
Գետաձի, թեփոտ տիտեուն երկմիտք ընդ ծով և ընդ ցա.
[մաք:

Ամենայն սողուն երկրի, որդն և ժիժմակ ծընան հա.
[մայն:

Են որ զձապուկ հովահարան ըստ օրինի շարժեն թեոց,
Եւ զմանրիկ ըզբարեչափ պըճնեն պատկերան յերանգ ե.
[բանգ

Եւ ի թոյրըս ճոխութեան պերճապայծառ ամարայնոյ,
Ի խայտուց ոսկեճամուկ, կապոյտ՝ կանաչ և ծիրանի:
Եւ են՝ որ իբրև դիծ մի՝ նգ քարշ ասնին զերկայն իրանս՝
Յերկրի զհետարն գրոշմելով ման ըզմանիւ ոլորտապառոյտ:
Սոքին ոչ ամենեքեան են ի նուաստից բնութեան ի կարգ.
Կէսք յօձից, տոհմ սոսկալի երկայնութեամբ և թանձրու.
[թեամբ:

Գալարեն ըզքընթըռնոցսըն կամակորս, և յարեն թեւ:
Զեռայ նախ մըրջիւն տնօրէն՝ հանդերձելոց կանխագաւ.
Սիրտ մի մեծ ընդգըրկեալ ի նըկնաձև գոյզն հասակի:
Օրինակ թերևս յապայս իրաւակշիւրն զուգութեան,
Տաւաղէ յուխտ միարնակ ըզտոհմութիւս խառնաղանձին:
Ըզկնի մեղուն իգարուն երևեցաւ ել գունդագաւնդ,

Այն որ զիւր այր դատարկտպորա՝ սընուցանէ քաղցրաճա-
[շահ,

Որ շինէ զբըջջաց խըցկուենսըն մոմտկերաըս մեղրարուխս :
Այլք անթիւ են և քեղէն բնութեան նոցին ես խելամուտ,
Եւ անուանս եգիբ նոցա՝ զորս աւելորգ է երկրորգել :
Եւ օձին չես անհըմուտ՝ խորամանդին ճըճեաց վայրի,
Որ է զի է անհեգեգ, յաղթամարմին, պըղընձակնեայ,
Թաւաբաշիւք քապընելի, թէպէտ և քեզ անմնասակար՝
Ձիշխէ ինչ մեղանչել, լըւեալ կոչոյգ և գայ հըլու :

Արգ երկինք ի փառս իւրեանց նըշողէին համապայծառ,
Եւ թաւալ առեալ գնային ըստ հըլովմանց բուռըն բազկի
Մեծազօր սկըզբնաշարժին արկելոցնախ յընթացս իւրեանց :
Եւ երկիր բովանդակեալ ի հանգերձան ճոխապաճոյճ՝
Միծաղէր զսւարթածաղիկ, օգ՝ ջուր՝ երկիր էին խըռնեալ
Ի թըսչուն հաւ՝ ի լողորգ ձուկն՝ յանասուն երկրահըլով :
Եւ օրըն վեցերորգ չև տակաւին էր ելեալ յանգ :

ՄԻԼՅՈՆ

ՆԿԱՐԱԳՐԻ ՎԱՀԱՆԻՆ ԱՔԻԼԵՍՑ

Ձայս առացեալ և ըզնա թողեալ անգէն՝ չոգաւ առ փուքսն,
Ի հուր զայնըս դարձուցեալ՝ հրաման ի դործ ետ անկանել :
Եւ քըսան փուքք անգ ի բովսըն փըշէին առ հասարակ
Ըզպէսպէս դիւրազառ օգոյն շոգիսըն շընչելով, [մի,
Ձի մերթ առ ձեռըն գըտցին իւրուժ փութոյն, և մերթ այլ
Որպէս ինքն ախորժիցէ շեփեսա՝ հանել ըզգործն ի գըուխ :
Ըզպըղինձն անպարտելի էարկ ի հուրն, ևս և զանաք
Եւ զոսկին պատուական ընդ արծաթոյն, և կանգնեցոյց
Ապա զմեծ սալն ի կոճեղն, և բուռն հարեալ առ ի ձեռին
Ըզկուանըն զօրաւոր, և ի միւսուժ կալաւ զաքծանն :

Եւ առեալ արար նախ ասպար մի մեծ հաստահարուստ,
Գործ ճարտար՝ կարակնակերտ, ածեալ զնովաւ ծընօտ
[պայծառ

Երեքկուղ, լուսաձաձանչ, և զբառնալիսն իւր արծաթի :

Հինդ էին վահանին պատուածք, իսկ նա ի բռնի անդ
 Բազում ինչ հրաշակերտս իմաստութեամբ արբտին գոր-

Յօրինեաց անդէն ի նմա զերկիր, զերկին և ըզծով, [ծէր:
 ԶԱրեգակն անաշխատ և ըզ]ուսին լուսապատար,
 Անդ զարփիսն ամենայն՝ որովք երկինք են պրսահեալ,
 ԸզԲոյլան և զԲազմաստեղս և զգօրութիւնն Որիտնի,
 Եւ զԱրջըն՝ զոր և Սայլ ևս անուանեն յորջորջանօք,
 Որ ցանգ անգըր շուրջ եկեալ՝ գէտ յՈրիտն տկն ունի պիչ,
 Եւ միայն է անհաղորդ ըգարանացն Ովկիանու:

Անդ արար յօգաձայնից մարգկան կրկին քաղաքս շէնս,
 Ի մին էին հարսանիք և մեծասպաս խրախուռք կոչնոց,
 Եւ զհարսունս յառագաստից բոցածածանչ վառեալ ջահիւք
 Ածէին ընդ ոստանն՝ հարսանեկան հընչիւք բազում:
 Եւ մանկտի պարաւոր շըրջան առեալ կաքաւէին,
 Եւ փողք և փանգուռնք բարբառէին ըզձայնս իւրեանց,
 Եւ կանայք զարմանային՝ կացեալ առ դուրս իւրաքանչիւր:
 Ժողովուրդն ի հրապարակ կային խրոնեալ, յուզէր պայ-
 Արք երկու կադէին ըզտուգանաց փոխարինի [քար:
 Արկեալ առն ըսպանելոյ. մին լու ի լու հրապարակին
 Պարծէր ողջոյն հատուցեալ, միւսըն շառեալ ինչ կայր յու-
 Խընդրէին երկոքեան իրաւարար՝ առնուլ վըճիռ: [րասա-
 Երկոցուն կողմանց ի նպաստ աստի անտի գօչէր ամբօխ.
 Իսկ քարոգք ըզԺողովուրդն հանդարտէին, և ծերունիք
 Բազմէին յողորկ ի վէմս ի նուիրականն հոլեալ տկուծք,
 Եւ զմականսն ի նուիրականն օգաձայնից առեալ ի ձեռս՝
 Եւ նոքօք յարուցեալ ասէին գատ մի՝ ստ միջէ:

Եւ ոսկոյ կրկին քանքար անդէն եգեալ կայր ի միջի՝
 Տալ այնմիկ՝ որ զիրաւունս իւր ի նոսին ցուցցէ ճըշգրիտ:

Իսկ ըզմիւս քաղաքն՝ երկուք պաշարէին զօրաց բանակք
 Սպառազէն փայլակնսցեալք, որ յերկշաւիզ կային խոր.
 [հուրգ-

Կամ ի սպառ սատակել, կամ բաժանել ըզնուան յերկուս
 Որչափ ի ներքս իցեն ինչք ի ցանկալի յայնմ սպատին.
 Իսկ նոցա՝ մոստացեալ՝ զինուորէին գաղտ ի գարան:
 Ըզպարիսպըն սիրելի կանայքն և տղայ մանկտին պահէր
 Ամբարձեալք ի նմա, և արք ևս ընդ նոսին յեցեալք յալիս:

Նոքա գնային, և Աթենաս Պալլաս ու Արէս վարէր զնոսին .
 Երկոքին ոսկեղէնք և պաճուճեալք ոսկեհանգերձ,
 Գեղանիք և մեծանձուկք ի զէն ի զարգ իբրև աստուածք,
 Ընդ հանուրս երևելիք . իսկ զօրականն էր գոյզն ընդհաստ :
 Մինչ սոքա հասանէին ուր ի դարան թուէր նոցա գէպ,
 Առ գետով սւր և ջրարբքն էին գուարաց բոլորեցուն,
 Անդ սոքա բազմէին ամբածածուկք ի պղինձ հրաշէկ :
 Մեկուսի յամբոխէն նրստէին գէտք իւրեանց երկու ,
 Նըկաեալ՝ եթէ տեսցեն զհօտս և զանգեայս կարակնեղջիրս .
 Ելանէին նոքա ստէպ, ընդ որս դային կրկին տուարածք
 Զուարճացեալք ի ձայն սրընգաց, և գաւանաց ինչ անըզ-

[դաստք :

Զայն տեսեալ նոցա հեռուստ, փութանակի տըւեալ գը-
 Անգէոց երամակս, ընտիր սպիտակ օգեաց ճահուկս [աոյթ
 Օյտէին վըտարանգիս և զխաշնարածս հարկանէին :
 Իսկ նոքա, լըւեալ ըզյոյժ դուժին շըշուկ առ անգէովք՝
 Մինչ բազմեալ կային յատեան հրապարակի, անգէն և անգ
 Յերիւարս օգտպարիկս հեծեալ ժաման լինէին շոյտ,
 Եւ զտեղի առեալ զափամբ գետոյն, մարտի տըւեալ ճակատ,
 Ստապէին ըզմիմեանս ի պղընձակուռ նիզակաց թայրս :
 Անգ գեգերէր Հեռ և Վըրգով, անգ և Օրհաս կորըստաբեր
 Զոմն ըմբռնեալ կենդանի նորոգ խոցով, զայլ ոմն անխոց,
 Եւ զայլ զք կենազբաւ՝ ձըգէր զոակցն ընդ խազմականան .
 Եւ էին զուսովք իւրով ձորձք թաթաւեալ յարիւն արանց :
 Շըրջէին զօրէն մարդկան շընչաւորաց և կըռուէին ,
 Եւ զմիմեանց մեռելոց ձըգձըգէին ըզգիակունս : [ւանգ .

Եդ ի նմտ և գեռահերկ արտ մի փափուկ, անգ արգա-
 Լայնասարր՝ երեքկնարօր, և մաճակալք ի նմին յոգունք
 Տանէին և բերէին շըրջեալ հարկիս այսըր և անգր .
 Որոց ի գլուխ ժամանեալ արտավարին գարձագարձիւ՝
 Եկեալ այր մի անգէն մատուցանէր նոցին ի ձեռս
 Դաշխուրան անոյշ գինւոյ, և գառնային նոքա նդ ակօսս ,
 Տենչացեալք ի խոր անդոյն գալ ժամանեւ անգրէն յաւարտ :
 Հարկանէր այն ի թիկանց, իբր արօրեալ, երփըն մըթին ,
 Թէպէտ և էր ոսկենիւթ, և հիացումն էր այս մեծ յոյժ :

Եդ ի նըմին և արտորայ մի հասկաթուռ, յորում մըշակք

Սայրասուր գերանդիք ի ձեռս ըզհուննս հարկանէին :
 Եւ որայքն՝ էր որ յերկիր Թօթափէին Թանձր ընդ ահօսս ,
 Էր զոր կապօղք որայիցն առնէին զայնս ողորակապ :
 Եւ որ զորայն կապիցեն՝ երեք ըզհետ գնային նոցա .
 Հասկաքաղ մանկաի յետուստ բարձեալ ի գերկսն բերէին ,
 Մատուցեալ անգուլ ի նպաստ . ի մէջ նոցա պետըն լըռիկ
 Յուպ ի ձեռին կայր ի վերայ գաղշին սըրտիւ բերկրապա-
 [տար :

Կազմէին նուիրակք կօչունս ընդ Թեղօշիւ մի մեկուսի .
 Եւ զենեալ եղըն մի մեծ՝ հանգերձէին , և անդ կանայք՝
 Մըշակացըն հայս յընթրիս՝ Թրէին գերմակ ալիւր առատ :
 Եգ ի նմին և այգեստան մի բարգաւաճ՝ ողկուզալիր ,
 Վայելուչ և ոսկեկուռ , և սեաւ ի խայծ անկեալ ողկոյղքն .
 Եւ կանգուն կայր ձողաբարձ յարծաթի խէչքս ծայր ի ծայր :
 Առսւամէջըս կապուտակս և յանագէ զնովիմք ած ցանկ-
 Մի եւեթ էր յայն շաւիղ՝ գընալ կրելեաց ի կուծա այգւոյն :
 Կուսագեղ օրիորդք և պատանեակք քընքշասըրտիկք
 ի հիւսուածոյ սահառիս զանուշահամ բերսն ածէին .
 Յոյց ի մէջ հընչուն քնարաւ մանուկ մի քաղցըր նըլադէր ,
 Եւ նգ աղիս բարեյարմարս գողարիկ ձայնիւ զուգէր գեզ-
 [գեզ :

Նոքա նգ նոյն յերգ ուի շըռինչ յոտին դոփիւն զհետ կայ-
 Արար ևս ի նըմա եղբերաբերձ երընջուց ջոկս . [Թէին :
 Եւ երինջքն յօրինեալ էին յոսկւոյ և յանագէ ,
 Եւ բընչելով ի գոմոցն ելանէին յարօտըս կոյս
 Ըստ վըտակ մի կարկաջուն և ըստ շամբուտըն նըրբաստեղն :
 Անգիորդք խառն ընդ երինջսն ոսկեղէնք երթային չորք ,
 Եւ ըզինի նոցա գամփռունք երագոտունք ինըն գնային :
 Ամէհի առիւծք երկու յառաջընթաց կովուցն ի բոյլ
 Զբառաւոտ ցուլն ունէին յահեղ պոչիւն վարեալ ընդ քարշ .
 Եւ գիմեալ գամփռունք ի նա հասանէին և պտտանիք :
 Իսկ նոցա պատառեալ զմեծամարմին զուարակին մորթ՝
 Զփորոտին և զարիւնըն լափէին բոսորաբուխ .
 Հովիւքըն զուր վանէին՝ յորգորելով ըզժիր գամփռուսն ,
 Որ խըրտուցեալ յառիւծուցըն չառնուին յանձըն գօշել ,
 Եւ ելեալ և մատուցեալ մօտ հաջէին և խորշէին :
 Արար ևս անդ լուսակիղն հօտից արօտ մի լայնալիր

Կազակըրկինն հոյակապ՝ ի գեղեցիկ հովտի միում, [Ծուկ:
Գոմն եղանց, մահադատեղս և հանգըրուանս յարկածա

Իբրուադեաց անգ և ըզպար Կազակըրկիննն հոյանունն,

Այնրժ նըման զոր երբեմն ի մեծանխտն անգ ի Կնոոսս

Դեգալոսն յօրինեաց գեղահիւսակն Արիագնեայ:

Պատանիք անգանօր և օրիորդք չըքնաղագիւաք

Ըզձեռացըն գաստակէ կալեալ միմեանց առնուին պար.

Աղջկունք նուրբ բարակաման զգեցեալ բեհեզըս կըաաւիս,

Մանկտին բաճկոն քաջլուր՝ լուսանըկար գոյզն ինչ ի ձէթ.

Եւ նոցա՝ բողբոսալ էին պըսակք գեղեցիկահիւսք,

Իսկ սոցա՝ գաշոյնք ոսկիք ըզկամարացն արծաթէից:

Մերթ օտիւք հանձարեղօք մանեկաձև հիւ գային շուրջ,

Թեթեակի յոյժ իբրու բրուա մի զի կալեալ ի ձեռս ըզ-
[գուրգն

Եւ նըստեալ զփորձ առնուցու՝ թէ ի շըրջանն ընթանայցէ.

Եւ մերթ անգըէն կարգ ընդ կարգ հարկանէին կայթս ընդ
[միմեանս:

Յօգնահոյժ ըզգեհալի պարուն կուտեալ կային գումարք

Հեշտացեալք, և ի խըմբի նոցին գուսան տասուածեղէն

Երգէր քնարաւ, և երկուք ոք յափսիթերս անգ խազալիկք՝

Ի սկըսնուլ նորուն յերգ՝ ի մէջ նորա ճախր առնուին:

Եգ ի նմա և ըզգետոյն Ովկիանու մեծ զօրութիւն

Առ վերջին պարունակաւ ճարտարագործ վահանին այն:

Իսկ յորժամ բովանգակեաց զասպարն ըզմեծ և հաստա-
[բեսս,

Յօրինեաց և զըրահս քան զճառագայթս հըրոյ պայծառ.

Յօրինեաց և սազաւարտ պինդ յիրանունս նորին պատշաճ,

Գեղաշուք՝ բազմաքանգակ, և գարգմանակ արկ ոսկեփունջ.

Յօրինեաց և սըռնապանս ի կուանակուռ անագ թիթղանց:

Վըճարեալ զկազմածս ողջոյն Կազակըրկինն հըռչակա-
[նուն,

Չամենայն բարձեալ տարաւ մօրն Աքիլեայ եգ առաջի:

Նա սլացաւ՝ իբրև շահէն՝ ի ձիւնեղէնն Ոլիմպոսէ,

Վառուածս արփիագեղս առբերելով ի Հեփեստեայ:

ՀՈՄԵՐՈՍ. Իլիական:

ԿՈՌԱՐՇԱԻ

Իսկ նոցա բողոքեցուն բարձեալ համայն մըտարակ ի ձիան
Եւ շհահեալ փոկովքն առին ձայն բոցաշունչ խրախուսաւ

[նայ :

Եւ նոքա թափառնակի սրարշաւ ընդ դաշան ընթանային
Ի բացէ ի նաւացն, և ընդ լանջօք նոցին փոշի
Յառնէր կայր՝ ամպոյ նըման կամ մըրըրկի փոթորկայոյզ,
Եւ ի շունչ հողմոյն հոսեալ ծածանէին բաշիցըն հոյլք :

Կառքըն մերթ ընդ գետինն արգիւնարեր գնային ի սող,
Մերթ ընդ օդ իբրև ի թռիչս, իսկ վարիչք պինդ կային ի

[նիսա :

Բողոքեցուն թընդէր սիրա ոստուցելոցն ի յաղթութիւն,
Յորգորէին զյովաական ընդ հարթըն թըռուցեալ, մըրը-

[կեալ զփոշին :

Իսկ յորժամ ժիր երիվարք զյետինն ընթացս հանէին

[յանդ

Յետո ի ծով սպիտակափառ, անդ քաջութիւն իւրաքան-

Եւ ի վեր, անգէն ձիանն հարկանէին քաջ ասպարէզ, [չիւր

Անդ Փերեան քաջին քաջոան ի դուրս ճայիկքն ոսաչէին

Յետ նոցուն ցոլանային Իիոմեգեանքըն գեղազառք [չոյա :

Տրովացիք՝ ոչ յոյժ ի բաց, այլ կարի շատ հուպ առ կըռան :

Մինչև այն իմըն թըւել՝ եթէ ի կառան համբառնայցէն,

Եւ շքնչովքն ջեռնուին թիկունք և լայն ուղք Եւմելեայ :

Քանզի զգլուխսն ի վերայ նորուն արկեալ սըլանային :

Անցանէին իոկ թերևս և կամ յերկրայս առնէին գէթ,

Թէ գուշակն Ապուլոն՝ որդւոյն Տիգեայ սըրտմըտեալ չէր,

Որ ընկէց ի ձեռաց նորա զմըտարակն արփիտագե :

Արտասուք առ զայրացուկսն յաչաց նորա թօթափեցան,

Ջի զգամբիկսըն տեսանէր երագափոյթ ևս յառաջեալ,

Եւ զի իւրքըն պատժեցան գռթել առանց ինչ մըտարակի :

Իոկ Ապուլոն՝ որդւոյն Տիգեայ նենգող՝ չէանց զԱթենասաւ,

Որ գիմեալ վաղձազակի և առ հովիւն հասեալ արանց՝

Մատոյց ի ձեռան ըզմըտարակն, և յերիվարսն յաւել կորով :

Եւ ապա զհետ Արմատի որդւոյն պընդեալ սըրամըտագին՝
Խորատկեաց ըզուծ ձիոցն աստուածուհին, սարտեան ճա-

[յիկքն

Այոր և անգր ըստ ճանապարհն, և գլորեցան սամիքն յեր-
Եւ նա ինքն առ անուին հողովեցաւ ի բազմոցէն, [կեր:

Արմըկունք իւր և բերան և քըթափողք ցըտեցան շուրջ,
Ճըմլեցաւ ճակատն առ յօնս, և լըցան աչք իւր արտասուօք,

Եւ որդի ձայնին հագագ աղօտացիալ նըւաղեցաւ:
Իսկ Տիգեանն ի կողմ ելեալ՝ ըզձիս վարէր սալասըմբակ

Յոյժ քան զոյլս յառաջագէմ, զի ետ ձիոցն Աթենատ ոյժ,
Եւ նըմին պարծանս, ոյր զհետ շէկն Ատրիգէս գայր Մե-

Իայց զերիվարս հօր իւրոյ քաջալերէր Անտիլըքոս: [նկաւ:
Գուն և գուրք գիք, ընդ ոլորս ըստեպ մըտէք ճեպ ըզձե-

Ընդ սոսին ի հակառակըս մըտանել ոչ հրամայեմ՝ [պի-
Ընդ Տիգեան քաջին ձիանս, ոյց առ տեղեալս այժմ Աթե-

[նաս

Պարգևեաց աշխուժութիւն և շուք փառաց յաւել նըմին.
Այլ զերիվարսն Ատրիգեան ըմբռնեցէք, մի յեաննսլիք.

Հայա շոյտ, մի նախատինս Սևուկ զամբիկն հեղուցու
[զձեօք:

Եւ բնաւ ընգէր իցէ ձեզ յեանիլ, ո՛վ քաջք և լըքանիլ:
Ահա և զայս ևս ասեմ, և ճըմարտեալ ելքէ ի գլուխ.

Ոչ ևս ձեզ տարցին խընամք առ Նեստորի հովուին ազանց,
Այլ անգէն ընդ հուպ ըզձեզ սուր պըղընձով սատակեսցէ,

Թէ անփոյթ արարեալ նըւաստագոյն տարցուք պարգև:
Այլ ըզհետ պընդեցարուք, ճեպ տուք աղէ ի հապ ըշտապ.

Իսկ ապա յիմ պարանոց՝ խելս ինչ խառնել՝ հնարաւորել
Ձի յանձկի ուրեք ուզուոյն սըպըրգիցիմ. և չըվըրիպմ:

Ձայս ասաց, և ի սաստից իշխանին ակն ածեալ նոցա՝
Վայր մի ուժգին ընծացան, և նոյնհետայն այնուհետև

Ձընսագոյն ուզուոյ նեզուց ինչ Անտիլըք ետես արին:
Էր պախուժըն գեանոյն՝ ուր ձմերային մօրացեալ ջուրց

Խորխոշեալ էր զարահետն և զվայրն ողջոյն փոսացուցեալ.
Ձգուշացեալ ի բախմանէ անուոց՝ ընդ այն գնայր Մենելաւ:

Անտիլըք առ ի շեզ մըղեալ ըզձիս սալասըմբակ
Ձարտուղի խուսափեալ յառաջ վարէր սուղ ինչ ի բաց

Ջահի հարաւ Ատրիգէս և ձայն երարձ առ Անտիլոք .

Խօշարար ձիավարեսս, Անտիլոքէ, արգել ըզձիսդ, [առջ,
Քանզի նեղ են մեզ անցքս, ընդ հուպ ընդ լայնն անցցես յա-
Քուլցէ զեան երկոցունցս ածցես ընդ կառս իմ բախելով:
Ջայս ասաց, բայց Անտիլոք և ըս քան զևս յառաջ մրդէր
Մըարակ ի կուշտ տագնապաւ՝ չըլլուելոյն իբր արարեալ:
Եւ որչափ ինչ գընդակին է կորովի ծըզեօք ձըդումն՝
Որ արկցէ երիասատրդ՝ հուժկու տիօցն առնել հանգէս,
Այնչափ ի բաց սըլացան, և Ատրիգեանքն հարթեան ճա-
Քանզի նա ինքնին կամաւ իսկ արգելաւ ի չվարելոյ, [յիկք,
Ձի մի զձանապարհայն ընդհարցին ձիք սալասըմբակք,
Եւ ըզկառսն պընդակազմ շըրջեսցեն վեր ի վայր հարեալ .
Եւ ի փոշի գլորեսցին նոքին ճեպեալքն ի յաղթութիւն:
Եւ խարտեաշըն Մենելաւ գոչեաց առ նա կըշտամբանօք .

Անտիլոք, չիք որ քան զքեզ անօրէն յազդ մահկանացու .
Կորիւր զի ստոյգ ըզգօն քեզ չասէաք աքայեցիքս .

Այլ ոչ այդպէս, օն և օն, առանց երգման տարցիս պարզէ .

Ջայս խօսեալ՝ առ երիվարսն իւր խրախոյս երարձ, ասէ .
Մի գուք ինձ ինչ կայք մընայք, ի սըրտառուչ մի՝ նկըզմիք
[սուգ .

Վաղագոյն նոցին քան ձեր պարտասեսցին ծունկք և թա-
[թուլք .

Ձի անկեալ են երկօքին նոքա յաստեաց առուզութեան :

Ջայս ասաց, և յարքայէն սաստից նոցա պատկառելով
Սաստկագոյն հարեալ արշաւ՝ հասին նոցա հուպ հապըշ-
[տապ :

Նըստէին արգիացիք անդ ի զընին ձիոցն յատեանն,
Եւ նոքա թըռիչս առեալ փոթորկէին զփոշին ընդ դաշանն :
Եւ ետես նախ զերիվարսն Իդամնէս կրետացւոց պեա,
Ձի նըստէր արտաքոյ հրսպարակին բարձր ի դիտի .
Եւ թէպէտ և ի բացէ զգոռսն լըւեալ՝ զայրըն ծանեաւ,
Եւ նըշմարեաց զերիվարն երևելի զայլովք զանցեալ,
Որ այլով ամենայնիւ յոտից ցըզլուի երաշխ էր նա՝
Սպիտակ նիշ բոլորածն լուսնատեսիլ ի ճակատունն :
Յոտն եկաց՝ բարբառեցաւ առ հրապարակն արգիացւոց .

Ո՛վ սիրելիք, առաջնորդք արգիացւոց և զօրագլուխք,

Ե՛ս միայն նըշմարիցեմ արգեզք ըզձիս, եթէ և գուք :
 Ինձ այլք աստանօր յառաջագէմ թուին երիվարք,
 Եւ այլ ոք անտանի կառավարիչ, իսկ այն զամբիկք
 Արգելան յասպարիսին՝ որ ժըրագոյնքն էին ցայն վայր :
 Քանզի նախ տեսի զնոսա զնըպատակաւն առեալ պարոյր,
 Բայց նըշմարեւ չմարթեմ այժմ, և աչք իմ շուրջ շըրջանա-
 ընգ գիւրըն արողական ակընկառայց կան ի զընին : [կա-
 կամ զերծան ի վարողէն գանգանաւանգք, և ոչ զօրեաց
 Պինգ ունեւ սանձ ըզկիտիւն, և չաջողեաց ճախրել զնողիմք :
 Անգ կարծեմ գըլեալ ըզնա, համայն և զկառսըն խորտա-
 [կեալ,

Եւ օցտեալ ըզճայիկան աւիւն ի սիրտ մոլեգնութեան :
 Յարուցեալ հայեցարուք և գուք՝ զի ոչ ճանաչեմ քաջ :
 Ինձ թըլի սահայն լինել էտողացի ոյր ի զարմէ, [մեդ :
 Պետ յԱրգեանս, ձիախրոխտին Տիգեայ ճետ քաջըն՝ Իիո-
 Ոյիլեանն երագ էաս ասէ առ նա քամահարար :

Ձմտարաժամբաջողիս, Իգումնեւս, քանզի ահա [գաշա :
 Բարձրաքեաց այն զամբիկք հեռուստ ընգ լայնն արշաւին
 Քչ տիպք ինչ մանկագոյն գասնիս ի գունգ արգիտացուց,
 Եւ ոչ սըրատեսիլ ինչ ակնարկեն աչքք ի գըլխոյք :
 Այլ ի բայ բանից անգսւլ շաղակրատես, չէ քեզ վայել
 Լեզուագար լինել, զի գոն աստ քան ըզքեզ այլք լաւա-
 [գոյնք :

Նոյն ճայիկք են նախարշաւ՝ յառաջագէմքն իսկըզրանէ :
 Եւ մեկեանքն, և ինքն առեալ զերեսանական յառաջ սուրայ :
 Սըրամըտեալ կրետացուց ընգ նա պետին՝ դիմախօսեաց :
 էաս՝ քաջք խազմարար՝ չարալեզու, յայլ ամենայն
 Տըրպագոյն յԱրգիացիս, զի միւք են քեզ ապերաստն :
 Հապա եկ, զեռօտանի և կամ ըզսան գիցուք ի գրաւ,
 Դատաւոր զԱրիգէսն Ագամեճնոն մեզ կացուցեալ,
 Ո՛ր երկձիք յառաջս իցեն. ի աղօթս անկեալ առցես ի միտ :
 Զայս ասաց, Ոյիլեանն յարեաւ անգէն երագն էաս՝
 Սըւմըռեալ զայրագին՝ պատասխանի տալ խիստ բանիւք :
 Եւ անշուշտ իմն անգրագոյն ևս անցանէր երկոցունց հեռն,
 Աքիլիէ եթէ ինքնին չէր յարուցեալ և բարբառեալ :

Մի ևս այլ այժմիկ, էաս և Իգումնն, պայքարեսլիք

Դժժնէիւք դառնն բանիւք, քանզի և է իսկ անպատեհօ-
 Նա 'ւանիկ և ցասնուիք այլում ումեք որ յայդ իշխեր:
 Այլ բազմեալ ի հանգիսիդ՝ կաշիք դէտակն երիվարացն,
 Ինքնին նոքա նըկըրտեալ երագափոյթ ի յաղթանակ՝
 Այսր առ մեզ եկեալ հասցեն, յայնժամ տեսիք ամենե-
 [քեան

Ձերիվարս արգիացուց՝ որ առաջինք և որ երկրորդք:
 Ձայս ասաց, և Տիգրեանն յառաջ վարեալ մերձեցաւ յոյժ
 Մըտրակեալ զուսսըն անգուլ, ձիանն ի վազս յուզին ձե-
 [պեալք:

Եւ փոշւոյն ցընցուղք անհաս ըզկառուպեան հարկանէին-
 Կառքն ոսկեկազմ՝ գըրուագեալ և անագով պաճուճազարգ-
 ի վերայ գլէր երագոտն երիվարացն, հազիւ թէ հազ
 Հեաս ինչ ի մանըր փոշւոջն ըզկնի անուոց (Թողուին խեցք-
 Թըռչէին նոքա հապճնայ, և անց եկաց ի հանգիսին.
 Բազում քիրան հոսեր ձիոցն յերկիր յուլանցն և ի լանջաց:
 Ինքն ոստեաւ վազեալ ի վայր ի պաղպաղուն կառաց անտի
 Յեցուցեալ զմըտրակն ի լուծն, և Սթենելոս քաջ զյուլա-
 [ցաւ

Ձմըրցանակն էառ փութով, կին և ունկնեղ և քոտանի,
 Ետ ցընկերսըն մեծանձինս տանել, և ինքն ըզձիան ելոյժ:

Ըզնորին ըզհետ Նեղեանն Անտիլոքոս երիվարէր,
 Նենգաւ՝ ոչ սրընթացիւք կանխեալ անցեալ ըզՄենելեաւ-
 Համայն և այնպէս զերագոտն հուպ վարէր ձիս Մենելաւոս:
 Եւ որչափ տարակաց լինի յանուոյ ձի կառամուա [դոր,
 Որ զտէրն ընդ դաշա ձըգիցէ կառքն հանգերձ մեծայոր-
 Որոյ ծայրք ձարից ագուոյն շըփին ընդ հեցս անուոյն ի գիլ,
 Եւ նա յոյժ մերձ ընթանայ, և ոչ բազում ինչ վայր ի մէջ
 Յարշաւել անդ իւրում ընդ լայնածիր գաշաագետինն,
 Այնչափ յեանէր Մենելաւ ի պանչելւոյն Անտիլոքեայ-
 Իսկ յառաջ և գընդակի ասպարիսաւ ի բաց մընայր,
 Այլ ի ճեպս եհաս առ նա, զի յորդէին աշխոյժք հըզօր
 Ի զամբիկն ագամնմեան՝ ի Սևուկ անգըր գիտագեղ:
 Եթէ այլ ևս երկոցունցն ասպարիսէր ընթացք յառաջ,
 Անցանէր յայնժամ զնովաւ, և ոչ կըրթէր ի տարակոյս:
 Իսկ արի պաշտօնեայն Իգումենի՝ Մերիոնէս

Տեղընկէց մի կայր յեանեալ ի Մենելեայ մեծափառէ .
 Ձի գեղարաչ երիվարք տարտամագոյն էին նորա ,
 Եւ էր ինքն անհրժմագոյն ի հանգիսեւ յասպարիսի :
 Իսկ որդին Ագմետեան եհաս վերջին յամենեցունց
 Քարշելով զկառսն չըքնաղ և յառաջոյ վարեալ ըզմիս :

ՀՈՄԵՐՈՍ . Իւլիոս :

ՀԱՆԴԵՍ ՅՈՒՂԱՐԿԱՌՈՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՐՈՎԼԻ

Իսկ զանբաւ փայտակոյտն յորժամ լըցին աստի անտի ,
 Անգ նըստեալ միաժողով ակն ունէին . այլ նոյնհետայն
 Հրաման ետ Աքիլլէս քաջամարտիկ Միրմիգոնայց
 Վառել ի պղինձ և լըծել իւրաքանչիւր ի կռուս ըզմիս .
 Եւ նոցա յարուցեալ փռութանակի զգեցան ըզլէնս ,
 Եւ ի զոյգան ելին հեծան պատերազմօղք և կառապետք :
 Յառաջոյ կառամարտիկք , հետեակացն ըզհետ գայր տմալ ,
 Բիւրաւորք , և ի միջի զՊատրոկլ ընկերքն բառնային :
 Ծածկէին ըզգին հերովք իւրեանց հատեալ և ընկեցեալ ,
 Իսկ գիւցազն Աքիլլէս ըզդուխն յետուստ ունէր՝ արբառւմ
 Ձի յուղարկէր զանարատ ընկերն ի վիհ Սանգարամետոս :

Ի տեղին հասեալ նոցա յԱքիլլիսէ նըշանակեալ՝
 Եգին ի վայր , և անգէն գիզին ըզփայտն շեղաշեղջ :
 Յայնժամ քաջուն Աքիլլէս գիւցազն և այլ ինչ արկ ի միտ .
 Ի բացէ ի խարուկէն կացեալ կըտրեաց զհերս իւր գեղձան՝
 Զոր գետոյն Սպերքիսսի ծաղկազըւարճ սընուցանէր .
 Եւ յոգւոց ելեալ ասէ՝ ակընկառայց ի ծովըն թուխ .
 Սպերքիէ , հայր իմ Պելէս ի զուր նուիրեալ ուխտ եգ ընգ
 Ինձ յանգրէն ի գարձիս ի բնագաւառն իմ սիրային [քեզ՝
 Քեզ ըզվարսս խըղել , հանել և զոհ սուրբ զանգէոց ,
 Եւ խոյոց որձըս յիսուն զենուլ անգէն յաղբերակունսգ՝
 Ուր կան քեզ սըրբանըւէր անգք և բագին անուշաբոյր :
 Զայս ուխտեաց ծերունին , այլ գու զխորհուրդ իւր ոչ լը-
 [ցեր :

Իսկ արդ զի չէք ինձ գարձ անգրէն ի քաղցուենին իմ բնիկ
[աշխարհ,

Տաց ըզգիտակս ի գիւցազննն Պատրոկլոս՝ առնուլ գընաւ:

Ջայս ասացեալ՝ եգ ըզգէան ի սիրելոյ մըտերմին ձեռս,
Եւ զգիւղձուկ արտասուաց բորբոքեցոյց յամենեսին:

Անբաղայ մինչև ի մուտս արեգական ձրգէին կոծք,

Թէ Աքիլլևս մատուցեալ յԱգամեմեոն չասէր ճեպով:

Ատրիգէս, — քանզի ժողովքս աքայեցւոց զհետ երթիցեն

Հրամանի քում մանաւանդ, — է յագելոյ ի լալեաց ժամ:

Իսկ զարգիս ի խարուկէս արձակեա, գուլ տուր և պատուէր

Պատրաստել ընթրիս, իսկ յայս խընամ տարցուք յորոց

[գնացեալս

Ի ջերմոցն է առուել. սակայն մնացեն աստ ընդ մեզ պետք:

Արդ յորժամ լըւաւ զայս արանց արքայն Ագամեմեոն,

Ետ ընդ ետ ցըրուեաց զամբոխն ի հարթարգակ իւրեանց

[նաւակս,

Եւ մնացին յուղարկաւորքն անգ և ըզգիայասըն շարեցին՝

Յօրինեալ ոսնաչափս հարիւր աստի անտի զխարոյկն,

Եւ ի գլուխ փայտակուտին զգիակն եգին՝ խոցեալք ի սիրտ:

Եւ բազում պարարտ խաշինս և ծանրաքայլ կորեջիւր

[ցուլ

Աւ խարուկաւորն մորթեալ հանգերձեցին. և ի բնաւիցն

Աքիլլեայ մեծանձին ըզճարպն առեալ ըզգին ծեփեաց

Յոտից ցըրուխ, և կուտէր շուրջանակի զմորթեալ շաղիզն:

Եւ զմեզու և զիւզոյ սըրուակսըն եգ յեց յանկողինսն,

Եւ քառեակ երիվարս ահիպարանս յապուրակի

Արկեալ անդր ի փայտակոյտըն՝ մեծամեծս յոգւոց եհան:

Էին արքային իններեակ շունք սեղանասպասք,

Ջերկոսին ի նոցանէն արկ ի խարոյկըն փողոտեալ,

Եւ զտրովեանցըն մեծանձանց երկոտասան արի մանկունս

Պըզընձով խոշուեալ, չարեաց ոճիրս ածեալ զմրտաւ:

Ընկեցեալ անդր և զսաստիկ հրոյն բըռնութիւն ի ճարակել՝

Ջայն էառ այնուհետև և զսիրելին կարգաց զընկեր. [տին:

Ողջոյն քեզ, ո՛վ Պատրոկլէ, և անդ ի տան Սանգարպե:

Կատարեմքեզ աւաստիկ զյառաջագոյն խոստմունս ի գլուխ:

Ըզտրովեանցըն մեծանձանց երկոտասան մանկտի հուժկու

Ձայն ընդ քեզ ծախէ հօւրըն զամենայն միանգամայն.
Իսկ զՀեկատոր ըզՊրիամեանն՝ ոչ ապա հըրոյ լափեւ, այլ շանց:

Ձայս ասաց ըսպառնալից, բայց շունք չէին յայն գիշամուտիս,
Այլ ի առեւեկ և գիշերի Արամազդայ գուստորըն Աստղիկ
Հաւածէր անախ զշունուին և ի վարգի օծանէր իւզ
Յաստուածեղէն, զի մի զնա ի քարշ ձրգելն երգիծցէ ինչ:
Իսկ Գուշակն Ապոլոն սըփուեաց զիւրև ամպ կապուտակ
Ի յերկնից մինչև յերկիր, և զամենայն վայրըն ծածկեաց
Չոր գիտկնըն գրաւէր, զի բարկուութիւն արեգական
Մի զմարմնոջն անկեալ ջրլզբն և անդամովք խըռուեցուսցէ:
Բայց փայտակոյտ մեռելոյն Պատրոկլոսի տոչորէր ոչ:
Յայնժամ քաջուան Աբելէս գիւցազն ըզմիտս ընդ այլ տա-
[րաւ.

Ի խարուկէն մեկուսի կացեալ մաղթեաց Հողմոց երկուց՝
Հիւսիսոյ և Զեփիււսին, ուխտեալ զընտիր ընտիրս յաշտից.
Եւ առատ հեղեալ նըւէրս ոսկի նուագաւ՝ յազերս ամէր,
Գալ ըստէպ՝ զի գիզափայտըն ճեպեսցի վառել ի բոց
Եւ գիտկուկն հըրգեհեսցին: Յայնժամ Իռիս երազաթև
Ունկն եգեալ խընդըրուածոցն՝ եկն առ Հողմունան եհաս
[հրեշտակ:

Սաստկաշունչ Զեփիււսոսին նոքա ի տանն առեալ ակուժք՝
Խորախ լինէին ի կոշունան. և ընթացեալ եկաց Իռիս
Առ սեամսըն կըճեայս. զոր իբրև յակն արկեալ անսին,
Յոտն եկաց բազմականն, և մէն մի զնա կոչէր առ իւր.
Իսկ նա չառ յանձըն բազմել, այլ ըզպատագամ իւր խօսեցաւ.

Ոչ բազմոց, զի զսոյն հետայն յՈվկիանու գնայցեմ հո-
[սանս

Յերկիրն եթովպացւոց՝ ուր անմահիցըն մատչին զոհք,
Զի նդ նոսին լիցիմ և ես հազորգակից ի գահամուսնան:
Այլ Աբելէս զՀիւսիսակ և զգոչաւորըն Զեփիււսոս
Աղաչէ գընալ առ ինքն՝ ուխտեալ զընտիր ընտիրս յաշտից,
Զի զխարոյկն ի բորբոքումն արծարծիցէք՝ յոր կայն եգեալ
Պատրոկլոս՝ զոր կոծին աքայեցիք համադումար: [մամք

Ասացեալ զայս՝ ինքըն գնաց, նոքա յարեան անհուն գոչ-
վարեալ զամպս յառաջոյ իւրեանց մեծաւ փոթորկելով:
Եւ եկին փուլթանակի շընչովքն ի ծով, տլիքն ուռեան

Ի բարձրաճիչ փրչմանէն, և յարգաւանդն հասին Տրոյա .
Եւ անկեալ ի խարուկին՝ մեծ գոչեաց բոցն աստուածա-

[հրատ :

Եւ զգիշերն ի բուն փրչեալ ահեղամուռնչ ի փոյտակոյտն՝
Հասին բոց բորբոքախառն, և զցայգն ի գլուխ Ժիրն Աքիլ-

[լեւ

Կըրկնատաշտ բաժակ ի ձեռսըն յոսկեղէն ի Թակուկէն
Առեալ հեղոյրգինի յերկիր, Թանայր համակ զառքտորեն ,
Եւ զոգի եզկեւելոյն Պատրոկլոսի ձայնեալ կարգայր : [Բոց
Որպէս հայր յողբս հարկանի՝ յայրեւ զոսկերս որգւոյն իւ-
Փեսայի, որոյ մեռեալ ըզհէք ծընողն ի սուգ նըստոյց ,
Այնպէս ողբայր Աքիլլեւ յայրեւ զոսկերս ընկերակցին ,
Սողեւով առ խարուկաւն և ստէպ ըստէպ յողոց ելեալ :

Իսկ յորժամեկն Արուսեակն աւետաւորըրուսոյն յերկիր .
Ոյր ըզհետ ի ծով սըփուի քըրքմահանգերձն Առաւօտ ,
Թառամեցաւ անգ հըրգեհն և գաղարեաց բոցոյն բորբոք-
Եւ Հողմունք մեկնեցան գնացին դարձեալ անդրէն ի տուն
Ընդ Թրակեան ծովուն անդունդս՝ որ ուռուցիւք մօլեալ

[հեծէր :

Բայց ընդ այլ կոյս Պելեանն ի խարուկէն մեկուսացեալ՝
Կողմնեցաւ վաստակարեկ, անկաւ զնովաւ քուն անուշտակ :
Այլ նոքա զԱտրիգեաւ Ժողովէին միահամուռ ,
Որոց զինքն ոտից խօշիւն և գռութելոյն խընձոյ զարթոյց .
Ցարուցեալ նըստաւ կանգուն և խօսեցաւ առ նոսա զայս .

Ատրիգէս, և որ հանուրց ևս այլ իշխանք աքայեցւոց ,
Ի գինի սևատեսակ նախ շիջուցէք զխարոյկդ ողջոյն
Տոր վայր հըրոյն զօրութիւն տիրեաց կալաւ առ հասարակ :
ԶՄենիտեան Պատրոկլի զոսկերսն ապա հաւաքեոցուք
Ընտրելով հաւաստեաւ . են իսկ ինքնին գիւրածանօթ ,
Զի նա ի մէջ խարուկին գընէր, իսկ այլք առողոգի
Զեզերօքն այրէին խառնիխուռն արք և անգրուվարք :
Եւ գիցուք զայնս յոսկեղէն շիչ և ի ճարպ կըրկնապատիկ ,
Մինչև իմ իսկ ի գըժոխըս կափուցեալ խաղաղիցիմ :
Իսկ գամբան՝ ոչ և Եթէ մեծ ինչ յոյժ գործել պահանջիցեմ,
Այլ առ անգամ մի այսչափ . ապա և զայն տքայեցիք
Մեծատարր և բարձրաբերձ կառուսիլք գուք որ ապրիցէքդ

Յեառոյ իմէ մընացորդք ի նաւատորմըն յոգնատախտ :

Զայս ասաց, նոքա Պելեանն երագոտինն եղեն հըլու :
 Նախ ողջոյն ըզխարոյկըն շիջուցին ի սեաւ գինի [տաւ :
 Տոր վայր բոցն էր ծաւալեալ, և թանձր աճիւն զիջեալ նրս :
 Եւ զոսկերսն ըսպիտակս հեղահամբոյր զինուորակցին
 Ժողովեալ ողբովք յոսկի շիշ և ի ճարպ կըրկնապատիկ ,
 Եւ եղեալ ի խորանսն ըսքողեցին նուրբ կըտաւով :
 Եւ ծրարուոր կարակնեալ ըզգերեզմանն՝ առ խարուկան
 Արկին հիմն , և կուտեցին անդէն ի նմա զհողըն բըրբեր ,
 Եւ կանգնեալ զհողապատեան շերիմն՝ անգրէն ելին ի բաց :
 ՀՈՄԵՐՈՍ . Իլիադան :

ՅԵՍԻԼ ԳՈԹՈՂԻԱՅ

ԳՈԹՈՂԻԱ, ՄԱԹԱՆ, ԱՐԵՆՆԵՐ

ՄԱԹԱՆ

Դըշխոյ մեծ , իցէ՛ այս վայր քո տեղի .

Զինչ վերգով զքեզ գըղըրդէ , ո՞ր տհ պատէ զքե սարսուռ ,
 Յէր իրիք խընդիր եկեալ իցես ի մէջ ոսոխացդ .
 Յայս աաճար անվաւեր ժըտիս երրեք մերձենալ ,
 Մերկացա՞ր յանողոք ոխութենէն յայնմանէ , ...

ԳՈԹՈՂԻԱ

Մըտագիւր ուշի ուշով ինձ ունկըն գիք երկողքին :

Ոչ կամիմ՝ առտանօր զանցեալն ածել ինչ ձեզ յուշ ,
 Եւ ոչ տալ ձեզ համար զարեանցն որ իմ հեղեալ է .
 Որ ինչ գամ մի արարի , Աբեններ , պարա ինձ վարկայ :
 Ոչ աւնու՞մ ինձ գատաւոր ըզժողովուրդ մի ժըպիրհ .
 Որ զինչ և լու զինէն յանգըգնութիւն իւր արար .
 Զիս երկինք ինքնին խընամ կալան առնել անբասիր :
 Տէրութիւնն իմ կառուցեալ ի շքեղաւոր յաջողմունս՝
 Աւաջի Գոթողիոյ ծովէ ի ծով սարսեցոյց .
 Ինև խոր խազազութեամբ Մրուսազէմ վայելէ ,
 Յորգանան ոչ տեսանէ զմոլորական Արուայիկն ,

Ոչ ըզվէս փղջռացին՝ աւերածովքն անըսպառ
 Վրկանդել զափունըս իւր իբր առ ձերովքն արքայիւք :
 Ասորին զիս առ գըշխոյս և իբր ըզքոյր իւր ունի .
 Հուսկ ուրեմըն նենգագործն ալիտարար իմուժ տանս՝
 Որ մինչև առ իս ձըկաէր հասուցանել զգըժնութիւն ,
 Յէու , վիրագն Յէու , ի Սամարեա կայ ի գող .
 Տագնապեալ ի հզորագոյն իւրմէ գրացւոյն յամենուստ՝
 Ջոր գըրգել գիտացի յելուզակին այնժ ընդգէժ ,
 Արգ թողու զիս ի կողմանս յայսսփիկ վեհ տիրուհի :
 Հանգըստեամբ ըմբռնէի զարգիւնս իմոյ հանձարոյս ,
 Բայց մըզձկուտ իմըն ժըխոր յաւուրց հետէ յիս բունեալ՝
 Ձիմոյ երջանկութեանս ընդ մէջ ըզթելսըն խըզէ :
 Երազ մի , - և էր երբեք ինձ ընդ երազ մի խռովէլ , -
 Տըրամութիւն ինչ ի սըրտիս սընուցանէ ուտել զայն .
 Այսր և անգր անգուստ խուսեմ , նա 'նգ ամենայն պընդի
 Ի պահու խաւարակուռ խոր գիշերոյն արհաւրաց [զհեա :
 Մայրն իմ Յեզարէլ եկն եկաց ինձ յանգիման ,
 Իբր յաւուր մահուն իւրոյ , ճոխապաճոյճ պըճնութեամբ .
 Չուառութիւն իւր չէր բնաւին անաւագեալ ըզպերձանսն ,
 Այլ ունէր և ըզգեղոյն պայծառութիւն հնարագիւտ
 Յոր հոգոյր նա ի սընգոյր և ի ծարիբ շըպարել ,
 Ի դարման ինչ անկարկատ թըշնամանաց հասակին .
 « Իողացիր , ասէ առ իս , արժանաւոր ինձ դուստր իմ .
 Անողորմն Աստուած Հրէից զանցուցանէ և ըզքե :
 Յաւէ ինձ , զի անկանիս , դուստր իմ , յահեղ ձեռսըն իւր » :
 Ի վախճան զարհուրելի սոցին բանից՝ թըւեցաւ
 Թէ ուրուն իւր ի կողմըն կորացաւ անկողնոցս ,
 Եւ ես թեւըս ձըգէի փարիւլ զիւրև գիրկ ընդ գիրկ .
 Բայց ոչ այլ ինչ գըտի՝ քան քըսմեկի խառնակոյտ
 Ոսկրոտոյ , շոշեալ շաղըց՝ ընդ տիղժ ընդ գեռ թաւալեալ ,
 Գարշելի անգամաթիւս , ձըրձեալ պատառս արիւնուուչա :
 Ջոր լափլէզ շընեբամն ապշոպէին ի միմեանց :

ԱՐԵՆՆԵՐ

Մէծգ Աստուած :

ԳՈԹՈՂԻԱ

Ի սոյն շըփոթ՝ աչաց իմոց երևի

Մանուկ մի մատաղ ի պատմուճան լուսերանգ՝
 Որպիսի երբայեցւոցրդ քահանայք ըզգենունն :
 Տեսիլ իւր զարթոյց ըզնըւալեալ ոգիս իմ :
 Իսկ իբրև ի միտս եղեալ ի մահարեր աղմըկէս
 Պըշնուի նգ հեզ և ազնիւ պարկեշտադեղ երեսս իւր ,
 Ըզգացի յեղակարծումն արիւնարբու պողովաս՝
 Զոր նենգողն եհար մըխեաց ցերախակաշն ի կըշտիս :
 Աշնչափ ինչ գունակ գունակ իրաց խառնուրդք այլանգակ
 Կըցկըցուն գիպաց յօգուած թերեւս ձեզ թըւիցին :
 Ես ինքնին առ ժամանակ մի յամօթոյ երկիւղիս՝
 Արգասիս համարեցայ տըխրատեսիլ գողուչոյ :
 Բայց հոգիս իմ գերեալ ի յիշատակս այդոցիկ՝
 Երկիցս անգամ ի քուն ըզնոյն տեսիլ յերազեաց :
 Երկիցս անգամ տըրտմագինք տեսին հանդէպ նըկարեալ
 Ըզնոյն ինքըն զայն մանուկ՝ միշտ ի խոցել զիս յորդոր :
 Խօնը ուրեմըն յորոց զիս խուճապէին արհաւիրք՝
 Առ Բահազ գնայի յաղերս՝ զի հըսկեսցէ ի կեանս իմ ,
 Եւ առ յոտըս սեզանոց իւրոց հանդիստ ինձ խընդրել :
 Զինչ մըտաց մահկանացուացո՞ ոչ գործիցեն անպիեաք :
 Ի տաճար այսըր Հրէից մըղեաց ազգումն իմըն զիս ,
 Եւ անկաւ ինձ ի սիրտ զԱստուած նոցին առնել հաշտ :
 Ընծայիւք ցածուցանել համարեցայ զքասուամն իւր ,
 Թէ Աստուածն այն , զինչ և է , գայցէ նոքիմըք ի համբոյր :
 Քըրմապետըդ Բահաղու , մի դըներ մեզ հիքու թեանս :
 Մըտանեմ ժողովուրդըն փախչի , զոհն առնու գուլ :
 Քահանայն մեծ յիս գիմէ սըրտմըտու թեամք մոլեգին :
 Մինչգեռ ինքն առ իս խօսէր , ո՞վ հիացումն , ո՞վ երկիւղ ,
 Տեսի զնոյն ինքըն մանուկ ընդ իս մահու սպառնալից ,
 Որպիսի անհեղ անուրջքն ի միտս ըզնոյն նըկարեաց :
 Տեսի զիս , նոյն կերպարանք , նոյն և հանդերձ կըտաւի ,
 Ճեմեղք ոտիցն և աչք , նըկարադիր համօրէն :
 Նոյն նա է : Զոյգ առ մեծի քահանային ընթանայր :
 Բայց իսկոյն անհետ ըզնա յաչաց իմոց արարին :

Աւագիկ է վըրգովումն որ զիս աստէն ստիպէ կալ :
 Եւ խորհուրդ ընդ երկոսին ձեզ հարցանել կամեցայ :

ՌԱՍԻՆ ՔԻՆՈՂԻԱ :

ԳԵՐԵԶՄԱՆՔ ՀԱՆՃԱՐԵՂԱՑՆ ՅԻՏԱԼԻՍ

Ի սըրբազան ագարակ Սըրբոյ Խաչին պարագիր
 Հանգչին աճիւնք՝ որք ըզվայրն իսկ յարգարեն սըրբագոյն .
 ԱնմահուԹեամբ իմըն լի է խաղաղեալն այն մոխիր .
 Թէպէտ չիցէ այլ ինչ անգ բայց յիշատակ անցելոյն ,
 Եւ խոն նըշխարք վեհազանց ի վիհ Թոհիցն անկելոց .
 Միքանձեւոյ աստանօր ու Ալփիերեայ ոսկրօտի ,
 Եւ աստեղաց հետահան Գալիլէոյ աստ գընի ,
 Եւ տառապանք իւր ընգ իւր . գառնայ ի հող աստ կըրկին
 Մագգիաւելեայ հոգն , ի վայր՝ յորմէ առաւըն նախկին :

Սըբա հանձարք չորեքին քառից տարերց հանգուռակ
 Յարուցանել համօրէն ազգ նոր՝ իցեն բաւական :
 Իտալիա՛ , Թէպէտ բիւր ած քեզ աղէտս ամանակ
 Զարբայակերպրգ գըձձեալ զարգու փառաց պատմուռձան ,
 Սակայն զլացաւ և զլասցի շնորհել այլոց աշխարհաց
 Հանձարս՝ առողս խոյանսց յաւերակաց իսկ միլոյ .
 ԱնմահուԹեամբ տոչորեալ է տակաւին և եղծ քոյ ,
 Յորմէ փայլք քեզ հատանին վերակենցազք վառ ի վառ .
 Այսպիսի ոք Աննովս նախնեաց վեհից զուգափառ :

Այլ ո՛ւր արգեօք հանգիցեն ետրուրացիքն երեքեան ,
 Տանգէ , Պետրարք , ու ոչ նըւազ ինչ կամ կըրսեր ի նոսին
 Ըստեղծագործն այն հանձար ուարձակ բանին երգահան ,
 Այն՝ որ զըրոյցըս հարիւր վիպասանեաց սիրային . [բակ ,
 Ո՛ւր արգ ոսկերքն այն հանգչին վեհք քան ըզկուս հասա .
 Մեծք ի մահու իբր ի կեանս . միԹէ դարձան ի փոշի ,
 Եւ չունիցի՛ ըզնոցանէ կի՞ճ հայրենեաց բան յուշի :
 Հի՞մ ոչ հատին քարահատք՝ նորուն արձան կիսանգրի .
 Որգիական հող նոցին չաւանգեցա՛ւ մօրն երկրի :

Ապաշնորհ Մաղկաւան . Տանգէ նընժէ հե՛ռ՝ ի քէն
 Սկիպիոնի նըմանեալ ի ծանակիչ քեզ ափուռնս .
 Հերձուածք և վէճք որ ի քեզ՝ քան քաղաքի մարտից քէն
 Արտասահման արարին ըզքերգող , զայն՝ զյոր անուն
 Որգիք քոյին և Թռուռնք զուր պաշտեսցեն հանապաղ՝
 ԽայԹեալ խըղձի՛ հնացելով . նա և պըսակն ինքնին արգ

Չոր Պետարբքեայ ուր ուրեմն էառ ճակատ դափնէզարդ
Յերկիր բուսեալ է օտար. և կեանք նորին և համբաւ
Եւ գերեզմանն իսկ գըրժեալ՝ ի քո հող ոչ ձօնեցաւ:

Պողաչէիոյ աւանգեաց ըզհողն՝ յերկիր հայրենեան.

Ո՛չ աւափիկ յաւագաց միջի կացցէ յանգորրու.

Եւ քաղցր և վեհ շընչիցեն մաղթանք հոգւոց հանգըստեան
Յայն՝ որ ըստեղծն ըզտուսկեան յուշկապարիկըն լեզու,
Գօսասնուութիւն զայն ինքնին, որոյ և ձայնք՝ երգք իսկ են,
Եւ քերգութիւն է բարբառն: Այլ և զնորին իսկ դամբան
Հար տապալեաց ի զայրուց նախանձամուղըն բորեան.

Ձիք արգ նըմա տեղի ուռչ ի սինլըբոր գերեզմանս,

Ձի մի ուրուք ծանուցեալ հանցէ և գոյզն հառաչանս:

Եւ Սուրբըն-Խաչ ի վեհիցն արգ մոխրոց զուրկ է նոցին.

Եւ յաղագս այսր իսկ զըրկման քաջ ևս լինի նըշաւակ.

Իբր յերախանս կեսարուց՝ բարձեալ Բրուտեայ կիսանդրին
Ածէր քաջիկ ևս ի յուշ ըզՀռովմայ՝ նախին այն զաւակ:

Քեզ երանի՛ Հռուսենա, զի տարագիրն այն անմահ՝

Նընջէ յեզերդ հին՝ յակառըն պետութեան զաղփաղփուն.

Այլ երանի՛ և Արկուայ, որ ամբարեալ պանծայ բուն

Նըւագաւորըս նըշխարս՝ պահեալ սիրով ի գիրկս իւր.

Մինչ Մաղկաւան զարտալած մեռեալն հայցէ յողբ ի զուր:

Առ իմ բըրգունքդ այգոքիկ ի պատուական ի քարանց,

Պորփիւր, յասպիս և ակատ, ընտիրք կըձեայց և գոհար,

Անփուտ պահել զոսկրտտի վաճառական գըքսազանց.

Ո՛չ աւանիկ գիւրալոյծ կայլակ ցօղոյ ամպավար

Յերեկորնեայ աստեղց վառք ախորժ սըփոնն զովութիւնս

Մանուածաւալ ի մարմանդ որ զմեռելոց պատէ զհող՝

Ոյց ըոկ անուանըն առ Մուսայս են մահարձանք և կոթող:

Ո՛չ աւանիկ խորագոյն անգ յարգութեամբ ձեմք լինին

Քան ի շերիմըս յըզկեալս որ ծածկէ զգլուխ գռուողին:

ԼՈՐՏ ՊԱՅՐՆ

ՅԼԱԾԱՐՑ Ի ՍՊԱՆԻԱ

Ահաւասիկ բացաւ կըրկէս, թողուն ըզգաշաշուն համարձակ-
 Եւ բիւրաւորք ըզբիւրուք հոծ հանգիսատես շուրջ կուտաւ
 [կին.

Ձև ուրեմն աւագ փողոյն նախկին հաւեղն հնչեալ հագագ
 Եւ ոչ մի տեղի թափուր տարաժամեալ մընայ եկին:

Անգ ազատք և մեծամեծք, և բամբըշանց պար խուռանեւ
 [բամ...

Լըռեն բարբառք և հըծծիւն. և ի նիւս սօս երիվարաց
 Սպիտակ ի գլուխ գարգմանակ. ոսկեմըարակ ուի թեթև
 [տեգ.

Հանդերձին քառեակ ասպետք ի կեղակործ գործ մըրցաւ.
 [նայ.

Եւ խոնարհեալ նախ հանգիսին յառաջագէժ գան առ ի վէգ.
 Ճոխ ըզթիկամբ նոցուն ամղան. արձակ արձակ արշաւան
 [ձիք.

Բաղմուզտանգ թէ ի սերկեան ասպարիղի փայլեն յաղթող
 Զամբոխին բարձր ըզկայթիւն և ըզտիկնայց քաղցր ակնար.
 [կէք.

Որ վեհ գործոց վեհ մըրցանակ՝ տարցեն սըրտիւքըն մեծաւ.
 [գոհ.

Ոչ մեծ քան զայդ թէ արքայք և ոչ սալարք փոխարինին:
 Ոսկեհանգերձ ըստ անձին արկեալ լօգիկ յըզգեստ փաղ-
 [փուն

Ի միջակին արձանացեալ կայ թեթևոտըն մարտացու
 Յիւր յեցեալ ի զօրութիւն, և վառի սիրտըն եռանդուն
 Ըզբառաչողն անդէոց յերկիր զարքայ տասպաստ հարոււ.
 Բայց յառաջ ըզքայլան ըզգոյշ ընգ շըրջապատըն բերելով
 Մի զանխոււ, քըննէ, ոտիցն յասպարիղին խոչ ինչ կայցէ.
 Զէն յաջում ետ նիզակ, բացէ ի բաց կըռուի ձեպով.
 Ոչ յաւելին ի խեսցէ մարգ զիրկ մըտերիմն յանդրուվարէ
 Որ յաճախ ընգ վերելակն, եղուկ, ըզմահ փոխանակէ:
 Երբակի փողեաց շեփոր, ասաւանիկ արուաւ նըշան,
 Եւ որջն անդէն փեռեկի. և անբարբառ ակընկալիք

Շուրջ գրաւեն ամենուստք ըզմարգածիրն արձակարան .
Ընդոստ ի դույթ թափ առնու անգ կենդանին քաջամար-

[տիկ

Եւ մոլեգին կառուցեալ զակն՝ ի դափր ոտին փորէ զերկիր .
Ոչ ահուր յիւրն արիւնքան անգ եւ ընգ եւ նահատակեալ՝
Աստէն կամ անգ ըսպառնալից ուղղէ զճակատըն վրէժխըն-

[գիր

Թափ ըզնախկին տալ յարձակոյթ . և բարկացայտ մերթ
[տատանեալ

Հրարորոք զարիւնախառն բիրս ի հիւ շըրջանակէ .
Եւ յանկարծուստ ոտնառէ . աչք սևեռեալ պընդակապին .
Ի բաց ի բաց կաց , այ յանդուգըն պարմանի , հար բուռն ի

[տէգ .

Արգ ժամ իցէ կորըստեան կամ կորովոյ ճարտար բազկին
Ըզկատաղին մոլեգնութիւն ըմպահկելով սանձակոտոր .

[ժոյգք .

Գեղաչափեալ քայլիւքն ի վազ ըզճախր առնուն ճեպող նը-
Փըրփրերախ արփէ զուարակ ոչ ի վիրաց զերծ խուսափեալ՝
Եւ դունդագունդ ի կողաց հոսեն պըղտոր ուխք մահաչուք .

Աւ ցաւոցըն բըռնութիւն խոյս տայ ճեպէ գըլոր թաւալ .
Տէգ ընգ տէգ , թըռչին սըլաքք , նա բարձրակոծ վայ բա-

[աւչէ :

Բայց միւսանգամ գայ յասպարէզ . ոչ ըզնա տէգ անգ կամ
[մըկունդ

Բոցասըմբակ երիվարաց ընդոստ ոչ դույթք պակուցանեն .
Խուժէ այր և վրէժխընգիր սուրան նորուն զէնք սըրաա-

[թունգ .

Բայց զուր են տէգք և ի զուր մարտկին կորով իսկ համո-
[բէն :

Ասա երիվար պերճաստորգ կայ գիտապաստ կործանեալ ,
Եւ միւսոյն , ողորմ տեսիլ , լանջք փեռեկեալ արիւնազանգ
Եւ մերկանգամ հոլանին թագուն ընդերքըն կենտակալ .

Որ և ի մահ վիրաւոր բայց դեռ ըզքայլս վարէ սայթաք
Ու ի դողդոջուն հանէ կորով ըզվերեկեակն ի վըտանգաց :

Պարտեալ ցուլ շընչասպառ ի ճապաղիս թաթաւ արեանց
Ի վերջին հուր կատաղութեան զոտս հաստատէ յասպարի-

[գին :

Խոց վիրաւոր, տէգք կողամուխ, կուտին բեկորք շուրջ գե.
[զարգանց.]

Անդ ապիկար ախոյեանք գազանական ի հանգիսին :
Յայն ի պահ ցըլամարտիկք յալ ըզնովաւ ուահեակ խազան
Կարմիր ճօճեն պատմուճանս ըշտապ ի շեշտ կըշուեն սուսեր .
Հոգեգարձ գազանն յետին ախոյեանից մարա փորոտայ .
Մին զայրոյթ . աջող անդ ձեռք ձրգէ զհանդերձըն մահաբեր .
Մոլեգին ըսքողին աչք . և յաւազին տարուբերի :
Անդ ուր ըստուար իւր պարանոց ընդ ողնուլարըն գայ ի կից՝
Արիւնախանձ վարսեալ երկաթ թափ անցանէ շեշտակի .
Նա զկայ առնու . քըստմնին անդամք . բայց աննահանջ դեռ
[փրքալեց՝]

Տակաւ ընկճեալ և անկանի, յաղթող ի ձայն աղաղակի,
Եւ ոչ մի հանէ հեծիւն անխռով ըզուունչ արւեալ վերջին .
Պաճուճաղարդ հասանեն կառք . կուտեն ըզգին անդ ան .
Տեսիլ ախորժական վարագ աչաց բազմամբոխին . [կենդան .
Անդ սանձամերժ ճախրասլաց քառեակ նըժոյգք ընտրա .
Չանարին՝ ձրգեն ըզբեռն արշաւատոր ի դարշապար : [կան
Այս ըզբօսանք դըժընդակ տան ընծայեն մարդկանն հրա .
[ւեր...]

Սովորեալ վաղ քաջ յարիւն զըւարճանայ սիրտն աննըւէր
Ի վրէժ քինու զընկերին դիտեալ ախորժ վըշտաց կարիս :

ԼՈՐՑ ՊԱՅՐՆ

ՎԱՃԱՌԱԿԱՆՆ ՎԵՆԵՑԻԿ

Վերացուցեալ յԱգուիլէ կոյս զառագաստ
Քայր աւետեացն այն քարոզ՝
Որ անտառացն ընկերչակէ արքային ,
Մինչ ի հողմոյն վարեալ անգէտ նաւուզդին ,
Ի ծոց դանդաղ իմն և տըխուր լըճակի՝
Քնայր ի մոլոր զարտուղի
Ընդ կըղզեկաց խառնաշըփոթ ինչ բաւիդ .

Ի դաւ մերձիւ յափ կոյս նաւուն սրբազան՝
 Անդ բընակիւ մի միայն,
 Թիւս ետ ճախրեաց ընդ այերս տեղ հաւաքաց
 Յաւազանէն յուզելոյ:
 Եւ Բարեպաշտն անդ ի նաւուն իւր իեւաց՝
 Իհաէր զկըզիսն յերկարագոյն ի նըւագ.
 Գուշակութեան շողաց ՚ի սիրտ իւր փայլակ.
 Ասաց, եթէ գայցէ օր
 Ձի մըթագին անգանօր ջուրցըն ընդ ձոր,
 Յաղթողական ինքն ըզգարձ
 Ունէր առնել գերեզմաննաւ վերամբարձ:
 Ըզբանն ասաց՝ ուահա ընդ շամբսն երեւեր
 Բիւզանդական եկեղեցւոյ իմն ըստուեր,
 Որ ընդ եթերս ծածանելով ծածկեցաւ,
 Եւ ի գանգաց անգ յարձագանգս ընդ կամար՝
 Հանդրին ափանցն անբարբառ՝
 Սրացաւ գոչիւն անբաւ, կեցցէ սուրբ Մարկոս:
 Անգ հանգիցես, այո՛, սակայն՝ հովանի
 Ոսկեգըմբէթ լուսապայծառ խորանի.
 Ո՛վ երկնաւորդ, անգ հանգիցես, այո՛, գուն.
 Այլ շուրջ՝ անտառ սեանց փայլուն.
 Եւ արքունիդ քս ի կամարս օդասլաց
 Փայլատակեալ շողասցին պերճ և առոյգ
 Կորընթացի խրոխտ նըժոյգք:
 Ի քոյդ անուն, ապագայ երգ մարտավար,
 Քարանձաւաց ի խաւար
 Մերժեսցին հէնք ժանտագործ:
 Եւ ի գաշտաց մարտից ի խազմ արոփելոց՝
 Պաղեստինու գերի վարեալ եկեսցեն
 Արարացի մահիկեղձիւրք բիւր այսրէն՝
 Յուլալ ի մէջ քո լըճին:
 Եւ յաշտարակս անգ ուխտանենդ Հելլենին
 Կոյր ոմն ի վեր ելցէ ծեր՝
 Որ զպատերազմ նըկատէր,
 Ըզգրօշ քոյին պատառատուն ի փառաց՝
 Տընկել ի մէջ Թըշնամեաց:

Գայցեն արքայք ի գաւառաց բացաձիգ՝
 Զազատուհիսգ առնուլ ի կին գեղեցիկ .
 Եւ ընդ մօրուտ յայդ ճահիճ՝
 Ի գարշ մամուռ ելցեն ի վեր հրաշալիք
 Ամբարտակաց՝ որ այլ ուրեք ոչ տեսան .
 Եւ յայդ կըղզեաց մերկութեան
 Եւ ի ծոցոյ դիւթականացդ յայդ խեցեաց
 Ելցեն ակունք ամենապերճ ընտանեաց :
 Եւ ի նախկին անդ ի ծագել լուրջ այդուհ
 Նորածնունդ այս գարուց ,
 Յուրտապտոյս ջրագարձից իւր մեկնեալ ,
 Ի Տըրամոնս՝ կազմեալս նոճեացն ի բընիկ
 Եւ ի կայտառ վերելակէր իւր նաւկնեար՝
 Կանխայարոյց Վէնեօիկ ,
 Մինչ նախանձորդք իւր գեռ ի քուն լինէին .
 Եւ գեղեցիկ յարշալուսոյն անդ գաւառս
 Քաջայանդուգըն թանգար՝
 Զազնըւական իւրոց որդեացն ուղղէր լտսս՝
 Փանձուց ի դիւտ բարերաստ :
 Անդ ոմն այսրէն առնէր գարձ
 Ընդ իւր բերեալ բազմաբեղունն ի Հընդկաց՝
 Եթ զարտասուլաց քաղցրարոյր ,
 Զոր մըշտահոս կընդրկենին սայ ալխուր .
 Կամ ըզհատեալ կինամոնին ըզկեղև
 Դափնեստանեայց Փանդիսի :
 Այլ ոմն առնոյր ըզպաստառ՝
 Որ անդ ի դրախտս հիւսեալ հովտաց Փաշմիրի .
 Կամ ըզպարսիկ օթոցս . և զասր ոսկեփայլ
 ՅԱնկիւրիոյ՝ ի մըրըրկաց խեռ թափեալ
 Ելլեսպոնտեայ , որոյ յաճախ բուռն ալիք
 Ի ցանկութիւն ապառուժ
 Ըզդիակունս և սուգ առնուն խաղալիկ :
 Վըտարանդի ի Կոլքոնտայ անդամանդ ,
 ԸզՌիւալդոյ յիւր ցոլս ըզուքն յաւելոյր ,
 Եւ մաքրափայլն անդ յակինթ
 Իբրու արեան ինչ քարացեալ կարմիր շիթ՝

Պաղպաղելով ըզսեալ վարսիւք ծիծաղէր
 Վենեակուհեացըն տիկնանց...:

Այլ արգ դարուց որոց վըտանգն էր մեծանձն
 Յաջորդեցին հեշտութիւն,
 Մնունգք անաւագ, պերճութիւն,

Պալատք, պարտաք, բարեկենդանք և մեղի քուն:
 Բայց և անգուստ զգէմս յԱրևելս հաստատեալ՝
 Յամալփիդեան ձիթենաջով բըլբակաց
 Յառաւօտուն անգ ի նոյն
 Հաստարազուկ իմն իջանէր մանկութիւն,
 Զէնք յուս և երգ ի բերան,
 Ալիք հանդէպ անսահման,

Եւ անվրկանգ արիութիւն ի սըրտին:
 Մինչ հարց նոցուն միտք խորին
 Օրէնս ի գիր հարկանէին իմաստուն
 Որ զժողովուրդըն զայն ուղղէր ծովայած,
 Շընորհելով նաւաստեաց
 Ի կառավար նաւուց նոցին թըռչանաց
 Զհաւատարիմն ի բեւեռին սէր ըզսլաք,
 Որպէս զի 'սեալ ժամանակ
 Մինչ փոթորիկըն մոլեգնի գիշերի
 Զլողեալ աստեղ ցոլից լըցցէ նա զթերի:

Ա. ԱԼԻԱՐՏԻ.

ԳԵՏՆԱԴԱՄԲԱՆՔ

Ընդ պատուարօք Հոռովմայ նգ ազատըն գաշտիւ
 Կան քարանձաւք և գըմբէթարգ խորք անթիւ.
 Յամս երկհազար հատին զայն ձեռք մահացուաց,
 Վէմս արաստոյս տըւեալ Հոռովմայ տաճարաց.
 Յայն անգընդոց ել կանգնեցաւ Հոռով ողջոյն
 Հրաշակառոյցն իւր կերտուածովք վեհագոյն.
 Անգ և յապայս եկեղեցին քրիստոսեան՝
 Նորածնելոց եգիտ որգւոցն ապաստան,
 Բըռնաւորաց մինչ սուրք և ալք ժանաաժուս

Նոցին անմեղ արեանցն էին հետամուտ .
 Մինչև յաղթող նա ի մուայլէն ել եկաց
 Օրէնս մարդկան տալ՝ խաչ ի դրօշ կայսերաց :

ՅԸԼԻԼ

ԲՐԳՈՒՆՔ ԵԳԻՊՑՈՍԻ

Ո՛վ վէհ արձանք Նիլոսի, շքեղ տաճարք տրրամուծեան,
 Զիւրդ ի ձեր գագաթունս յառեալ պարծին աչք մարդկան:
 Զերոց գոռոզ ճակատուց լերինք ցածնուն առաջի,
 Ստուերքդ անձոռնիք երկայնին ի բացարձակ ի գաշտի .
 Այլ մահացու մարդ տրկար զձեր պատրաստեաց ըզձը-
 [նունդ,

Նոյն ետ կենցաղ ձեզ անվերջ, զանմահութիւն անկապուտ:
 Քանիցս ի լայն ձեր յոտին՝ նըստեալ ի խոր լըռութեան,
 Զայն արձակեմ շուրջ ըզձեօք առ շեղձաշեղջն այն խուժան
 Աղգաց ուազանց խուռներամ և դիւցազանց քաջայաղթ,
 Զորս ուխք սարան վարեցին ի վիհ դարուց յորձնեռանգ .
 Արքայք և պերճ բռնակալք ամիրապետք և սուլդանք
 Տոհմք և սերունդք յոգնաթիւ, քաղաքանին և աւանք .
 Անուանք երբեմն ահագինք՝ ցընորք են այժմ ուրուական .
 Դուք և դարուց կայք դիւանք, և արքայից դերեղման,
 Դուք գիտութեան գանձարանք, կրօնից և հին բարբառոյ,
 Ի հիացումն, յառեղծուած, ի խրատ բարեաց իմասանոյ:

Ընկալ արդ զայս իմ նըւէր, ո՛վ որ ի գաստ քո հըզօր
 Ի վէմ նոցին հաստաբետտ՝ քան ըզպըղինձ կարծրակուռ
 Քանգակեցեր զիմ ըզսաղս: Անցէք շըրջանք անհամար,
 Մընունդք աղգաց և իշխանք, անցէք անցէք ստուերաբար .
 Պարխսպ է իմ մըրցանակ, և յաղթական արկածին,
 Ասեմ և ես անվեհեր. կեցցեն իմ տաղք, մի մեռցին:

ՅԸԼԻԼ

ԳԻՒՂՆ ԱՄԱՅԻ

Սիրո՛ւն Աւ բուռն, դաշտավայրին չքքնաղագեղ գու գիւղակ,
 Ուր ողջութիւն ու առատութիւն մեղմէին զերկըն մըշակին,
 Զոր գարուն զուարթագին կանխաժաման ողջունէր, [նէին.
 Եւ զոր յոչ կամս՝ յելս ամարան թօշնեալ ծաղկունք լըքա-
 Դարատան չքքնաղազարդ, վայր հանգըստեան ուանմե-
 [ղութեան,

Սթեան մանուկ տիոցս, յորում չքգոյր ինչ անհաճոյ.
 Քանիցս հըրձուեալ խայտացի՝ կանաչաղգեսս քո դաւարիս,
 Ուր և դոյզն երանութիւն քաղցր ընծայէր ինձ զամենայն:
 Քանիցս յապուշ հարեալ կացի դիտել ըզքոյ զարմանալիս.
 Ըզտաղաւարս հովանացեալ, և զագարակըս բարեմշակս,
 Զաղբերսըգ մըշտաբուղիս և զաղօրիս յարահողովս,
 Զկեղեցեակըգ վայելուչ գագաթնացեալ ի բըլըակին,
 Զանտառակըգ մորենեաց խիս հովանեօքըն հանգուցիչ:

Քանիցս օրհնեցի ես զառաւօտըն նորալոյս՝
 Յորում գործք և վաստակք տային տեղի զուարթ խաղուց,
 Եւ համօրէն գեղըն բնակք զերծ ի հոգոց աշխատութեանց՝
 Խուռըն գային ընդ հովանեաւ տերեւախիտ ծառատանին.
 Ուր ըզբօսանք խաղուց ըզխաղս յաջորդէին նորանոր,
 Ուր ի վէգ գայր պատանին, և ծերունի զբօսնոյր յակճիռ:
 Քանի մըրցանք ըմբշամարտից և կամ կաքաւք դարձագարձ,
 Քանի վազք և ճեմք և հակաճառք անդանօր:

Եւ թէ նոյնք ինչ և նրմանք կըրկնէին խաղք անգագար՝
 Յըզփացեալ ջոկըն կայաառ գառնայր գիմեր ի նոր ինչ խազ.
 Զեռն ի ձեռն խոմբ առեալ ի պար՝ ոչ այլ ինչ կամս ունե-
 [լով,

Բայց պարտասեալք յոգուց թասել յերկիր թաւալ ընկե-
 Բնաւ անփոյթ էր շինականըն զերեսացն աղտեղելոց, [նու-
 Մինչ աստանօր ակումբն ողջոյն հեգնէր ըզնա ծաղրարձակ.
 Այսպիսիք քո ըզբօսանք, դիւղգ իմ քաղցրիկ. այսքո բեր-
 [կրանք

Զուարթապէս յաջորդեալք՝ հեշտ գործէին և զխիստ վաս-
 [տակ.

Եւ ախորժ նոցին ազգուծն հընչէր ի վայրբոց հովանաւոր .
 Այսպիսի զբօսանքդ . այլ, ո՛հ, էանց գընաց զբօսանք ա-
 [մեն :

Գիւշ քաղցրաժըպիտ, սիրելագոյն մարգաց մայրեաց,
 Անշքքեցան գեղ քո և փառք, սընչացան և քո հրապոյրք :
 Բըռնաւորին մըխեցաւ ձեռն ժանտ ի քո հովանոցս իօհ,
 Եւ աւեր եզծեալ խամրեաց զամենայն քո գալարութիւն,
 Միայնակ մի ոք սիրացեալ կորզեաց գրաւեաց ըզքեզ ող-
 [ջոյն :

Եւ գաշտք քոյին ծիծաղախիտք հազիւ կիտով արդ մըշակին :
 Ոչ ևս ճաճանչք արեգական ի ջինջ ալեացըզ ցոլանան .
 Կընիւն ուեղէդն՝ անգ խոչընդոտն հազիւ ներեն զեռալ խա-
 [զալ :

Ի համօրէն ամայութեանդ՝ հիւր մենակեաց՝ ճայիկ միայն
 Սուր և խորին կըռիչ բարձեալ ըզգուշանայ բընկան իւրուժ .
 Յանմարգաձայն ձեմելիսգ յածի աղատ խորթ սիրամարգ,
 Հոմանըւտդ ձայնիւն աշխատ զքոյ զարձագանգսըդ առնելով :
 Մառատունկքդ հովանաւորք դարձան յաւերս անկերպա-
 [րանս .

Խոտ անպիտան աճեալ ծածկէ զկատարս որմոցըզ ցիւլեոց .
 Եւ որդիք քո ահարեկք թողեալ ըզքեզ՝ զերկիր ծնընդեան,
 Յահէ ձեռաց յափըշտալիչին փախչին գընան յօտարութիւն :
 Փութանակի հասանեն դան չարիք յերկիր անտերունչ,
 Ուր ճոխութիւնք կան դիզադէզ և է թափուր ի մարգկանէ :
 Իշխանք և մեծատունք ծաղկել կարեն փոյթ և խամրել,
 Շունչ մի ևեթ որ ըզնոսին հաստեաց՝ կարէ դարձեալ հաս-
 [տել :

Այլ ըզգործօն ազդ մըշակաց, պարծանք շինից ուադարա-
 [կաց :

Թէ միանգամ քըճքըճեցաւ՝ անհընար միւս անգամ կանգնել :
 Էր հրբեմն և Անգպիտ գեռ անձաշակ աղետից, [ծով
 Մինչ շատացեալ իւրաքանչիւր սակաւ հողոյ ինչ կալուա-
 վայելէր ըզվաստակոցըն չափաւոր քաղցըր արիտուր,
 Հայթհայթեղով ըզկարեւոր պետսըն, այլ ոչ և զաւելորդ,
 Ընկերք ազնիւք էին նըմին աւողջութիւն ուանմեղութիւն,
 Եւ ճոխութիւն պատուական՝ գոյն անգիտակ ընչեզութեան :

Այլ փոխեցան ժամանակք. և շահասէր տենչ վաճառուց
 Գրաւելով նենգաւ զերկիր՝ կապտեաց զկալուածս հողա-
 [գործին.

Մարգագետին՝ յորում երբեմն խիտ առ խիտ սըփռէին
 [հիւղք՝

Այսօր յանարգ փարթամուծեան ուի սնոտի շուք պերճու-
 [ծեան կայ.

Ջեղխուծիւն չըռայլ և խօլ անյագաբար ցանկայ խընդրէ,
 Եւ հարկ ծանր անմըտուծիւն հատուցանէ գոռողուծեան:
 Ժամք և աւուրք բարեբաստիկք՝ փըթիինազարգք առա-
 [տուծեամբ,

Տենչանք խաղաղականք որք սակաւուք շատանային,
 Ըզբօսանք առողջարարք՝ զարգարանք հաշտ տեսլարանին,
 Նըկարէին յամենայն գէմս հըրճուեցուցեալ ըզգալարիս.
 Այս ամենայն օտարացեալ խոյս ետ ափունս խնդրել համ-
 [բոյրս,

Եւ ոչ ևս երևին գիւղական բարք ուերջանկուծիւն:
 Ո՛վ Աւբուռն սիրասնունդ, ծընող պահուց երանուծեան,
 Մառուղիք քո ամայիք ըզբըռնաւորն բողոքեն:

Աստ մինչ ճեմս առեալ ըզգնամ ես առանձինըն մըտախոհ՝
 Ի միջակից քոյին շաւիղս և յագարակըս կորդացեալս,
 Եւ ի միտս անդրէն ամացն անցելոց քան քաղցր յիշատակք,
 Յորըսկանգուն կայր տաղաւարն և շուրջ պատէր գազ վայ-
 [րենի:

Բազմապատիկ զարթուցանեն և բազմակերպ խորհուրդըս
 [յիս,

Եւ շուրջ մածեալ գելուն ըզսիրտ՝ անձկաւ անցեալ բարօ-
 [րուծեան:

Ի յողդողդ ընթացս իմոց կենաց յերկրիս այս բազմահոգ,
 Յանձկուծիւնս իմ յամենայն, զի և ինձ ետ Տէր զիմ բա-
 [ծին,

Այն ունէի յուսապատար կընքել զաւուրց իմոց նըշխարս,
 Տերևազարգ ի հովտնոցըս յայսոսիկ առնուլ գագարօ.
 Յուսայի անդ արծարծել զաղօտ լապտեր նուաղեալ կենաց,
 Եւ տակաւին զառկայծեալ բոցն անշէջ պահել յանգորրու
 Յուսայի, զի անմեկին է յար ի մէնջ հըսարտուծիւն, [անդ.

Յերի ժշակաց հանդէս առնել մատենայած իմ գիտութեանս .

Եւ պար առեալ նոքօք զերեկոյեաննս խարուկաւ՝

Զամենայն պատմել նոցա զոր ինչ տեսի և փորձեցի :

Զինչ նապաստակ հալածեալ յորսորդական շնոց և փողոց՝

Սրտաթունդ զորջըն խընդրէ յորմէ ելեալ էր զառաջինն ,

Այսպէս յեա դժոխքմբեր իմոց վըշտաց՝ ակն ունէի

Վերագառնալ և մեռանել այսրէն ի վայրն իմ ընտանի :

Ո՛վ երջանիկ միայնութիւն , զովող յիտին առուրց կենաց ,

Ապաւէն տառապանաց հոգոց՝ որք ո՛չ ևս իցեն իմ .

Երանի՛ որ 'նդ այսպիսեօք սաղարթաճեմ զով հովանեօք՝

Ըզմանկութիւն բազմավաստակ՝ խաղաղաւէտ պսակէ ամօք .

Որ լըքանէ զտխարհս ուր պէսպէս փորձեն բուռն փոր-

[ձութիւնք .

Եւ զի չկարէ գիմամարտել՝ ընտրէ խուսել և ճողպարել :

Որում՝ չիք ոք թըշուառ ծընեալ ի հեծութիւն և ի վաս-

[տակ ,

Եւ գեգերեալ ի քրայս բովուց , կամ գիմագրաւ յանսաստ

[ալիս .

Ոչ դարապետ դժպըհի , որ պերճաղգեաց կացեալ առ

[գրունտ՝

Զաղերսարկուն սովալըլուկ մերժեալ ի բաց հալածեսցէ .

Այլ ի հուսկ հասանել ժամու նորին՝ գան և հրեշտակք

Պարփակեալ մըխիթարել ըզլաւութեանցըն պաշտօնեայ .

Անտագնապ ալևորեալ ի շիրիմ անդըր խոնարհի ,

Մինչդեռ հարթէ զուղին կամացըն զուգութիւն ընդ տէ-

[րունւոյն .

Եւ ամենայն զոր նրկատէրըն բովանդակ պայծառացեալ՝

Բանին նրմա երկինք մինչչև աղցաւորիս անհետ եղեալ :

Քանի՛ ախորժ յաճախ ի կարճատել երեկորին

Լըսելի լինէր շըշունջ յընթերակայ գեղըն բըլուր .

Մինչ անտանօր սաղապաճեմ և յանըգոյշ անցեալ գնայի .

Մեղմագոյն ի վերուստ ձայնք ներդաշնակեալ քաղցր հըն-

[չէին ,

Անդրադարձ ձայն հովուին առ երգըս հովուհւհոյն կաթ-

[նարերի ,

Պոռոջիւն ըզգաստ հօտից յանձուկ խընգիր դառանց որթ-

[ուց :

Աղաղակոտ զարմի սագուց լոյղ և մըխիրճ ի նըքողակ,
 Երամազ զուարթ՝ ի նմին պահու ի գըպրոցէն եզեալ արձակ.
 Հաջիւն շանց պահապանաց՝ ընդգէմ հողմոցըն շըընջմանց,
 Եւ ծիծաղ բարձրաձայն առհաւատչեայ ուրախ ոգւոց:
 Այս ամենայն հեղախառնեալ տակաւ գիմէր գայր ընդ յար-

[կաւ,

Լըցեալ ըզպահս յորում սոխակ ի գեղգեղմանցն առնոյր
 [գագար:

Այլ արգ ոչ ևըս լըսի ձայն ցընծութեան ժողովբոգեան.
 Ոչ մի մըրմունջ ուրախարար խայտայ հողմոց ի թևս թեթևս.
 Ոչ գարշապարք ժիրք յոանահեալս նըշմարին մարգագետւ-
 [նոյն.

Սրացան, աւանդ, այս ամենայն ծաղկերանդ շուք կենդանու-
 [թեան.

Այո՛, անցեալ է ամենայն, բայց մին միայն այրիացեալ,
 Որ վայրահակ անդ առաջի կայ ծանծաղուտ աղբերակին,
 Սովալըլուկ չըւառ ատկին անցեալ զաւուրբք՝ յածեալ
 [խընդրէ

Ըզըրկոտեմն՝ յողեսպահիկ, ըզծործորոյն զարգ մանուածոյ,
 Եւ առ խարոյկ ձըմերայնոյ քաղեալ կըրկուտ ինչ տատասկի,
 Դիմէ ի հիւղըն ցայգական և լայ զգիշերըն ցառաւօտ,
 Նա միայն մնացեալ նըշխար յանշըքացեալ գասսուց անտի,
 Պատմաբան տըխրազգեցիկ վարանելոյ դաշտագետնին:

ԿՈԼՋՄԻԹ



ՀՐԴԵՀ

Անդ ի բարձուէ աշտարակին
 Լըսեմք զվանգիւնըս զանգակին:
 Դա փոթորկի է նըշանակ.
 Շիկնին երկինք արեան գունակ.
 Ո՛չ, չէ՛ այդ շուք տըւընջենի.
 Ո՛հ, ի փողոցս աղմուկք քանի:
 Մուխ ծառացեալ յայերս յահուր
 Ընդ պողոտայս բոց ընդհանուր.

Զայրանալով հողմոյ փրչմամբ
 Իբր ի հնոցէ բոց ապրստամբ,
 Օդք շառագնին, հեծանք ճւղնչեն,
 Փըրթին մարդակք, լուսանցք կուրնչեն,
 Ճըչէ մանկտին, տազնապին մարք,
 Ընդ փլատակօք մուրնչեն պաճարք.
 Համայն շտապի, խուսէ, փախչի,
 Այդըն պայծառ ի ցայդ թաքչի:
 Ձեռաց ի ձեռս շըզթայաշար
 Յածի դոյլիկն անդ անդագար.
 Կամարածէ ի վեր ըշտապ
 Սըրսկեն ջըրհանք զալեաց տարափ:
 Ճեպի մըրրիկն այն ամեհի,
 Համաճարակ զհետ հըրդեհի,
 Որոտընդոտ հարեալ լափլէզ,
 Ըզսր հեծանս, ըզմիրգս և դէզ.
 Կամեւով իմըն յարհաւիրս՝
 Յափըշտակեալ ընդ իւր զերկիրս՝
 Տանել հանել յերկնից սահման,
 Աճէ ի գնալ՝ հըսկայանման:
 Անձեւընհաս առ դիցըն սաստ
 Յուսարեկեալ մորդըս նըւաստ,
 Տեսանէ զերկս իւր զեղծ խանգար,
 Եւ զարմացեալ կայ վայրապար:
 Այրեացաւեր եղև տեպին,
 Մոլի մըրրկաց կարծր անկողին.
 Լուսամըտից յունայն փորոգ՝
 Արդ արհաւիրք դարանին լոկ,
 Եւ ամպք երկնից ի բարձանց
 Կարկառին անդըր թափանց:
 Մարդ՝ ի վիրապն ամենակուլ
 Ընչից իւրոց՝ գառնայ պըշնուլ.
 Յուպ ի ձեռին դիմէ շտապաւ,
 Միթէ ծախեա՞ց հըրդեհն ըզընաւ: ...
 Ըսփոփանք կաթոգին,
 Կան մընան դեռ նըմին.

Համարէ զգլուխըս սիրելեաց .
Ողջ են գլուխք, ոչ ոք պակասեաց :

ԵԻԼԼԵՐ

ԿԱՑԱՐԱՅ ԳԵՂԱԶԱՐԴ ԸՆՈՒՐ ԳԱՐՆԱՅՆՈՑ

Տուընջեան հրանուտ աստղն ըզլերամբք խոնարհի ,
Եւ քաղցրաբուն Զեփիււս՝ հովտացն ի ծոցի
Ըսթափ յածեալ ընդ դաշտորայս բոցակէզ
Ըզծաղկածին ցօզսըն տեղայ ցիր ընդ սէզ :
Կընձռին երեսք ալեացն ի հողմ զովադին ,
Եւ եղեգանց ծայրք ի շընչոյն մէա կըքին :
Սըփռին ըստուերք . ո՛վ դուք պուրակք հովանուտք ,
Կալ ընդ դաշար ձերդ հովանեաւ ինձ թոյլ տուք .
Թող հընչեսցեն ևս այս յեաին մի նըւաք
Քաղցր երգք մայրեաց և սահանաց կարկաչանք :
Ի կատարաց լերանց՝ մերձեալ հուսկ մըաին
Դեռ ծիծաղի տիւ ընդ ծաղկունս իւրածին .
Կեան ի դընացս ըսկայընթաց իւր ալեաց՝
Պարզէ աակաւ ի փըրփրագէզ ջուրս թափանց
Ըզթանձր և մոյգ կանաչ մայրեաց դետեղեր .
Նըչոյլ նըւաղ զոստոց տերևսն հերձու գեռ :
Ըզբարձրաբերձ ասնեաց քարամբք կապուտակ
Յայտեն ի բաց պայծառ երփնից փայլքն յըստակ .
Եւ հրակայծակ շանթք ապակւոյն ընդ անառ .
Շլացեալ աչաց թըւի հըրդեհ բոցավառ :
Ահա գարնան խօսի երգիչն ի մայրւոյն ,
Եւ քաղցր երեկ՝ դողցես ածէ խանգս երգոյն .
Հեշտ են նըւագքն և խանդակաթ դայլայլիկք .
Եւ մինչ ախորժ ի լուր նորին կան մայրիք ,
Ի թուփ փըշուտ և ծեր կընձնեացն առ արմին՝
Մունջն Արաքնէ պարզէ ըզթելս ոստայնին :
Յեզերս ալեաց անկեալ բըզիզն հողմավար ,
Տըզզայ դընայ ըզձանապարհ իւր թափառ ,

Եւ զտերևովք յածեալ ըղձիւք քաղցր հեշտի,
 Ի հուռի ճաճանչս Արփւոյն փայլեալ՝ մեռանի :
 Լորամարդին՝ նըժգեհ յափունքս իբրև զիս՝
 Լընու ըզգաշաս յիւր դարնային դայլայլիկս :
 Ըզնապաստակ ըստ որջն ելեալ անըզոյշ՝
 Վիբօք մահու խոցէ որսորդն՝ եգեալ ուշ :
 Կաքաւն յըստուերս երեկորին անվեհեր
 Յարձագանգաց խընդրէ զմոլոր իւր ընկեր :
 Ո՛հ, զո՛յր ըզսիրտ ոչ վառեսցեն կաթողին
 Նըսեմաստուեր ծագաց երկնից փայլք մըթին,
 Եւ այս շըփոթ խառնուրդ մուսլից ընդ արփւոյն,
 Այս տըւընջեան տարտամ՝ պայքար ընդ ցայգոյն,
 Նըւազ այս բոցք ցիր ըզլերամբք շըրջակայ,
 Այս մուռք պայծառ՝ ուր արեգին փաղփեալ կայ
 Մաճն ոսկեհեր և պատմուճան շողշողուն,
 Երկինք տակաւ ներկեալ՝ ի շուրթ մըթուլթիւն,
 Եւ ընդ կապուտ քօղով շիջեալ օիւ լուսոյն :

ՄԻՇՈՑ

ՄՆՈՒՆԴՔ ԳԵՏՈՑ

Մով՝ ուստի յինքն արև ձըգէ զգոլորշին,
 Յալեաց անտի՝ որ ի յիւրմէն կորընչին,
 Տեսանէ այլ իմըն զիւրև գեր ի վեր
 Համատարած ամբարձեալ ծով ընդ եթեր :
 Թեթև ամպոց մըթերք արգոյք ցան և ցիր,
 Զորըս սըփուեն ի բաց հողմունք ժիրաժիր,
 Ի շայեկան լուծեալք երբեմն ի յանձրև,
 Ի յանգաստանըս մեր ցօղեն ի ստորև :
 Եւ ի սպիտակ մերթ ըզբըլուրս ի յերանգ
 Մածիկեն ի ձեան տեղատարափս ի ստորանկ :
 Ի բարձրաբերձ քարաժայռիդ ի կտտար,
 Որ ամբառնան սառամանեօք պըսակեալ,

Ի շտեմարանս՝ ուր մըթերին անդ գանձք մեր՝
 Ովկիական ածեալ ալեաց շիթք ի վեր,
 Համախրմբեն ըզգօրութիւնս անդ իւրեանց,
 Եւ ընդմըտեալ ի խորս յուշիկ բանան անց.
 Թափառականք ընդ երակունըս նոցին
 Մինչ ի ստորոտս ապա ի վայր սողոսկին.
 Եւ գնան վըտակք փոքրիկք յերկչոտ նախ ի ճեմ,
 Գետս ըզնոսս սրընթացս ապա տեսանեմ:
 Ի ստորոտից այսի լերանցըդ բարձանց,
 Յոր Աննիբալ լիբէացին վաղ էանց,
 Փերրարացիդ պըղերդ, ըզքեզ աւասիկ
 Լընուլ գանձիւք եւրիգանեանք գան ալիք.
 Եւ Հաոդանոս բուռն և սաստիկ սըրընթաց,
 Յերկայնաձիգ ծընեալ ի նոյն կապանաց,
 Գետահեաթի այսր իսկ առ մեզ եգեալ դէմ.
 Եւ հակառակ նըմին եղայրն իւր ի ճեմ,
 Ի նոյն ծոցոյ առեալ ծընունդ համամայր,
 Դիմէ գընայ հետազօտէ այլուր վայր:
 Թափառականք զրաւեալ նոցին արշաւանք,
 Խընդրեն զալիս նոցին նախնիքն օթեանք,
 Նոքա զնոտա հատուցանեն անդր ի ծով.
 Եւ արևու զնոտա անդրէն ծըծելով,
 Ընդ գաշտորայս և ըզլերամբք վերըստին
 Ածէ ի սպաս մեր հիւսիսի ըզնոսին:

Չայս տիեզերք ունին անշարժ կարգ յաւէրժ.

Ի բարեբաստ պետութենէն տարամերժ
 Հերքեալ հերձուած, տարերք ի նպաստ մեր հանուրք
 Մովք և լերինք միաբանին և բըլօւրք,
 Ասողըն պայծառ տուընջենային և հողմունք
 Իշխանք օգօցըս բըռնուողք յանդըգունք:
 Իցիւ նոցին և ի մարդիկ հանգունակ
 Թագաւորէր ձայնակցութիւն ներգաշնակ:
 Գոնեա ի միտ զայն որով եմքս արդ առցուրք,
 Եւ իւ բընաւք կեան և շարժին համագոյք:

ԼՈՒԴ. ՌԱՍԻՆ

ՈՎԿԷԱՆ

Մասյլ ովկէան, զի՛ քաղցր ի քո ինձ յափուհնս
 Սարաւանդեալ գիտել ըզկուր ձրկնորսին,
 Եւ զհեռաւոր ծրծել հոգմոյդ հովութիւնս՝
 Ընդ հովանեաւ ոստոց աեանեաց ի բացին:
 Կամ է ինձ յայսմ երեկոյի յեզերդ յայց՝
 Յախորժականս յածիլ մրտացըս ցընորս.
 Ըզքո սիրեմ ես և անգամ զաւերած.

Շառաչ ծովուց խաղաղէ զկիրս իմ պըզաորոս:

Մասյլ ովկէան. սիրեմ զաշիւնդ վայրենի.

Առ դառն ալեօքդ՝ են ինձ աւուրք քաղցուենի:

Մասյլ ովկէան, ծիծաղախիտ ի ճակատ

Մերթ պարզ փըթթիս յարուսեկին ի ճաճանչ,

Եւ ազուաբար թոթովէ ձայն քո հաստատ

Նըւիրական բանս ի յերկրէ անճանաչ.

Մերթ կուտակեալ ուռնուս յառնես և վազես

Կանաչաբաշ հանգոյն նժուգից ի յարշաւ,

Եւ ընկրրկիս պատառելով զծովեզերս,

Բարձեալ քըրքիջ գըժոխալուր տեսակաւ.

Մասյլ ովկէան, ասպընջական սէգ գըժնի,

Առ դառն ալեօքդ՝ են ինձ աւուրք քաղցուենի.

Մասյլ ովկէան. և ի ցայտել ջուրցդ ի գէզ.

Եւ ի նընջել քում՝ իրր հընձեալ անգաստան.

Քով մեծութեամբ ընդարձակին միտք ի մեզ.

Խօսի յոգիս մեր անձուկս ինքն անսահմանն.

Ո՞ր անաստուած կամ ո՞ր մոլի բնաւ առ քե

Իշխէ՛ Հաստէն տիեզերաց կալ յուրաստ.

Յանչափութեան յայտնի Բարձրեալն արգարև.

Զերկնից տեսի՛ հայելուղդ բաց առագաստ.

Մասյլ ովկէան որով հաւատքս ըսկսանի,

Առ դառն ալեօքդ՝ են ինձ աւուրք քաղցուենի:

ԾՈՎ

Հըզօր է ծով, Ժյլ հզօրագոյն որ վարէ զխեռնն կոհակ-
Ձեռնն քո, Տէր, կառոյց զափուռնս, պեղեաց զանգուռնքն ան
[յառապ.

Շունչդ որ խաղաց ի սկըզբանէ յերես նորին՝ խաղայ ցարգ,
Ի նոյն թափոյ նհանջեալ ալեաց՝ գլորին յառնեն անկանին:
Ի գաւառացն անձրեու ամպ ելեալ գընայ իբրու նախ՝
Արբուցանել զերեսս երկրի, ածել հովտաց ըզքալար.
Աշխարհք ազանց սպասեալ մընան հողմնավար լայն հովա-
[նոյն.

Եւ ի տարափ տեղոյն՝ լըսեն խընդիւ զհընձոցն աւետիս:
Ես կարկառեալ հայիմ՝ ընդ այդ համատարած կապուտակ,
Ուր տարմարար ցընծան կայտունն յարե կատարք բիւր ա-
[լեաց,

Իբր ամբօխի մեծի պարզեալք ի վեր բազուկք ծափ ի ծափ.
Դիտեմ ըզնաւս կըզզ՝ ի կըզզոյ, հըրուանդանէ հըրուան-
[գան,

Մերթ տարագէմք յաշխարհ հեռի, յերկրէ հընոյ մերթ ի
[գարձ.

Հողմ՝ քո համբոյր՝ վարէ զնոսին, մինչ բարձեալ գան ազաղ-
[ձուռք՝

Յաղխամազխէ ծագաց երկրի, և կենաց քաղցըր գանձուռք,
Մինչև նաւազն ի նաւակայս բերկրապատար արկեալ ձայն՝
Մագըլցեւո՞վ ընդ կայմ ծրարեալ իջուցանէ զառագաստ:
Այլ ո՞ հանգուրժիցէ ժուժկալել քոց մըրըրկաց.

Ո՞ բաւիցէ նգդէմ կալ շընչոյն ծովայարոյց ծովասաստ:
Արգարուժիւն քո, Տէր, հասեալ հարու զերկիրս ի գա-
[լուկ,

Երբ ի տորմիզ կուռ խազմամոռզ՝ ընդ խրոխտ միանունս
[պերճասահ,

Որ քաղաքաց տանին հըրդեհ ուաւեր անքոյթ պետու-
[թեանց,

Յանկարծոյն թափ շըրջապըտոյտն անկանիցի փոթորիկ.
Առագաստից թուուցեալ ձըրձին հանգոյն վըշոյն ծըւենից.

Կայմք խորտակեալ քակտին, ընդ կողս ի վայր զեւան ճող-
[փան վէժք.

Ահեղ նոցին մենքենայք հոսին յանգունդս անյատակ.

Եւ ջոկք մարակացըն վառելոց ի զարգ զինու ճակատուց՝
Յորձանասոյդ կոծեալք կամ դի ցուրտ ի պարեխս ընկե-
[ցիկք.

Յայնժամ ազինք ահարեկք գուլ տան առ մի վայր ի կը-
[առույ:

Ալիքդ անգուլք ծախեալ մաշեն զափուհս երկրի հինաւուրց-
Դաշտք արգաւանդք զեղուն ի մօրս, առպալ գընին սարա-
[ւանդք.

Ամբովք ծովուն վարեն զաւազ ի շինամէջս ողողակ.

Մինչ ի բացի անդր ի կանաչ միջածովուն ի սենեակ,

Ուր լայնասփիւս ծաւալին ջուրք և խորագոյնս սուղի լար.

Ուր ի քընին գործոց քոց, Տէր, չժամանէ ակն հետազօտ,

Անգ գու մարդես զորդնըն բըստոյ կանգնել զխարակս իւր
[բստուարս.

Անդ ջուրք զօգեալ կառուցանէ դարուց ի դար զիւր շի-
[նուած.

Մինչև բարձցէ 'նգ մըկանունս ծայր՝ կալ ամբարտակ ձիգ ա-
[լեաց.

Ուի բեւեացըն հարաւոյ փըշքել ցեղերս Յարոնաց:

Դու աաս հրաման կրակաց ի խորս ովկիանու շիջանուտ՝

Պարզել ի վեր նորակաւոյց լերինս, կանգնել գագաթունս,
Ի տեղի ապաստանի մըրըրկակոծ երամուց:

Հաւք և ծրփանք ալեաց ածեն ժայռից ըզխոտ և ըզծառ.

Խաղան աղբերք կարկաջա հոս, շքթեն սըղոխք ըզլըձակս՝

Որք ի խռուչս անգ խաղազին շուրջ ի բուրս ծաղկածիւրք:

Դու հայեցեալ յարարս քոյին և ասացեր՝ Բարի է:

Քեզ հովիտք լուսք փառըս տան պըձնեալք ի գեղ ամբարան.

Եւ քեզ մայրիք՝ յովկիական հողմոյն շարժլեալք ի շառաջ՝

Ընդ գանչելոց ափանցն յաւերժ վերաձայնեն երգս յաւաջ:

ԾՈՑ ՊԱՅԵԱՅ

Տէս իբր հեզիկ այգ ալեակ
 Գայ մեռանի յափն ըսփիւռ .
 Տէս ըզյողդողդ մեղմ զեփիւռ ,
 Ոյր շունչք կընճուեն անըզայք
 Զալիս՝ յոր գնայ մըտագիւր :
 Օն ի Թեթև նըստիմք կուր ,
 Զոր վարեն ձեռք իւր հեշտեաւ ,
 Եւ շուրջ ծոցիս մննաւոր
 Քերեմք առ ափն ըզգուշեաւ :
 Ափուկք ի մէնջ ասն խուսափ .
 Եւ մինչ երկչոտ գու ձեռամբ
 Ըզգիւրագարձ ունիս զեակ ,
 Կըքեալ ի Թին ես գոչուն
 Ընդ ծոց ալեաց երերուն՝
 Գըծեմ ահօս ինչ երագ :
 Ո՛վ, Տէր, զի՛շունչ զովագին :
 Յայգոյ բամբռան տըժգոյն ըյս
 Փոխանակեաց արդ զարփին՝
 Ի գիրկ Թեաեայ խորասոյզ :
 Ըստ ծոց ծաղկանց կիսափակ
 Մաւալք ծըխոյն անուշակ
 Ընդ օգս տատէն զեզանին .
 Եւ երեկոյն հողմ քընքոյշ
 Ի հոա բուրմանց քաղցրանոյշ
 Խընկէ զալիս ծովակին :
 Հընչէ ի ծով երգոց ձայն .
 Լըսին գեզգեզք ընդ յամպք .
 Եւ զքաղցր հընչմանց միաձայն
 Զերգս երկայնէ արձապանդ :
 Զըկնորս ի խէթ յաստեզց սաստ՝
 Ամփոփ ծալեալ զառագաստ ,
 Ըզյարկն երգովք ողջունէ .
 Խօշ պատանեաց մինչ երամ

Գողմամբ ձայնից խընդուծեան՝
 Զողջամբ ըզդարձ իւր ասնէ :
 Ահա յըստուեր թանձր համակ
 Մթազնին երեսք լայն ծովուն .
 Թաքչին եզերք . լըռեն ձայնք ,
 Եւ զօգ պատէ լըռութիւն :
 Յայս ժամ ոգին թախծութեան
 Բազմի մտայոյզ ինքն յինքեան
 Յանձայն տեղիս ծովափնեայս ,
 Եւ մըտախոհ յաւեր վայր՝
 Դիտէ 'նդ բըլըոց զառ ի վայր
 Զանչէն պալատս և տաճարս :

Ո՛վ հին և սուրբ ազատութեան հայրենիք .
 Երկիր , ծընող վեհից գործոց համօրէն ,
 Յոր արգ աիրեն գոռոզ բըռունք գըժպըհիք .
 Թագ քո անկաւ . և գիւցազունքդ ոչ ևս են :
 Այլ ի ծոցիդ լայնեալ հոգին մեծափառ ,
 Իբր յարձանաց շնչէ նոցուն ըզհանձար .
 Զերգ ի կործան ուրեք տաճար գեռ ևս մարգ
 Զ' ի նմա փառաց աստուածութեանն առնու զազգ :
 Սակայն թողցուք ըզձեր աճիւնըս վըսեմս ,
 Նախնիք Հռովմայ , Կատոնք , ըստուերք Բրուտոսեանց .
 Ե՛կ երթիցուք խընդրել յորմոցդ աւերած
 Քաղցր յիշատակս և երջանիկ ևս ըստուերս :

Ովբատ ի հով այդ վայրի .
 Յառանձնոցին՝ ում զարդ տայր
 Զըւարձութիւն և հանձար ,
 Խուսէր ի շքոյն արքունի .
 Անդ գայր Պրոպերտ յայց կինթեայ ,
 Եւ յանգիման 'Իելիայ՝

Տիրուլ մընչէր գողարիկ մըրմոննջ սիրալի :
 Անդ թասսոյի գագար երգոցն ի բացեայն ,
 Մինչ նա բազդին և հանձարոյն նըչաւակ ,
 Յածեալ յերկիր , թափառ ընդ ծով և անյարկ ,
 Վեհ արկածիցն եգիտ սատար գըթութեան :
 Մօտ ի նոյն վայրս յետոյ անկաւ շնչասպառ .

Փառք կոչէին ըզնա . հասեալ՝ պակասի .
 Կոգցես պըսակն որ մնայ նմին՝ խուսէ յար .
 Եւ սարգն անժամ կայ լոկ շիրմին հովանի :
 Բըլճւր Պայեայ , գեղածիծաղ վայր սիրուն ,
 Հովիտ քաղցրիկ , գագար հեշտից պատարուն
 Բնաւից որ մեծ կացին յերկրի ,
 Ոչ ևս հրնչես ըզգանգ փառաց և սիրոյն :
 Ոչ գոյ ձայնիս պատասխանի ,
 Բայց սոսկ ալեաց ձայնն ողբալի ,
 Կամ արձագանգք որ յաւերակս աստ զարթնուն :
 Այսպէս փոխեալ անցանէն ընաւք .
 Այսպէս և մէք իսկ անցանեմք .
 Եւ ոչ , աւանդ , մընան նըշմարք
 Քան ըզկուրիս՝ յոր հատանեմք
 Ըզծով , ուր չիք լինին համայնք :

ԼԱՄԱՐԿԻՆ

ՄԱՆԻՇԱԿ

Ո՛վ դըստրիկ գու գարնան , առաքինւոյ պարկեշտ սըրտի
 Պատկեր աղու գորովաշարժ ,
 Դաւարեացս ի ծոցոյ լըցուցանես գու զծառատունկս .
 Ի քաղցրաբոյր հոտ քո անոյշ , [չիւքս ,
 Ո՛հ , զքեզ քանի՛ սիրեմ խընդրել ընդ խիտ առ խիտ կանաւ .
 Ուր յաչացս իմ թաքչել թըւիս ուր լուսոյ :
 Յոտըս կաշնոյ սաղարթագեղ զոր ուռգեն ալիք սուրբ՝
 Օգ անուշակ ըզհանգըստեանդ ինձ աւետէ ըզտեղի :
 Այլի ձեռացս աստի գըթած մի տագնապիր ինչ գու ընաւ ,
 Հիանամ ընդ գեղ քոյին , ոչ քաղեցից ես ըզքեզ .
 Չէ ինձ հաճոյ երջանկութիւն
 Վնասուք՝ թէպէտ միոյ ծաղկան :
 Ո՛հ , զի՛ ոչ ախորժ քոյոյ բուրմանդ հանգէտ , ոյր հոտ ազնիւ
 Սըփռի ընդ օդս՝ առանց ըզքո ըսքանչելիսդ հոլանել ,
 Զի՛ զաղքատին չըմարթեմ ի ջընջելս անգ զարտասուն՝

Ըստդեղել ի նմանէ զբարերարի կերպարանս :
 Երկընչոտ որպէս ըզբեզ, յառանձնութեան ես անձկամ՝
 Եւ անծանօթ անցուցանել զաւուրս իմ :
 Ընկեր անմեկին փառաց մեր գոն պըզտոր յուզմունք :
 Արժիցեն զայն խուն ինչ շողովք :
 Սակաւուք շատանամ. անգորրութեան ըզբօսանք
 Բանան զիմ սիրտս յուրախութիւն...
 Քո պէս, այո՛, միայնութեան ի խընդիր,
 Եւ ի հովիտքս այս ապաւեր կաթոգին՝
 Գամ աստ խոկալ, և ըզնուագս հառաչել
 Որ չէ ծընունդ. քերդողական արուեստի :

S. S'ORBIŁ

ՁԻ

Նոյն նրման և ընտրութիւն է ձիականըն պաճարի :
 Զոր գամ մի զատուցանես ի յոյս ազգին գու պայազատս ,
 Անգըստին ի տղայ տիոց հոգ մեծաջան խնամոյ տարջիբ :
 Նախուստ իսկ մըտորուկ քաջազն երիվարի ելեալ ի դաշտ
 Ուղղաբերձ սօս ընթանայ, զաքսըն թեթևս առնու գընէ .
 Զեռներէց ի ճանապարհ և սպառնալից ուղից ի փորձ
 Դիմագրաւ նահատակի և յանծանօթ գիպեալ կամոնը .
 Ի խըրտուիլ սուն սօսաւիւն՝ ոչ սոսկալի ահիւ շըբտնու :
 Բարձրավիզ և գըլուխ նուրբ, սուղ որովայն, գաւակ տուցդ,
 Եւ արի կուրծք քաջալանջ ի թանձրամիս թամբ յօրանայ :
 Թոյր ընտիր՝ շէկ և պիսակ, իսկ յոռեգոյն՝ գորշ և աշխէտ :
 Իսկ և իսկ եթէ երբեք շաչիւն զինուց հընչէ հեռուստ ,
 Ոչ գիտէ հանդարտել, ահանջք կանգուն, անգամք ի գող ,
 Եւ ընդ քիթս ըզմըթերեալն փռընչելով մըրըրկէ բոց :
 Բաջըն թաւ և զաջ ուսոմն իւր ազբախումբ անկեալ թա
 [զան ,
 Եւ կըրկին ընդ թիկնամէջս ոզունք ելեալ սըփռին ի վայր ,
 Եւ թաթուլ սալաւըմբակ գոփեալ թընդայ գափր հատանէ :
 Այսպիսի էր յամիկէան Պուլիգեկեայ նուաճեալն ի սանձ

Այլլարոս և զորս հելլենքն յիշատակեն երգարանիչք.
 Եւ ամուք երիվարացն Արեայ և կառք մեծն Աբելլի.
 Ի սոյն տիպ և ինքն ըզբաշն ի ձիակերպ արկ ուլանէն
 Զըրուանըն սուր ի փախուսա ի հասանել գալ ամուսնին,
 Եւ ի խոխոզ խըրխընջիւն հլից ըզբարձրըն Պելինն:
 ՎԻՐԳԻԼԻՈՍ • Մշտեմք:

ՕՁ ԵՒ ՎԻՇԱԳ

Ուսիր վառել ի փարախս և եզևին ըզհոսեան,
 Եւ զվշապսըն ծանուսն ի քաղբանեան վանել ճենճեր:
 Բազում այն է զի նգ անշարժ մըսրովք գըժպիհ իժ հար.
 [կանոզ
 Դարտնեալ և զարհուրեալ յերկնից լուսոյն գնայ ի կո.
 [րուսա,
 Կամ թէ սովոր մըտանել օձ ընգ յարկու և ըստուերաւ,
 Անդէոյ ժանտ ժըպիրհ, և ի թափել թոյնս ի հօտին,
 [ի բիր,
 Ընգ հողով բուսէ, բուսն հար, հովիւ, ի վիրգ, հար բուսն
 Ըզերոխտողն ըսպառնալից և զփըքացեալ շըչոզ ուլամբն
 Հալածեա, զգլուխն ահարեկ ի խորս ահա թաքոյց ի խոյս,
 Մինչ ազիք սղին և գումարաակ ոլորտապատ վէտ վէտ տը.
 [տան
 Լուծանին, և զյամր ոլորս ընգ քարչ ածէ յեաին պարոյր:
 Է և այն որ ի մայրիս Աալարրացւոցըն չար վիշապ
 Ուզգարերձ կանգուն լանջքն հոլովելով թեփոտ թիկունս
 Եւ երկայն փոր խայտաբղէտ ի մեծամեծ նիշ նըկարէն.
 Որ յորժամ գետք յաղբերաց բըխեալ յորդեն, և մինչ եր.
 Ի տամուկ թանայ գարուն և հարաւովք խոնաւական, [կիր
 Բնակէ ի լիճս և նըստեալ ամպարըշտին անգ առ եզեր՝
 Զըկամբք և շաղակրատ գորտովք ընու զգըժոխ սրկորն.
 Իսկ իբրև խաղըն կիզեալ և ի սօթոյ սկալի գետինն,
 Ի ցամաք վազեալ կայառէ և աչս ածեալ շուրջ բոցավառս՝
 Յանգըս մոլի պապով գըժնեայ և ի տապոյն գազանացեալ:
 Քաւ լիցի նիրհել յայնժամ ինձ ընգ երկնաւ քսւն քաղ.
 [ցրանինջ,

Քաւ յորսայս յողն անկանել ըզխոտաւէտ թիկամք մայ-
 [րեաց :
 Մինչ նա զխորին ընկեցեալ՝ նոր մանկութեամբ պայծառա-
 [փայլ
 Ման առնու, կամ ըզկորիւննն ի տան թողեալ և կամ ըզ-
 [ձուտ,
 Բարձրավիզ՝ և եռասայր ըեզուք ի շուրթն յարև շողայ :
 ՎԻՐԳԻԼԻՈՍ • Մշակութի :

ԳՕԱ 02

Պօա դանգաղ ի ձմերան, յամարայնի եռանգուն.
 Ժամանակին նըշանակ, և Ասկըպեայ սիրասուն,
 Ամերիկեան անտառաց սէգ հինաւուրց բըռնակալ,
 Գարշ և զազիր յԵւրոպէ, յԱփրիկեցւոյն պաշտեցեալ :
 Հիւր է հընգկին և պահպան բազմատեսակս այս վիրագ,
 Ճապուկ ի սող և ի լող, ի վազս ի թռիչքս երագ :
 Մերթ գարանի յոճ անդոյ, ուր մակաղին մերձ գառինք
 Ի լուր երգոց հովուեկին հընչեալ յախորժն ի սըրինգ :
 Յանկարծ վազեալ ի վերայ՝ պատի զորսուին յամենուստ,
 Հեղձամըղձուկ ջախջախէ, անգէն լափէ անփախուստ -
 Եւ մերթ յանդուզն յարձակեալ ի կենդանիս ամհհի,
 Զեզն և ըզկով կըլանէ զուր խուճապեալս առահի :
 Հաւք ՚ի նմանէ սարսափին, սարսեն զեռուկք, առիւծուկք.
 Է զի նորա կուր լինին վագերք անգամ՝ երագունք :

ՏԸԼԻԼ

ԳԵՏԵԱՓՈՐ ԴԱՄԱՐԱՆԱՅ ՍՐԱՀ Ի ՍԻԿԻԼԻԱ

Այլ հրաշագոյն ինչ և ազգու եկն ինձ թերևս անդ ի յայտ.
 Լայնատարր ընդ երկրաւ վայր աղջամըղին, ուր կանգնին
 Կան իբր անգրիք՝ իրանք ի խորշս խորշս՝ սինք ի հագւոյ,
 Դեռ ևս ի նոյն ձորձ ընդ որով երբեմն ըզսիւգ շընչէին -
 Ի մրկանունն անշընչացեալս և ի մեռեալնոցին մաշկ լցուանց
 Այնքան հեղեալքիրան արուեստին, այնպէս ըզընաւ ի նո.

Արատքսեալ հիւթ և զաւիշ, զի զկերպարան նախատիպ
Պահեն մարմնք նոցա և գէմք դարուց ի գարս անաբխեղծ :
Հայի մահ անգր, և կսոկածէ արկեալ ի վրէպ զիւր հա-
[րուած :

Աքի ամի յառնել մեզ ազգ տերևութափ աշնայնոյն .
Ձի ոչ նըւազ քան ըզտերև թութափին կեանք մարգկեղէնք .
Եւ ի հրաւէր աալ մեզ հեզուլ ազիողորմ արտասուս
Ի վերայ հանգուցելոց, ի ստորերկրեայան իջանէ
Խուաներամ երկիւղածաց . կախին լապտերք յոքնաջահք,
Իւրաքանչիւր ի սիրելին իւր ի գիտկըն գիմէ,
Հիւծեալ ի գէմս անդ խընդրելով ըզտիպ ծանօթ, և գաա-
Որգի զհօր, եղբայր զեղբօր, և սիրելի զսիրելւոյ . [նէ
Նըշոյլք ջահիցն այնպէս գողգոջ հարեալ ի գէմս յայնոսիկ,
Ձի ջիւք նոցին երթեացեալք թըւին երբեմնն շարժուանք,
Ի մուացօնս արկեալ ըզձեան օրհասարեր Պարկային :
Քանի վըշաց ի միասին կրելոց, քանի հաճոյից
Նորոգին անգ յիշատակք . ամք քանի՞ն վաղանցիկք [չիւն,
Վերկենցազեալ . յառնեն հառաչք անգ ոչ ի գաշն ինչ մըն-
Այլ հեկեկանք երկարահեծք և խառնաձայնք հընչեցեալ
Ընգ գետնափոր կամարակապս՝ ուստի կըրկնին արձա-
[գանգք,

Եւ թուին ի ցուրտ մարմնոց անտի լինել բարբառք լըսելի :
Անքք սուղ զաշխարհս անգ զերկոսին անջըրպետէ . կեանք
[և մահ

Ոչ այնպէս ուրեք երեք գան առ միմեանս ի համբոյր :

ՊԻՆԴԵՄՈՆԴ

ԱՄԱՐԱՍՏՈՒՆԻ Ի ԲՐԻՏԱՆԻԱ

Այսպիսի հրաշակերտ և բարեգուծ օթեան
Բրիտանիկըն՝ սէգ ի սիրտ և ի հանճար խորազգաց՝
Փոշոյ իւրոցըն սիրելեաց կազմէ երբեմն ի հանգիստ
Ի համբաւեալ ամարաստանս իւր, ուր ամբիծ ըզմայլուսն
Ընգ լըսելիս իմ և ընգ աչս ի ներքս ի յիս ներգործէ :

Յանկարծ բարձեալ տանէր ոք զիս ի զուարճալիս անգր ի
[վեր,

Ի տեսարանս անտառայինս ի լայնասփիւռ գրքգորանս .

Յանկարծ ի գորգ դաւարագեղ նըստուցանէր ոք զիս անգ ,

Ի մենաւոր նըսեմաստուեր պատըսպարանս յայնոսիկ ,

Ի մէջ հովտացն այնոցիկ , ի գագաթունս անգ բըլբոց ,

Ուր ոչ եհար պատերազմիկ տապար ըզգուարթ հովանիս ,

Եւ ոչ ընդ վայր խընդրեցին հիւրք նոցին անգ հաւք զիւ .

[րեանց բոյն .

Ոչ խաբեցաւ գարուն տեսեալ անհետ զանառ իւր ծա .

[նօթ ,

Ձօր սաղարթիւք իւրովք գառնայր կանաչագեղ զարգա .

[րել .

Ղոկ ի ձեռին ժիր մըշակի ցոլեալ երկաթ սայրասուր ,

Ողորկատարբ առնել զարօտ , և հըմտօրէն ըզկողերս

Հեռաստանեայց տեսլեանց ի բաց յօտել զարգելս յանգը .

[գունս :

Երևոյթք ակնահաճոյք , անակընկալ պատահմունք ,

Ուղիք չբքնաղք , հովանաւոր բազմոցք և այլք հովասունք ,

Վլըտակք համերք գանգաղաբայլք ընդ ծաղկաւէտ գալա .

[րիս ,

Որոտընդոստ ուղիք ի ժայռից գահավիժեալ ի բարձանց ,

Քարաժայռք՝ յորըս վըսեմ արպաւորեալ արհաւիրք ,

Քաշա և ծաղկոց , արոււեստ շուայլեալ և գեղջկային պար .

[զուժիւն .

Հունձ ծածանեալ , և բարձրաբերձ ընդ ափափայս այծք ի

[կախ .

Հովիտ հընչեալ ի բառաչ , հընչեալ և բլուր ի մայինս .

Կամարաձև ընդոստուցեալ զալեզք կամուրջ վիմարգետայ ,

Տաճար ծառոց անգ ի միջի սպիտակափայլ երևեալ :

Տարաշխարհիկ տերևեալ բոյսք՝ զամբրիկեան հովանի

Ի Բրիտանեան արկանելով յերկիր , և ոսաք՝ երգարանք .

Հաստեալ այլոց հաւուց ի բնէ , եղեալ մերոցս հիւրընկալ .

Ի բազմոստեան եզն ի յեղջերըս պարծ ճեմեալ ընդ տն .

[տառ ,

Բստէպ ըզգուլիս իւր շըրջելով յեակոյս ի քեղ ակնարկու :

Թիւովարեալ կարապ ոտիցըն թեւնկզք ընդ ալիս,
 Հերձաննելով զարծաթափայլըն լիճ ի վիզ կորովի.
 Երէոց իսկ ըզգացեալ ըզգեղ վայրացն այնոցիկ,
 Եւ հիացմամբ փարեալ հողմոց ի գագաթունըս մայրեաց:
 Ո՛հ, ընդէր չիցէ և ինձ հանգարտաքայլ առնուլ անդ
 Ճե՛մ ընդ ուղիս, և վարսագեղ ոստոցըն գիրկս ընդ իրեարս
 Արկելոց՝ պատըսպարել ընդ հիւրասէր հովանեաւ,
 Եւ հազիւ զաշխարհական լըսել մըրրիկ ի հեռուստ,
 Ձերարեալ զազգըս, խորտակեալ ըզթագ և զցուպ ար-
 [քունի:

ՊԻՆԴԵՄՈՆԴ

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Ք

ԱՌԱՄ ՊԱՏՄԷ ԶՍՏԵՂԵՌՈՒՄՆ ԻՒՐ

Որպէս այն ինչ զարթուցեալ ի խոր քընոյ՝ գըտի ես զիս
Ընկողմնեալ հեշտաբար ի դալարիս ծաղկածաւաւ, [քեաց,
Ի քիրտն հարեալ խընկապատար՝ զոր արեգակըն ցամա-
Իւրով ճառագայթիւքն ըզծըխաշունչն արբեալ խոնաւ :
Դէպ ուղիղ ընդ երկինս յածեցի զայս իմ հիացեալս
Եւ վայրիկ մի հայեցայ ՚նդ լայնատարածն հասատուութիւն,
Մինչև ապա յարուցեալ ի բնէ բերմամբ ոստեայ ի վեր
Իբր ի փոյթ անդըր ելից, և կանգնեցայ կացի յոտին :
Շուրջ զինև տեսի բլուր, հովիտ և ծառս հովանաւորս,
Դաշտավայր արեգաւէտ և լոյծ սահանս ջուրց խոխոջից :
Տեսի ստեղծուածս անդ կենդանիս՝ շարժուն գնայուն և
[կամ թըռչուն,
Ի թաւ ոստըս ծառոցն՝ հաւուց երամ բիբեալ ճըճուեալ :
Ամենայն ինչ ծիծաղէր, սիրաս ողողէր ի խինդ ուի խունկ :
Յայնժամ ընդ անձն իմանցի, զըննեցի յօգ առ յօգ զիրանս,
Մերթ գնացի, մերթ ընթացայ գիւրագարձիկըս խաղալեզբ,
Որպէս զհարդ և վարէր կենդանաւէտ զիս զօրութիւն :
Բայց ո՞վ էի, ո՞ւր և յորմէ եկեալ ի գոյ՝ գիտէի ոչ :
Ի խօսել փորձ փորձեցի, և նոյն հետայն բարբառեցայ :
Հըպատակ գըտաւ լեզուս և բաւական կարողապէս
Ի յօգել արագ արագ զանուանս իրաց որ առ ական :
Արեգակն, սասցի, գեղեցիկ լոյսդ, և դու երկիր
Ի նմանէ լուսազարդեալ, գալարազուարճ, գեղածիծաղ,

Դուք բըլուրք և ծործորք, գուք գետք, մայրիք, մարդադէ-
[տինք,

Եւ գուք չքքնող տրարածք որ ի նոսին կեայք եւ շըրջէք:
Ասացէք, օն ասացէք եթէ տեսեալ ինչ իցէ ձեր,

Ո՛րպէս յայս կերպարանս եկի, զխորդ կամ աստանօր:
Ապաքէն ոչ ինձէն, ապա ի մեծ ոմն արարչէ

Գերաբուն եղելոյ ի բարութեան և զօրութեան:
Պատմեցէք ազէ զխորդ ինձ ճանաչել լինիցի զնա,

Զնոր պաշտօն մատուցանել՝ յորմէ շարժիմս, կեամ ուխմա-
Եթէ գոմ առաւելքան զոր գիտեմս երբերջանիկ: [նամ

Մինչգեռ այսպէս ձայնէի մոլորելով ոչ գիտեմ յով,
Ի բացէ ի տեղւոջէ անտի ուր նախ զօգ շընչեցի

Եւ տեսի զառաջինն ըզլոյսըս զայս երանաւէտ, [նւոյ՝
Զընկալեալ ինչ ուստեմն համբուն գարձուած պատասխա-

Նըստայ մըտայոյզ ի տախտ ուրեք կանաչազարդ
Թանձրախիտ հովանացեալ և շըռայլեալ ի ծաղկանց հոյլս:

Անգտնօր նախ զառաջինն անկաւ զին և քուն մի անոյշ
Եւ քաղցրիկ ծանրութեամբ զթըմբեալ զգայունս իմ նը-

[ւաճեաց,
Սակայն ոչ և աղմըկեալս, թէպէտ ի միտս իմ թըլէի

Գնալ անկանել յանըզգայուն նախնի պայմանս և կորընչել:
Եւ ահա յեղակարծուստ եկն ի սնարից եկաց իմոց,

Որոյ յիս ներքին տեսին յանկոյց մեղմով զսըրտիս խոր-
[հուրդս՝

Հաւատալ թէ գոյր յիս գեռ ևս էութիւն և շունչ կենաց:
Կարծեմ, թէ եկըն ոմն աստուածակերպ և ասէ ցիս.

«Տեղիդ քօ քեզ ակն ունի, արի, Ադամ նախաստեղծ մարդ,
Որում կայ նախահայր լինել տոհմի անթիւ մարդկան:

Առ ի քէն կոչեցեալ՝ աւասիկ գամ քեզ առաջնորդ [թիւն»):
Ի պարտէզն երանութեան՝ ի պատրաստեալ քո բնակու:

Ընդ բանիցըն բարբառել ըզձեռանէս կալեալ յարոյց,
Եւ ընդ դաշտըս և ընդ ջուրս անքայլ իբր յօդ սաղապաճեմ

Առ տարաւ զիս կացոյց ի լեառըն մի անտառախիտ
Եւ սարահարթ, ցանկապատ գեղեցկատունկ և յօրինեալ

Յանտառակս ուրի ճեմելիս, մինչ զի զոր իմ տեսեալ էր ինչ
Ընդ երկիրս յառաջագոյն՝ հազիւ թէ թուէր ակնապարար:

Մաւք լըցեալ չքքնազ պըտղովքըն զաչս ի ճօճ զօշոտեւլով
Ածէին բուռն ի տենչանըս քաղելոյ և ուտելոյ :

Եւ անգէն զգաստացեալ՝ գըտի արգեամբք ակն յանդիման
Ջոր ճըշգրիտ էր երազոյն կենդանագրեալ ինձ ի պատկեր :
Աստըսկիզբն առնոյր անգրէն (Թափառականն իմ մոլորումն ,
Եթէ որ իմս էր ուղեցոյց կարապետեալ մինչև յայն բլուր՝
Չէր երևեալ ի ծառաստանն անգ ինձ , տեսի՛լ աստուածե .
[զէն :

Խրախամիտ և պատկառոտ իմն երկիւղիւ առ ստան անկայ
Ի խոնարհ երկըրպագու . նորա կանգնեալ՝ առէ հեզիկ .

« Ջոր խընդրեսդ՝ ես եմ , Հաստիչ ամենայնի զոր տեսա .
Ի վերոյ քան ըզքեզ կամ շուրջ ըզքե կամ ի ստորև : [նեսդ
Քեզ տամ՝ ըզդրախոս , առ քոյս կալլիբ՝ ի մըշակել և պահ .
[պանել ,

Եւ վայելել ի պըտղոցն . իշխանաբար և զուարթամիտ
Կերիցես յամենայնէ որ ի պարտէզըդ բուսեալ ծառ .
Ի սովոյ մի՛ զանգիտեր . բայց ի փայտէն որոյ ճաշակ
Գիտութիւն ածէ զբարւոյ և ըզարի՛ յինէն տընկեալ
Գրաւական ունկընդրութեանդ և հաւատոց՝ ի պարտիզիդ
Առ ծառոյն կենաց , քեզ յուշ պատուիրանիս կացցէ խըրատ ,
Ձգոյշ լեր անտի մի ճաշակել , և ապրեսցիս ի դառն ար .
[գեանցն

Ուշիմ լեր . յորում՝ աւուր ըստուանգտնեալ զայս մի հրամանն
Ուտիցես ի նմանէն , առ օրին լեալ մահկանացու՝

Անհրաժեշտ մեռանիցիս , և կապտեսցիս ի պերճ բաստէզ՝
Վըտարեալ աստուստ յաշխարհ տառապանաց և աղետից » :

Ջայս առանց ակնառութեան բարբառեցաւ խիտտ գա .
Որ հընչէ տակաւին ի լըսելիստ ահագնաշուր , [տակնիք՝

Թէպէտ և յիս չանկանել ի պատուհասս տպաստան կայ :
Բայց էառ գարձեալ անդրէն ըզզուարթագէմ իւր կերպա .

Եւ զայս օրինակ ի քաղցրախօս բանն ըսկըսաւ . [բանս ,

« Ոչ զայս գեղեցիկ որմած ևեթ ցանկապատիս ,
Այլ և զերկիր համօրէն՝ պարգևեալ քեզ և զաւակիդ ,

Ձեզ լիցի որպէս տերանց՝ ինքն և բոլոր ի նմա կենդան ,
Կամ ի ծովս զեւուռն կամ յօգս , երէոց ջոկք , լուզակք և
[հաւք :

Յոյր ի ցոյց՝ ահաւասիկ քեզ զանասունս և զԹըռչնոց տարմ՝
 Իւրաքանչիւր ըստ ազգի՝ բերեմ առնուլ անուանս ի քէն,
 Եւ մըսանել ընդ քեզ յուխտ սւի հարկ խոնարհ ծառայու-

[Թեան:

Նըմքն տկըն կալլիր և ի ձըկանց՝ ի ջրայարկ տուենն,
 Որոց ոչ է հրաւիրեալ գալ այսր յատեան՝ զի ոչ կարեն
 Անցանել յայլ ինչ տարր և չընչել օգ անօտարգոյն ։ [Երկու

Մինչքեւ խօսէրն՝ ահա պաճարք և հաւք գային երկու
 Ի քըծինըս կըրկնելով չորքոտանեաց ծուներ ի խոնարհ,

Օգապար Թըռչուն հաւուց՝ ի հոլաթեան իջանելով:

Ըստ նոցուն գալ անցանել և ես զանուանսն կոչէի՝ [Ճար

Բնութեանցն եղեալ խելամուտ. այնպիսի մեծ էր յիս հան-

Ջոր շնորհեալ էր յԱստուծոյ յանկարծագիւտ իմացու-

[Թեանս:

Այլ որ պակասն ինձ գեւ Թըռչր յարարածս անգ, զայն ոչ

[գըտեալ՝

Աւ տեսիլն երկնաւոր յանգըգնեցայ յայս ժիտ բարբառ.

«Ո՛հ, յինչ ըզքեզ կարգամ անուն, զի՛ստ ամենայն այս ա-

[րարածս

Անցանես, ըստ ազգ մարդկան և ըստ բարձունս քան զմարդ-

[կան ազգ,

Ջանցուցեալ զամենեքումք որ ինչ անուն անուանելի:

Ինձ զիարգ է քքեզ պաշտել զտիեզերացս արարչագործ,

Եւ զբարեացս ումենայնի՝ մարդոյն և եթ պարգևելոց,

Յոյր հանգիստ՝ առատաձեռն և աննախանձ տարար խընամ:

Սակայն ո՛չ զդք տեսանեմ ընդ իօ նոցին հաղորդակից:

Եւ իցէ՞ ինչ ուրեք երջանկութիւն ի մենութեան.

Ո՛վ միայն վայելիցէ, կամ ո՞ր հաճոյք ի բնաւ վայելսն ։) :

Իմ յայս բանսըս ժըպրհեալ, յայնժամ տեսիլն՝ իբր ընդ

[ժըպիտ

Առաւել զուարթաճաճանչ, այսպէս գարձոյց պատասխանի.

«Ձինչ կոչես գու մենութիւն. ո՛չ ապաքէն երկիր և օդ

Հոծեալ են զանազան կենդանազգեաց արարածովք,

Եւ չիցեն ի հրամանիդ՝ գալ համօրէն խաղալ ըզքէ:

Միթէ չիցես խելամուտ լեզուի նորա և բարոյից.

Է իմաստ և ի նոսին, և ոչ անարգս ինչ խոճաճեն:

Տես ընդ նոսա զրօսել, տիրեա նոցա և մեծ է պետու-
 [Թիւնգ] :

Ձայս ասաց ամենատէրն և աալ [Թուեցաւ պատգամանի :
 Աղերսիւ ժըտեալ օձան բարբառելոյ՝ յաւելի զայս .

« Իմ մի ծանր ինչ քեզ [Թուեցին բանք, երկնաւորըդ զօ-
 [րու[Թիւն .

Հեշտալուր լեր . Արարիչ իմ, և քաւեա զիս ի խօսելս :

Ո՛չ ապաքէն փոխանակ եդիր զիս քո ի վայրբս յայս .

Եւ ստորին արարածոցս ետուր տեղի յոյժ ի խոնարհ :

Կենակցու[Թիւն որպիսի՝ նգ անհաւասարս . ո՞ր յօրինուած .

Ձինչ սեռն և սերտ հեշտու[Թիւն պատկանեցին գեղա-
 [պատշաճ] : . . .

Խօսեցայ զայս համարձակ՝ առեալ կամաց գուլ և պատուէր .

Եւ բանիցըս մուտ գըտի . վասն այնորիկ և ընկալայ

Պատասխանի այսգունակ յաստուածաշնորհ ի բարբառոյն .

« Մինչև ցայս վայր, Ադամ, փորձել էին իմ կամք ըզքեզ .

Եւ տեսի՛ զի ճանաչես, ոչ զանասուն պաճարս և ե[թ՝

Որոց ի գէպ եգեր անուանս, այլ և ըզքեզ իսկ գըլխովին .

Յայտ ի քեզ արարեալ զազատ ոգիդ՝ զիմբս պատկեր .

Որ չբառուաւ անբանին, ուստի և իւր ընկերու[Թիւն

Չունի քեզ պատշաճել . արգար էին քո իրաւունքդ

Ի մերժել զայն պարզերես . այդ եղիցին միշտ ի քեզ միւք :

Չև քո խօսեալ զի չէ բարւոք մարդոյդ միայն կալ՝ գիտէի .

Չոր յայնժամն ականէիր կենակցու[Թիւն՝ չէր քեզ կար-
 [գեալ .

Ի փորձ և ե[թ յանգիման արարի քեզ զայն ամենայն .

Տեսանել՝ զինչ խորհիցիս գու զարդարոյն և զպատշաճէն .

Իսկ զոր այժմածից առ քեզ՝ լիցի հաճոյ քեզ՝ անշուշտ լեր .

Քոյ է նա նըմանու[Թիւն, գէպ օգնական, այլ ոմըն դու .

Անձկալիք կատարեալ ըստ ցանկու[Թեան սըրտի քոյոյ » :

Դագարեաց, կամ [Թէ չեղև ինձ լըսելի բարբառ նորա :

ՄԻԼՅՈՆ

ԱՐՅԱՔՕՈՒԹՆ ԵՄԻԱՆՆՈՂԱՅՆ Ի ԴՐԱՒՑԻՆ

Հրեշտակն առ Ադամ կրկնեաց և նա զյետին նըլագ...
 • Իջոուք արգ ի բարձանց աստի գըլխոյ գիտանոցիս,
 Քանզի ժամն եկեալ հասեալ ըստիպէ զմեզ գընալ աստի:
 Տես ահա պարեկապանք կարգեալ յինէն բանակ ի բլուրդ
 Ըսպատեալ գէտակն ունին ակնարկու(թեան՝ խազալ գընալ:
 Առաջոյ նոցա ստատիկ ճօճէ սուսեր մի բոցավառ
 Ի նըջան տարագրու(թեան. չիք մեզ հընար այլ ևս յամել:
 Երթ աղէ զարթո զԵւա, իմ հանգարտեալ և զնա ինքնին
 Քաղցրաբուն բարեգուշակ իմն անըրջովք և պատրաստեալ
 Զոգիսն իւր զամենայն ի ցածնագոյն հնազանդու(թիւն:
 Ի պատեհ ժամու գիցես ի մտի իւրում զսր ինչ լըւարդ,
 Մանաւանդ որ ինչ արժանն է հաւատոց նորա գիտել,
 Ըզմեծըն փըրկու(թիւն մարդկան ազին՝ ըզհանգերձեալն
 Ի նորա գալ զաւտկէն, ի զաւակէ անտի կընոջ:
 Կեցլիք կեցլիք, ի հաւատըս համամիտք, երկայնաւուրս,
 Թեպէտ և տըխրագածք վասն առաջին չարեացն անցից,
 Սակայն մեծ ևս ըսփոփեալք ի յոյս էլիցն երանական »:

Լըուեաց նա, և երկոցուն ի ստորոտ անգր իլէալ բըլ-
 [րոյն,

Ընդ հասանելն ըն(թացաւ Ադամ յառաջ ի հովանոցն
 Ուր ի քուն կայր Եւա, սակայն ար(թուն գըտաւ անգէն,
 Եւ ընկալաւ զինքըն բանիւքս որ այլ չէին ինչ տըրամալիցք.

« Ուստի գասդ և ուր էիրն եր(թեալ՝ գիտեմ ես զամե-
 [նայն,

Զի է Աստուած և ի քուն, և երազովք ուսուցանէ.
 Բարեշնորհս ինձ առտքեաց զնոսա գուշակ մեծ բարու-
 [թեան՝

Այն ինչ աըխրեալ և յոգւոց նեղու(թենէս անկայ ի նիրհ:
 Այլ այժմիկ՝ առաջնորգեա ինձ, ոչ ևս այլ յիս գանգա-
 [լտնք.

Ընդ քեզ գընալ է մնալ աստէն, իսկ աստանօր առանց քո
 Ելանել է աստի յակամայ կամըս բըռնարար: [մնալ՝
 Դու վասն իմ ես ամենայն ինչ ընդ երկնիւք, գու բնաւ
 [տեղի,

Որ վասն իմոյ կամաւոր մեզացս աստի գնաս տարագիր :
Բայց աստուստ բարձեալ բերեմ ինձ մըխիթար զվերջին
[զայս յոյս .

Ձի թէպէտ և ամենայն ինև կորեաւ , այլ շքնորհ մեծ
Ըստ ոչ իմում արժանի պարգևեցաւ ինձ ճոխաբար .
Ինև զաւակն աւետեաց նորոգելոց է զամենայն » :

Ձայս ասաց մայր մեր Եւա , լըւաւ Ագամ ուրախու
[Թեամբ ,

Սակայն չեա պատասխանի , հրեշտակապետըն մերձ կայր
[յոյժ .

Եւ ի միւսմէ շեռնակէն քրովբէախուսմբըն լուսագունդ
Գային իջանէին ի սահմանեալ տեղին իւրեանց .

Ձեռային հրաբերձական իմն երեւոյթ յերեսս երկրին ,

Իբր ի գետոյ ցոլեալ մէգ երեկորին՝ սողեալ յեզտիւր
Սուրայ գնայ , գրաւէ զցետինն՝ հողագործին հետոցն ըզկնի
Ի գառնալ նորին ի հիւղ : Գային ռազմեալ ասեզ ճակատ .

Յառաջոյ սուր Տեառն ի ճօճ փայլատակեալ բոց զայրագին
Չօրէն վարսամի , և ի շողիւնս իւր տապախառն

Եւ ի շոգին հանգունակից լիբիական հրակէզ օգոյն՝

Սկըսանէր ազազել ըզհեշտախառն երկիր գրախաին :

Ձուարթնոյն յայնժամ ճեպեալ ըզծնօղըս մեր տարտամս՝
[աւ ըզձեռացն .

Եւ տարեալ ուզիզ յարեգ գունն և անտի և ս հետ ընդ հեա
Յըլեռնոտն՝ ի ստորակայ գաշան , և եղև աներեւոյթ :

Ի թիկունս հայեցեալ կոյս , յարեւլից կողմն գրախաին՝

Որ երբեմն երանաւէան էր գըրգարան և հանգըստոց .

Տեսին զայն վեա վէտ շողեալ ի շանթեռանգըն սուսերէն .

Դուռն էր խըռնեալ ահագնացայտ կերպարանօք և հրազի-
[նուք :

Արտասուս ինչ բնակակիրս հեղեալ նոցա՝ ջընջեցին փոյթ .
Տիեզերք համօրէն աչաց իւրեանց կայր առաջի՝ [նորգ :

Ընտրել տեղի հանգըստեան , և Տեսչութիւնն էր առաջ
Ձեռն ի ձեռն՝ հանգարտընթաց և գանգաչուն ի քայլս ոտին՝

Ձամոյի ճանապարհն իւրեանց կալան գնալ ընդ Եգեմ :

ՄԻԼՏԱՆ

ՄՍՀ ԱՐՅԼԻ

Ամաք թօնընկէցք յահեղ շանթից ի գուպար
 Ըստուերախիտ զերկնիւք սրփռեն քօլ խաւար,
 Աւերածուք հորիզոնին ի ծագաց
 Աղջամղջինք ծաւալին թւք մըրըրկաց .
 Ընդ հողմակոծ ծայրից ծառոց սօսափիւն
 Վայրադ վագեր ըսպառնալեաց մըռընչիւն,
 Խառն ընդ ճայթմոնըս կայծականց հեռաւոր
 Յարուցանեն յերկրի աագնապս ահաւոր :

Պարտխաթափ կայէն քինուն գըծոխոց
 Ժանտ յապաժոյժ քըրտանց թացեալ դէմն և ծոց,
 Յերկնաաեղացն յառեալ ի հուր՝ յեց ի բահ,
 « Լիմ շանթահար, դռչէ, չառնես զիտ, Տէր, ահ .
 Մահր են ինձ կեանքս այս, ինձ գըծոխք բացցին օն .
 Գըծուծ պատտառք զանձն իմ ծածկել չեն ըմբոն .
 Եւ ձեռքս յամառ ի ծուխ քըրտանց եռանդուն
 Յերբ գործեսցեն անխոջք զերկիր անբեղուն :
 Կընոջս ծոց ցամաքեցաւ չըւառին .
 Սողալըլուկ հաց, հաց գռչէ մանկըալին .
 Վասն իմ ոչ ինչ, զամէնն եպօրս յաջողեր .
 Մանկունք նորին մարտն և հարբ գան ի վըսեր .
 Ոյք ըզքեստուցն ի պաճուճանըս խրոխտան,
 Եւ անգէոց նոցին անթիւ է հօրան :
 Ա՛ռ ինձ և զայս կըսկիծ . զի հուր բոց երագ
 Իջեալ յերկնից սըրբէ զնորին պատարագ .
 Իո՞հ զիս ատեան երկինք, և հուրըն ծախիչ՝
 Իմ նըւիրացս և սեղանոյս է խոտիչ :
 Սարսեանց, երկիր Աբէլ . հարից ըզքո կար,
 Եւ զուարճացայց լուծեալ ըզվրէժ կամակար » :
 Լըռեաց կայէն . յանկարծ ցելաւ պարզ այեր .
 Ճաճանչ հատաւ մինչ արեգակըն ծագէր .
 Անգէն և անգ ըզգնացս արգել մըրըրկին
 Շող փայլակեաց էջ յԱբելայ ճակատին :

Ո՛հ ի ճակատ քո սուրբ, որդեանկդ Ադամայ,
 Շնորհք լաւութեան անճառ գեղով լուսանայ.
 Սըրտիւ խայտաս լիսայատար հըրձուանօք
 Որ սիրելեաց են Բարձրելոյն տըւեալ ձօնք.
 Դաշնակաւոր սըրժնդիդ քաղցըր նըւագ
 Քան ըզմեզուի մթերս ամբարոց անուշակ:
 Գառանց ուլանց ըզքե տըւեալ դռոյթ ի թինդ
 Յերանութիւն հովուիդ կայտուն մեծախիսդ:
 Երկիր ի տես սիրելոյն ել ի կաքաւ,
 Բուրազըւարձ և ծաղկազգեստ ժըպտեցաւ
 Գարշապարացդ առեալ տենչիւ ըզսուրբ հեաք:
 Իսկ նա զՎայէն տեսեալ գիմէ ահաբեկ.
 — Եզրայր, գոչէ, եզրայր՝ ընիմք գըրկածու:
 — Ի բաց, օձ չար, զինև պատի՛լ կամիս գու.
 — Փուլթան, եզրայր, ի մըրըրկէս փախիցուք.
 — Ի ցասմանէս մանաւանդ լեր խուսափուկ.
 — Զինչ մեղայ քեզ. ահա սաացուածք իմ, ընկալ.
 — Վաստակարեկ կորեայց, քան քև ճօխանալ.
 — Կարգա՛ առ Տէր, և ատըք զանդըս գըտցես.
 — Է՛հ, զիս մերժեաց Տէր, իբրու զքեզ մերժեմ ես.
 — Ո՛հ, այդ նախանձ քո մեծ ոճիր է, եզրայր.
 — Մեղք Ադամայ՝ որ թըշուառաց եղև հայր.
 — Կարկեաց, յանդուգըն, հօր կարգաս գու տնէծ.
 — Եւ գու պանդոյր, ինձ սաստես. վրէժ լուծցես մեծ...
 Տրոփեաց գոփմամբ, կըշքեաց ըզձեան ապիրատ,
 Հարուած սաստիկ էջ յԱբելայ սուրբ ճակատ.
 Ա՛հ, անկաւ նա, Տէր... և առ քեզ պաղատի.
 Ներէ եզբօրն յետին յաչացն ակնարկի:
 Այլ ըսպանչին գէմք հարկանին ի գալկան,
 Կըրթի յապուշ, քըստմունք յոսկերս ընթանան,
 Դողան գաստակք, պատէ զնովաւ ահ տըխուր,
 Քօղ առնուն աչք և ատամունք ըզսարսուռ:
 Զարհուրագին գիսակք ի վեր գիզանան,
 Սարսի խըղձիւ իբր հողմահար անդաստան:
 Որոտընգոստ ճայթէ մըրըրիկ յամպրոպաց.
 Զայն արկանէ Եւա, ո՛հ ձայն մօրն չընչեաց.

«Փռութա, որգեհեկ սիրուն, զԱբեղ ան ընդ քեզ,
Եւ փախերուք ի փոթորկեալ վըսանգէս»:

Արձանանայ կայէն ի շուրթըն ամփոփ.
Ի գիրկ պարզեալ ժորըն գիմէ սըրտատրոփ.
Յաս և գալուկն առեալ սարսէ ի կոչոյն,
Ճիչ մեծ բառնայ, զողէ ի խորըս մայրուոյն:

ՄՈՒՆԳՈՒ

ՀԵԿՏՈՐԻ ԵՒ ԱՆԴՐՈՄՔԵԱՅ ՀԱՆԴԻՊՈՒՄՆ ԵՒ ԲԱՆՔ

Չայս ասաց կիներն անօրէն, և ի տանէն թըռեաւ Հեկատր
Անգրէն ընդ նոյն պողոտայս ընդ հրապարակսն բարեշէնս:
Մինչ անցեալ ընդ մեծ քաղաքն եհաս ի դրուանն Արևմը-
[տեան,

Քանզի 'նգ այն էր նըմա ի գուրս ի գաշտ անդր ելանել,
Ընթացեալ անդ ընդ առաջ եկն ամուսինըն յոգնօժիտ,
Գուստըր մեծանձինն Էտիոզի Անգրոմաքէ,
Էտիոզի՛ այն որ բնակէր յանառաախիտ Պլակայ ստորոտ
Ի թերէ Ստորին Պլակի՛ կիլիկեցւոց արանց իշխան:
Էր սորա գուստըրն լիեալ պըղընձազէնն Հեկատրի կին,
Որ գիպաւ նըմա 'նգ առաջ, ի միասին դայր և նաժիշան
Ըզմանկիլըն մասաղ բարձեալ ի գիրկս՝ անխօս տըղայ,
ՉՀեկատրեանըն սիրելի՛ զգեզեցկափայլ նըմանն աստեղ՝
Հեկատր ըզնա Սկամանգրիկ ձայնէր, իսկ այլք Ոստանիշխան,
Չի զոստանն իլիոն Հեկատր ևեթ էր որ պահէր:
Հայեցեալ ընդ մանուկըն ժըպտեցաւ նա լըռելեայն.
Մատուցեալ Անգրոմաքէ կայր առ նըմին արտօսրաթոր,
Եւ ձեռն ի ձեռն իւր խառնեալ՝ կարգաց զանուեն և խօսե-
[ցաւ-

Ո՛վ վեհ, հոգիդ ի կորուստ մատնեսցէ զքեզ, և ոչ գըթաս
Ի աղայ մանկիկդ և յիս թըշուառս՝ որ վաղ ի քէն մնացից
Քանզի վաղ ըզքեզ ընդ փոյթ աքայեցիք միարուր [այրի-
Գուոհ տըռեալ ըսպանցեն, և ինձ ի քէնըդ վրիպելոյս՝

Լաւ է ի հող մըտանել. զի ոչ ես այլ իցէ սփոփուանն .
 Եթէ գամ մի գու ի մահ յուղարկեսցիս, այլ ցաւք եեթ .
 Ձի ոչ հայր է իմ համբուն և ոչ մայրիկ իմ մեծարոյ .
 Քանզի զհայրն իմ կորոյս աստուածազարմըն Աքիլէս ,
 Եւ քանզեաց ըզքազաքըն մարգախիտ կիլիկեցուց
 Ըզբարձրագուռնն թեբէ , և զԷտիոնն արկ յարևէն . [Իւր .
 Բայց կողոպտեաց ոչ ըզնա , քանզի խըզճեաց զայն ի սիրտ
 Այլ այրեաց ըզնա իւրով ամենարուեստ զինուքն հանգերձ ,
 Եւ շիրիմ կանգնեաց նըմա , և աքնկեցին շուրջ նըզարիտ
 Լեռնայինքն Յաւէրժհարսունք՝ ասպարակրին Դիայ գըտ .
 [տերք :

Իմ եզբարք էին եօթըն հարազապք յապարանս անգ ,
 Եւ նոքա բոլորեքին իջին ի գժոխս յաւուր միում .
 Ձի Աքիլէս ժիր գիւցազն ըսպան զնոսա զամենեսեան
 Առ յամրաքայլ անգէնովն և լուսակիրն օդեաց հօտիւ :
 Իսկ ըզմայրն իմ ըզբամբիչն ի թանձրաթուփ Պլակայ ստո .
 [րոտ ,

Իբրև այսր էած ըզնա համայն իւրովքն ըստացուածովք ,
 Ընկալեալ փըրկանս անբաւ՝ ազատս անգրէն յետս արձա .
 [կեաց ,

Եւ ի տան հօրս Արտեմիս եհար ըզնա նետազըւարձ :
 Սակայն գու ինքն ես ինձ հայր , Հեկտոր , և մայր մեծամե .
 Եւ եզբայր հարազատ , և ամուսին զուարթածաղիկ : [Ժար ,
 Այլ արգ եկ ողորմեա և կաց աստէն յամրոցի աստ ,
 Մի զորդեակգ որրացուսցես և թողուցուս ըզկինգ այրի .
 Կացն զզօրն առ մողաթուզն , ուր ի քաղաքս են ելք աջող ,
 Եւ գըտանի առ պարիսպըն ճանապարհ գիւրամատոյց :
 Ձի այսր երիցս հինիւ հրոսեալ արի արանց ի փորձ մատեան ,
 Էասեանքն երկոքին և մեծանունն Իգոմենէս ,
 Եւ նոքին իսկ Ատրիգէսք և հաստարուռն որդին Տիգեայ .
 Կամ զի ոք պատմեաց նոցին՝ գուշակու[թեանց ճարտարա .
 [գէտ ,

Կամ զի միպք նոցա զնոսա խրախուսեցին շահատակել :
 Ես նըմա պատասխանի մեծըն Հեկտոր սազուարտաճօճ .
 Եւ ինձ իսկ գըլխովին ամենայն այգ փոյթ է , կին գու ,
 Այլ պատկառեմ յոյժ ի արովեանց , յերկայնատեաւ արա .
 [վուհեաց՝

Թէ խոյս աըւեալ վատաբար մեկուսեցայց ի ճակատուէն :
 Եւ ոչ սիրտ իմ հրամայէ , քանղի ուսայ քաջ լինել միշտ ,
 Եւ ի գլուխնահատակաց գընդին տրովեանց կալ և կըռուել
 Ի պարծանս հայրենի մեծի փառաց և իմ անձին :
 Քանցի քաջ իսկ խելամուտ եմ ես ի միտս իմ և յողբս ,
 Եկեսցէ երբեմն օր՝ յոր կորիցէ Իլիոս սուրբ
 Եւ Պրիամոս և Ժողովուրդ կարովատէգըն Պրիամոս :
 Այլ չառնեմ ես այնպէս փոյթ ըզմօտալուտ ցաւոց տրո-
 Ոչ նորին իսկ Հեկաբեայ , ու ոչ արքային Պրիամոսի , [վեանց ,
 Ոչ եղբարցս հարազատից՝ որ բազմագունգք և քաջազօրք
 Թաւալագլոր ի փոշուջ անկանիցին ի Թըշնամեաց ,
 Որպէս ըզքոյգ , յորժամ ոք ի պղընձակուռ աքայեցւոց
 Վարեսցէ արտասուագին՝ զազատութեանգ հատեալ զարե .
 Եւ գուցէ յԱրգոս երթեալ անկցես ոստայն այլում ախինոջ ,
 Կամ ջուր կրեսցես յաղբերէն Մեսսէիսի կամ Հիպերեայ՝
 Ըստիպեալ չարաչար և տագնապեալ ի խիստ հարկէն :
 Եւ Թերես յարտօսրիջոյցըգ հայեցեալ ասիցէ ոք .
 Բա՛ կինն է գա Հեկտորի՝ զօրագունին ի պատերազմ
 Ի տրովեանց քաջածիոց՝ ի կըռուի անգ զԻլիոնիւ :
 Այսպէս ոք ասացէ , և ցաւք ի քեզ նորոգեացին [կեանսգ :
 Առ անձուկ առն այսպիսում ըզգերութեան Թափել ըզ-
 Այլ ըզմեռեալս հողակոյտ ծածկեսցէ զիս ի կափարումս ,
 Ըզկառաջ քո և ըզգեր և ըզքարանսըգ չև լըւեալ : [գեակն ,
 Ասացեալ զայս՝ տարածեաց Հեկտոր անեղ գիրկս առ որ-
 Եւ մանկիկն յետս ի ծոց գեղեցկամէջ իւրոյ ստընտուին
 Ճիչ բարձեալ խոնարհեցաւ՝ ի տես սիրուն հօր զարհուրեալ ,
 Պակուցեալ ի պղընձոյն ու ի ձիագէս գարգմանակէն ,
 Զահաւոր տեսեալ ձոճնէն ի գագաթանց գըլխանոցին ,
 Ընգ որ հայրըն սիրելի և մեծարոյն ժըմանեցաւ մայր :
 Եւ անգէն բարձ ի գըլխոյն ըզսազաւարան անգըն Հեկտոր ,
 Եւ առեալ զայն ի վայր՝ ճաճանչաւէտ եգ ի գետնի .
 Եւ զմանկիկըն սիրուն ողջագուրեալ ձօճեալ ի ձեռան ,
 Յազօթս եկաց և ասէ առ Արամազդ և առ այլ գիս .
 Արամազդ և այլ աստուածք , տուք և ըզսա զիմըս որ-
 Լինել , որպէս և եսս , արժանափառ ի արովացիս , [գեակ
 Այսպէս հըզօր զօրութեամբ և քաջաբար տէր յիլիոն :

Եւ իցէ ոք ասասցէ, ըամ սա քան զհայրն արիագոյն,
 Ի մարտէն յորժամ գարձցի և արիւնոտ բերցէ կապուտ՝
 Սաստկեալ զախոյեանն, և մայրն՝ ի սիրտ իւր խընդասցէ:
 Զայս ասաց և ամուսնոյն զորդեակն ի ձեռս ես սիրայնոյ.
 Որ առեալ ընկալաւ ըզնա ի գիրկս իւր բուրազուարթ
 Արտասուակախաւըն խընդուԹեամբ. առն յայն տեսիլ խան,
 [գաղափարաբան]

Փայփայեաց ձեռօքն ըզնա, կարդաց զանուն իւր և ասէ.
 Նազելիդ իմ, մի անչափ զինէն ի սուգ հարցի քո սիրտ.
 Զի յառաջ քան ըզլրամանսն ոչ ոք ի դժոխս ընկեացէ զիս.
 Իսկ յօրհասէն՝ և ոչ զոք ի մարգկանէ կարծեմ փախչել.
 Ոչ ըզվատ և ոչ ըզքաջ, յետ միանգամ ի լոյս գալոյ:
 Այլ երթեալ քո ի տուն՝ քոյոց իրաց առնիջիբ պէս,
 Ոսայնիդ և իւրդ, և աղախնայցըդ աուր հրաման
 Ըզգործովք գալ իւրեանց. հոգասցեն արք ի պատերազմ
 Որ ծընկալքն են յիլին ամենեքին, ես մանաւանդ:
 Ասաց և առ ըզգըլխանոցըն ձիագի՝ չեկտորն ասէզ.
 Իսկ կինըն սիրային ելեալ անտի գնաց ի տուն, [տօար:
 Ըստեպ ըստեպ յետս հայելով և ջերմեռանգն հոսեալ ար.
 ՀՈՄԵՐՈՍ. Իւխիսն:

ՀԵՎՏՈՐԻ ԸՆԴ ԱՔԻԼԼԵԱՅ ՊԱՏԱՀՈՒՄՆ ԵՒ ՄԱՀ

. Աքիլևս եհաս առ նա
 Արիսի նմանակերպ սաղուարտախրոխտ մըրցականին,
 Ճօձելով յաջմէ ուսոյն զՊելեոնեան հացին ասէզ,
 Եւ զիւրև շողըզէր պըզինձ հանգոյն փայլասական,
 Կամ հըրոյ բորբոքելոյ, կամ արևուն վաղորդայնի:
 Յայն տեսիլ ըզլեկտոր կալաւ գողուձն, և ոչ իշխեաց
 Մընալ անդ, այլ յետկուսէ զգրունսըն Թողեալ՝ փախեալ
 [սհիւ,
 Եւ Պելեանն յոտս ի սրաթև քաջախիզախ Թըռեաւ ըզհետ:
 Զոր օրինակ ցինն ի լերինս, օգապարիցն երագատուր,
 Խոյացեալ Թեթևաթուիչ ի դողգողուն մի ազաւնեակ՝

Որ խոտորնակ խուսափէ, իսկ նա մերձեալ սրաձայն կան-
[չիւք

Յարձակի հապ ըստէպ, ունեւ ըզնա բերեալ խրախոյս.
Ըզնոյն և սա գէպուղիղ մոլեալ սլանայր, սակայն Հեկտոր
Ընդ տրովեան պարխսպն յահէն ըզժուռնկան երազ շարժեալ
[սուրհայր:

Արգ սոքին ըստ գիտանոցն և ըստ հողմուտըն մնլաթուզ
Անցեալ միշտ ընդ պարսպաւորն զարահեան հարկանէին,
Եւ եկին հասին յականսըն գեղարուխ, ուր պըզպըջն
Երկոքին աղբււրակք յորձանահոս Սկամանդրոսի.
Մին բըղխեալ շերմախառն, և ի նմանէ ծուխ ցուացեալ
Իբր ի հրոյ վառելոյ. իսկ միւսն հոսեալ յաւուրս հընձոց
Զօրէն կարկտի կամ ցուրտ ձեան, կամ ջըրամած պաղեալ
[սառին:

Անդ կային մերձ առ նոքօք լիասահման լըւացարանք
Գեղեցիկք, վիմատաշք, ուր ըզպայծառ ձորձորն փափուկ
Լըւանայր կանանին և գեղաղէշ գըստերք տրովեանց
Երբեմն յաւուրս խաղաղութեան՝ չև աքայեանց եկեալ ման.
[կտոյն:

Ընդ այն գիմեալ վարգէին, մինն ի փախուստ, միւսն հե-
[տամուտ.

Փախէր քաջն յառաջոյ, զնա քաջագոյն վանէր շտապաւ.
Զի ոչ երէ առնուլ և ոչ արջառենի՝ եգեալ էր կէտ,
Որպիտի յաղթանակք գարշապարացն են որերոյ,
Այլ զոգւոյն Հեկտորի ձիահըմանին էին արշաւք:
Իբր ըզկիտին երիվարք գուպարայաղթք սալաորմբակք
Ասպարիսեն ճեպ ի ճեպոյ, և կայ եդեալ մըրցանակ մեծ
Եռոտանի կամ թէ կին պատիւ քաջի առնն մահու.
Նոյն սոքա զքաղաքաւորն Պրիամու սրաթուիչ ոտիւք
Պատեցան երիցըս շուրջ, դիք ի զընին կային հանուր.
Եւ սկըսաւ ասել նոցա հայրըն մարգկան և աստուածոց.

Ո՛վ դիք, զայր սիրելի հալածական ըզպարըսպաւն
Աչք իմովք աստանեմ ահա, և իմ մորմոքի սիրտ
Ընդ Հեկտոր, որ ճենձերեաց ինձ արջառոց յուրով աղքերս
Ի կատար յոգնահօզիտ լերինն Իգայ, և յայլ նըւագս
Ի բարձրամուր քաղաքին. և զնա դիւցազն այժմ Աբելլուս
Զոստանիւրն Պրիամու սըընթաց ոտիւքըն՝ տադնապէ:

Այլ եկայք հարցփորձ արկեք, գիք, և խորհուրդ առէք ի
[Թէլ:

Թէ արդեօք Թափեալ ըզնա ի մահուանէն ապրեցուցցո՞ւք,
Թէ Պելիտանն Աբիլլի տացուք ըզքաջն առնել նըկուն:

Աթենաս ստուռածուհին խաժակն առնա բարբառեցաւ.
Ո՛վ հայրդ ամպաթուխ՝ կայծակնացու, զինչ բանքդ իցեն.
Զայր ծընեալ մահկանացու, ճակատադրեալ վաղուց յօր.
[հաս,

կամ է քեզ ի չարագոյժ մահուանէն արգ կեցուցանել.
Երթ արա. իսկ միւս գիքս ամենեքին ոչ հաճեսցուք:

Առնա պատասխանի ամպրոպայինն ետ Արամազդ.
Զօրացիր, կառափնածին՝ գուստըր սիրուն, ոչ ինչ սերաիւ
Եւ սըրտի մըտօք ասեմ, և քաղցր առ քեզ լինել կամբմ:
Արի՛ ստ կամաց խորհրդոցըզ գործ տեսիր. և մի գըլար:

Զայս խօսեալ՝ յորդորեցոյց զյառաջամբարն զԱթենաս.
Որ Թուուցեալ ի գազաթանց Ոլիմպոսին էջ ճեպընգձեպ:

Այլ զՀեկտոր՝ Ժիրն Աբիլլէս հապ ըշտապաւ վանէր ան.
[գուլ:

Որպէս զեզնորթ ի լերինս յորժամ բարակ հետաժարէ
Պոստուցեալ ի խըշտեացն ընդ ձորամէջս և ընդ անտառս,
Եւ ըզնա՝ Թըփամուտ Թէպէտ յահէն սալարիցի,

Բայց ըզկնի հետազօտեալ ընթանայ ցանգ մինչև դըտցէ.
Այսպէս ոչ Թաքեալ Հեկտոր ի սրայարձակ Պելիտածնէն:

Եւ քանիցս անգամ գիմեալ ի գարգանեան գէպուզիզ գրունս
Անոյր վազս արշաւասոյր ընդ ամբաշէնն աշտարակօք,

Զի Թերէս ի վերուստ լիցին օգնել նըմին նետիւք,
Նոյնքանիցս աճապարեալ վանէր ըզնա յառաջ ի գաշտ,

Բայց և նա գարձեալ անգրէն միշտ ի քաղոք կոյս սըլանայր:
Զոր օրինակ հասանել ընթացելոյ չէք ինչ յանուրջս,

Ոչ փախչել մին ի միւսմէն, ոչ Ժամանել կարէ միւսուսն,
Ըմբռնել նոյնպէս ոտիւք սա զնա չմարթէր, ոչ նա զեր-

Եւ զիմրդ էր Հեկտորի յօրահասէ մահուն ապրել, [Ժուլ:
Թէ զայս յեաին նուագ և վերջին ոչ Ապոլոն մօտաչէր առնա,

Որ զարթոյց ըզգօրուԹիւն նորին և զԺուկսըն ճեպելիս:
Իսկ գիւցաղարմն Աբիլլէս սաստէր գըլխոյն ի զօրականն,

Եւ նետիւքըն գառնաթոյն՝ ձիգ ի Հեկտոր չըտայր գընել:

Մի խոցեալ ուրուք տարցի զպարծանան և ինքն երկրորդ
[բայցէ:

Իսկ յորժամ չորիր նըւագ ժաման եղեն յազրերակունան,
Առեալ յայնժամ զոսկեղէն կըշիռսըն Հայրն եհան ի վեր,
Ի նըժարսն ընկէց երկուս երկարաքուն մահուն վիճակս.

Ըզմինն՝ Աքիլէի, զմիւսն Հեկտորի ձիահրմտին,

Եւ զմիջոյն կաշեալ ամբարձ, և Հեկտորեան օրհասին բաշխ
Ի գըժոխս էջ մէտ ի մէտ. Գուշակն ելիք զինքն Ապոլոն.

Եւ առ Պելեանն՝ Աթենայ հասեալ խաժակն աստուածու.
[հւոյն,

Առ ընթեր մատուցեալ՝ բարբառեցաւ զթեւաւոր բանս.

Ակն ունիմ արգ, սիրելիդ Արամազգայ՝ վեհգ Աքիլլէս,

Մեզ պարծանըս մեծ տանել պայտեցւոց ի նաւատորմն

Ըսպանեալ ըզՀեկտոր զանյաբագոյնն ի պատերազմ:

Ձեք արգ այլ ևըս նմա փախըստական ապրել ի մէնջ,

Եւ ոչ թէ յոյժ իմն Ապոլոն կորովաձիգն աշխատ լիցի

Առ ոտս հօրն ասպարափառն Արամազգայ թաւալելով:

Սակայն գու կաց առ տեղեաւս և ոգի առ, և ես երթամ

Եւ ըզմորս իւր հաճեմ՝ կալ գուպարել ընդ քիզ ի մարտ:

Ջայս ասաց Աթենաս, և նա բերկրեալ հոգւովն անսաց,

Եւ եկաց ի վերայ պըղընձատէգ հացւոյն ի յեց:

Իսկ նորա թողեալ ըզնա՝ ի գիւցայինն Հեկտոր չոգաւ

Անձամբ և անվրկանգ ձայնիւ հանգոյն Դէիփոքեայ.

Եւ կացեալ առ ընթեր՝ բարբառեցաւ ըզթընչուն բանս.

Ձիգ ըզհետ մըտեալ, եզբայր, տաղնապէ զքեզ ժիրն Ա.
[քիլլէս

Ջոստանիւըս Պրիամեան երագ ոտիւքն հալածելով.

Ե՛կ ազէ՛ զտեղի տուցուք, և պընդապէս կալցուք ըզդէմ:

Ես նըմա պատասխանի մեծըն Հեկտոր սազուարտաճօճ.

Յիրաւի, Դէիփոքէ, ինձ սիրելի էիր կանխաւ

Ի մէջ եզբարց զոր Պրիամոս և Հեկարէ ծընան որդիս,

Եւ այժմ՝ ևս առաւել դընեմ ի մտի մեծարել զքեզ.

Քանզի՛նգ յակն արկանելզ՝ յանձին կալար իմ ազագաւ

Սըանել ըստ պարիսպն, իսկ այլք ի ներքս անդ կան մընան:

Առ նա կըրկնեալ Աթենաս ասէ խաժակն աստուածու.

Եզբայր՝ յոյժ աղաչէին արգարև հայրն և մայր արգոյ [հին.

Եւ ընկերք միահոյլ՝ զծընկովք փարեալ մի՛ ստ միողէ
 Մնալ ինձ անդ, զի այնպիսի զգողի հարեալ կան համօրէն.
 Սակայն անձն իմ յիս ի ներքս յանհընարին սուգ տառապէր:
 Օն արդ այժմ գէմ ընդ գէմ մաքառեսցուք արիաբար,
 Մի արգեանց ինչ առնիցի խընայ, ատեսցուք թէ Աքիլլէս
 Հարեալ ըզմեզ՝ արիւնոտ տարցի՛ կտպուտ ի գոգեալ նաւան,
 Եթէ թերևս ի քումմէ դեղարդանէզ անկցի տապաստ:

Չոյս ասէր Աթենաս և նենգանօք կարապետէր:
 Իսկ յորժամ ընթացեալ հասին սոքս հուպ առ միմեանս.
 Առ նանախ բարբառեցաւ մեծըն Հեկտոր կորգակախորիսա.

Ոչ ևս այլ, որգիդ Պելեայ, երկեայցի բէն, որպէս յառաջն
 ԸզՊրիամոս մեծ ոստանիւ փախեայ երիցս, ոչ ժուժեցի
 Կալ առաջի եկից քոց. բայց այժմ՝ հոգիս զիս յորգորեաց
 Ի դիմի քեզ հարկանել, զի կամ սպանից կամ զբաւիցիմ:
 Այլ արդ եկ՝ ըզդիտն ընդ մեզ կալցուք վըկայս, նոքին լիցին
 Վեհագոյն երաշխաւորք և ոստիկանք դաշանցս ուխտի.

Մի ես ըզքեզ զըզուեցից գըժնէաբար թըշնամանօք՝
 Թէ ինձ տայցէ ժոյժ Արամազգ, և ըզհոգիդ քո խլիցեմ:
 Այլ աւար առեալ ի քէն ըզըքնաղ դէնսըզ, Աքիլլէս,
 Տաց աքայեանց ըզմարմինդ, ըզնոյն և գու՝ նդ իս առնիցես:

Ակնարկեալ շոյտն Աքիլլէս ի նա տիգօք աչաց՝ ասէ.
 Մի՛ նդ իս, Հեկտոր՝ գըժպըհիդ, ըզսլայմանայ ինչ բան ճա.
 [ուեր.

Չոր օրինակ առիւծուց և մարդկան չիք ինչ ուխտ աննենգ,
 Եւ ոչ գոյլք և գառնիք հաւանընկերք միամըտեն,
 Այլ չարիս միշտ ի վերայ խորամանդէն միմեանց անգուլ.
 Նոյնպէս ոչ գոյ ինձ և քեզ գալ ի համբոյրս, և ոչ գաշինք
 Եղիցին մեզ բընաւ, չև միոյն գի անկեալ թաւալ
 Տալ արեամբն յագուորդ Արեայ՝ գըժոխախեռ գուպարողի:
 Չամենայն ազգ քաջութիւն յաչքս քո գիր, պիտի յոյժ արգ
 Լինեւ քեզ կորովատէզ և քաջապինդ պատերազմող: լբաս
 Չիք քեզ այլ ևս ինչ փախուստ, և Աթենասն ըզքեզ Պալ-
 Նուաձեսցէ փոյթ յիմ աշտէն, այժմ՝ հատուցես միահա-
 [զոյն

Չհամօրէն ցաւս ընկերացս որ ի մըկունդ մոլեալ սպանեւր:
 Ասաց, և ճօճեալ զերկայնաստուերն ընկէց նիզակ.

Չոր տեսեալ ի հանգիպոյն՝ խուսեաց Հեկտոր շքեղաճոխ,
 Զի նախատես լեալ նըստաւ, և պղընձի տեղն անց ի վե-
 [րուստ]

Վարսեցաւ ի գեաին, զոր Աթենաս խըլեալ Պալլաս,
 Աքիլլեայ՝ գաղա յիշխանէն արանց մատոյց ի Հեկտորէ:
 Իսկ Հեկտոր առ հրաշակերտըն Պելիսեան բարբառեցաւ.

Վրիպեցեր. Աքիլլեա աստուածանման, և ոչ ծանեար
 Թէ եհաս ճակատագիրս յԱրամազդայ, բայց ասացեր.
 Այլ խօսող ոք գըտար և խաբեբայ նենգապատիր,
 Զի զկորով և զարուժիւն յահէ քուամե մոռացայց ես:
 Բայց ոչ յիս ի փախըստեայ հարցես նիզակ ընդ թիկնամեջս,
 Այլ ի կուրծըս գէպուկիղ վարեալ մըխեա յարձակելոյս՝
 Թէ աստուած եա քեզ, և արգ յիմե պղընձի տիգէս խու-
 [սեա,

Չոր ո՛ տայր՝ թէ առնուիր զայն բովանդակ ի քո մարմինդ:
 Յայնժամ քով սատակելով թիթևագոյն լինէր արգեօք
 Տրովացւոցըս պատերազմ, զի դու նոցին եղնուն ես մեծ:

Ասաց, և ձօճելով զնիզակն էարկ զերկայնաստուեր,
 Եւ գիպոյց անվրէպ ի պորսըն վահանի Պելիսածնին. [տոր
 Բայց ի բաց թօթափեցաւ տեղն յասպարէն, ցասեալ Հեկ-
 Զի աշտէն երագաթև ի զուր սլացաւ յիւրմէ բողկէն,
 Եւ եկաց կոր ի գլուխ, և չէր իւր այլ գեղարդն հացի.
 Եւ ձայնէր զՌէիփոբոս սպիտակասպարն ուժգին գոչմամբ,
 Եւ խընդրէր ի նմանէ մըկսւնդ երկայն, իսկ նա չէր մերձ:
 Խեղամուտ եղև Հեկտոր յիւրում սըրաին և խսսեցաւ.

Վահանշուշտ գիք յայանապէս հրաւիրեցին զիս առ ի
 Զի զգիւցազն համարեցայ զՌէիփոբոս ընդ իս լինել, [մահ,
 Սակայն ինքն ի պարըսպին, և զառանցոյց զիս Աթենաս:
 Իսկ արգ մերձ առ իս է մահ եղեռնաւոր, և ոչ հեռի,
 Եւ չիք հրաժեշտ, զի հաճոյ ի նախնըմէն այսպէս եզև
 Արամազդայ և Նետողին՝ որգւոյ իւրում, որ զիս կանխաւ
 Մըտագիւր պահպանեցին, իսկ այժմ Օրհաս յիս ժամանէ.
 Սակայն մի վատաբար կորեայց բընաւ անփառունակ,
 Այլ մեծապարծ ինչ ցուցեալ և առյապապցն արժանալուր:

Չայս խօսեալ և ձրգեաց ըզուրն հատու վաղակաւօր՝
 Որ կախեալ կայր զազգերէն՝ ըզմեծամուրն և զմեծատարր,

Եւ կըծկեալ ընդոտտեալ իբրև արծուի բարձրաթռուիչ՝
 Որ յամպոց խաւարային սլացեալ ի գաշտ ասպատակէ
 Յափըշտակել զորոջ մատաղ կամ զնապաստակ վատասիրտ,
 Նոյնպէս Հեկտոր խոյացաւ շողացուցեալ ըզխարբն սուր:
 Աբրացաւ և Աքիլլէս, սիրտ ամենի լի բարկութեամբ,
 Եւ ծածկոյթ արկ ըզվահանն ի հանգիպէ լանջաց իւրոց
 Ըզբքնազն արուեստակերտ, և սաղաւարտ չորեքխորան
 Տատանէր փայլակնացայա, և դեզափայլ ծածանէին [հոծ:
 Ոսկեգէպք զորս Հեփեստոսն էր ի խորանն անգ արկեալ
 Որպէս ի խոր գիշերի յարփեցըն պարս աստղ ընթանայ
 Փիշերավարն կսռուցեալ գեղեցկագեղ աստղ ի յերկինս,
 Յայտէին այսպէս նըշոյլք ի սուր սլաքէն զոր Աքիլլէս
 Հեկտորի գիւցազարմին խորհեալ ոճիր՝ ճօճէր յաջում
 Ի կայտառ գիտեալ իրանն. ընդ որ լիցի զէն գիւրամուս:
 Եւ զնորա մարմինն ողջոյն պատէին զէնքն պղընձաձոյլք,
 Գեղեցիկք, զոր կողոպտեաց ի Պատրոկլէ սպանեալ ըզքաջն.
 Այլ երևէր, ուր անրակքն յօգին յուսոց ի պարանոց,
 Շընչափողն՝ յորում և է հոգւոյն կորուստ երագահաս:
 Ընդ այն գիւցազն Աքիլլէս ի յարձակեալն ի վերայ իւր
 Մըխեաց զարգն, և ընդ փափուկ ունն ել սրլաքըն թափան.

[ցանց.

Բայց հացին պղընձազէն ոչ ըզկոկորդըն խըզրատեաց,
 Մինչև չկարել ինչ խօսել նըմա բանիւք պատասխանի:
 Զգեանեցաւ ի փոշոջ, և Աքիլլէս պանծաց գիւցազն.

Ասէիր երբեմն, Հեկտոր, ի կողոպտելք ըզՊատրոկլէս,
 Անպատուհաս կալ յինէն հեռաւորէս ակն ինչ չածեալ:
 Պանգոյր, նըմա մեծազօր քինախընդիր անգ ի բացէ
 Ի քաշախըն գոգաւորս ըստ նըմանէն մընայի ես՝
 Որ ըզծուկըս քո լուծի. և արդ ըզքեղ շընուին և հաւք
 Կեղեքեսցեն գէշագէշ, իսկ զինքն աքեանք յուզարկեացեն:

Եւ յոգիսն ասպատան սազուարաաճօճն ասէ Հեկտոր.
 Վասն արևուզ և ծընկացգ, յանուն ծնողացըգ պաղատիմ,
 Մի՛նկենուր զիս առ նաւուք՝ աքայեցւոց կուր լինել շանց,
 Այլ պըզինձ և ոսկի բազում առեալ քո ի պարգև,
 Զորըս հայր իմ և մայրըս մեծարոյ մատուսցեն քեզ,
 Ըզմարմինս ի տուն գարձո, զի զմահացեալս՝ ի հրոյ խարոյկ

Վիճակեսցեն արովացիք և ամուսինք արովագացւոց :

Երագոտն Աքիլլէս խոթոտելով ակամբ ասէ .

Մի գու, շուն, ծընկօքս իմովք զիս ազաչեր, և մի ծնողօքս .
Յանկարծ սիրտ իմ զիս ինքն և զայրացուկքս յօժարէին,
Յօշեալ ողջ ողջ ուտէի զմարմինսդ յոր սակս ինձն արարեր .
Վասն որոյ և չիք ոք այն՝ որ ի գըլխոյդ վանեսցէ զշունս,
Նա և ոչ՝ տառնագատիկ, քսանապատիկ նոյնչափ պարգևս
Այսր ածեալ թէ կըշուեսցեն, և ուխտեսցեն այլևս յուրովս .
Նա և ոչ՝ եթէ նդ ոսկւոյ բառնալ ըզքեզ տացէ հրաման
Դարգանեանըն Պրիամոս, և ոչ այնպէս արգոյդ քո մայր
Յանկողին կողմնեցուցեալ կոծեսցի զքեզ զիւրըն ծնունդ .
Այլ ձըրձեսցեն զքեզ ողջոյն պատառ պատառ շունք և թըռ .

[չունք :

Իսկ Հեկտոր կորդակաճօճ յոգւոց պարզելն ասէ առ նա .
Հայեցեալ ՚ի քեզ ուշիւ՝ ՚ի միտ առնում թէ չգոյր ածել
Զքեզ յաղերս, զի սիրտ անշուշա ի լանջըս քում է երկաթի :
Այլ արգ տես, գից ինչ գուցէ վրէժխընդրութիւն քեզ առ .

[նիցիմ

Յաւուրն յորում Պարիս և Ապոլոն Գուշակն ըզքեզ
Կորուսցեն ըզքաջայաղթըզ հուպ առ գրունս Արևմըտից :
Ի խօսել իւրում զայս անկաւ զիւրե վախճան մահու,
Եւ հոգին յանգամոցըն սըլացեալ էջ ՚ի գըժոխս
Ընդ բախտն իւր ճըչելով, թողեալ զարբունն և զարութիւն :
Առ նա գիւցազն Աքիլլէս և առ անշունչ բարբառեցաւ .

Մեռիր գու . իսկ ես զՍրհասն՝ ուր կամք իցեն Արամազ .
Եւ այլոց գիցն անմահից դընել վըճիւ՝ անգ ընկալայց : [գայ
Ասաց՝ և ի գիոյն ձըգեալ եհան զարգընն պղընձի, [ծոյր .
Եւ եգեալ զայն ՚ի մի կողմ, զարիւնոս զէնսն յուսոց զեր .
Իսկ ՚ի վայրն ընթանային այլ ևս որգիք աքայեցւոց,
Հայէին սքանչացեալք ընդ հրաշալի գեղն և հասակ
Հեկտորի՝ առ որ չեկաց ոք մերձ առանց վէրըս տալոյ :

ՀՈՄԵՐՈՍ . Իլիական :

ԿՈՒԻ ԶՄԱՐՄՆՈՎՆ ԿԵՐԻՈՆԻ ԵՒ ՄԱՀ ՊԱՏՐՈՎԼԻ

Զայս ասէր և ի գիւցազն անդր ընթանայր ի Կերբիոն
 Զարչաւանս առիւծուն, որոյ զփարախս հարեալ աւար՝
 Վէրս ի լանջսն էառ, և կորոյս զինքն իւր զորութիւն.
 Սոյնգունակ, Պատրոկլէ, ի Կերբիոն ոստեար մուտալ:
 Բայց անդուստ և Հեկտոր վազեաց յիւրոց կառացն յերկիր.
 Երկոքեան զԿերբիոնէ ոգորէին իրր առիւծունք
 Որ զգէշ արկեալ եղանէն կռուին լերին ուրեք ի սնարս
 Երկոքեան սովալըլուկք և մեծամեծըս փըքալով.
 Այսպիսի զԿերբիոնէ երկու հըմուսք պատերազմի,
 Պատրոկլոս Մենիտեան և փառացի չըքեզն Հեկտոր,
 Բորոքէին ըզմիմեանց ձեղքուլ իրանս ի սղինձ անգութ:
 Իբրեւ գամ մի Հեկտոր կալաւ զգըլխոյն, ոչ ևս թողոյր,
 Իսկ Պատրոկլոս յայնրմ կուսէ բուռըն զոտիցն հարեալ ունէր.
 Եւ այլ տրովեանք և դանայիտք մարտ իմն հըզոր խըմքէին
 Օրինակ իմն Հարաւ և Հիւսիսակ դուան՝ գիրեարս [անգ:
 ի թաւուտըս լերանց՝ ըզլտոր մայրիս տալ ի գըլորդ,
 Ըզփիձին և զհացի և ըզգավարսըն կարծրատորր,
 Որ կոծեն ընդ միմեանս զաճունաճիւղ ոստոցն ուղէշ
 Ի խարչափ ահագնալուր, անդ բեկտեւոցըն ճարճատիւն.
 Նոյն յիրեարըս գիմեալ տրովադացիք և աքայեանք
 Զարդէին, և ոչ ոք բնաւ զկորըստականն յիւր փախուստ:
 Եւ բազում սայրասուր զԿերբիոնիւ մըխեցան տէգք
 Եւ ի լարիցն ազեղանց ոստուցեալ նետք թեթևաթևք.
 Եւ զվահանսըն անարի վէմք խուռնախիտ խորտակեցին
 Ըզնովաւ մարտուցեւոցն. ինքն ի մըլրիկ փոշոյն գառեալ
 Մեծայաղթ մեծատարած, հեծեւոլթեանցն անյուշ գընէր:
 Մինչև շուրջ ըզմէջ երկնաւ թևապարէր ակն արևուն,
 Ի կողմանսն երկուսին գեպէին ձիգք, անկանէր զորն.
 Իսկ յորժամ ընդերեկս արեգականըն խոնարհեալ,
 Զորաւորք էին յայնժամ աքայեցիք ի վեր քան զբախս,
 Եւ զգիւցազն ի նեաից ի բաց հանին զԿերբիոնէս
 Ի խազմն տրովադացուց, և զգէնսն յուսոցըն կապտեցին:

Այլ Պատրոկլոս ի արողեանսըն չարախնամ յարձակեցաւ,
 Եւ երիցըս խոյացեալ ժիրն Արիսի հանդիսարագ՝
 Գոռալող ահեղաբար, և արս ըսպան երիցս իննեակ:
 Իսկ ի չորիբ նըւտգին շահատակել աստուածապէս,
 Անդ, Պատրոկլէ, քեզ մօտալուտ երևեցաւ կենաց կընիք,
 Զի նդ առաջ ելքեզ Գուշակն ահեղ ի ժանտ գուպարածին:
 Իսկ ինքն ոչ ետես ըզնա՝ զի գնայր և գայր յամբօխի անդ,
 Զի Թանձրահոծ մըռայլիւ պարունակեալ ել նա ի դէմ:
 Կաց յետկոյս և վայրաբեր կոփեաց ձեռամբըն բըռընխէթ
 Ի Թիկուունն և ի լայն ուսս, աչք իւր ցնորեալ պըտուտակե-
 Ի գըլխոյն Ապոլոն Գուշակն ընկէց ըզսաղաւարտն, [ցան:
 Եւ փողած և գըլխանոցըն Թաւալգլոր հանէր բոմբիւն
 Աւ սըմբակս երիվարացն, և պըղծեցան բաշք գիսագեղք
 Ընդ արիւն և ընդ փոշի, զոր չէր օրէն յառաջագոյն
 Ազտեղիւ հողաթաթաւ ըզսաղաւարտն ձիաբաշ,
 Այլ ըզգլուխըն շնորհաշուք զաստուածեղէն առն և զձակաստ
 Պահէին զԱքիլլէայ. բայց Արամազդ յայնժամ ցձեկտոր
 Ես ի գլուխ իւր կըրել, սակայն առ գուրս իւր կայր կո-

[րուստ:

Ի ձեռին իւրում նիզակըն բեկտեցաւ երկայնաստուեր
 Ծանըր, մեծ, հաստ և սլաքեալ. պըճըղնաւոր վահանն յու-

[սոցն

Անկաւ ընդ գետին՝ փոկոփն հանդերձ յոր կայր կախեալ,
 Եւ զպահպանակս իւր ելոյծ Ապոլոն ուստր Արամազդայ:
 Եւ վըթար զմտօքն եկեալ լըքան անգամքըն բարդաւաճք,
 Եւ յապուշ կըրթեալ եկաց. և մօտ հասեալ գարդանեան

[այր՝

Սլաքասուր գեղարդեամբ ըզթիկնամէջսըն հար խոցեաց,
 Պանթոյեանն Եւփորբոս՝ ի համատիսն իւր վեհագոյն
 Տէգընկէց և կառավար, երագասուր յոտիցն արշաւ.
 Զի և քըսան այր երբեմն էարկ տապաստ նա յերկձիոց
 Զառաջինն եկեալ կառօք առ ընդ մարտից անցանել կիրթս.
 Աւաջին նա իսկ զաշտէն, հեծեալ Պատրոկլէ, ի քեզ ընկէց.
 Եւ ոչ պարտեաց, այլ անգրէն շուպեալ զհացի տէգն ի մար-

[մնոյն՝

Խառնեցաւ դարձեալ ի խուճքն, և ոչ կալաւ Պատրոկլէ

[ժոյժ,

Թէպէտ մերկ և կողուցուտ էր նա ի խռան մարտամբոխին :
Բայց եղեալ աստուածահար և ի միջնդէ խոցեալ Պատրոկլ՝
Յընկերացն ի գունդ խուսեաց՝ յորահասէն եղեալ պատկառ :

Իսկ Հեկտոր՝ իբրև ետես ըզմեծասիրտըն Պատրոկլոս
Անդրէն յետս ընկըրկեալ և վիրաւոր սուր պըզընձով .
Մատուցեալ հուպ առ նա ի գասականն՝ եհար ըզտէգն
Ի ներքին սընակուշան, և մըխեալ Թափ ըզսայրն եհան :
Փըլաւ նա գետնաարով և զգունգն աքեան յոյժ Թաղծե .

[ցոյց՝

Որպէս ըզկինձ աննըւաձ բըռնահարէ մարտիւ առիւծ ,
Որք ի գլուխըս լերին ոգորէին գուռզամիտ
Ըզդոյզն աղբերականց՝ յոր երկոքին կամին ըմպել ,
Եւ զսաստիկ հինինեալն՝ ուժով մեծաւ պարտեաց առիւծ .
Նոյն նըման ըզՄենիտեայ հըզօր որդին զբազմախոզիող՝
Պրիամեանն Հեկտոր մօտուստ եհար յոգի նիզակակուր .
Եւ խրոխա ընդ այն պանծանգք Թըռչուն բարբառ արձա .

[կեաց զայս .

Պատրոկլէ , քանգել անշուշտ համարեցար ըզմեր քաղաք ,
Եւ զկանայս արողուհիս , զազատութեան հատեալ զարև :
Գերի վարել նաւկներովք ի տարփելիք քո բնագաւառ :
Խակամիտ , վասըն նոցա Հեկտորի ձիքն երագաթօռիչք
Արշաւին սըմբակատրովի ի կուր, և ես ի տէգ նիզակ
Չանցանեմ ըզմարտագու արովագացւովքս , և ի նոցունց
Վանեմ զօր գերութեան . իսկ դու լիցիս աստ կուր անգեց :
Այ չըւառ , չօգնեաց ինչ քեզ և Աքիլլէան ըսկայազօր ,
Որ շատ ինչ յոյժ , յանգէն մընալն , ի հրաժեշտիք ես քեզ

[պատուէր .

Բամ մք գու յիս , Պատրոկլէ ձիաւորեալ , դարձցիս այսրէն
Ի նաւքըս գոգաձե՝ մինչև զշապիկան ի լանջըս իւր
Չմարդախօշոշն Հեկտորի պատառեսցես արիւնոսօք :
Չայս ինչ քեզ սասցուրեմն , և զխելարիք միտս հաճեցոյց :
Իոռ յոգւոց պորզելիք՝ առ նա , Պատրոկլ հեծեալ , բար .

[բառեցար .

Պարծեցիր արգ այժմիկ , Հեկտոր , խրոխտով մեծաբանեալ .
Ձի Չըրուանեանն Արամազդ և Ապոլոն ետ քեզ զաղ .

[Թուաձն .

Եւ նորա զիս անաշխատ ի պարտութիւն մասնեցին քեզ .
 Ձի նորին իսկ յուսոցըս շորթեցին զպատենազէնս :
 Այգպիսիք՝ Թէպէտ և քսան պատահէին ինձ ախոյեանք ,
 Սառակէին անգէն բնաջինջ՝ յիմմէ տիգէս անկեալ տապաստ :
 Այլ Հրամանքն օրհասարերք և Լեւոզայ սպան զիս որդին ,
 Իսկ յարանց՝ Եւփորթոս , երրորդ գու զիս առնուս կապուտ :
 Բայց քեզ այլ ինչ ասացից , և գու ի միտըս քո յեռջեր .
 Եւ ոչ գու յերկարակեաց իցես , այլ քեզ իսկ մօտ առ
 [կուրծս

Ահա հասեալ կայ մօտալուտ մահ և օրհաս աններելի ,
 Յիպկիգեսանն Աբիլլեայ պարտել ի ձեռս ըսքանչելոյն :
 Ի խօսել նորա զայս՝ ծածկեաց մահուն զինք կատարած .
 Ի մարմնոցն հագին Թռուցեալ՝ էջ ի՛խաւար Սանդարամետս ,
 Աշխարելով զիւրըն բախտ , Թողեալ զաստիան և զարբուն
 [տիս :

ՀՈՄԵՐՈՍ . Իլիական :

ՄԱՃ ԻԳՊՈԼԻՏԵՑ

Այն ինչ ի գրանց աստի Տրեզեն քաղաքի ել նա ընդ մեզ
 Բազմեալ ի կառս անդ իւր , կային ըզնովաւ լուռ իրրև ըզնա
 Թիկնապահք Թաղծեալ , և գնայր գէպ ի Միկէնըս մըտտ .
 [յոյզ ,

Թողեալ ի ճօճ ըզձիովք զերասանակոսն տատանեալ .
 Սօս երիվարք , որք լի երբեմն ի վեհ աշխոյժ կառավարեալ ,
 Արգ կորագլուխ աղբրահայեացք՝ Թուէին նըմա գու վըշ .
 [տակիցք .

Ձայն ահագին ել ի խորոց ծովուն , այերք պըղտորեցան .
 Եւ ի ծոցոյ երկրի հընչեաց եղերածայն զարհուրելի
 Առ բարբառն ահարկու պատասխանեալ հեծեծելով .
 Արիւն ի սիրտըս մեր պաղեալ , և ի յայթիւ կացելոց [տին
 Քըստմեցան բաշք երիվարաց . ի մըկանունս անգ լոյծ գաշ .

Յորձնեռանգն յայնժամ ի վերամբառնայր լեռաւըն ջրակու- [տակ:

Մտտեան ալիքն, և փըրփրագէզ թեկատեալ ի գուրս ժայ- [Թքէին

Հրէշ կատաղի՝ սպառնող եղբերքք զինեալ ի լայն ճակա- [տուն,

Ջրահամորթ ծածկեալ իրանն ամբողջ ի Թեփ գեղնաշորթ .
Յուլ ամհհի, վիշապ անսաստ, ի ծամածուռ քընթըռնոց
Ի Թեք գաւակ իւր գալարեալ . և սարսէին ծովեզերք
Ի մըռընչել գաղանին երկարածիգ ի մըռընչիւն :

Երկինք ընդ հրէշըն վայրենի պակեան, երկիր սարսեցաւ,
Պըզծեցան օդք, ծով որ ըզնայն ած՝ ընկըրկեր ահաբեկեալ .
Եւ բնաւք փախեան, ոչ ոք յուժպէտ արիւութիւն խրախու- [սեաց .

Ի մեհեան անգըր մերձակայ անկան բընաւք սպաստանել :
Իպպոլիտ ևեթ՝ զաւակ արժանաւոր գիւցազին՝ [գիմեալ,
Կացոյց ըզձիս . բուռն ի գեղարգն հարեալ, ի հրէշ անգըր
Ի շեշտակի հարուած բանայր խոց լայնատարր ի կըշտին :
Ի զայրոյթ և ի կըսկիծ նըհանգն ի վեր ընդոտուցեալ,
Եկն առաթուր երկվարացն անկաւ անգէն մըռընչելով .
Եւ Թաւալգլոր ըզբոցաշունչ որկորն ի գէմս ածեալ նոցին,
Ընկըոյց ծածկեաց ըզձիանն ի հուր ի ծուխ և յապաժոյժ .
Ահ ըզնոսա խոռվեցոյց, և խուլ յայնժամ ևեթ վարչին՝
Հեստեալ սաստից և շրուշակաց, մինչ նա զրաջան տագնա- [պէր,

Ներկանէին կարմիր ըզսանձս յարիւնախառն ի փըրփուր :
Ատեն՝ տեսեալ իսկ յահագին աղմըլի անդ զոք ի դից,
Մըրրակ ի կուշտըս փոշելից երկվարացն առնելով :
Վարէ ընդ ժայռս ահ ըզնոսա . ճընչեալ լիսեռնըն թեկանի .
Ինքն իպպոլիտ անվեհեր գէտակն ի կառսըն խորտակեալս,
Եւ ի բեկորս ընդ օդս ի Թիւ, անկանի 'նդ սանձսըն խառն [ի խուռն :

Անողորմս այս տեսարան, ներեա իմուժըս վըշտի,
Լիցի աղբիւր ինձ յաւերժից լալեաց . տեսի, տէր արքայ,
Տեսի զորդին քո հէք ձըգեալ ի ձեռաստուն ձիոցն ի քարշ-
Յետս ըզձիանըն կօշէր, նոքա սաստիւքըն սարտուցեալ

Գնային սրարչաւ . Թաթաւէր համակ ի վէրս իրանն ողջոյն :
Հընչեաց գաշտավայրն յաղիողորմ ազազակ մեր .

Բուռն ապա Թափնոցին մեղմեալ ըզկայ առին ոչ ինչ հեռի
Ի վազեմեացըն շիրմաց՝ ուր Թագազանց հաւուց նորին

Պահի աճիւն ցուրտ . գիմեցի ես անգր յոգւոց հանելով ,
Անգր և Թիկնապահ՝ք նորա ըզհեա իմ հասին ,

Հեռք ճապաղեաց արիական արեանըն մեզ առաջնորդեալ .
Ժայռք ի նոցուկն կարմրաներկք , փուշք և մացառք արիւ-

[նաթորք

Ըզկապուտ բոսորատիպ վարսիցն յինքեանըս բերէին :

Հասի առ նա , ձայն ետու . և կարկառեալ նա աջ առ իս ,

Երաց վայրիկ մի զսուկայծեալ ակն և անգրէն փակեալ , ասէ .

Երկինք զանմեղ կեանս իմ բառնան , ո՛վ սիրեցեալ ըզ Թե-
[րամեն ,

Յանձանձեւջիր յետ մահուս ըզվըշտացեալն Արիկիա .

Սւ թէ երբեք հայրն իմ զերծեալ յաւուր միում ի պատ-
[րանաց ,

Ողբայցէ զանպարտակիր աղէտս որդւոյն , գոգջիր նըմա

Առ ի զոողք արեան իմոյ և զըստուերաց ցածուցանել .

Զի քաղցրութիւն արասցէ ընդ գերուհւոյն , տացէ նըմա . . .

Եւ աստ դիւցազն անշքնչացեալ՝ գիական և եթ անկերպարան

Եթող ի գիրկս իմ յաղթանակ տըխրատեսիլ գիցըն ցաս-

Զոր և ոչ ակն հայրենի ըզնա կարող էր ճանաչել : [ման ,

ՌԱՍԻՆ . Փէրբա :

ՄԱՀ ՍՈՒԿՐԱՅՑ

Արեգակըն բարձրացեալ ըզգագաթամբք Ի.Ատայ՝

Ըջթեսեան տաճարին լուսաւորէր ըզկատար ,

Եւ զորմովք Պարթենոնի զիւր ճառագայթսըն ցայտեալ .

Ի բանտըն սողոսկէր , իբր ի յողջոյն գազանաբար :

Երևէր յալիս ծովու ոսկենըկար խելք նաւու

Թիավարեալ ի Պիրէոն ի ձայն երգոց նուիրական .

Էր նաևն այն, որ այսրէն չարագուշակ վերագարձ
Սահմանէր ըզվերջին օր պարտաւորացն առ ի մահ:...

Մընալով արթնութեանն ի քնոյ որդւոյն Սոփրոնեայ,
Բարեկամք ոմանք թաղծեալք ընդ կամարօքն յածէին.
Կին նորին ի վերայ ծընգաց զորդեակըն բարձեալ,
Ըզմանկիկըն մատաղ, որ ձեռն ընդ աղխսըն խազայր,
Եւ տեսեալ ըզխըստասիրտ բանտապանացն յամրութիւն,
Ըզձակասն հարկանէր ընդ պղինձ դըրացըն ժտնախց:
Սմբոխն անմըտագիր ողորմագոչ բարբառոյն՝
Յանցանէն հարցանէր զողոտց նորին ըզպատճառս,
Եւ անգէն գարձեալ յառաջ ըզձանապարհ իւր վարեալ,
Եւ յերկայն անդաստակսն ի խուճըս խուճըս սըփոեալ
Ժողովէր ըզսին զըրոյցսըն հըռչակեալս ի ռամկին,
Պատմելով զբագնաց քանդումն և զառ աստուածսն հայ-
Ըզնոր իմըն կըրօնս ապականիչ մանկըաւոյն, [հոյանս,
Ջանանուն ոմն աստուած՝ օտարոտի առ Հէլէնս:
Շամբչեալ ասէին զայրն և գարշելի ճիւղաղ ժանտ.
Նոր ոմն Որեստէս հարեալ ի դից կուրուժեամբ,
Ջոր պատժէր ի վախճանի արդարութիւնն անադան,
Եւ զոր պարտ էր երկրի զոհել երկնից ի նըւէր:
Դու, Սոկրատ, դու ինքն էիք, որ ի ըզթայս երկաթիս
Վասն արգար ճըշմարտութեան մեռանէիր պարտաւոր:

Հուսկ ապա շառաջմամբ ճըւընչեալ ծըղինեաց զընգանին,
Բարեկամքն ի ներքս հեղան հանդարտաքայլ, վայրակնեալք.
Իսկ Սոկրատ յալիս ծովուն ակնարկելով միանգամ
Եւ զառագաստն հուպ ի Դելոս ցուցեալ մատամբն առնոստ.
« Տեսէք ի ծովուն ըզծաղկազարգ զայդ ըզխելս.
Է նաւըն նուիրական, Թէովրիայն բարեբաստ.
Օն, ասէ, ողջունեցուք ըզմահագոյժգ առագաստ.
Անգէն ի հանգիստ մըտցէ հոգիս ընդ նըմա:
Բայց արգ խօսեցարուք. և ըզհուսկ օրս այս վերջին
Քաղցրախօս զրուցատրութեամբք հանգոյն այլոցն անցուս-
Երբ նաւըն բարեբախտ ի կէտ ուզւոյն ժամանէ, [ցուք...
Ի տեսիլ եղերացն ոչ գադարէ յընթացից.
Այլ ծաղկամբք պըսակեալ, հողմոց պարզեալ զառագաստ,
Մտանէ երգովք ի նաւակայս, որ ըսպասեալ կան նըմա:

Ըստ զըրուցաց քերդողաց, նախ քան ըզժամ իւր վերջին
 Գողտրիկ գեղգեղմամբ քաղցրիկ կարասին աշխարհ :
 Մի հաւատայք ինչ, բարեկամք . քաղցրաբարբառն այն թըռ-
 Առաւել վեհագոյն ազգումն ի գից ընկալաւ . [չուն
 ի մեկնելն ի զուարթագեղ Եւրոտոտայն գարափանց ,
 Ի չքնաղ մարմնոյ անախ հոգին ի կէս փախըստեայ ,
 Ժամանեալ քայլ առ քայլ ի հրաշալեացն գաւառ ,
 Տեսանէ զանմահութեան ըզպայծառ տիւրն ծագեալ ,
 Եւ ի քաղցր զարմացումն ըսքանչեւեացն ընկըլմեալ ,
 Յերկիր ըզնընդութիւնն ի վախճանելն անգ զեղու :
 Ո՛վ որ գայքդ առ գերեզմանն իմ մօտ՝ ի լուր բարբառոյս ,
 Կարասի եմ և ես . հուսի ի վախճանս երգեցից » :

Առ այս բան, ընդ կամարօքն հեկեկանաց հընչեաց ձայն .
 Բարեկամքն մօտագոյնըս պատեցան ըզնովաւ .
 « Եւ քանզի մահ ըզսիրելիք վաղ յոյժ քեցէ առ ի մէնջ ,
 Խօսեաց մեզ ըզյուսոյ և ըզկենացն անմահից » :
 « Զայդ և ես կամիմ, ասէ . բայց մի կացցեն աստ կանայք .
 Գուցէ զոգիս մեր մեղկեցցին հեղձամըղձուկ հեծութեամբք :
 Զարհաւրօք գերեզմանի արգ քամահել արժան է ,
 Եւ ի նոր իմն այլ աշխարհ վըստահ քայլիւք մըտանել :
 Գիտէք գուր, բարեկամք, զի ցանգ յառոյդ իմ ախոց
 Զօրութիւն անծանօթ՝ զիմաստութիւն ազգեաց յիս ,
 Եւ յայանեաց ինձ զօրէնս հանգերձելոյ աշխարհին :
 Յաստուածօց ոք էր արգեզք՝ ի ձայն ուրուք թաքուցեալ ,
 Կամ թէ գաղտ մըտերմութեամբ կապեալ ոգի ինչ ընդ իս ,
 Արձագանգ ապառնեաց և կամ մուսայն քերդողաց ,
 Ոչ գիտեմ . բայց որ խօսէրն առ իս մեղմիկ բարբառով ,
 Յորմէհետէ ի կատարածն իմ մեծաքայլ մերձեամ ,
 Բարձրագոյ խօսելով մատուցանէ մըխիթար :
 Վաղ և ըս ճանաչեմ զաստուածեղէն իւր բարբառ ,
 Թերևս այնու՝ զի սիրա զերծեալ ի զգայութեան ամբոխ .
 Մեծագոյն լըռութեամբ ըզնորա բանսն լըսէ . [մանց՝
 Կամ թէ հաւուն նըմանելով աներևոյժ զօրութիւնն
 Առաւել սըրաառուչ ընդ երեկ կոյս գեղգեղէ .
 Կամ մանաւանդ ի մոռացօնս արկեալ զաւուրըս վախճան ,
 Յեղերս հանդերձելոց հոգիս ի կախ մէտ ի մէտ՝

Լաւ ևս ըզլայնրն ճանաչէ զեկեալն յայլմէ աշխարհէ .
 Զերգ նաւազն յերեկորին թափառական ընդ ալիս ,
 Յորչափ թիավարեալ յեզերսըն կոյս մերձենայ ,
 Ըզձայնսն հընչեալս ի նաւակայս ճըղգըրտագոյնըս լըռէ :
 Բարեկամն աներևոյթ երբէք զիս ոչ լըքանէ .
 Յարաժամ ի բարբառոյ նորին ահանջք իմ թընգեն .
 Եւ ձայն իւր ի սերկեանս իմով ձայնիւրս խօսի .
 Ունկն արգ դիք , բարեկամք , ինքն իսկ ահա , և ոչ ես . . . » :
 Ծակատն հանգարտ և զուարթագին , ահանողիքն յուսով
 Սոկրատ բարեկամացն արար նըշան բազմելոյ . [վառ ,
 Անձայն ահնարկութեանն անդէն նոցին անսացեալ ,
 Աւ եզերքք անկողնոյն նըստան լըռիկ անբարբառ .
 Սիմֆիաս ի վայր զաչոքն ըզվերարկուն իւր ածէր .
 Կերբս ըզթախծալից ճակատն յերկիր խոնարհէր .
 Ի ծիծաղ հենդնական Անաքսագոր ժըպտելով
 Թըւէր նախանձարեկ լինել ընդ բաստ իմաստնոյն ,
 Ըզբախարն ծաղրել և ունչս առնել օրհասին :
 Ի դուռնըն պըզընձի յեցեալ թիկամբն անդանօր ,
 Եւ ածեալ ձեռն ըզձեռամբ Մետասանիցն ըսպասեակ ,
 Ընդ երկբայս և ընդ գութ վարանելով գայթ ի գայթ ,
 Մըրմընջէր ի ծածուկ . « Յինչ ուղղութիւն իւր օգտեաց » :
 Իսկ Փեգոն քան յիմաստունն՝ ի բարեկամն անձկայրեաց ,
 Ըզգէմըն գեղանիս ծալ ծալ հերօքն ըբօղեալ ,
 Մօտագոյն մահձաց մահունն բազմեալ առ ոտս ուսուցչին ,
 Որդեպէս խոնարհէր ըզկըք՝ լովքըն ծընդովք ,
 Ըզքօղարկեալն ամբառնայր աչս ի պաշտելին բարեկամ ,
 Շիկնէր ընդ արտասուսն , և արտասուէր տակաւին :
 Այլ սակայն երկրաւոր տագնապ ցաւոց իմաստնոյն
 Ոչ զօրէր այլայլել ըզկերպարանն և ըզգոյն .
 Աչքն ի վեր ընթեանուլ թուէին հեռի իմն ի մէնջ .
 Բերանն՝ ուր հանգչէր վայելագեղ իւր ժըպտտ ,
 Ի բան պատրաստական՝ կոյր փեռեկեալ կիսաբաց .
 Ահանջք նորա կային ի լուր աներևոյթ մըտերմին .
 Վարսք հերացըն ծոծանեալք ի շունչ հոգմոյ աշնայնի ,
 Ըզգըլխովն յօրինէին պըսակ տըմոյն գուհատեալ ,
 Եւ ի սիւզ առաւօտին տարուբերեալ մերթ ընդ մերթ ,

Նըշոյլս արծաթափայլս ի շահատուն սըփռէին .
 Բայց սակայն ընդ ճակատն այն, յորում գրոշմեալ կայ հոգին,
 Լուսազարդ երևէին խորհուրդք սըրտին վեհիմացք...
 Զերգ ընդ ծով ըզհետ գնացից առագաստին յածին աչք,
 Նոյն բեւեռեալ ըզհայեցուածս ի վեհմականն այն ճակատ,
 Անթարթ զաչսն գիտելով և հազիւ հազ կըլեալ շունչ,
 Բարեկամքն մըտադիրք կային հատեալ ըզհագագ .
 Աչք իւրեանց հայէին ի նա վերջին հուսկ նըւագ .
 Ոչ ևս այլ լըսելոց էին ըզձայն բարբառոյն :
 Զերգ ալիք փեռեկին ի Թափառ շունչ Եւոլեայ ,
 Սիրտք նոցին անհամբերք խօսից իւրոց մընսյին :
 Հուսկ ուրեմն աչքն յերկնից խոնարհեցան ի նոսա ,
 Եւ ինքըն ժըմտելով, որպէս յաւաջն, ըսկըսաւ . [գիտ'...
 « Իսկ զինչ . լայք, բարեկամք, լայք դուք այժմիկ՝ մինչ հո-
 Թօթափեալ մինչ իսպառ զանարգ ըզբեռն մարմնոյն ,
 Թռանիցի առ աստուածս հուսկ, և սըրբանուէր ըզմայլմամբ
 Ողունեալ ըզլոյսն ըինջ, զոր նըշմարեաց իսկ Թերևս ,
 Եւ խընդրեալ զճըշմարտութիւն, ծանիցէ զայն և տեսցէ :
 Է՞ր ուրեմն կեայցեմք, ո՞չ ապտքէն առ ի մահ .
 Հիմ՞ առ սէր արդարութեան ըզլեզուութիւն սիրեցի .
 Առ քնչ ի մահուդ յայդմիկ, զոր կեանս անուանեմք,
 Ոգորեալ 'նդ վատթար կըրից, Թէպէտ գերի այնոցիկ .
 Հոգիս ըզգայուութեամբքս իմովք հանգերձ կըռուեցաւ :
 Լաուութիւն առանց մահու զինչ լինիցի, բարեկամք...
 Մըրցանակ է այն մարտին և կամ պըսակ երկնաւոր,
 Զոր ի ծագս ասպարիզին սուրբ դատաւորն բաշխէ .
 Է՞ ձայն Արամազդայ՝ որ զմեզ ի կեանըս կոչէ . [եռս...
 Օրհնեսցուք ըզձայնդ, ո՞վ քաջք, զոր յայսմ աւուր լըսեմ
 Մի Թողցեն ինձ աստուածք այլ ևս ըզկեսնս յերկարել :
 Զերգ ծառայ պատրաստական ի ձայն կոչմանն ընթանամ :...
 Նոյն և դուք առեալ զաջոյս՝ ի գիրկ մահուն տարայք զիս... :
 Զինչ ուրեմն իցէ մահ . քակտումն անարգ հանգուցին ,
 Անմաքուր զուգուութեան կապից երկրիս ընդ հոգւոյն ,
 Եւ ի նուաստ բեռանէ ազատութիւն ի շիրմին :
 Մահն, ո՞վ քաջք, է փոփոխումն և ոչ Թէ մահ իսկապէս :
 Յորչափ կեսոյ մարդն ի կաշկանդող մարմնոյն կապանըս ճըն-

[չեալ .

Աւ բարին ճշմարիտ ընդ քարշ բերի գանդազկոտ .
 Եւ յընթացից ճանապարհին յուճակեա կարեացըն կասեալ,
 Կորուսանէ զճշմարտութիւն, կամ գրնայ զհետ դայթ ի
 Բայց այն, որ հասեալ ի բաղձալին իւր ի կէտ, [դայթ :
 Զաւուրն յաւիտենից տեսանէ զայգըն պայծառ,
 Զերգ ճաճանչ երեկորին վերձեմելով ընդ երկին,
 Վըտարեալ անդուստ ի բաց՝ դառնայ ի գիրկս աստուածոց .
 Եւ ի ծորանսն ըզմայլականս առատապէս վայելեալ,
 Յօրէ օրհասին առնէ նա սկիզբըն կենաց» : . . .

Լըռեաց նա, և Կերիս միայն եհատ ըզլուութիւն . . .

« Անգր, ասես, քան ըզշիրիմն հոգին կացցէ կենդանի .
 Այլ եթէ վասըն մեր հոգին է լայս ինչ ջահի,
 Յորժամ հուր բոցոյն ըզնիւթ ըզգայութեանց ըսպառէ,
 Յորժամ ջահըն շիջանի, զինչ յայնժամ լոյսն անդ լինի .
 Զահն և փայլ պայծառութեանն համանդամայն եղծանին,
 Եւ անգրէն ամենայնն ի նոյն գիշեր սուզանի» : . . .

Եւ Սոկրատ ըսպասել թըւէր ոգւոյն գալըստեան :
 Ըզմին ի ձեռաց իւրոց եգեալ ի ծնօտի,
 Միւսն յածեալ գեգերէր ի ճակատուն Փեգոնի,
 Եւ զուլամբըն փղոսկրէիւ աստանդական թափառեալ
 Անցանէր և փայփայէր ըզխարտեալ հերսըն վարսից .
 Եւ ապա քեցեալ մատամբ ըզմի յերկայն իւր ծամփց,
 Որք վէտ վէտ ծածանեալ ծաւալէին մինչ յերկիր,
 Ի վերայ ծընգաց իւրոց ըզգիրգ գանգուրսըն ծըփէր,
 Կամ զխոպոպիս խարտիշագեղս հոլովեալ ցիր ի մատունս,
 Խօսէր խաղալով իբրև ըզծեր հրաշազարգ՝
 Որ խառնէ զիմաստութիւն ի խընձոյիցն անապակ .

« Հոգին, բարեկամք, ոչ է նըշոյլն այն տարտամ,
 Որով ջահն ըզգայութեանց լուսաւորէ զմեզ աստէն .
 Ակն է այն անմահական, որ տեսանէ զաղօտ աիւ
 Մագեալ, աճեալ և խոնարհեալ, և նոր ծագեալ վերըստին :
 Իմանայ զի արաբոյ ինքեան՝ կենաց լուսոյն ջահ
 Նըւաղեալ մըթագնի, ինքն անաղօտ մընալով .
 Զերգ ալըն մահացուին՝ որ ի մըռայլ խաւարի
 Կորուսանէ զպոյծառութիւն, այլ ոչ զաչաց տեսութիւն : . . .
 Շատացար արդեօք, Կերիս : Ահա ողջոյնք ինձ վըկայ,

Անմահ՝ ոճն է Սոկրատս Արդ խօսեսցուք զաստուածոց » :

Եւ ահա հասանէր արեգակն հուպ ի լերինս ,
 Եւ քերեալ ճառագայթիւքն իւրովք ըզգաշտս և զալիս ,
 Զողջոյնն հրաշական թըւէր պաշտել աշխարհի ,
 Եւ երթալ վերկենցազել ի պայծառ գիրկս Աստուծոյ :
 Ի ծայրից Տայիգեստայ իջանէին խաշնարօք ,
 Եւ զկողիւք իմեալ շննջէր ըստուերն հեզաշարժ .
 Ի կոհակս ոսկիափայլ ծովու լիւզայր Կիւթերոն .
 Զըկնորսն առաւօտին թափառական դեռ յալիս ,
 Զընդհատեալ ընթացիցն արշաւ մեղմեալ առ ափին ,
 Ժողովէր երգ ի բերան ըզհոգմուռոյցն առագաստ .
 Սըրինգն ընդ անտառս , և երգք յերես մըկանանց
 Ընդ օգոցն հեծուծիւնս հասանէին մինչ առ մեղ ,
 Եւ եկեալ խառնէին ի մեր ալիսուր հեկեկանս .
 Զերգ ճառագայթն երեկորին՝ ըստորասոյզ ընդ խաւար :
 « Փուծասցուք , սիրելիք , աւագիկ ժամ լըւացման .
 Օ՛ն ըստրուկք , արկէք ջուր ի պղքնձածոյն աւազան .
 Կամի՞մ նըւիրել դից սըրբամաքուր պատարագ » :
 Ասաց , և ի ստփորըն կարկաշուն մըխըրձեալ ,
 Զօրէն զոհագործին առ սեզանով պաշտաման՝
 Ըջծորանսըն փըրկարարս էառ անդէն ի ձեռս իւր ,
 Եւ երիցս ի ճակատն հեղեալ ըզլիթան ողողմամբ ,
 Երիցս ըզանջօք իւրովք թափեաց վտակահոս .
 Եւ ապա ծիրանի քօղով ըզջուրսըն սըրբեալ ,
 Օծ ըզհերսն , և անգրէն բարբառեցաւ զայսոսիկ . [տեմք . .
 « Ի մեռաց արկեալ զԱստուած , ըզնորա հետսըն պաշ-
 Էակքս համայն՝ բնակեալք յԱլիմպ և կամ ի կայ Սիեսայ ,
 Աստուծոյ են պատկեր , աստուածարեալ առ ի մէնջ .
 Կամ անուան իւրոյ տառք՝ ի համագոյս քանդակեալք ,
 Կամ ըստուեր ի վերայ սգւօցս արկեալ յԱստուծոյ :
 Յայս գըրոշմն աստուածեղէն ըզնսսս միտք իմ պաշտեն .
 Որպէս զայգն ողջունելով՝ արեգական ասմք ողջոյն : . . .
 Զօրուծիւնն , սէր , ճըշմարտութիւնն , հաստիչ բոլոր բարու .
 [Թեանց ,
 Է նա իմ և միայնն Աստուած ձերոցք աստուածոց » : . . .
 « Գիտիցենս ըզձանսպարհ աներևոյթ աշխարհին ,

Ասէ կերիս . դիւրամատոյց ուրեմն աչաց քոց իցէ » :
 « Սիրելիք , մերձենամ յայն . և ի տեսիլ այնորիկ . . . »
 « Զինչ են պէտք » , ասէ Փեգոն : « Անարատ կեանք և վախ .
 [ճան :

Յանձատոյցն ի մարդկանէ տարածութեան ուրեք կայս ,
 Ընդ երկինս , և թերևս ուրանօր կամքս ի տեղիս՝
 Գոյ միւս այլ իմն աշխարհ , Նլիսեան վայրք կամ երկին , . . .
 Ուր ակն Աստուծոյ լինի հոգւոց լուսատու ,
 Եւ ոչ լոյսն աստուածեղէն ցընդի երբեք ընդ խաւար .
 Ուր շընչոյ տուրևառ՝ կենդանութիւնն է և սէր .
 Ուր մարմինք անմահականք , կամ նորածնեալք անդադար ,
 Ընձեռեն զայլ ըզգայուութիւնս այլոց հեշտից ի վայելս » :
 « Զինչ . մարմինք ի յերկինս . ի միասին մահ և կեանք » :
 « Այո՛ , մարմինք փոխակերպեալք , հոգւով իւրեանց փա-
 [ռազարգք : . . .

Ո՛վ սէր երկնահարաշ , եռանգըն սուրբ , անբիծ բոց .
 Համբոյրք , յ՛որ հոգին խառնի անդարձ ընդ հոգւոյն .
 Յոր տարփուճն անանցական , և սիրուն գեղ անարատ՝
 Արձակեն զուգախառնեալք զանոյշ մըրմունջ քաղցրու-
 [թեան :
 Թէ իշխիցեմ . . . » : Այլ ականիկ ընդ կամարաւն հընչեաց
 [ձայն .

Իմաստունն ըզխօսան հատեալ՝ մատուցանէ ունկն հանդարտ .
 Եւ մեր ամենեցուն ի մուտըս կոյս դառնան աչք .
 Աւանդ , ի յերկնից փախըստական երթայր տիւ :
 Կայր զաչսըն գարձուցեալ Մետաձանիցն ըսպասեակ ,
 Եւ պղընձի բաժակաւն ըզգեղն առ նա կարկառէր :
 Զոր Սոկրատ ընկալաւ անայլայլակ իւր դիմօք .
 Եւ զերգ ձօն նըւիրական վերացուցեալ ի ձեռս իւր ,
 Ոչ ըզբանսն ըսկըսեալս հատանելով ինչ բընաւ ,
 Մինչ չև գատարկեալ զայն՝ լրացոյց զիմաստ իւր ողջոյն :
 Ի կողս անգ բոլորչիս լայնատարած բաժակին ,
 Յորոյ ի ծոցոյն օրհաս միայն կայլակէր ,
 Զուրեալ էր ճարտարին ի շունչ բոցոյ կայծականց՝
 Ըզդիպուած կենաց Փսիքեայ , որ նըշանակն է հոգւոյ .
 Եւ յևրս քաղցրագոյն յանմահութեան ի խորհուրդ ,

Դրրուադ քանդակագործ փղոսկրեայ թիթեռնն թեթև
 Ընկըղմեալ ըզճարաւի շուրթն ի ծորանսն մահու,
 Թեւովքն պարզելովք կազմէր զունկունս անթոյն:...

Իսկ Սոկրատ զըմպանակն ամբառնալով ի ձեռին,
 « Բեր նախ մատուցուք տերանց մարդկան ի նըւէր՝
 Զերջանիկ երախայրիս յաւէժ կենացն անմահից »:
 Ասաց, և ըզբաժակըն խոնարհեալ ընդ երկիր,
 Որպէս այն թէ խնայելով ընդ օշարակ իմն ազնիւ,
 Կսթիլս երկակիս միայն եհեզ առ աստուածս,
 Եւ ի շըրթունսնն ծարաւիս մերձեցուցեալ զըմպելին,
 Դատարկեաց զայն տակաւ անայլայլակ երեսօք.
 Զերդ այր բազմական, չև ի կոշնոցն յարուցեալ,
 Ի բաժակն ոսկեզէն հեզու զգինւոյն մընացուած.
 Եւ յերս քաղցրութիւն վերջնոյ հիւթոյն ճաշակաց՝
 Հակեալ զայն մեղմաբար, ըմպէ կաթիլ առ կաթիլ:
 Եւ ապա ի մահի՞ճ մահուն հանգարտ տարածեալ,
 Իսկ և իսկ զըսկըսեալ խօսիցն եհար բուռն անգրէն.

« Յաստուածս յուսացեալ, հաւատասցուք ի հոգիս,
 Եւ ըզհուր բոցոյ սիրոյն ի սիրաբն մեր սընուսցուք:
 Զաստուածս և ըզմարդիկ միաւորեալ զօրէ սէր »:...

Զերդ տըխուր հեծութեան մըրմունջ թիոյն և ալեաց
 Խառնի նդ նաւաստեացն երգոց ընդ ձայնն ի ծովու,
 Ի ժամ բարբառելոյ իւրոյ թառանջ թախծալից
 Ըզսեմովք բնակարանին լինէր նըմին ձայնակից.
 Ի խընգիր ամուսնոյն, աւս՛ղ. ելեալ գայր Միրտով,
 Դարձ առ մեզ արարեալ ի ժամ վերջնոյ սըզունին:
 Յիմարեալ ապշութեամբ յողոզող քայլիւք գանդաչէր.
 Եւ զժալ ի ծալ ըզգետնաքարչ արկանեղեացըն կախեալք
 Զոյգ տըղայք բոկանիք գընալով մերձ առ նըմին,
 Խուճապող քայլիցն իւրոց հետեւէին գայթ ի գայթ:...
 Սոկրատ ըզմանկունսն ի մէջ բազկացն ընկալեալ,
 Համբուրեաց զայտսըն թացեալս, և խօսեցաւ դաշն ի ձայն.
 Եւ տեսաք զի արուօսր, որ հուսկ վերջինն էր կաթիլ,
 Ի խոնարհ յօնիցն իջեալ յարտեանունսն խաղաց. [ձեալ,
 Եւ ապա նուաղեալ բազկք զորդեական առ գիսն ուղեր-
 « Սոցա հայր եզէ յերկրի, դուք յերկինս հայր էք նոցուն».

Ես մեռանիմ, դուք կենդանիքդ ըզազայ տիրովքն հըսկեցէք .
Ըզգոսա, բարերար գիք, վերին խնամոցդ աւանդեմ...» :

Այլ ահա մահագեղն ընդ երակուննս իւր անցեալ,
Զուխս արեանըն պաղէլոյ կապեալ կասէր յընթացից .
Եւ անգէն ի սիրառն կոյս իբր ըզվըտակ ցամաքեալ
Կեանքն և ջերմութիւն վերբերէին քայլ առ քայլ .
Իսկ անգամքն ընգարմացեալ, վաստակարեկք և արժգոյնք
Ի գալուկն հարկանէին իբրև ըզվէմ Պարոսի :
Զո՛ւր Փեդոն զոտիւք նորին փարեալ խնարչ գըրկապինդ ,
Վառ շընչովն ըզնոցուն ջեռուցանէր ցըրաութիւն .
Ընդ մատամբք մերովք ճակասն և ոտք և ձեռք պաղէին ,
Եւ մընայր մեզ միայն ոգին և ձայն բարբառոյն... :

« Նոճիքդ ահագեմանք, կորացարուք, ասէր նա...
Դուք, ըստուերքդ Աստուծոյ, որ քօղարկէք ըզգէմն իւր .
Ուրուականք սըսապատիրք պաշտեալք նորին փոխանակ .
Շընչաւոր մահկանացու աստուածք մարմնոյ և արեան .
Մոլութիւնք աստուածարեալք ի վերայ պիղծ սեզանոց ,
Հերմէս ոսկեփետուր, աստուածուհիք կիւթերայ ,
Որում գողք և շընացողք պաշտօն ասնին անպատիժ .
Մեծ և փոքր համօրէն Արամազդայ զարմն չնաք ,
Որ զեզեալք ապականէք ըզջուր և զօգ և զերկիր ,
Դեռ սակաւ մի ժամանակ , և ձեր ամբոխ գերապանծ
ՅՈՒՄԱԿԵԱՅ խարխալէլոյ ընդ սըտութեան կործանեալ ,
Տեղի տացէ միոյն Սըրբոյ և բոլորիցն Աստուծոյ .
Նա է Տէր, զոր սոսկ պաշտեմ, և ոյր բընաւ չիք խորան...
Երանի որոց ծընցին ի սըրբափայլն անգ աշխարհ ,
Զոր ալիք Երիթրեայ պատկառելով համբուրեն .
Որք ի ջինջ ոլորտս իւրեանց աեսանիցեն առաջինք
Զասաղ իմաստութեան ընդ առաւօտըս ծագեալ :
Զաջըս ձեր ընդ արեւելքս գարձուցէք, սիրէլիք .
Եկեսցէ ճըմարաութիւն՝ ուստի մեզ լոյսն հասանէ :
Այլ ո՛վ ամիցէ զայն... դու ինքն, ո՛վ Բան Թանձրացեալ .
Դու, զոր աչք իմ տեսին ժամանակացն ի միջոյ .
Դու, ոյր փայլ պայծառութեան ի հանգերձեալըն ցուեալ ,
Գայ զիս լուսաւորել կանխաւ ի ծայրըս կենաց :
Դու եկեալ և կեցեալ, զարժանի մահ մեռանիս .

Ձի ամենայն ճըմարտութեան՝ մահն հատուցումն է վար-
[ձուց:

Այլ քոյին կիսամեռ բարբառդ յաշխարհս հընչեցեալ,
Գոնեա ոչ հանգոյն իմոյս կորըստական եղիցի:
Ձոյնն եկեալ ի յերկնից՝ ոչ ևս ի նոյն դառնայցէ.
Տիեզերք ի թըմբեր՝ քեզ կան ի լուր և քայլեն,
Եւ գաղանիք ճակատագրին յայտնեալ պարզին առ երկիր:..
Իսկ զիճորդ. կասկածեցի ուրեմն ըզվեհ խորհըրդոյդ:..
Այլ յինէն ի վախճանի բարձան համայն պատրուակք,
Օն միտ գիք...»: Խօսէր նա. իսկ մեք ինչ ոչ լըսեաք:
Սակայն շունչ հատկըլեալ հեղձամըղձուկ ի ծոցին,
Ապիկար ի յայանութիւն մըտացն ի ձայն բարբառոյ,
Ի վերայ կիսաբաց չըրթանցն, աւանդ, մեռանէր,
Եւ ապա գոգցես յանկարծ բաբախելով ընթանայր.
Որպէս մօտ յիջանել հասեալ յափուռնսն հայրենիս՝
Կարապն ի դագարել իւրում ըզթևսըն՝ բախէ.
Ի բազուկս անըրջոց թըլէր ի քուն հանգուցեալ:
Փարեալ զմարմնով սիրեցելոյն մերոյ կերիս քաջասիրտ՝
Ըզհոգին փախըստեայ յաջըս նորին կոչելով,
Յեզերս օրհասին հարցաբանէր դեռ ընա.
Եւ ասէր. « Նընջէս գու. քուն իմն արդեզք իցէ մահ »:
Իսկ նորա ժողովեալ զոյժն, և « Արթնութիւն է », ասէր:
« Քողարկեալ իցեն աչքք ի մահատիպ ըստուերաց »:
« Ո՛չ ատեսնեմ ըզմաքրափայլ նըշոյլ ծագեալ ընդ խաւար »:
« Ո՛չ լըսես զազազակ և զհեծութիւն »: « Ոչ բընաւ.
Այլ լըսեմ զի ոսկեհոռն աստեղք զանուռն մի ձայնեն »:
« Ձինչ ըզգաս »: « Ձոր ինչ ըզգայ նորածին որդն ի պա-
Յորժամ աւանդեալ երկրի ըզմորթըն ցամաք, [տեանս,
Եւ զաչկուռնն ապիկարս ի լոյս այգուն փեռեկեալ,
Ի շընչոյ առաւօտին պարսբերի ընդ երկինս »:
« Ո՛չ ըզմեզ խաբէիր գու, աղէ ասա. զինչ հոգին... »
« Անմահ էր հոգին. լիցի ժըմիտս այս վըկայ... »
« Յելանել յանկատար երկրէս առ իմ ըսպասես »:
« Ըսպասեմ, իբր ըզմակոյկն, հողմոյն շընչոյ ի մեկնել »:
« Եւ ուստի՞ եկեսցէ այն »: « Յերկնից »: « Դեռ բան մի
[միայն »:

« Ո՛չ, այլ թող զի հոգիս սաւառնեսցի խաղաղիկ » :
 Ասաց, և կափոյց զաչս ըզհոսակ վերջին զայն նըւագ,
 Եւ այնպէս անբարբառ, անշունչ առ վայր մի եկաց :
 Խարուսիկ ճառագայթ կենաց յածեալ մերթ ընդ մերթ,
 Նըւագ լայս ծիրաներփեան ի տմոյն ճակատն արկանէր :
 Այսպէս անակ յաշնանային աւուրց ի պարզ երեկոյ,
 Ի մեկնել արեգականն յարփիական ոլորտից,
 Ճառագայթ մի մոռացեալ բերի արտաքս յըստուերաց,
 Եւ անցեալ ներկանէ զոսկիափայլ կողս ամպոյ :
 Հոսկ ուրեմն ապա թըւէր ազատագոյնըս շընչել,
 Եւ յերեսն յածեցուցեալ ըզբարեթմիա իւր ծիծաղ,
 « Առ աստուածս ազատարարս, ասէ, ըզզոր մասուցեք .
 Նորքք եմ ողջ » : « Յիմէ՞ արգեօք », ասէ կերիտ : « Ի կե-
 [նաց...]:

Ի շըրթանցն ապա հեղաւ մեղմիկ մըրմոննջ հեծութեան,
 Նըմանեալ մեզուացն Հիպլայ քաղցրածաւալ ծորանաց :
 Զինչ էր այն... : Ոչ գիտեմ. այլ մեք լըցեալք սուրբ ազգ-
 Յանձինս ըզգացաք իբրև զերկրորդ իմն ոգի... : [մամբ,
 Զերդ շուշան յերեսըս ջուրց բախմամբ թիոյն վայրանկեալ,
 Ըզանջօքն հեղաբար գըլուին հակեալ խոնարհէր .
 Յօնքն երկայնք յօրհասէն կափուցեալք կէս մի միայն,
 Զաչօքըն թըմբրելովք անկանելով հանգարտիկ,
 Ընդ խոնարհ ըստուերաւ իւրեանց թուէին, զերդ երբեմն,
 Ամփոփել ըզլուութիւն, կամ ըզխորհուրդսն ըսքօղել :
 Բարբառն ապաժաման ի հոսկ ճախրանս անդ իւրում,
 Ըզկիսաբաց շըրթամբք իւրովք, աւանդ, յածէր տակաւին .
 Եւ ի դէմնն, ուստի կենաց ազգեցուցութիւնն էր մերժեալ,
 Գոգցես իմն անանցական տըպաւորեալ կայր ժըպիտ...
 Զեռք նորին, պահեալ ըզձև սովորական շարժուածոյն,
 Մատամբըն ձըգելովք ցուցանէին դեռ զերկինս...
 Ոչ հառաչք ըզնովաւ, ոչ ողբ լինէր լըսելի...
 Ահա այսպէս մեռաւ նա, թէ մեռանել ինչ էր այն :

ԼՍՄԱՐԴԻՆ

ՈՒԻՍԵՆԻՍ ԸՆԴ ԿԻԿԼՈՊՆՍՍ

Յերկիրն հասաք վէս Կիկլոպայց, նոքա չունին ինչ օրէն,
Միայն ի դիս վըստահացեալք՝ ոչ տունկ տընկեն, ոչ հերկեն.
Անսերմ, անհերկ, ցորեան գարի անգ բուսանի, և այգի
Մեծողկուղեան և գինեէտ, յանձրեն աճեալ Դիոսի.

Իբր անմարդեաց չիք ոչ օրէնք և ոչ ատեան խորհրդիին.
Լերանց բարձանց բնակեն ի ծայրս, ի քարանձաւըս խորին.
Տեարք են կանանց և զաւակաց, և ոչ հոգան ըզմիմեանց:
Եւ կայ անգէն կըղզի խոնարհ առ նաւակայս Կիկլոպայց.
Ոչ մօտ ոչ տար է մայրախիտ վայր այժեմանց անբաւից.
Շըրջին անհոգք զի չիք մարդկան անգ ահ էլից և մըտից.
Զիք անգ որսորդ յոգնեալ յանտառս, յաճեալ ընդ դարըս
[Լերանց,

Ոչ հօտարած, և ոչ մըշակ արօրադիր սերմանեաց:
Անհերկ, անսերմ, վայր անմարդի. անգ այժք պապչեակք
[արածին.

Եւ Կիկլոպայք ի կարմրայտից զուրկ են նաւաց գըլխովին.
Զիք անգ քաշտիկ օգտամատոյց յայց ելանել քաղաքաց,
Որպէս մարդիկ ի պէտս անձանց նաւագնացիկք են միմեանց:
Զէ չար երկիրն և բերէ նա պըտօւղ զամէն ըստ ժամուն.
Զի են անգ մարգք առ ծովափամբ, յուռթիք, կաղուղք,
[բարեբուն.

Որթք անըսպառք անգ բուսանին, երկիրն յարօր է հեշտին.
Եւ հունձք առատք ամարայնոյ, զի յոյժ պարարտ է գետին:
Է անգ անքոյթ նաւահանդիստ, պէտք չեն խարխիս արկաւ
[նեւ,

Ո՛չ լար կապել և ոչ կառանս, կայ անգ նաւազն անարւ
[գեւ.

Կայ և թողու, երբ և կամի և երբ հողմունք շընչեսցեն.
Բայց ի ծայրին ընդ անձաւով ջուր սուրբ հոսէ յաղբերէն:
Անդ իջաք մէք ածեալք ի դից ի յաղջամուղ զիշերին,
Զի նաւքս ի մէգ և յամպ ծածկեալ՝ ոչ շողջողէր մեղ լուսին.
Ոչ ըզկըզգին տես ոք ի մէնջ, ոչ ըզծովափն արեսաստ,
Մինչև հասեալ անգ մեր նաւաց, ամփոփեցաք զառագաստ.

Մովսիսն ելեալք, Թըմրեալք ի քուն մնայաք վեհին մեք այ-
[գունն.]

Մինչև ծագեաց մեզ առաւօտ ծայրահարմիրն արևունն.
Հիանամք ընդ վայրն, շըրջիմք, և մեզ յաւերժհարսունք գե-
[րաբունն]

Ճաշ պատրաստեն, քանզի յարօտ զայծսըն վարեն լեռնա-
[տունն.]

Ճեպ ի նաւաց հաստ զաղեղունս առաք և սուր ըզգեղարգ,
Յերիս առաջս նետահարեալ, ետ մեզ աստուած որս առաւս:
Մէն մի նաւացս երկոտասան՝ ինն այծ առին ի վիճակ,
Առի ես աասն, և յերեկոյն առնումք ըզխահս և բաժակ.
Քանզի անոյշ կարմիր գինին չէր ըսպառեալ ի նաւաց.

Ձի մեք շատ ինչ ամանեցաք յառնուլ զոստանն Կիկոնեանց:
Մօտ Կիկոնայոյն հայիմք ի ծուխն, նոցուն օգեաց ձայն
[լըսէր.]

Արեգն եմուտ, պասեաց խաւարն, հանգեաք ծովուն առ
[եզեր:]

Այգ վարդամատն երևեցաւ, խըմբեալ զընկերս բարբա-
[ռիմ.]

« Մնացէք դուք աստ, ես նաւազնաց յուղի իմովքս անկա-
[նիմ.]

Դիտել զորեարն, արգեօք ժպիրհք են արք վայրագք չար-
[իմաց.]

Եթէ արգեօք արք հիւրասէրք և յաստուածոց երկիւղածոս:
Ելեալ ի նաւն հրամեմ արանց առաւ արձակուրդ կառանաց.
Ելեալ և արքն, առեալք նըստոց, կըռուին քաշտեօք ընդա-
[լեաց.]

Հասեալք ի վայրն ի ծայր վերջին տեսաք անձաւ մօտ ի ծով.
Բարձր էր անձաւն, շուրջ սարգենիք. անգ այծք ուօղիք կան
[յողով.]

Կայր շուրջ պատեալ և դաւիթ բարձր ի վիմատաշ ի քա-
[րանց.]

Հաստահարուստ ի Թեղօշից, ամբարձուղէշ ի կազնեաց,
Ինակէր անդ մարդ սոսկավիթխար, որ հօտ մեկին արածէր,
Հրէշ ահագին, անմերձ յայլոց կայր նա ի զատ և մոլէր.
Ձէր նա իբրև մարդ հացակեր, այլ մայրախիտ արուևան

ինձ երևէր լերանց բարձանց կացեալ յուրոյն գագաթան :
 Թողի զընկերս ի պահ նաւուն , առի ինձ քաջս երկատասան ,
 Առի զգինւոյն տիկն այծենի՝ զոր ետ Մառոն Եւանթեան...
 Հրաշէկ գինւոյս յայս անուշակ քանիցս անգամ ոք ըմպէր ,
 Ի մի բաժակ չսփրս քրտան ջրոյն ի նոյն արկանէր . [գաղ :
 Բուրուճն անմահ խառնարանէն գըրգէր յարբուճն անգան-
 Տիկ մեծ լըցի ի յայն գինւոյն . եգի պարէնս ի մախազ .
 Ասեմ ընդ միտս , որպիսի՞ այր արգեօք ելքէ ընդ առաջ ,
 Բո՛ւռն և վայրագ , ոչ իրաւանց ոչ օրինաց իրազգած :

Ճեպ սըւեալ մեք մըտաք յանձաւն , ընձս ի ներքս ոչ
 [գըտաք .

Յարօտ խաշին իւր գեգերէր . մըտեալք յակճիռս անգ կա-
 [յաք :

Կողովք պանրովք են ակաղձուն . գառամբք , ուլովք լի պա-
 [ուակք .

Ձատ նախածինք , զատ միջնածինք , զատ նորածինք կան ի
 [փակ .

Տաշտք , դոյլք , կըթոցք՝ ամանք հովուին լողան ողջոյն ի շի-
 [ճուկ :

Մաղթեն ընկերքս , ինչ մի կապուտ առցուք պանրոյն և
 [գարձցուք ,

Նյակ գառինս ուուլս պառակաց վարեալ անկցուք մեք յուղի .
 Անուշտ յոյժ լաւ էր այս խորհուրդ , այլ ես նոցա չանսացի .

Կամիմ հիւրոյթ առնուլ յառնէն , այն որ մեզ էր ոխերիմ .
 Ուտեմք պանրոյն , և հուր վառեալ զոհեմք , մընամք վիրա-

[գին :

Եկն յարօտէն . բեռն ահագին հեծան ցամաք յուս բառնայր
 Ի պէտս ընթրեաց , գուրս յանձաւէն ահեղ թընդամար արկ

[ի վայր .

Փախեաք ահիւ ի ներքսավայր . վարեաց ըզհօտն յանձաւին .
 Ձարուսն ամէն խոյ և նոխաղ թող արտաքոյ ի գաւթին :

Բարձեալ ապա եգ անձաւին վէմ յաղթ հարուստ գըռնա-
 [փակ .

Ո՛չ կարէին զայն քառանիւ քրտան ուերկու շարժել կառք :
 Ձայծարն պապչեակս և յոյր զոչխարս էառ նըստաւ և կըթէր .

Առհասարակ կըթեալ կարգաւ , ներքոյ զծընունգսն ար-

[կանէր .

Ըզկէս կաթինըն մահարդեաց եդ ի հիւսեալ սահառի,
 Ըզկէսն առեալ արկ ի յամանս՝ ի պէտտ ընթրեաց ըմպելի:
 Լըցեալ ըզգործն, հուր բորբոքեաց, ետես ըզմեզ և եհարց-
 « Ո՞ էք, ո՞վ հիւրք. ուստի նաւէք, արդեօք ի շահ վաճառաց .
 Արդեօք շըրջիք Թափառականք՝ իրրև ծովու աւաղակք,
 Որք Թափառին անձնանախառք ածել այլոց ըզվըտանգ »:
 Ասաց. և սիրտք մեր հալեցան, տեսեալ ըզհրէչն ահարկու,
 Լըւեալք ըզձայնըն խուժագուժ, բայց և այնպէս ձայն ետու-
 « Մէք ի Տրոյեայ Յոյնք զարտուղիք վարեալք յալիս ամեհի,
 Ուղղեալք ի տուն, հողմավարեալք գամք այժմ ընդ այլ
 [ընդ ուզի-

Այսպէս կընքեսաց զայս Արամազդ. մէք Ատրիգեայ եմք ո-
 [րեար,
 Ոյր արգ մեծ են փառքն ընդ երկնաւ, զի զմեծ սասանն եգ
 [յաւար-

Ագամեմնոն անուն նորա, որ շատ խուժան արկ տապասա.
 Բայց մէք զարդիս առ ծունկըս քո ողորաւորք եկաք աստ-
 Արդեօք հիւրոյթ տան հիւրընկալդ, կամ այլ պարգև ի
 [քոյոց-

Առ քեզ, ո՞վ քաջ, մէք գամք յողոք, գու աին ածցես ա-
 Հիւր որերոյն ողորաւոր Արամազդն է հովանի, [տուածոց,
 Այն վանատուրն սիրէ ըզհիւրս և շուք եգեալ պահ ունի »:
 « Խօ՛ղ ես գու, հիւրդ տարադիմեալ, ձայն մի կըրկնեաց
 [խըժարար,

Որ ինձ հրամես երկիւղագին խորշիլ ի դից գերափառ.
 Ոչ ըզԴիսայ, և ոչ զայլ դից փոյթ ինչ ոչ է կիկլոպայց.
 Մէք քաջք հուժկուք, և Դիոսին չեմես ի խէթն երկիւղած.
 Եթէ կամիմ, ի քեզ ի քոյսդ խնայեմ կամ ոչ, գիտես քաջ:
 Այլ ասս գու, ո՛ւր եհաս նաւդ. արդեօք հեաթ, թէ մտ
 [կաս »:

Ասաց, փորձեաց. այլ խելամոլտ ես խաբանօք տամ բար-
 [բառ-

« Ըզնաւն իմ կուռ՝ վեհ Պոսիդոն խորտակելով հար ընդ ժայռ
 Ի ծագ կըղզւոյդ ի գահաւանդն, հողմունք առին ի ծովէն.
 Ես նըշխարեալ ընդ որերոյս գամ անձնապուր յօրհասէն »:
 Լուռ կաց վիրազն, և Թափ տըւեալ յերկուս իմոց ընկե-
 [րաց,

Քրոնահարեաց և ընդ գետինն եհար կորեանց հանգոյն շանց :
Մորէր ուզեղն, թանայր զերկիր . յօշեալ զանդամս եդ յըն-
[Թրիս .

Լափէր զընգերս, չեթող ինչ միս, չեթող զոսկերս ուղղալից .
Մըռըզդոյլէր սովատանջեալ իբրև առիւծ լեռնասունն :
Սոսկամք ընդ գործն . յերկին ձեռք մեր և արտասուս աչք
[հեղունն :

Կամք յուսահատ . վիրագ Կիկլոպն ելից ըզփորն ահագին .
Հրէշ մարդակերն արբ կաթն անոյշ, պառակեցաւ յանձա-
[ւին :

Ածի զմըտաւ թափ տալ սըրովս ի լանջն ընդ կողն ընդ ողջոյն,
Ընդ ցանգ լերգին . այլ յուշ ածեալ յետըս կայ՝ ի խոր-
[հըրդոյն .

Գառն օրահաս մընայր և մեզ, զի էր անհնար գըլխովին
Վէ՛մ զանարին շարժել ի գրանց . մնայաք սյգուն ցաւագին :
Այգըն ծագեաց . նա հուր վառեալ կըթէր զոշխարսն ըստ
[կարգի .

Մօտեաց զգառինսն, ելից ըզգործն, անդրէն թափ ետ սոս-
[կալի .

Ձերկուս և այլ գօշեալ յիմոցն ճաշ փաղաղեաց զայն համակ .
Ըզհօտն ի գուրս վարէր բարձեալ զայն ահագին դրոնափակ .
Փակեաց դարձեալ զայն հեշտաբար որպէս խուփ մի կա-
[պարճի .

Հորգան խաշին ետ գըղըրդմամբ ընդ գարս ընդ սարս ի վայրի :
Խորախորհուրդ մնացի յայնժամ ըզվրէժ առնուլ վիրագին,
Ո՛վ թէ ինձ փառս տայր Աթենաս . և խորհեցայ զայս վեր-
ջինն :

Կայր Կիկլոպին լախտն ի պառակ բուն յաղթ և մորչ ձի-
[թենւոյն ,

Կըարեաց նա անդ թող ցամաքել . մեք սոսկացաք ի տեսոյն .
էր յաղթ հեծան, քըսանաթի կուռ մեծ նաւուն իբրև կայմ՝
Որ ընդ անդունդըս կըռուեսցի, այնչափ երկայն էր և լայն .
Հատեալ ի բնոյն վեց ոտնաչափ տամ ընկերացս ի յըզկել .
Եւ ես սրածայր գործեալ ըզնա ածի զբոցով ի խանձել .

Եգի նդ աղբոջն անդ գէզագէզ . ապա իմոցս տամ վիճակ,
Վարսել ընդ իս զխանձոցն ընդ ակն, երբ քունն առցէ զայն
[վիրագ .

Եւ ըստ ըզձիս չորից վիճակն և ես էի հինգերորդ :
Դարձաւ նոք երեկս վիրազն յանձան ըզգեզմեարարձ վա-

[րեաց հօտ,

Վարեաց ողջոյն , չեթող ի գուրս կամ յաստուածուստ կամ
[խիթաց-

Փակեաց զանձան կըթէր ըզհօտն և ըզծընունդսն երբոյ ած :
Անգրէն ապա զերկուս յիմոցն յընթրիս գօշեաց յերեկոյն .
Եւ ես հրաւէր ասմ Կիկլոպին ի ձեռս բաժակ սեաւ գի-
[նւոյն-

« Որ ըզմարդկան կերար մարմինս , ընկալ Կիկլոպ , արբ գինի-
Տէս , զժր արբումն ածաբ առ քեզ պահեալ ի մերն ի նաւի .
Ես զայդ նըւէր քեզ բերէի դըթալ յըղեղ զիս ի առն .
Այլ ո՞ յապայս մօտի առ քեզ , վիրա՞ գ մոլեալ գու անհուն .
Ձար գործեցեր , վայրագասունգ » : Լըւաւ էառ ըզբաժակ .
Ըզմայլեցաւ . խնգրէր յինէն կըրկնել զարբումն անուշակ .
« Տճժր ինձ գարձեալ զանունգ ասա . հիւրոյթ աաց քեզ
[խընդագին-

Է Կիկլոպոյց խաղողն արգոյ , յանձրեն աճեալ ՚ի իստին .
Բայց այդ բաժակդ անմահ ճաշակ և նեկտարին է բըխումն » :
Ասաց , և ես հրաշէկ գինւոյն ետու կըրկին ի յարբումն .
Ետու երիցս , արբ նա երիցս անմըտացեալ ի յոգին ,
Մինչև ուրեմն հրաշէկ գինին եկըն զակամբ վիրագին :
Աղու բանիւբ ասեմ յայնժամ . « Ձանունս խընդրես , Կիկ-

[լոպէ-

Բայց գու՛ստ խոսամանգ մի զըրկեսցես զիս հիւրականգ յըն .
[ծայէ-

Ասեմ . Ուգիս է անուն իմ . Ուգիս ծընողք զիս կարգան ,
Ուգիս ընկերքս » : Լըւաւ վիրագն և ձայն խեթիւ ետ յայն
[ժամ-

« Այս քեզ հիւրոյթ . յեա բողորից ուտեմ զՈւգիս ի վեր-
[ըոյ » :

Ասաց , յորսայս պառակեցաւ թեքեալ յազթ զուշն ի յու-
[տոյ-

Ընկլաւ ի քուն խոր թանձրութեան , գինի ժայթքէր կա-
[կորգէն ,

Ձգայուէր գինեաւ , ժայթքէր ի գուրս կոտորս մարմնոց
[մարգկեզէն :

Յայնժամ զխանձողն ի Թանձր յաճիւն՝ մինչ ի ջեռնուլ
[վարեցի .

Եւ գործակցացս մի վեհերել շատ քաջալեր ես տայի .
Իբրեւ գալար ձող ձիթենւոյն անդ հրավառեալ կարմրացաւ .
Առի ի հրոյն , շուրջ կան ընկերքս . Աստուած ոյժ մեզ հեղ
[ամբաւ .

Մօտ առ վիրագն առեալ սրածայր զխանձողն ի յաջօ վար
[սեցին :

Ի վեր կանգնեալ ես ի ծայրէն պրտոյտ տայի խանձողին .
Որպէս յորժամ ըզնաւափայտն ճարտար գըչբաւ Թափ ծա
[կեն ,

Ուայլք երկուսսեք շըրջեն փոկով և զնա անգուլ պրտուս
[կեն .

Այսպէս զխանձողն ըզհրավառեալ պրտուակէպքի յականն ,
Եւ ընդ հեծանըն ատրաշէկ վըտակ հոսէր յորդ արեան :
Զարտեանունսն և ողջ ըզլօնսն եկէզ խանձոյն գոլորշին ,
Եւ ասպախառն այրեցաւ բիրն , արմատքն ի հուր շաչէին :
Որպէս գարբին ճարտարապետ մըխել զտապար և կացին
Ի ջուր ի ցուրտ առեալ վարէ , անգուստ շաչիւնք հատա
[նին ,

Քանզի մըխէ և կուռ գործեալ այլ ամբութիւն երկաթոյն ,
Այսպէս շաչէր ակն ըզբընով ատրաշիկնեալ ձիթենւոյն :
Գոչեաց ահեղ , բամբեաց անձաւն , վարատեցաք ի յահէն .
Առ ըզխանձողն արիւնշաղախ կորզեաց վիրագն յականէն .
Մոլէր ցաւոյն , արկ զայն ի բաց , տայր Կիկլոպայց մեծ բար
[բառ ,

Որ բնակէին մօտ անդ յանձաւս ի գահաւանդս հողմահար :
[ուհալք զգոչիւնն աստի անտի վազեալք կան շուրջ ան
[ձաւին ,

Հարցանէին . « Հիմ՛ , Պոլիւփեմ՛ , ցաւեալ գոչես ահագին .
Գոչես ընդ մութն , անքու՛ն առնես . ըզհօտգ արգեօք գո՛ղ
[տանի .

Արգեօք երկեա՛ր Թէ ոք ըզքէզնենգաւ սպանցէ կամբըռնի» :
« Ոչ բըռնութեամբ , խօզ Պոլիփեմն ի յանձաւէն ձայն կըր
[կնեաց ,

Ուզիս ըսպան զիս , բարեկամք , ո՛չ բըռնութեամբ , նենդ
[գործեաց :

« Եթէ ոչ ոք¹, կըրկնեն նոքա, քեզ միայնոյդ չար արար, Յաւ քեզ ուրեմն հաս ի Դիայ, յորմէ խուսել չէք հընար, Հօր քում մաղթեա՛ Պոսիդոնին » . ասեն, գառնան ետ ընդ
 [եա .

Յոյժ խընդացայ . խաբեաց անունս և խորհուրդն իմ խո-
 [րագէա :

Կիկլոպն հեծէր, խարխափ ձեռամբն ան զահագին վէճն ի
 [գրաց :

Նըստաւ առ գուրս, ձեռս կարկառեալ կալցի զելեալն ընդ
 [օդեաց :

Խօլ զիս կարծէր . այլ ես յայնժամ յուզեմ ի միտս այլ
 [խորհուրդ :

Զիարդ գըտից ես հնարիմաց ինձ և իմոցս արձակուրդ : [էր .
 Հընարս նիւթեմ և անգածեմ . օրհասն առ գուրս հասեալ

Եւ ի վերջէ, գոլ անձնապուր, ինձ քաջ խորհուրդ՝ այս
 [Թըւէր .

Ոչխարս արուս յաղթ Թաւագէս առի ես յայն պառակէն,
 Կապոյաք, պարարաք, և լըռելիայն կապեմ յոգորս քաջ-

[հիւսկէն,
 Յորըս Կիկլոպն ընկողմանէր մահաշըշուկն այն վիրագ :

Զերիսն ի մի յայնց ոչխարաց առեալ կապեմ ես արագ .
 Միջինն այր մի տանէր ներքոյ, գնային երկուքն ի կողմանց,

Փըրկեն ըզնա . այսպէս երեքն ըզմին տանին յընկերաց :
 Խոյ մի էր անգ երևելի յաղթամարմին ի հօտին,

Կալայ զԹիկանց, տարածեցայ ի Թաւագեղմն ի պորտին .
 Զերկայն ասրոյն կուռ ունէի պատեալ ձեռամբ քաջաբուն .

Այսպէս անգէն յոգւոց հանեալ սպասեալ մընամբ մեք այ-
 [գուն :

Երբ վարդամատն այդ ծագեցաւ, արուքն յարօտ տան
 [հօրգան,

Իսկ էգքն անկիթք բառաչէին՝ ըստինքն կաթին ի զեղման :
 Կիկլոպն ի ցաւս, զըննէր ձեռամբ զԹիկունս կանգուն ոչխա-

[րաց .
 Ոչ գիտաց խօլն, արք կան կապեալք ասրաբուսիցն առ ի

[լանջ :

1 Քանզի Ուրիօ յունարէն նշանակէ Ուռոյ :

Խոյն եւ յետոյ մեծ դեղմնաբարձն, և ես շատ ինչ անդոհիմ՝
 Ան և ըզսա և չօչափէր. ձայն լըսէի զվիրագին. [ղեալ.
 « Զի՛ քեզ, ո՛ խոյ, զի՛ գաս վերջին. չէր քո երբէք գանգալ.
 Դու առաջին յարօտ մարգաց վազս առնուիր մեծաքայլ,
 Դու ի վըտակս արծաթափայլ գետոց գնայիր առաջին,
 Դու ընդ երեկս նախկին ի գոմն. և արգ մնացե՛ր դու վերջին.
 Թերեւս հովուիգ տենչաս ական, զոր եղծ՝ Ուգիսն ի գինւոյն,
 Ուգիսն այն չար դեռ ընդ. իւրոցն կարծեմ չէ զերծ ի մաւ.
 Ո՛վ Թէ էիր ինձ համախորհ և լինէիր ձայնահասն, [հուն.
 Եւ ասէիր՝ ո՛ւր նա խուսեաց յիմոյն բազկէն յաղթական.
 Քաջ աստ և անդ ուղեղ նորա ցայտէր յատակս անձաւիս,
 Դիւրէր ըզցաւս զոր ինձ հասոյց ումպէտն արանց վատն
 [Ուգիս »:

Ասաց, ըզխոյն եթող երթալ. մեք յանձաւէն վայրիկ մի
 Գնացեալք յառաջ, զերծայ խոյէն, ապա և զայլոքն ըլուծի:
 Վարեմք ընդ մեզ որ շուրջ ըզմեօք շատ յոյր ոչխարս յան.
 [ձաւէն:

Հասաք ի նաւն, տեսին անձկով ըզմեղ զերծեալ յօրհասէն.
 Լային զընկերսն, ես ականարկի յօնիւք առնեմ մի հեծել.
 Այլ ճեպ զոչխարս գեղադիսակ ի նաւն առնուլ և ծովել:
 Մըտին արագ, առին նըստոց, քաշտեօք ըզծովն հարկանեն.
 Գնացաք այնչափ որչափ լըսէր ձայն ի յանձաւն ի նաւէն.
 Զայն կարդացի, կըծեմ զԿիկլոսն, « Արգ, Կիկլոպէ, ո՛ւր
 [քու կաս.

Ուտես, գազանդ, ի խոր անձաւգ ի վատի առն յընկերաց.
 Աղուհեք ըզքեզ առցեն, այ չար. ուտել ըզ՛իւրս քո յարկին
 Ո՛չ քըսմնեցար, վասն այն ըզքեզ Դիոս և գիք պատժեցին »:
 Լըւաւ վիրագն. ի բոց ցասմանն անդ զարոււանն անարի
 Կորզեաց զլերին, արկ առ նաւուռն տար ի զեկէն վայրիկ մի.
 Ժայռըն բոմբեաց, ծով գիզացաւ, յոր.ձանքն ալեաց գարծ
 [առին,

Ծովն ալէկոծ՝ վարէր ըզնաւն և մօտ ձըգէր ցամաքին:
 Զող մեծ առեալ կալայ ընդդէմ զերծուլ ըզմեղ ցամաքէն.
 Զայն տամ գըլխովս Թափ տալ քաշտեաց և խուսափել
 [յարկածէն:

Վարեն ըզԹիսն. իսկ երբ ծովեալ երկիցս այնչափ հեռացաք.

Ձայն առ Կիկլոպ խընդրեմ կարգաւ, կըրկին կըծել զայն վի-
[րագ .

Ընկերքս յողոք թոյլ ոչ տային կ'օցեալք աստի և անտի .
« Ձե՛քեզ, այր դու . հի՛մ գըրդըռես զայրըդ վայրագ ամեհի .
Այն ինչ ի ծով դանեա ձըդեաց վարեաց ըզնաւո ի ցամաք .
Ձերծաք հազիւ . Թէ այլ ձայն տաս, կորզէ այլ ժայռ գը-
[ժընդակ ,

Ձախէ ըզնաւս և զմեր կառափն . այնչտփ նեաէ սոսկալի » :
Ձայս ասէին . բայց և այնպէս ոչ յանկուցին զիմ օրի :

Ձայն զայրագին կարգամ գարձեալ . « Թէ ոք հարցցէ ,
[Կիկլոպէ ,

Ձի՛ գու յաւէժ կաս ի գիշեր, ո՛ գքեզ զըրկեաց յականէ ,
Ասա՛ . քանգիչըն քաղաքաց ինձ Ոգիսէս խաւար ամ ,
Այն Լայերտեանն , որ յիթակէ ունի իւր տունս արքու-
[նեաց » :

Լըւաւ Կիկլոպն , յողոց եհան . « Ա՛հ , հին պատգամքն
[ինձ հասին .

Էր աստ երբեմն այր լաւ և մեծ , էր գուշակաց առաջին .
Անուն նորա էր Տելեմոս , Եւրիմիդեայ քաջ որդի ,
Գուշակուծեամբքն ի Կիկլոպայս հաս յալեոյթ հասակի .
Սագուշակեաց ինձ զամենայնն , ինձ կուրանալ յՈգիւսեայ .
Ցանգ մընայի թէ ոք առոյդ հասցէ աստ այր յաղթ սըրտեայ .
Իսկ զիս ումպէտ այր գուշնաքեայ յաղթեալ գինեաւ կու-
[րացոյց :

Այլ ազէ այր եկ Ոգիւսէս , քեզ լիաձեռն տաց հիւրոյթս .
Քեզ Պոսիգոն հայրս ուզեկից , մաղթեմ որդիս , լիցի արգ .
Նա թէ կամի , զիս բուժեսցէ . ոչ գիքն անմահք և ոչ մարգ :
« Ո՛վ թէ , կըրկնեմ , ես քո զոգիդ ի վիհն յանլոյս տայի ձօն ,
Եւ անդ քո զակն ոչ բուժեսցէ և ոչ ինքնին Պոսիգոն » :

Լըւաւ և ձեռս ամբարձ յաստեզս , Պոսիգոնին ձայն կար-
[գայր .

« Լուր , Պոսիգոն , ծիրանավարագ , երկրասասան , լուր ինձ ,
[հայր .

Թէ ես քո եմ և դու հայր իմ . մի Ոգիւսէս տուն տեսցէ ,
Քաղաքաւերն այն Լայերտեանն , որ տուն ունի յիթակէ .
Իսկ թէ կընքեալ է անսանել տուն և զերկիր հայրենին ,

Գէթ անագան չարաւ հասցէ և վիշտ գրեցէ առաւելին .
 Նաւ զընկերան ողջ կորուսեալ ի նաւ օտար ծով հատցէ » :
 Մաղթեաց վիրագն , անսաց ձայնին վեհ Պոսիդոնն ի ծովէ :
 Բայց նա մոլեալ առ միւսանգամ վէմ առաւել ահագին ,
 Շըրջանակեաց , թափ ետ ուժոյն յաղթարագուկ կորովին ,
 Արկ յեա նաւուն կըշիւ ի խելս գոգցես ի ծայրըն ղեկին .
 Մոլին ի վիմէն ծըփեալ ըղնաւն ի կոյս վարէր ցամաքին :
 Կալաք զկըզղին , ուր գագարեալ նաւք քաջակուռք մեր

[կային ,

Եւ մեր ընկերքն անդէն նըստեալք մեզ ըսպասեալք ողբա .
 [յին :

Ելաք ի գուրս և զլաստափայտն ձըփեմք յաւազն ի գագար .
 Բաշխեմք զոչխարս ըզկիկըպին բաշխ բոլորից հաւասար .
 Ըզխոյն ընկերքս պատուասիրեալք ինձ ի բաշխէն յաւելին ,
 Եւ ես ըզնա յազեմ մեծի ամպահաւաք Դիոսին .

Նըմա զըստիցն այրեմ ըզթամբս , նա չըհոգայր ինչ համբուն .
 Խորհէր զհարդ նաւք կորիցեն , ի նոյն ընկերքս իմ սիրուն :
 Նըստեալք խընջոյս ցըմուտս արփւոյն առնումք մեք խահ և
 [բաժակ .

Արկն եմուտ , մուծըն պատեաց , առ ծովափամբըն հան .
 [գեաք :

Վարդածըղի այգն երևէր , ձայն տամ լուծման կառանայ .
 Յարեան արագ , մըտին ի նաւն , առին նըստոցս ըզքաշտեաց :
 Կարգաւ այնպէս թիպվարեալք ծով հատանեմք տարագէմ .
 Ըզմահն ողբամք մեր սիրելեաց , խընգամք զերծեալքս յօր .
 [հասէն :

ՀՈՄԵՐՈՍ . ՈՂԻՍԱԿՈՒՆ :

ԱՔԻԾՆԵՆԻԴԷՍ Ի ԵՈՎԱՓՈՒՆՍ ԳԻԿԼՈՊԱՅՑ

Ըզաաժանեալքս յայնժամ եթող արև , թողին ըզմեզ հող .
 [մուկք ,

Եւ ի սահմանըս կիկըպայց՝ անգէտք ուզւոյն սահեալ գնա .
 [յաք :

Է լայնատարր և անմատոյց անգ ի հողմոց նաւահանգիստ .
 Այլ որոտայ ահարկու աւերածովք առ իւր Ետնէ ,

Մերթ ծըխաչունչ ամպ ընդ երկիր և Թուխ ամպրոպ կը-
[պրային

Եւ շանթ հրաչէկ արձակեալ, մերթ բոցեղէն մինչև յաստեղա
Ամբառնայ գունդըս գեր ի վեր, և է զի ժայռըս ժայթքէ
Յընդերաց լերին կորղեալ, և ըզհրահալ վէմս ընդ այեր
Ձըգէ շառաչմամբ, է զի եռայ անդընդախոր:

ԶԵՆԿԵԼԱԳԵՅԱՅ ըզկիսակէզ գի շանթահար անգ աւանդեն
Ծանու բեռինն ընթագրեալ, և ահեղին կալով Ետնայ
Ըզնովաւ՝ բոցաչընչէլ ընդ պայթուցեալ հընոցն ի վեր:

Եւ քանիցըս Ենկեղադ ըզկոչկոճեալ կողսըն շըրջէ,
Հարկանի գըղորգմամբ Տրինակրիա լըրիւ իւրով
Ըզգողանի, և ծըխամած զերկին բոլոր պարածածկէ:

Հրէշիցն ահեղից զօղեալք յանտառո ի գիշերին [գէտք-
Ըզգիորձ առաք. այլ իւ գըղորգն այն ներգործէր՝ անիրաւ
Զի ոչ անդ բոցք էին արփից, և ոչ բևեռ աստեղափայլ,

Այլ միգապատ եթեր մըթին, և տարադէպ ծածկէր գիշեր
Ամպովք ըզլուսին. և այն ինչ տիւրն վաղորդայն
Յառնէր յելից, և այգ զըստուերըս խոնաուուտըս փարատէր:

Այր ոմն յանկարծ անծանօթ նորանըշան կերպարանօք
Ծընգեալ ծիւրեալ ողորմելի ի ցընցոտիս՝ ել յանտառէն,
Եւ աջ աղաչաւոր անդր ի ծովեզըն կարկառէր:

Տեսաք, և էր նա զազիր գարշատեսիլ, խըռուետլ մորուօք,
Ձորձ իւր փըշովք էր կըցկըցեալ, այլովք մասամբք հելլէ-
[նացի,

Յըզեալ երբեմն հայրենի զինուք յիւրոցն ի Տրովագա:

Իբրև ետես նա զգարգանիկ ձևս ի բացուստ և զէն արո-
[վեան,

Զահի առ վայր մի ընդ տեսիլն հարեալ և յետըս նահանջէր-
Դիմեալ ապա ի ծովափն՝ աղերսաւոր ողբովք ասէ.

« Երգուեալ յաստեղս, երգուեալ ի գիս, երգուեալ ի լոյ-
[սըդ կենարար,

Բարձէք զիս, ո՛վ տակրացիք, տարայք զիս ո՛ւր և կամք իցեն,
Շաս է ինձ. գամ ի Հելլէն նաւատորմէն, ոչ ժըխտեմ,
Տրովականացըդ Թերափից ընդդիմամարտ առի զէն.

Եթէ այնքան է ծանր ոճիր իմ, ընկեցէք զիս ի յալիս,
Ի ծով ծայրածաւալ ընկըղմեցէք զիս խորասոյզ.

Լաւ իցէ ի ձեռանէ մօրդկան մասնել ինձ ի կորուստ) :
 Ասէր, և ըզժընգովք մերովք փարէր առ ոտս անկեալ :
 Խրախուսեցաք ըզնա պատմել՝ ո՛ր և յորմէ՛ էր յազգէ .
 Ինքն իսկ հայրն Անբիսէս, ոչ ևս յամեալ, աջ ետ նըմա՝
 Ըզպատանւոյն գրաւականաւն այնուիկ ըզսիրտ քաջալե-

[րեալ :

Նորա զերկիւղ ուր ուրեմն ի բաց եղեալ, ասէ . « Այո ,
 Իդակացի եմ հայրենեօք , ընկեր հիբին Ոգիսեայ ,
 Աքիմենիդ յորջորջիմ . մինչ Ադամաստ հայր իմ դեռ կեայր
 Զբքաւոր , իցի՛ւ և իմ հանգոյն նըմին էր կեցեալ ,
 Ելի ես ի Տրովագայ . և մոռացեալ ընկերք իմ զիս
 Թողին ի լայնատարըր Կիկլոպայ քարանձաւին ,
 Ի փախչել իւրեանց ահիւ յանագորոյն սեմոց անախ :
 Վայր մեծ մըթին լի ի շարաւ , լի ի շաղիղ արիւնայեղց ,
 Ինքն ի կոյտ հասակին մինչև յաստեղըս երկնաբերձ ,
 Դըժժոխադէմ և անհամբոյր , սղեօք հիքաց և Թուխ արեամբ
 Կերակրեալ . կալայք զերկիր , գիք , ի ժանտէ այնպիսոյ

[զերծ :

Ես ինքն եղէ ականառես՝ յորժամ յորսայս ի մէջ այրին
 Երկուս ի մէնջ իրանունս ըստուար բռւամբն յափըշտա-
 Եհար ըզժայռի , և լուզային սեամբ ի յարիւն . [կեալ՝
 Տեսի ես ինքն ի կլանել իւրում զանդամըս մօրդկեղէնս
 Շարաւալիցըս ջերաջերմն ընդ ատամամբքըն դողդոջունս :
 Այլ ոչ Թողաւ անպատուհաս . ոչ համբերեաց զայն Ոգի-

[սևս :

Եւ ոչ յայնքան վըտանդին մոռացաւ զանձն իԹակացին .
 Քանզի խորտկօքն այն ինչ ի լի և խորատոյզ ի յանապակ ,
 Խոնարհեալ զուլն , արկեալ զիրան իւր անհեգեգ ի քարայ .

[րին ,

Աւիչ ի վեր ժայթքէր ի քուն , ժայթքէր պատառըս Թա-

[Թաւեալս

Յարիւնախառըն գինի . կարգամբ ըզգիս վեհս յօգնութիւն ,
 Եւ վիճակաւ կարդեալք ի գործ՝ շուրջ յարձակիմք , և խո-
 Սայրասուր սըլաքօք ըզլայնաբիբ ականն միակ [ցտտեմք
 Ըզժածկեալն ի ներքոյ գըժնէակերպըն ճակատուն ,
 Իբր ասպար արգոլեան , որպէս լամբար ապոլունեան ,

Եւ խընդրեալ ըզվըրէժ ուրուաց մերօցըն՝ գոհանամք :
 Այլ փախերուք գուրք յերկրէ աստի խըզեալ հէքք ըզպա-
 Ջի որքան և որպիսի փակէ խաշինըս գեղմնաբարձ [րան-
 Ի խորափիտ քարայրին, և ճըմլէ ստինըս Պոլիփեմ,
 Հանգոյն նոցին բիւրք բիւրուց ըզկոր ափամբքս Աիկլո-
 [պայք

Բնակեն ժանտք, և ի լերինս աստ ի բարձունքս թափառին :
 Լընու երրորդ մահիկ լուսնին յորմէհետէ կեամ ի մայրիտ,
 Ի խըշտիս ունայնացեալս ի դազանաց և ի վանկունս,
 Եւ զյաղթանդամ Աիկլոպայս բարձր ի վիմէ աստի գիտեալ,
 Ի դրընդիւն ռախց նոցա և յազազակ ահաբեկիմ : [նահք-
 Պարէն սղորմ ինձ չու՛մ կոպճուտ տան և խոզակըս բարու-
 կերակրիմ արմատախիլ բուսովք եղեալ խոտաճարակ
 Շուրջ ակնարկեալ տեսի նախկին ի ծովեզք այսըր եկաւոր
 Ըղնաւատորմ ձեր, և եգի ի մըտի՛ յոց և նաւքդ իցեն,
 Լինեւ անձնատուր, ի ժանս ևեթ ազգէն զերծեալ [կամք :
 Դուք մանաւանդ զիս ըսպանէք, որով մահուամբ և իցեն

Ձոյք ընդ բանին տեսանէաք ահա ի ծայր լերինն հովիւ
 Ի մէջ խաշանց՝ ըզՊոլիփեմ, գէմ ի ծովափն եգեալ ծանծ-
 Հըրէչ ահարկու բարձրահասակ և ձառագէմ,
 Ձուրկ ի լուսոյ՝ առ խարխափ յեցեալ ի բուն նոճիաճահ,
 Իւ ըզգընացսըն հաստատէր. հետեւէր գայր ըզհետ նորս
 Հօտ ասրաբերձ միակ սրբաին իւրոյ սփսփուամն և գիւր վը-
 [տաց.

Հասեալ ի ծայրս ալեաց ի ծով, լուանայր զականըն խորելոյ
 Ձարիւնն հոսեալ, զատամունս հեծեծանգք կըրճըեալով-
 Եւ ի գնալ իւրում ընդ խորս՝ ոչ թանային կողք իւր բար
 [ձունք

Ի յալեաց : Փութացաք անտի ահիւ մեք ի փախուտ,
 Եւ ընկալեալ զարժանին աղաչաւոր՝ հատաք լըռին
 Ըզպարան, և կորովի այր քան զընկեր թիալարեմք :
 Ըզգաց նա, և ի հընչիւն ձայնից դարձոյց ըզաւելի իւր-
 Այլ քանզի չէր նըմտ հրաման գու ինաւ անգըր ձեռընմբձ,
 Եւ ոչ յոնիական ալեացն ըզհետ գալ հասանել,
 Եգ աղաղակ սաստկագոչ՝ յորմէ բուր ալեզըն ծով
 Դըզըրգեցաւ, և մըւընչէր Եանէ խորովըն խոռոչիւք :

Շուրջ ի մայրեաց և ի լերանց յայնժամ բարձանց ի նաւա-
[կայս

Խուժէ ի կոչն ազգ Կիկլւսպոյց, լընուն ի սպառ ծովեզերք.
Տեսաք զեզբարց ետնականաց ըզսոսկալի խուժան ընդ վայր
Ճակատեալ գրժնէհայեաց, յամպս ըզգըլուխսն ծըրա-
[րեալ,

Որպէս կաղնիք երկնաբերձք և կոնաբեր կանգնին նոճիք
Ընդ եթեր, անտառ Դիայ և արտեմեանն մայրեստան:

Երկիւղ սաստիկ մըղէ յայնժամ ըզնաւաստին խըզել հապ
[ճնպ

Շուրջ ըզպարանս, աջող հողմոց պարզել ըզթևս առագաս-
[տից:

Իայց Հելենեայ ընդ հակառակն ազգեն հրամանք՝ մի գոր-
[ծել ուս:

Ընդ Իսկիլա և ընդ Քարիբգ, ուր կորըստեան սուղ է խըտ-
[րոց.

Խորհիմք շքընէ ըզկըտաւիս, և ընդ անձուկն ահա Պլորեայ
Շընչէ հիւսիս, ի պանտադեան վարիմք ի դրունս որձաքա-
[րեայս,

Անգեալք ընդ ծոց մեգարեան և ընդ Տափսոսն տափարակ:
Ջայսոսիկ Աքիմենիդ ընկեր հիքին Ոգիսեայ,

Յուցանէր մեղ ծովափունս՝ ընդ որս ի գալն էր Թափառեալ:
ՎիրԳիԼիՈՍ • Ենէլտն:

ՍԿԻԼԼԱ ԵՒ ՔԱՐԻԲԳԵՍ

Կըրկնեաց անգէն արգոյն Կիրկէ, խօսէր յայտնէր ինձ
[ուղի:...

« Իսկ և յայնկոյս են ժայռք կըրկին, մին վերամբարձ մինչ
[յերկին,

Սրածայր ծայրիւնն պարագրեալ ծածկի ի յամբըս մըթին.
Օդ պարզութեան յաւերժաբար չիք ի նորայն յարուան,

Ոչ յեզանակ աշնանայնոյն և ոչ դարձեալ յամառան.
15

Ոչ ելանել ոչ իջանել երբեք չէ մարդ բաւական,
 Թէպէտ և ձեռք, Թէպէտ և ոտք իցեն նորա Թիւ քրսան,
 Այնչափ ողորկ սուրբ է պարեխն շուրջանակի ի կողմանց:
 Բայց ի ժայռին ի միջակին անձաւ կայ խոր միգամած.
 Ի մոռտս ի կոյս Թևակոխեալ հայի 'նդ Երեբ սոսկապէս.
 Արագ ընդ այն սրացէք նաւու, անսա ինձ, քաջք Որդիւ.
 Նեա ի նաւէն ազեղնաձիգ և ոչ այր ոք քաջազօր [սէս.
 Թափ ոտսուցեալ հարկանիցէ ի քարանձաւն յայն ի խոր.
 Աստ բնակութիւն ունի Սկիւլա, կանչիւն հանէ քրտաձա.
 [ձայն.

Ձայնն է ճըջգրիտ իբրև կազկանձ ըստընգիացիկ կորեանց
 [չան,

Ինքն է դըժխեմ հրէշ ահարկու. որ միանգամ տեսանեն՝
 Գրտաձնին սոսկան, Թէպէտ տեսողն է յանմահից ի գասէն:
 Ոտք են նորա երկոտասան, և ոտքն երիք են ողջոյն,
 Եւ պարանոցք վեցք են նորա երկայնաձիգք ի բընոյն.
 Մէն մի ահեղ ունին գըլուխ երեքկարգեան առամամբ,
 Են առամոկնըն իխոք և հոծք սեաւ գուժաբեր լի մա.
 [հուամբ:

Ինքըն միջով ի խորափխոն յայն քարանձաւ սուղանի,
 Արտաքս ի վեր կալեալ ըզչլուխս յայն վիրապէն սոսկալի.
 Կայ ինքն ի ժայռն լըրտես խոժոռ որսալ ըզլուն, ըզքըլփին,
 Կէտսանարիս, բուծեալք ամբաւք յանդընդախորո Ամփիտ.
 [րին.

Ձև ևս ընդ այս անցին նաւազք անգըրժելիք յօրհասէն,
 Ձի նաւազ մի մէն մի գըլխոմն առնու կորզէ ի նաւէն: [նայ.
 Մօտ ըզմիւս ժայռ գըտցիս խոնարհ, հարկանելի ի փըք.
 Եւ կայ բուսեալ անդ բարձրուղէչ ժանտթըզենի հերա.
 [պանծ.

Բայց ընդ սովաւ վեհ Քարիւրգիս կլանէ զկապոյտ ջուր ծո.
 [վուն,

Ժայթքէ երիցս աւուր աւուր երիցս ըմպէ ահարկուն.
 Դու ի կլանելն մի մօտ գնասցես, ուուզ Պասիգօն փըրկէ զքեզ:
 Այլ առ Սկիւլաւ ի մօտ քերեալ սրացիբ նաւու փուժա.
 [պէս:

Լաւ է վեց արս տալ վիրագին քան Թէ զողջոյն նաւառոտի »:
 Լըւայ, կըրկնեմ: Ե Աղէ և զայն ասա ճըջգրիտ, գիցուհի.

Ես անձնապուր յօրահասէ մահաշըշուկ Քարիւրդեայն՝
Եւ զԽսկիւլայն ո՛չ վանեցից՝ երբ նա կորզէ զիմ որեան » :
Լըւաւ, կըրկնեաց. « Այ հիքացեալ, գու տակաւին ըզմար.

[տից

Նտխձճրա ի յուշ քո վերեերես, ոչ ականածեալ յանմահից.
Ձէ մահացու այդ Խսկիւլայդ, անմահ չար է ի ճետէ,
Հարուստ, ասեզ, գըժոխըմբեր, անկըուուելի ի բաղկէ.

Ձիք գեղ դարման. փտխչելն էլաւ. Թէ ի վանելք նաւն յամէ,
Թափ տայ կըրկին այնչափ գըլխովք՝ այնչափ որեան յինք
[կորզէ.

Սրացիր և անց, և առ կրթութեն՝ առ մայր Սկիլայ ձայն կարգա,
Որ զայս ժանտախտ ծընաւ մարգկան, նոյն և որդւոյն իւր
[տանձ տայ » : ...

Այն ինչ յանգեաց վեհ գիցուհին, և ոսկեգաճն այդ ծա.
[գեաց :

Ինքն ընդ կըզզին մեկնեալ յինէն, երթեալ ի նաւն ես ձայն
[տամ.

Յարեաւ որեարն, լոյծ ըզպարանս, մըտին առին նըստարան.
Ձծոյն ալէտանջ բախեն քաշտեօք, մեզ ի Թիկանց հողմ
[յըզէ

վեհ գիցանոյչն այն գանգրահեր գեղգեզաձայնըն կիրկէ : ...

Թողեալ զկըզզին, ծուխ և կոհակքըն ամհիք ընդ առաջ
Բոմբեն ասեզ. պակեան նաւաղք, Թիք անկանին ի ձեռաց.
Լըլկեալք յանգուռնգս ձայն ամբարձին. նաւըն չուռէր զօ.
[րավիգ :

Կայր և ծըփայր, քանզի ի Թիս ձեռք Թուլացան կորովիք :
Ես վեր ի վայր գնացեալ ընդ նաւն, ամոք բանիւք ընկերաց
Տամ քաջալեր. « Ո՛ր բարեկամք, բա՛ չեմք անփորձք ՚ի չա.
[րեաց.

Քան զկիկուպայն չեն մեծ չարիքս երբ փակեցաք յանձա.
[ւին.

Ձերծաք սակայն յանզերծ ուժոյն իմ խորհըրգովքըս ուշիմ.
Դուք զայն յապայս յուշ ածիցէք. բայց արգըուարուք իմ
[ձայնի.

Քաջ Թիսվարք, հարէք զանգուռնգս. Դիտս կայ մեզ հովանի :
Այլ որ զքեզին ունիս նաւուռն, զայս պատուիրեմ քեզ, ո՛վ
[քաջ,

Միտ գիր ողջիկ, ուղղեա ըզլաստն ի գուրս ծըխոյն և յալեաց,
Դու զակն ի ժայռըդ կառուսցես, մեկնեաց անտի հանա-
[պազ.]

Մի մեզ, այր դու, աղէտ ամբաւ արագ ածցես օրահաս » :
Լըւան ձայնիս . այլ զիսկիլլայն լըռեմ զաղէտն անգարման .

Մի սըրտարեկ թիավարողք լըքցեն ըզլծիս միաբան :

Այո՛ւշ Կիրկեայ դըժնի բանին՝ այն որ արգել ըզլէնս իմ .

Ես զէնս պայծառ արկի զանձամբ և տէգ կըրկին ի ձեռին .

Լաստափայտին ելի ի գլուխ . ասեմ, անտի թափ տացէ

Սկիլլա վերագն բնակիչ ժայռին, և զիմ ընկերս հափափէ .

Ոչ կարացի ես ուշ ունել, զի յոգնեցան անգ աչք իմ,

Յայս կոյս յայն կոյս ակնակառոյց սոսկմամբ ընդ ժայռն
[մըլծին:]

Յոգւոց հանեալ անցանէաք մեք ընդ կածան նըրբուղի .

Աստի Սկիլլա, անտի Քարիբդ հահլ՝ կլանէր ծով աղի .

Յորժամ ժայթքէր, ծով պըզպըջայր իբրև կաթսայ յե-
[ուանգան:]

Ճընցուղքն ի վեր անկանէին կըրկին ժայռիցն յարեան :

Երբ կըլանէր զաղին ըզըուր, ծովըն փլուզեալ յանդընդոց

Բոմբէր զժայռիւ, բնայր ասակն ի կապուտակ աւազոց :

Մինչգեռ ողջոյն ի գոյն դալկան սարսիմք յահէն Քարիբդեայ,

Անդուստ նաւէն վեց քաջորեար առ հափափեաց Իսկիլլա :

Դարձայ տեսի ես զեղկեղիսն ռսիւք ձեռօք վերամբարձ,

Տատանք ընդ օդս, ձայնն Ոգիւս, ըզձայն վերջին եղկու-
[թեանց:]

Զոր օրինակ ի ցուպ երկայն կացեալ ձըկնորսն յապառաժ,

Խայծ խարուսիկ ընդ կարթն հարեալ մանրիկ ձրկանց օրա-

Առեալ ի ծովըն սուզանէ զեղջիւր եզին ըզվայրագ, [հաս,

Եւ ըմբռնեալ, մինչ թինդըս տան, հանէ ձրգէ ի ցամաք,

Այսպէս զնոսա, մինչգեռ արոպիան, ընդ ժայռն ի վեր ամ
[բառնաց.]

Եւ առ ժայռին գօշէր ուտէր գըժոխակուլն Իսկիլլա .

Յիս ըզմատունս տատանէին գերաշխարան տազնապի .

Ողջ յաղէտս իմ ծովալըլուկ այս ինձ տեսիլ ողբալի : [գի :

Սկիլլեայն ժայռից մեք անձնապուրք և մահահոտ Քարիբ-

Արագ նաւեալք յառաջադէմք հասաք ի վէհ ի կըզլի :

ՀՈՄԵՐՈՍ . Ոգիտակն :

ՆԻՍՈՍ ԵՒ ԵՒՐԻԱԼ

Իրտակեանն Նիսոս կարգեալ գըրանն էր պահապան .
 Գոռ ի մարտի, զւր զինակիցն Ննէասայ որսորդն իգա
 էր առաքեալ, ըզգիպաղեզն երադ ի ձիգ Թեթև և նեաից .
 Ընկեր նըմա Եւրիալ, քան զոր ոչ ոք գեղեցկագոյն
 Եկաց յենեանս, և ոչ էարկ ըզտրովական [Ժնօտն
 Մանուկ՝ ում այն ինչ նըշանակ պատանեկան փըթթէր ի
 Անմորուս, երկոցունց նոցա էր նոյն սէր փոխադարձ,
 Սովորք ի կուր գիմագրաւել զուգակըցորդք, ի միասին
 Եւ յայնժամ առ գըրան ի նմին վայրի պահ ունէին :
 Խօսի Նիսոս, և Արգեօք դէք, Եւրիալէ, արկանեն զայս
 Եռանգն ի սիրտ, Թէ բուռն աննչ անձնիւր ումեք իցէ Աս .
 [տուած .
 Ինձ ի բազմաց հետէ գիմել ի պատերազմ միտք իմ ազգեն,
 Կամ ձեռնարկել ի մեծ ինչ, ոչ կալ ժուժեմ ի հանգըս .
 [տեան .
 Տեսանէս քանի վըտաս հան չըռուտուլք յելըս մարտին,
 Իբըր ցանցառ փայլին հըրապք, նոքա ի նիրհ և յանապակ
 Խորասոյղ անկեալ գընին, և լըռեն վայրք շուրջ ի բացեայ .
 Ի՛նչ զոր երկնեմըս խորհուրդ, որ ինչ ընդ միտս իմ արգ
 [յածի .
 Ամենեքեան աամիկն և Հարք խընդրեն կոչել զՆնէաս,
 Եւ յըզել արտ՝ որք հաւաստի ածցեն զըրոյց ըզնըմանէ .
 Թէ խոսաասցին զոր վասըն քո խընդրեմըս վարձ, զի շատ
 [է ինձ
 Համբաւ ևեթ քաջութեան, տա բըլըովս այսուիկ Թըւրի
 Ինձ գըտանել ուղի յամուրս և ի քաղաքըն պայլանտեան » :
 Յապուշ հարաւ Եւրիալ, հարաւ մեծի փառացն ի սէր,
 Եւ այսպէս առ սըրտեռանդըն բարեկամ իւր խօսեցաւ .
 « Հրաժարիցես, Նիսէ, առնուլ մեծի գործոյդ զիս հաղորդ,
 Թողից ինչ քեզ միայնում գիմագրաւել յայդքան վըտանդ .
 Ոչ այգպէս ինձ Ոփեկտէս հայրն իմ ուսոյց ներկուած ի մարտ
 ի հրահանգելըն զիս ի վտանգս արգիականս և ի տրովեան
 Ճակատամարտս, իմ այգպիսի ինչ չիք ընդ քեզ արարեալ

Յորմէհեաէ ըզհեա մեծին Ենեայ յարկածս յեաինքս գամ-
 է իսկ և է ինձ արհամարհ լըյս, և թըւի ինձ գիւրադին
 Փոխանակել ըզկեանս ընդ փառս՝ յոր գու գիմնս» : Առ որ
 [Նիսոս .

« Զէր ինչ ըզքէն ինձ կասկած , և ոչ օրէն էր կասկածել .
 Քաւ լիցի . այլ զիս առ քեզ յաղթանակաւ գարձուացէ
 Մեծն Արամազդ , և ոչք ի գից արգար աչօք զայս նըկատեն :
 Իսկ թէ ձախող ինչ պատահար , որպէս ի վտանգըս պա-
 [տահեն

Ոչ գուն ուրեք , կամ ոք ի գից եթէ բարձցէ զիս ի կենաց ,
 Ոչ լինել քեզ ըզձանամ , վայելագոյն ախոցք է կեալ ,
 Այլ լիցի ոք՝ որ ի մարտէ անտի ի բաց յափըշտակեալ ,
 Կամ գրաւաթափ արարեալ , տացէ հոզոյ զիս մեկուսի .
 Եթէ և զայս բախան արգելցէ , իցէ որ սպաս ինձ ի հեռուսս
 Մատուցէ՝ պատուել շիրմաւ . այլ մի տաց սուգ գառնա-
 [կըսկիծ

Մօր քու՛մ հիքի , որ միայն ի մարց յօդունց ըզհեա քօ գալ
 Խրախուսեաց , ըզմեծին լքքեալ պարիսպ Ակեստեայ » :
 Իսկ նա ասէ . « Ընդ վայր ածես գու ինձ պատճառս , ոչ յօզ-
 [գողքի՛մ

Ի մըտաց . օ՛ն փութասցուք » : Յայնժամ զարթոյց ըզպա-
 [հակերս .

Նորա անդէն փոխանակեն , և ի կարգեալըն կան ի պահ .
 Ինքն ի խընգիւր արքային մեկնեալ գընայ ընդ Նիսոսի :

Այլ ամենայն շունչ կենդանի կայր ընդ երկիր յանգորր
 [ի քուն

Մուացեալ զերկ և ըզհոգ . աւագք տեկրեանցըն զօրավարք
 Եւ ընարեալք ի մանկըտուոյն՝ խորհուրդ գիրաց կարեորաց
 Արքայութեանն առնուին՝ զի՛նչ էր առնել , և զօ՛ հրեշտակ
 Առ Ենէաս արձակել . կային ի մեջ գաշտավայրին
 Ի պանիլի՛ յեցք ի նիզակըս ձիգս , ասպար ի ձեռին ,
 Յայնժամ Նիսոս և Եւրիալ մուտըս խընդրեն ի միասին .
 Վաղվազեն , առ մեծ իմն ասեն եկեալ , և ոչ ընդ վայր
 Զընգհատու՛մըն խորհըրդեան : Նախ Ասկանի ըզփութա-
 ի ներքս ընդունի , և հրամայէ Նիսեայ խօսել : [ցեալ
 Յայնժամ ասէ իրտակեանն . « Ո՛վ գուք , ենեանք արգա-
 [րափօք ,

Լըւարուք մեզ մի զոր խընդրեմքըն գատիցիք մանկականի
Տիոց եռանդըն տարապարտ լըւեն Հռուստուք խորասու-
ի քուն և յանապակ տեսաք մեզէն ըզգողուզի՝ [զեալ
Որ ի կիցըս երկուզեաց, ոչ ինչ հեռի ի ծովէ, [Թուխ
Անցս ի դրանէ անախ տայ. տատ անգ հըրտաք ընգհատք, և
Մինչև յաստեզս ամբառնայ ծուխ. եթէ ներէք ի կիր առ-
[նուլ

Յօգուա ըզբախա, տեսիք ընգ հուպ ի պալլանտեան պա-
[րիսպս ընգ մեզ

Զոր խընդրեքըն զՄնէաս, լի աւարաւ գարձ արարեալ,
Գործեալ ամբաւ կոտորած. ոչ պատրեսցէ ըզմեզ ուղին,
Տեսեալ է մեր յաճախ ի յորսըս մերձակայ ի ծմակ հովտին
Ըզքազաքն, և ըզբուր գեաոյն ընթացս հետազօտեալ:

Յայնժամ ըզգօնն Ալեթէս ծանրաբեռնեալն ամբք գոչեաց.
« Ո՛վ գիք հայրենիք, հովանաւորք միշտ Տրովադայ,
Ոչ ուրեմն ըզտեկրացուց կամիք ի սպառ ըզկորուսա՝
Յորչափ ոգի այսպիսի և սիրտ արի տայք մանկըաւոյն:
Ապա զուսովք նոցին փարեալ անկեալ զաղով երկաքանջիւր,
Թացեալ ըզգէմն և ըզժընօտս ի գերարտօսր, ասէ. « Ո՛ արք,
Զոր մըրցանակ արժանաւոր արիութեանըզ ձերու՞մ
Դատեցայց, նախ գիք ինքնին, նախ ճիգըն ձեր առաքինի
Հատուցեն վարձ ձեզ գերազանց, ապա և զայլս յաւելլէ
Երկիւզածն Մնէաս, և առոյգանձնըն Ասկանի

Ոչ արկցէ երբեք ըզձեր այգքան վաստակ ի մոռացօնս »:
« Իսկ ես, յաւել Անկանի, որոյ ի գարձ և եթ ծնողիս
Է փըրկութիւն, յանուն վեհիցըն թերափոց մաղթեմ, Նիսէ,
Եւ տանն Ասարակեայ, և սպիտակին Յօտեայ երգնում
Ի գաբիրայ, զի որ ինչ բախա ինձ առաջի կայցէ և յոյս,
Զամենայն ի ձեզ գընեմ. ածէք ըզհայր իմ, կացուցէք
Ըջնա ասա, և ոչ հասցէ ինչ ի գառնալ նորա մեզ չար.
Նըկարակերպ ի քանգակ բաժակ կըրկին տաց արծաթի,
Զորս յաւարի հայր իմ էառ՝ ի նըւաճեւըն զԱրիսբա.
Եռոտանիս կըրկին, քանքարըս մեծամեծս ոսկւոյ երկուս,
Եւ խառնարան մեծ վաղեմի, զոր սիգոնիկն ետ ինձ գըշխոյ.
Իսկ թէ յաղթել ինձ և տիրել Իտալիոյ և Թագ առնուլ
Եւ արկանել ի վիճակ զառ և զապուռ յաջողեսցի,

Տեսեր իսկ յոր երիվար հեծնոյր Տուրնոս. տեսեր որովք
 Ջինուք դընայր ոսկեհուռ, առից ի բաց ի վիճակէ
 Ջայնոսիկ և ըզվահան և ըզցըցունսն կամրերփեանս,
 Այժմէն Նիսէ զայնոսիկ քեզ սահմանեալ ի մըրցանակ .
 Վեցեակ գարձեալ օրիորդըս քեզ ընտիրս հայր իմ տացէ .
 Նոյնքանիս և ըստրուկս հանգերձ իւրեանց զինու զարգու .
 Ընդ այնոսիկ և որ ինչ անգք են Լատինեայ Թագաւորի :
 Եւ ըզքեզ, որ ոչ բազում ինչ խըտրոցաւ յառաջագէմ
 Քան զիս ի տիս ընթանաս, ո՛վ պատուականըգ պատանի,
 Գըրկալիր ընգունիմ կըցորդ ի գէպս իմ ամենայն .
 Ձեղէց փառաց ինչ ի խընդիր, ոչ ի մարտի, ոչ յանգորբու
 Խաղաղութեան առանց քո, վըստահ ի քեզ յիր և ի բան» :

Յայնժամ յաւել Եւրիալ . « Մի զիս յեանեալցուցցէ ար-
 Յարիականըս գործոյ, եթէ միայն ինձ յաջողակ [փին
 Եւ ոչ ներհակ դիպեցցի բախա . այլ մի ինչ զայս հայցեմ ի
 Քան ըզպարգևս ամենայն . ի պրիամեան ի հին առհմէ [քէն
 Է իմ մայր, զոր ոչ երկիր իլիական, ոչ Ակեստեայ
 Պարիսպք՝ ըզհէքն արգելին ի տարագէմ ընդ իս գալոյ .
 Ըզնա արդ, առանց տալոյ հրաժարական ողոյն նըմա,
 Թողում անգէտ՝ որ ինչ ինձ և առաջի կայցէ վըտանգ .
 Յաջ քո երզնում և ի դիշերս յայս, ոչ ժուժեմ ընդ մայրենի
 Արտասուս . պաղատիմ կարօտելումն ի քէն նըպասս .
 Դու ձեռընառ ըրլըքելոյն . ածից ընդ իս զայսի քեզ յոյս .
 Յանդըգնագոյն արկից սովաւ զանձն ի վըտանգս ամենայն » :

Դարդանացիք ի գուժ շարժեալ՝ հեզին բազում անգ ար-
 [տասուս,
 Եւ մանաւանդ չըքնազագեզն Յուլոս յարասոր հարեալ ընդ
 [տիպ
 Մնողասերըն գորովոյ, այսպէս յայնժամ բարբառեցաւ .
 « Խոստանամ զամենայն ըստ արժանեաց գործոյդ մեծի .
 Լիցի նա ինձ ի մայր՝ անուամբն և եթ ընդհատ ի Կրեսայ .
 Ոչ ինչ նըւազ անկ են շընորհք մօր՝ որ երկնեաց ուստր այս .
 [պիտի,

Որ ինչ և ելք գայցեն ըզհետ արիական քումըդ գործոյ .
 Երգուեալ ի գլուխ իմ՝ յոր ցարդ սովոր էր հայր իմ երգնուլ .
 Որ ինչ և քեզ ի յաջողել ելից իրացըգ խոստացայ՝

Տալ ի դարձիդ, նոյն ծրնողի քուժ և ազգի պահեստի ։

Ձայտոսիկ արտասուելով ողբաձայնեալ, հան յազգերէ
 Ըզտուսեր իւր ոսկեհոռո, զոր գնոսացւոյն Լիկայոնի
 Հրաշակերտեալ, և ի պատեան փրղոսկըրեայ էր ագուցեալ ։
 ՄընեսԹ՝ Նիսեայ զառիւծենին տայ Թաւադէս, և Ալեթէս
 Հաւատարիմն ըզսաղաւարտ իւր ընդ նորայն փոխանորդէ ։
 Մեկնին զինեալ նոյնհետայն, և զհետ նոցա մինչև ի դրունս
 Ուղեկցի աւագանին, և մանկըաւոյն գունդ և ծերոց,
 Ուխտ ի շըրթունս, և գեղանին Յուլոս երթայր ի միասին,
 Գեր քան ըզտին առնացի կրելով յանձին հոգ և խրախոյս,
 Եւ պատուիրէր զըրոյց յուրով ածել առ հայր իւր. այլ հող
 Առեալ ցընդէին ըզքնաւս ընդ օգըս վայրապար ։ [մուկք
 Նոքա մեկնեալ և վազս ընդ փոսս պռեալ դիմն գիշերաւ
 [խառն

ի բանակեալ թըշնամեաց, մահունս յոգունըս նախ գոր-
 Տեսանեն համասփիւռ ի դալարուղ իրանս ի քուն [ծեալ
 Եւ յանապակ ընկըզմեալ, կառըս կանգնեալս առ ծով
 [եզերքք ։

Ձէնս և Թակոյս և արս անկեալ խառն ընդ անիւս և ընդ
 [սանձ ։

Նտխ իրաակեանըն բարբառի. « Եւրիալէ, Ժամ է առնել
 Ձեռն ի գործ. դէպք ինքնին առնեն հրաւէր ի ձեռնարկ.
 Ընդ այսր է ուս. կաց դու ի պահ աստ ի բացէ դէտ ի Թի-
 [կանց,

Թէ գուցէ գունդ Թըշնամեաց հասցէ ըզհետ մեր յետկուսէ.
 Իմ շուրջ եկեալ ընդ անխափան ասպ ածից ըզքեզ ընդ ուղս ։
 Ձայս ասացեալ, գիմեաց սուսերըն ի խրոխտապանծն ի Հուամ
 [նէս,

Որ ըստ գիպաց բարձր ի պաստառս ընկողմանեալ՝ կոկոր-
 [դալիբ

Խորգայր ի քուն, նոյն ինքն արքայ և արքային Տուրնեայ
 [հաճոյ

Հաւահըմայ. այլ ոչ կարաց նա հըմայիւքն հերքել ըզմահ ։
 Եւ զարրանեակսըն զերեսին հար առընթեր, որք խառն ի
 [խուռն

Անկեալ գնէին անդ ընդ զէնս. և զզինակիրըն Հըռուեմայ

Եւ զկառավար գրտեալ ընդ ձիս, ըզկառափունս եհասա
[նոցին

Անկեալս ի կախ. և ըզտեառն իսկ ըզնոցին բարձեալ ըզ-
[գլուխ,

Եթող զերանըն կառափնասա՝ հըռընչելով հեզձամըզձուկ
Յարենէ. արիւն զերկիրն և ըզպաստառս հոտեալ թանայր
Ջերմաջերմ. և ըզլամիր և ըզլամոս էարկ տապաստ,
Եւ զպատանին հրաշագեզ ըզՍէրրանոս, որ զայն գիշեր
Ընդ ժամըս ձիգըս պարապեալ ի գիներբուս էր և ի խաղ.
Եւ զըմրեալ Դիննիսեալ՝ անկեալ դընէր անդ թալացեալ.
Բարեբախտիկ, եթէ յամեալ երկարագոյն ևս էր ի նոյն,
Եւ գիշերոյ մինչև ցըլոյս տուընջեան ըզխազ հաւասարեալ:

Ոչ ինչ նըւազ Եւրիալեայն էր կոտորած. բորբոքեալ
Ի զայրոյթ՝ գիմէ ի խուռն անգր աննըչան զօրականին,
Եւ ըզՓագոս ընդ Եբէս և ըզՀուեառս ընդ Աբարիս
Յեղակարծում հարկանէ. Հուեառս անքուն կայր տեսանէր
Որ ինչ անդ անցք անցանէին, այլ ի յահէն էր թագուցեալ
Յեակոյս ըստուար խառնարանին. եհաս ոսոխն անգր ի վե-
[րայ.

Եւ ի յառնեն՝ արկ ըզսուսերն ի սիրտ նորա ցերախակալն.
Ոչ ամփոփեալ զայն չև ընդ մահ նորին եղեալ աներկբայ.
Հեզ նա զհոգին ծիրանեգոյն, խառն ընդ արեան ժայթ-
[քեալ գինի:

Ինքն եռանդուն յառաջ վարէ ըզկոտորածըն թաքթաքուր,
Դիմէ յընկերըս Մեսապեայ՝ ուր շիջանէր հուրըն յեաին.
Եւ տեսանէ ըզձիանն արձակ զօրէն սովորական.

Ճարակաւոր ընդ արօտն. յայնժամ Նիսոս բարբառի սուզ,
Սանձահարեզ զագահակամըս ծայրայեղ կոտորածին,
Եւ ասէ. « Դագարեսցուք, արգ տիւն ոսոխ գայ հասանէ.
Վաստակեցաք շատ, հորգեցաք ուղի ընդ մէջ թըշնամեաց»:
Թողուն բազում առնաղէն արծաթակուռ արուեստակեալ,
Եւ խառնարանըս բազում ընդ տապաստակըս գեղանիս.

Բայց Եւրիալ յաւարի առնու ըզգէնըս Հըռամնեայ
Եւ ըզկամարն ոսկեղէն պալարակապ, զորս ի պարգև
Հըռեմնուլեայ ախրուրացւոյ մեծափարթամըն կեդիկոս
էր յըզեալ՝ ասպընջական զօգիւ պատուեալ ըզբացակայն.
Սա ի մահուն եթող թուինըն զայնոսիկ. ապա Հուռտուլք

Կալան մարտիւ ի ճակատու. արգ զայնոսիկ Եւրիալեայ
 Յափըշտակեալ, ըզկորովի անձամբն ի զուր արկանէ,
 Եւ զսաղաւարտըն Մեսապեայ ըզգիւրակիր ածէ ի գլուխ՝
 ի գարգմանակ գեղազարգ. և ելանեն ի բանակէն,
 Դիմն յանքոյթ ուրեք տեղի: Յայնրմ վայրի այրուծին,
 Ի Լաւրենտեայ քաղաքէ յըզեալ կանուխ՝ մինչ կայր գեռ
 [կազմ

Միւս չէգէտնն ի գաշտի, ասպարաւորք առհասարակ
 Երեքարիւր երթային ընդ Վոլսկենտեաւ զորավարաւ,
 Դարձուցանել առ Տուրնոս արքայ զըրոյց. և մերձեցեալ
 ի Ճամբարն, հասեալ ի մուտըս պատնիշաց, ասա տեսին
 Ի բացեայ՝ զի գառնային նոքա յահեակ կոյս խոտորեալ.
 Եւ սողաւարտն ի հակառակ ճառագայթից լուսնի փայ-
 [լեալ՝

Ի ստուեր մըռայլ գիշերոյն մատնեաց յանգէտըս զԵւրիալ:
 Յայնժամ Վոլսկենտ առ իւրսն ասէ. « Չէ իսկ և չէ տե-
 [սիջ ունայն ».

Եւ գոչէ առ պատտնիս. « Կացէք, ո՛ր արք, յո՛վ երթայք.
 Ո՛րք էք գուրք, և ընգէր ըսպառագէնք: զի՛նչ աստ խընդ-
 [րէք »:

Նոքա ոչ ինչ կըրկնեալ անգրէն, Ճեպին յանտառ անգր ի
 [փախուստ՝

Ապաստանեալ ի գիշեր. աստի անտի հեծելագունդ
 Հըմուտ ուղեացըն կայ ի պահ, չըրջափակեալ զելս ամե-
 [նուստ:

Էր անգանոր անտառ մեծ մացառախիս, և ասաւոր՝
 Նըսեմաստուեր սըզոցեօք, շուրջ թանձրախիտ պատեալ
 [փըշովք,

Գողուղիք էին ի նմա հետք նըւազունք. ծըմակ սստոց
 Եւ կողպուտ ծանրաբեւըն խափանեն զԵւրիալ.
 Ըստերիւրէ ըզնա երկիւղ յուղիղ հետոց մըլորել:
 Նիսոս յահէ թըշնամեաց կանխեալ ի բաց ել անխորհուրդ,
 Ի վայրաց՝ որ կոչեցան ասպա Ալրիք յանուն Ալբայ,
 Ուր Լատինոս արքայ յայնժամ կառուցանէր բարձր աս-
 [պաստան.

Եւ զկայ առեալ խընդրէր ընգվայր ըզբարեկամըն բացա-
 « Ո՛վ հէք Եւրիալէ, ո՛ւր թողի զքեզ, յո՛ երթայց: [կայ.

Յետըս դառնայ, հետազօտէ ընդ կեղակարծ ուղին ողջոյն
Մոլորահետ անտառին. և թափառեալ ընդ լուռ մացառս,
Լըսէ դրժնդիւն ձիոց և շահնդ, և գիմելոց փողանըշան.

Սուղ ինչ ընդ մէջ ապա անցեալ տեսանէ զհետ ազադակին
Ջեւրիտլ, և ի վերայ հասեալ յանկարծ ըզգունդն ողջոյն
Խառնաձայն աղմկաւ, մինչ նա դաւեալ ի գիշերոյ
Եւ ի վայրաց անտի՝ գործէր ճիդըն բազում ի նանիր:

Ձինչ առնել էր, որո՞վ ուժով, որո՞վք զինուք իշխել թափել
Բզնա ի բաց. դիմադրաւե՞լ ի մէջ խըռան թըշնամեաց,
Եւ կարեւէր ըզգեղեցիկ ի յանձն առնուլ անդէն ըզմահ:

Նա կորովի ճօճեալ բազկաւ իսկոյն զաշտէ, և վերակնեալ
Բարձր ի լուսին՝ այսպէս գոչէր. « Ի ու լետովեանըգ գի-

[ցուհի.

Պետ անտառաց, շուք աստեղաց, հաշտ ի վառտակ մեր տկն.

[աօրկեա,

Եթէ ի քոյդ հայրն իրտակ եգ ի բազին վասն իմ նըւէր,
Եթէ ես ինքն ինչ յաւելի յորսոց իմոց, կամ կախեցի [գիր,
Ըզկամարացդ ինչ, կամ ի սուրբ խորանդ յեռի ձօն արգա.
Տուր ինձ ցըրուել զամբոխդ ի բաց, անդր ընդ այերս ուղ-

[ղեա զաշտեայս:

Ասաց, և յեց բոլոր անձամբն ի տէգն՝ ի բաց զայն արձա.

[կեաց.

Սլանայ աշտեայն, հերձու զըստուերըս գիշերոյ, և պատա-

[հեալ

Ի թիկնամեջըս Սուլմոնի՝ որ կայր շըրջեալ, թափ անցանէ
Ի փորոտին՝ տիգարնիւն հերձելով. անկանի նա

Ի՛ի ցուրտ յերկիր, ջերմաջերմ ուղիս ի կըրծոցըն ժայթ.

[քելով,

Եւ ի հէ երկարաձիգ բարտիսն կուշտքն ի ներքուստ:

Ի տառնայ որեարըն շուրջ հայի. նա խրախուսեալ յաջո-

[ղուածով,

Միւս այլ անդրէն ընդ վերկոյս ունկանըն տէգ ոստուցանէ:
Ջահի որեարն հարկանի, գընայ երկաթըն շըկահմամբ

Օդահէրձ, և ընդ քուշսըն Տագոսի թափանցանց
Եզկ յուղլարոյն անգըր կառչի. և զայրագին մոլեալ վուր-

[կենտ,

Ոչ զարդնրնկէցրն գիտելով ձեռն և ոչ սուր ամրանալ,
 « Հատո՛ւ, ասէ, զերկոցունցըդ ջերմ արեամբ ըզլըրէժ »,
 Եւ յարձակի յԵւրիալ սուսերամերկ. յայնժամ Նիսոս
 Անըզգայեալ առ ասին, ոչ ևս ի սառուերս անդ կալ անտեսս .
 Ոչ այնքանոյ ժուժեւլ ցաւոցըն կարացեալ, աղաղակէ .

« Ձիս, ո՛ չուռառուլք, զիս հարէք, աւասիկ կամ, յիս գար-
 [ձուցէք

Ըզզէնըս ձեր, յիս ի հաւակ դաւոյդ, և մի ի պատանիդ՝
 Որ ոչ իշխեաց, և ոչ առնել ինչ ձեզ կարաց, վկայեն եր-
 [կինք

Եւ աստեղք. դա զբարեկամն ևեթ ըզնէք կարի սիրեաց :

Այլ ի խօսել զայս Նիսեայ՝ մըխի սուսերն ուժգին ի կող
 Եւրիալեայ, հերձանէ զկուրծսըն ձիւնաթոյր, անշունչ
 Թաւալի Եւրիալ, ընդ անդամսըն գեղանիս [յերկիր
 Գընայ արիւն, գլուխն ի յուսըն խոնարհի, որպէս ծաղիկ
 Միրանագեղ հատեալ ի խոփ նուաղեալ անկեալ մահա-
 [ցեալ,

Որպէս կակալ անձրեաթաց հակեալ ըզգլուխ իւր ծան-
 [րակիր :

Դիմէ ի մէջ յայնժամ Նիսոս, խընդրէ զՎոլսկենտ ի խը-
 [ռան՝

Դէտակն ի նա . համախըմբին շուրջ ըզնովաւ թընամիք,
 Նեղեն ըզնա ամենուստ . ինքըն ճըգնի ոչ ինչ ընդհատ,
 Ճօճէ զնիզակըն շանթաձև, ի գոչել Հուռառուլին՝
 Վարսէ նորին զայն ի բերան, նախ քան ըզմահ իւր ըզնա
 Մատնեալ ի մահ . ասպա զմարմնով անշընչացեալ բարեկա-
 Անկեալ կարեվէր, քաղցըր մահուամբ մեռանի : [մին

Երջանիկք երկոքեան . և եթէ տաղք իմ կարացեն,
 Անպուրծ յուշոյ յիշատակաց դարուց ի գարս յաւերժաս .
 [Ըիք,

Յորչափ զաւակն ենէական ի ժայռ անշարժ կապիտողին
 Բնակեսցէ, ցորչափ Հուովմայ հայրն իշխեսցէ ընդ տիեզերս :

ՎԻՐԳԻԼԻՈՍ . Ենէտխն :

ՄԵՆԱՄԱՐՑ ՀԵՐԱԿԼԵԱՑ ԸՆԴ ԿԱԿՈՍԻ

Տէս ի բացեայ ըզքարաժայռզ սեպացեալ ընդ վէմս ի վեր
 Իբր ամբարտակ վաղափուլ, իբր ամայի յարկ ի լերին,
 Իբր աւերակ ահագին քարակարկառ շեջճակուտեալ:
 Էր անդ երբեմն քարանձաւ անգընդախոր և ընդարձակ,
 Զոր կիսառնըն կակոսի գրաւէր գըժնեայ կերպարան,
 Անմատոյց ճառագայթից արեգական. ծըխէր երկիր
 Անգանօր ջերաջերմ, միշտ ի նախճիր նորանոր. [դէնք
 Կախեալ կային յահագին գէմք ի գրանգիս անգ մտրգկե-
 Տըժգոյնք ծիւրեալք մահատիպք: Հրէշիս այսմիկ Հեփեստ
 [էր հայր,
 Զորոյ ըզհուր թուխ յորկորոյ ժայթքէր խոշաարն հըսկա
 [յաձև:

Յետոյ ուրեմն ժամանակն ած անձկանաց մերոց օճան
 Ըզգալուսա աստուածոյն. զի վրէժխընդիր վեհ Ալկիդէս,
 Խըրոխտ ի մահ և ի կապուտ եռանձնէին Գերբոնի, [կաւ.
 Ածէր ընդ այսըր զըւարակս ընդ իւր ըստուարս յաղթանա-
 Ըզհոմիտն և ըզգետ ծածկէ նախիր լայնալիր:
 Այլ միաք կակոսի մայեալ զի մի ինչ ոճիր [յաղթանգամս
 Թողցէ կամ գաւ՝ յոր չիշխիցէ. բառնայ քառեակ ցուչ
 Ի գոմոց, և երընջոց զոյգըս կըրկին գեղանիս.
 Եւ զի մի հետք կըճղակաց մնայցեն ուղիղք, զագեացն ի
 Զըգէ ածէ ի քարայր, և ըզգողենս յետախաղաց [քարշ
 Մածկէ անտես յետկոյս ժայռին, հետըս և ոչ մի թողեալ
 [յայց
 Հետազօտից քարանձաւին: Բայց ամփիտրեանն Հերակլեայ՝
 Արտաքս ի գոմոց ըզկըշտապինգ անգեայն ի չու
 Մինչ հանէր, արջառք ի յելս անգ բառաչել ըսկըսանին,
 Լընուն զանառուս ի պոչիւն, թողուն ըզըլուրս ազաղակաւ:
 Յայնժամ մի յարջառոց ի լայնատարըր քարայրէն
 Կըրկնեալ անգրէն բառաչէր, բանտեալն ըզյոյս կակեայ
 [պտարեալ:

Անդ Ալիիգեայ գառնակըսկիծ զայրացեալցաւք ի Թոււի
[լեղի,

Յափըշտակէ ձեռամբ ըզղէնս, և զծանրաբեռն ոստովք կազ
[նին,

Դիմէ բարձու լերինն ի ծայր. անգ նախ տեսին մերքն ըզ
[կահոս

Ահարեկ յուզեալ աչօք. փախչէր ի յայրն արշաւակի
Երագ քան զԵւր, Թևս երկիւղին ի գարշապարսըն յաւե
[լեալ:

Իբրէ ի ներքս անգ ծածկեցաւ, հար խորտակեաց ըզըզ
[Թայս,

Եւ ըզժայուն անհեթեթ՝ որ երկաթով կայր առկախեալ
Ըստ հայրենի արուեստին, իջուցեալ զայն Թաւալեցոյց,

Ըզգրանգիտ անձաւոյն խոջիւն այնուիկ ամրափակեալ:

Եւ աւասիկ անգր հասանէ գայ ՏիրինԹեանըն զայրագին,

Եւ մըտիցըն հետազօտ՝ յածի մերթ յայս կոյս և մերթ յայն
Կըրճըտելով զատամուսնս. երիցըս շուրջ զաւենտինեան

Լերամբն ողջոյն պատի վառեալ սըրամըտուԹեամբ, երի
[ցըս փորձ

Ի վիմարգեան սեամուըն փորձէ ճիգն ի նանիր, երիցըս խոնջ
Վաստակարեկ տեղի տըւեալ՝ գառնայ բազմի ի ձոր հովաին:

Էր ապառաժ սուր ի յեա կոյս քարանձաւին զերծ ի վի
Շուրջանակի, ամենաբարձըր կանգնաւոր ի աեսիլ, [մաց

Չարագուժից հաւուց ի բոյն պատկանաւոր. յեցեալ ի նոյն
Դիւցազն յաջմէ, զի յահեկէ ի դեաըն կոյս ժայուըն միտեր,

Դըրգուեցոյց զայն, և ի խորոց խըլեալ ի բաց յարմատոց,
Մըզեաց յանկարծակի. Թընդաց եթեր մեծ յանկմանէն,

Դըզըրգեցան դետափուներ, և զարհուրեալ դեան ընկըրկեր.
Բացաւ անձաւըն Կակոսի, և արքունիքն ահագինք

Երևեցան. ի յայտ եկին վիրապք խորինք նըսեմաստուերք.
Ոչ ինչ այլազգք քան յորժամ բուււըն զօրուԹեամբ հեր
[ձեալ երկիր

Բացցէ ըզկայս գըժոխոց և զմահատիպն ի յայս անցէ
ՁարբայուԹիւն ատելի գից, և ի բարձանց տեսցին ան
[գունդք

Ձարհուրելիք, սոսկալով ուրուաց ընդ լոյսն ի ներքս հե
[ղեալ:

Յայնժամ Հերակլ է վերուստ զընկձեալն յանկարծ ի շող
[լուսոյ,

Մինչ ըմբռնեալ ի խոր ժայռի անգ մըռընչէր նորանըջան,
Նետիւք խոցոտեաց, և զամենայն առեալ ի զէն,

Կռձեղբք և մեծամեծ վիմօք արար չարակոշկոճ: [խուսա,
Իսկ նա, զի ոչ այնուհետև գոյր ի վտանգէ անտի փա-

Մուխ սաստիկ յորկորոյ ժայթքեալ ի գուրս հրաշապա-
[տում,

Պատեաց ըզտունն ի կոյր խաւար՝ բարձեալ յաչաց զէից
[տեսիլ,

Եւ գիշեր ծըխամած ի քարայրի անգ Թանձրացոյց
Հուր խառն ընդ մէջ. այլ ոչ ժուժեաց Ալկիդէս, արկ
[զանձն ի ստոր

Ընդոստ ի հուրըն գահազէժ՝ ուր Թանձրագոյն ծըխոյն յոր-
[ձանք

Յորդէին, և Թուխ ամպրոպ կուտէր անձաւըն սոսկալի.
Անդ ըզկակոս, որ ի զուր ի խաւարի անգ ժայթքէր հուր,

Ըմբռնեալ և կաշկանդեալ և ընդ իւրև ըզնա ընկձեալ,
Զաչարն խըլեաց, հեղձոյց զորկորըն ցամաքեալ յարենէ:

Յայնժամ քարայրըն մըթին բացաւ գրանդիւք խորաակե-
[լովք,

Եւ անդեայն յափըշտակեալ և երգմնակուռ ժըխտեալն ա-
[ւար

Եկն ի լոյս. ինքըն ձըգի զտիցն ի քարոչ դի անգեզեայ,
Ոչ յագին սիրաք ընդ տեսիլ զարհուրելեացն ականողաց

Եւ գիմաց, և Թաւահեր լանջաց նորա, մարգադիմին
Փազանի, և ընդ շիջումըն բոցաշունչ որկորոյն:

ՎԻՐԳԻԼԻՈՍ. ԵՆԷԻԴ. Ե.

ՎԵՐՋԻՆ ԶԱԿԱՏԱՄԱՐՑ ՄԻՀՐԴԱՏԱՑ ԸՆԴԴԵՄ

ՀՈՌՎՄԱՅԵՑԻՈՑ

ԱՐՐԱՑ

Արքայն ի ժամ իւր վախճանին հասեալ կայ,
 Եւ ոչ այլ ինչ՝ բայց, տիկին, նըշոյլ առկայծ նըշմարէ:
 Ի մեկնելս՝ արիւննուող բարձեալ բերէր ի վաշտկաց,
 Եւ Քսիփար արտօսրաթոր՝ ոտից նոցա զհեա գընայր:

ՄՈՆԻՄ

Քսիփար, ան մեծդ աստուածք. արթնն իցեմ. երկմըտեմ,
 Եւ չիշխեմ, բայց դողուծեամբ ունկանս իմում հաւատալ.
 Քսիփար ողջ է տակաւին, Քսիփար զոր ողբք իմ է լացք...

ԱՐՐԱՑ

Կենդանի է, լի փառք, բայց տառապեալ ի ցաւոց:
 Մահուն իւրոյ շըշուկ սըփռեալ ի վայրս յայտոսիկ՝
 Ոչ ըզձեզ և եթ միայն տարապարտուց շըփոծեաց,
 Որ ընդ բնաւ աղաղակօքն հասաստեին զայն Հոռովք՝
 Մահաշունչ այդ համբաւով զամենայն սիրտ սառուցին:
 Թագաւորն ինքնին պատրեալ՝ եհեզ վըտակս արտասուաց,
 Եւ ապա զձախողելոյ զինուց իւրոց աներկմիա՝
 Յապրստամբ որգւոյն իւրմէ շուրջանակի պաշարեալ,
 Անյոյս յօգնութենէ, ի շտապ տագնապ մօտալուա,
 Եւ տեսեալ ևս ի վերայ ցաւոց սըրտին և քինուն
 ԶՀոռովոցն արծուենըշանս ածեալ խառնեալ ընդ դրօշս իւր
 Ոչ յայլ ինչ տենչացաւ՝ քան ի հորդեւ իւր շաւիղս
 Ի փախուսա յեպերանացն ի ձեռս իւրեանց մատնելոյ:
 Զառաջինն ի փորձ կոչեաց ըզմահահոտ զօրուծիւնս
 Ըզթունից՝ զորս անվըրէպ էր նա ինքնին համարեալ.
 Բայց անզօրս առ հասարակ և ապիկարս եղիտ անդ.
 Եւ ասէ. « Նանիբ յոյս՝ զոր ես անչափ վանեցի.
 Հոգ տարեալ ամենայն թունից ընդդէմ պընդեւ զիս՝

Ի գերեւ արարի զսլքտուղն ողջոյն ում գոյր ակն .
 Արդ այժմիկ փորձեսցուք հաւաստագոյն օգնութիւն .
 Եւ մահ կ'ս եղեռնաւոր հռովմայեցւոցդ՝ ընտրեսցուք » :
 Զայս ասէ , և ձայնատուր անթիւ գընդաց նոցին լեալ ,
 Ընդ բանին և ըզգրունս ապարանից բանալ աայ .
 Ի տեսիլ երեսացն՝ որոց անկզ մոլութիւն
 Ի ճակատըս նոցին բազում անգամ ընկէց աս ,
 Գոյր զնոսա տեսանել զամենեսին յետս ընդ կրուկ ,
 Եւ թողեալ ընդ մէջ մեր և նոցա լայն ասպարէզ .
 Եւ անա կէսք ի նոցունց ընթանալին զարհուրեալք
 Մինչ ի նաւն անկանել որոց ածեալ էր զնոսա :
 Բայց սակայն , ասացից . ո՛հ խրախուսեալք ի Փառնակ ,
 Եւ ի սիրտս իւրեանց ամօթ զյանդրգնութիւնն արծար-
 Խիզախեալ միւսանգամ ի թագաւորն ետուն գւոյթ , [ծեալ ,
 Զոր վաշտկան ինչ զօրուն ինև հանդերձ պահպանէր :
 Ո՛վ կարօղ է պատմել՝ յինչ անհաւատ արարուածս ,
 Յինչ հարուածս , համանգամայն ի հայեցուած սոսկալի
 Բազուկ իւր , փառաւորեալ զայս ևս յետին մի նըւագ .
 Մեծի այսըր գիւցազինըս քաջութեանց եզ աւարտ :
 Հուսկ ապա , խոնջ՝ ի փոշի և յապաժոյժ թաթաւեալ՝
 Իւր պատուար ի գիականց էր կառուցեալ մեծապանծ :
 Գունդ մի այլ պատերազմիկ դըրգեալ խաղաց ի մեր կոյս .
 Յըմբընել ըզնա Հոռոմք ըզձիգս իւրեանց արգելին ,
 Ըլձային համագունդ ըզՄիհրդատ տաքնապել :
 Իսկ նա . « Ծատ է արդ , ասէ առ իս , իմս Արբատ ,
 Արիւն և մոլութիւն ոստուցանեն զիս յառաջ .
 Մանաւանդ մի կենդանւոյն ըզՄիհրդատ մասնեսցուք » :
 Եւ անդէն վաղձաղակի մըխեաց ի սիրտ իւր ըզսուրն .
 Այլ փախչէր մահ տակաւին ի մեծ ոգւոյն պատրելոյ :
 Դիւցազն այն ի գիրկս իմ գլորեալ անկաւ արիւննուշտ ,
 Կըթուցեալ , և զայրանայր ևս ընդգէմ յամբըր մահուն .
 Եւ տըրտունջ առ իս եղեալ ընդ անըսպառ կեանըս իւր ,
 Տակաւին ըզծանրացեալ ձեռն իւր ի վեր ամբառնայր ,
 Եւ ցուցեալ բաղկիս իմում ըզսըրտագուրըս մարմնոյն՝
 Թըւէր այլ իմըն հասաոյր հարուածոյ շնորհս օղերսել :
 Այն ինչ էս յանհընարին ցաւոց սըրտի մորմոքեալ՝

Խորհէի անդէն և անդ հարկանել զիս ի հոգի,
Աղաղակք մեծամեծք զաչս իմ յանկարծ դարձուցին,
Եւ տեսի, ո՞ հաւատայր, տեսի բեկեալս յամենուստ
Եւ մատնեալս ի պարտութիւն զհռովմայեցիոն և զՓառնակ,
Եւ թողեալ զասպարէսն՝ ի նաւս իւրեանց փախուցեալս.
Եւ յաղթողն, ի մեր կոյս յառաջադէմ արշաւեալ՝
Եկն եհաս՝ չըրտուցելոց աչացս եցոյց ըզՔսիփար:

ՄՈՆԻՄ

Ո՛վ երկինք արդար:

ԱՐՐԱՏ

Քսիփար՝ հաւատարիմ կացեալ ցանգ,

Ձոր և անգ ի սասակացեալ կրուսին ջոկաւ ապրստամբ
Հրամանաւ եղբոր իւրոյ ի մէջ փակեալ պաշարէր.
Իսկ նորա ի ձեռաց նոցին զերծեալ մազապուր՝
Ընկըրկեալ ըզխազմարարսն և զսինլըբորն շահեալ,
Երանիկ և խայտալից յազիոզորմ յայն ժամու
Ընդ մէջ բիւր վիրաւորաց, փայլակներն թաց, յաղթական,
Էր հորգեալ իւր ճանապարհ սքանչելաշուք առ հայր իւր:

Տես գու ինձ՝ զինչ սոսկալիք յաջորդեցին ցընծութեանն.
Բազուկ իւր՝ յոտս արքային զինքն ընկենլոց էր գի ցուրտ.
Փութացեալ ըզգէմ կալաք կատաղութեան մոլելոյն:
Ի տըխուր ժամունն դարձաւ և հայեցաւ յիս արքայ,
Եւ ասէ ցիս նըւաղեալ ձայնիւ հազիւ շքնչելոյ.

« Եթէ գոյ դեռ ժամանակ, ընթա զգըշխոյն ապրեցո »:
Յայս բարբառ զգողի հարեալ ըզՔսիփարայ և ըզքէն՝
Խիթացայ, կասկածեցի՝ նգ գաղտնի հրաման ինչ սասակի.
Թէպէտ խոնջ վաստակարեկ՝ եռանդն ոգւոյս և երկիւզ
Ձորութիւն պարգևեցին ինձ նոր ի շտապ ընթացիցս.
Եւ փոխան չարեաց մերոց՝ ես երջանիկ զանձն հաշուիմ,
Խափանեալ ըզպատուհասգ՝ որ զերկոսեանգ սատակէր:

ՌԵՍԻՆ ՄԻԿԻՏԱ

ԱՐՄԻՒՆ ՀՌՈՎՄԵԱԿԱՆ

Յորմէ հետէ ընդդէմ երկնիցն հոլովման
Փոխեաց զարծիւնն Կոստանդին, յոր սըլացաւ
Հընոյն ըզհետ ըզԼաւինիա Վժռարոզի:

Երկերիւր և աւելի ամօք եկաց
Թըռչունն աստուածատուր յԵւրոպեան ծայրս:
Մօտ առ լերամբքըն յորոց նախ ել մեկնեցաւ:

Եւ փետրոցն ընդ հովանեաւ սրբանըւէր
Անգանօր վարեաց զաշխարհ ձեռաց ի ձեռս:
Եւ այսպէս փոխանակեալ հաս ընդ իմո՞վս:

Ինքնակալ եղէ և եմ՝ Յուստինիան:
Եւ ի կամաց նախըն Սիրոյ՝ զոր յիս ըզգամ,
Յօրինաց բարձի զունայնն և զԹարմատար:

Եւ մինչ չև եղեալ ի գործս այս ուշակալ՝
Մի բնուԹիւն գոլ ի Քրիստոս, ոչ աւելի
Հաւատայի, կալով ի նմին հաճ և հաւան:

Այլ օրհնայն Ագաթիտոս՝ այն որ հովիւ
Գերագոյն եղև հօտի՝ առ սեւըն կրօնս,
Իւրովք բանիւք՝ որոց հաւատս ընծայեցի,
Ուղղեաց զիս. և արդ ըզբանս իւր տեսանեմ՝
Ակն յայանի, զոր օրինակ տեսանես գու
Յառարկուածն համայն զուղիղն և զանուզիղ:

Իբրև եղէ Եկեղեցւոյ ընթացակից՝
Կամեցաւ Տէր շնորհիւն իւր յիս շքնչեւ
Ըզվեհ հ վաստակն՝ առ որ և զանձն ետու համբուն:

Առ Բեխսար արարի յանձն ըզգօրուԹիւնս,
Յորմէ եկաց աջն երկնաւոր յաւետ անբաժ՝
Նըշանակեալ Թէ ինձ ի ճահ էր հանդարտել:

Արդ աւարտ է աստանօր պատասխանուոյս
Առ հարցուած քո առաջին. այլ հանգամանք
Իրացն հարկեն զիս յաւելուլ ինչ ինչ կըցորդ:

Ձի տեսցես Թէ որքան գոյզըն իրաւամբ
Նըշանին ամենասուրբ շարժին ընդդէմ,
Սեպհականեալ ոմանց, այլոց ոսոխելով:

Տես թէ որքան զօրով թիւն զինքն արժանի
Արար պատուոյ . յես Պալլանտեսոյ մեռանելոյն ,
Առ ի տալ նրմին ըզբարձ արքայական :

Գիտես կալաւ ըզբնականութիւն իւր յԱլլպիոն
Աւելի քան զերեակ գար , մինչև զ'երեք
Ընդ երկոց մարտեան վասն իւր անգամ մի ևս :

Գիտես զինչ ի Սարինեանց արար չարեաց
Յըլուկրետեսոյ ցաւս առ եօթամբք թագաւորօք ,
Յաղժող գըտեալ գրացի ազանց չուրջանակի :

Գիտիցես և զոր արարն ի քաջազանց
Կըրեալ Հռովմայ ընդգէմ Պրեննեսոյ և Պիւռոսի ,
Ընդգէմ այլոց պետականաց և հոլելոց .

Որով Տորկուաա և Կուինտոս՝ վերածայնեալն
Յանինամ հերաց , և Դեկոսեանք և Փարիոսք
Կալան անուն՝ որք խընկելիքն են ինձ յորգոր :

Ըզգեանեաց նա ըզխորոխառումն Արարացւոց ,
Ուրք անցին ըզկնի անցիցն Աննիբալայ
'Դ ապալերս՝ ուստի վայրէջք քոյին Պագոս :

Ընդ նովաւ պատանեկիկք՝ յաղժող գըտան
ԸՍկիպիոն և Պոմպէոս . և խիսա ցուցաւ
Առ բըլուրն ընդ որով գու եկիր ի ծնունդ :

Ի ժամուն յոր ապա կա շ եզեն երկնից
Համօրէն զաշխարհ առնել ըստ իւր պայծառ ,
Ըստ կամացըն Հռովմայ բարձ զայն Կեսար :

Եւ զոր արար նա ի Վարեայ մինչ ի Հուենոս
Իզարա ետես ւ՝ Էրա , տես և Սեննա ,
Եւ ամենայն օրովք Հռոգան լի է հովիտք :

Զոր արար մինչ գամ մի ելն ի Հուաւեննայ
Եւ վազեաց ընդ Հուուրիկոն՝ այնտէս եզև
Սլացաթև՝ զի չհասանեն լեզու կամ գրիչ :

Ի Սպանիա դարձոյց ըզգօրն , յետոյ ուրեմն
Ի Դուրացոյ , և խորտակեաց ըզՓարսալիա
Զայն օրինակ՝ զ'և Զերմըն՝ Նիլ ըզցաւն ըզգաց :

ԶԱնտագրոս և զՍիմոյիս՝ ուստի խաղացն
Ետես դարձեալ , և ուրանօր հանգչի Հեկտոր .
Եւ Պըտլոմեայ ապա ի մնաս գոռաց անդրէն :

Անգուտո կայծակնացայտ եկն առ Յուքատ-
Դարձ ի վերջոյ արար ի ձերըզ խըրթնին կոյա,
Յականջառուրս եկեալ իւր փող պոմպէական ։

Զոր արարն ընդ ծանրակիր հեակողին
Ի Դրժոխս հաջէ Բրուտոս կասսիոսիւ,
Եւ Մոգոնա և Պերուգիա ցաւըս կրեցին ։

Ընդ որ դեռ լայ կլէոպատրա տըխրագգեցիկ,
Որ ի գիմացըն փախչելով ըզմահ յիժէ
Ճաշակեաց յանակընկալս և դառնալիր ։

Ընդ սըմին վարգեցաւ յափրն կարմիր,
Ընդ սըմին այնպէս զաշխարհ եգ յանգորրու՝
Զի մեհենին Յանոսի դուռըն փակեցաւ ։

Սակոյն զոր նախ արար նըշանն՝ այն որ ապ ինձ
Բարբառել, և յետ աւուրց ունէր առնել
Մահացու արքայութեան՝ որ կայ 'նգ իւրե,

Դոյզն և մըռայլ կերպարանի ի տեսանել
Եթէ ի ձեռն ականորկեսցի երրորդ կայսեր,
Լուսափայլ ականողեօք և սեռն ի սէր ։

Զի կենդանին Արգարութիւն՝ որ ինձ ազգէն,
Ընձեռեաց իւրով ձեռամբ զորմէ խօսիմս
Փառս այնմիկ՝ խընդրել ըզլրէժ սըրտըտութեանն ։

Այլ աստէն ըսքանչացիր ընդ որ յարեմս.
Անգուտո խաղաց ընդ Տիտոսի լընուլ ըզքէն
Վրիժապարա վաղընջական եզերանաց ։

Եւ յորժամ զՅկեղեցի սուրբ խածատեաց
Ատամըն Լոնգորարգ՝ ընդ իւր Թեոփ
Կարողոս Մեծն յաղթանակեալ՝ օժանգակեաց ։

ՏԱՆԻԷ • Արայոթիւն ։

ՄԵՆԱՄԱՐՑՈՒԹԻՒՆ ՑԱՆԿՐԵԴԵԱՑ ԸՆԴ ԿԼՈՐԻՆԴԱՑ

ԵՒ ՄԿՐՑԵԼ ԶՆԱ Ի ԿԱՐԵՎԵՐ ՄԱՀՈՒՆ

Վազէն առ սեամս երկոքին, և զհետ նոցա տագնապաւ
[փոյթ

Հրոսեն ըշտապաւ հեզեղասաստ գունգք Փըռանկաց.
Հարկանէ Սիւլէյման յետս ընկըրկեալ զամենեսին,
Եւ հանգէպ երեսաց Կըլտրինգայ փակին դըրունք:
Սա լոկ մընաց արտաքոյ. զի ի պահու ընդ գուռն անցից
Արտաքս արշաւասոյր խաղայր ըզհետ Արիմոնեայ,
Գազանացեալ սըրամըտութեամբ տալ փոխան վէրս ընդ
[հարուածոյն.

Եւ խոցեաց, մինչ Արդանտէ չգիտէր ըզնա ի գուրս ելեալ.
Զի զարթուն խնամըս սըրաի և ըզտեսիլ՝ բարձին յաչաց
Մարտ խազմին, ամբոխ արանց, մառախլապարտ երկինք
[համբուն:

Այլ մինչ յարեան ոսոխին զիջանէր բոց սըրաին տապոյ,
Եւ յանձին լինէր ըզգաստ զ'առականեալ էին դըրունք,
Եւ զիւրև գունգք թըշնամեաց, կերպարանէր իբր ըզմեւ
[ռեալ:

Բայց ի միտսն անկաւ անգէն նորահընար գիւտ փըրկոււ
[թեան,

Տեսեալ զի ոչ խէթ ինչ բընաւ ըզնըմանէ գոյր ոսոխին.
Ի նոսա կեղծաւորէր, և 'նգ անծանօթ դըրոհ մարգկան
Խառնէր զանձըն խաղաղիկ յամենեցուն անգէա մըտաց:

Որպէս գայլ անմըռունչ յետ եզեռան ծածուկ գործոյ
Դարձ արարեալ դայ յանտառն և զարտուզի գընայ շաւիղ,
Այսպէս և կոյսըն զանխուլ երթայր ի ճեման և յառաջէր,
Օգնական ի թեկն առեալ զաղմուկ գընգին, զոգոց մըռայլ:
Այլ սակայն Տանկրեգեայ լոկ դէպ եղև զնա ճանաչել,
Որ վայրիկ մի յառաջ եկեալ հասեալ էր ի տեղին:

Մինչ այն ինչ կոյսըն զԱրիմոն էարկ յերկիր յորհաս մահու,
Մտես նա, և զհետ կըրթէր արշաւակի դէս ակն արկեալ:
Շահատակել ի հանգէս ցանկայ ընդ իւր ի փորձ զինուց,

Կարծեցեալ զոք արժանի իբր ի կըշիռ անձին ուժոյ :
 Պատ առեալ գընայ կոյսն ընդ ասփափայ ծագըս լերանց
 Առ այլ գուռըն մըտից ուստ անցանել եգեալ էր գէմ :
 Մուկգին գայ նա ընդ հետ , մինչ զի հեռուստ իսկ քաջ ի
 [բաց
 Լըսի զինուցըն շառաչիւն . կոյսն ի թիկունս անգր հայե-
 [ցեալ :
 « Ո՛վ այր գուռ , գոչէ , զի՛նչ ամել քեզ , հիմ արշաւել » :
 Եւ նորա՝ « Ըզխազմ ե մահ , կըրկնեալ անգրէն պատաս-
 [խանի .
 « Խազմ ե մահ կալցեն ըզքեզ , տաց զոր ցանկասրդ քեզ
 [ընդ հուպ » ,
 Կոյսն առնէ բանին դարձուած , կացեալ այնպէս պինդ ի
 Տեսեալ Տանկրեգեայ հետեամարտ ըզթըշնամին [տեղուջ :
 Իջանէ յերիվարէն՝ ոչ կամեցեալ ըզձին վարել :
 Մերկանան երկոքեան ըզսուր երկամն ի պատենից .
 Բորբոքեալ գոռոզուժեամբ , վառեալք ի հուր գոռ զայ-
 [բուծի
 Հանգիպել երթան միմեանց . ոչինչ ընդհատ հանգունատիպք
 Նախանձարեկ զոյք ցըլուց ի բարկուծիւն բորբ բըրգե-
 [լոց :
 Լուսաճաճանչ արեգին ե բնաւ թատերց իսկ հանգիսի
 Գործք արժանիք արգարև էին դոքին յիշատակաց .
 Այլ գուռ , Գիշեր , խաւարամած որ ի ծոցիդ խոր մըթու-
 [թեան
 Ըզմեծապանծ շահատակիւնն արկեր յանյուշ մոռացու-
 [թիւն ,
 Տուր ինձ ծն վերբերել զայն ի լոյս տունջեան գերապայծառ ,
 Եւ ազգաց եկեւոց ի գիտուծիւն տալ ծանօթի :
 Կեցցէ հըռչակ համբաւոյն , ե ի հանդէս նոցին փառաց
 Փայլեացէ խաւարին վքսեմափառ քոյ յիշատակ :
 Ոչ խընդրեն խուսափել , նահանջել ինչ կամ կալ ի բաց .
 Ոչ հնարից հանձարոյ կըցորդուծիւն է անդանոր .
 Ոչ գիտեն հարուտծս ի կեղծ , որ կըշուակի ե կամ ի շեշտ-
 ի մուկըյն ե յըստուերաց լինի ապախա արուեստա ճար .
 [տար :

Կոփիւնք ա՛նեզ սուսերաց չընչեն ընդ կուճոս երկաթա-
[կուռ .

Անյողգողգ հարեալ ի բոյս զոտս ամրապինգ կամ ձեռն ի
[գործ :

Ոչ հարուածոց է վերեպ , ոչ սուսերաց շկահիւն ի զուր :

Բորբոքեալ վառէ ամօթ ըզբարկութիւն ի վրէժ քինու :

Այլ և քէն վրէժիւնդիր ըզպատկառանսն արծարծանէ .

Յորդեռանդըն զայրոյթ և հանգամանք նորանորոգ .

Առաւելուն ըզհարուածս և ցանգ զըշտասպ տազնապելոյ :

Աղմըկեալ գամ քան ըզգամ և առ ի նեղ անկեալ մարտին ,

Բաղխեն զիրեարս բըռնցի՛ ոչ օգնելով սուր առ ի գործ ,

Մարտուցեալ վահանաւ , գըլխանոցօք , ժանդք և անգութ :

Կորովի բազկօք ըզկոյսն երիցս ասպետն ի ծոց պընդէր ,

Որ և երիցս հոսէր զանձն ի կապանացըն խըստութեան ,

Ի կապանաց ոչ սիրելւոյ՝ այլ ոստիւն գուռողասիրտ : [ըով .

Անգրէն զերկաթ արկեալք ի գործ և թաթաւեն ի վէրս յո-

Հուսկ ուրեմըն շընչասպառ և երկոքեան վատտակարեկք

Սահաւիկ մի նահանջին յաշխատութեանց առնուլ ոգի :

Ամբարձեալ զաչս յիրեարս և ըզքեռինըս ծանրութեան

Հաստառեն անզօր մարմնոց յեց սուսերաց յերախակալս :

Այն ինչ շողք վերջոսնէին յետին աստեղըն գիշերոյ

Ի նախկին լոյս տուընջեան ցայտեալ յերեսս արևելից ,

Ջախոյեանն ետես Տանկրեգ լըցեալ արեան բիւր հոսանջք .

Սոնքացեալ խընդաց ի սիրա յանձին կորովըս հայեցեալ :-

Ո՛վ մըտացս յիմարութեան . զամեն գովեալ բազգի շընորհ :

Եզո՛ւկ քեզ . ըզմէ՞ խընդաս . քանի՞ տըխուր կան յաղթա-

[նակք ,

Եւ բանիցդ այդ պարծանաց քանի՞ ողորմ է կատարած :

Ձի աչկունքդ այդ քոյին՝ թէ կեալ ի կեանս հանդուրժի-

[ցես ,

Ընդ մէն մի շիթս արեան փոխատրեօցեն ծովս արտասուաց :-

Անմըռուունչ առ վայր մի կացեալ այնպէս պիչ հայեցիւք

Հանգեան ի վատտակոց մենամարտիկքն տրիւնուող :

Ուր ուրեմըն Տանկրեգեայ ըզլըռութիւնն հատեալ երկար ,

Բարբառի այսպէս առ կոյսն առ ի զանուն նորին գիտել .

« Մեզ այս բազդ եհաս դըժնեայ՝ զի ի հանգէս մըխեալ
[ուժոյ ,

Եւ լըռուութիւն աստանօր զայնս ընդ քօղով արկցէ զանխուշ
Այլ քանզի վըճիռ անդուծ ճակատագրին մեզ զըլտնայ
Վըկայս ըստ արժանի քաջարութեանց և գըրուատիս,
Աղաչեմ, թէ ընդ զինուք ազաչանաց իցէ օրէն,
Ծանուցես ինձ դու աստէն զանուն քոյին՝ զկենաց վիճակ,
Իմանալ հաւաստի՝ յազթող բնաւին իմ կամ յազթեալ,
Թէ յուժմէ փտուաւորեալ օրհաս մահուս կամ յազթու-
[Թիւն]»:

«Քեզ ընդ վայր է խընդրել, վայրագն ընդգէմ առնէ
[Գարձուած],

Ջոր ինչ ցարդ յամենեցուն պահել զանխուշ սովորեցայ:
Սակայն զի փոյթ թէ ո՛ր իցեմ. զի նըկատես դու յանգիման
Յերկուց զոք որ զաշտարակըն բարձրաբերձ ետուն հըրոյ ։
Տանկրեգեայ ընդ այս բան կայծակնացայս սըրտմըտու-
[Թեամբ]

«Իբժպատեհ գիպար ժամու ոգել բարբառ, յաւել ասել-
Ի խընդիր վըրիժուց հըրապուրեն զօգիս իմ արդ,
Խուժարուժ բարբարոս, բարբառ քոյին և լըռուութիւն»:

Ջայրոյթն ի սիրտս անկեալ անդրէն գըրգուէ ի ուազմ
[ըզպարտասեալն]:

Ո՛վ մարտին գազանութեան, ուստ արուեստի գործ տա-
[րագիր],

Ուր սպառեալ ոյժ բոլոր և մոլուութիւն կըռուի փոխան,
Քանի՛ սուսերքք սյոդքիկ՝ յո՛ւ և ուրեք թէ թօթափեալ,
Լայնածաւալ բանան վէրս արեանց՝ ի զէն և ի մարմնի.
Եւ թէ կեան գեռ՝ սըրտմըտութիւն լոկ ըզնոցուն կեանըս
[պընդէ]:

Ջերգ էգեանն անդընդախոր, եթէ լըռեն հիւսիս՝ հա-
[րաւ],

Որ յուզեալ գամ մի յառաջ ամբոխեցին կուտակագէզ,
Ձե իսպառ անգորրացեալ, զի տակաւին ճօճին երեսք,
Լըսելի առնէ ըզձայն ըստուար ալեացըն կոծելոց.
Նոյն և յարեանցըն թափուրք՝ թէ պակասէ ոյժ զօրութեան
Որով վէրս եգին միմանց, գիմագրաւեն ի բիւր վըտանգս
Սըրտեռանդն աշխուժիւք վառ ի նախկին կատաղութիւն:
Իայց արդ աւանիկ հասեալ ժամուս մահաբերի

Ձի կենացըն վախճան ճակատագրեալ կըլորինգայ :
 Սայրասուր մըխեալ քաջին զերկաթն ի ծոցըն գեղանի
 Մըտանէ խոր ի ներքս յադեալ յարեանն արբեցուծիւն :
 Ջերմալերմ լըցան ի գետ համայն հանգերձքըն ոսկեհուռ ,
 Գեռարուսիկ որ զըստինսըն պընդէին գիրգ և փափուկ :
 Ըզքացեալ անդէն կուսին ըզմահարեր հարուածն յինքեան
 Մընկզբ կըթզւցեալովք կայր թալկացեալ ոգի զոգւով :

Իսկ յառաջ զօրավարին վարեալ անձին ըզյազթուծիւն
 Եւ ոտընհար ըսպառնալեօք ձըգէ յերկիր ըզկոյտըն խոց :
 Ձև յերկիր թաւալեալ ի հեծեծանս աղիողորմ
 Ըզվերջին խօսսըն մընչէր նորոգատուր ազմամբ հոգւոյն ,
 Հաւատոյ՝ յուսոյ՝ սիրոյ , աստուածածիր պարգև շնորհաց ,
 Ձի հանգիցէ յաղախնութիւն ըստամբակեալն ընդ կեանս

[յամայր :

« Յազթեցեր , բարեկամ . թողեալ իմ քեզ , թող ինձ և
 [դու .

Ոչ մարմնոյս արիութեան , այլ ոհ , աւաղ , հոգւոյս իմ լոկ .
 Դու ընդ այնր աղօթեան՝ մըկըրտուծեամբ սըրբեալ ըզմեղս » :
 Այդոքիկ մեղմ մըրմունջք ողոքանօք հընչեալ ախորժ
 Գորովեն ըզսիրա քաջին , և անցուցեալ զսըրտմըտուծիւն
 Լուծանեն զականողիս յորդոր ի լալ և յարտասուս :

Ոչ հեռի ի վայրացն անդ ի ծոցոյ բըղխեալ լերին
 Յորձանօք խոխոջաձայն վազէր գընայր վըտակ փւքրիկ .
 Փուծացեալ անդէն քաջին լընու ի ջուր ըզսաղաւարտն
 Եւ դառնայ արխրազգեաց յըսպասն ի մեծ բարեպաշտօն .
 Այլ ըզճօկատն անծանօթ այն ինչ պարզեալ և նըջմարէր ,
 Ըզդողանի ձեռքն հարան՝ կայր ըզտեղեալն արձանացեալ
 Անբարբառ ի լըռութեան , քանզի ետես անդ և ծանեալ .
 Ո՛վ ծանօթութիւն , ո՛վ հանգիպուձըն տեսութեան :

Այլ ի պահուն զօրացեալ բոլոր ուժով պինգ ի սըրտին
 կեայր ժուժայր տակաւ ի կեանս , և ոգորեալ ընդ փշտս
 [ոգւոյն ,

Ձորմահացոյցըն յերկաթ՝ փոխել ի կեանս փուծայր ջըրով :
 Այն ինչ քաջին աւարտեալ եռանդագին զաղօթսըն սուրբ ,
 կոյսն առ իինդ լըցեալ ոըրտին ժըմփա յերեսսըն փայլէ .
 [ցոյց .

Եւ ասել թուէր ի մահուն թեթեալութիչ և բերկրալիր՝
Ահա բանին ինձ երկինք, խաղաղութեան գընամ զուզի:

Դալուկըն գեղեցիկ մածեալ յերեսսն ձիւնափայլ,
Շուշանին որպէս ի փունջ խառն յեռեալ թէ մանիշակք:
Իկեռեալ ունէր յերկինս զարտեանունս ականողեաց,
Եւ երկինք ընդ արևու խանդազակաթ թուէին հայել:
Յըրտագին ըզմերկ ձեռն յասպեան ի վեր անդր ամբար-
[ձեալ

Եւ գըրաւ ընդ բանից մատուցանէր խաղաղութեան:
Այսպէս ի քուն զերդ յանգորրու կոյսըն հանդեալ հըրա-
[շագեղ:

ԴԱՍՍՈՅ . Երոստէ՛մ ապոէալ:

ՄԱՀ ԻԼԴԵԳՈՆԴԱՅ

Եւ վերացեալ յաչացն՝ երկնից յայտնութիւն,
Յոր ընկղուզեալ անձն էր արբմամբ լուսալիր,
Առ նա՛ որ զմիտան յափըշտակեաց անդրագոյն
Արտասուագին զբիբսըն կալեալ աըրամալիր,
« Մարթ ինձ թափել, ասէ, զհանգերձ է մահուն
Մինչ տակուին հօրս երեսաց եմ զազիր .
Եւ մեռանե՛լ ի ճակատուս գըրոշմեալ
Կրելով զանէծըս անդր ի կեանս հանգերձեալ:
Եւ զի՛նչ արգեօք մայրն իմ ամբիծ ասիցէ
Ի գրանցն երկնից եկաւորեալ ընդ առաջ,
Ըզմիածին երբ ըզգըստրիկ իւր տեսցէ
Մեռեալ խեռ հօրն, որպէս եկեացըն յառաջ .
Այն որ հըլու խոնարհակամ ի սըրտէ
Եկացնըմին աղօթասէր ի կրից խաչ .
Եւ որ նըմին հարսն էր և կին յար հըսկող,
Մինչ ես որդի և նա է իմ հայր ծընող »:
« Օն գարձ առ հայր, քաւիչն ասէ անդ յայնժամ .
Ամմարթ իցէ զի խըստացեալ գեռ յոգի,
Ողբանաց եղուկ դըստերն ի մահուան
Դա ըզնեբուձն իւր ըզվերջին զըլասցի .

Եւ քոյդ մտղթանք ի բանից Տեառն յաղթական ,
Ազգողագոյն յոգիսն ինև գրողմեսցի » :

Ի ճիգըն մեծ կալեալ ի վեր ի մահճէ

Թափուր բնաւին զանգաման յուժոյ , և գըրէ .

« Արդ ահագին սըրամըտուժեան լըցաւ , հայր ,

« Հեղեալ առ իս անիծից չափ և սահման :

« Թէ գիտէիր ի փորձ քանի չարաչար

« Քըստմնասարսուռ ոգիքս ողորմ փորձեցան .

« Ո՛հ , զե կարի խոցիս ի սիրտ վըշտահար ,

« Չանխուլ կացցէ այդ ի սըրտէդ հայրական :

« Երկնից ևեթ իցէ գիտուն , և հաճոյ

« Ցաւք իմ ելցեն ի պատարագ Աստուծոյ :

« Կենացս իմ տիւ յառաւօտուն իւր կանուխ

« Ընդ այդս այգուն զիրկ ի լուսոյ մեռանի .

« Եւ յետս ընդ կրունկ գարձեալ մահուն իմ ընդ ուղ՝

« Ցաւոց յաւէրժ գիտեմ լոկ հետս ի յերկրի :

« Այլ մտաւըտ ինձ հանդերձեալն յարարուղիս ,

« Եւ Յիսուսին է այժմիկ տիւն առաջի .

« Օր նորընծայ առ ի հանդէս վըրիժուց ,

« Եւ որ մընայն ի դատ վըրջին իմ պարտուց :

« Ներեա՛ և թող , հայր իմ , ինձ դու , և օրհնեա

« Ձդուսարըգ ցաւոց յայսմ ի պահու օրհասին .

« Ազէ , հայցեմ ուխտիւք , ըզցաւ քո մոռա՛

« Առ սէր և գուժ իլգեգոնդայ կաթօգին ,

« Որ յոյժ ըզթեզ սիրեաց աստէն , և ապա

« Բերկրեալ այդրէն լիցի միջնորդ առ Փըրկչին .

« Ո՛հ , մի աղէ ինձ խորասոյզ ի տապան

« Իցէ երթալ՝ յահեզ ծնողիդ ի ցասման » :

Եւ աւարտեալ , իբրև ի վեր անդ յուճիկ
Ըզգլուին ամբարձ , աչքն յարտասուս փայլակէր .

Առնոյր ի ձեռն և համբուրէր ըզթըզթիկն ,

Հոգւոջն առ հօր , որում ըզգիրն աւաքէր :

Ծալեալ փակէր զայն ուր ուրեմըն լըռիկ .

Եւ հառաջմամբ առ քահանայն կարկառէր .

Որ անբարբառ ամենեկին ընկալեալ ,

Թռանի արտաքս ի սենեկէն , սիրտ յուղեալ :

Ըզգլուին յետոյ նըշանացի շարժելով
Մերձ ի մահիճսն զիդելքն կոչէր գաւ.
Եւ առ ըզգոնն յայտնէր սըրաիւ բողորով
Ձոր ինչ երէցն ըզՀոիկարգեայ էր խօսեալ.
Եւ զի մահու պարտի մընալ արգ յուսով,
Որով լիցի առ ցանկալին իւր գառնալ.
Ձի և կարգայ ըզմահ անձկաւ ինք բողոր,
Եթէ երբեք գըտցեն շընորհս բանքն առ հօր:

Ապա « Փուլայ ճեպ ժամն, ասէ, և վայրկեան
Տալ ըզվախճան երկտրածիք իմ մարտիս.
Վաղ իսկ Ինգ յոգնեալ անգամս արդէն լըսեմ ձայն,
Ձայն հրաւիրակ հանգչել ի հող ինձ հիքիս:
Գուցէ վազիւ զիս խընդրեսցես միւստնգամ,
Եւ զանձկալին շիջեալ գըտցես շողն ի յիս.
Եւ ոչ այլ ինչ անգէն հանգէպ քո լիցի՝
Քան գի սոսկ ցուրտ, ըզգայազիրի ի մարմնի:

Արգ առ ի քէն ես, քոյր, խընդրեմ յանձկալուոյդ,
Ձի գու միայն հուպ մտաչիցիս ի գիտկն իմ.
Ձի յերիւրեալ յանշուքն ի ձև բարեգուլ,
Ձիս ի մահուն գիցեն գազազ ձեռք քոյին.
Եւ խընդրեսցես ազերսագին փոյթ ընդ փոյթ
Ինձ ըզհանգիստ՝ որ արգարոցն է բաժին »:
Միւսն ի գարձուած մինչ մորմոքէր՝ անդ յանկարծ
Ընկճեալ առ գուլթ, լուծաւ ի շիթս արտասուաց:

« Մի լար, ազէ, որ յանձն համակ էր ի Տէր,
Մի լար, ասէ, որ զի փուլթամս ի հանգիստ.
Ձինչ ինձ ընդ ծով կուտակադէզ էր առնել
Անմըխիթար ի գառնազէս կեանքս խիստ.
Մինչդեռ յինէն մայրն իմ յաւէտ բարձաւ սէր,
Մինչ փոխեցաւ իմըս Հոիկարգ ի հանգիստ:
Եւ զինչ ի ճահ ինձ ի հովախս տըրամուլթեան,
Քան զարտասուս՝ գոլով այսպէս այսպն համայն »:

Եւ զմըտերիմն այսգոյն գըգուեալ սիրաբար,
Ձաչսըն սըրբէ և ըզճակաան համբուրէ.
Եւ « Ըզհայցուածս իմ լընուցո՞ւս գու յօժար.
Ձառնե՞ս ապախա, կընքնս խոստումն ինձ, ազէ »:

Եւ աղերսէր այսպէս անգուլ անգադար :
 Եւ մինչ ըզգլուին ի խոստանալ նա կըրկնէ,
 « Տասնէն երկինք քեզ, քոյր, ընդ այս տըրիտուր,
 Վա՛շ ինձ սիրոյդ », ասէր, և ևս յաւելլոյր :

« Ինձ զըսպիտակն ըզպեցուսցես ըզհանգերձ,
 Զոր ասղնագործ մայրն իմ հիւսեաց ի նանիր
 Յաւուրցն ի սուգ՝ մինչ ի վըշտաց իւր անզերծ,
 Ակընկալեօք լայր ընդ փեսայն տարագիր :
 Անդ յասեկէ զկուսին պըսակ ձեռնաբերձ,
 Եւ ընդ աջմէ ըզխաջ Փըրկչին հայցեմ գիր :
 Եւ կապեսցես ժապաւինաւն ըզհերս իմ,
 Յորում յեռեալ իմն ընդ անուան կայ քոյին :

Եթէ բերայց ես ի վանացս արտաքոյ,
 Զոր սըրտեռանդն աղերսանօքս արգ հայցեմ,
 Ի հինաւուրց շիրիմ՝ առհմի՝ նդ մօրն իմոյ
 Ի միասին զիս զետեղեալ հանգուսցեն :

Այլ թէ զլասցի յինէն շընորհս այս հաճոյ,
 Առ մօրաքեռն իմ թաղեցայց թող այսրէն,
 'Գ յարկաւ վիմին՝ հանգուցելոցն ի տաճար,
 Որ է երրորդն՝ ընդ իջանելն ի խոնարհ :

Եւ մինչ զանխուլ զանձն ի գընդէ գողացեալ
 Թշուառացելոց՝ ոյց արտասուեալ երբեք չէք,
 Ի վայրն այն սուրբ ի ձեմս ոտիցդ հապճեպեալ
 Գայցես ի մուտս երեկորին միայնիկ :

Անդ ի շերմին՝ ում զքեզ սերաիւ է սիրեալ,
 Կըրկնեալիր ծուներ՝ ի քոյդ մաղթանս երջանիկ :

Զգացեալ ըզգալ քո ի ներքոյ տապանին

Եւ կայտուեսցեն բերկրեալ ի թինդ ոսկերքն իմ » : . . .

Տըխրաձայնիւ դանչեն զանգակք ի մըթան .
 Զանխուլ մեղնչիւն բազմամբոխից խուժանին,
 Որ ծանրաքայլ հեռուստ յառաջ մեղմ խաղան,
 Գամ քան ըզգամ յունկն ի մօտոյ բարբառին :

Ըզխորհըրգոցն հաց բերելով հրաշական,

Ընդ լուսավառ մոմեղինաց տաճարին :

Անդ է ահա սուրբ պաշտօնեայն ջերմ յոգի,

Եւ առննթեր քորք ըզնովաւ ի կարգի :
 Յեղակարծուստ յերկնաճաճանչ ի նըշոյլ
 Լուսափայլեալ սենեակն ողորմ գոգ թըւէր ,
 Եւ զոգեվար սիրտ հիւանդին ընդ խիստն ուղ
 Գոգ քաղցրութիւն իմն երկնաւոր ըսփոփէր :
 Եւ թըւէին այտքն ի ժըմիտ անգ անդուլ ,
 Ի քաջալեր , յակընկալիս և ի սէր :
 Մինչ պաշտօնեայն նըմա զՍիրոյն ետ ըզհաց ,
 Մըրմընջելով երգս օրհնութեան առ Աստուած :
 Եւ մինչ յետոյ ըզհամախուժք քերց զերամ
 Խաչակընքեաց նա Սըրբութիւնն ի ձեռին ,
 Նոք՝ ի կըրկին առաջս ամփոփ մեկնեալ գնան
 Եղանակեալ զերդըս փառաց Անմահին :
 Զիք ոք բընաւ որ լեալ ի սեամսըն ժաման
 Եւ ոչ դարձցի հայել ի նա տըրամագին :
 Որ անժըպիտ՝ աչօքն ևեթ՝ անբարբառ ,
 Ամենեցուն պաշտէ ողջոյն սիրաբար : ...

Մինչդեռ երէցն եռանդնասուրբ բարբառով ,
 Խրախոյս կարգայր նըմին ի մեծն յայն ի պահ ,
 Գայ հասանէ մի ոմն ի քերց փութալով
 Թուզթ ի ձեռին , և տայ առ մայրն անդ վըստահ :
 Պայծառացոյց զայտարն տըխուր լի յուսով
 Որ ի մահիճս անկեալ գընէր մերձ ի մահ :
 Եւ ընկալեալ յարբասուհւոյն՝ ըսախպաւ
 Ժողովեալ զոյժն ել ի մահճին բազմեցաւ :

Եւ համբուրեալ ըզգիրն ի սիրտ իւր պընդէր ,
 Որ ընդ ձեռամբ իւր բարախէր տրոփական :
 Ապա 'նթեռնուլ ևս անձկանօք զայն ճըգնէր
 Բազում անգամ , բայց եղև զուր ճիգն համայն :
 Զի մըռայլուտ ասացուածոյն միտք թըւէր ,
 Եւ պատ ի պատ ոչ գիւր իմաստք ի վախճան :
 Ապ'ուր ուրեմն առ պաշտօնեայն քաւիչ ետ ,
 Որ ընթերցաւ կականալիւր ետ ընդ ետ :

« Սիրեցեալ դուստր իմ , անագան արդ գիտե՞մ
 « Զի զիղջս համբուն և՛ ապաշաւանքս են նանիւր :

« Եւ մի ցասնուս, զի գու սիրես զիս գիտեմ,
 « Ընդ ակնարկելդ յետին մի նուագ յայտ ի գիր :
 « Ներեա ուրեմն, և զի մի վրէժ յԱնմահէն
 « Հայցէ Հռիկարգ, աղերսագին մաղթեսընք :
 « Ինձ սխերիմ ըզքոյդ եղբայր գիտասցես
 « Լեալ մատընտու, և զի օրհնեմ ես ըզքեզ » :

Գորովագին՝ որ մերձ առ գրունս էր մահուն,
 Ջականողինս յերկինս յառեալ անգ եկաց.
 Ապա ի խինդ սըրտին տըւեալ թաթաղուն,
 Առատաբուզիս լայր ի ծորանս արտասուաց :
 Քըլխակորեալ առ սընարօք անկողնոյն
 Հաւատարիմն իւր ընդ նըմին կայր ի լաց.
 Եւ արտասուէր, ծածկեալ զերեսան ընդ քօզով,
 Նաև ինքնին արբատուհին խոկ մեղմով :

Երկիւզածին առ գու թ երէցըն յուզեալ,
 Ջմահահանդիստ աղօթան ըստէպ կըրկնելով,
 Եռանդագին մերթ ընդ մերթ գաճճ արարեալ,
 Օրհնէր ըզնա ըստէպ խաչիւըն սըրբով.
 Ջօրհասական մինչև զի զգանչըն լըւեալ
 Որ ընդ արթունս իմըն նիրհէր ընդ քընով,
 Եկաց ըսթափ, և զաչան յածեալ շուրջ զիւրև՝
 Գիտել խընգրէր ծագեալց առնջեան թէ արև :

Պատասխանի ետուն զի է գեռ գիշեր,
 Սակայն ընդ հուպ ոչ յետ բազում ինչ ժամուց,
 Արշալուսոյն ծագման նդ երկինս էր փայլել,
 Ջի նդ արևելս աստեղք նուաղին իրր այգուց :
 Որ հոգեվար անդ ի մահճին անկեալն էր,
 Սիրովառեալ առ ի գիտել զըյան այգուց,
 Ըզըւսարգել փեղկան ետ բանալ, լ՝ անձկալից
 Հայէր նդ երկար լուռ ընդ աղօտ գէմս երկնից :

Ապա ընդոստ իբրև ըզմոմն օրհնութեան
 Ետես՝ որ կայր մտ առնթեր իւր վառեալ.
 Եւ մինչ հարան յունկն իւր մաղթանք հանդըստեան
 Ի տաճարի անդ յերիցուէն սուրբ երգեալ.
 Եւ ըզողանջն օրհասական ևս յայնժամ
 Ըզգանդակին ի նշան մահուն իւր լըւեալ.

Առ իդեւրէն զաչսն կալեալ անուշիկ,
 Եւ ընդ ժըմիսս ասէ մեղմով. « Աւանիկ,
 Արդ աւանիկ վայրկեանն ի ցաւս ում բազում »...
 Այլ անձկութիւն զինքն յեղակարծ աստ ընկճէ.
 Եւ առ ի տալ վայրիկ մի ևս դիւր շքնչոյն,
 Օգնեն նըմին զի նիստ առեալ հանգիցէ:
 « Ինձ երանի, զի չեն անուրջք այս ի քուն »,
 Ասէ յայնժամ, զոր ոյժն ոգել գեռ ներէ.
 Զի մեռելոցն յիշէր ըզտիւ, մինչ յորժամ
 Շքնէլ ըզուսնն յետին թըւէր ի նիրհման:
 Եւ այսոքիկ եղեն նորուն վերջին բանք:
 Ըզգլուին ուրուք պարտասելոյ իմն հանգոյն
 Յամր և յուշիկ հակեաց ի վայր տըխրերանդ
 Իբրև ծաղիկ ծարաւահիւծ՝ փափկասուն:
 Արև նդ ճակատն իւր հարկանի լուսազանգ,
 Եւ ըզպայծառ դէմնն ըսպիտակ քան ըզձիւն,
 Ի շող նախկին ճառագայթեալ ի յերկնից
 Պըճնազարդէ յամբիծն ի նշոյլ լուսալից:

ԹՈՎՄ. ԿՐՈՍՍԻ

ԿՈՄՍՆ ՈՒԳՈՒԽՆ

Արդարև մեկնեալ էր մեր առ ի նմանէ՝
 Ի՛ ահա տեսի զոյգ սառնամածս ի մի խոռոչ,
 Որպէս զի գլուխ միոյն միւսումն էր գըլխանոց:
 Եւ զերդ ըզհաց ոք առ քաղցի լափեալ ուտէ,
 Հանգոյն մըխեաց վերինն ի միւսըն զատամունս,
 Ուրանոր կըցի ուզեզն ընդ ծոծրակին:
 Ոչ այլազգ բընաւ Տիգևս էառ կըրծել
 Զիրանունս Մենալիպպեայ առ քինալոյն՝
 Որպէս առնէր նա ընդ կառափն և՛ դ այլն համայն:
 Ո՛վ որ այսգոյն վայրենամոլ ատելութեամբ
 Սըմին ընդդէմ զոր ճարակիսդ ես ռխացեալ,
 Պատմեա զվասն էրն ինձ՝ ասացի. զայս արկեալ սակ.

Չի թէ արդար իցեն բողոքքդ ըզնըմանէ,
 Մանուցեալ ո՛վ ոք իցես և զմեղանս իւր,
 Իմովսանն յաշխարհ վերին փոխատրեցից
 Քեզ՝ եթէ այս՝ որով խօսիմս՝ ոչ չորասցի:

Ըղբերանն առ ի վայրագ կերոյն ի վեր
 Մեղապարտն այն, և յետ հերովք զայն սըրբելոյ
 Կառափին, զոր ի յետուստ էր խաթարեալ,

Ըսկրսաւ ասել. Կամիս զինորոգել
 Առից ըզցուն անհընարին, յոր ի խորհելն
 Եւեթ այժմէն սիրտ իմ գելու՝ չև բարբառեալ.

Այլ թէ բանքս ունին լինել սերմըն ծընող
 Եպերանաց՝ զոր ի կըրծել կամ մատնըչիս,
 Ըզխօսելն և զլալ տեսցես յիս հասարակ:

Ոչ գիտեմ ո՛վ ոք ես գու, և կամ զիարդ
 Այսր ի ստոր եկաւորեալ. սակայն թըլիս
 Ի խօսելոյք փլորենտացի ինձ հաւաստեալ:

Ես, գիտակ լեր, զի եղէ կոման Ուգոլին,
 Եւ սա արհի եպիսկոպոսըն Հռուգերոս.
 Որում առ ինչ թէ սոյնգունակ մօտ կայցեմ, լուր.

Առաւիթ իցէ ասել, զի չարանենգ
 Խորհըրդոցն ի հրապուրանս եղեալ վըստահ
 Ըմըռանեցայ և կորուսի ապա ըզկեանս:

Այլ զոր լըսել չիցէ եղեալ քեզ հնարաւոր,
 Թէ զորպիսի մահ դառնութեան իցեմ մեռեալ,
 Լըւիցես, և հմուտ փեսասուցն ինձ լինիցիս:

Լուսամուտ գոյզն ի ներքոյ հաւալոցին,
 Որ ըզսովու կրէ յորջորջանս ի պատճառս իմ,
 Եւ յոր հարկ է տակաւին փակիլ այլոց,

Էր ցուցեալ յաւուրց հեռէ լուսինս ինձ շատ
 Ընդ անցըս իւր՝ մինչև տեսի զերազըն չար
 Որ եհերձ ըզպատրըւակ հանդերձելոյն:

Սա թըւէր ինձ առաջնորդ և ոստիկան
 Հալածելով զոյգ ընդ կորեանցն ըզգայնն ի լեանն՝
 Որով Պիղեանց ըզլուկա չէ մարթ տեսանել:

Վըրտեղովք փութկոտ և վարժ ասպականեալ

ԸզՊուլանդիս ընդ Սիզմինդեայ և Լամիրանկի
Եր կարգեալ յառաջընթաց ի ճակատու :

Ի սուզ ընթացս երևէին վաստակարեկք
Հայրն և խոշտարք, և անսանել իմն ինձ Թըւէր
Ջի սայրաուուր ժանեզք նոցուն ճեղքէին կողք :

Ջարթուցեալ քան ըզվազուին ծագել կանուխ
Եւ ահա լուայ ըզլալ որդւոցս իմ որ ընդ իս
Ի միասին ի նինջ քընոյն և զխընդրելն հաց :

Անողորմ ես և անգութ Թ' անկարեկիր
Կաս արդ խորհեալ զոր ըզգայի ես ի սըրտիս .
Եւ Թէ ոչ լաս՝ զիմէ՞ բընաւ ունիցիս լալ :

Ըթթափեալ էին ի քնոյ, և էր մերձ ժամի
Յորու՞մ բերեալ լինէր պարէնն ըսա օրինի .
Եւ այր այր ի մէնջ 'գ երազ իւր վարանէր :

Եւ ահա լուայ զի ազեէր դուռն առ ի ներքոյ
Ահաւոր աշտարակին . անդ հայեցայ
Ի դէմս որդւոցս, առանց բարբառ ինչ յօգելոյ :

Սալացեալ իսպառ ի սիրա՝ ես լայի ոչ .
Լային նոքա . և Անանլմիկն իմ՝ Հայր, առէ ,
Եւ զինչ է քո զի պըշուցեալ կաս այսգունակ :

Համայն ոչ լացի բընաւ, և ոչ ետու
Պատասխանի՝ զայն օր ի բուն և զցայգն ապա ,
Մինչև ի նոր ծագել արփւոյն գարձեալ յաշխարհ :

Իբրև գոյզն ինչ ճառագայթք մուծան ի ներքս
Յարգելանըն ցաւագին, և 'հա անսի
Նոյնգունակ զիմ կերպարանս ի քառեակ գէմս :

Ջերկոսին ձեռս առ վըշտիս խածատեցի .
Որոց կարծեալ՝ Թէ առնիցեմ զոյդ առ անձուկ
Ուտելոյ, յարեան կացին վազվազակի ,

Հայր, նիազ յոյժ, ասելով, լիցի մեզ ցաւ
Եթէ զմեզ կերիցես դու . դու զգեցուցեր
Ըզթըշուառ զայս մեզ մարմին, և գու ինքն ե՛ղծ :

Յայիժամ զի մի զցաւսն յաւելից՝ հանդարտեցի .
Ջորըն զայն և զմիւսըն լուռ կացաք համայն .
Ա՛յ կարծր երկիր, առ իմէ՞ ոչ պատասեցար :

Իբրև ապա յօրըն չորրորդ եզաք ժաման ,

Առ ոտիւք իմովք Գազգոյ անկաւ տարած
 Ասելով. Եւ զի՛մրդ ոչ օգնես ինձ, Հայր:
 Այգրէն մեռաւ, և որպէս գու զիս տեսանես,
 Տեսի զերիցն ես անկանել մի՛ աս միօղէ
 Ընդ հընգեակ աիւն և վեցերորդ. ապա սկըսայ
 Արգէն կոյրըս խարխափել զմիով միով,
 Զորս և երիս կոշեցի տիւս յիտ վախճանին.
 Յետոյ քան զցաւն առաւել քաղցն եղև կարող:
 Ասացեալ՝ գաղանադէմ՝ ահանողեօք
 Էարկ գարձեալ յողորմ կառափըն զատամուկան,
 Որք կարծրատորր առ ոսկրն եղեն իբրև ըզլան:
 ՏԱՆԴԷ. Դժ՛իտ:

ՊՈՆԱՐԱՐԴ

Ի ժայռն՝ յոր գայ բախի կոհակն ողբաձայն,
 Դիտէ նաւաստն ի գոյն ճերմակ ի բացեայն
 Ըզգերեզման՝ արկեալ ընդ ափն ի յալեաց.
 Ի վէճն անձուկ՝ չարկ ժամանակն ինչ մըլժար.
 Ընդ մորենուոյն և բաղեզան հիւս գալար
 Զախշախ մտկան պարզի աջաց:
 Աստէն հանգչի... ոյր չեք անուն... հարց ցերկիր.
 Արեան տառիւք անունն հարեալ կայ ի գիր
 Ի Տանայեայ ափանց ցրտար Աեգարու,
 Ի պղինձ, ի վէճ, ի լանջ կըրծիցըն քաջաց,
 Եւ մինչ ի սիրտ իսկ խուժանին ըստըրկաց.
 Զոր կոխէին կառք ահարկու:
 Յեա մեծ անուանցն երկուց, զոր դարք քաբողեն,
 Ոչ ընաւ անուն յածեալ ի շուրժն ատտ ամէն՝
 Ի կայծականց թևս հեռագոյնս ինչ ճախրեաց.
 Ոչ զոր հարեալ շունչն եղծանէ՝ ուք մարգոյն
 Յերեսս երկրի հեաքս գըծեաց խորագոյն.
 Եւ նոյն այն օտն անգ. դագարեաց...:

Կայ անդ... երբեակ քայլիւք չափէ զայն մանկիկ-
 Ըստուեր նորին չըտայ մըրմունջ իոկ փոքրիկ-
 Կոխեն զդագազան անխըտիր ոտք թըլնամույ-
 Բըզզայ շանճիկն ի շանթընկէց ճակատուն-
 Ոգի նորուն լըսէ զբարբառ միշտ ըզնոյն

Ձալեացն ընդ ժայռըս բախելոյ :

Մի զանգիտեր ոգիդ՝ գեռ ևս ի վարան՝
 Թէ ընդոտնեմ ըզլուռ քո շուք պերճութեան :

Ոչ նախատեաց երբեք քընարն ըզչերիմ :

Մասն ապաւէն փառաց եղև միշտ յամայր :

Մարդոյն ազատ է յիշատակ յայս ի վայր-

Ճըլմարտութիւն սուկ կայ նդ նըմին :

Ըզգամբանաւգ և զխանձարրոք պրատեն ամպք-

Բայց գու ելեր ի փոթորկէ զերգ կայծակ :

Ձէր քո անուն, և շանթս հեզեր յաշխարհի :

Սապէս Նիլոս, զոյր բերրի ջուրս արբ Մեմփոս :

Ձև անուանեալ՝ յորգէ զգեռուն իւր ալիս

Ընդ անապատըս Մեմփոնի :

Անկան ատուածք, գատարկացան և գահոյք-

Եւ գու ելեր ըզյաղթութեան շոյտ թևովք :

Փառքն եգ ըզքեզ բրուտոսական ազգի պեա :

Դարս՝ յոյր ուղիսից հոսեալ գնային ի փըրփուր

Բարք, թագաւորք և մեծք... նհանջեալ յիւրն ազգիւր

Ընկըրկեցաւ քայլ մի ի յեա :

Մարտեար ընդգէմ մոլորութեանց բազմահնար-

Ձերգ գուսն Յակովբ ընդ ըստուերի կըռուեցար :

Անկան խուճապքն ընդ ծանրութեամբ մահացուին-

Եւ գու մեծաց անուանցն եզծիչըգ վըսեմ,

Ձըւարճացար նոքօք, զերգ աջն անօրէն

Պըզծեաց զանօթըս խորանին :

Սապէս շամբուշ ցնորեալ անզօր մոլութեամբ

Մինչ գարըն ծեր պատուէ զինքըն ձեռամբ,

Յերկաթան անգէն ազատութեան բարձեալ ձայն,

Յանկարծ գիւցազն առ ի հոզոյն յառնէ կայ :

Եւ մականաւն ըզնա հարեալ... զարթնու նա-

Յնորք տան տեղի Ճըլմարտութեան :

Մչ թէ տըւեալ ի վաւեր ձեռան ըզմական,
 Եւ զասպարաւդ եդեալ զըսպանդս արքունեան,
 Զեռքդ ըզըրբոյ խուրին ըզկեղտըն սըրբէր.
 Վեհ քան զարքայսն ախոյենիդ արքայից
 Զոր խունկ երկնից բերեալ և թագ ջինջ անբիծ

Փառքն ըզճակատ քո պըսակէր:

Փառք և պատիւ, ազատութիւն, անուանք վեհք,
 Քեզ հընչէին զերդ պըղընձոյն թինդ արեկ,
 Զոյր ձայնն հեռուսս կըրկնէ ապուշ արձագանդ.
 Ընդ վայր յականջդ հարաւ բարբառըն լեզուին,
 Որուժ ծանօթն էր սոսկ շաչիւն սուսերին,

Եւ փողոյն ձայն ուժգնահընչակ:

Յոր զարմանայն աշխարհ՝ յոխորտ զայն խոտեալ.
 Լոկ տենչայիր յերկրիս բարձին ինքնակալ:
 Կնայիր յառաջ... և խոչն էր քո թըշնամփ.
 Կամք քո սրանայր իբրև ըզնէա ճախրասլաց,
 Որ հարկանէ ըզկէա նկատեալ ի յաչաց,

Թափանց ընդ սիրտըն սիրելի:

Ի զուարթ առնել զարքայականըդ թախիծ,
 Բաժակ կոչնոցն ըզքեզ չարար գինելից.
 Ընդ այլ բոսոր աչքդ ըզմայլել սիրէին.
 Զերդ զօրական յոսին տըքնեալ զինազգեաց,
 Եղեալ տեսող գեղոյն ժըմտից ւարտասուաց,

Ժըպիտք, հառաչք ի քէն չելին:

Քաղցր էր քեզ սոսկ երկաթոյն ձայն և աղմուկ,
 Եւ ջինջ նըշոյլ այգուն շողեալ ըզղինուք.
 Աջ քո գըգուէր միայն զթեթե քո նըժոյգ,
 Յորժամ ծըփանք աըժոյն բաշիցըն ծածան
 Զարիւնոտ հողն հատանէին հողմանման,

Եւ զպողովատ փըշբէր ոտիւք:

Աճեալ անգոհ, և անաըրտունջ իսկ անկար.
 Ընդ խիտ զըհահիւք ոչ սիրտ բախէր մարդկաբար:
 Զունելով սէր կամ քէն, ի խոկըս կէիբ.
 Իբրև զարծուի տիրեալ օգոցն ամայի,
 Սոսկ չափէիր ահամբ զերեսըս երկրի,

Զոր ճիրանամբքդ ընդգըրկէիր:

Միով ոստամբ վազել ի կառս յաղթութեան,
 Ըզպերձ փառացն արձակել շանթս յամենայն,
 Կոխել զիշխան և զպետ նովին իսկ ոսամբ,
 Դարբնել ըզլուծ զանգեալ սիրով և քինու,
 Եւ տաքնապել ընդ բըռնութեամբ սանձարկու
 Ըզժողովուրդ մի զապըստամբ:

Զողջոյն դարու գրաւել ըզմիաս՝ ընդ կենաց,
 Բըթել զբաշտոյն, անյոյս առնել ըզնախանձ,
 Խախտել, կանգնել ըզաիեզերս անըստոյդ,
 Ի դըժնեայ փայլս որոտընդոստ քո շանթից
 Քսանիցս յերկրի վտանգել ըզբախտ բուրից,
 Այս միտք էին քո և անուրջ:

Սահայն անկար դու ի կայիցըդ բարձանց.
 Յամայի ժայռն արկեալ ի գոռ մըրըրկաց,
 Տեսեր զի զքո ոսոխքդ հերձին պատմուճան,
 Ուի քէն յանդուգն աստուածօրէն պաշտեալ բախտ՝
 Վերջին շընորհ քեզ պարգևեաց ըզվայրդ այդ՝
 Զպիեալ ընդ դահն և ընդ գամբան:

Ո՛հ, տայր ոք ինձ գու խորհըրդոցըդ գիտակ,
 Երբ անցելոյ քո մեծութեանն յիշատակ
 Զերդ խըղձի խայթ ի լըռութեան քեզ օխրէր.
 Եւ մինչ կային բազուկքդ ըզլայն քո լանջք,
 Ընդ շերկ և մերկ ճակատդ հակեալ մէտ ի խոկ
 Սահէր սոսկուճն իբր ըզգէշէր:

Որպէս հովիւ կացեալ յեզեր խոր օփանց՝
 Դիտէ զըստուերն յալիս ծաւալ ձիդ ի բաց
 Մըրըրկեալ վաակօք ձօձեալ յընթացսըն ծածան.
 Սապէս ի մեծ շըքոյդ ի ծայրն ամայի
 Խընդրեալ դու զանձն յանցեալ կենացդ ըստուերի,
 Ամբն առաջինք քեզ յուշ անկան:

Անցանէին առ քև հանդոյն յաղթ ալեաց,
 Զոյց տեսանեմք ընդ ծով ըզփայլ կատարաց.
 Ունկնըդ լըսէր զնոցուճ բարբառն հեշտական.
 Եւ ընդըշոյլ փառաց յերեսդ հոսեալ վառ
 Մէն մի կոհակ ածէր պատկեր քեզ պայծառ,
 Յոր աչքդ հայէր ընդ ժամս երկայն:

Աստ ի կամուրջն յերեւո՛րքեզ շանթն ահ չազգէր .

Անդ յուզէիր ըզհող վայրաց սըրբանուէր .

Մռնչեալ խայտայր նըժոյգդ ի գեան Յորդանան .

Աստ հարթէին ոտքդ ըզկատար բարձրամուր ,

Անդ փոխէիր ի գաւազան զանյաղթ սուր .

Ասա . . . : Զինչ սոսկուճնդ յանկարծ ահան .

Հիմ ըզխուովեալ գարձուցանես աչս ի բաց .

Է՛ր այդ դալուկն ըզքո ճակատաբդ պատեաց .

Զինչ յարհաւիրս յանկարծ տեսեր անցելոյն .

Զաւեր ծխաշունչ ըզքաղաքաց քըսանից ,

Կամ ըզմարդկան արիւն ի գաշտ փըրփրալից . —

Այլ փառքն եղծին ըզբնուն ողջոյն .

Բաց ի չարեաց՝ փառքն եղծանեն զամենայն :

Բայց մատնն եցոյց ինձ ըզմարմին անկենդան ,

Զմանուկ դիւցազն ի ջինջ ներկեալ արենէ :

Զուրք զինքն տռեալ գնային գային անդադար ,

Եւ վրէժխընդիր կոհակն ընդ այն անցեալ յար՝

Անդր արկանէր զանուհ Քոնտէ . . .

Իբր առ ի բաց սըրբել ըզնիչ կապուտակ ,

Ի ճակատն հուպ տանէր ըզձեռն իւր երագ .

Բայց ընդ մատամբն անդրէն արեան հետք ծնանէր .

Եւ զերդ գըրոշմն հարեալ աջով գերագոյն ,

Անջընջելին կաթիլ թագի իմն հանգոյն

Ըզնա չարեօքըն պըսակէր :

Վասն այն , գողոզ , փառացդ անկեալ ի մըթար ,

Զարիքդ յերկբայս ըզքոյդ արկցեն ըզհանձար .

Ըզկնի կառացդ ընդ բնաւս իցեն շիթք արեան .

Անուն քոյին յաւէժ մըրըկաց մատնեալ յար ,

Դարուց ի գարս ընդ Մարիոս և Կեսար

Տարուբերեալ կացցէ յապոյն :

Այլ դու մեռար , սակայն ըզմահ խուժանին ,

Իբր ըզհընձողն որ ի խընդիր թռչակին ,

Զև վարձս առեալ ըզմանգաղաւ իւր նիրհէն .

Ի ժամ մահուդ ըզսուր կապեալ քո յազգեր

Ըզգատաստան և կամ ըզվարձ խընդրեցեր

Ի վեհ ըզքեզն առաքողէն :

Ի հուսկ, ասեն, առուրս երկայն տազնապին,
 Միայն մըտօքն ելեալ հանդէպ յաւերժին,
 Աչքն ամբարձան գոգցես յերկինս անգր ի վեր.
 Փըրկող նըշանն հանգեաւ ի խրոխտ ճակատուն...
 Եւս ի շըրթունսն անդէն հընչեաց և անուն...

Զոր աւարտել նա ոչ իշխէր:

Լրացո՛...: Աստուած է պըսակող և իշխան,
 Նոյն ինքն է տէր պատուհասի և ներման.
 Ըզդիւցազունս և զմեզ կըշռէ նա ուրոյն:
 Խօսեալց ազատ որում ըզմիտսըզ գիտէն.
 Գերին ուիշխանն՝ օր մի համարըս տայցեն.

Սա զմականէն, նա զերկաթոյն:

Դադազն է փակ. դատեցաւ Տէր. լըռեցէ՛ք:
 Ի նըժարին կըշռին յանցանքն և հանդէսք.
 Մի մերձեցին ձեռք ապիկար մահացուաց:
 Ո՛ւմ, Տէր, զանհուն քո գուլթ քըննել իցէ կար:
 Պատուհաս Տեառն, ո՛րից գիտէ թէ հանձար
 Մասն ինչ քոյոց չէ մարթանաց:

ԼԱՄԱՐԳԻՆ

Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն Ք

ԱՍՏՈՒԱՅ

Քաղցր է հոգւոյս թողուլ զկապանս իւր ի բաց .
Լքեալ ըզլուծ մահկանացուացքս կարեաց
Եւ զգայու թեամբք յածեալ յաշխարհ մարմնական ,
Թեթև սլանամ հագեղինացն ի կայան .
Անդ ընդ ոտիւք կոխեալ զհանուրս ըզգալի ,
Ազատ ճախրեմ հնարաւորացն ի վայրի .
Նեղ է հոգւոյս լայնաարած իւր զընդան ,
Ես ինձ խընդրեմ անծայրածիր օթեան :
Զերդ կաթ մի ջուր ընդ Ովկիան վայրահոս ,
Կան միսքս ի ծոց անբաւելւոյն խորատոյզ ,
Եւ անդ իշխան յաւիտենից և վայրաց ,
Զափե՛ն ըզժամս և ըզմիջոցն տարած .
Ընդ եղականքս յածեալ մերձին անդր յանդոյն ,
Առնուլ ի միտ զէին անհաս բընութիւն :
Այլ թէ զոր զգամս ի նկար հանել բուռն հարից ,
Անբաւականք ինձ պահասեն ձայնք խօսից :
Կարծեալ հոգւոյս իմ բարբառել , շուրթն ի յոյզ
Զօգըս կոծէ , ըստուեր մըտաց խորհրդոյս :
Ետ Տէր մըտաց երկեակ բարբառ այլազան .
Մին ընդ այերս յօգաւորեալ թըռչի ձայն ,
Սահմանաւոր , իմանալի մահացուաց ,
Եւ բաւական պանդըխտելոցս աստ կարեաց ,

Եւ ըստ յողգողգ մահկանացուաց պայմանի,
 Ընդ գաւառաց և կամ գարուց փոփոխի.
 Միւսն յարակոյ, վըսեմ, անբաւ և հանուր,
 Մըտաւորաց բնաւից բարբառ է բնատուր,
 Ոչ իբր ըզձայն ցընդեալ ընդ օգըս ծաւալ,
 Այլ կենդանի բան ի սըրտին իմացեալ:
 Հոգևով լըսել, պարզել, խօսել գոյ հընար,
 Որոյ ազդումն ածէ եռանդն և լոյս վառ.
 Անդուստ հոգւոյն կըրից (Թարգմանք շանթեռանգ
 Պարզին հառաչք և բորբոքումն և ջերմ խանգ.
 Սա ինքն երկնից և մաղթանաց է բարբառ,
 Զոր սէր միայն իմանայ աստ ի խոնարհ:
 Ընդ ջինջ կայանս ուր ես ճախրել ըզձանամ,
 Առանդն ոգւոյս ինձ զայն պարզէ յանդիման.
 Նա ինձ լոկ լոյս ընդ (Թանձրամածըս խաւար,
 Քաջ քան ըզբանն յայտնեալ հանդէպ ինձ զաշխարհ:
 Ե՛կ, առաջնորդս իմ քեզ լիցի գործակից,
 Հայտ սլացիր ի Թևս նորին ի հրալից:
 Ըստուերք երկրի բառնին յաշացըս մերոց,
 Անհետ լինին արդ ժամանակ և միջոց.
 Եւ մըշտընջեան իրականին ՚ի կարգի
 Կամք աւասիկ ճըջմարտութեանն առաջի:
 Աստղն այն հանուր, անառաւօս, անգիշեր,
 Է ինքն Աստուած, ամենամեծ ինքնատէր.
 Նա է որ էն. բընաւք ի նմա, աիեզերք, ժամք
 Են անպարփակն իւր էութեան տարերք պարզք.
 Յարկ իւր՝ միջոցն, և կեանքն՝ աւուրք անվախճան.
 Նըկատ իւր՝ աիւ, ուաշխարհ պատկեր է նորայն.
 Տիեզերք ողջոյն ընդ հովանեաւ կան աղջն:
 Յաւերժ ուղխիւք բըխեալ էիցս ի ծոցոյն
 Եւ իբր ըզգետ յորդեալք յանհուն ականէն,
 Եւ ընթացեալ յանգին՝ ուր բնաւք նոր ծագեն:
 Գործն անթերի և անսահման իբր ըզնա,
 Ստեղծօղ ձեռինն ընդ գալն ի լոյս օրհնիս տայ.
 Լիու նա զանբաւն առ մէն շընչոյն տուրևառ.
 Կամել նորին՝ է գործ, և կեանք՝ հաստելն յար:

Բնաւից աղբիւր , տէր և իշխան բոլորին .
 Անճառ իւր կամք՝ անհաս օրէնք են նորին :
 Կամքն այն սակայն անշամանդաղ , գերազօր ,
 Արդար է զոյգ ըզգօն , ուղիւ և հըզօր ,
 Զոր մարթեղեաց բնաւից յայտնէ ըստ հաճոյն ,
 Աստիճանաւ վերաբերեալ յինք զանգոյն :
 Իմաստուժիւն , գեղ , մանկուժիւն , սէր և կար ,
 Զեռնհաս ի տալ միշտ և մքնալ անըսպառ .
 Եւ լի զեղեալ յոչինչն ըզտուրս իւր անգին ,
 Կարէ աստուածս հանել յէից հոսկ վերջին :
 Սակայն սոքա , ծընունդք աջոյն զօրութեան ,
 Զառ ի միմեանց չափեն իրտիրն անասհման ,
 Զըգեալք ի բնուսա առ ըստեզծողն հաստիչ էն ,
 Ի կէտ բնաւից , ի բաւականն ինքնօրէն :
 Ահա Աստուած , զոր բնաւ պաշտէ մըտաւոր ,
 Աբրահամուն Տէր , յոր խոկայր Պիժագոր ,
 Ազգէր Սոկրատ , Պլատոն գիտէր ընդ ազօտ ,
 Աստուած , առ բանն համագոյիւք լեալ ծանօթ .
 Յոյս արդարոյն սլակընկալիք թըշուառի ,
 Եւ զոր Յիսուս հոսկ եկն յայտնել աշխարհի :
 Զէ սա աստուածն այն գործ ձեռաց մարդկայնոց ,
 Վարդապետեալ առ մուրեալս ի սըտոց ,
 Եւ խաթարեալ ի կեղծ քըրմացքն ձեռաց ,
 Զոր պաշտէին հարք մեր ահիւ գիւրանսաց .
 Մի է միայն , արդար , առատ , բարեսէր ,
 Գործք իւր յերկրի եւ յոյս , անունն ընդ եթեր :
 Ո՛հ որ ծանեաւ զայն , մանաւանդ որ պաշտէ .
 Որ անարգեալ կամ մոռացեալ յաշխարհէ ,
 Մենիկ ի սուրբ նըշոյլ ջահեց գիշերի
 Ի սըրբութիւնս ընդ հաւատոց վերբերի .
 Եւ անդ սիրով և գոհութեամբ ոգեսպառ ,
 Հանդէպ նորին զերգ խունկ ծըխի բոցաւառ :
 Այլ առ թըւիչս առ նա ելից միտքս անզօր՝
 Պարաին վերուստ առնուլ ըզկար և ըզգօր .
 Հարկ է սլանալ յերկինս ի թև բոցացայտ .
 Եւ թևք հոգւոյն են սէր և իզձք խանդակաթ :

Ախ, և ընդէր չեզէ յաւուրսն՝ յոր մարդիկ
 Դեռ իսկ նորին ընդ ձեռն ելեալ նորատիք,
 Աւուրքք յԱստուած մօտք, մօտագոյնք սուրբ հոգւով,
 Գնային հանգէս, սերտ խօսակից լինելով:
 Այ՛ ոչ տեսի զաշխարհ յարև իւր նախկին,
 Զըլուայ զմարդոյն ձայն ի զարթոյցն առաջին:
 Բնաւ անդ առ նա խօսէր ըզքէն, և գու նմա.
 Տիեզերս ըզքո շքնէր ըզքուք գերակայ:
 Ելեալ բնութիւն առ ի ձեռաց Արարչին,
 Զարարողին յայտնէր զանուն գըլխովին.
 Որ յապա դարս՝ յաւուրց զանխուլ ժանգահար,
 Յարարս քոյին փայլէր կրրկին լուսավառ.
 Մարդն ի յանցեալն առ քեզ միայն գընէր դէմ.
 Զհայր իւր կարգայր. գու անէիր. Ես ինքն եմ:

Իբր ըզաըզայ զնա վարժեցեր ընդ երկար,
 Եւ զձեռանէն ձրգեալ տանել հաճեցար:
 Քանիցս ի փառսք ըզքեզ ցուցեր գու նրմին,
 Ի Սենարայ ձորս, ի կաղնիս Մամբրէին,
 Ի Քորեբայ Թուփս, ի կառար վեհասպանծ,
 Ուր ետ Մովսէս Հրէից օրէնս գերազանց.
 Աչքն Յակովբայ, անգրանկածնունդ մարդկու(թեան),
 Զամս քառասուն ի քէն էառ զմանանայն:
 Խրատեալ ըզնա ի քո պատգամս կենդանին,
 Բարբառէիր յըսքանչելիսդ ակնյայտնին.
 Ի մուանալն ըզքեզ՝ հրեշտակք վայրիջեալք
 Նորոգէին ի միասն ըզքոյդ յիշտտակ:
 Այլ հուսկ զերդ վտակ ըստ ակն աղբեր իւր ի տար,
 Զինջն յիշտտակ եղծաւ յընթացսըն խանդար.
 Ըզհնացելոյ աստեզն ըզփայլ լուսազգեաց
 Ժամանակին դիշեր տակու քողարկեաց,
 Դու լըռեցեր. մուացու(թիւն, ձեռք գարուց
 Եղծին ըզմեծդ անուն գրոյմեալ ի քոյդ գործ.
 Դար ըզդարիւ հաւառք շիջան գալկահար,
 Եւ մարդ զերկրայս կացոյց ընդ քեզ ու նդ աշխարհ:
 Այո՛, ո՛վ Տէր, հնացեալ աշխարհս առ քո փառս,
 Կորոյս զանունդ, ըզհետս և զքո յիշտտակս.

Որոյ ի գիւտ հարկ է անդրէն յիւրն ընթաց
 Ալեաց յալիս վերագառնալ յուխս ամաց :
 Բնութիւն, երկին, ըզձեզ գիտէ ակն ընդ վայր,
 Զտեսեալ զԱստուած՝ կայ մարդ յակճիւս յիւր տաճար.
 Յամայս երկնից հայի գէտական ի նանիր
 Ընդ մեծասքանչ ընթացս արփեաց բիւրուց ցիր,
 Կալով անգէտ համայնավար այն ձեռին,
 Եւ հրաշակերտք ըսքանչելեաց եղծանին :
 Տացեն վաղիւ որպէս յերէկն ըզնոյն փայլ.
 Ո՛ր գիտէ իւստ նոցուն խազաց շքեզ քայլ.
 Կամ թէ լամբարդ այդ կենսատու բոցալոյս
 Էան ըսկիզբն ելից ընդ ծագըս գընտոյս.
 Հարք մեր չտեսին ըզնախ շողշող իւր շքըջան
 Զի առաջին օր չիք աւուրց մըշտընջեան :
 Յաշխարհ մըտաց զիւր տեսչութեամբ քով ըզքեզ
 Ի մեծամեծ յեզափոխմունս ցուցանես.
 Եւ յըզքօսանսգ անդ պետութիւնք մարդկեզէն
 Ընդ վայր յածեալ ձեռաց ի ձեռս անցանեն.
 Աչք մեր սովորք ազգ ազգ նորուն փոփոխմանց,
 Ընտելացան ընդ միտպէս շուք փառաց :
 Քանխա տեսին դարք ըզքախաի գէմս հանգոյն.
 Տեսիլն եզծաւ. և մարդ նիրհէ ծանրաքուն :
 Օ՛ն զարթո զմեզ. ձայն տուր. զաշխարհ փոխեա, Տէր.
 Լուիցէ ոչինչն ըզքո բարբառ կենսարեր.
 Յերք հանգիցես. արի, արդ ժամ պատահ է,
 Նոր տիեզերս հան յանդընդոցս այս վըհէ.
 Աչքս ի թըմբիր՝ նորոց տեսլեանց են կարօտ,
 Եւ նորագործ ըսքանչելեաց՝ միտքս յողդողդ :
 Փոխեա զերկնից ըզկարգ ըզլուռ անբարբառ.
 Յաչս առկայծեալս ըզնոր ծագեա զարև վառ.
 Քանգեա զպալատդ այդ հին, փառաց քոց անձահ.
 Ե՛կ ցոյց ըզքեզ, և հաւատալ բուռն արա :
 Սակայն մինչև թերևս ընդ վայրս ամայի
 Կասեալ արփուոյն ի տալոյ զլոյս աշխարհի,
 Արեգականն իմանալոյ փայլ առկայծ
 Բարձցէ տակաւ զիւր ըզնըշոյս ի մըտաց.

Եւ յօրն՝ յոր ջահգ այդ մեծ անկցի գլար տապալ,
 Համայն յաւէժ սուզանիցի ընդ ցայդ մնայլ:
 Անդ մանրեսցես դու զանպիտանդ այդ արար.
 Եւ շանթահար բեկորք գոգցեն դար ընդ դար.
 « Ես եմ միայն, ոչ այլ ոք կեայ յինէն զաս.
 Կորոյս ըզկեանս մարդ՝ կորուսեալ ըզհաւատ »:

ԼՍՄԱՐԴԻՆ

ԵԱՆՕԹՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ Ի ԲՆՈՒԹԵՆԷ

Աստուած ծածկեալ, այժ, Աստուածն այն է մեր,
 Որում հաւատըս պարտ է մեզ ընծայել:
 Սակայն թէպէտ ծածկեալ, թէպէտ և թագուն,
 Այլ առ ի յայտ առնել ըզփառըս նորուն,
 Քանի՛ զըկայք օն յաղաղակ բարձրաձայն՝
 Ոչ առաջի իմ բազմահոյլ խրոնեալ կան:
 Տուք ինձ երկինք պատասխանի, տուր ինձ ծով,
 Եւ դու երկիր ազէ խօսեաց լըրիւ քով:
 Ոյր իսկ բազուկ, կաճառք անթիւք աստեղաց,
 Օգակառոյցս ըզձեզ յերկինքս կախեաց.
 Ո՞ զքև, գիշեր աստեղազարդ բազմաշող,
 Ո՞ զգեղեցիկըդ զայդ ըզքև էած քող:
 Եւ դու կամարդ երկնածիր զեհ և զըսեմ,
 Ի քեզ ըզՏէրն և զարարիչ ճանաչեմ.
 Որ անաշխատն ըզքեզ արար յոջընչէ,
 Եւ որ ի գաշտըս քո զաստեղսրդ ցանէ,
 Ոչ ինչ այլազգ քան զոր ի ստոր ընդ երկիր
 Ի յանապատըս մեր փոշի համասփիռ:
 Զահըդ չըքնազ՝ զոր արշալոյսն տւեալէ,
 Աստըզ միշտ նոյն և միշտ նոր, յոյր հրամանէ
 Դու ի ծոցոյ ալեաց արփիդ հանապազ
 Ըզբեղնաւոր քո զշողք յերկիր սըփռել գաս.

Ակընկալեալ հանապազօր քեզ մընամ,
 Հանապազօր դու դարձ առնես միւսանդամ.
 Ե՞ս ինչ ըզքեզ առ իս կոչեալ հրաւիրեմ,
 Ո՞ աղէ զքոյդ զարշաւասոյր ուղղէ ճեմ:
 Եւ դու, ո՛վ ծոզք ահարկու, գուռ որ է քոյդ
 Կլանել զերկիր համայն կամիս ի զայրոյթ,
 Ո՛յր ըզքեզ աջ փակէ է քոյդ շուրջ է ծիր.
 Քակտել գուռ զբանս քոյին ճըգնիս ի նանիր:
 Լեռնակուտակ սաստ ամեհի ալեաց քոյ
 Նուաճեալ յափանցըդ բեկանի շուրջ է ծոց.
 Եւ զփորձ յաճախ վրէժխընդրութեանըդ քոյին
 Տաս դու առնուլ օգտածարաւ ագահին,
 Որ ընթանայ զգարանակալ խորօք քով,
 Անձամբ զանձինըն պատուհաս խընդրելով:
 Աւաղ, հասեալ նրմա կորուստ առընթեր,
 Ուղերձէ ուխտ, հոյի յերկինս անդր է վեր,
 Ուստի միայն է եղկելեաց օգնութիւն.
 Անլուռ է վասնզն յայն յեօին՝ ինքն իսկ բնութիւն
 Տայ ամբառնալ նրմա ըզձեռս ի վերոյ,
 Առ ապաւէնըն մահացուաց գերագոյ.
 Ըսպաս, զոր միշտ ընծայէ սիրտ ահաբեկ
 Տեառն՝ որ ցայնվայր ձէր նրմա յուշ լեալ երբեք:
 Զայն տիեզերք բարձեալ կոչեն զիս առ նոյն,
 Հրստարակէ երկիր ըզփառըս նորուն.
 Ինե՞ ինչ ես, ասէ, հաստեալ արգեօք կամ,
 Կամ թէ ինձէ՞ն պըճնիմ ի զարգըս փարթամ.
 Նա ինքն հիմունս արկ ինձ, և զպէտըս քոյին
 Ի հրամանաց ևեթ լընում ի նորին:
 Որ ի նմանէ տու իս պարգևք իջանեն
 Քեզ պարգևէ նա զայնոսիկ համօրէն.
 Զգեցեալ ծաղկամբք դեղազարդիմ, զօր ձեռք իւր
 Սըփռեալ զինև տարածանեն համասփիւռ.
 Բանայ նա զձեռն իւր և լընու ըզծոց իմ.
 Եւ յԵզիպտոս, ուր անջըրդի ծարաւիմ,
 Սփոփէ նա ինքն ըզմըշակին յոյս անյագ,
 Ենորհեալ ընդ դաշտս ի սահմանեալ ժամանակ

Զեղոււլ ալեաց Նիլոսի շուրջ է յափանց,
 Առբերելով անգր ընդ հեղեղս իւր ըզգանձ:
 Ի գուզնաքեայցս իսկ առէից աստի գու
 Ի ճանաչուսն Հաստչին կարես գու հասու.
 Հայեաց ի ծառս անգրը՝ որ յՅս վերաճեն.
 Այն ինչ սրփուեալ հիւթն ի յարմատըս յինէն,
 Ընդունի բունըն զայն և յոտսըն բաշխէ.
 Խընդրեն ըզնոյն ապա սաղարթք յայնցանէ,
 Եւ բաժանորդս առնեն իւրեանցըն բարեաց
 Հաւատարիմքն ըզնոսա ոստք աննախանձ:
 Չանդոսնէ վատն և ապիկար իսկ ռամիկ
 Չանփառունակ տեսիլ տընկոցս այսոցիկ,
 Իրաւապէս յարդեանց նոցին ի ճաճանչ,
 Լեալ սինլըքորն իսկ յոյլ որեարն հիասքանչ:
 Թէ գիտիցես գու զախտաբոյժ ոյժ նոցին,
 Յերկարեսցեն նոքա զաւուրըս քոյին.
 Եւ մի երբեք գու տարապարս վըշտակիր
 Ընդ կարճատե կենցաղ նոցին եղանիր.
 Անդուստ ի ծնէ իւրաքանչիւր ոք բուսակ
 Անմոհ յինքեան բերէ զիւր զարմ և զաւակ.
 Իւրաքանչիւր ոք ի ծոց իմ բեղնաւոր
 Ըզլաջորդաց իւրոց գտանէ գըրաւ նոր:
 Լ. ՌԱՍԻՆ. Ի Կրօնս:

ԳԱՂԱՓԱՐ ԱՍՏՈՒԻԾՈՅ ԱՌ ԱՄԵՆԱՅՆ ԱԶԳՍ

Յաւէրժ Էին չիք ազգ որ ոչ խոնարհի,
 Յորմէ բնաւք սարսեն ազինք և գողան,
 Եւ բնաւք նըմին լեզուք լինին խոստովան:
 Ո՞ր ըզհանուրըս նըւաճեաց զօրութիւն.
 Էին ինչ փառք գարբնել շողթայս իւր մարդոյն:
 Գտանեմ համայն ուրեք տաճար և սեղան,
 Քուրմ և նըւէր և զոհ և սպաս պաշտաման.

Ընդունին զուխտըս միշտ երկինք և զխունկ մեր.
 Կարեմք այ՞ո՞ խոստովանիմ անվեհեր,
 Ըստրուկք մերոցս ըզգայութեանց՝ եղծանեչ
 Ձաստուածուծեանըն զիսկաքանչ ըզպատկեր:
 Ձաստուածականն ահա զպաշտօն Եգիպտոս
 Բառաչողացն ընծայէ գից իւրայնոց.
 Այլ ի յանտուրբըն զոր պաշտէ ի յարժառն
 Երկըրպագեչ նա ճըշմարտին կարծէ տեսուն:
 Ո՛վ բազմավրէպ միտք մարդկեղէն. ծաղչեչիս
 Նանրահաւատք ըստեզծին ազգք իւրեանց գիտ.
 Տարապարտ գիցն էր այնոցիկ այ՞ո սպաս,
 Այլ հետեւողն հասանէր միշտ պատուհաս:
 Ատելիք միշտ եղեն Սալմոն և Մեզենտ,
 Սոսկուսն անուանըն կապանեայ երթայ զհետ.
 Այր ամպարիշտ առ ամենայն ազգս յաւէժ
 Ձարհուրական ինչ թըւեցաւ գոչ հըրէշ.
 Եւ որ հնարէրըն ծածկապէս զիւրն աղանդ
 Առ ի մերժեչ յինէն ըզգիցըն զահանգ,
 Տեսանեմ յոտս Արամազդայ զԵպիկուր,
 Եւ հիացեալ ընդ պարտուծիւն անձին իւր,
 Լըսեմ զի կայ խոստովանի աւասիկ,
 Գոչ զօրուծեան իմիք ըզմարդ խաղալիկ,
 Եւ թըշնամի անտես՝ որ գնէ ի փոշի
 Ըզմեծուծեանց մերոց ըզըուք փառացի:
 Ազգք և ազինք և թագաւոր և իշխան,
 Մահու ընդ հուպ վախճանեալիք դուք համայն.
 Աստ Ըսպարտա անկեալ, Աթէնք անդ կործան,
 Քանիք յաւերն Ելլագա կոյտք գիական:
 Ձինչ ընդ հանուր իսկ տեսանեմ ընդ երկիր.
 Մածկեն անկեալ զայն ապարանք բարձրաթիւ,
 Գահք տապալեալք, վաղաթարշամ զայն գարնիք
 Եւ գաւազանք ծածկեն բեկտեալ արքունիք:
 Ո՛ւր են քո, խրոխտըդ Մեմփիս, ո՛ւր արդ չըքնաղ
 Հրաշակերտից հոյք. զաւերակս իսկ քո վաղ
 Հետախաղաղ ծածկեաց եկուլ ժամանակ.
 Պերճ խիտ առ խիտ կանգնեալ շիրմաց ամբարտակք,

Արձանք շքեղք անդ մարգկայնոյ շքութեան
Վըկայք յերկինս ի վեր յոխորտք ամբառնան :

Արդ այնպիսուամբն զօրութեան ահարկուի
Ընծայէ սպաս ազգ համօրէն մահացուի,
Առ բազնաւ դիցն աւասիկ խուժն իսկ անգութ
Ըշատակչին ածէ յողոք ըզլայրոյթ :

Լ. ՌԱՍԻՆ. Ի ԿԻՍՆԱ.

ՄԱՐԴ

Պետն և իշխան, որում ի պէտս արարան
Ձըքնաղ էիցս այսոցիկ հոյլք ամենայն,
Ամբառնայ զվեհ մարգ ըզճակատ իւր ի վեր,
Եւ ի բարձունքս կայ գէտակն ընդ եթեր.
Ճակատն այն թատր՝ ուր դայ հոգին յերևան,
Մերթ ճառագայթըս ծաւալէալ խընդութեան,
Եւ ի նըսեմ մերթ պաշարեալ ի թախիծ.
Լուսաճաճանչ զիւրոցն ի նմա ըզխանդից
Մտերմութիւն քաղցր և աշխոյժ վառէ զհուր.
Ձորոյ հնարի չարանախանձ նենգ ի զուր
Կեղծեւ ըզդէմբս, նենգ ի դոյն կապուտակ
Ձըգեալ ըզհետ իւր ըզմտխանս արբանեակ :
Շիկնի ի սուղ ինչ բան ամօթ անդ ցածուն,
Եւ անկեղծիկ բազմի ի նմտ պարզութիւն.
Արհամարհանք ընդ մեծարանս անգ համեստ,
Եւ զկայ ցասուճն իւր անդանօր առնու հետտ.
Ահ և ընկեր իւր անդ դալուկն անմեկին,
Որք օգնութիւն ինձ և նըպատս պաղատին,
Երագագոյնք և քան ըզձայն իմ ի ճեպ,
Յորժամ արկածք ինձ մահառիթք լինին դէպ :
Նոյն ձայն ի վայր հեռի, ի սպաս իմ պատրաստ,
Սունէ զխորհուրդս իմ ի կամեղն իմում ազգ.
Հրեշտակ հոգւոյս, նոյն և սըրտիս գու թարգման,
Որ զկենակից տայ ինձ զախորժ քաղցրութեան :

Որքանեանց ակն ամփոփէ յինքն էից հոյլ,
 Քանիք ի ծիրն անձուկ գրաւին շողք ի սփիւււ.
 Անդ ամենայն ինչ հեա ընդ հեա նըկարի,
 Հարեալ ի տիպ շարժականին պատկերի.
 Ձեւք անդրուվարք զայնս ի յուզեղըն տանին.
 Խուռն անգ թելից հիւսք զէ՛ տըկար, ո՛վ երկին:
 Այլ ի նոստ ուշ իմ եղեալ ապաստան,
 Անդ անկորուստ գանձէ աւանդ պատուական,
 Որ ինչ ինձ աչք և լըսելիք ընծայեն.
 Կարէ նա գնել անդ և բառնալ միշտ անդրէն.
 Նոյն ինքըն պահ ունի գանձուց իմոց անգ,
 Հաւատարիմ ի տալ անդրէն զիմ աւանդ:
 Ոգիք անգ նուրբք կազմք յարաժամ և պատրաստ,
 Դէտ նըշանին կան որ առնէ նոցին ազգ.
 Հրաման հոգի իմ աայ, և հչու արքանեակք
 Սըփուին յանգամս իմ ի ճապուկս անդ երագ:
 Հպատակք անտեսք, ընդ ո՞ր գընայք պողոտայ.
 Ո՞ զփրկակէտ եռանգն արեանս իմու՞մ աայ,
 Նա զկարեորն, առանց իմոյս հրամանի,
 Ըզջերմու՞թիւն տածէ յիմու՞մըս մարմնի,
 Ի հաւասար շարժէ նա զսիրտ իմ ի յոյզ,
 Ի կենսականն անդ զիւրն ի բնի կազմեալ հոյզ.
 Ձեռուցանէ զիս ի սրընթաց իւր ի ճեմ,
 Յակն իւր անդրէն եղկ և յուշիկ եգեալ դէմ:
 Միշտ ըսպառի, նորոգի միշտ վերըստին.
 Խողովակացն ընդ որ գընացք են նորին,
 Բացեալ դըրունք մուտս համարձակ նըմա տան,
 Պատրաստք ի գնել գարձելու մն յետըս խափան:
 Թանձր ի ջամբից արիւնըն ջինջ մածանի,
 Եւ փոփոխումն այն ձըգէ միւս այլ ըզկնի.
 Յեղարըըրջի նա թանձրանայ ի մարմին,
 Եւ ընդ անգամս ի՞նչ որ նովաւ ուղղին,
 Փոխակերպի ի գոյու՞թիւն իմ ի բնիկ:
 Ինչ ինչ ունիմ պահ օրինացս այսոցիկ,
 Կամ թէ իմո՞վ ինչ հրամանաւըս կացին.
 Հասու և եթ հազիւ կարեմ գոլ նոցին.

Ինձ ըզնոցին միաք ուշիմ օր ըստ օրէ
 Քողախընդրեալ զհանճար և զկարգ հոլանէ .
 Զիմանալուոյն այնորիկ օն ըզկարգին
 Զարարչապետն ի միտ առցուք ի նոսին :

Լ. ՌԱՍԻՆ . ի Կրօնս :

ՀԱՒԱՅՔ

Կեւրով կեցի . հատեալ զամայս կենցազոյս ,
 Ուր մէն մի քայլ կոխէր զթառամ սին ծաղկունս .
 Ուր անգագար պատրեալ ըզմիտս իմ յուսոյն ,
 Զերջանկուծիւն ինձ ցուցանէր յաղօտ մոյն .
 Ուր շընչելով մահուն խորչակք բոցակէզք ,
 Յամաքէին յար ի շըրթունս իմ աղբիւրք :
 Այլ ոք աղէ ցընդեալ ի ցաւս ընդունայն ,
 Թող ի խընդիր ելցէ աւուրցն որ կորեան .
 Եւ ընդ կորուստ այգոյ դարնան իւր յաշխար ,
 Այդքէն կենաց ցանկանայցէ նա յօժար :
 Իսկ ինձ թէ բախտ շնորհէր ընտրել ինքնակամ
 Զարքայից դահ , կամ զհանճարոյ գաւազան ,
 Զիմաստուծիւն , ըզփառս , ըզգեզ կամ ըզգանձ ,
 Եւ յաւելոյր ըզմանկուծեան տիս անանց ,
 Երդնում ի մահ , զի ի կենցազս այսգունակ
 Առոյգանալ յարեւ չըգայր ինձ փափաք :
 Զկամիմ զաշխարհ , ուր բնաւք փոխեալ անցանեն .
 Ուր յիշատակն իսկ եզծանի համօրէն .
 Ուր բնաւ յողդողդ , կորըստական , վաղանցիկ ,
 Ուր առաւօտ իսկ չիք աւուր երջանիկ :
 Այսպէս քանիցս անկեալ ի խաբս ի գոյոյս ,
 Իսպառ յանձնէս վըտարեցի եմ ըզլոյս .
 Քանիցս իմ միաք վեհերոտեալ և տարտամ ,
 Կարծեաց վարիլ ցուրտ իմն ոգւով զօրուծեան .
 Եւ մըտախորհ ընդ խօլ իմաստ Զենոնի ,
 Յըստոյիկեանն ըզհէքս ի քօղ ծածկէի :

Եւ զառածեալ օր մի յանհոգս անխըտիր,
 Մոռացութեանն հառաչէի առ ի գիւր:
 Սին հեշտ, նինջ սուտ: — Ձերգ ոչ բըլբոցն ի բացէ,
 Ուր Հաովմ յիւրոցն աւերակաց ելանէ,
 Ընդ կոյտան անբաւ խառն անդ և աստ տեսանի
 Նորոգակերտ պարիսպ, շինուած վաղեմի.
 Թատերք կործան, որոց ճակատք ահագին
 Ծածկին ի սէզ կամ ընդ փոշի թաւալին.
 Մորենի թուփք պատեն զպալատ գիւցազանց,
 Կան դիք թաւալ զսեմովք թափուր տաճարաց,
 Ամմահ կոթողն հովանացեալ ի հիւղեակ,
 Սիւնն յարմարեալ յօտարաձև ի քանդակ.
 Խոտ և ծաղկունք ի հրապարակն զւի շիրիմ,
 Եւ աստուածովք նորովք լըցեալք առձարքն հին,
 Մինչ աստ և անգ ձիգ միջոցաւ ի բացէ
 Տըկար շոշունջ ըզլըռութիւնն հաստանէ...
 Նըման է սմին գղըրդեալն յերկար հոգին մեր:
 Թըռւառութիւն սարսեալ ըզբանն հիմն ի վեր,
 Գարձոյց ըզնա յանծայրածիր աւերակ.
 Անյուսութիւն անդ կայ զերգ յաղթ փըլլատակ.
 Լըռին անդունդ ըզգայութեանց շիջանուտ,
 Ընդգիմամարտ անշունչ տարերք յարապտոյտ,
 Ժամանակաւ ցընդեալ կըրից մընացուած,
 Բազմաշըփոթ խազմ խորհըրդոց և կամաց,
 Սին յիշատակք, ցաւք, խիղճ՝ մըտաց, գառնութիւն:
 Աւերն այն, ո՛հ, ի նշան լինէր գէթ մահուն:
 Այլ կեայ հոգին գեռ յայդ տըխուր պայմանի.
 Հուրն այն առանց անընդեան ինքեամբ սընանի,
 Եւ ի մոխրոյն ծնանի անդրէն. ջահ գըթնեայ,
 Որ քան զշիրիմն ևս անդր պրիլ գեռ խիթայ:
 Ո՛վ ես, հոգի. կայծակն ի հուր բոցակէզ,
 Յետ իմ կեայցե՛ս. գեռ տառապանք կայցե՛ն քեզ:
 Հիւր գու անճառ, զի՛նչ լինիցիս յապագայն.
 Գնայցե՛ս խառնիլ ի մեծ լամբար տըւընջեան.
 Քերևս իցե՛ս կայծ մի նորուն կայծականց,
 Ճաճանչ մըլար, զոյր աստղն այգրէն խընդրէ զգարձ.

Գուցէ մեռեալ, երբ մարդն յեղծումն հասանէ,
 Լիցիս հիւթ ջինջ քան զոր բրխեացն ինչ յերկրէ-
 Տիղմ հոգեկիր, կաւ մըտաւոր խոհական...

Ձինչ տեսանեմ. զընդամեն ընդ բանքս ի դողման.
 Ոչինչն՝ երկիւղ, և վիշտք՝ տաղտուկ քեզ ածեն.
 Կեալ զանգիտես, և զարհուրիս յօրհասէն:

Ո՛վ պարզեսցէ մեզ զայդ խորհուրդ սոսկալի.
 Ընդ վայր ի լուր կամ իմաստնոց աշխարհի,

Նոցին իսկ միտք վըսեմք յածին ի վարան.

Ձի և ի նմին իսկ ի կաւոյ զանգեցան,

Սոկրատ ըզհնոցն իմաստութեան քաղեալ լոյս,

Քեզ ի խընդիր գայր յԵլլագայ պերճաւուրս.

Ի Սունիոն ապա Պլատոն գայր ըզքէն:

Քսան գարք անցին, և զքեզ խընդրեմ ես աստէն.

Անցցեն քըսան գարք աստըստին, և մարդիկ

Խարխափեացեն գեռ ընդ գիշերն յոր յածիմք:

Սրանայ յաչաց ճըշմարտութիւն գիմադարձ,

Եւ զցիր ճաճանչսն ժողովէ սոսկ Աստուած:

Այսպէս հուպ աչքս ի կափուցումն առ ի լոյս,

Եւ չեկեսցէ ի մըխիթար բըբացս յոյս.

Անցցէ հոգիս անառաջնորդ մըթային

Ի գիշերոյ աստեացս՝ ի մաւր տապանին.

Եւ տանիցիմ յանգէտս յաշխարհն յոր երթամ՝

Չքարիս՝ անյոյս, ըզչար՝ առանց հատուցման:

Աստուած անգութ, ձայն տուր, թէ կաս յիրաւի,

Չկարեմ զօրէնսդ անիծանել յարժանի.

Գէթ վարձաւորն յետ ցերեկին տաժանմանց

Բազմի յերեկս ընդ հովանեաւ՝ առնուլ վարձ.

Իսկ կըքելումս արդ ընդ բեռամբ խիստ բախտին,

Յաւուրն իմ վերջ՝ մահ հլանէ ինձ բաժին:

Այլ մինչ ժայթքեալ ըզհայհոյանս ի վարան,

Լամ յիմ վերայ, դէտակն առ իմ գերեզման,

Վառեալ հաւատքն իբրև ըզքաղցր յիշատակ,

Մագէ նըշոյլ յուսոյ յապայս տըխրերանդ.

Յըստուերց մահու վերականգնիմ ես սրծարծ,

Պընդեալ առոյգ հոգւով ի ծայրս անդ կենաց:

Վերաբերի՛մ ի փայլ ջահիդ. երկնալոյս
 Յելսն ի զբարթ՝ ի մտից իմոյ կենցաղոյս .
 Ի մի նըկատ գիտեմ ըզկեանս մահացունն ,
 Ուր բնաւք աչացս հանգէպ ի շար ինձ պարզին ,
 Եւ ընթեռնում յապայս ըզկարգն որ յայժմուս .
 Զանէութեան դըրունս յետուստ փակէ յոյս ,
 Եւ ափշելոյս ցուցեալ զոլորտսն աւրած ,
 Մահուամբ պարզէ ինձ ըզկենացս առեղծուած :
 Հաւատքն՝ որ մնայ ինձ առ եզեր գամբանին ,
 Յիշեմ, աւանդ, զի թեւարկէր յորրանն իմ .
 Անմահական վիճակ երկրին աւետեաց ,
 Դարուց ի դարս յանձնեալ որդւոց առ ի հարց ,
 Զոր ընգունին միաք զարթուցեալ նոր անդուստ ,
 Որպէս զարեւ, ըզկեանս, պարգևս ի վերուստ :
 Զերգ կաթն հոգւոյ, զոյգ ընդ բանալ մեր ական
 Մեզ ջամբեցաւ այն ի շըրթանց մայրական :
 Ի նախ ախոյն ի մարդն եզեալ խորամուխ ,
 Փայլեաց ի սիրտ և քան ըզբաննն կանուխ ,
 Փորձեալ մանկանն ի ճիգն ըզխօսս առաջին ,
 Թոթովէ զվեհ իւր գաւանումն յորրանին .
 Որ բողբոջեալ յանգէտս անձին իւր առ մօր ,
 Ընդ լաւութեանն աճէ ի սիրտն օր քան զօր :
 Ո՛հ, թէ առ մարդ ճըշմարտութիւնն հաստեալ կայ ,
 Ըզպարզ զայդ գեղ անշուշտ առեալ էր նորա .
 Եւ ի մանուկ տիոց աչացս յանգիման ,
 Անցեալ ի միտս յըզգոյութեանց ամենայն ,
 Իբր ըզվըճիտ նըշոյս արփւոյն երկնայնոյ՝
 Ինքն անդրատին պատէր զոգիս մեր յայդոյ .
 Գայր իջանէր ի մտաց ի սիրտըս սիրով :
 Ընդ յիշատակս, ընդ բարս ի մի խառնելով :
 Եւ ձինաթաղ որպէս ցորեան ի յաստոջ ,
 Ի մեր ի սիրտ, գեռ չև փըթթեալ, տայր բողբոջ .
 Եւ յանցանել մըրըրկայոյն ամարան
 Տայր ըզպրտուղն յանմահութիւն նուիրական :
 Արփի՛գ անհաս, լամբար այլոյ իմն արփեաց ,
 Տո՛ւր ըզսուրբ լոյսդ առկայծիւցս իմ աչաց .

Շող մտիթարիչ, էջ Բարձրելոյն ի ծոցոյ,
Ասող ազգեցող, ծագեա ի սիրտս ըզլոյս քո.
Ո՛հ, սոսկ ըզքեզ ունիմ. ի ժամս իմ տըխոււրս
Ազօտ իմ բանն ի մնայլ թողու զիս անլոյս.
Բանն այն հըպարտ, անբաւական լոյս ջահի,
Առ դրամբք շիրմին հանգոյն կենաց շիջանի:
Ե՛կ փոխանակ նըմին, նըշոյլ երկնաճեմ,
Ե՛կ ծաւալել ի բիբս ըզլոյսդ աննըսեմ.
Լեր ինձ փոխան արփւոյն, զոր ոչ ևս տեսից,
Փայլատակեալ իբր երեկոյն ասող յերկնից:

ԼԱՄԱՐԴԻՆ

ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆ

Արև կենացս յելն անգ պատեալ կայ յըստուեր,
Հաղիւ ի մեր նուազկոտ ճակատս արկեալ գեռ
Դողգոջ նըշոյլս՝ որ ընդ ցայգոյ պայքարին.
Աճեն ըստուերք, օր խոնարհի, բնաւք ցընդին:
Թող այլք առ այդ տեսիլ քըստմնեալ սըրտաթափք
Յափանց վըհին ընկըրկեսցին գողացեալք.
Կամ չկարիցեն անխուով լըսել ի հեռուստ
Ըզմեռելոց տըխրական երգ մօտալուս...
Կամ զգառնահեծ պըզինձն, ոյր գանգք խուճապողք
Ազգեն մարդոյ թէ պակասեաց թըշուառ ոք:
Ես քեզ ողջոյն տամ, մահ՝ փըրկիչ երկնաւոր.
Դու չերեխս ինձ յայդ պատկեր ահաւոր,
Զոր քեզ ետուն յերկար ցընորք և սարսուռ.
Զաջ ոչ զինէ աշխարհաւեր ծախիչ սուր.
Ոչ ժանտ ճակատ, ոչ յաչս ըզնենդ ցուցանես.
Ի նպաստ վըշտաց գթած ոք աստուած յըզէ զքեզ:
Ոչ եղծանես դու, այլ փըրկես. յաջ քոյին,
Հրեշտակ վերին, տանիս լամբար երկնային:
Յորժամ փակին վաստակարեկ աչքս ի լոյս,

Սըրբագոյն փայլս յարտեանունս իմ զեղուս .
 Եւ յոյսն առ քեզ ըզտապանաւ մըտախորհ ,
 Յեց ի հաւատս՝ ինձ բանայ պերճ աշխարհ նոր :
 Ե՛կ ուրեմն ե՛կ քակել զկապանըս մարմնոյս .
 Եկ բաց ըզբանտս . ե՛կ , տուր թեւոց ինձ փեռուրս :
 Հիմ՛ յապաղես . յայտնեաց , զի դամ մի սրանամ
 Յէն անծանօթ , առ իմ ըսկիզբն և վախճան :
 Ո՛վ զիս քեցեաց անտի . ո՛վ եմ . զի՛նչ լիցիմ .
 Ոչ գիտելով թէ զի՛նչ է ծնունդ՝ մեռանիմ :
 Զուր հարցանեմ ըզքեզ , ոգիդ , անյայտ հիւր ,
 Զև յիս ազգեալ . ընդ ո՞ր երկինս օթէիր .
 Ո՛յր զօրութեամբ անկար ի գունտս այս տըկար .
 Ի հողեղէն յարկդ յո՞ր ձեռաց փակեցար .
 Յո՞ր գաղտ շողկապ և յո՞ր հանգոյց գերագոյն
 Ընդ քեզ մարմինն և գու զօգիս ընդ մարմնոյն .
 Ե՛րբ ի նիւթոյն փնասցէ հոգիս այս ի բաց .
 Զերկիր ընդ ո՞ր նորոց լըքցես արքունեաց .
 Բընաւք անկա՛ն յուշոյդ , և անդր ըստ շիրիմ՝
 Ի նո՞ր մուացս երթաս ծնանել վերըստին :
 Գնասցես ըսկիզբն առնել այսգոյն կենցաղոյ ,
 Թէ հուպ յԱստուած , ի հայրենիս , յաղբիւր քո՝ ,
 Իսպառ ազատ ի մարդկօրէն կապանաց ,
 Գնաս ի վայելս յաւիտենիցդ իրաւանց :
 Այս է իմ յոյս , այո՛ , կենացս իմ հատոր .
 Նովաւ հոգիս ամրապընդեալ աստուոր ,
 Յըսքանչելի երեսդ ետես անասան՝
 Թառամ խամրեալ զպայծառ երանգըս գարնան .
 Նովաւ երբեմն , երբ զիս հերձցէ ժանտ խոցուած ,
 Ի ծաղիկ տիս հասեալ ի մահ՝ ժըմտեցայց .
 Եւ արտասուք խընդից յողջոյն մեր վերջին
 Փայլեսցեն յաչս ի հուսկ հայեացըս քոյին :
 Եպիկուրեան դասք գոչեսցեն . « Նանիր յոյս » .
 Եւ որ աջով մանըր զըննեալ զհամագոյս ,
 Ի խորշ ուղղոյն , զոյր նոր ազգ ձևս հան ի գիր ,
 Ըզնիւթ գտանէ խոհուն , ըզմիտս ի թըմբիր ,
 Անմիտ , գոգցեն , որ հպարտանասն ըստ պայման ,

Հայեաց ըզքե, բնաւից է սկիզբն և վախճան.
 Համայն ի վերջ գիմէ, 'ի մահ ծընանի.
 Տէս, ի գեղնեալ մարգս հոյլ ծաղկանց թառամի,
 Եւ եզէինք բարձր ի ճակատ պերճ՝ յանառա,
 Կըքեալք յամաց տապալ սողան ընդ դալար.
 Ծովք պահասեալ յալուցս իւրեանց ցամաքին.
 Դալուկ տըժգոյն ունի և զինքն իսկ չերկին.
 Աստղն այն, զոյր ծնունդ ծածկեալ թաքոյց ժամանակ.
 Արևն ընդ մեզ գընայ յեղծումն հանգունակ.
 Եւ մահացուք յամայս երկնից խուճապեալ,
 Զայն խընդրեացեն երբեմն, և ոչ գըտցեն այլ:
 Տէս, շուրջ ըզքե ի համագոյս համօրէն՝
 Դարք ըզփսշէաց կոյտս ըզփոշուով գիզանեն.
 Եւ ժամանակ ջախեալ զգոռոզք ի քայլ մի.
 Զոր ինքն արար՝ նըմին դագաղ եղանի.
 Եւ միայն մարդ, վըսեմ՝ ցընորք, մարդ միայն՝
 Յուսայ գտանել ըզկեանս ընդ խոր գերեզման.
 Եւ յոչինչ անդր յափըշտակեալ ի մըրրկէ,
 Ժամանակաւ նուազեալ, զանանցն երազէ:
 Այլք պատասխան տացեն գիտնոցդ աշխարհի.
 Թող վրիպեցայց. սիրեմ, յուսալ ինձ պիտի:
 Ապիկար միաքս աղմըկայոյղ վարանին.
 Խօսի ազդումն՝ ի կալ բանին իսկ լըւին:
 Ես երբ տեսից զի յասպարէզն երկնաւոր
 Աստեղք յըստոյգ շաւղացն անկեալ ի խոտոր,
 Եւ բախելով յիրեար ի գաշա եթերի,
 Ընդ սասանեալ երկինս վազեն ըստ բախտի.
 Երբ ըզաշին լըւայց զէրկրի տապալման,
 Եւ երբ տեսից զի թափառ գունան ինքն յինքեան՝
 Լայ զուրկ յարփից ծըփեալ յեղծումըն մարդոյ,
 Եւ սուզանի յանգունդս յաւէժ գիշերոյ.
 Եւ յորժամ զիս, ըզտխուր տեսլիանցս հուսկ վըկայս,
 Շուրջ պատեացեն թոհ թոհ, խաւար և օրհաս,
 Ես սոսկ յոտին, ես սոսկ, թէպէտ և յահի,
 Քեզ յուսացայց, Էդ անվըրէպ և բարի.
 Եւ աներկմիտ ընդ միշտ այգոյն վերագարձ,

Քեզ մընացից գեռ յաւերակս աշխարհաց :
 Յաճախ, յիշես, յերանաւէան այն ի վայր,
 Ուր ի մի նկատ ծընաւ մեր սէր մըչտավառ՝
 Մերթ ի կատար առապարաց վաղեմեաց,
 Մերթ զամայի եզերքք տըխուր լըճակաց,
 Ի թևս ըզձից վարեալք հեռի յաշխարհէս,
 Ընդ մըթուծիւնս անդ մըխէաք զոյգ ընդ քեզ :
 Վէտ վէտ ծաւալ իջեալ ըսառուերք ի լերունց,
 Գողանային խուն մի ըզդաշտս ի յաչաց .
 Այլ յառաջեալ ընդ հուպ անշուք և լըռին՝
 Խորհըրգաւոր պար աստեղաց գիշերին,
 Եւ ծագեալ լոյս համակեոցն ի մըռայլ,
 Ըզվայրն ողջոյն պարածածկէր ի գէջ փայլ :
 Սապէս ի սուրբ տաճարս, յոր աիւ սըփուէ լոյս,
 Մինչ հո գեաէ նուաղին ճաճանչք յերեկոյս,
 Կանթեղն ի շող իւրոցն հեզիկ նըշուլից,
 Յևս ի մեզմ փայլ զգաբիրն առնէ լուսալից :
 Անդ երբ զիմ աչս ըզմայլէլով յածէիր
 Յերկնից յերկիր, յերկրէ յերկինս, ասէիր .
 Աստուած ծածկեալ, բնուծիւն տաճարք է համայն .
 Ընդ բնաւ յայտնիս մըտաց, երբ ական հայի յայն .
 Մեծաց ձըրիցգ՝ ոյց նա ճըգնի գոլ տեղեակ,
 Դրոշմն է աշխարհս և հայելի և ցուցակ .
 Տիւ՛ ական է քո, գեղ ցանկալի՛ քոյդ ժըմիտ
 Ընդ բնաւ ըզքեզ շընչէ հոգին, պաշտէ սիրտ .
 Անանց, անվերջ, ամենակալ և բարի,
 Պերճ յորջորջանքդ ոչ տան զանուռդ անթերի .
 Եւ առ վըսեմ քո էուծեամբ նըկուն միտք
 Փառաւորեն ըզմեծութիւն քո լըռիկ :
 Սակայն, ո՛վ Տէր, ըստ գերագոյնն օրինաց՝
 Դեռ տըկար միտքն առ քեզ բերի վերընթաց .
 Եւ գիտելով ըզսէր՝ վախճան իւր վերջին,
 Ի ճանաչել ըզքեզ տապի կաթոգին :
 Ասէիր զայս . և հառաչէր զոյգ սիրտ մեր
 Յէն անծանօթ, զոր վըկայ իզձ մեր կոչէր .
 Ի գուճս հանգէպ՝ ի գործսն ըզնա սիրէաք,

Եւ նմա զօրհնիս մեր տանէին տիւ և ցայգ .
 Եւ ըզմայլեալ աչքս անդ կարգաւ գիտէին
 Զերկիր, զաքսոր մեր, և ըզյարկ իւր՝ զերկին :
 Ո՛հ, թէ ի ժամս անդ յոր հոգին փախըստեայ
 Ճախրել ցելուլ ըզբըռնաւոր լանջն անձկայ ,
 Աստուած յերկնից ըցեալ ըզտենչ մեր ըզձին ,
 Ի սլաք փըրկիչ զմեզ հարկանէր զերկոսին .
 Յաղբիւր իւրեանց սլացեալ հոգիք մեր յանկարծ ,
 Յընթացսն անդ զոյգ գնային յարփիս աշխարհաց .
 Ի սիրոյն թեւ հատեալ ըզվայրսն անսահման ,
 Ամբառնային զերգ ճառագայթ աըւընջեան .
 Եւ սըրատորոփ հասեալք յԱստուած իսկ ինքնին ,
 Ի ծոց նորին յաւէժաբար խառնէին :
 Սո՛ւտ ի զձքս էին . և վիճակեալք չըբուլթեան ,
 Յոչընչուլթիւն արգեօք էակքս հաստեցան .
 Կամ կցորդակից բախտի մարմնոյս լեալ հոգին ,
 Ընկըզմիցի՛ յանլոյս մըռայլ տապանին .
 Փոշի լիցի , թէ գոլով կազմ ի թըռիչ ,
 Զերգ պակասեալ ձայն՝ եղիցի նա յոչինչ :
 Յետ սին հեծման և հուսկ յետինն ողջունի՛
 Զիք ոք սիրող ի սիրելեացդ և ոչ մի . . .
 Ըզմեծ գաղտնեացդ , Էլվիր , հարցջիր քեզ ինքեան .
 Ըզսիրելուոյդ տե՛ս մահ , և տու՛ր պատասխան :

ԼԱՄԱՐԴԻՆ

ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆ

Այս տուն բանախ քո իցէ , այս գերեզման քո , ո՛վ Սէր .
 Եւ կարիցէ՛ լուծանել մահ ըզմեծ հանգոյցն հոգեկցաց :
 Միթէ խորհուրդք անսահմանք , աճրարձաթուիչք ինքնա .
 [չունչք :
 Խընդրակք մըտաց յաւերժից , Հօրն ամենայն խորհըրդոց :
 Միթէ իցե՛ն վայրապար գերեզմանի սպասարկուք :
 Եւ բնակիցե՛ն ի խաւար՝ որք յանըստեզծ ի լուսոյն
 Յարքայուլթիւնըս պայծառս հանգիպեցան և կեցին .

Կեցին յահեղ ճառագայթս ակտուոց այնքմ Միոյն՝
 Որ փարեկի ձեռք բաց առեալ զմարմնոյ վարագոյր,
 Խըարոց ընդ ինքն և ընդ մարդ, երևեցոյց զայն փառօք,
 Աթոռ՝ հանդէպ որոյ նա և այժմէն իսկ հոգիք մեր
 Գուշակօրէն իմն ազգամբ երկըրպագեն և խայտան,
 Եւ ընդ ինքեանցըն բնութիւն ահաբեկեալ զանգիտեն :
 Հոգիք՝ որ զքեզ ճանաչեն խորհրդաւոր ըզգացմամբ,
 Ըզքեզ, ո՛վ ահաւոր Ներկայութիւն և անտես,
 Շիջանիցին ինչ արդեօք՝ թէ վառիցին հանապազ,
 Մածկեալք յաչացըս մերոց լուսով աւուրն անվախճան,
 Որպէս զաստեղըս փայլունս պատէ արև լուսազգեստ :
 Միթէ եղծցի՞ համայն սէր մեր ընդ եղծման շինուածոյս :
 Եւ խորարմատ կանդաղեալք և բողբոջեալք վերարձակ
 Սողարթացեալքն անթառամ ի ջեր սըրտից զուգակցաց,
 Որք ի կորով և ի գեղ զարգանային բարգաւաճք,
 Անըգայից պէս չքնաղ ծաղկանց խամրեալ և անկցի՞ն :
 Միթէ խորհուրդքն այն և կիրք՝ որք տան բարբաւ բերանոյ,
 Որք արձակեն ի շըրթանց ըզմայլական գեղգեղմունս,
 Որք վառեն յաչս ըզհոգի՞ զանձառելեաց նըկատիչ,
 Այս ամենայն՝ պատահարք իցեն մարմնոյ անկայունք,
 Առ ի կեալ լոկ ընդ նըմին, և ի նորին մեռանել՝
 Անցանիցեն՝ որպէս բոց շիջեալ ճրագի սպառելոյ :

Ո՛հ մահացուք, լըւարուք զարմանալի բարբառոյգ
 Որ ի ներքուստ խօսի՝ նդ մեզ. « Ո՛վ մարդ, դու մի՞ բնաւ
 [մեռցիս] » :

Չայնք երկնայինք ի յոգւոջ եղանակեն զայդ մերում :
 Սողմոսարանք՝ հրեշտակաց դըրդեալ մատամբք ներդաշնակ,
 Ընդ հոմաձայն երգս հեզոց առաւօտեան աստեղաց՝
 Քաջահընչեն անգուլ զերգ անմահութեան մեր մեծի :
 Գընդաձև հոյլք համախումբք և գեղեցիկս այս մեր մարդ,
 Երկնահասակ թըխթոյր լերինք և ծովք խորամուռնչք՝
 Միաձայնեն յընդհանուր ի վսեմական յոյս նըւազ :
 Լուարուք հոգիք մեր, և զայդ յօգոց հանուրց ծըծեցէք :
 Նա ի մեղմիկ լոյս լուսնի, նա ծածա՛ի միջամուկս
 Ի խոնարհեալ տուընջեան փառս. արջնազգեստեալըն գիշեր
 Մերձեալ յուշիկ ի մահիճ մեր՝ չըջընջէ զայն յականջ :

Յայդ և ցերեակ, տիւ պայծառ և երեկոյն մըտախոհ,
 Ամենայն ծագք ուսմանակք, տարածութիւնք անսահմանք,
 Իբրև միակ մեծայաղթ խորհրդաւոր նուագարան՝
 Յաներեոյթ բարախեալ ուի կենդանի ձեռանէ, [Լեան :
 Լարք ըզգայունք՝ խընդութեամբ թըրթւան յայս մեծ յորե-
 Սրհաստականք լըսեն զայն . և մինչ տակաւ ձայնք երկրի
 Զանխըլացեալ հեռանան, գըրգեն զոգիս յելս իւրեանց՝
 Ճեպել խառնիլ յերկնային դաշնակութիւնս յայս ի սոյն :

ՅԷՆԱ

ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆ ՀՈԳԻՈՑ

Ուստի սըրտիս զանգոհականս կըրել կիրս .
 Զուր փոփոխեմ զվաստակ, զհանդիստ և ըզգիրս .
 Այինչ զսորայս հանգուցանէ գեգեմունս .
 Համայն ուրեք ըզնոյն դտանեմ զանձկութիւնս :
 Օ՛ն, զհեշտութեանց առցուք ճաշակ :
 Յառաջ մատիք, շնորհք և գըրգանք,
 Սկայք ժըպիտք և սէր և խաղք,
 Եւ անուշից դուք խառնարանք :
 Այլ զինչ է այս . ահա խամրեալ ծորի վարդ,
 Յընգեալ բառնի հոտ քաղցրաբոյր,
 Թողու քընար ըզձեռս թափուր .
 Զանձիւք գըժնեայք դառնան ի սիրտ արդ և արդ :
 Հնպա, ի դաշտն ելցուք Արեայ .
 Դափնեպըսակ ճակատուն շուք
 Հաշածեսցէ տարց՝ ի բացեայ
 Ըզխեղդ սըրտիս հեղձամըղձուկ :
 Օ՛ն անդր . հընչեաց շոփնդըն խաղմիկ .
 Շողան սուսերք, շանթեն շառափք,
 Տրոփեալ վըրնջէ նըժոյգ ուաղմիկ,
 Բաղխեալ կոփեն զէնք և երկաթք :
 Ի ձայնս յաղթից և յաղթելոց

Սարսեալ հեծէ բարձր Ոլիւմպոս :
 Խաղան զինև , յորդ ճապաղիք :
 Սիրտ ոչ ժուժէ , գելունն աղիք :
 Արդ հաշտագոյն կոչեն զիս փառք ,
 Մերթ վեհիմացք և մերթ վայրագ :
 Հրամանահան բաղմեալ ի բարձ
 Իշխան երկրի և ջուրց ալեաց՝
 Օրէնս յաշխարհ տամ յընդհանուր ,
 Ուանձինս իշխել ջանամ ի զուր :
 Անգուլ այսգունակ առ յոյս նորանոր
 Դիմեալ ըղձակաթ՝ գառնամ կորակոր :
 Յերանութիւն իմն յայսց օտար՝
 Բաղխէ հոգիս թեւս անգագար :
 Եւ ոչ ինչ ոչ զօրէ յիրաց կենցաղոյս
 Ջանմահութեան նուաճել յիս բուռնն հրապոյրս :
 Յորժամ յօրհասին պաշտէ իմաստուն
 Ջանճողոպրելի գատակնիք մահուն
 Աստուած ազգէ նմա . իմ է յաւերժութիւն՝
 Որ նախն էր քան զքեզ , քո է՝ որ յետոյն :
 Այլ զի՞ զանճահս ես բաջաղիմ :
 Յաւիտենից ոչ է կըրճիմ :
 Ջհամայնն ի քեզ զուգեաց Աստուած
 Նկարեալ ըզկեանս քո յաւիտեանց ,
 Եւ զէութիւն քո ապագայ
 Անհուն մրտացն ունէր ներկայ :
 Արդ լէ՛ր Հաստչին քում արժանի ,
 Կաց յաւերժից բաղդիդ պատկառ ,
 Եւ վեհ լըւեալ նորայն ձայնի
 Սնտաի գոյից լէ՛ր ոտընհար :
 Ջի՛ փոքր է այս երկիր՝ յերկնից թէ կաս գէտ :
 Եւ իմ գոռոզն հըպարտութիւն գոյ հանգէտ ,
 Գեանասողից որդանց նըման
 Բըռնաւորաց մարգագետնոյ ,
 Որոց հաղիւ կըշուեալն ական
 Յուզէ զնախանձ ծիղ մի խոտոյ :
 Մեծք՝ առ աըգէտս համարեալ այդք

Պըճնեալք ի դեզ ունայնութեան՝
 Զինչ թըւիցին ի հեռուստ անդ
 Յերկնից բարձանց անմահութեան :

Այս տեսութիւն ծընող վըսեմ իմաստից,
 Այս ապագայ՝ վեհ քան զօրէնս հըպարտից,
 Զուգակըշիւ պահէ ուղղեալ գազա զաշխարհ,
 Եւ Բարձրելոյն հանգէպ ըզբնական հաւասար,
 Զծաղը անցաւոր և զանցաւոր արտասուս,
 Բառնայ զչարեաց դառինս, հեշտիցն ըզհաճոյս,
 Եւ ըզբոլորն սիրտ կըրթէ ի բարձունս :
 Առ ոտս հարեալ զհիւլէն՝ յերկինս ելեալ ճեմ,
 Զի փոյթ նըմա քնընել զերկիր վայրագէմ,
 Թէ ծագիցէ՞ անդ արև, շանթք հարուցճան,
 Թէ գուցէ՞ անդ աւագ, հըզօր, գիւցազուն.
 Թէ մարտիցեն, կռիցեն գաշինս հաշտութեան,
 Թէ բազդ տայցէ՞ կամ բառնայցէ՞ զգաւազան :

Ո՛յր ի բարձանց գահաւանդի
 Տեսանելով ըզյորդ Նիւլոս,
 Դարձուցէ զաչս յափանց անախ
 Ու ի կոհակացըն պերճահոս,
 Եւ առուակի լուիցէ փոքու
 Որ առ ոտիւք ման առնուցու :

Լուեցէք անախ մեծութիւն, գոյք վաղանցուկք,
 Անգիտութիւն, գիտութիւն, շուք և անշուք.
 Բաց ի յամբիծ վարուց և բաց յեզերանց
 Ուակն ածելոյ յարգարագատ իրաւանց,
 Իընին հանուրք յաւերժապէս հաւասար,
 Զիջեալ հանգէպ ճմարտութեանն անաչու :
 Այսպէս ի բարձըր գագաթանցն Ապէնին
 Հետախազաղ արարեալ զձոր ընդ լեբին՝
 Զաշխարհս ամեն ցուցանէ գաշտ հարթյատակ,
 Ի կէտ ծրարեալ խուն՝ զհորիզոնն ընգարձակ :
 Ո՛հ, թէ վըսեմս ազդումն օր զմեծըն Համեր
 Եւ զբաջն երկնեաց Ըսկիպիոն՝
 Նըպերա մըաաց հնարք ևեթ էր,
 Կամ առասպել ցնորք անըմբոն,

Ըզմէ՞ ի հուսկն ասպարէս
 Զարհուրելով յոչընչին անս՝
 Ընկըրկի մարդ սոսկապէս :
 Եւ կամ զեմրդ ի կենցաղումս անկայուն
 Ընդդրկէ զլոյս յաւերժութեան հաստատուն :
 Ո՛չ, ո՛չ, չէ այդ վարկած սնոտի .
 Ազգուճն է խոր ուանդըրդուելի ,
 Յարարչական աջոյն գրողմեալ ի յոգիս
 Կոչ ուղղութեանց տածիչ, հերքիչ խեռ ախտից :
 Յաւիտենական բազմեալ ի դահոյս
 Հաշան Անմահութիւն ի յանտասան կայս՝
 Արհաւերս չարաց, լաւաց տայ խրախոյս,
 Ի հըսկայաքայլ ժամանակի՝ նժացս
 Պաշտպանէ զարգար, բառնայ՝ մկարըշտաց
 Ըզլոյս դըժպըհի ոչընչին վայրաց :
 Ի՞նչ որ չառնողք ակն յԱլիւմպեայ կայծականց
 Եւ ըզսեղանս քանդէք յաւերժն իրաւանց,
 Նեղիչք երկրի, երկերո՛ւք,
 Այո՛, անմահք էք և գուք :
 Եւ գուք, անգութըն բազգի սպանդք վաղանցիկ,
 Յոր ակնարկեն աստուածեան աչք հայրենիք,
 Ի՞նչ անցաւորք յօտար երկրի առօրեայք,
 Զօրացարո՛ւք, քանզի և գուք էք անմահք :
 Եւ ո՞ր կացցէ սիրա անըզջայ
 Առ կարևորս այս պիտոյս .
 Մըփեալ մարդոյ՝ նգ ահ և յոյս՝
 Եւ յեա կենացն ըզկեալ ցանկայ .
 Եւ յօթեվանս իսկ ի մահուն՝
 Ներիմ զոտիւք, ճակատ յերկին՝
 Հանէ ցաթոուն իսկ Բարձրելոյն
 Յուրանն ըզլոյս սոնք գիակին :
 Իրողմէ ի պզկնձ ըզյիշատակ ժանգահար,
 Եւ ընդ նըմին՝ զունայնութիւնն հիգաբար .
 Յարձանս յալթիցն՝ ի նիշ փառաց զազփաղփուն՝
 Զանմահութիւն փորձէ ի փորձս անդ մահուն :
 Ի՞նչք միայն, ո՛վ սիրեցեալք, ո՛վ հրաշակիք,

Իմ նախանձորքք, զօրութիւն վեհ իմն ունիք
 Անմահո՞ւնակ կանգնել արձանս դուք ևեթ,
 Ոյք կըրկնակի պըճնեալք յերկնից սեթևեթ
 Պըսակս հիւսէք առաքինեաց հանճարոյ,
 Ձեռք ձեր շնորհեն, ճակատք ձեր զայն ընդունին.
 Հոմեր հաղորդ է գիցն իւրոց ի բագին:
 Եւ թէ երբեք առ մարգելոյ՞լ փաղաքշանս
 Ի նուաստութիւն իջուցէք զերպըս ձեր պանձ,
 Յաճախագոյն սակայն ի նուագ վսեմականս՝
 Զօրէնս յարգէք, և սէր վառէք հայրենեաց:
 Վաշտ ի վաշտե՛ն ՚նթանայր քերթող ուազմամուտ,
 Դըրգէր ի մարա զերիտասարգս եռանդունս,
 ԶԱրէս վառէր Տիրտէ ի հուր կիզանուտ.
 Եւ շանթք տաղից Ալկեսայ՝ ընկճեն ցարդ ըզբռունս:
 Ի սղայ տիոցս ես ատեցի զբըռնաւորս,
 Ըզյաղժական կառօքն հարեալ զիմ նըզովս.
 Անզօրս ես ծաղր առնեմ զահեղ նոցայն կար,
 Զկատոն գովել ոչ զանգիտեմ առ կեսար:
 Եւ հիմ գողալ ի սպառնալեաց
 Բըռնաւորի մի ապառու՛մ.
 Զիցէ՞ իմ այլ վայր հայրենեաց
 Ի սփոփականն հանգերձելում:
 Այսպէս մինչ բնաւն երկրակալին խոնարհէր՝
 Մեծահոգին կատոն ևեթ՝ կայր վըսեր.
 Լըւաւ ըզչռինգըն բըքաբեր փոթորկաց,
 Եւ զանքընին յաւերժութիւն ըզմտաւ ած,
 Սուսեր յաջում և ըզՊլատոն ի ձախուն՝
 Նոքիմք քերթեալ զահ բռանց, գելոց, նախանձուն՝
 Ինքնին անտես բաղդին իւր կայր միայնակ.
 Մին ըզմահ, միւսըն խոստանայր յաւերժ կեանք.
 Աշխարհ թող ծունըր ածցէ՛ նկճողին ըզՏիրեր,
 Հոգի սորա գնայ յապաստանն իւր յեթեր¹:

¹ Զբանաստեղծիցն երկինս շնորհեսցուք կատօնի. իցիւ ըստ գեղեցիկ յուսոյ անմահութեան հոգւոյն՝ յուսով ակն կալեալ էր և հրամանի արձակման նորին ՚ի Հաստէն:

Գերջին ասէ. Ազատ եմ ես,
 Եւ օրհասին՝ թէ Անմահ եմ:
 Արդ ի շիրմաց տարայք հանդէս
 Ուր ըսպասեն հարքն երկնաճեմ.
 Տարայք ըզպանձն այն նըշխար՝
 Որ և յազթեաց ի մահու
 Յազթականին Փարսալու
 Նըշխահելոյն ըզկեսար:

Չուր յազթասէր սա յառաջէր պերճանդամ:
 Ամբոխն ազատ, թէպէտ զյետին զայն անգամ,
 Շուրջ բողբոսալ զգերեզմանաւ մահագոյժ
 Ձվեհագունին Հոովմայեցւոց լայր ըզյուշ,
 Նախանձարեկ ըզկառս՝ գագաղն անդ արար,
 Յազթանակեաց կատոն, ոչ ևս է կեսար:
 Այլ զով ճառեմ... Ո՛վ ցանկալի հայրենեաց
 Վարասական ինձ մանկունք, ո՛վ Փռանկազունք,
 Որք գնայք զըրկեալք յերկրէդ, ի տանց և յերգեաց,
 Լիք լաւութեամբդ առ ի բողբոսն աննրկունք.
 Արկածք վտանգիդ՝ ո՛չ, ո՛չ ըզմահ ձեզ կարգան,
 Արուորագոյնք՝ տարայք կենաց վըշտահան:
 Ո՛ր զօրավիգն ազնիւ սըրտից ձեր ի դէպ.
 Հաւատք՝ որ վարձ կըշունն առ կրիցդ երաշխէպ.
 Յազէտս անգամ նա զձեզ գործէ երջանիկ,
 Ազատ՝ ի կասպս, ընչեզս՝ մինչ ոչն ինչ ունիք,
 Եւ ի բանտից անկիւնս՝ յերկին գուք բնակիք:
 Օ՛ն անդր ի բոց ամպարըշտին ժանս առած,
 Որ երկոցուն նեցկացս ածէն ըստուերած,
 Թէ՛ « Արգարոյ ըմբոն է վարձ
 « Ուանիրաւին արկանել սանձ ».
 Չիք յոյս մարդոյ՝ ոյր չեցէ ահ և կասկած.
 Այսպէս զուգեալ և միաբան
 Անմահութիւն բնակն երկնից՝
 Վերասլանայ թեւակից
 Ընդ իմաստունն Ազատութեան:
 Իսկ գուք, գուք ո՛վ իմոյ սըրտիս սիրելիք,
 Միթէ յանպճուրծ գուք ի կորուստ մատնիջիք.

Ոչ. արշալոյս թէ կեանքս աւուր մ'են պայծառ,
 Յայլ բնակութիւն ապա գըտցուք մէք զիրար,
 Տեսցուք գարձեալ ըզմիմեանս, ո՛վ բարեկամք,
 Եւ ո՛հ, քանի՛ հանգիպեսցուք խընդութեամբ:
 Յեթերական բարձր ի մութից
 Աչս արձակեալ գըթարկուս՝
 Ոչ ևս լուծցուք յարտասուս,
 Բայց առ հըրճուանս և մտերմութիւնս:
 Բայց ցերբ յերկրի աստ պանգըլտիք տարագիր՝
 Մըսազքօսիցն ի փոյթ լերուք արուեստից,
 Դիւրին չարիքդ՝ ոյց անհրաժեշտ է վըճիռ,
 Խառնին ամոքք ի յարտասուտացըգ կըսկիծ:
 Այլ մի պըզծել ըզհուրն ի ձեզ եռանգուն.
 Թողէք ըզմեղկ հեշտից քընար ուերգ նորուն.
 Մեծացուցէք զայր վեհաշուք,
 Չառաքինին երգեցէք գուք,
 Եւ ձայնք վըսեմք լիցին ի վեհ նախերգանս
 Հանգերձեւոցդ երգոց յերկնից ի խորանս:

8ԸԼԻԼ

ԱԶԱՅՈՒԹԻՒՆ, ՃԵՄԱՐՑՈՒԹԻՒՆ, ՍԵՐ

Կերպարանօք վեհ և բըբօք բոցաձիգ
 Յառեալ հայի՛ նգ պարծանս և փառըս նախնեաց.
 Բաղքք առ սաիւք նորա գընին թափառիկք,
 Պըճ'նէ զճակատն համբաւոյ պսակ մըշտակեաց.
 Ուր և շարժին սաւառնաձայն թեք նորուն,
 Սերմըն փըթթի մարդկան ի շունչ դարնայնոյ:
 Շողայ հանճար, ցասնու նգ շըղթայսըն նըկուն,
 Եւ յաղթութիւն՝ արձակէ զծագը իւր հաճոյ:
 Անդուլ տածէ զծաղկունս հանուրց ճըգանաց.
 Ալաբաթիւն նա նուն և մայր կենդանեաց:

Քոյրահամար նորուն ի խուղ խաղաղիկ
 Թոյս տայ յունայն պաճուճանաց աշխարհի.
 Յիմաստութեան ազրիւր խաղայ վեհխօսիկ,
 Թէ անազօտ՝ երկնից ճաճանչ մեծարի.
 Ուր և բերի՝ հնացեալ կարծեաց փայլք մալար
 Յըրուին ի շօզ երջանկութեան և ուժոյ.
 Եւ բազմախար մըթարք մըտաց ապիկար՝
 Հերքեալ ցընդին յարեգական իւր լուսոյ,
 Աչք իւր փայլեն ի մանկութիւն իձն անանց.
 Ճշտարգաւթիւն նա՝ նուն և մայր Լաւութեանց:
 Հիւսակ սոցին ըրման ուածոյ հըրճուանաց
 Զուգէ զընութիւն և ըզանճար դաշնագիր.
 Մոգի աշխարհս ամէն ի շարժ իւր աչաց,
 Զամէն ձրգեալ յինքըն՝ գործէ համակիր:
 Ուր և հըպի՝ մեռեալք՝ լինին կենդանի,
 Եւ կեանք ի մօզ իմըն փոխին քաղցրունակ.
 Նորա հնարիւք ամենայն ինչ սուրբ լինի,
 Ձի զմաքրութեանց ակն ունի զէն ազրերակ:
 Ուզիչ սըրտից ուանգորրիչ բուռն ըղձալեաց.
 Անուն իւր Ակր, և մայր նա՝ մէն Գեղանեաց:

ԿՐ • ՇՐԱՅՊԻՐ

ԱՂՕԹՔ ՀԱՍԱՐԱԿԱՑ

Գուտար իմ, աղէ կանխեաց առ Տէր: Տե՛ս ժամանեալ է
 [Գիշեր.
 Ոսկենըշյւլ աւանիկ գունա յեզերց ի բաց ցեղու զամպեր.
 Նըսեմաձիգ բըլբոյն ի մաայլ շուրջ վայրք ի դող լուծանին.
 Հազիւ հեռուստ ի մըթան անուոցն ի գիւլ լըսի շայիւն.
 Համայն ուրեք ճեպեալ հանդիսա. և ծառք ուղւոյս ի շքր.
 [Շին
 Զտըւընջեան ի սաղարթից յանոյն ի սիգ թափեն գլիոշին.

Տես վերջալստ ըզգիշերի ծածկոյթ ի բաց պարուրեալ
 Լուսաճաճանջ տայ աստեղաց անձնիւր ծագել բոցափայլ.
 Արեմբոյից կարմրավառ աղօտանան ծոպք վերջաւոր,
 Եւ արծաթի ջուրց ըզգիմօք նըշոյք ի ծուփ տատանին.
 Խառն ի խուռն ահօսք և ցանկք անտես յաչաց կորընջին.
 Եւ ըզքայլից ոտինն ի յոյզ կայ վարանեալ ուզեւոր: [խեմ.]

Ի տուընջեան կարիք անբաւ, աշխատութիւն և հեռ գրծ.
 Աղօթեսցուք. ահա գիշեր. գիշեր պայծառ և վրսեմ.
 Ալևորիկն անգէորգ, հողմք ի փեռեկըս գըզեկին,
 Աստ եղաիւրք, և խաշինք անդ ի բառաչ իւրեանց բեկբեկ
 Համայն նիրհնն ի քուն. և բընութիւն վաստակաբեկ
 Հանգըստեան և Աղօթից, Սիրով քաղցու կարօտին:

Աւանիկ ժամ և ժամանակ զի 'նդ զըւարթունս խօտին
 [մանկունք.]

Մինչքեռ այն ինչ հեշտալիս տխտից փութամք մէք երա-
 [գունք.]

Իեռարուսիկ մանկութիւն աչս ամբարձեալ ի վեր յերկին
 Ձեռնամած և բոկանի կըրկնեալ ըզծունըր ի ցուրտ վիմի,
 Առհասարակ ի նոյն ժամու ի նոյն բերեալ յաղօթս ուխտի՝
 Հասարակաց Հօրն ըզընորհս ի մեր Թիկունըս պաղատին:
 Եւ մըսցեն ապա ի քուն: Անգուստ ի ստուերս ոսկի ա-
 [նուրջք]

Ազմըկայոյց երամ երամ սաւառնաթե կայտուելով շուրջ՝
 Ջորս յաւուրն անդ խոնարհել երկնեաց շըշուկ մի յեաին,
 Ի բացուստ նոցուն դիտեալ ըզլար շըրթանցըն վարդազեզ,
 Քան մեղուք գիմեալ յանձուկ անուշահամ ծաղկանցն ի գեղ՝
 Քան Թափին սիրայորգոր առ պաղպաղունս հոսեալ նոցին:

Ո՛վ անուշակ քուն խանձարոց, ս՛վ աղօթից մանկութեան.
 Ո՛վ ուզերձ սիրայորգոր անախտաշունչ մըրմընջից ձայն.
 Ո՛վ կըրօնիցն ամբըծութեան, որ բերկրահայլ ի խինդ ժըմ.
 Ախորժալուրնախերգանք մեծահանդէս այն գիշերոյն. [տի.
 Իբր ընդ Թեօք պարածածուկ արկեալ ըզչլուխ իւր Թըռ-
 [չբան՝

Մանկիկ մտտազ յաղօթս ի քուն առնէ զանմեզ իւր զօգի:
 Իուսար իմ յաղօթըս կաց առ Տէր, յուշ նախ բերեալ
 [սըրտառուչ

Ջոր ընդ գիշերս առ քե ի բուն շարժէր զօրոցդ անպաճոյճ.

Որ ըզփափկիկըն քո զոգի յերկնից ի ծոց իւր տարաւ ,

Որ ի լոյս ըզքեզ երկնեաց , որ ապա մայր որգեգորով
Ըզգառնուածեան կենաց ճաշակ անձին ևեթ առբերելով
Ջամբէր խորիսխ քեզ մեղու , կերակրելով ինքըն լեզեաւ :

Եւ վասն իմ աղօթեօջիւր , կարօտելումն ինձ առաւել :

Նա քեզ հանդոյն բարեհամբոյր սուրբ և անկեղծ է ի սիրել :

Ականակիտ է նորա սիրտ , ճակատ պարզեալ լուսապայծառ :

Յոլովք յիւրմէ բարերարեալ , ընդ ումք ոչ տանի նախանձ :

Ինքն ըզգօն և նազելի ժուժկալուծեամբ բերէ կենաց ,

Եւ ըզարեացըն կըրելոց , ուոչ առնելեաց խընդրէ համար :

Ձեռք նորա հոյլ ընդ հոյլ ի ծագկաքող անուշաբոյր

Սուրբ յաւէրժ՝ պատկառեցին մատչել ախօից փուշս յան-

[համբոյր ,

Մուղակք ըզնտ ի զուր ժըտեն յիւրեանց զըւարթ ձըգեղ

[պաակեր .

Անցելումն անյիշաչար՝ անտես նոցին լիցի իսպառ . [Թար ,

Եւ համայն իսկ անծանօթք առ ի նմանէ խորհուրդք վատ-

Որ ըզմտօքըն սողոսկին զերգ զերեսօք ջուրց մուծ ըստուեր :

Անծանօթք են ի նմանէ , ո՛հ և ի քէն ո՛տայր յաւէժ ,

Յաւիտենիս խուժան աղէտք , ուր սիրտք կոծին գահավէժ ,

Պաաիր հեշտանք , ունայնուծիւն , խայթ և վարանք հալե-

կիրք սր ի սիրտըն ծըփելով իրրու զալիս փըրփրագէզ . [մաշ ,

Եւ ընտանին յիշատակք պատկառանաց ամօթակէզ

Որ ըզգիմօքն ի ծաւալ շառագունանս ածեն անբաժ :

Այլ ես , որգեակ , գիտեմ զինչ կեանք . ի դոյն և զքեզ ,

[ո՛հ , վարժեցից ,

Այն ինչ զարգուն գու ի տիս՝ պէտք կարևոր հասցեն վար-

[ժից .

Թէ պըսակաց պընդեղ ըզհետ , ճարտարութեանց և բազ-

[գին

Ամբտուածիւն է և ոչինչ , և զի փոխան յաճախ պատուոյ՝

Ամօթ յերեսս արկանէ բազգի սափորըն գիպուածոյ .

Եւ թէ ի դոյն խաղալիս ոչիքն ի զուր կորընչին :

Հոգին ի կեանս այլափոխի , և թէպէտ ցանգ յամենայնի

Ընդ պատճառըն թափանցիկ նոյն և վախճան յանգիմանի ,

Այլ ընդ կարեօք ախտամոլ մեք ծերանամք տարապարտ .

Աստ կենացն յասպարիզի մոլորի մարդ, գայթէ ոգին.
Համայն Թողումք ինչ կառեալ ի մացառուս ճանապարհին,
Խաշինք ըզգեղմն ի Թիկանց, և զլաուլ Թիւնս իւրեանց մարդ:

Աջութս, որգեակ, աղէ վասն իմ: Զայս միշտ գողջիր գու
[առ Տէր.

« Ով Աստուած իմ և հաստիչ, գորովագուլթ դու հայր ես
[մեր.

Գոհուլ Թիւն քեզ, որ բարիք ես. գոհուլ Թիւն, Տէր, զի մեծ
[ես »:

Թող զի իղձքըդ անգ Թախեն՝ ուր քոյին սիրա վերառաքէ,
Աղցաւորին քեզ մի գընացք բընաւ ումպէտ վիշտ ամէ,
Եւ կամ ուղի զոր հարկանեն տաքնապիցէ ինչ ըզքեզ:

Ատաէից ամենայնի է ինչ ձըգին յոր հակամէտ.

Գեաք ընդ գաշտս ոլորտաճեմ ի ծով փուլ Թան ըզձաւէտ.
Մեղուն ըզթիւմ ճանաչէ ուստի անոյշ հոյքք պատրաստին.
Թեք ի Թախս օգահերձիկ յանձնիւր ի Թաւըս երագին.

Անգ ի տապան խոյանայ, և բարձր յարև սուրայ արծուին
Միծան առ գարուն, և պաղատանք շէշտ յերկին: [Թըռչի,

Յորժամ մըրմուննջ քո վասն իմ յԱստուած ի վեր հեզիկ
Իմ զերդ ըսարուկ ապիկար նըստեալ ոզորմն ի հովաի
Ի վայր յուսոցն առնու զբեռինս առ եզերդք ճանապարհին,
Խընդամ Թեթեացեալ. զի զբեռն զայն վըշտալից [խիծ՝
Ի միասուցս բարգեալ մոլար զոր յիս տանիմ ծանրաթա.
Ո՛հ քո անմեղ մըրմունջիկ վերաբառնան բարձր ի ձեռին:

Ե՛րթ, վասն հօր քո գիր ազերս. արժանաւոր զի լինիցի
Կարտաքնափայլ յանուրջս զիւրև գիտեւ հրեշտակ լուսաթ.
[գի,

Զի ընդ խընկոյն անուշուլ Թեան և իմ ծըխի սիրա ի բորբոք.
Ի բաց ըզմեզս իմ մերժեսջիր անբիծդ ի շունչ, ո՛վ իմ գըս.
[տրիկ,

Ո՛հ, զի և իմ վերասցի սիրա յանմեղուլ Թիւն լուսատենչիկ.
Իբր ըզյատակ սեզանոյն զոր ընդ երեկս լըւան նորոգ:

Ի կենդանեաց և վասն որոց յայս երկիր
Սահին նըշքեհ, գուսար իմ, ըզՏէր մազթեսջիր.
Վասն այնոցիկ որոց շաւիղ բազմակոծ
Աներևոյթ յալեաց ծածկի և հողմոց.

Վասն անմըտին որ ըզըրտին իւր հըրճուանս
 Յոսկեճամուկ գընէ շողեալ պատմուճանս,
 Կամ յօդապարն երագասլաց երիվար.

Վասն որք ի ցաւըս վաստախին վըշտահար,
 Վասն այնոցիկ որոց զերծեալըն դառնան.
 Որոց բարիքըն գործեցին կամ խոտան:

Վասն այնորիկ՝ որ հեշտութեանց ի հրապոյրս
 Զգիշերն ի գլուխ մեղկին անսուրբն ի համբոյրս.

Որ յազօթիցըն ծընրագիր վըսեմ ժամ՝
 Ի պարանցիկ մոլի խընջոյս բազմերամ.

Եւ զանառակ հարկանէ մատն ի քընար՝
 Այն ինչ հոգին ի գիշերաց սիրաբար

Մըրմուռնջս ի վեր քաղցրաճայնէ ցօզալից,
 Եւ յեռանգուն իսկ շիջանել ազօթից

Նա զնըւագաց գեռ բիծ գեղգեղս յերկարէ,
 Արգեօք զի Տէր յերկնից բարձանց լըսիցէ:

Մի՛ յազօթիցըդ անտեսել և զնոսին՝
 Զորովք թաւալ անկանի վէճ տասլանին.

Սեաւ գահավէժ որ ժամ ի ժամ գըժպըհի
 Ըսպառնալեօք մեզ յանդիման փեռեկի.

Անդ եղկելի հեծեն ի վիշտըս հոգիք
 Ազատութիւն պազատելով երջանիկ,

Որոց ի ժանգ մարմնքն հիւծին հինաւուրց
 Մերոց կարօտ պազատանաց վըշտալոյծ.

Յերկիր աղէ իջեն աչկունք մեր, որգեակ,
 Նընջեցելոց փոյթ ի գորով օժընգակ:

Ի ծո՛ւնը, ս՛հ, ի ծո՛ւնը, ի գոյն յայդ հող երկըրպագջիր
 Ուր հայրըս քո առ իւրն հարամբ, և մայրդ առ մայրք կան ի
 [դիր.

Ուր երբեմըն կենդանիքն՝ արգ կան ի քուն մահագուշակ.

Անգո՛ւնդք՝ ուր ելեւել փոշի նդ փոշի խառնաըզփոթ
 Եւ ընդ հարամբք իսկ մերով նոր դիպին մեզ հարք անծա.

[նօթ,

Իբրու ալիս ընդ ալեօք վերամբառնան ծովք անյատակ:

Վ. ՀԻԻԿԱՅ

ՄԱՂԹԱՆՔ ԵՐԵԿՈՐԻՆ

Քաղցր է, այժ, հողւոյ անբիծ
Աւաւօտու պահուն մաղթանք,
Մինչ համագոյք ժըմօին՝ յարփիցն
Ի լոյս նախկին ցոլ երփներանգ,
Այլ քաղցրագոյն մաղթանք նըմին
Ի լըռութեան երեկորին:

Մինչ գեղջէիցն յաշտարակաց
Ձերդ փոխադարձ ձայն ներդաշնակ,
Մեզմէ յուշիկ առեալ տարած
Սուրբ զանգակացըն հեկեկանք,
Խառնին՝ դ՛ մաղթանս անբիծ սըրտին
Ի լըռութեան երեկորին:

Լուսոյն այն շող յերկնից կամար
Որ ընդ աղօտ սըփուի ծաւալ,
Մնայն որ քողէ զլուսապայծառ
Ձարեն ի մայր իւր խոնարհեալ,
Են ի մաղթանս հրաւէրք նըմին
Ի լըռութեան երեկորին:

Եւ մենակեաց աստեղք ի ցիր,
Որ կաթեն շող ակնապարտ,
Բոյլք կանթեղաց են լուսալիր
Որ յԱրարչին ի վեհավայր
Օրհնից մաղթանս հանեն նըմին
Ի լըռութեան երեկորին:

Երբ խոնջ յուղւոյն ոտնակառեալ
Ըզմիջոցաւ ճանապարհին,
Բազմի պանգուխան աստուածարեալ
Ոգի առնուլ վերայ վիմին,
Հընչէ մաղթանս ի թելս սըրտին
Ի լըռութեան երեկորին:

Երբ յանպաճոյճ խըցկին յանկեան
Ի գուճս ածեալ զպար որգեկաց,

Այրին մէնուկ անօգնական
 Ականողեօք արտասուլաթաց,
 Վերաւաքէ մաղթանս յերկին
 Ի լըուութեան երեկորին:

Եւ ընդ անտառ ընդ ծովափնեայ
 Ծածկեալ զանխուլ ի ստուեր խըրթնի,
 Յառանձնակեաց ընդ վանորայ
 Միանձն յանգորր ի սիրտ ճեմի,
 Մըրմընջելով մաղթանս լըուին
 Ի լըուութեան երեկորին:

Եւ յոր արտունս, կամ յոր աշխարհ,
 Ուր մարդկութեան բարբառ հընչէ,
 Ի խորագոյն կամ յոր անտառ
 Վայրագասուն թէ ազգ բնակէ,
 Ոչ վեր ելցեն մաղթանք յերկին
 Ի լըուութեան երեկորին:

Ո՞ր ոչ ելաց ըզսիրելին
 Յափըշտակեալ վաղամեռիկ,
 Եւ ոչ ի ցաւս ուսաւ վըշտին
 Ընտրել զանտի կեանս երջանիկ.
 Ապա մաղթանք սուրբ քաղցրասցին
 Ի լըուութեան երեկորին:

Յունկն իմ գեռ ևս հընչէ ժամն այն
 Յորում բարձաւ մայրն իմ յինէն.
 Սիրաս ի խորոց առ նա տայ ձայն
 Սիրողաբար որ ինձ լըսէն,
 Եւ մաղթանացս իմ ձայնակցի
 Ի լըուութեան երեկոյի:

Ո՞ր զիս ի խինգ նորա զլասցի,
 Քաղցր ի գըրկացն ո՞ր զիս քեցէ.
 Ըզմեզ սափոր նոյն ընկալցի,
 Ըզմեզ երկինք նոյն ծրարեսցէ.
 Մաղթանքն ապա թէ կարձեսցին
 Ի լըուութեան երեկորին:

Խ Ա 2

Ո՛վ, զոր առի ես ի շըրթանցն օգեսպառ,
 Ընդ շունչն յետին և ողջունիւ իւր վերջնոյ,
 Նիւ սուրբ և սուրբ, պարգև ձեռիննն աղկար,
 Պատկեր իմոյս Աստուծոյ:

Ո՛րչափ լալեօք ոտք քո թացան պաշտելի
 Ի ժամէն սուրբ՝ երբ ի ծոցոյ վրկային
 Անկար ի ձեռս իմ գողգոջուն յերերի,
 Ի շունչն յետին գեռ ջերմին:

Յայտէին ջահք սըրբանըւէր առկայծ բոց.
 Մընչէր երէց զերգըս մահուն քաղցրաձայն.
 Հանգոյն զոր կին եղանակէ երգ ողբոց
 Ի նիրհ հանգչել անդ մանկան:

Ի ճակատուն կայր հետք յուսոյն բարեակեր.
 Եւ վսեմափառ գեղով փայլեալն ընդ գիմօք
 Մահուն չըքեղ վայելութին նըշմարէր,
 Վաղանց ցաւոյն շընորհօք:

Գըգուեալ հողմոյն ըզհերարձակն իւր գըլուխ,
 Մերթ մերկանայր և մերթ ծածկէր ըզգիմակ.
 Որպէս ի ծուփ ծածան ըստուերք նոճեաց թուխ
 Յարձան շիրմին ըսպիտակ:

Ի մահագոյժ կախէր մահճաց մին բազուկ,
 Միւսն ի սըրտին վերայ կըրկնեալ թուլակի,
 Գողգես խընդրէր գեռ ի շըրթունսն առ անձուկ
 Պընդել զպատկեր Յիսուսի:

Համբուրաշարժ շըրթունքն էին կիսամեռ,
 Այլ էր թուռեցեալ հոգին ընդ սուրբն այն համբոյր.
 Զերգ սըլացիկ խունկ չև ի հուր կիզեալ գեռ
 Մախ՝ ի բոցոյն սպառըսպուռ:

Առ ցուրտ շըրթամբքն հանգչէր համայն ինչ յայնժամ.
 Եունչք լըռէին ի խոր ծոցոյն նիրհելայ,
 Եւ հուովէր կիսով ամփոփ բիբն ական
 Յաչսըն թափուրս ի տեսոյ:

Եւ երկիւղիւ զանխուլ հարեալ ես յոտին,
 Ո՛չ բաւէի առ վեհ նըշխարն այն մատչել,
 Իբր այն մահու թէ վեհու(թեանըն լըռին

Սըրբագործեալ զայն լինել:

Ոչ բաւէի... այլ լեալ ըզգաստ լըռելոյս,
 Յըրոտասարսուռ կալեալ մատամբն ըզխաջիկ,
 « Ահ՛ յիշատակն, ասէ երէցն, ւ՛ ահա յոյս,

Կա՛լ, որդեակ իմ, զայսոսիկ »:

Այո՛, կացցես դու ինձ, բաժի՛ն տըխրական.
 Եթե՛նիցըս ցարդ մերձ առ շիրման անանուն
 Տընկեալ ծառոյս ոստոց սաղարդք փոխեցան.

Դու ոչ լըքեր զիս համբուն:

Ուր բնաւք մաշին, աւանդ, ի սիրտ մերձ դու յայս
 Զինքն անմոռաց կալար յաւէտ յամս ամաց,
 Եւ շի(թ առ շի(թ ի գիրդ կակուզ փըզոսկրայս

Կընքեցան հեաք իմս աչաց:

Սաւառնաթև հոգւոյն վերջին դու ընկեր,
 Ե՛կ լեր ի սիրտ իմ, խօսեաց գեռ ւ՛ ասասջիր
 Զոր բարբառէրն՝ երբ ըզմըրմունջ իւր երեր

Դու լոկ համայն լըռէիր:

Ի պահն այն խէ(թ, մինչ ամփոփեալ յինքն հոգին,
 Քօղածածկեալ ըզմեր ըըբօք մը(թալից,
 Զոփայ տակաւ զերծ յազդեւեացըս ցըրտին,

Անլուր վերջին ողջունից.

Մինչ գայ(թ ի գայ(թ ի մէջ կենաց և մահու
 Առ գիշերաւ շիրմին հոգիս կախեալ կայ,
 Հանգոյն անջատ յոսաոյն պըտոլոյ մի ծանու,

Ի՛ առ մէն մի շունչ իւր գողայ.

Մինչ երգախառն հեծեծանաց տըրտմու(թիւն
 Զար(թուցանեն ոչ այլ զոգւոց մեր (թմբիր.
 Մած ի շըր(թունս օրհասական անկելոյն,

Զինչ բարեկամ սիրալիր,

Զանձուկ շաւղին առ ի դիւրել զահափեա,
 Առ ամբառնալ առ Տէր զաչկունսն աղեկէզ,
 Համբուրելիդ դու մըխի(թար երկնաւէտ,

Զինչ բարբառիս, ասա՛ մեզ:

Ըզմեռաննել գիտես և դու, և յունայն
Աղօթքս քո ասեղամեծ գիշերոյն,
Ըզձիթենւոյն ոտս արտասուքդ աստուածեան
Թացին ցայգուէ մինչ յայգուն:

Առ մեծ խորհուրդս յառեալ քո զակն ի խաչէն,
Ընդ լալեաց մօր տեսեր ըզսուգ բընութեան.
Ըզսիրեղիս թողեր հանգոյն մեզ աստէն,
Եւ ըզմարմինդ ի տապան:

Լիցի հիբիս վասըն մահուանս այս, իցիւ,
Տալ ի ծոցին քում զիւրն ըզըունչ ցաւագին.
Ո՛վ, որ մեռար, յիշեա ըզժամ քո լըրիւ

Ի գալ պահուն այն վասն իմ:

Գըտից ըզվայրն՝ ուր գա շըրթամբք ոգեսպառ
Ձանդառնալին մընչեաց ողջոյն ոտից քոց.
Եւ սահահորդ հոգին՝ զհոգիս իմ թափառ.

Ածցէ իւրում Տեառն ի ծոց:

Տայր ոք, ո՛հ, տայր, անգ ի մահձին իմ աղխուր,
Իբրև զսւարթուն յարտօսր անգորր և աըրտում,
Սըգազգեցիկ ոք ի շըրթանցս իմ առնոյր

Ձօծեալ բաժինս իմ այսգոյն:

Պընդեա՛ ըզքայլան և գիւրեա՛ զժամ իւր յետին.
Եւ գրաւըգ սուրբ ակընկալեաց սիրալի,
Գամ քան ըզգամ անց յայնմանէ որ մեկնին

Առ մընացեալն ի յերկրի:

Մինչև զկամարս հերձեալ նըսեմ՝ եօթն անգամ
Ձայն մի զմեռեալքս կոչեսցէ ի յերկին.
Եւ զհանգուցեալսըն զարթուսցէ միաբան

Ընդ հովանեաւ միշտ խաչին:

ԼԱՄԱՐԴԻՆ

ՀՐԱՇԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԻՔ ՔՐԻՍՏՈՍԻ

Տառապելոյ ազգին ի յայց յայնժամ գայր
 Այր մի, թէ պարտ իցէ կոչել ըզնա պր.
 Որ ի նըսեմ յանկեան ուրեք երևեալ,
 Սաստէ բնութեան աստուածապէս տիրաբար:
 Բանին անլոյս բիրք ի նորին ի բարբառ,
 Ահնախըտիլ զմայլեալք յարփին ի պայծառ.
 Նիգք 'ի սաստէ նորա բեկտին անվըկանդք,
 Ի լըսելեաց արկեալք խափան ի ցուղս անգ.
 Լուծեալ համերն ի կապանաց համարձակ
 Շուրթն ըզլուծիչն օրհնաբանէ ժիր ի նուազ.
 Հէքն որ ըզգօս ածէր զանգամս իւր ի ձիգ,
 Հըլուս ի սասա նորա գտանէ զայնոսիկ.
 Որ ի ցաւոց կայր ի մահիճս անգ անյոյս,
 Ըզթազծելոց սըրբէ զորգւոցն արաասուս.
 Ինքն իօկ ի սասա նորին զահի հարեալ մահ,
 Եւ ընգ աւարն առեալ ոչ ևս է վըստահ:
 Սոսկո՞ւնն ահեզ և զուարճախառն ահաւիր,
 Ամենազօր ձայնին ի լուր՝ կենսակիր
 Յառնէ մեռեալն երիզապինդ ի շիրմէն.
 Փարի զնովաւ քոյրն և պահնու յերկիւղէն,
 Ոչ վերջոտնեալ նա զգետո յեակոյս նահանջէ,
 Եւ ոչ զաստեզս ի յընթացիցըն կասէ.
 Ընգ վայր նըշանս աղաչի տալ ի յերկնից,
 Ոչ նա ի լըուսն ընգվայրախոյզ գայ ըզձից.
 Ի մեզ ևեթ հրաշագործէ, մեզ ևեթ
 Ըզզօրութիւն իւր ցուցանէ փըրկուէտ.
 Բառնայ ըզցաւս ի մէնջ և զախաս ի բացէ,
 Եւ զմեզ անգրէն գարձեալ ի լոյս վերածէ.
 Ամենակալ բազկի նորին զօրութիւն՝
 Ահաւատչեայ աստուածայնոյ է սիրոյն:

Ոչ ակն կեթ հաճի հրաշիցն ի տեսիլ,
 Այլ պատգամացն ի լուր կայ ունին իսկ յակճիւ.
 Մերթ ահագին սպառնայ չարաց՝ դատակնիք,
 Վըսեմք ի յայտ մերթ ի նմանէ դան գազտնիք.
 Անայլայլակ ինքն ըզնօսին ի յայտնել,
 Ըզյաւէրժից ճառէ զփառաց իբր ընդել,
 Հանուրց զարմանըս գործելով լըսելեաց,
 Ի զարմանաց ինքն կարի քաջ ի բաց:
 Թըւի ի նոյն ծընեալ ի փառս իսկապէս,
 Այլ իւրայրցն անփոյթ փառաց յայտնի մեզ.
 Խըռնի զնովաւ գիմեալ ի լուր ամբոխ հոծ,
 Ինքն ի ծանուց անտի սաստիցըն իւրոց
 Ոչ ամոքէ աչառանգք ինչ՝ ի փոյթ
 Ըզհետեւըցն ողորկոյ ըզգայրոյթ.
 Զուր և ընդվայր է քրթմընջել հակառակ.
 Հարկ պատգամաց նորին է գոլ հըպատակ:
 Ձէ նրմա փոյթ թէ ոք ըզնա լըքանէ.
 Մատչի համբակ ոմն և հայցէ ի նմանէ,
 Հրաժեշտ բնաւից տըւեալ գընալ նրմա զհետ,
 Սակայն պարապ խընդրէ վայրիկ մի կեթ,
 Մինչև հողոյ երթեալ ըզհայր իւր տացէ.
 Իսկ նա՛ այժմէն իսկ եկ ըզհետ իմ, ասէ,
 Եւ մեռելոց թո՛ղ ըզմեռեալըս թաղել:
 Հանպա թողցուք. մի ինչ լիցի մեզ արգել.
 Թողցուք ըզբնաւս, և զհետ նորա գնասցուք մեք.
 Այլ չիք գըլխոյ նորին դագար չիք ուրեք:
 Օրէնըսգրի այսպիսւոյ զինչ լիցի յանգ.
 Այն զոր Պլատոն առաքինւոյն գուժէ վտանգ.
 Նա ըզգիւցազն իւր պատրաստէ վըշտակիր,
 Որ ինչ զայրոյթ չարաց նիւթէ նմա ոճիր.
 « Ընդ երևել իւրու՛մ, ասէ, ի յերկիր,
 Բարձցի յերկրէ հալածական տարագիր,
 Աղեգանեալ և ընդ արիւն թաթաւեալ,
 Բաղկատարած ի փայտ մահու բեռեալ:
 Խաղաղութիւն ծածկեալ ի խորըս սրբոի,
 Առհաւատչեայ անմեղութեան մահացուի,

Դու միայն գու լիցիս նրմա ի մահունն՝
 Խրախոյս ընդդէմ վըշտացըն կալ աննըկունն » :
 Լըցան ահա պատգամքն, արգարըն զենաւ.
 Դըղըրդեցաւ երկիր, եհաս վաղ համբաւ
 Յափանց հիբին Յորդանանու ի Տիրեր.
 Թըռեան քարոզք ընդ տիեզերս անվեհեր,
 Ի լուր ազգաց զայն և ազանց հըռչակել.
 Եւ ընդ համայն երկիր բարբառ նոցին ել :
 Աշխարեցէք, լերուք նըմին խաչակիցք,
 Թէ և ծանունց իցեն մեղաց ի ձեզ բիծք,
 Ձեզ քաւութիւն պատարագաւըն լիցի :
 Ըզկենսատուն բեւեռեցիք ի խաչի.
 Այն, զոր ընդ քարշ իրոյ յանցաւոր մահապարտ,
 Ձըգեալ գահիճք ձեր ածէին տարապարտ,
 Տիպ և ճաճանչ է և Որդի Բարձրելոյ.
 Եւ որ ըզլոյս բանիւն իւրով ած ի գոյ,
 Ի գերեզման եզեալ նընջէր անդ ի հող.
 Սակայն ընդդէմ մահու եղև նա յաղթող,
 Եւ զգըժօխոց սանդարամետս ի յաւար
 Աստուածայնով իշխանութեամբն իւրով հար :
 Ըզդողանի հարեալ բնութիւն և պակնոյր,
 Տեսանելով ընգոստ ի քնոյ զհաստիչ իւր.
 Նա կենդանի է, տեսին աչք մեր ըզնա.
 Հաւատարմեզ ընծայեցէք աներկբայ :
 Նորանըջան դէպք, հաւատաւ հրամայեն,
 Եւ ընդ հաւատս ահա փոխի համօրէն :

ՌԱՍԻՆ. Ի Կրօնս :

Ի ԶԱՐԶԱՐԱՆՍ ՔՐԻՍՏՈՍԻ

Ո՛վ երկիւղածք ի հանգերձեալ ցասմանէ,
 Լուռ յամրագնաց այսօր ելլուք ի տաճար,
 Զերդ ժողովուրդ որում վարանս արկանէ
 Լուր ազիտից յանկարծ հընչեալ գուժահար:
 Մի ձայնատու մնացուք հընչման զանգակին՝
 Զոր չըներէ սերկեանս հանգէս արխրամած,
 Հանգերձ սըգոյ հարսին՝ ընդ մահ վետային
 Զայրիացեալ կայ խորանաւն ահա մած:
 Լըռեալ հատեալ են երգք ընդ սուրբ պաշտամանց,
 Որովք առ մեզ խորհըրդակիր խոնարհի
 Նըշխարն անմահ խողազուժեան և կենաց,
 Ընդ հովանեալ այլափոխեալըն հացի:
 Սաղմոս մ'ևեթ ի լուր հընչի ողբաձայն,
 Զոր քաջախոհն Սայրիաս նըւագեաց
 Յաւուր՝ յոր սիրտ նախանըկոտ յապագայն,
 Տագնապելով նեղէր յերկնիցն արհաւորաց:
 Զորմէ՛ խօսիս, ո՛վ Յուդայի մարգարէ:
 Ո՞րքէ սա՛ որ Անմահին յանգիման՝
 Մընցի հանգոյն բողբոջ ի ծիւ մերկ յերկրէ,
 Անկեալ ի բաց ի յազբերէն կենսական.
 Այր տառապեալ նախատակո՞ծ ընկեցիկ,
 Որ թաքուցեալ զդէմնըն ծածկէ քօղապատ,
 Իբր յերկնառաք սաստից հարեալ ոք սաստիկ
 Քան զամենայն մարդ մահացու ապիրատ:
 Սա է արդարն յանօրինաց վիրաւոր,
 Համբերատար և անկըսիւ հեղաբար.
 Սա ինքն արդարն, յորոյ Բարձրեալն երկնաւոր
 Եհեղ ի գլուխ զհանուրց յանցանս չարաչար:

Սա ինքն է Սուրբն և սա Սամփոսն կանխատաց,
 Որ զԽորայէլ յազատութիւն հան մահաւամբ.
 Եւ ըզբլիտոյն գերազօր վարսս աւանդեաց
 Ուխտագըրուծ հարսին իւրոյ սիրակամ:
 Բազմեալն յերկնից արգիտահրաշ ի կամար,
 Եւ Ագամայ եպեալ որգի մարմնազգեաց,
 Ոչ խորշեցաւ բաժանել զոյգ հաւասար
 Զժառանգութիւն գրժնեայ՝ նգ եղբարց եղկելեաց.
 Ըննխատինս յանձն իւր տարաւ և զկրտաանս,
 Եւ անցանել ընգ երանշեպս իսկ մահունն,
 Կըրել երկիւզ՝ որ ապյն գըթել ի վրիպանս,
 Որ ոչ գիտաց ինչ վըրիպել ընաւ համբունն:
 Տարաւ մերժման պազատանաց կաթոգին,
 Եւ սպառըսպուռ անտես մնալոյ ի Հօրէն.
 Ո՛վ արհաւրացս, և ըզհամբոյրն ահագին
 Ա՛ռ ընկալաւ ի նենգաժուա մըտերմէն.
 Բայց հանգունակ գիշերամած թուխ մըթան
 Եզև հոգի ոճբագործին մարգասպան,
 Որ զբահեղեղ լըսէր զարեան լսկ ըզձայն.
 Եւ իմացաւ՝ որճճմ եզև ման արեան:
 Ո՛վ արհաւիրք, ժըպիրհ ժողով նախատաց
 Յաստուածագիծ գէմն հարկանեն բիւր եպեր,
 Յոր ակնարկել չբհանգուրժեն սուրբ հայեացք
 Անմեղական օրգւոց երկնից սըրբասէր:
 Որպէս արբշիռ զի յումպ գինւոյ ըզձանայ,
 Ատելութիւնն այնպէս վառի առ եղեռն.
 Եւ յեղերանցըն մեծագոյն գըրգուէ զնա
 Անգութ հըրճուանք իսկ եղերանց չարասէր:
 Այլ թէ օ՛էր այգ անմըռունչ պարտաւոր
 Զոր առաջի իւր անիրաւ ւթոռոյն
 Քարշեալ ձըգէր ամբարաւան Հրեայն գոռ,
 Որպէս ըսպանգ վարեալ հանգէպ սեղանոյն,
 Գոռոզն ըզգա Հռովմայեցին ոչ ծանեաւ,
 Եւ ի խորհուրդ մըտաբերեաց չարաչար,
 Թէ զնուիրականն հեղուլ արիւն իցէ լու-
 Յիւրոյ դահուն հասատութիւն ընգ երկար:

Յերկինս ի վեր յողորմատես ցաւագին՝
 Ելին զազիր պաղատանաց շեշտ հայցուածք,
 Եւ երկնայինք զերեսս իւրեանց ծածկեցին.
 Ասէ Աստուած. Լիցի 'սա ձերոցըգ կամոց:
 Եւ այն արիւն գըրեալ յանէծս առ ի հարց,
 Ըզծընընգողք նոցին հոսի տակաւին,
 Որք է ընդ դարս անցեալ յուզիս դարձագարձ,
 Ոչ ի գըլխոց իւրեանց ի բաց Թափեցին:

Եւ մինչ այն ինչ ի բարձ մահձին գըժընգակ,
 Խոնարհեցաւ տըրտմազգեցիկն այն ճակատ,
 Եւ բարձրաձայն արձակելով աղաղակ,
 Ըզհուսակ յետին զհառաչանաց շունչն եհառ.
 Աճեալ սպառնայր սաստ սըրտմըտեալ Բարձրելոյն
 Բերկրեցելոց սպանչացն անգէն իսկ ի լեառն.
 Բարձր ի գիտէն ի տես Թըւի գալ համրուն,
 Թըւի ձայնել. Թ' Եկից ընդ հուսկ ի վրէժ վառ:

Ո՛վ Հայր բարձրեալ, պատարագիս գէթ ի շնորհ,
 Թող լըռեսցէ ահեղամեծդ այդ զայրոյթ
 Եւ զաչացուացն անհանձար մտաց բանս մոլոր
 Ի մեծագոյն փոխեա բաստ, Տէր բարեգութ:
 Այո՛ իջրէ, իջցէ արիւնդ ըզնոքօք,
 Այլ իբր անձրե ի լըւացումն հեղագոյն.
 Ամենքեան խոտորեցաք լի մեղօք.
 Զամենեցուն ջընջեսցէ պարտս այդ արիւն:

Եւ գու, ո՛վ Մայր, որ առ երի անբարբառ
 Կացեալ՝ տեսեր զ'առ ի խաչին որդւոյդ մահ,
 Հայցեա՛ ընդ մեր, սըգաւորաց մըխիթար,
 Զի և յիւրոց ըզգա տեսցուք փառաց գահ.
 Եւ վիշաք համայն, որով անգութն ամանակ
 Սաստիկ զըզուէ զպանգըխտուութիւն արգարոց,
 Ի չարչարանս որդւոյդ խառնեալ մաքրունակ,
 Լիցին անմահ վայելից գրաւք յերկնից ծոց:

Ա. ՄԱՆՑՈՒԻ

ՅԵՑԻՆ ԴԱՏԱՍՏԱՆ

« Լաւուծիւնքդ այդ անընդեւք զոր ձեզ բարիս առթե-
 [ցին,
 Ո՛րդարբք գուք սասցէք. Տէր է պաշտպան մեր և հայր.
 Եւ ճընշեալք ընդ բընաւ՝ թաւալ յածիք վըշտադին
 Ընդ ոտիւք չարագործացն յորացելոց խորխտաբար:
 Առ էն պահպան արկէք հայցուած.
 Զինեսցէ թող զիւր վրէժ՝ իւրոց որգուցն օգնական.
 Արգեօք կոյր և խուլ իցէ, կամ յուխտ մըտեալ միակամ՝
 Ընդ զըրկողաց և՛ ամբարըշտաց »:
 « Կարկեցարձէք, հայհոյիչք ժանտք.
 Ի լուտանս արգեօք նըմին ձեզ պարգևեաց նա բարբառ:
 Յիրաւի հարկանէ զմեզ. այլ օրինացըն պատկառ՝ [ածք:
 Մըտադիւր մեք ըսպասեմք մինչ նոյն հասցեն ձեզ հարու-
 Արփին՝ վըկայ մերս արտասուաց,
 Զօր իւրումն արգարուծեան հասուցանէ ճեպըշտապ:
 Յաւոցըս՝ Տէր հատուցէ վարձ.
 Եկեսցէ Տէր ի վրէժ պարծող չարին յաղթուծեամբ »:
 « Թճոզ գայցէ ուրեմն Աստուած, թէ լեալ իցէ ինչ երբեք.
 Լաւուծիւնք յորմէհեաէ կան աղիտից նըշաւակ,
 Թըշուաւըն կարգայ, և չիք լըսող ոք ուրեք.
 Նընջէ նա յերկնիցն ի խոր՝ ըզլուռ շանթից կայծակամբք:
 Ա՛յս է Աստուածն այն մեծագուծ.
 Եւ յուսայք գուք տակաւին թէ զարթիցէ նա համբուն:
 Օ՛ն, լերուք մեզ նըմանողք. և մինչ նիրհէ դեռ ի քուն,
 Զար գործեցէք անվիշտ յանըոյթ »:
 Զքնչ գոչումն այդ բարբառոյ. քաջահընչող փողոյն ձայն
 Գոռաց զորոտն ի բնաւ ծագաց.
 Եւ շանդ լափլիզող սլանայ կառօցն հրակերպեան
 Զերերագին օգովք բարձանց:
 Այդ, աստեղք արիւնազանդք, և պատերազմդ ահագին
 Գոռ մըրըրկաց կապակոտոր,

Մի՛ գուցէ ազգ առնիցեն, աւազ, մարդկան երկրածին
Ջտիեզերաց հուսկ վերջին օր:

Ովկիան սարաուցեալ վազէ յալիցն իւր ի բաց,

Եւ կոհակզն ամբօխալից

Դիմէ Թընդմամբ ի Թոպ գ' երկնից,

Այր անհունն փլատակք ընդ հուպ զայն ծածկեացեն Թան-
[ձրամած:

Արգ եհաս կատարած. Բարձրեալն ի յայտն ընդ երկար՝
Թողու զգիշերըն խորին,

Ուր անտես յաչաց մարդկան յանգորր հանգչէր ի դագաբ:

Երևեցաւ. նա ինքն ահա. աչխարհ բախմամբ իւր ոտին

Փըշրեալ բեկաւ գիր և տար:

Սարսեցէք, մահկանացուք. գատաւորին դերագոյն

Ահա ատեանն երկիւղալիւր:

Ասա գընին արհամարհ ճաճանչք Թագին և ոսկւոյն.

Ընդ այր և այր աստ չիք խըտիր:

Աստանօր ճըշմարտութիւն ունի զմատեանն ահաւոր,

Ուր ձեր ոճիրք գրոշմեալ կան.

Եւ կըրօնք, երբեմն մայր գորովագուծ բազմաշնորհ,

Պըզընձի վառի աղեօք ընդգէմ՝ որդւոցն անըզգամ:

Ջյաւխաննից Թողէք գիշեր,

Մեռեալ ոգիքդ համանգամայն.

Եւ ձեր մարմնովք սեփական՝

Յանդիման Տեառն լերուք. հրաւեր տայ ձեզ ինքնին Տէր:

Անդ ըզթըմբիր Թափեալ ցըրտին [բաց-

Պակուցմամբ ոստուն մեռեալք ի մւայլ ծոցոյն ըստուէ-

Խառն ի խուռն յառաջն հուպ առ Բարձրեալն յաւիտեանց,

Դալկահար՝ ըզփոշի Թօթափելով տապանին:

Ո՛վ Սիոն, քանի՛ն յանմահականդ օթեան

Ակըմբին ի պահուս ազցք և ազինք ի գողի.

Այլազցի և հրեայ, հաւատացեալ և՛ անհաւան

Ժողովին համախըմբեալ միայնոյ Տետուն առաջի:

Ո՛ ազմուկ զարհուրելի, մ՛ ազաղակ լալական.

Ա՛խ, և ո՞ զմեղաւորսն հաշուել իցէ բաւական:

Ապերտխտին աստ առ երի

Թանգուղին զըրպարտողք և մարգասպանք և կըծծիք.

Եւ այն նենգող մտանիչ ապգովի՛

Որ եհան ի վաճառ ըզհայրենիսն յօր մարտի :

Դատաւորքդ այգոքիկ անմեղ արեան գինս հատին՝

Ընդ աննըւէր հալածողաց :

Եւ կեզծ անուամբ բարերարաց՝

Իշխանքդ ընդ պարգևաց խառն՝ ըզչարիս սըփռէին : [գիր ,

Արդ յո՛ճեր Թաքուստ և ճեպ , վանեալք յաչաց վրէժխըն-

Հուղկահարք , երբեմն արքայք , և արդ Թափուրքի Թագէն :

Կան տապալ այրք և անձաւք և ախեղերք լայնածիր :

Ըզքնաւս ելից գերազոյն Էն :

Յանցաւորքդ , օն մատերուք :

Աւուրք գըթուլթեան ի շըղթայիցըն տարեաց՝

Խըզեալ հատան ուրեմն արգ հուսկ :

Արարէք , այսն արարէք ըզգերարասոր անմեղաց :

Տո՛ւք ձայն . Նընջ՛ Աստուած նոցուն :

Լայք ուրեմն . ընգունայն ցաւք . ընդ ձերդ հըրճուիմք մեք

[աշխար :

Համախումբ ըզձեզ բաժին Տէր առ հրեշտակ ետ մահուն ,

Եւ զիւր գըժոխք խընգրէ աւար :

Այլ ո՛ւստ այս զի լիւզամ ես ընդ ալիս պաշպաջունն .

Բարէ , յանկամս ընդ վինս յածեալ ցիր Թափառ

Մատուկք իմ գաշնակաւորք ոգեն ըզհեշտ քաղցրութիւն .

Օն , խոյս տուք , չարք , կացեալ խանգիցս իմ պատկառ :

Ահա ընարեալքըն Բարձրելոյն

Ճեմեն զուարթագէժ՝ ընդ խոր գարիր սըրբազայր :

Եւ իցէ՛ որգեկաց գիտեւ ըննաւ զահ և զհոյն

Մինչ յառաջեալ մատչին առ հայր :

Յայգչափ ի մարգկանէ զոր սընուցեր գու գըթած , [գրեաց

Ո՛վ երկին , սոսկ գոյզն այգ խուժք հըլու՛ զիւր կաման ընթա-

Ընդ գերապանծ վեհդ օրինոք :

Ծե՛րք միայն , մատաղ մանկաի , և ապիկարք չարաբախա :

Իմ հաղիւ նըշմարեն աչք անդ առ բիւրուք արգարօք

Ձոյգ ճակատուց պըսակազարգ :

Ձե՛ եղև մեղապարտ ազգաց խուժան ամբոխին՝

Իւ Սիոնի ծածկէին գաշաք :

Խօսեցաւ Ամենակալն . ընդ բարբառոյն ահագին՝

Ի գըժոխոց սուզան յատակ:

Անգանօր դատապարտեալ անկանին քոյր և եղբայր,
 Մընողն ընդ որդւոյն ի միասին գուսար և մայր.
 Բարեկամք և տարփաւորք և ամուսինն և փեսայն.
 Թագաւորք և մարգելոյղք, ազատատեարք և ծառայք.
 Փազանգ չարագործաց յայտանախատ խայտառակ,
 Եւ մատնեալք յաւէժարար աստուածասաստ բարկութեան:

Հուսկ ի վերջէ փայլէ արգարն յաղթագգեաց.

Եւ յերկար պատերազմացն՝ ի ծոց էին անմահի

Հանգչի խաղաղ, շուրջ պարուրեալ ի փառաց:

Ի վայելս իւր պատարուն բընաւ ինչ չիք ցընդեւի.

Տեսեալ՝ ըզգայ և ճանաչէ և շընչէ

ԶԱստուածն ում ծառայեաց, սիրեալ ըզլուծն ի սըրտէ.

Լըցեալ նովաւ՝ երգէ զբարեաց իւր պարգև:

Խորտակեաց յաւէժըն Տէր զումպէտ շանթիս կայծականց.

Անդ խապու թօթափեալ ըզգերանգին և ըզթև

Ժամանակն անշարժ լըռին նընջէ յաւերս աշխարհաց:

ԺԻԼՊԵՐ

ԲԱՐԵԲԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՂԵՐՍ ԱՌ ՍՈՒՐԲ ԿՈՑՍՆ

Կոյս գեղեցիկ, պըսակազարգ, աստեղալից,

Արփիազգեաց. որ հաճոյ վեհ գըտար Արփւոյն՝

Մինչ զ՛ ի քեզ ծածկել ըզլոյս իւր հաճեցաւ.

Ըզքէն խօսել վառէ զիս սէր յորգորագոյն,

Այլ կարօտիմ՝ յըսկիզբն առնել քոց նըպաստից.

Եւ նըմին՝ որ սիրալիր ի քեզ հանգեաւ.

Ըզնա կարգամ ես յօգնութիւն՝ որ միշտ լըւաւ

Հաւատով զինքն հայցողաց:

Եթէ երբեք, Կոյս գըթած.

Ընդ մահացուաց սիրա քո ազէտըս յուզեցաւ,

Ունկըն դիր աղերսագին իմս հայցելոյ,

Յօգնել մարտիս իմ՝ նայեաց,

Թէպէտ ես հող և գու երկնից իցես գըշտոյ :

Կոյս իմաստուն, և ի Թըւոյ ընտրելոց

Երջանիկ ըզգօնամիտ կուսից դասուն,

Նսւ պարառաջ և քան ըզանաւըս լուստից .

Ո՛վ ոգւոց վըշաագնելոց վաս՛ աննրկուն

Ընդդէմ Բազգի և Օրհասին բուռն հարուածոց,

Որով յաղթող լեալ և փրկիմք ի վըտանդից .

Ո՛վ անգորրիչ՝ բոցաճարակ զաչացու կրից

Մոլորամիտ մահացուաց .

Ըզմեզմանոյչ բիրս աչաց՝

Որք տեսին ըզկերպարանս անգութ գրոշմից

Յանձկալի անգամս որդւոյ քու՛մ սիրելւոյ,

Ի վարանեալս յիս յառեաց ,

Առ անհանճարս՝ ի քոյ խորհուրդըս գիմելոյ :

Կոյս ամբիծ, ամենեկին իսկ սըրբափայլ .

Դուստր և մայր շընորհաշուք քու՛մ զաւակին,

Որ լուսաւոր զայս կեանս առնես, և պըճնես զայն .

Քե որդին քո և գերագոյն Հօր որդին,

Ո՛վ պատուհան երկնից շըքեզ և լուսափայլ,

Եկն ի փրկիել՝ ժամանակացն ի կտտարման .

Ու՛մ յամենայն հողեղինաց՝ բընակարան

Եղեր միայն գու ընտրեալ,

Ամենասուրբ Կոյս օրհնեալ,

Որ զՆախամօրն ողբըս փոխես ի բերկրածայն .

Արա՛րժանի զիս՝ որ կարողզ ես իւր շնորհին,

Ո՛վ երանեալ միշտ յաւէտ,

Պըստկաւորըդ յարքունիս անգ վերնային :

Կոյս, որ սուրբ ես լիուլի շնորհք համայն,

Առ իսկագոյն և վեհափառ խոնարհութեան

Ելեալ յերկինս ուստ ազօթիցս սնկըն գընես .

Դու ածեր ի ծնունդ զԱզբիւրըն գըթութեան

Եւ զԱրեգակն յաւէժալոյս արգարութեան,

Որ փարատէն զախտից մըուայլս հո՛ծ՝ ի յերկրէս .

Յանկալի անուանս երիս յանձին կըրես,

Մօր և Դըստեր և Հարսին,

Ո՛վ հրաշափառ Կուսածին .

Տիրուհի Թագաւորին՝ որ զմեր պէսպէս
Հազրըս լուծեալ՝ Ծընաւ ազատս և երջանիկ .

Որոյ ի սուրբ վերսն հայցեմ՝

Սըրտիւս, անխաբ գերախարար, հանգընլ այժմիկ :

Կոյս միայն անհամեմատ աստ ի յերկրի,

Որ սըրտակաթ գեղովդ զերկինս արարեր .

Ում առաջին ոք կամ երկրորդ չեկաց հանգոյն .

Յամբիծ խորհուրդս ւ՛ ի բարի գործըս սըրբասեր՝

Անսուա Բանին՝ մաքրազարգեալ և կենդանի

Եզեր տաճար ի կուսութեան լիարեզուն .

Դու լոկ մարթիս աալ ինձ կենաց զըւարթութիւն .

Թէ յազօթից քոց հայցուած ,

Ո՛վ Մարիամ կոյս գըծած ,

Ուր նախ մեղաց՝ լիցի շնորհաց արդ լիութիւն :

Մըաօքս ի Ծուկըր խոնարհեալ պաղատագին

Հայցեմ լինել առաջնորդ ,

Կամ ըզզրահեա վարեալս ուզընլ անդր ի բարին :

Կոյս պայծառ և անփոփոխ ի յաւիտեան ,

Աստըզ ալեօք մըրըրկածօուփ յայս ի Ծով ,

Վարիչ անվրէպ յուսով դ՛ անգունեզըս նաւելոց .

Տէս զիարդ կոհակակոծ , ամբոխախուով

Տագնապիմ ես անաէրունչ այսպէս միայն ,

Եւ մօտալուա են ինձ վերջին արդ ճիչքն ողբոց .

Այլ զանձն հոգիս իմ հաւատայ քոյդ խընամոց .

Վընասապարտ՝ ոչ Ժըխտեմ ,

Այլ ի քէն , ո՛վ Կոյս , խընգրեմ՝

Մի կորըստեամբըս բերկրեոցի ոսոխն հոգւոց .

Աղէ՛ յիշեա՛ , զ՛ ի փըրկել զմեզ ի մեղաց՝

Ձգենուլ մարմին մարգկեզէն

Ի կուսական քում արգանդէ յանձն առ Աստուած :

Քանի՛ արասոր , ո՛վ կոյս , հեզի ցարդ աւասիկ ,

Եւ հրապոյրս և ազաչանն սրչափ ունայն

Աղիողորմ ի ցաւս՝ ի վիշտս ինձ վըտանդի .

Յորմէհեաէ Ծընայ զափամբքն առնոսական ,

Այսր և անդր հանապազօր լեալ աստանդիկ ,

Աուրք կենաց իմ միշտ եղեն ի տագնապի .

Քեզ մահացու, գործք և բարբառ հընչմանց ձայնի
Ըզհոգիս իմ գերեցին.

Կոյս սըրբուհի երկնային,

Մի յապաղեր, զի մերձ է ամն ինձ օրհասի.

Կենացս աւուրք քան ըզկայծակն երազասուր

Անցին ի հոգս և ի մեզս,

Եւ մահ էեթ ինձ ակն ունի աւուր աւուր:

Ո՛վ Կոյս, արգ հոգ է նա, և ըզսիրտ իմ

Յաւեցոյց, որ կենդանեաւն ետ արտասուել:

Ի բիւր չարեացս ըզմին իսկ բնաւ ոչ գիտէի,

Եւ ի գիտելս՝ որ ինչ եղև հարկ էր լինել:

Ձի այլ կամք իւր ամենայն մահ էր վասն իմ,

Եւ վասն իւր եղեռնաւոր անուն վասի.

Օ՛ն, Տերուհի երկնից, ո՛վ մերս Աստուածուհի,

Թ՛ է ասելի և օրէն,

Քեզ ամենայն յայտնիք են.

Եւ զոր ոչ ղք, Կոյս վեհափառ, առնել մարթի,

Ոչինչ իմն է առ մեծազօր քում զօրութեան.

Ի ցաւոցս իմ զերծ՝ զիս,

Ձ՛ ինձ փըրկութիւն և քեզ լիցի պատիւ անուան:

Կոյս կարող, ի քեզ յուսամ ամենևին,

Ձի և կամիս լինել ի պէտս ինձ օգնական.

Մի՛ զիս թողուր ի վերջին հետս ոտընփոխիս.

Մի՛ հայիր յիս՝ այլ յոր ըստեզ՞ զիս ինքնակամ.

Ոչ արժանեաւս՝ այլ պատկերաւն իւր երկնային

Որ յիս կըրեմ՝ ոզորմեսցիս ինձ վատթարիս.

Մեգուսա եւ կամք մուար՝ արարին զիս

Վէ՛մ՝ յորգահոս սին հիւթոց.

Դու, Կոյս, սըրաիս ի խորոց

Բըզխեցո՛ սուրբ արտասուս եռանգնալիս.

Ձի ջերմագին գոնէ իցէ արասօսըն յեաին,

Անխառն ի սիկ երկրաւոր,

Յիմարութեամբ որպէս եղև լալն առաջին:

Կոյս մարգասեր, հակառակորդ վէս սոնքանաց,

Առ սէր ծագման հասարակաց գորովալիւր,

Ոզորմեաց ապաշխարող բեկեալ սըրաի.

Ձի թէ զգոյզըն ցընդելի հող մահակիր
 Սերս հաւատով այսպէս սիրել անձն իմ կարաց,
 Ձինչ ինչ ըզքէն, ո՛վ հրաշագեղըզ, խորհեսցի:
 Ի հանգամանս իմ չուառական և եղկելի
 Եթէ ձեռամբ քով յառնեմ,
 Առ քեզ սըրբեալ և նուիրեմ
 Ո՛վ Կոյս, զխորհուրդս իմ և զհանձար և զոճ բանի,
 Ձլեզու և սիրա, ընդ հեծուծեանցս և արտասուաց.
 Հան ի բարի զիս ի հունն
 Եւ զյեղափոխ ընկալ ախորժ իղձըս կամաց:
 Մերձենայ օրն և հեռի գոլ իսկ չըմարթէ.
 Այսպէս սլանայ ժամանակ.
 Ո՛վ Կոյս միայնդ և միակ,
 Եւ զսիրա՛ մերթ խիղճ, և է զի մահ տագնապէ.
 Աղէ յանձն արասջիր զիս որդւոյ քու՛մ,
 Մարդ ճըշմարիտ և Աստուած,
 Ձի զվերջին շունչս ընկալցի՝ խաղաղութիւն:

ԲԵՒՐԱՐՔԱ

ՄԱՂԹԱՆՔ ԱՌ ՍՈՒՐԲ ԿՈՅՄՆ

Կոյս և մայր, գուստըր որդւոյդ գու քոյական,
 Բարձր և խոնարհ քան զարարածըս համօրէն,
 Խորհըրդոյն յաւիտենից վախճան կընքեալ:
 Դու ինքն ես՝ որ ըզքնուծիւն մարգկային յայն
 Ազնուացուցեր, զի ոչ անարգ համարեցաւ
 Արարչագործն իւր՝ արարուած լինել նորին:
 Յարգանդի քում վերըստին վառեցաւ սէր,
 Ոյր յեռանդն՝ յաւիտենից ՚ի հանդըստեան
 Մաղիկս այս հանգունակ բողբոջեցաւ:
 Մեզ սիրոյ ես աստանօր ջահ միջօրեայ,
 Եւ ի մէջ մահկանացուաց այգր ի խոնարհ,
 Ակընկալեաց յուսոյ աղբիւր ես կենդանի:

Այնչափ մեծ ես, Տիրուհի, և՛ այնչափ կարող,
 Ձի որ կամի շնորհս և ոչ առ քեզ դիմէ՝
 Սաւառնեւ իղձք իւր կամին՝ ոչ թեւազգեացք:
 Քոյդ բարութիւնն ոչ օգնական լինի միայն
 Ում խընդրէ, այլ և յաճախ բազում անգամ
 Կանխաժաման է քան զհայցուած ինքնայորդոր:
 Ի քեզ ողորմութիւն, ի քեզ գորով
 Ի քեզ մեծ վայելութիւն, միաւորին
 Ի քեզ համայն որ ինչ բարիք են յարարածս:
 Արդ սա ուրեմն՝ որ ի վըհէն անդընդային
 Տիեզերաց է յակն արկեալ մինչև ցայսվայր
 Մի առ մի ըզհանգամանս ոգեղինաց,
 Ընդունեւ ի քէն հայցէ ոյժ այնքանի՝
 Ձի կարասցէ ի վերագոյն ևս ամբառնալ
 Զականողիսն՝ առ հուսկ վերջինըն փըրկութիւն:
 Եւ ես երբեք ոչ աւելի ժըտեալ աչացս
 Որչափ ժըտիմս արդ վասըն իւր, ազերսալիբ
 Քեզ պաղատիմ, ո՛հ, մի լիցին ինչ ապարդիւնք:
 Ձի զամենայն մեռելոտի դու մառախուղ
 Աղաչանօք քո ի նմանէ փարատեսցես,
 Ձի գերագոյն նըմին հաճոյքն ընձեռեսցին:
 Եւ ևս հայցեմ ի քէն, Դըշխոյ, զի կարող ես
 Զոր կամիս, զի քաջառողջըս պահեսցես
 Ըզտենչանսն ըզկնի տեսլեանըն այնքանոյ:
 Հովանի քո զմարդկային կիրսն ընկճեսցէ:
 Տես զԵրանեակ և որքանի երջանկաց դասք
 Կան առ քեզ ընդ աղաչանս իմ ձեռնամածք: —
 Աչքն արգոյք Աստուծոյ և փարելիք
 Բևեռեալք պիչ առ խօսնակըն՝ յայտնեցին
 Ո՛րչափ հաճոյ նըմին աղօթք են սըրսառուչ:
 Անդուսա առ լոյսըն յառեցան յաւէժալոյս՝
 Յոր չէ մարթ հաւաաալ զի մըխեսցի
 Հանգունակ լուսապայծառ ական եղական:

ՏԱՆԴԷ • Արհայտութիւն:

ՎԱՍՆ ԱՂԻՔԱՅԱՑ

Մինչ պարն յուր, ճոխք, երանեալքդ աշխարհի,
 Զեռնու ըզնեզ ընդ ցայգն ի տօն ձմերայնի,
 Մինչ շուրջ ըզձեօք յակն արկանէք խրախամիա
 Լուսաճաճանչ բիւրեղ, զանդակս ուհայելիս,
 Վառ ճրագարանս և ջահարունս աստղալիս,
 Եւ զհոջնականն ընդ կայթս հրքճուեալ ի ժամիս
 Կոջնակն ասկի՝ մինչ ըզժամուց լուրջ ըզձայն
 Յախորժ գանգիւն փոխէ ի նուագս հաճութեան.
 Ո՛հ, խորհիցիք զի ոգեսպառ ի կենաց
 Գուցէ մըթին անգր ի փողոցս ոք ազբաս
 Դիտէ կայտուել զըսաուերսդ ընդոսա լուսացայտ՝
 Ոսկի սրահին ընդ լուսանցս:

Խորհիք, զի անդ եզեմեահար՝ ձիւնածաղ
 Կայ հայր անգործ սովալըլուկ անսըւաղ,
 Որ չըջնջէն. « Ո՛րչափ առ մի ոք բարիք.
 Քանի՛ ծանօթք ընդ պերճ խընջոյս իւր բերկրին.
 Վա՛ջ մեծատանս՝ ում որդիք իւր ծիծաղին,
 Ոյց խաղքն և եթ իմոցըս հացք որքանի՛ք »:
 Ապա կըշուէ ի միտսն ընդ ձերդ հանգիտի
 Զիւրն օթեան, ուր և ոչ կայծ մի վառի,
 Նօթի զորդիսն և զի հնոտիս մայր նոցուն,
 Եւ ասարածեալ զհանին ընդ յարգն անմըռունչ՝
 Զոր ձմեռն, աւաղ, զաղ իսկ էարկ ցըրտաչունչ
 Գերեզմանի սակս համբուն:

Քանզի զայս կարգ Աստուած բազդին եզ մարգկան.
 Մանրաբեռնեալ վըշտօք ոմանք գնան կարկամ.
 Կոչ սակաւուց է ի խընջոյս աւեալեայ,
 Եւ հասարակ ոչ բուրբից անդ հանգիտս.
 Որ անիրաւ թուին օրէնք իմն և խիստ,
 Բամ՝ Վայելեա՛ւ, ասէ նոցուն, սայց՝ Մախա՛ւ:
 Տըխուր է բանս, և գառնութեամբ անողոք
 Եւայ ի սիրտ հիբին զանխուլ հրաբորբօք:

Ճոխք, երանիկք, զըմբեակք ի նինջ գող հեշտիւ,
 Քան, մի հեշտանք թէ ի ձեռաց ձեր հանցէ
 Չընչից մըթերսդ՝ յոր պըշուցեալ զակն յառէ,

Այլ գըթուծիւն, ո՛հ իցիւն:

Գըթուծիւն վառ՝ զոր հէքք պաշտեն գետնամած,
 Փոխան մարուի մայր շարաբառո թըշուառաց:

Որ վերառեալ պընգէ զկոխանսն ի հողոյն,
 Որ ինքնանուէր՝ թէ հարկ այնպէս ինչ տացէ,
 Չինչ Աստուած - Վկայն՝ ում հետեին, տասացէ՝
 Կերայք, արբէք, այս է մարմին իմ ւ՛ արիւն:
 Ո՛հ, սա միայն՝ պըճինս, ըզծոպ, մեծատունք,
 Չանկուածս հիւսկէն, ըզմարգարիտս և զակունք,
 Ըզապիղայ, զսւնայն միշտ խազս և նանիր,
 Ի փըրկուծիւն հոգւոցդ՝ ի տալ հիքին հաց,
 Թող ի ծոցոյ կանանցդ, յորդւոց ի բազկաց

Յինք կորզեսցէ բըռնալիւ:

Տո՛ւք. քոյր է, ճոխք, ողորմուծիւն ազօթից:

Եզուկ, ծեր ոք մինչ վիմարգեսայդ սեմոց կից
 Յըրտակիղեալ ունայնաձեռն ընդգըճի:
 Մինչ ձեռք կարմիր մանկերամին առ ջըրտի՝
 Ըջըռայտանաց քաղէ փըշըանսդ ի գետնի,
 Բարձրեալն ի ձէնջ ի բաց ըզգէմըն տանի:
 Տո՛ւք. զի և Տէր, պարգևատուն ընտանեաց,
 Տացէ ուստերց ձեր ոյժ և շնորհ գըստերաց:
 Չի սյդիք ձեր լըցցին սըազով քաղցրութեան,
 'Ի հասկօքն հասուն ըշտեմարանքդ հակեսցին:
 Կեցլիք լաւ ևս, և զըւարթունք կայտակեսցին
 'Ի ակամբդ յանուրջ ցայգական:

Տո՛ւք. հասցէ օր՝ յորում երկիր զմեզ լըքցէ:

Չեզ գանձս յերկինս ողորմուծիւնդ յարգարէ:
 Տո՛ւք. ի լըսել՝ Խանգաղատի սա առ մեզ:
 Չի կարօտեալն այն սարուակէզ ի հողմոց,
 Եւ հէքն ողորմ մօտ խրախձտնացըդ ձերոց,
 Ոչ նախանձու ակն յառեսցէ այլ ի ձեզ:
 Տո՛ւք, սիրեսցէ զի զձեզ Աստուած մարգացեալ,
 Չի չարք յանուանդ ի յուշ կացցեն պատկառեալ:

Ձի գերդաստանդ անդորր իցէ և սերտ յար .
 Տո՛ւք . զի յաւուր միում, ի պահ ձեր վերջին՝
 Փոխան մեղացդ յերկինս հըզօր մուրացկին
 Լիցին աղօթք ձեզ սատար :

Վ. ՀԻԿՈՑ

ԼՈՒԾԻՆԵԱՆ ԱՂԱՁԷ ԶԳՈՒՍՏՐՆ ԴԱՌՆԱԼ Ի ՀԱՒԱՏՍ
 ԳՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ

Տէր Աստուած, իմ ի քո փառս ի ռազմ՝ մըտեալ վաթ .
 [սուն ամ,

Կործանեալ տեսի զտաճարդ, և զյիշատակ քո ջընջեալ .
 Յահաւոր բանտի լըքեալ զընդանարգել ամ քըսան,
 Արասսուք իմ վասըն հէք որգւոցս առ քեզ գոչէին .
 Եւ ի գալ ժողովել ազգատոհմիս քեւ առ իս,
 Մինչ ըզգուսար իմ գըտանեմ, է նա քոյին թըշնամի :
 Վայ իմում թըշուառութեանս . . . հայրըք քո՛ ես աւասիկ .
 Բանաըն իմ միայն ի քէն զհաւատըս քո մերկացոյց :
 Դո՛ւսար իմ, անուշակ պըտուղ վըշտացս իմ յեանոց,
 Տես աղէ, անս գէթ զարիւնն որ յերակոռնսըդ խաղայ .
 Արքայից բազմաց արիւն՝ քրիստոնէից իբրև զիս,
 Դիւցազանց է այն արիւն ախոյենաց հաւասարոյս,
 Վըկայից արիւն է այն . . . ո՛վ գուսար ինձ յոյժ սիրուն գեւ,
 Գիտիցե՛ս զեղեւըն քո . քեզ ո՛վ իցէ մայր՝ գիտե՛ս .
 Գիտիցե՛ս զի՛նդ ելանելն ի լոյս կենաց ի ծոցոյն
 Այդր յետին և տառապեալ շառաւիղի հէք սիրոյս,
 Տեսի զինքըն խոշոչեալ ի մուլեկան սուսերաց,
 Ի ձեռաց սըրիկայիցն՝ որոց գու զանձնդ ես մատնեալ :
 Քո եղբարք սըրախողխող իմ առաջի նահատակք,
 Չարիւնոտ թւսըն յերկնից բարձանց առ քեզ կարկառեն :
 Արարիչդ որ ուրանաս, Աստուած զոր գուգ հայհոյես,
 Վասըն քո, վասն աշխարհի յայսմ ի սըմին անդ մեռաւ,
 Ի տեղու՞ն՝ յորում բազուկս ըսպատ եհար նըմա ստէպ :

Ի տեղւոջս՝ ուր յիմ բարբառ խօսի առ քեզ արիւն իւր :
Յորմնըդ տենս, տենս ի տաճարդ՝ ի քուժ տերանց խառնաւ
[Կոխ :

Ամենայն պատմէ զԱստուածն՝ ուժ հարբդ եղեն վրէժխըն
[Դիրք :

Դարձն զաչսրդ, գերեզման իւր յապարանս այսր է հուպ :

Այս է լեառն յորում յաղտոյ մեղաց ըզմեզ լուանալով՝
Յանձն էառ յամպարըշաէն անընչանալ թոպամահ :

Անդ ըզկեանս իւր կոչեաց առ ինքն յիւրմէ տապանէն :

Ո՛չ ունիս ընթանալ ի վեհաժայրս աստ տեղի,

Ո՛չ կարես քայլ մի փոխել և չըգտանել զԱստուած քո :

Եւ քեզ չեք մընալ աստէն՝ չլինել կըրկին զճայրդ յուրաստ,

Եւ զպատիւդ՝ առ քեզ խծսուն, և զլուսատուն քո զԱս-

Տեսանեմ ահա զի լաս և յոյժ գոփաս ի գիրկս իմ : [տուած :

Ի սըժգոյն ճակատուդ գրոշմէ Աստուած զապաշաւ :

Տեսանեմ զճճարտութիւն եկեալ իջեալ ի քո սիրտ :

Գըտանեմ ըզլուսարըզ իմ՝ զառ ի յինէն կորուսեալդ :

Եւ զգենում զերանութիւն իմ և ըզփառս առաջին՝

Թափելով զիմ որգեակն յանհաւատիցն օրինաց :

ՎՈՒԳԵՌ • Զայիրա :

ԲՈՅՆՔ ԹՈՅՆՈՅ

Այլ դու որ ոչ շարժիս հրաշիցդ ի զընին,
Ապուշ գիտողդ էից՝ որ զքե բողորին,
Եւ որ պաշտեսըդ խօլաբար ըզգիպուած,
Ե՛կ և ըզբոյնըն զայն՝ ի յայտ աղէ ան,
Զոր այնպիսեալ գործէ ծիծառն արուեստիւ,
Շուրջ մածուցեալ ծայրիւք կըտցին իւրոյ զկիւ,
Ճարտարապետ հաւատարիմ միշտ ըզնոյն
Անայլայլակ կալեալ ըզկարդ հաստատուն :
Առ ՚ի զյանգուգնըն զայն կանգնել ըզչինուած,
Զիւրդ շաղեալ նա շուրջ ըզծեփ իւր էած :

Ի՞րոք այգոցիկ նախահոգակ հաւուց գունդ
 Ըզգաւակացըն գուշակեն ըզծընունդ :
 Տէս, քանի՞օն որրանք կախեալ զուղէշիւք,
 Եւ յարգարեալ ի բամբակ բարձք ի փափուկ :
 Թուանի ի գաշտ պարենից հայրն ի խընդիր,
 Առ ի բերել հարսինըն զայն սիրալիր :
 Եւ գէտ նպաստիցըն կալով մայրն ի յանգոյր
 Տածէ զսիրոյն իւրեանց խայրիս ի ծոց իւր :
 Յաճախ ի բաց ըզթընտմեաց վարեն հեռ,
 Վառի ի տկար մարմնի կորով գեր ի վեր :
 Եւ այսօրէն սընեալք զաւակքըն սիրով,
 Ըզնոյն երբեմըն հատուսցեն ըզգորով
 Զագուց իւրեանց, յորժամ հասեալ նոր զեփիւռ
 Ի բարեբաստ ըզհիմնեանն ի շունչ իւր
 Լուցանիցէ չարսանեկան ջահ նոցին :
 Յայնժամ ի զօք քաղցրիկ կըցորգք անմեկին,
 Քաղաքացւովք լըցցեն զերկինըս նորովք :
 Ազգատոհմ մեծ, կամ մանաւանդ եզբարց ջոկ,
 Որք ոչ ըզծնոցսըն ճանաչեն ինչ բընաւ,
 Եւ ոչ թուուըք ըզնախածնող իւրեանց հաւ :
 Որք ի հինից խոյս ի ձմերաց մերոց տան,
 Ի քաղցրագոյն գոլ ի նահանգս ապաստան :
 Ոչ գըժընդակ եզանակին երբեք սասա
 Անպատրաստիցըն ժամանէ յուլիցն աստ :
 Համախրմբեալ ի ժողով պեպքըն խոհեմ,
 Սահմանեն զօրն հանուրց ի չու աարագէմ :
 Հասանէ օրն և մեկնի չուս համօրէն :
 Անդ մին, թերեւս մանկագոյն յերամէն,
 Ակնարկելով անգր ի ծնընդեան իւր ի վայր :
 Ե՛րբ արգեգք գարձ, ասէ, գարուսն արարեալ :
 Այսօրէն ըզմեզ՝ որ գնամք այժմիկ աարագիր՝
 Դարձուսցէ այսր ի հայրենին մեր երկիր :

ԵԱՍԻՆ. Ի ԿԲԻՆԱ :

ԺԸԺԾԱԿ , ՄՐՁԻՄՆ , ԹԻԹԵՌՆ

Ըզհետազօտ աչաց փոխեալ ըզտեսիլ,
Ազէ անգրէն գարձցուք խոնարհ ի յերկիր,
Ուր և ժըժմակն իսկ ի աղղճն անգր ի ժահ
Կոչէ ըզմեզ, ընդ իրաւունս իւր վըստահ,
Եւ խրոխտագոյնըս բողոքէ ընդգէմ մեր,
Ջանարգանացն ի մէնջ խընդրեալ ըզվասն էր:
Աներևոյթ գեղեցկութեանց քանիօն
Հոյլք ամենայն ուրեք ծածկեալ ի սմա գոն.
Թէպէտ ընդ փիղն իսկ զարմանամ ընդ վայրագ,
Որ յուսն ի յազթ կրէ զանհետեթեթն աշաարակ,
Եւ ընդ ծանու կահիւն երթայ աննըկուն,
Արհամարհեալ զոյն որպէս բեռն իմըն խուն.
Այլ ոչ նըւազ ընդ հոգաբնակդ իսկ ընդ քեզ
Ապշիմ, որ զհետ քոյին ըզբանա քո ձըգես:
Եւ զոր յաճախ սըրտմըտութիւն իմ արգար,
Պիղծըդ ժըժմակ, խորտակէ զքեզ ոտընհար,
Մինչ գու զքոյոց երկայնաձիգ գիտակաց
Մերթ ամփոփես ըզհրաշակերա յօրինուած,
Եւ վեր ի վայր պարզես մերթ զայնս ըստ հաճոյս.
Եւ յանգիման առնես աչացս իմ ըզքոյս,
Որ ամբառնան ըզմոյթ իւրեանց և ըզխեչ,
Ըզարժակտնս աստիճանաւ յել և էլ:

Ի գուզնաքեայն յէից յանանն ի հասառուած
Ինձ հրաշագոյն արուեստ հաստչին է ձեռաց:
Ընդ գաշտաՎայր ծածկեալ ի հասկ ի յատոք
Փանձէ պարէն իւր առատ ազգ նախահոգ.
Վաստակարեկք ի ծանրակիր աւարէն,
Եւ շընչասպառ ուահորդք տըկարք հասանեն
Ի ստորերկրեայս կուտել յանբու ի խըշտիս
Ի շահմարանս հաստրտկաց զարմըտիս,
Որով զմըրջեան ազգ և զմարգկան հաւասար
Խնամեալ հանուրցըս կերտկրէ էից Հայր:

Այսպէս սընեալքս ի նմանէ էքս համօրէն
 Սահեալ գընամք, չիք վերագարձ մեզ տյարէն,
 Մինչ օգաբնակ թիթեռն ի լոյս գայ թըռչուն,
 Այն՝ որ ըսպաս ընծայելով անկայուն
 Բուլից ծաղկանց, յափըշտակէ ի նոցունց
 Ըզհիւթն՝ որ ոչ պահեալ նըմին էր ի ծուծ.
 Եւ որ նըսեմ երբեմըն կեանս ընդ երկիր
 Ընդ համազգեաց ձրգեալ սողնոց ընդ ջուր,
 Որ արհամարհք են արդ նըմին և խոտան,
 Հնարէր զանշուքն իւր ըսքօղել կերպարան.
 Այլ ժամանակն յեղաշքընեալ վաղանցիկ,
 Եւ մահ ի քուն փոխեալ նըմա աւասիկ,
 Ճաճանչագեղ զարթնու ի կեանըս փառօք,
 Ըղթանձր ի բաց խորին ի շիրմին թողեալ լոկ.
 Եւ թեւածեալ ընդ օգս ի թռիչքս վըսեմ,
 Յածեալ շքրջի արփիագնաց լուսաճնմ:

Որգնիկըդ դու, որ ինձ աղնիւ կազմես ձորձ,
 Քանի՛ չըքնաղ սուղ վաստակոցդ է քոց գործ.
 Վասն իմ ուրեմըն դու ծնանիս ի կեանս յայս,
 Զոյդ ընդ երկոցդ տունուն և կեանք քոյին կայս.
 Իու բազմահոյլ թողուս ժառանգս արուեստիդ,
 Ի հայրենի որբս ի տեսոյ հէք ծնողիդ.
 Ոչբամ ըզքեզ, լինիմ ընդ քեզ կարեկից,
 Ինձ ըզքոյոցդ անկ լեալ խօսել ըզհրաշից:

Այլ յօրինել ըզժիրաժիր մեղուաց երգ,
 Այն վիրգիլեայ, ոչ այլ ումէք պահի երկ:

ՌԱՍԻՆ. Ի Կրօն:

ԵՂԵՐԵՐԳԱԿԱՆՔ

ՈՂԲ ՆԱԽԱԽՆՈՂԱՑՆ ԶԿՆԻ ՅԱՆՑՄԱՆ ԱՌԱՋՆՈՑ

Այսպիսի էին արտուստ թըշուառութիւնք բազմապատիկ,
Ոյց մասամբ խելամուտ եղև Ադամ ըստուերանիստ
Թաքուցեալ խաւորասոյղ և տըխրազգած թախանձալից:
Իսկ ի ներքս յանձին իւրում մեծ ևս չարի էր իրազգաց,
Ալէծուփ ի մըրըկածին ծով գառնուութեան կըրից տանջեալ
Խընգրէ սըրտին ըսփոփանս կեղերջական քանքատելովո.

« Ո՛հ, զինչպիսի չուառութիւն՝ յեա որպիսում՝ երջան-
[կուութեան.

Այս իցէ կատարած չըքեղ և նոր այսր աշխարհիս: [նաց
Եւ ես այն ինչ գեռարոյս պարծանք փառացս այս պարծա-
Փոխանակ օրհնութեանցն ընդ անիծիւք անկեալ այժմիկ:
Թաքուցէք յերեսաց Աստուածութեան թաքուցէք զիս,
Որոյ էր յայնժամ տեսիլն երանութեան ծագ և գըլուխ:
Եթէ այդու չափ և եթ իւանիցեն ազէտըս յանգ.

Պարտաւոր եղեալ տարոյց պատուհասիս, այլ չօգնէ ինչ:
Ջամենայն զոր ուտեմս և կամ ըմպեմ և զոր ծընայց՝

Սերունդ և ծաւալուամն անիծարեր է նըզովից:

Ո՛վ երբեմն հեշտիւք ըլուեալ ըանք՝ Աճեցէ՛ք, բազմացարուք,
Իսկ զարգիս մահաշըշուկ. զի զինչ աճեւ յորդեւ կարեմ
Բայց միայն նըզովանս հեղեալ յիմ գլուխ անիծապարտ:

Ո՛վ յապոյս կըրեալ զչարիսն յինէն հոսեալ՝ չանիծցէ
[զգլուխս.—

Կորիցէ պիղծ նախահայրս. այս քեզ, Ագամ, ի մէջ չք.
[նորչք. —

Եւ ի տեղի գոհութեան շնորհակալեաց՝ ելցեն նըզովք:

Այսպէս բաց յանիծիցն յորոց յանձին իմում բնակեն,
Խաղացեալք յինէն համուռ գառնայցեն յիս բուռն զեզ-
ժողովեալ կուտակեալ իբրև ի ընիկ խմբարան յիս, [մամբ
Եւ որով ծանրութեամբ, Թէպէտ յիւրեանց վայր սեփա-
[կան:

Ո՛վ գրախտիս փախըստական և ցընգելի ուրախութիւնք
Ըստացեալք ծանրագնի յարամընայ Թըշուառութեամբք:
Խընդրեցի՜ ես ինչ ի քէն յիմում կաւին, ո՛վ Աբարիչ,
Ձուլել զիս մարդ. ժըտեցի՜ ձըգել հանել ի խաւարէս,
Կամ գընել զիս աստանօր ի գրախտիս յայսրմ՝ փափկու-
[թեան:...

Իայց ուզիղ տեսութեամբ՝ բողոքս է իմ յոյժ տարա-
[ժամ:...

Անհրաման ի քէն ըստեզծ ըզքեզ Աստուած. իսկ արդ զիսորդ.
Թէ որդին քո ստահակեալ և կըշտամբեալ՝ ասիցէ նգ քեզ.
Ընդէր բընաւ ծընար զիս, որ չէր ինչ իմ խընդրեալ ի քէն,
Յանձն ի լոյարս քեզ առնճուս զյախուռնախօս զայն բազրա-
[զայս:

Եւ սակայն, ոչ Թէ կամաց քոց ընտրութիւն ըզնա ծնանէր,
Այլ բնութեան հարկ. Աստուծոյ ստեղծեալ ըզքեզ իւրով
[կամաւ

Եւ իւրով հաճութեամբ՝ մատուցանել նըմա պաշածն.

Վարձքդ յիւրմէ շնորհացն էին, պատիժքդ արգար է յիւր
[կամացն:...

Այդպէս իցէ, հպատակեմ. ուզիղ նորա են գաաաստանք,
Ես հող եմ և փոշի, և ի նոյն հող անգրէն գարձայց:

Ո՛վ ժամ բարեգէպ՝ յորում պահու և եկեացէ:

Ըզմէ՛ ձեռն առնակալ յամէ լընուլ զաւուրս հրաման.
Ձի՛ է զի կեամ տակաւին, առ իմէ՛ զիս խաղ առնէ մահ,
Եւ վասն էր երկարեմ յանմահական ի խոշտանգանս:
Քանի՛օն զըւարճութեամբ յանձն առնուի զմահուս բաժին՝
Յոր և կամ գատապարտեալ՝ և լինէի հող անըզգայ:
Որպիսեալ խընդութեամբ ի մօրըս ծոց աւաւզէի,

Դառնայի անդ ի հանգիստ Է նընջէի յապահովեալ:
 Ահաւոր ձայնն Աստուծոյ յականջս իմ ոչ ևս որոտայր,
 Դըժընգակ և ըս չարեաց կասկած զինէն և զորգեկացս
 Ոչ ևս այլ զիս տագնապէր անտգորոյն ակընկալեօք: ...
 Իսկ թէ ասեմ զի չէ մահն, որպէս եզի, զէրք այնպիսի
 Որ հանցէ զըզգայուլութիւնս ի մէնջ, բայց է յայսմ իսկ օրէ
 Անվախճան թըշուառութիւն՝ զորոյ սկըսնում առնուլ ըզ-
 [գործ

Եւ յիս եւ իմ արտաքոյ, և ետ ընդ ես միշտ յաւիտեանս...
 «Ո՛հ, արհաւիրքդ ի շանթ ճայթեն անհեղ դարձիւ յանզէն
 [գըլուխս:

Մահն և ես եմք մըշտընջեան և ի մի անձն յիրեարս յօգեալ:
 Ձիք իմ մտն առանձին, յիս նըզովեալ են բնաւ յիտինքս:
 Գեղեցիկ հայրենիք՝ զոր, ո՛վ որգեակք իմ, թողում ձեզ:
 Ո՛հ, առ իմէ՞ ոչ կարեմ ծախել սպառել զայն բովանդակ,
 Եւ զձեզ չառնել մասընմուտ. զի անժառանգ թէ թնայք այս-
 Քանի՞օն զիս օրհնիցէք՝ զիս զանիծեալըդ ձեզ այսօր: [պէս՝
 Ո՛հ, միոյ մարդոյն յանցմամբ անմեղ դաւակըն մարդկային
 Դատապարտ եղիցի, թէ արգարև է անյանց ինչ:

Ձի զի՛նչ յինէն ելանիցէ՛ որ և չիցէ ապականեալ:
 Միտք և կամք խոտորասէր՝ ոչ ի դործել միայն պատրաստ,
 Այլ ի կամել ևս առնել զոր ինչ ես գամ մի արարի:
 Արգ առաջի Աստուծոյ զիարդ կայցեն անպարտականք:

«Յեա պայքարացս ամենայնի՛ հարկ իրաւունս է տալ նը-
 Ամենայն խուսիսուսելըս զայրտապար, և բանքս ողջոյն [մին.
 Տարեալ զիս ընդ բաւիզս իւրեանց հանեն յիմ պարտու-
 Առաջին և զերջին՝ արժանապէս յիս՝ յիս և եթ [թիւն:
 Իբր ի սիզբն և յազբերակըն զեզծագործ պըղտորութեան՝
 Յիս ամենայն գըսրովանք հըլովս առեալ գան անկանին.
 Ո՛տայր՝ թէ և զայրուցք ցասմանն ողջոյն յիմ գըլուխ կըրթէր:
 Ի՛ղձ անմիտ. կարիցեն բառնալ միայն ըզբեռնըն զայն
 Մանրակիր քան զերկիր, քան զտիեզերքս ծանրագոյն,
 Թէպէտ ընդ իս և ընդ կի՛նս այս անըզգամ բաժանեացի:
 Արդ քո աննչ և անք ըզյոյս ապաւինի խըզեն ի սպառ,
 Եւ ի զեր քան զօրինակ համայն զանցեալ և զհանգերձեալ՝
 Յայս առնեն ըզքեզ չըւառ և Ստասանին և եթ նըման

ի մեղանս և ի բախտի. ո՛վ գիտութիւն խըղճի մըտացս՝
 Յո՞ր անգուռնգս արհաւրաց և գողութեան զիս ընկեցեր.
 Զբգտանեմ շաւիղ ելից՝ խորոց ի խորս սուղեալ ներքինս ։

Բարձրաձայն հեծէր Ադամ զայս ի լռութեան անգ գիշե-
 Որ չէր՝ որպէս յառաջ քան ըզմարգոյն անկանելոյ՝ [րոյն,
 Առողջ, հով և քաղցրախառն, այլ տըխրագին և միգտամած
 Գէճ՝ և ահեղ խաւտորաւ, որ նախահօրն ի չար խըղճին
 Զամենայն ինչ նըկարէր կըրկնապատիկ զարհուրանօք ։
 Անկեալ կոյր տարածեալ գետնաթաւալ ընդ ցուրտ երկիր,
 Եւ հապ ըստէս անիծիւք զարարչութիւն իւր նըզովէր ։
 Տըրտընջէր և յաճախ զյապազելոյ մահուն ի գործ ։
 Որ յաւուրանք յանցանացն յայտ յանդիման էր քարողեալ ։
 « Զի՛ է զի չգայ մահ, ասէր, ի մի հարուած գերերջանիկ
 Զիս վըճարել. գըրժեսցէ՞ ճըմարտութիւն խոստման իւ-
 [րում,

Արգարութիւն աստուածեղէն զ՛ փութացի լինել արգար ։
 Սակայն մահ ոչ գայ ի կոչ, արգարութիւնն աստուածային՝
 Յաղաչանս կամ ի կակոն չերագէ զքայլս իւր յամբաշարժ ։
 Բլուրք՝ անտառք՝ ալբերք՝ հովիտք՝ մայրիք՝ այլով արձա-
 [գանգօք

Զհովանիս ձեր վարժէի երբեմն՝ անդրէն կըրկնել առ իս ։
 Յայլ իմն երգ նըւագաց մինչ ի հեռուստ անզիս հընչել ։»

Իբրև հէքն Եւա ետես՝ ուստի նըստեալ կայր թաղծալից՝
 Ըզնա յայս սուգ կարևոր, մատուցեալ գուն գործէր հնարէր
 Անուշակ բանիւք յօճան անհընարին բուռն ցաւոցն ։
 Այլ մերժեաց նա ի բաց ահագնացայտ ակնարկելով ։
 « Ե՛րթ յաչացս ի բաց, օձ գու. քեզ այս անուն է յանկ և
 [հուպ,

Քեզ՝ ընդ իւր գաշնաւորիդ, հանգոյն սըտոյդ և ատեւելոյդ ։
 Ո՛չ ինչ այլ քեզ պակասէ՝ բայց կերպարանք նըմին հանգէս
 Եւ թոյր իմն օձային՝ ի գէմս ածել ըզսըրտիդ նենգ ։
 Զի արարածք ամենայն ըզգոյշ յապոյս ի քէն կացցեն ։
 Գուցէ նոգ գեզովդ երկնային ի գըժոխոց անկցին կափով ։
 Առանց քո՝ յաւէժարար երջանկաւէս լինէի ես ։
 Եթէ քո՝ յաւակնութիւն և շըրջմոլիկ նազանաց միտք ։
 Մինչ չէիրն իսկ յապահովս, չէին ըզխրատս իմ զընկեցեալ ։

Եւ ոչ հատեալ ի զայրուկս՝ որ զ'ի նոսին չեղէ վըստահ :
 Տապէիր գիւին անգամ յակն անկանել շոշականօք,
 Զոր ակն իսկ ունէիր խարել, շորիկ ամբարհաւաճ :
 Բայց օձին պատահեալ՝ ծաղըր կացեր և պատրեցար,
 Դու ի նմանէ, ես ի քէն՝ հաւատալով կողաշինիս :
 Կարծեցի զքեզ իմաստուն, անդրրդուելի, հասուն մըտօք,
 Յամենայն մարտ անվըկանդ, չառեալ ի միտ եթէ ի քեզ
 Ամենայն ինչ երևոյթ էր՝ ոչ արգեամբք ինչ լաւութիւն,
 Եւ զի կող մի կամակոր էիր ի բնէ քո ստեղծուածիդ,
 Խոտոր, մէտ և յօժար, որպէս և այժմ իսկ տեսանեմ,
 Առաւել յահեկակողմ՝ ուստի առաւ հանաւն յինէն :
 Յանկանթ ի բաց էր արկեալ իբր աւելորդ ի թիւն իմ ողջ :...

Ոչ ինչ այլ յաւել սա, և ի նմանէ դարձոյց զերեսո :

Իսկ Եւա չհարթուցեալ և արտասուզք անհատահոս
 Հերարձակ անկաւ խոնարհ յոտըս նորա և փարեցաւ,
 Ազերսեաց ի հաշտութիւն և զայս ողբոց արձակեաց ձայնս .

« Մի զիս այսպէս թողուր, Ադամ, զերկինս ունիմ վըկայ
 Սեռն և սերտ սիրոյ սըրտիս և պատկառոտ մեծարանաց :
 Յանկամն ես գառնացուցի զքեզ հիքարար լտրեալս ի վարմ .
 Քեզ յազերս անկեալ խընդրեմ ողորմութիւն, փարիմ

[զձընկօքդ,

Մի զըրկեր զիս յորմէ կեամն, ի քաղցր սչացդ, ի նըպաս .
 [տիցդ .

Ի խորհըրդոց՝ որ ի սմին յետին տագնապ տարակուսի
 Են միայն իմ զօրութիւն և միայն մոյթ հաստատութեան :
 Առ ի քէն ընդ վայր հարեալ՝ յով մեկնեցայց, ո՛ր ապրիցիմ .
 Յորչափ կեամբքս տակաւին՝ ո՛ գիտէ ժամ մի սուղ հաղիւ,
 Տընկեացի հաշտութիւն աղէ ի մէջ մեր երկոցունց :
 Զոյգք ի մեղքս՝ միտսցուք և յոսոխին թընամաութիւն
 Որ ցուցաւ մեզ յայանապէս գատավըճաւ՝ օձն անողորմ :
 Մի յիս զոխարգ թափեր վամն աղետիցըս հասելոյ՝
 Յիս արգէն իսկ կորուսեալս, յիս ի թըշուառըս քան ըզքեզ :
 Երկոքեանըս մեղաք, գու Տեառն և եթ, եո Տեառն և քեզ :
 Երթամ անդրէն ես ի տեղի անդըր գառնամ գատաստանին,
 Եւ կական բարձեալ ի ձայն մեծ թախանձեմ զերեսս երկ .
 [նից,

Ձի անցցէ գատակնիքն ի քոյ գըլխոյդ՝ յիս ինքն անկցի
 ի միայն և եթ պատճառ եղեալըս քեզ այսր հիքուծեան,
 Յիս յիս միայն՝ ի բուն ժառանգըս բարկութեան ասասուա-

[Ճայնոյն ։

Վախճանեաց հեկեկալով, և կայր մընայր խոնարհ, ան-

[չարժ,

Մինչ ի հաշա մեղացն ածել զոր խոստովան եղեալ ելաց,
 Որ և այս յողորմ ի գուծ յարգահատել գարձոյց զԱբամ:
 Խորովին աղիքն անդէն ընդ այն որ էրն յառաջագոյն
 Միայն կեանք իւր և գըրգանք, այժմ առ վըշտին առ ոտան

[անկեալ,

Աբարած չքքնաղաղեզ, ըզհաշտութիւն պաղատելով,
 Ըզխորհուրդ և զօգնութիւն՝ անտի որ լեալն էր գըժկամակ:
 Որպէս այր մի զինազերծ՝ մերկացեալ նա զսըրտմըտու-

[թիւնն,

Յարուցանէ անյապաղ ըզհարսն համբոյր և հեշա բանիւքս:
 « Անխորհուրդ, վարեալք ի տենչ, այժմ իբր յառաջ, ում

[չեսզ հըմուտ,

Իղձ լինիս զի պատուհամն ողջոյն ի քեզ և եթ անկցի:
 Աւաղ, տար նախ քոյումգ. իցես զիւրդ գու բաւական
 Բառնալոյ սպառնապուս ըզբարկութիւնն աստուածեզէն,
 Ձորոյ զգոյզն ինչ և եթ կըրես ըզմասըն տակաւին, [Թեան:
 Որ հազիւ թէ գըժուարաւ ժուժեսզ իմում նեզորբուտ-
 Թէ կարող ինչ էր ազերս ըզբարձրելոյն փոխել հրամանս,
 Փութայի կանխել քան զքեզ անգր ի աեզի գատաստանին
 Եւ ուժգնագոյն գոչէի՝ կանգնել զիմ գլուխ և եթ թիրախ,
 Ներել քում աըկարութեանգ, և ապիկար ազգիդ քոյոյ՝
 Որում յիսն հաւասացաւ և մատն և տուր ես ինքն եզէ:

Այլ արի կայ. մի զիճեսցուք այլ և մի սագիւտ լիցուք

[միմեանց.

Շատ են մեզ այլուստ բասրանք. գուն գործեսցուք ինա-

[մտ սիրով

Փոփոգել ըզվըտանգիս բեռն յիրերաց ախտակցարար:
 Ձի սպառնացեալ մահուն օր, ըստ սրում եսըս նըշմարեմ,
 Ոչ առ ոտս ելլէ աստէն, այլ յամբաքայլ ընթացեալ չար,
 Երկայնօրեայ մեռելութիւն, ի յաճախել զազէտըս մեր

Եւ զճարակեալն ի մեր զարմ. եղճկ քեզ, զարմ [Թըշուա-
[ուսկանն:...

Մի ևս արգ բանք լինիցին՝ մեզ բըռնամահ վըճարելոյ,
Եւ մի կամաւ ամլու-թեան՝ որ յուսակտուր առնէ ի սպառ,
Եւ ոչ այլ ինչ ի մեզ յարուցանէ՝ բայց հեռ, խրոխտումն,
Անժուժու-թիւն, զայրացուկս, ըմբոսասանալ առ յԱստուծոյ
Եւ յարդար լըծոյ իւրմէ զոր ան կախեաց ի վիզըս մեր:
Յուշ քեզ իբըր քաղցրութեամբ և բարերար խնամովք լը-
[ւաւ

Երկոցուն մեզ, և առանց ցասման գատեաց և լուտանաց:
Մեք անգէն ի կողի ունէաք ակըն սատակման, [յայնմիկ.
Ձոր մահուն անուամբ յայտնեալ մեզ հաշուէաք յաւուր
Եւ սակայն, քեզ յըզու-թեան սահմանեցան և ծնընդեան
[ցաւք,

Ձոր փու-թով փոխարինէ ուրախութեամբ ծոցոյդ պըտուզ.
Իսկ զին և շքեալ և եթ անէծքն երթեալ եհար զերկիր:
Ինձ ըզհաց իմ վաստակովք կայ գըտանել. այս զի առ իս.
Չարագոյն էր կեանք գատարկ, արգ երկք իմ զիս կերա-
[կրեսցեն:...

Ապա չիք մեզ երկիւղ ասժանաբար վարել ըզկեանս,
Ի նմանէ խրախուսեալ ազգի ազգի հեթեթանօք,
Մինչև երթեալ հուսկ ուրեմն ի փոշի անդըր յանգիցիմք՝
Ի վերջին մեր հանգիստ և ի բընիկ մայրենի ծոց: [տին,

Ձինչ ունիմք լաւ ինչ առնել՝ բայց ի տեղի դառնալ դա-
Անկանել իւր առաջի պատկառանօք յերեսս ի վայր,
Խոստովան լինել անդ ըզմեզըս մեր խոնարհութեամբ,
Խընդրել մեզ [թողութիւն [թացեալ զերկիր յորդ արտա-
[սուօք,

Եւ լըցեալ զօգս ի [թառանչ հեծեծելով բեկեալ սըրտիւ՝
Յերաշխիս անկեղծաւոր զըզման և խոր տառապանաց.
Ողբեսցի յաներկբայս, դարձցի յիւրմէ բարկութեանէն:
Մինչ [թըւէրըն զայրագին և անաչառ անկարեկիր՝ [թիւն]:
Ձինչ ի զուարթ աչսըն փայլէր՝ քան սէր, շընորհ և գըթու-
Չայս մերն ասաց հայր զիզ ի սիրտ, հարաւ յԵւա նոյն
[խէթ խըզճի.

Ես ընդ ետ չոգան ի վայրն ուր ըզնոսին դատեցաւ նա,

Եւ անկան իւր առաջի պատկառանքը յերեսս ի վայր,
 Եւ եղեալ խոստովան ըզմեզս իւրեանց խոնարհութեամբ՝
 Խընդրեցին թողութիւն՝ թացեալ զերկիր յորդարասսուօք,
 Եւ լըցեալ զսգս ի թառանջ հեծեծելով բեկեալ սըրտիւ՝
 Յերաշխիս անկեզժաւոր զըզման և խոր տառապանաց:

ՄԻԼՏՈՆ

ՈՂԲ ԸՆՏԱՆԵԱՑՆ ԸՆԴ ՄԱՀ ՀԵԿՑՈՐԻ

Իս' ջաջոտն Աքիլլէս գիւցազն առեալ ըզկողոպուտն՝
 Ի մէջ անդր աքայեցւոց կացեալ զթրուչուն խօսեցաւ բանս .

Ո՛վ սիրելիք, զօրագլուխք աքայեցւոց և առաջնորդք,
 Քանզի զայրըզ զայդ աստուածք ի պարտութիւն մատնեցին

[ինձ,

Որ քան զայլսն ամենեսին բազում ընդ մեզ գործեաց ոճիրս,

Օ՛ն եկալք անցցուք զինուք ըզքաղաքաւս ի հանդիսի,

Ղի խելամուտ լինիցիմք՝ արովագացւոց զինչ միտք իցեն .

Թէ զգրդեակ քաղաքին լըքանիցեն անկմամբ սորա,

Եթէ տոկալ ժըտիցին և յետ մահուաննն Հեկաորի:

Այլ ըզմէ՞ զայդոսիկ բարբառիցի առ իս իմ սիրտ:

Անդ անսուգ և անթաղ անկեալ գընի մեռեալս առ նաւո,

Պատրսկլոս, զոր չմուսցայց մինչև իցեմ ի կենդանիս

Եւ ծունկք իմ սիրելիք ի քայլափոխըս շարժիցին .

Եւ ի Դըժոխս իս' մեռեալքն եթէ իցեն անյիշատակ .

Սակայն ես և անգանօր զսիրուն ընկերս ընդ ուշ տարայց:

Արդ եկալք, աքայեցւոց մանկունք, նուագեալ զյաղթողա-

[կանն՝

Ի խորափորնաւաորմն արասցուք դարձ, տարցուք և զոս:

Պարծանք մեծ ժառանգեցաք, սատակեցաք զգիւցազն Հեկ-

[տոր,

Ում պաշտօն տանէին արովեանք յոստանն իբր աստուածոյ:

Ասաց, և ի գիւցազն Հեկաոր կազմէր գործ անարժան .

Ձերկոցուն ոտից կրճնկանց ծակեալ յետուստ կուսէ զպըճ-
[դունս

ի ներբանից մինչ ի կոճս, և իրացս արկեալ արջառենիս՝
Ըզկառացըն կապեաց, և զգլուխն եթող գընալ ընդ քարշ.
Եւ յերկձիսն անդ ամբարձեալ՝ առեալ և զգէնսըն պերճա-
[փայլս՝

Մըտրակեաց յասպարէս, և թըռչէին նոքա յորդոր:
Եւ ի քարշ ձըգեւ նորա մըրըկէր փոշին, և գէսքըն սեաւք
Ըզվայրօք ածէին և կայր հողեալ գըլուխն ողջոյն, [ժամ
Որ երբեմն էր շնորհալոյս, բայց Արամազդ մատնեաց յայն-
Ոսոխացն ի թըշնամանս ի հայրենի երկրին իւրում:

Այսպէս սորա գըլուխն համակ հողաթաւալ գնայր ընդ փոշի:
Իսկ մայրն ըզհերսըն փետէր և զպայծառ քողն ընկէց ի
[բաց,

Եւ յորդեակն իւր հայեցեալ՝ գուժեաց ուժգին մեծակա-
[կան:

Աշխարէր ողորմ ողորմ սիրելին հայր, և ժողովուրդն
Համօրէն ընդ ոտանն ի ճիչ և յողբ կայր համակեալ.
Նըման յյոժ էր կերպարանքն իբր Իլնոս թէ բարձրայօն
Հիմն ի վեր հարթայատակ հըրգեհակէզ սատակիցի:
Հազիւ հազ թէ ամբոխք ըզաըխրալից ծերն ունէին
Որ ընդ գըրուսըն դարգանեան ելանել գուն դործէր ի գուրս,
Թախանձէր զամենեսին ընդ աղբ գալով ու նդ ապաւառ,
Յականէ յանուանէ կարգալով զայր իւրաքանչիւր. [նոյս

Ի բաց կացէք, սիրելիք, թէպէտ ի սուգ, թոյլ աուզք մե-
Ելանել ըստ քաղաքս և յաքայեանց գընալ ի նաւս.

Ձայրըդ զայդ աղաչեցից զեղեռնաւոր և ոճրագործ,
Թերևս ակն ի հասակէս ածցէ, ուալեացս ողորմեսցի:

Ձի և իւր խիսկ այսպիսի է ապաքէն հայրըն Պելևս՝
Որ զնա ծընեալ և անուցեալ արովադացւոց ի պատուհաս,

Մանաւանդ ինձ առաւել քան բոլորից՝ ցաւոց մորմոք.

Ձի զայնչափ զիմ մանկաին զուարթածաղիկ արկ յարևէ,

Ձորս ոչ այնպէս ողբամ զամենեսին ի կըսկիծս իմ,

Որպէս ըզմիզ զայդ որոյ սուգ ծանր ի Դըժոխս իջուսցէ զիս,

Ըզձեկտոր, զոր ու աայր թէ աստ ի գիրկս իմ մեռանէր.

Ձի յայնժամ յագէտք ողբովք մերովք և արտասուզք

Մայրըն չուսուական ծընող նորա և ես ինքնին :

Ձայս ասէր լալահառաջ, և քաղաքին հեծէր ամբոխ :
Իսկ ի կանայս Հեկաբէ հեկեկանացն արար ըսկիզբն .

Ի՞նչ անաղէր հիբիս առ ի՞նչ իցէ, որդեակ, յեա քո մահուգ
Ձարև տեսանել, որ ինձ ի տուէ և գիշերի

Էիր փառք յոսասնիս, և ընդ քաղաքս հանուրց օճան,
Տրովացւոց և տրովուհեաց, զոր իբր աստուած ողորունէին,
Ձի էիր նոցա պարծանք մեծ ճըջմարտիւ ի կեանլս քում,
Իսկ այժմ աւագիկ Օրհնա ըզքեզ սւնի և մահ :

Ձայս ասաց ողբաձայնիւ : Կինն Հեկատորի չէր իրազեկ,
Ձի ոչ չոգաւ ոք առ նա ստուգապատում զըրուցատար՝
Ազգել նըմա զի էր այր նորա մնացեալ արտաքոյ դրանցն .

Այլ նա յալըս ներքին տանըն բարձու կըկէր ոստայն,
Մերանի ձորձ երկգիմի՝ պէսպէս ծաղկեալ նըկարակերտ :

Պատուիրեալ ընդ ասարանսն էր աղախնանց վարսագեղից
Կառուցանել ի խարոյկ հրատին ըզմեծն յեռտանիս

Ի շերմաջուր Հեկատորի լուացումն ի դարձ պատերազմին :
Միամիտ . ոչ իմանայր՝ զի յոյժ ի բաց ի լոգանաց՝

Ըզնա խաժակն Աթենաս պարտեալ ի ձեռն էր Աքիլլէայ :
Ձայն գուժի և կականման յունկն իւր հընչեաց յաշտարակէն,

Ըզգողի հարան անգամքն, ի ձեռանէն անկաւ կըկոցն,

Եւ անգէն ձայնարկեաց առ դանդրագեղ նաժըշտանին .

Օ՛ն արիք ընդ իս երկուք, երթայց տեսից զինչ գործեցաւ .
Ձայն լըսեմ ըզմեծարոյ սկեսրիս, և յիս ի լանջըս իմ՝

Թընդայ վաղէ սիրտս ի բերան, ծուռնկքս ի ներքոյ ի պաղ
[մածնուն :

Մօտալուտ հասեալ որգւոցն է Պրիամու եզեռն անշուշտ .
Քաւ բանդ այդ յունկանէս, այլ մեծապէս յոյժ երկընդիմ,

Գուցէ գիւցազն Աքիլլէս զքաջայանդուգն իմ ըզՀեկատոր
Մինաւոր հատեալ ընդ դաշտն ի քաղաքէս հալածական՝

Աւնիցէ նըմի զըբաւ ի չարաշուք արուժենէն [րանց,
Որ ի նմայն էր տարրացեալ, զի չկայր երբեք ի խուսն ա .

Այլ յարձակ յարձակ խաղայր, քաջուժեամբ ոչ ումեք յեա .
[նորգ :

Ձայս ասաց, և ի տանէն սրացաւ հանգոյն ցընորելոյ
Սիրտ ի Թուռգ և ի գող . գնային ընդ իւր և աղախնայք :

Իսկ հասեալ յաշտարակն և ի մարգկանն ամբոխակոյա ,
 Եւ կացեալ ի պարըսպին՝ շուրջ ած զաչերն , ետես ըզնա
 Կազաքին գէմ յանգիման ընդ քար լ վարեալ , և զձիսն երագ՝
 Զի ձգէին զինքն անողորմ ի գոգաւոր նաւս աքայեանց :
 Գիշեր խաւարակուռ մածեալ ծածկեաց զականողիսն ,
 Յետըս կոյս գլորեցաւ , ոգի զոգւով ածէր նըւազ :
 Ի բաց հոսեաց ի գրէտոյն զպերճապըսակ զարդուցըն շուք ,
 Զսպարօն , ըզծամակալ և զփողոշուկն իւր ըզհիւսկէն ,
 Եւ ըզքօղըն զոր Աստղիկն ոսկեղինիկ նըմա շնորհեաց
 Յաւուրն՝ յորում զինքն էած Հեկտոր սաղուարաաճօճ
 Ի տանէն Էտիոփիի՝ բիւրս ի բիւրուց տըւեալ վարձանս :
 Եւ զնովաւ շուրջ պար առեալ խըռնեալ կային տալք իւր և

[ներք .

Ունէին զինքն յիւրեանս՝ որ Թալանայր ճեպէր ի մահ :
 Մինչ յոգիսըն գարձեալ ի միաս եղև և զգաց անձին ,
 Կոծ առեալ արաօսրայեզց՝ ի տրոզուհիսն արձակեաց ձայնս .

Հեկտոր , վայ ինձ հիքիս . ուրեմն ի մի ծընաք վիճակ
 Դու և ես . գու ի Տրոյա՝ ի Պրիամեանն անդ ապարանս ,
 Իսկ ես՝ ի Թերէ , յանտառախիտ Պլակայ ստորոտ ,
 Ընդ յարկաւ Էտիոփիի՝ որ զիս սընոյց ի աղայ տիոց ,
 Եղկելին զողորմելիս . ո՛ տայր Թէ բնաւ իսկ չէր ծընեալ :
 Իսկ արդ ի տուն Դըժոխոց , ի ստորմիս խոր սանդարմեաց
 Երթաս գու , և զիս ի սուգ ծանրաթախիծ լըքեալ այրի
 Յապարանսըդ Թողուս , և դեռ մանկիկս ի ճիղմ հասակ՝
 Զոր ծընաքըս գու և ես Թըշուառականքս , և ոչ լիցիս
 Դու նըմա ի պէաս , Հեկտոր , քանզի մեռար , և ոչ նա քեզ :
 Զի Թէպէտ և ապրեսցի յաղիտարեր խաղմէ աքեանց ,
 Սակայն ապա միշտ ընդ իւր եղիցին ցաւք և տառապանք .
 Զի օտարք ըզսահմանս անդոց իւրոց փոփոխեսցեն :
 Որբութեանն օր յամենայն ամոխախից զըրկէ զմանուկ ,
 Ինքն հանապազ գըլխակոր , արաստուալից ծընօտք նորա .
 Կարօտեալ երթայ աղայիկն առ բարեկամսըն հօր իւրոյ ,
 Զոմն ըզուգիէն ձրգելով , յայլ ոք զձորձոցըն բուռն հարեալ :
 Յողորմել ուրուք նոցա՝ գուն մի զըմպիկըն կարկառէ՝
 Ըզըրթուսն և եթ Թանալ , և զքիմսըն ոչ ոռոգանել :
 Եւ զըւարթ ոք հարբ և մարբ՝ ի խրախճանէն իսկ մերժէ զնա՝

Գանալից կըռփեալ ձեռքք և հալածեալ նախատակոծ .
 « Երթ այգպէս ի կորուստ . չիք քո 'նգ մեզ հայր տաճարս .
 [կից] »:

Եւ դառնայ կողկողադին առ այրի մայրըն գնայ մանուկն .
 Ոստանիշխանս՝ որ երբեմն ի ծուռնկս ի գիրկըս հօր իւրոյ
 Ուղղովք ևեթ կերակրէր և սարարակ խոյոց ճարտով .
 Իսկ լըւեալ ի սղայական խաղուցն յորժամ ի քունեթոյր՝
 Ի մահիճըս նընջէր և ի ծոցի իւրոյ ստընտուին
 Ի կակուղ անկողինս , ի փափկութեանց ըզմայլեալ սիրտ :
 Իսկ արգ շատ ինչ՝ ի սիրուն հօրէն զըրկեալ՝ չարչարեսցի
 Ոստանիշխանս , յոր անուն արովագացիք զինքն յորջորջին .
 Զի գու միայն պահէիր զբարձրը պարիսպ նոցին և զգրունս :
 Իսկ այժմիկ՝ առ մահկաձև նաւուքն հեռի զքեզ ի ծնողաց՝
 Կերիցեն զեռունք որդունք ըզմերկգ՝ յեա շանց քե յագելոյ .
 Փոխանակ զի առ տընին կան մըթերեալ քեզ պատմուճանք
 Նըրբանիւթք և շնորհաշուք , տարազագործ կանանց ան .
 [կուած :

Այլ ընկեցեալ ի հուր ծախիչ այրեցից արգ զայն ամենայն ,
 Զի քեզ չեն ինչ պիտոյ . զոր ոչ ևս այլ ագանիցիս ,
 Իայց ի փառս առ արովագեանս և արովուհիս եղիցին քեզ :
 Զայց ասաց ողբերէն , կանայքն ընգ իւր ջայլէին կոծ :

ՀՈՄԵՐՈՍ . Իւլիական :

ՈՂԲ ԷԼԵԿՏՐՈՍ Ի ՎԵՐԱՑ ԵՂՐՈՐԵ

Ո՛վ իմոյ գեր սիրելւոյս ի մարգկանէ յիշատակ ,
 Որեստեայ հոգւոյն նըշխար , զիտորգ օտար ի յուսոյս ,
 Նա և ոչ որով յղեցիս , առեալ ըզքեզ ընկալայ :
 Որ զի արգ զեղեալք ոչինչ՝ բարձեալ կըրեմ ի ձեռին
 Այլ ես , ո՛վ որգեակ , պայծառ յըզեցի զքեզ ի տանէս :
 Երանի թէ իմ կանխեալ էր պակասեալ ի կենաց ,
 Մինչ չև զքեզ տակաւին յերկիր օտար առաքեալ ,

Գողացեալ սովին ձեռօքս ուի մահուանէ թափեալ զքեզ.
 Յայնժամ թող մահացեալ անկեալ գնէիր յօրըն յայն՝
 Մասին հայրենի գերեզմանին լեալ հազորդ:
 Իսկ այժմիկ՝ տարաբնակ յօտար երկիր տարագիր
 կորեար չարաչար՝ ի քում քեռէդ ի բացեայ.
 Ոչ ի ձեռքս սիրոյ՝ թըռուառականս ես՝ ըզքեզ
 Լըւալեօք պաճուածնցի, և ոչ՝ որպէս էր ի դէպ՝
 Բարձի յամենածախ հրատէն ըզքեռնըն ողորմ:
 Այլ յօտար ձեռքս, եզո՛ւկ, ի գերեզման յուզարկեալ՝
 Ժամանես խոռն մի կաւոց ի գուզնաքեայ սափորի:
 Ո՛հ հիբիս՝ վասն առաջնոյ քոյ վայրապար սընընդեան,
 Զոր ըստէպ՝ քաղցըր երկօք զքև գորովեալ ջամբէի,
 Զի ոչ մօրդ ինչ առաւ. եւ քան ինձ սիրուռն էիր գու:
 Եւ ոչ ընտանիքն, այլ ես էի քո սնուցող,
 Եւ միշտ հանապազօր՝ քոյր քոյր՝ առ իս կարգացեր.
 Իսկ այժմիկ՝ այս ամենայն յաւուր միում չըքացաւ
 Ընդ քեզ վախճանեալ, քանզի որպէս մըրըրիկ
 Զամենայն խըլեալ թըռեար. հայրըն դընաց, ես մեռայ,
 Դու մահուամբ եղեր չիք, և թըշնամիք ծիծաղին.
 Մայրն ոչ մայր՝ շամբեալ մոլի առ մըրցական հեշտութեան,
 Զորմէ դու զըրոյցս յաճախ առաքէիր ի ծածոուկ՝
 Թէ ինքնին գու գըլխովին երևեսցիս վրէժխընդիր:
 Այլ և զայս ի մէնջ եհան չարադև բազդ քո և իմ,
 Որ ըզքեզ այսպէս յիս յըզեաց մոխիր և ստուեր անօգուտ,
 Փոխանակ վայելչագեղ և սիրամանունդ երեսաց:
 Ո՛հ ինձ ո՛հ, մարմին ողորմելի, վայ աւաղ,
 Ո՛նդ դըժնեայ ճանապարհս, եզո՛ւկ զինև, առաքեալ
 Անձկալիդ, ո՛վ գըւ-իս եզբօր, ի՞րր ըսպաներ զիս սպաներ:
 Եւ արդ գու յայսըմհեաէ յայդ ի քո յարկդ ընկալ զիս,
 Զոչինչս առ ոչինչդ, որպէս զի՛նդ քեզ ի ստորինս
 Բնակեցից այսուհետև. զի մինչ էիրդ և ի վեր,
 Էի՛նդ քեզ բագորդ ի նոյնս, և արդ այժմիկ ցանկանամ՝
 Մի՛ զըրկիւ ի քումմէ գերեզմանէդ ի մահուս.
 Քանզի ոչ տեսանեմ ըզվախճանեալսըն տըրամեալս:

ՍՈՓՈՎԼԷՍՍ • ԷՖԷՐԵՍ:

Ն Ա Ր Գ Է Ս

Զայս ևս ահա զարթնումս նրազ, խօլականացն ի յանըր.
[Զոց

Թօթափեալ զանձն իմ ընդոստ, ուր քուն ըզմիտս առեալ
[աանէր:

Իբրև՛ զի մուժ գիշերին զտիեզերօք պատի մըռայլ:

Լոկ նըշոյլ բանին միայն հանդէպ հոգւոյս փայլատակէ:

Ո՛հ ի լալ սոսկ արտասոււաց աչք իմ բանին ի խաւարի:

Արդ տարփաւորն անհամբեր և լի սըրտին յուսապատար

Յերջանիկն ընթանայ վայր, ուր սիրուհին սպասէ նըմին:

Ոչ ինչ ընդհատ ուխտապահ ի կիտազրեալըն ճըշգրիտ ժամ

Հասեալ կամ ի տեղին՝ ուր ինձ ցաւոց մընայ կրօկիծ:

Աւասիկ որ առ յինէն երգուեալ նըմին ժամս այս պատեհ,

Ահա ժամն յոր ես և ցաւքս ի միասին տըքնեալ անքուն

Ըզգիշերս ամենայն կամք ընդ իրեարքս խօսակից:

Ո՛վ լուսին, ցաւած սըրտից աստուածեղէնք հաշտ էօւ.

Որ ի լուին այս ժամու իշխես խաղաղ և միայնիկ [Թիւն,

Ի կաճառս անդ աստեղաց, էջ ի գահէդ արծաթափայլ,

Եւ թողեալ զօգս եկ շընչեա յիս տաղս երգոց՝ երկնից ի

[Ճահ,

Դու արփուոյն քոյր կաթոգին, որ ի նորտ մեկնեն ի բաց,

Պերճապայծառ ըզքընտից վարես զընթացսըն գիշերի:

Դու լքես ըզմըմնեն յարմարաւոր շարժմանց նօցին,

Որ երբէք ի հեռաբնակ մահացուաց ունկն ոչ ժամանեն.

Հաճեալիք քաղցր երազով զերկնից նըրազս յիմ սիրտ մըն.

[Ճէլ:

Եւ իցիւ ձայնք հընչմանց քաղցրաբարբառ նոցին երգոց

Ի Մուսային իմ կեզերջս ողբանըրազըս խառնեացին:

Ա՛խ, աւագիկ արօփէ սիրտս ի տըրտմագին քոյ ազգմա.

Թափ անցանելով ի խոր սըրտիս ցաւազնելոյ. [Նէգ,

Սիրելի քեզ այս ձեռնարկս իմ լինիցի և ոչ ումօգէտ.

Իբր ըզքեզ գողար և պարկեշտըն գեղանւոյ կարօտով լամ...

Տըխուր և տմոյն թըւիմ գիտել ըզքեզ, Նարգէս իմ սիրելի.
Բարբառգ յոգիս իմ ազգէ, և իբր ասես. « Մուծ զիս կա-

[լաւ.

Մանկուծիւն և յոյսք քաղցրիկ ի մուսյլ յաւէժ թաթաւ
[ւեցան » :

Ո՛հ, այդչափ չէր մըթազգած խաւար շիրմին Փիլանգրոսի,
Եւ ոչ հանգոյն մահառիթ մէգ աննըշոյլ պատեաց զինն :

Ո՛վ հանգոյց գառն աղիտից որ մի զմիոյ գան հասանեն,
Եւ ճեպեալ խուռնընթաց ըզթըշուառի հեռովքըն գան :

Դեռ Փիլանգրեայ չէր փակ տապան, եւ և ըզհետ չոգաւ
[Նարգէս.

Մինչ ողբամն ի հոզ մտերմիս, յաճիւն գըստերս հասանէ
[լաւ :

Ըզտխուր պահանջ Փիլանգրեայ գուտար իմ յինէն յափըշ-
[տակեալ

Խընգրէ զարտասուս՝ զոր ընդ որդւոյս իմ հեղուի :
Մահ ետ ընդ ետ հարուածով ըզհեծուծիւնս իմ պըզ-
[տորեալ

Վըրդովէ զաղէտ վըշախ և ընդ իրեարըս խառնակէ :
Յո՛ ըզցաւս իմ հանգուցից, զո՛ նախ լացից չգիտեմ և ես .

Ո՛ բարեկամ, ո՛վ գըսարիկ, ի ձեզ ճեղքեալ սիրտս հասանի :
Ա՛յդպէս ուրեմն էր կընքեալ, ո՛վ սիրելիդ իմ Փիլանգրոս,

Ձի կըրկին կորըստեանս քոյովդ ըզդառն ինձ տացես գոյժ :
Ձեռն որ ըզքեզըն եհար՝ միւս այլ հարուած ինձ ըսպառ-

[նայր .

Իբր ըզհաւըն գուժարկու որ շուրջ ի թիւ ածէ զվըրդով,
Օրհաս մահուն յանգիման ըզքեզ աչացս իմ պատառեալ

Ազգ առնէր թէ միւս այլ զոհ որս և տպուռ իւր լինիցի .
ԸզՆարգէս ի գարուն ախն իջոյց վիրագն ի գերեզման,

Մինչ նա դեռ այն ինչ ըզկենաց և զվայելից առնոյր ճաշակ :
Ա՛խ, յո՛ ուրեք աստ յերկրի զվայելս իցէ մեզ գըտանել :

Պըտուղ է նա արգելեալ մահկանացուացըն ճաշակաց :
Ո՛վ, իբր էր նա գեղեցիկ, քանի՛ շընորհ քաղցըր բարուց,

Քանի՛ն անմեղուծիւն գեղազարգէր զանձինըն շուք .
Քանի՛ կայտառ և զըւարթ, և պակասէր բաստին ինչ ոչ .

Բախտ եւ լաւուծիւն առատ զպարգևսըն հեղուին,

Եւ առ վայելըս նոցուն՝ կենաց ևեթ կարօտանայր : [հուն
Այսքանի ճրրիւքս, աւանդ, վաղ ևս ընդ տին անկեալ մա-
ի ծագաց երանութեանն իբր հոսեցաւ յանկարծ թաւալ :
Սայպէս անկանի ի մահացանըն գընտանիէ

ի մայրիս անտառաց գողտըր երգիչն հեշտախօսիկ,
ի ժամու մինչ զօգ բերկրէր ի գայլայլիկսն սիրային,

Եւ նըւաղի շընչասպառ ի կէս երգացըն քաղցուենի... [չէր-
լնդ պուրակն ոչ լըսի ձայն, որ ի գեղդեղ նուագացն հըն-
Եւ մըթին արհաւրաց արխուր և խոր տիրէ լուութիւն :

Ո՛հ, գուտար իմ, յո՞ր գառըն միայնութիւն զհայրըդ թողեր-
Ձիցէ ինձ ևս այլ լըսել ըզըրտառուչ ձայնդ հեշտալուր :
Դեռ բարբառ իւր յեանն հընչէ յականջս իմ տակաւին .

ի խորոց ցաւած սըրտիս ըզբարախմանն առնում գեռ զազգ .
Եւ ի ներքս յիս խընդութիւն բընակէ խառն ընդ արբամու-

[Թեան...

Այլ սակայն արբամութիւն ուժգին տիրեալ յիս բըռնա-
[նայ...

Դուտար իմ, ո՛հ գուտար... իցէ թէ զքեզ յաւէտ մոռա-
[նայցեմ :

Մանկութիւն, գեղ երեսաց, ձայն յանկուցիչ, բնութիւն
[զըւարթ,

լաւութիւն, սիրտ տարփելի... Ձինչ այլ երկնից մար-
[գումս էր տալ :

Ձայսոսիկ ամենայն ետ նա գըստերո՞ որ գանձն էր ինձ .

Եւ էի ես... աւանդ, հայր, քան ըզբընաւսըն երջանիկ...

Անուն սին և սընտտի, որ զխորխորատ ծածկէր վըշտիս :

Մահ նախանձու չարակենեալ ընդ իմ վայելս երանաւէտ,

Յարձակէլ յիմ վարդ սիրուն նըշանացի ձայն տայր որգան .

Եւ ընդ հուպ մածեաւ նա յայն, մինչ նոր ծագկէր գեռա-
[փըթիթ :

Ձև թաւամեալ՝ անկաւ նա, մէն վայրկենի լինելով որս :
Իբրև՝ զի ամենայն վայելք կենաց են խարուսիկ .

Ընդ պահ մի հանգըստեան ածեն թափեն աղէտ վըշտաց,

Ձորոյ զմըրուրըն գառնութեան քամել յերկար հասանիցէ :

Ա՛խ, քանի ցաւ կորըստեան քան զհըրձուանաց կիրս է
[սաստիկ :

Անուն հօր չեա ինձ բերկրանս քան զայս ազէսս իմ թաղ-
[Ծագին:

Յոր պայման զգուստր իմ տեսի. որպէս ըզթուփ գեաւարդ-
[Բոջ

Տապալեալ ապաստ զերկրաւ ի գարնանի գու մըրըրկաց,
Մինչ բաժակքըն թերարաց ծիլ ծագկիցին փըթթինազարդ:
Տարածեալ ի գիրկ մահուն տեսի զՆարզէս գեա քաղցրա-
[գեղ:

Ի թափել յետին շնչոյն՝ լալով հեծմամբ հագագս հատաւ.
Քան յորժամ կորուսի՝ չէր իմ երբեք սիրեալ ըզնա:

Ո՛վ յանաչաւ իմասանոց ոչ հեծութեանցս իմ ներիցէ.
Ատեսցի ամբարտաւանն որ յարտասուանն կորանայ.

Չէ ամօթ երբեք մարդոյ եթէ արտօսըր թափիցէ.
Տըրամազգեաց հէք սըրտի լալ բաննն ներէ, այլ ոչ ըստ չափ.

Որ կորոյս գուստր այգպիսի, ո՛հ, ցաւեսցի նըմա վանն իմ:
Երբ տեսի զի կըկոցեալ քաղցրանըջլ արտեանամբք

Եւ նուազկոտ հայեցիւք և մութ ահամբք շուրջ ակնարկէր,
Մինչ ի գալուկ մահատիպ զարդք երեսացըն խամբէին,

Եւ ի սիրտ տեսանելեացըն բօթ գուժի հընչէր ձախող.
(Ո՛հ, յայնժամ ո՛վ ի տեսոյ նորա գիմացըն շաանայր),

Ձեզ թողում գուշակել, հարք որգեսերք, քանի՛ շտապաւ
Ճեպ ի ճեպ առեալ ըզնա ի բնիկ երկրէն իւր հայրենի,

Ուր հիւսիս խըթնաանապ ըզցուրա շնչէր օրհասաբեր,
Եւ բազկք ծընելասէր յարեգաւէս տարայ տեղիս.

Յուսալով թէ մեղմախառն արգիւոյ շողիւք կողգուրեսցի.
Սակայն ինքն անկարեկիր և անըզգայ ըստացեալ սիրտ,

Իբր ի ծաղիկ թառամեալ այնպէս ի գուստր իմ նայեցաւ,
Մինչ նա զձակատ մահատիպ կըքեալ ի թևս իմ պակասէր.

Ջերգ շուշան բուրաստանաց հակեալ խոնտրհ և թառամի:
Ո՛վ շուշանք պերճապայծառ, և հոյլ ի հոյլ ծաղկանցդ

[Երամ,

Որ ի նարոտ ծաղկերանդ զգալար գաշտաց մեր յօրինէք,
Եւ յագեալ պարարիք յերկնածորանն վըասկաց, [րէն,

Որ յուճոյ ասանդն հեշա շողից պըճնեալ յերտնգըս նըկա-
Յայգուն ցօզ և յերկունն նորազըւարձ ծիլ ծիլ փըթթիք,

Ձեզ սիրելի էր յաւէս քաղել գըստերս ի ձեռանէ.

Եւ ի մատուներս նորին՝ գեղապաշտոյճ եւս յարգարեալ,
 Ի փափուկ քիման ածէիք հոս քաղցր և սեռն իբրև զհոգին:
 Յընդելի վայելչութիւնք և հուժիւնք տարփառանչիկ,
 Որ ի զարգ բնակութեան մարդկան ծընեալ՝ կայք կենա.
 Ո՛հ, քանի՛ երջանիկ քան ըզնորայն ձերդ է պայման. [կիցք.
 Եւ թէպէտ ի սուղ վայրկեան իբրև ըզնա գուք անցականք,
 Սակայն ոչ անըսպառ ցաւոցն իցէք հաղորդակից:

Այս ահա մեզ կընքեցաւ ճակատագիր դառնաաբխուր.
 Առ վայելս հաճոյից՝ կըրից կարեաց հարկ զանձն է տալ.
 Այլ ստեղծեալ մեր թափք կըրից զանցաւորօքն եկեալ յարին,
 Որ վաղ կամ անագան եղեալ անհետ՝ յաջորդեն ցաւք.
 Սակայն զի՛ գառն իցեն ցաւք յեա հեշտութեանցըն վայելիցս
 Ո՛չ գիտես, մարդ ինքնահաճ, որ ահն ունիս աստ հանգըս.
 [տեան,

Ձի յամուլ խոպան վայրիք նըմին բնու չիք բուսանել:
 Քեզ իմըս Լաւրենաիէ, ում՝ անչք յաւէտ կարգան հրա.
 [ւէր,

Քեզ աղէտքս ի խրատ լիցին. չարեզք մտերմիդ միտս ըստա.
 [ցիր.

Մի յենուցուս ընդ երկիր, ոյր քան զեղէգն են փուտ բա.
 [րիք.

Եւ հեշտութիւն՝ քրտամնափուլ զինավառեալ և ծայրա.
 [հերձ

Ճեղքեալ ըզսիրտս ի խուսելն՝ յարեան թաթաւ լքանէ
 [անյոյս:

Խորհուրդք գըժնեայ, թողէք զիս. զի թէ բնուին հա.
 [տեալ է յոյս.

Գէթ մի կըտտէք զիս ցաւօք... զուր վայրապար ճիգըն
 [Թափեմ.

Դուստր իմ ի սիրտս յարեալ կայ, չկարեմ՝ քեցել զայն ի
 [սըրտէս...

Թէ զխորհուրդս ի մըտաց վտարել ի բաց ոք ճըգնիցի,
 Սաստկադոյնս յարձակեալ ըզցաւս յորդեն և ծայր առնեն,
 Եւ նորանոր գառնութեամբ լըքուցանեն զողիս խոպառ:
 Ա՛խ գուստր իմ, թըռեար յինէն ի ծաղկափթիթ ախ հա.
 [սակիգ.

Հարոնսութեան հասեալ ի չափ, մինչ ժըմտէր բախտն ընդ
[տարփեւլոյդ,

Եւ անձկաւ վայելից այն ինչ տեսեր գու զբաստ կենաց,
Մինչ երջանիկ ի սիրուհիան ըզքեզ կարգայր մարդ զաչաւ
[ցու...

Ահա զաճիւն ոսկերացդ յօտար երկիր լըքեալ թողի:
Կարծրասիրտ բընակքն ինքնին կալ անարտօսր ոչ ժուժեւ
Եւ զի ոչ ըստ նոցա զասառւածութիւննն պաշտէիր, [ցին.
Վասն որոյ ինքեանք իսկ ընդ լալ իւրեանց զարմանային:

Զինչ յայնժամ առնել էր ինձ, առ ո՞վ ժըտել ազերսալի.
Գողացայ զանխուճ շերիմ, առ գուժ սիրոյս ամպարըտեալ.
Այլ սակայն ապախտ գըտայ առ նըշխարացըն մեծարանս:
Անտեսեալ ըզպարտ գըլթոյս, ի վերջին ցաւս իսկ վեհերոտ,
Ըշտասպաւ ձեպ ի ձեպոյ գերեզմանի ետու ըզնս:

Զհասարակաւ գիշերոյ, ընդ աննըշյլ մութ խաւարի,
Գողգոշուռն յոտին ի քայլ և զհաղագիս հատկըլեալ շունչ.
Իբրև այն թէ սպանող նըմին իցեմ քան մըտերիմ,
Զյեաթին ողջոյն պաշտեալ լուռ, իբր յանցաւոր ոք ետու
[խոյս...

Հիմ, ծընողդ անգուժ և վատ, գէթ զանուան անդ ոչ գրող-
[մեցեր.

Արդ մոռացեալ, անծանօթ, խուժողուժ ռախից լիցի կոխանս:
Իբր անարգ և վատ ահիւ երկեայ յիւրոցըն թըշնամեաց,
Մինչ վեհագոյն օրինաց բնութեան կսյի կամակատար.

Ո՞վ տարփելիդ իմ սուրու, ներեա սասախից անգուժ հարկին:
Շատ արգեօք քան զարժանն ըզսիրտս ի ցաւ լըքեալ իւ
Այլ ո՞վ իսկ անկարեկիր և անընդոստ կարիցէ կալ, [ցեմ:
Մինչ հեծէ նոք ցանկալի սըրտին հատորս, ընդ սիրելիս:
Ո՞վ ամօթ մարդկան ազգի... հեզ Փիլանգրեայ իսկ գոյր
[ոսոխ.

Եւ ըզգայր սիրա իմ ըզցաւս զոր ի ժանտից կըրեալ հեծէր.
Այլ արդ, աւաղ, երկոքին ոչ ինչ ըզգամք ամենևին: [գեռ.
Ա՛խ Նարգէս, իմըս Նարգէս, գու իմ սըրտիս խոց գեռաւ.
Առ կըսկիծ քու՞մ կարօտոյդ ըզընաւ այլ ցաւս իմ մոռացայ.
Քոյդ անձուկ շատ իսկ հոգոց և հեծութեանց ինձ երաց
[գուրս.

Ընդ մէն ազէտ քո վըշտիդ սիրտ իմ հերձաւ հարեալ ի
 [սլօք-
 Իբրև այն գողցես համբուն բազան աննըւէր ընտրեաց զը-
 [քեզ,
 Ձի զմահդ ինձ դառնացուցեալ, մըթացուսցէ զշիրմիդ մը-
 [ուայլ:
 Ա՛խ գուսար իմ, թէ տակաւին յունկնըդ բարբառ հօրդ հա-
 [սանէ,

Յուշ անջիր ընդ նըմին զոր ի մահուդ արկածս անցից,
 Որ քան ըզրնաւ մեռելոց մահ ըզքոյդ զատեալ որոշեցին.
 Միշտ հանդէպ աչազըս կան, և զերդ վիշտայ օձ մըշտակիր
 Բիւր ցաւօք իւրաքանչիւր զիս տազնապեն միտնգամայն:
 Ո՛ր զօրութիւն աստանօր ոչ պարտիցի յազթահարեալ.
 Ես զիտրդ այսքանոյ դառն ցաւոցըս ժուժայցեմ:
 Գերարտօսր յորդահոսան ընդ թառամեալ այտս իջանէ.
 Եւ մէն որո՞՞ կամ խորհուրդ՝ կաթիլս յորդէ կայլեկահոս.
 Սակայն սրչափ և լայցեմ՝ ոչ ազբերակն ըսպառեսցի.
 Ձի ոչ լալեօք հանդչիմ ընաւ, նա և՛ըս ցաւք յիս զայրանան:
 Ա՛հ, ոչ իմ, ոչ և մտերմաց բաւէ արտօսր ի մըխիթար:
 Ըզցաւս իմ, քաղցըր Նարպէս, ընդ ախեզերս հրոչակեցից,
 Եւ յաչաց մահկանացուաց հայթայթիցից քեզ արտասոււս:
 Ուր ուրեք լուր համբաւոյն ըզքս անունդ տուեալ տարցի,
 Եւ առզքս իմ այսուքիկ զողորմ օրհասըդ պատմեցեն,
 Հառաչանս հեծութեան հանցէ քեզ սիրտ գորովագութ:
 Պատանի ծաղկահասակ յեռանդն հեշտից և մանկութեան,
 Մոռասցի գամ մի գրերկրանս՝ յազէտ քոյին մորմոքելով,
 Եւ ըզքեն խոկալով ընդ մէջ շիրմաց լուռ սըրամագին:

ԵՈՒՆԿ

ԳԵՅՍԵՄԱՆԻ ԿԱՄ ՄԱՀ ՅՈՒԼԻԱՅ

Ի ստեանց ես մօր իմոյ ցաւոց եղէ այր,
Արեան փոխան արաօար ամէ սիրտ իմ՝ յար.
Երարձ յինէն Տէր ըզվայելս խէկ լալեաց,
Եւ քարացան ի սըրտիս ուզիք արաասուաց.
Դառնուածիւն՝ ինձ մեզր և թախիծք եղեն խինդ.
Առ մէն գագաղ սիրտ կարեկից տայ յիս թինդ.
Ոչ արգելում շաւիղք ուրեք զիս բընաւ

Իայց ուր աւերք են և ցաւ:

Ընդ պարզ երկնիւք եթէ կանաչ տեսից մարգա,
Եթէ հովիտս հեշտին առ ծով լեալ գըրկարկ,
Անցեալ ընդ այնս և ասեմ գառըն ծաղու.
Քաջ, երջանիկ վայր, այլ աւանդ, չես իմ գու.
Ուր կոծ լըտի՝ անդ լոկ ողւոյս արձագանդք,
Եւ հայրենիք հոգւոյս անդ՝ ուր և կալանք,
Եւ յարաասուաց և ի մոխրոց զանգեալ հող՝

Այն անկողին ինձ գիպող:

Հարցանիցէք. Վասն էր: — Ձուներմ առ այգ բան.

Ի զուր զանգունդ ցաւոցս հարից ի տառան,
Փոխան բանի՝ շըրթունք բերցեն միայն վայս.
Այլ թէ նթեռնուլ կամիք՝ հերձէք ըզսիրտս այս:
Մահ՝ յամենայն մըխեաց երակս իմ գաշոյն,
Եւ արոքք սըրտիս օրհասական է բախիւն,
Մեռեւոտեօք իմն է լըցեալ քաւարան,

Հոգիս համբուն գամբարան:

Արդ երբ ի վայրս անդր ես գնացի՝ ուր ծնաւ Տէր,
Ոչ ի խընդիր վայրացն ելի սըրբանուէր
Ուր ընդ ոտիւք արմաւենիս հէգքն արկին,
Ուր զանձն յայանէր Բանըն ձայնիւ հրամանին,
Ուր Ովաննայն խաղայր ի գնացն յաղթական,
Ուր ձեռքն որ սուրբ կանանց յարաօարը թացան՝
Ըզձակատուն սըրբելով շանթ և քըրտունս

Ձանմեղ գըրգուէր ըզմանկունս:

Հեծեծանաց անդր ի տեղին տար զիս, հայր,
 Ի մահագոյժ պարտէզն՝ ուր մեր Փըրկիբն այր
 Ի մարգկանէ և ի Հօրէն լըքեալ իւր՝
 Ջօրհասական քըրտներ զարիւն և ըզուր-
 Թող զիս և երթ ի բաց. առից և ես զհամ
 Յաւոց՝ զոր նայն կըրեաց յանհունն այն ի ժամ.
 Այր յուսարեկ՝ օրհաս պաշտօն է իմ՝ նոր,
 Եւ իմ սեղան աստանօր:

Առ փոշեղից ոտամբ լերին Ձիթենեաց
 Եւ Սիոնի ամրոյն յաւերս հովանեաց
 Վայր է՝ ուստի արփւոյն խուսէ բնաւ ճաճանջ,
 Եւ ցամաքեալ կեդրոն ծորի՝ մէջ ակփանց.
 Անդ Յովսափատ եհաա ի բլուրսն տապան,
 Անդ աւերակք ածին բուսոցն փոխան,
 Եւ հինաւուրց ծառոց արմատք ծայրատուր
 Ըզվէմն առնեն հերձակաուր:

Ընդ մէջ ժայռից երկուց բանի անդ քարայր,
 Ուր ըզմահուն ճաշակ էառ ցաւոցն այր,
 Եւ զարթուցեալ երիցս զ՝ ի քուն բարեկամս՝
 « Հըսկեցէք, ասէր, ահեղ է ինձ ժամս »:
 Շուրթն ի դողդոջ թըւի քամիւ տակուսին
 Յարիւնաներկն յասակի գշիթ բաժակին,
 Եւ քիրտնն գէջ պատարագին ահաւոր՝
 Կայ դեռ ի ժայռս քըրտնաթոր:

Ծածկեալ ձեռօք զճակատ նըստայ ի վիմին
 Խորհել զոր անդ խորհէր ճակատ տէրունին.
 Եւ յիշեցի ի սկըզբանէն ցըվախճան
 Ջարտօսը՝ որ զիմ պեղեաց կենացըս ծորան.
 Աւի՛ սա անձին զցաւոց բեռինըս ծանոռնս
 Թըւելով մի առ մի ըզկեանս և զմահունս.
 Ապա յանկարծ թուեցայ լինել յերազի,
 Ո՛ Տէր, երազ որպիսի:

Ընդ մայրական հըսկող թեօք, ոչ հեռի
 Էր իմ թողեալ զգըստրիկ, զիմ հոգ զիմ բարի.
 Յամէն գարուն ճակատն իւր դեռ զարգանայր,
 Այլ յերկնակող ի տիս հոգին հասեալ կայր.

Անջինջ յաչաց՝ նորայն գրողմեալ կայր պատկեր
Եւ հեաք նորին ուր և ուրեք ոք հայեր .

Եւ ոչ մի հայր կարաց ընդ իս աննախանձ

Ըզնա տեսեալ՝ առնել զանց :

Յերկար մրըրկաց իմոց էր լոկ նըշխարիկ ,
Բազում ծաղկանց միակ պըտուղ , սիրոյ կնիք .
Արտօսր ի չուս և ի գարձիս էր համբոյր ,
Նա վտարանդի տընկանս յաւերժ խրախճան գոյր .

Ի պատուհանս իմ ճառագայթ արևու ,

Եւ ի չըրթանցս ըմպող քաղցրիկ ձագ հաւու .

Ի գիշերի առ մահճաւս սիւգ անուշակ ,

Ուի զարթնուլս՝ խինգ անապակ :

Եւ աւելի ևս , ո՛հ , նա մօրս էր պատկեր .

Յաչըս սորին նորս նայեացն երևէր .

Վերածնանէր նովաւ անցեալս յապագայն ,

Երջանկուժիւնս այլակերպեալ էր միայն :

Ըզտասն ամաց բարւոյ տայր ձայնն արձագանգ ,

Ի քայլփոխելն հըրճուէին տանըս գերանք .

Հայեցուածովն յաչս իմ բերէր արտասուս ,

Եւ ժըմտելով սըրտիս լոյս :

Ըստ մէն խորհուրդս իմ փոխէր զիւրըն դիմակ .

Յուլային յաչս իմ աչքն իւր գեղ կապուտակ .

Տեսանէի զհոգս իմ լուծեալս ի նորայն

Որպէս ի ջուր վըճիտ հարեալ տիպ ունայն .

Քաղցր էր համայն օր ի սըրտէ անտի գայր ,

Եւ չամփոփէր երբեք լըրջիկ շըրթանց ծայր՝

Բայց թէ զափկիցն եգեալ ի մէջ մօր ձեռաց

Մընրէր յաղօթս առ Աստուած :

Թըւէր յանուրջս իմ ըզնա՝ ծեալ աստանօր

Եւ ի վերայ ծընկացս ունել գեղաշնորհ ,

Բազուկս արկեալ զուլամբ զոտիւք ըզնորին

Եւ ի ճակատըն դիմ ճակատ կաթոգին .

Նա թաւալեալ զճակատն ի հօրըս բազուկ

Յընցէր զգեղձան հոպոպան հարեալ ի սեռուկ ,

Փայլէին շարք ճերմակք ի խինգըս շըրթանց

Չորըս շարժէր խինգ անանց :

Նա սըրտակաթ առ ի քաղել ըզհոգիս
 Ըզհայեցուածսն անգուլ ձրգէր նա ի յիս .
 Իսկ յոր յիմոցս աչաց ի նա ճառագայթ
 Քանի՛ հուր վառ՝ Աստուած միայն դիտէ զայդ .
 Խանդակաթ շուրթն իմ ուր հանգչել ոչ գիտէր
 Մինչ տղայապէս առ խաղ նա յինքըն ձրգէր ,
 Յիւրոց շըրթանց ուայտից ածէր զայն ի վայր
 Եւ առ համըրըս զլանայր :

Արեւալ նորին զմայլմամբ՝ ընդ միաս ասէի .
 Ո՛վ Տէր, ցորչափ զինև աչք այն փայլեսցի ,
 Քեզ գոհութիւն և երգըս տաց հանապազ .
 Ի ծաղկատիպ կեանսն և ինձ կեալ՝ շատ է այս .
 Ձքաղցրիկ բաժին ձըրիցդ որ ինձ՝ նըմա առւր .
 Թող խամրեսցին յուսոյ աւուրքս առաթուր .
 Կազմեա՛ զնորին սըրսկապան , ցոյց և այժմէն

Չամուսնոյն գիրկս՝ որ փակք են :

Այսպէս ի խինդ իմ ըզմայեալ ուի մազթանս՝
 Չազգէր սըրտիս և չերևէր իսկ ականս՝
 Թէ ի դըրկիս տակաւ ծանրէր ճակասն այն ,
 Ուռաք իրրու վեմ՝ պաղէր ձեռացս ի վերայն :
 Ո՛հ , Յուլիս , ուսաի՞ դալուկն այն ի քեզ ,
 Ուսաի՞ իսնաւն ի ճակատուդ ասսպարէզ .
 Խօսեաց , ժըմուեաց , ո՛վ իմ հրեշտակ , մի՛ խաղար .
 Բաց ինձ զաչկուհքըդ պայծառ :

Ի վարդ շըրթունս սըփուէր մահու կապուտակ
 Ուայն ինչ ծընեալ նուազէր ժըմիտն անդ համակ .
 Շունչ հագազին կարձեալ նեղէր մերձ ընդ մերձ
 Հանգոյն թևոց հուպ ի կասել օդահերձ .
 Մնայի սլացիցն եդեալ զիմ ունկն առ օըրտին .
 Եւ յորժամ հուսկ շունչ վերացոյց ըզհոգին՝
 Սիրս իմ մեռաւ յիս , զինչ մեռեալ և ցուրա դի
 Չոր կրիցէ կին յարգանդի :

Ի գիրկ կարկամ բարձեալ զազնիւն այն քան զկեանս՝
 Իբր առ ի մահ հարեալ մարդոյ դանդաջանս
 Կանգնեալ յոտին , և առ սեղանըն չոգայ ,
 Պարզեալ զմանուկն ի գաղձ վիժին ի վերայ .

Մածեայ շըրթամբքս ի կափուցեալսն այն աշկունս .

Եւ ջերմու-թիւն գեռ ի կըճեայս կայր ի քունս ,

Իբր ի բունի՝ յորմէ հաւիկն առօրեայ

Այն ինչ թըռեաւ ի բացեայ :

Եւ ըզգացի յանվախճան յայնրմ պահու

Անցանել յիս ծովքս վըշտաց , գարս ահու .

Եւ ցաւք լըցին ըզտեղի՝ ուր սիրտն իմ էր ,

Եւ ասացի՝ Դա միայն գոյր ինձ , ո՛վ Տէր .

Համայն իմ սէր ի մին յայն էր խորասոյզ .

Ունէր նա զվայրս ոյց եղև մահ կենախոյզ .

Միակ պըտուղն յեա մըըրկածին էր օգոց

Անքակ մնացեալ ի յոստոց :

Ի խորտակեալ շար քայռիս մէն նա մանեակ ,

Յազօս ազօտ երկնիս մէն կէտ կապուտակ .

Եւ զի քաղցրիկ լուիցի կոչումն իւր ի տան

Ի մըկըրտեղն՝ եգաք անուն ազուական :

Նա իմ աշխարհ , նա իմ շարժումն և ամբոխ

Եւ յամենայն իմ օթեվանս՝ ձայն հըրճուող .

Աուուրց ուաչացս իմ նա թախիծ և կամակ ,

Նա ինձ այգ , ցայգ և ցերեակ :

Նա հայեւի՝ յորում սիրէր զինքն իմ սիրտ ,

Ձըքնաղն յաւուրցս ի ճակատ անգր անխըլիբա ,

Անանց նըշոյլ բարեբասաիկըս կենաց ,

Համայն պարգևք քո , Տէր , ի ծրար այնց գիմաց .

Բե՛ռն հեշտ՝ զիմովս առ ի մօրէն կախ զուլամբ ,

Աչք հրատք իմոց աչաց , ոգւոյս շունչ ողջամբ ,

Կենաց իմոց կեանք , ձայն ազդող իմ ձայնի ,

Դէտ իմ երկինք կենդանի :

Արգ առ , յագեաց , արդարու-թիւն անողոք ,

Ջօրհասի զայս և ըզմահու անմահ հոգ .

Ի ժանտ սեղանդ ինքնին հանեմ պատարագ :

Արգ՝ թէ ցըմըուր արբի՝ փըշրեա՛ զիմ բաժակ .

Աւագիկ քեզ դըստրիկն իմ , շունչս և որդի ,

Յսրմէ զերկուս զայս հոպոպիս լոկ հատի՝

Որովք երէկ գեռ զիս կապէր ի գըգուանս ,

Ձայս լոկ պահեմ սեփականս . . .

Հեզձամբը ձուկ աստ զիս զարթոյց հառաչանք .
 Վէ՛մն ընդ ինև քամէր արիւն քրրանազանդ .
 Ընդ ցուրտ ձեռամբս համբուն սառէր իմ ձափատ ,
 Արտեանունքս յահէ պաղեալ լալակատ ,
 Եւ խոյս ետող՝ սուր քան զարծուոյն թիւս առ բոյն .
 Եւ հընչէր տուն իմ ի կական գառնագոյն .
 Ինձ սէր միայն յետին ժամուն առնէր այց ,
 Եւ ըսպասէր զի մեռայց :
 Մեռեալ է արգ համայն ի տանս ամայի .
 Արտասուակաթ զոյգ մ'աչաց լոկ անդ հայի .
 Սպասեմ յանդէտս՝ առ ինչ, երթամ և կամ ո՛ւր .
 Գիրկս առ ոչինչ բանամ, փակեմ և ի զուր :
 Տիւբ և գիշերք ինձ համակեալք միագոյն ,
 Արթը և յոյս՝ յանձն իմ մեռեալք զուգագոյն :
 Այլ ձեռք Տեառն հար ըզքեզ, իմ սիրտ, կայ անդոյր ,
 Ուի ցաւս քո նմա տուր համբոյր :
ԼՅՄԱՐԳԻՆ

ԿՈՒՍԳ ԶՂՋԱԿԱՆ Ի ԺԱՄ ՄԱՀՈՒՆ

Ուղիղ են, Տէր, և ճշմարիտ են գատաստանք քո, Աստուած .
 Այլ գու քու իչ գու ախորժես քան գատաւոր մահացուաց .
 Սակայն և զիռն անօրինիս այնքան շեղեալ բարգ ի բարգ՝
 Զի ինձ ներել արգարութեամբ՝ քու՛մ բարութեանդ ոչ է
[մարթ :

Այո՛, այո՛, լեռնահանգէտ չարիքս իմ ոչ առնեն լծոյլ
 Ամենակալ ձեռինդ այլ ինչ, բայց պատուհաս յիս հեզուլ .
 Երանութեանս իմ ու՛մ գառնան փառք և պատիւ քո ընդգէմ,
 Ողորմութիւնդ իսկ քո սպասէ զի ես իսպառ կորիցեմ :
 Կատարեսցին յիս կամք քոյին , զի փառքդ ըզնոյն պահան .
 Մի՛ յարտասուս իմ ողորմիր ազբերացեալ ուղիւօրէն . [Չեն .
 Որոտա՛, հար զիս շանթ ընկէց, որ ընդգէմ քո առի զէն .
 Երկըրպագեմ ի կորնչեւն իմ ու՛մ ձեռին քո զբիժակ .
 Այլ զոր յիս կէտ հարկանիցեն ասեղ շանթից քոց սըլաքք .
 Որ Յիսուսին քո յարենէ չիցէ ծածկեալ այն համակ :
ՅԵ ՊԱՐՈՅ

ՕՐ ՄԵՌԵԼՈՑ

Ըզտըրտմաւոր լըսէք գանչիւն դարձագարձ,
 Դըռնչելով ըզմեր յարկօք սըգազգեաց.
 Միաաարազ ընդ օգ ղօզտնջ զանգակին
 Վերահընչեալ բարձր ըզգըլխովք տըխրագին,
 Ազգ տայ մարդոյ հրաւիրելու՞ն ի վախճան՝
 Նընջեցելոց մաղթել զանգորր հանգըստեան.
 Յարգել ըզկեանս՝ յոգունց վըշտաց նըշաւակ.
 Մի յոխութեան ծախել ի քէնս հակառակ
 Ըզսին մանուած սահմանափակ վայրկենի
 Զոր բընութիւն չափեաց վաղանց մահացուի:
 Ո՛վ փոսք պեղիալք, քանի՛ յանձուկ ի սահման
 Դընի յորմունքս՝ ազանց նըշխար մահական:
 Յանցուչ աստ վայրքս և ի շիրիմս յայտոսիկ
 Մահ, ժամանակ՝ կան մանգաղօք խաչակնիլք:
 Քանի՛ մեռեալք շեղակօւտեալք յալս երկրի.
 Ոչինչ է թիւ աստ առ ամբոխս ամայի:
 Ո՛րմ ոչ սոսկու՞ն ածեն ոսկերցս այս մահիճք,
 Բեկորք մարդկան լըքեալք հողմոց խաղալիկ:
 Ա՛խ, թէ նկարեալն հանուրց պոյման մեզ աստէն
 Տըխուր տեսլեամբն ահ և սարսուռ ցուրտ ազգէն,
 Քանի՛ ապա տուժից սըրտի դառն ի յուշ
 Սըրտաճըմլիկ ցաւոցն ի մեզ հարցի փուշ:
 Փեսայն ի ծունկս ողբայ անձկաւ նազելւոյն,
 Քեռն աչք քամեն արտօսը յեղբայր իւր սիրուն.
 Մայրն արտասուէ ղորդեակն հընձեալ գարնանի,
 Յոր կայր յեցեալ յոյս զառամեալն հասակի:
 Որոց հեղուքդ՝ այդ արտասուք գեռ քաղցր են,
 Զի հեծութիւնքդ են փառք մարդկան համօրէն.
 Այլ ոյց ողբայքն՝ հատաւ վըճուոյն հուսկ պատգամ.
 Մահ՝ կէտ նոցա, և փոխ՝ կենցաղս է միայն:
 Զինչ ազգքն իցեն. ըստուեր ըզհետ ըստուերի:
 Կեամք առ անբաւ մեք յաւիտեամբքս ընդ պահ մի.

Եւ շիջանին ընդ մեզ արխուր յիշատակք.
 Գոյ, ժամանակ, զերծ ի սաստիցդ և այլ կեանք.
 Ամբարձ զաղօթս, ո՛վ մահացուգ, մինչ յերկին.
 Հայցեա յէէն՝ ոչ զի արկեալն հող շիրմին
 Թեթևասցի վախճանելոցն օսկերաց.
 Զի չեն ինչ պէտք անդ հանգըստեան մահացուաց.
 Եւ որ ելէք ըզկաւեղէն մասն՝ հոգին,
 Խընդրէ յաւէժ իւր կայս ի գերկս Անեղին:

ԼԸՄԻԵՐ

Ի ԶԱՆԳԱԿՆ ՅՕՐ ՄԵՌԵԼՈՅ

Շատ է. մի այլ հընչեր պըղինձդ ողբական,
 Մի զքունն յաւէժ, ո՛հ, ինձ դուժեր զահագին.
 Ահա մըտօքս ես իջանեմ ի դամբան,
 Որ խիստ ժանեօք փուլթայ լափել զիմ մարմին:
 Արկ զիս այժմէն մահ յերկեղուտն ի դագաղ,
 Զոր հարցն իմոց արեամբ ներկեաց դահճաբար.
 Վառին ճրագունք ի նշոյլ աղօտ և նըւաղ,
 Թընդայ վերջին երգոցն ի ձայն սուրբ տաճար:
 Զիւրգ յինէն զիրկ մենացեալ մինչ ի սպառ.
 Իմ ընտանեակք լան զիս ի քօղ սևաթոյր.
 Եւ յարկս ողջոյն հեծէ՛ նգ նոսին անբարբառ:
 Այլ մերկ հոգիս ցընծայ յերկինս ի յանդոյր,
 Եթէ զոփայ դառն ի տանջանս գեհնին.
 Լըռես պըղինձդ. ահա սարսուիմ և պաղիմ:

ՄԱՆԱՐԱ

ԲԱՐԵԱՒ ՄՆԱՅՔ

Դեզին անբեք սարուեն գողան,
 Սաղարթքն ի վայր անկանին.
 Ո՛հ, բնաւ որ քաղցրն են և հեշտին
 Թօշնեալ գրլին ի տապան:
 Մայրեացն ի ծագ ի վիայլ աբխուբ
 Արփուոյն ճաճանչ հարկանի.
 Դա՛ տմարան որ մեռանի
 Արգեօք յետին է համբոյր:
 Ինձ արտասուք յաչս անդ ցոլան
 Առ ի խորոց ի սըրտէ.
 Այս ինձ պատկեր ի յուշ ածէ
 Ըզբաժանմանս մեր վայրկեան:
 Զքեզ ինձ թողուլ առաջի կայր.
 Զի մեռանիս՝ գիտէի.
 Ես բացագնաց ամառն էի,
 Դու մեռանոզն այն անտառ:

ՀԱՅՆԷ

ՆՈՐ ՑԱՐԻ

Տէր, դու ես հայր ժամանակաց և իշխան,
 Ամբ բիւրաւորք առ քեւ մի օր են միայն.
 Դու ի ծայրից քոյոց լերանց մըշտընջեան
 Դիտես զաւուրս որ սըրբացան և որ գան.
 Ի մի նըկատ՝ մինչև եղեալ տեսանես՝
 Թէ զոր պըտուղ գարս հանգերձեալ երկնէ մեզ.
 Աղաչեմ, Տէր, զի՛նչ ինձ ձեռօք կեղակարծ
 Այս ածէ ամ՝ յոյսն և երկիւզ մահացուաց.
 Յիմոց աւուրց տարիս յանկուած յաւելեալ
 Իցէ՛ հիւսիւք սիրոյ շնորհաց յօրինեալ:

Համբուրեցին զայն իբր ըզքո ինչ պարզե,
 Թէ գտեցինց. ի բաց գնասջիր, անց զինև:
 Այլք ի տարեաց անցին ի դիրկս ակազձուն
 Կուտեալ ինձ տենչ, զեղջ, արտասոււս, անձկութիւն,
 Խաբեպատիր սին երևոյթս ուրուսկան,
 Խինդ միօրեայ, հրաժեշտ անդարձ անգարման,
 Եւ դառն բերս՝ որոց կեզեք ազազուն
 Մնան ի սրբոխ իբր ըզփոշի անկայուն:
 Զոր չունէինն՝ ես ի նոցունց խընդրէի,
 Եւ ցանգ զաւանն ի վախճանի կըրկնէի:
 Եւ իմ կալայց ակն ի դարուց աշխարհիս.
 Հիմն ի յաւազ արկի և սերմն ի յալիս:
 Արդ ժամ է, Տէր, զի զգաստացեալ և իմ սիրտ,
 Զակն անքըթիթ հարեալ ի բան քո ճըջգրիտ
 Քեզ ձօնեսցէ զերագընթաց ըզտարիտ՝
 Զորս արատեաց ցարգ բազմաթիւ ի չարիտ,
 Տեսցէ անշուշտ թէ աւուրք քե պատարուն
 Մախեալք ի քնար և սեզանոյդ ի պաշտօն,
 Յուսումն՝ ի սէր քո սըխրալի սքանչելեաց:
 Զըգեալ անքուն մինչ յընդմիջել գիշերաց,
 Զազերս խոնարհ մէն վայրկենից եգեալ կէտ,
 Եւ զհեծութիւն ժամուցն ի քայլս ետ ընդ ետ.
 Այսպէս յինէն թուուցեալք ի բաց ոստիցե՞ն,
 Այսպէս թափուր և լոկ զոգին իմ թողցե՞ն,
 Որպէս այս ամ որ յընթացիցն ի սպառուած
 Թիւ սոսկ յաւել ի շարս աւուրց իմ կենաց:

ԼԱՄԱՐԴԻՆ

ՈՐՐ ՄԱՆԿՈՒՆՔ

Դաշտք կան պաղեալ, անցին աւուրք գեղապանծ .

Վայ աղքատին ոյր չէք առնն ,

Այլ մահ մընայ լքքելում .

Հանգոյն երկրի թէ սիրտք իցեն ջըրաամած :

Ամանորայ հասեալ գիշերն առաջին ,

Ամբոխ մարգկանն եկեալ յաւուրն հանգիսից

Ճեպէր ի գարձ բերկրալից .

Եւ խուռն նըսեհ էս ինչ այցէր հիւղեկին :

Նըստեալ մատրանն առ սեմնվք

Տըղայք երկու, կէս մերկք, գունատք առ վըշտի ,

Գուժ արկանեն անցաւորաց խիստ սըրտի ,

Մընչեալ մըրմուռնջ արբամասուգ :

Ձաղէա նոցին լապտեր առ ոտս հոլանէր ,

Փոխան հեղլով իբր հայցուած :

Եղանտէր լալով կըրտսերն ի յերեր .

Միւսըն ձըգտէր ձեռս ապառուժ մեծատանց :

« Մեր երկոցուռնցս ահա մանկանց այլ չէք մայր .

Մեռաւ յերէկն , առ մեզ նա զիւրն հաց տալով .

Եւ կայ՝ ուր մեր նընջէ հայր :

Տո՛ւք, զի նեղեալ հալիմք ջըրտով և սովով :

Օտարն ասէ . երթայք . իմ գոն ընտանիք .

Ձե՛ր ինչ խընամբ ինձ մընայ :

Տեսաք զի իւր լայր դըսարիկ .

Այլ մեռանիմք միք ահա » :

Եւ ձայնն ողորժ ողբարար

Խուլ բարբառով կոծէր զօգ .

Անմըտագիր ամբոխն ի ճեպ ընթանայր ,

Մինչ ոչ մընաց ոք անցորդ :

Ըզգուռն սուրբ բախէին ,

Ձի մայրն ասէր , եթէ Տէր ոչ մոռանայ .

Սոսկ արձագանգ պատասխանէր տաճարին .

Հուպ մօտալուա հասեալ մահ ,

Դեռ լըյս վառէր լապտերին ,

Եւ տըխրաբար ըզկէս գիշեր ժամն ազգեաց :
 Հեռուսա գոռայր շաշիւն ասնիցըն կառաց .

Այլ ձայնն հատաւ լալագին :

Առաւօտին՝ քահանայն

Յերթալն յաղօթս յեկեզեցին յայգուն լըյս ,
 Տեսեալ զնոսա զվիմաւն անկեալ ձիւնասողջ ,
 Ձայն արկանէր արտասուելով . . . անշարժ կան :
 Ո՛հ , փարելոցն , եզո՛ւկ , զանձամբք գըրկապինգ
 Ձան էր անշուշտ պահել զնըշխար ջերմութեան .

Եւ գալկահար վիմաստաւեալ երկոքեան ,

Դեռ ձեռս ձըգեն պաղեալ խիստ :

Երէցն՝ յեղբայրն հովանացեալ կիսովի ,

Ըզձեռն արկեալ ունէր նորուն ի բերան ,

Իբր յարգելուլ ըզվայրապար ձայնն հարցման ,

Եւ ցուցանել՝ թէ գըթուութիւն չիք յերկրի :

Նընընն յաւէժ , այլ գեռ լապտերն անգ չըսկէ :

Ողբան մարգիկ , քան ի նըպաստ՝ կազմք ի լաց .

Անգր յամենուսա խըռնեալ ի կոծ արտասուլաց ,

Այլ չէր որ գայր յերիկէ :

Լ . ՊԵՆՄՈՆԻԷ

ԴՈՒՅՑՐՆ ԹՇՈՒԱԹ

Խուսեալ ի գառն իմ ի քընոյ

Ում չիք ախորժ երազ ընկեր ,

Ելի կանխեալ ընգ լեառն ի վեր

Յողջոյն նախկին ցողից արփույ :

Ձուգայարոյց ընգ բնութեան՝

Թըռչնեակն ի թօւփ ծաղկազարդիկ գեզգեզէր .

Մայր իւր նըմին բերէր ըզբուծ սիրական . . .

Թացան յարասար իմ աչեր :

Ընգէր չիցեմ ես թըռչնեակն այն հանգոյն ,

Ոյր կախ զոստոց նըշգարենույ ճօճի բոյն :

Զիք իմ յերկրի աստ ի վայր
 Եւ ոչ օրոցք իսկ ի քունն :
 Մանուկ եմ ես , գլտեալ զիմին անդ ի ծայր ,
 Որ կայ հանգէպ եկեղեցւոյն :
 Ի ծնողաց զուրկ և հեռի՝
 Ոչ գիտացի զանոյշ նոցին ըզհամբոյր ,
 Եւ ոչ մանկունք առ երի՝
 Երբեք իւրեանց զիս յանուանէ կարգան քոյր :
 Ես ոչ հաղորդ ցայդախաղուց գոմ բընաւ .
 Սաղարթապատն ընդ յարկաւ՝
 Զիս ոչ կօչէ մըշակ բազմիլ խընգագոյն .
 Հեռուսս գիտեմ զընտանիս
 Շուրջ ի կայախա խընդալին՝
 Ի գիրկ նորուն հայցել զըգուանս գիշերոյն :
 Ի հիւրընկալն այն տաճար
 Քայլափոխեմ յարտասուս
 Միակ գագար ինձ յայժմուս ,
 Յորում ևեթ չեմ օտար ,
 Եւ որ միայն ինձ չըփակի խըստարար :
 Յաճախ ի վէճն այն խորհիմ՝
 Ուր ըսկըսան իմ աղէտք .
 Եւ զարտասուաց խընդրեմ հետք՝
 Զոր ի թողուլ անդ զիս անշուշտ հեղ մայրն իմ :
 Յաճախ իմ քայլք թափառաւկան՝
 Ի մենաւոր գիմն շիրմացն ապաւեն .
 Այլ և շիրիմքն անկարեկիրք ինձ անդ կան .
 Դըստերս հիքոյ ծընողք չեն ,
 Ոչ ի գագազս և ոչ յերկիր համօրէն :
 Ո՛հ , տասն և չորս լացի գարուն
 Հեռ՝ ի բազկաց՝ որ զիս մերժէր .
 Դարձիր , մայր իմ , քեզ կամ ի բուն
 Աստ ի զիմիս՝ ուր զիս թողեր :

Ա. ՍՈՒՄԷ

ՄԱՀ ԿԱՂՆԻՑ

Մինչ մահացուն հար վատչուէրն ի տապար
 Զարքայդ լերինըն մեծապանծ գեռ յերէկ,
 Սուգ մեծ գուժեաց սրբաանըւէր ընդ անտառ,
 Եւ ես ցասեայ ընդ նախն հարուած ահաբեկ:
 Մըռնչեցին անգորր ըստուերք հովանեաց,
 Հառաչախառն ըսպառնալիք հընչեցին.
 Վարատեցան և անտես հիւրքն անտառաց,
 Այլ, մհ, անզօրք կալ հակառակ մահացուին:
 Աղգ մի ողջոյն ահիւ ի քէն մեկնեցան,
 Եւ երգեցիկ բիւր հաւք ի տախտիսըն յուզեալք,
 Ամպ ալիսերանգ՝ ի ճակատուդ յածեցան,
 Սրածայն շրջիւք ի խուլ հեծիւնդ ընդխառնեալք:
 Եկաց տարաամ յաղբերց սափոր ուղիս նըսեմ.
 Ընդ երբերուն շոճիւք սարսուեաց սար լերին.
 Եւ հիւսիսակ թաւալ յափուկս տարագէմ
 Արձագանդօք կողիդ հեծեաց գառնապին:
 Որոտընգոսա զինչ շանգ անկար՝ ալօսեալ
 Ոջ արտավար մի ի գեախնն հայրենի.
 Եւ մինչ զմարմինգ էառ ի ծոց իւր շըմլեալ
 Ահեղ մըռնչեաց երկիր ի ձայն հանգիսի:
 Զի կիւրեղէ սիրէր զկաղնիդ անգրանիկ,
 Զերդ մայրենի որգեակ նախծին սիրատուն.
 Եւ յերակունսըդ ծաւալէր հոյլ քաղցրիկ,
 Հովանացեալ քեզ ի բարձանց ճակատուն:
 Մըփուեաց զոտիւքօ թոց երկայն լուսաւէտ.
 Ուր հոյլ ի հոյլ ցանգ փթըլթէին գարնայնի
 Մանիչ բուրձան և անթառամ հոտաւէտ,
 Զի սիրատարփ ւ՛ արդոյ ըստուեր քո լիցի:
 Մըրմընջաձայն նմա հովանի առնելով,
 Ո՛հ, լընուիր գոռ ըզպարտիս ծնելատեր.
 Եւ միշտ աշուն բընակհասնունգ ըզբըլքով,
 Լօգիկ ձմերան՝ զհասուն տերևսըգ ցանէր:

Չմայլէր երկիր ի քոյդ Ժաւալ նուագաց ձայն .

Ի Թնս հոգմոց խօսել ըստեզծ նա զմայրիս .

Եւ մինչ կամին լուծանել յողբս անսահման

Յոստոց խարշափ մընչէ ընդ շոճս և կազնիս :

Տայր կիւբելէ քեզ ազգատոհմ մի անհուն .

Ի մէն մ'ուղէշ բոյն ինչ կրելով կամ փեթակ ,

Մեղու , Թըռչուն , միջատ , սողուն և զեռուն

Ի ծոցդ անքոյթ կային ի նիրհ և ' ի ճարակ :

Յանկանել քո ազգն այն հընչուն ցըրուեցաւ ,

Անկան ընդ քեզ և բիւր էակք ոգեսպառ .

Եւ առ տեղեաւըդ Թեաժեն ընդ երկրաւ

Դեռ հաւք ողորմ առ գիւտ ձագուցըն Թափառ :

Թաւալ դ' ոստովք քով փըշրեցան բունք հըզօրք .

Հունձ մեծ գործեաց շուրջանակի ըզքե մահ .

Ներքոյ քոյ կան կաղնիք և Թուփք բիւրաւորք .

Վարսք քո կանաչ Թառամեցան ընդ մի պահ :

Եւ սակայն դու յաւերժական ինձ Թուէիր .

Քեզ պարագայս պահէր երկիր շատ ամաց : ...

Յահեղ վիրէն տակաւին հոյզ վազէ ցիք .

Յամաքեցաւ անջառ յարմէն բունն ի ռաց :

Ո՛հ , մի շուայլեր հոյզ այլ յարմատան այն , ո՛վ մայր ,

Մի դքո արիւն հեղուր յորդիդ կենազրաւ .

Լիցի պահեստ տընկոցն առ քե այդ յամբայր .

Զիցէ կաղնւոյն այլ ևս ըմպել ի քէն բնաւ :

Տնւր հուսկ ողջոյն՝ կաղնիդ արբեալ առ գարուն ,

Պըճնեալք երէկ ի ծիւ նորոգ տերևոց .

Այլ չիք քեզ բաստ վերածնանել կեանս ի սոյն .

Առ սիրոյ բոյնան ողջոյն , զոստովքդ հօլելոց :

Ողջոյն առ սեաւ բըզզօղ գընդակըս մեղուաց ,

Եւ առ տերևն հոգմածածան խարշափուն .

Առ ոիզաւէտ զթոցս ընդ զով բազեղանց ,

Ուր բերկրէին զքեզ համբուրից ձայնք զեղուն :

Արնուժ ի միտ , կաղնի , զմահու քո աագնապ .

Դառն է օրհաս յառօյդ ի կեանս հեղասահ .

Եւ գուշակել ապ ինձ ըզկրիցըդ խուճապ

Գլուխ քո կործան դարնանազուարճս յայս ի պահ :

Այսպէս առ ռոս արկ ըզքեզ մարդ մահացու,
 Մանրեալ յերկաթ ըզբուն և զոտորս քոյին.
 Ի ծուխ՝ յաճիւն դարձցիս էակ նուագածու,
 Յերկիր ի հողմ բաժանելով անգըստին:

Այլ միժէ չիք քո տեական ինչ մնայուն.
 Ո՛ւր թագուցեալքն ընդ կեզևով գնան ոգիք.
 Զիցէ՞ բնուածիւն մի՛սս բալորին և անհուն,
 Այլ բիւր անսլեամբ պըճնեալ պայծառ ըզքեցիկ:
 Որ զինչ և էն. այլ ես կարգամ քեզ օրհնիս,
 Զաստուածանուէրն ըզքե. հանգիստ վայելեալ.
 Եւ նդ տիեզերս այլուր նորոգ թէ ծընցիս,
 Մազթեմ լինել յոյժ և ի գեզ առլըցեալ:

Սէր հարազատ զի ես սիրեմ ըզմայրիս,
 Հովնազգեաց խորհրդագածու պուէսս յանդոր
 Կեամ յամբընթաց՝ խաղազ, աըրտում ի յոգիս,
 Եւ բարձրագլուխ նուագեմ առ մեզմ ինչ զեփիւռ:
 Ինձ անհասից սերտիւ հաւատս ընծայեմ.

Ակընկալեմ՝ այլ ոչ առ բաստ մարգկային.
 Յերգանըւագ հանգիստ՝ կաղնի զինչ անձեմ,
 Մնամ տէրունեան վազիւ ծագման տուընջեմին:

Յանձն իմ ըզգամ զանդորր հանգիստ անտառին.
 Ընդ հովանեալ թաղեալ ծառոց սըրբագգեաց,
 Զանխուլ մարգկան զհամբերութիւն սուսանիմ,
 Եւ խաղազիկ կեայ սիրաս յուսով ի մոռաց:

Այլ ընդ անտառս հանգըստաւէտ մարդ մըըցի.
 Աւուրց յաւուրս ըստուերք կարճին ի լերինս:
 Ի խորհրդեան մնացէ վայրացն և ոչ մի,
 Ուր սէր՝ իմաստս հոգի քաղէ կաթոգինս:

Սիրտ իմ ուլացիր. չեն այլ երկրի հովանիք.
 Եւ հաւք երկնից, և ցնորք անհուն երազոց,
 Ուրուք ճերմակք՝ ոյց հեշտ մըթին են տեղիք,
 Լիցին ընդ հուպ զերկ ձագախառն ի ծառոց:

Կապտի երկիր ի սըրբովայր գաբիրաց,
 Տարամբժին սքանչելահրտչ հիւրքն հովտից.
 Քաղցր էին գից գարուց տաճաբք պուրակաց,
 Կործան յերկիր տապար զկաղնիս արկ ընդ գից:

ՅԵՐԵՒԵ ԱՆՏԱՌԻ

Անջատեալ քոյր ի ցօղնոյն ,
 Ո՛վ հէք տերեւ ազազուն ,
 Ո՛ւր գընաս դու : Զգիտեմ զայն .
 Զկազնին մըրրիկըն եհար
 Որ ինձ նեցուկ էր միայն :
 Ի շունչ առեալ անգագար
 Զեփիւս և կամ հիւսիսի՝
 Յարգ զիս յածէ հոգմազար
 Ի յանտառէն ի գաշտի ,
 Եւ ի լերինս ի հովտոյն .
 Եւ յոր վարիմս ըստ հոգմոյն
 Ըզհեան անահ ընթանամ .
 Գընամ ուր գնայ ամենայն ,
 Ուր գնայ տերեւըն վարգի ,
 Ուր և տերեւըն սարգի :

ԱՌՆՈՑ

ԱՆԿՈՒՄՆ ՅԵՐԵՒՈՑ

Անտառակին աւարաւ
 Աշուն գալուկ արի զերկրաւ .
 Թուփք և մացառք հոլանիք .
 Սոխակ չունի գայլայլիկ :
 Յայն ինչ կենաց այգուն փայլ ,
 Մանուկ հիւանդ յամրաքայլ ,
 Խաղայր գընայր յերթ վերջին .
 Յիւրն անտառակ սիրելին .
 Մայրիդ ո՞ղջ կաց . . . ընկճիմ ես .
 Սուգ քո գուժէ զիմ աղէտս
 Յամէն անկման սաղարթու
 Դիտեմ զքուչակըն մահու :

Եպիտաւրեան պատգամ խիստ

Ասաց. « Մայրիք ոտախիտ

« Աչացք հանդէպ գալկասցին ,

« Այլ իցէ այն և յետին :

« Յաւերժ պատի զքե նրձին .

« Ի դերեզման տապանին

« Գունաթափեալ քան զառունգ

« Անկցի խամբեալ մանկութիւնդ ,

« Նախ քան զծագիկըն գաշտին ,

« Եւ նախ քան զուս. բըլբակին » :

Մեռանիմ ես... Յըրտաշունչք

Եւ թուխք հարին զիս հողմունք .

Եւ իբր ըստուերս խուսափուկս

Տեսի զգարունս ի փախուստ :

Անկիր տերեզ առօրեայ ,

Յաչաց զուզիս զայս սքօզեա ,

Թաքո յանյոյսն իմ մօրէ

Զվայրն ուր հանգեայց յայսմհետէ :

Այլ թ' ի մեկնակ ճեմելին

Իմ հերարձակ սիրուհին

Գայ լալ ի մուտս արեգին ,

Զարթո քո մեղմ ի խօշիւն

Պահ մի սփոփեալ զիմ ուրուն :

Ասաց , գընաց անդարձակ...

Եւ հուսկ տերևն որ անկաւ

Ետ զօրհասին նըշանակ :

Եդին ի հող ընդ կաղնեաւ...

Այլ չքարձաւ սիրուհին

Այցեւ մեկնակ դամբանին .

Հովիւ գաշտին միայնակ

Ելոյժ , յածեւ լոկ ոտին ,

Ըզլըռութիւն տապանին :

ՄԻԼՎՊՈՒՍ

ՆՈՅՆՄԱՅԻՐ

Ժըմիտ մի ևս, ով բայցադնաց դու արև,
 Ժըմիտ մի մեղմ ընդ միգամած օդ փափուկ,
 Մինչ չև յերկիր պազեալ ուի մարդս անտերև՝
 Հասեալ իցեն մրըրիկք և ձեան ձըրձիչ բուք:
 Ժըմիտ մի ևս՝ ի շերկ բըլուրս ուի մերկ ծառ,
 Յարջնաթոյր ժայռս՝ յարոց անց տապ ամարան,
 Եւ յերընջնակ կապոյա ծաղիկ՝ որ ցըրաառ
 Մէն կայ և հուսկ յիւրոյ ազգէն գեղազան:
 Դոյզն այլ մընան մեղուի աւուրք արևոտ
 Յոր բըզզայցէ ի ցանկս անցից ուի պատնէչ,
 Եւ կռնչիցէ ծըղրիդ գրախտից ի ծըղօս:
 Եւ գեգերել մեզ ի ճաճանչք իցէ հեշտ:
 Օ՛ն, միւս ևս ճոխ ժըմիտ, ուսապ ջան գիցուք
 Կըրել զհողմուսնս, ըզսառն և զօրս մըղձուկ:

ԳՐԱՑԻՆԴ

ԱՌ ԵԻԾԱՌՆ

ԵՐԳ ԲԱՆՑԱՐԿԵԼՈՑ

Ո՛վ գու նըժգեհ ծիծառն անմեղ,
 Ի վարանաց գարեալ բունիկ,
 Զի՛ աըրամագին յընդհատ գեղգեղ
 Նըւագս հընչես, ողորմ հաւիկ:
 Թէ տարանջատ քոյդ վարուժան
 Ըղբեզ միայն աստէն ելիք՝
 Յանմըխիթար սուգ ինձ նըման,
 Ողբա՛, ողբա, ողորմ հաւիկ:
 Այլ երանի՛քեզ բիւր հազար,
 Զի թռիչս առեալ ընդ սար ընդ ձոր,

Ազատ յայերս յածիս կոծիս
 Կըրկնեալ ըզք՝ զերդ տարփաւոր :
 Յանկարծ և ես... այլ զիս եղնուկ ,
 Դառն արտասոււք են իմ բաժին .
 Հեծեմ տըխուր ի յարկս անձուկ ,
 Յիշեալ ըզփառս իմ զառաջին :
 Աչ ինձ արփույն ծագէ նըշոյլ
 Յազմամըզին յայս օթևան .
 Եւ ոչ հողմիկ հեշտին ի սոյլ
 Հասուցանէ զիմն առ քեզ ձայն :
 Յառաջ խաղայ և այս աշուն ,
 Եւ գուր կազմիս յերկայն ուղին .
 Շէնք և աւանք և ծովք անհուն
 Քաղցր ի ձայնէդ ողջունեսցին :
 Իսկ ես այգուն այգուն ի կոծ
 Ձաչս իմ բացեալ արտասուուլից .
 Եղերական քոյին երգոց
 Յայնժամ մըաօքս ի լուր կացից :
 Մինչ տարափով ի խիստ մըրրիկ
 Թօթափեսցի ձիւն փըքալից ,
 Ես կարծեցից թէ քո ձայնիկ
 Ինձ և յայնժամ է ողբակից :
 Ո՛վ դու նըժգեհ ծիծառն ազատ ,
 Ըզքեզ առնեմ ես երդմընի ,
 Քընա ողջամբ յերկիր ի զատ ,
 Ողջամբ դարձցիս ի դարնայնի :
 Խաչ մի գըտցես դու աստանօր .
 Ի նմա հանգիր զայն երիկուն .
 Տո՛ւր ինձ զլետին ձայնիդ համբոյր ,
 Եւ երթ ողջամբ , հաւիկ սիրուն :

ԿՐՈՍԹԻ

ԱՌ ԹԻԹԵՌՆԻԿՆ

ԵՐԳ ԲԱՆՏԱՐԿԵԼՈՅ

Եթերական գաշտին գու բնակ, թիթեռն երփին և սի-
[րունակ,

ի միջնարերգ այսր ահարկու մուտըս քեզ իբր եղև գտանել,
Ուր ընդ մըթին մահարձանս աղօտ նըշյլ տուընջենային
Թափ ընդ արգեղս անցեալ հաղիւ ծագէ ի բանտ այսր ան-
[մարգի:

Իցէ թէ տուաւ քեզ սիրտ ի բնէ զգայուն առ սէր բարե-
[կամի:

Շարժեալ թերևս ի գըթոյ գան գու սփոփել զօր կրեմս ըզ-
[վիշտ:

Ո՛հ, ի տեսիլ քոյին՝ վայրիկ մի գէթ աղէտք իմ ամոքին,
Դու վերլստին արծարծանես ըզոյս ի սիրտ իմ առկայծեալ:
Համագոյից զարդ չքեզ, ըզքեզ նորին եկ նըկարել:

Աղատութեան աւետարեր, խօսեաց զաղբերց ինձ և զըճաց,
Ըզկարկաջուն խօսեաց զուղից, ըզալարեաց և ըզծազ-
[կանց:

Յուշ ինձ զանառս ած զովացիկս և զհողմաշարժ ոստոց
[չըրչիւն:

Տեսեր գու զվարդ փըթթեալ կարմիր, և զսիրատարփ
[համբոյս Ծիծուան:

Ըզքարնայնոյն բեր ինձ զըրոյց և զնըշուկից արուսեկին:

Մինչ գու՝ նգ մայրիս անցանէիր, ասա ինձ, օ՛ն, ս՛վ թիթեռ-
[նիկ,

Երգէր սոխակըն քաղցրաձայն բունեալ ի խորս անգ անտա-
[սին:

Ձաղմամըջին որմովք բանտիս ընդ վայր ծաղկուներս գու
[խընգրես:

Ձանձնիւր աղէտս անգանօր մէն մ՛ի գերեաց կենդանագրէ:

Ձուրկ ի յարփուոյն ուի զեփիւռից շնչմանց ի վայր ըստոր
[երկրեայ

Դու զըրգթայիւք աստ փարեսցիս և հեծութիւնս ևեթ լուի-
[ցես:

Եւ ի տըխուր բանտէս, թըռչնիկըդ մարգածին թեթեալ.
[Թռիչ.

Մինչ չև անցեալ ամարայնոյ փութա զկենցազդ ըմբռչնենլ
[տուզ.

Խոյս ի վայրաց աստի աուր, ուր քան ըզմահ գառն է կեալ.
Իսկ դու թուանիս այլուր ազատ, երկինք անեզր են քեզ
[սահման:

Թերևս երբեմն ի յեզյեզուկ քոց հաճոյից վարեալի գաշտ:
Որդեակս երկուս ծանրաթախիծ մարբն իւրեանց անդտես.
[ցես ի ճեմ:

Սըացիր առ նա և գողջիր, զի սիրելին իւր գեռ շընչէ [խօս:
Հառաչելով ի տես նորին. այլ դու, աւանդ, համր ես ուան.

Փայլեցո զթեղս քո գունեզս յաչս որդեկացըս սիրայնոց,
Եւ ի զբօսանս անմեղ խաղուց նոցին ածեալ թեւս ըզնորք:
Հետամըտիցըն կարծեցո՛ ահա հասեալ ունել ըզքեզ.

Եւ ծաղիկ ի ծաղկէ ձրգեա ըզհետ քո ըզնոսին: [գայցէ:

Անշուշտ և մայր նոցին տըրատում ի զնին խաղուցն ածեալ
Թըռիւր զըւարթ զառաջեալ, գարձո ըզքնացս այոր ըզնոցին:
Հիքիս բանտարկելոյ դոքա մընան ինձ յոյս յետին. [սուք:
Գութ ի գահիճս իմ թերևս արկցեն նոցա գողտր արաս.

Գիրկս հարսինն հաւատարմի արկցէ փեսայն իւր խանդս.
[կաթ:

Խորտակեսցին նիգք առաջի նորա, բացցին գրունք պըզէ.
[ձիք:...

Այլ, ո՛հ, ի ձայն շըղթայիցըս փարատին ցնորք խաբուսիկէ:
Թուանի, աւանդ, թիթեռնիկն ընդ օգս եզեալ աներևոյթ:

ԳՍԱՎԻԷ ՏԸ ՄԷՍԳՐԸ

ՔՂԲ ԵՒԱՑԻ ՑԱՐՑԱՔՍԻԼՆ Ի ԳՐԱԻՑԷՆ

Իսկ Եւա զանխըլարար լըւեալ ըզքնաւն՝ յոգւոց եհան ,
 Եւ զթաքուստ իւր յայանի արար ուժգին հառաչանգոս .

« Ո՛վ հարուած յանկարծահաս՝ չար քան ըզմահ . այսպէս
 [ուրեմն

Ըզքեզ , գրախա , թողուցումք , թողցնէք ըզքեզ՝ բընակ երկիր ,
 Զձեզ՝ ճեմարանք գեղազուարճ և հովանիք ասառուածար .
 Յորս ակն ունէի խաղազութեամբ , թէպէտ ի սուգ , [ժանք ,
 Կեալ մինչև ցըժամագիր աւուր մահուան մեր երկոցուն :

Ո՛վ ծաղիկք , ոյց ընդ այլով երկնաւ ուրեք չէք բուսանել ,
 Որ զայգոյ զիմ նախողջոյնս ընդունէիք , զվերջինս յերեկ ,
 Զոր սնուցի քընքուշ ձեռօքս ի փըթթեւոյ նախ բողորեցդ ,
 Եւ միում միում ի ձէնջ եդի անուանըս սիրալեա :

Ո՞ր դարձուսցէ այժմ յարեգջեր ըզձեզ և զքեզարդ ջոկեսցէ ,
 Աբբուսցէ ջուր առողիչ յանմահուութեան ձեզ յաղբերէն :
 Հուսկ ուրեմն և դու ինքնին , հարսանեկանդ հովանոցակ ,
 Զարգարեալք յինէն յոր ինչ անուշահոտ և զուարթատես ,
 Ի՞բր ի քէն անջատիցիմ , յո՛վ յածեցայց յաշխարհ ստորին ,
 Որ իցէ իսկ առ սովաւ խաւարային և վայրենի :

Զիտորդ շընչել կարիցեմք յանմաքրագոյն սըղոխս օդոց
 Մեք աստէն սովորեալքս յանմահական մըրգոց ճաշակ » :

Հառ կարձեաց հրեշտակն ըզբանսըն քաղցրութեամբ հե-
 [զհամբոյր .

« Մի շար , Եւա . և արգար սուժիցդ համբեր յօժարու-
 [թեամբ .

Մի այգպէս գիցես ըզսիրա քո կաթողի յոր չէն ինչ քո :
 Ոչ ելցես գու մինաւոր , ընդ քեզ և այր քո երթիցէ .
 Զհետ նորա գընալ պարտիս , և յուշ լիցի քեզ հանապազ ,
 Զի ուր նայն բնակասցի , անդ հայրենին է քո երկիր » :

ՄԻԼՏՈՆ

ԱՅԼԱԲԱՆԱԿԱՆՔ

ԴԱՐՁ ՍԱԳԱՑԵԼԻ ԱՌ ԻՒՐՍԵՆ ԵՒ ԱՅԼԱՓՈՒԻԼ
ԱՄԵՆԵՑՈՒՆ ՆՈՑԱ 802

Ընդ միւս կողմ ընդ Թումանն ի գրուներս գրժոխաց էջ Սա.
[տանայ,
Յեղեալ Վիհն յաջ և յահեակ և գիզեալ յինքն ահագնագոյ՝
Ի կոհակ որոտընդոստ գէմ յամբարտակսն յարձակեցաւ,
Որ զիւրով սըրամըտուԹեամբ ծաղը արարեալ ծիծաղէին:
Անցեալ ընդ գուռըն գրժոխոց անպահապան և մեծարոյ՝
Զամենայն ինչ գրտանէ Սատանն ի խոր ամայութեան.
Զի կարգեալքն անգէն ի պահ՝ Թողեալ զանգիւն իւրեանց
[Թափուր
Ելեալ կային ի բացեայ Թուռցեալ յաշխարհըն զերագոյն՝
Այլք յալուցս էին մեկնեալ՝ զԱմենազիւց շինին որժովք,
Որ քաղաքն էր և գուռոզ արքայարտնն Արուսեկի. —
Զայդ կոչումն առեալ Սատանն ի նմանութիւն պայծառ
[ասանդն: —
Առ վայրօքն ի պահ կան գուռնգք, աւագորեարն յառեան
[ազուք,
Վարանեալք՝ իւ իցէ յամ ինքնակալիս զոր յզարկեցաք:
Զայս արւեալ նորա պատուէր ի գնալ իւրում, և պահէին:
Որպէս յորժամ Ապախտարք խուսեալ գընան ընդ տուն
[Մաղթաց

Եւ ընդ դաշտըս ձիւննաթաղս ի յերեսաց Ռուս թըշնամուոյն ,
կամ արքայն բակարիացւոց ի տաճկաստան մահիկեղջերց
Փախուցեալ յաւեր մատնէ զաշխարհն յայնկոյս Հայոց փո-
[քունց՝

Ի խազալ իւր և տեղի տալ ի Դավթէժ կամ ի կասսբն .
Նոյն սոքին՝ այն ինչ նորոգ վըտարանդի յերկնից բանակ
Անապատ ասպարէզըս խաւարին թողին յուովս
Ի գժոխոց ալըն ներքին , և հոյլ ի հոյլըս խըռնեցան
Ի զուարթուն պահպանութիւն արքայանիստ քաղաքամօրն ,
Ակըն ժամ ի ժամ կալեալ գարձի մեծի նահատակին [գիր :
Յարշաւտնացն յոր չոգաւ տարաշխարհաց խոյզ ուի խըն-
Անց ընդ մէջ բողմամբոխին զսնխըլաբար և յանծանօթս
Ի տեսիլ հրեշտակակերպ ուսմիկըսպաս զօրականի :
Ի դրաց Սամայեւեան դահլըճին ել յաներևոյթս [պաս
Ամբարձաւ յաթող իւր պերձ՝ որ ճոխաճան պարզեալ կեր-
կայր ի բարձր ծագ սրահին արքայապանծ շքեղութեամբ
Եկաց ժամ մի բողմեալ՝ պարագիտել անտեսաբար .
Իբր յամպոյ իմեքէ ասպ գըլուխ իւր ճաճանչեղ
Եւ գիտակ աստեղափայլ կերպարանացն երևեցան ,
կամ թէ ևըս լուսալիբ , զներողութեան արկեալ ըզփառս ,
կամ զպիտակ ճառագայթից որ յետ անկման թողան ի նա :
Հիացեալ գունդ դըժոխոց՝ աչս ի յանկարծ բարձին ծա-
[գունքն ,

Եւ ծանեան ըզցանկալին իւրեանց հասեալ ըզպետն հըզօր .
Աղաղակ ուժգին հընչեաց , ճեպ յասենէն ետուն աւագք .
Ի խաւարին ակըմբիցըն յարուցեալ մատեան առ նա
Հասարակ ուրախութեամբ ի խընդակից նըմա լինել :
Նա ձեռամբ լըռեցոյց յունկընդրութիւն սովին բանիւք .

« Աթոքք , Տէրութիւնք , Իշխանութիւնք , Զօրք զօրու-
[թեանց ,

Այսպէս իսկ կարգամ ըզձեզ և քարոզեմ այժմ այսպիսիս ,
Ոչ ևեթ իրաւամբք , այլ և արգեամբք ժառանգութեան :
Ըզկընի յաջողուածոյս քան զամենայն ըզոյոս ի վեր՝
Եկի հասի առնուլ հանել ըզձեզ աստի յաղթանակաւ
Ի զազիր և նըզովեալ սանդարամեա խոր վիրապէս ,
Ի տանէ թըշուառութեան՝ բըռնակալին մեր զըզեկէ :

Օ՛ն արիք ժառանգեցէք արգ. տիրաբար զաշխարհ մի մեծ՝
 Խոռն մի՛ նդհատ ի բնակաւոր և հայրենի երկնէ մերմէ,
 Զոր ստացայ ձեզ ծանր ի վտանգ՝ աաժանաւոր ձեռնար.
 [կութեամբս:

Երկայն են յոյժ ճառք բանից գործոց իմոց և նեղու-
 [Թեանց

Եւ վըշտացն որովք անցի՛նդ անէզ յուզմանց վիհ խորափոր,
 Որում ոչ սահմանք ինչ են, և ոչ բնութեան հաստատու-
 [Թիւն:

Զորով այժմմ Մեղք և Մահ սալայատակ են յօրինեալ
 Ճանապարհ լայն ի դիւրեւ ըզքաջափառ ոտիցդ ընթացս:
 Սակայն ես ուղի անկոխ ինձ հորդեցի տառապանօք,
 Ըստիպեալ ընդ ապառուժ անդունդս ի վեր բարձրապարել,
 Սուզիւ ի ծոց անըսկիզբ ըն Գիշերոյ և բիրտ Վըհին,
 Որ զընդացեալ ընդ ծածուկս իւրեանց՝ յարեան բուռն Ե.
 [խոյեան

Մուկեգին գոյմամբ չըտալ Թոյլ նորագիւտ ճանապարհիս,
 Բողոք բարձեալ յատենի վեհագունի Ճակատագրին:

Զիդ իցէ զըուցեւ և զգիւտ նորաստեղծեալ այնր աչ-
 [խարհի

Հըռչակեւելու՞ն ընդ երկինս յառաջագոյն ի համբաւուց:
 Ի՞տաստակերտ զարմանագործ ամենալից բարգաւաճեալ,
 Ուր մերով հերքմամբս եգաւ մարգն ի գրախաի յերջան.
 [կութիւն:

Իմ յիւրմէ Արարչէն ուծացուցեալ ըզնա նենգաւ՝
 Որսացայ, և յառաւել ի ձեր զարմանս, պըտղով միով:
 Յասուցեալ ընդ այս նորա, — կարէք ունել ժոյժ ի ծա.
 [զուէ, —

Մատնեաց ետ ըզսիրելին իւր մարդ համայն և զայն աշխոր՝
 Յաւար Մեղաց և Մահու, հարկաւ և մեզ միանդամայն,
 Որ դիւրով և Թեթեով և անվըտանգ զայն ըստացաք,
 Երթալ ընդ այն ընթանալ, բնակել անդէն, տիրել մար-
 Փոխանակ՝ զի նա ինքն ամենայնի էր իշխելոց: [գում:

Ապաքէն և զիս ինքնին դատեցաւ նա, նա՛ մանաւանդ
 Ոչ Թէ զիս, այլ զօճն անբան՝ յոյր կերպարան խաբեցի
 [զմարգն:

Իմ ի նմին գատաստանի բաժին է մերկ [Թըշնամուծիւն,
 Զոր նա ինքն արկանելոց է ի մէջ իմ ուազդի մարդկան.
 Ես հարից զիւր գարշապար, տոհմ իւր ըզգլուխ իմ ճըմ-
 [լեացէ:

Սակայն երբ, ոչ ինչ է յոյտ. և ո՞վ իցէ որ ընդ ճընշման՝
 Նա և ընդ մեծ և ըս պատժոց՝ ոչ գընեսցէ զաշխարհ մի:
 Այգ ահա գործոցս համար. զինչ այլ մընայ ձեզ առնել,
 [գիք...

Յառնել այժմէն մըտանել ի ծայրալիր երանուծիւն ու:
 Զայս խօսեալ՝ վայր մի եկաց, ական ի պայթիս միահամուռ
 Եւ ի բարձրը գըրուատիս կալեալ [Թէ գան յունկն իւր
 [ճայթել:

Բայց սակայն ընդ հակառակս ի բոլորից լըսէ գիմաց
 Միախուռն և գըժընդակ անթըւելի լեզուաց չըչիւն,
 Հասարակ համաշխարհի գըսրովանաց ձայնարկուծիւնք:
 Յապուշ միտըս զառածաւ, ստկայն առ սուղ ինչ ժամանակ,
 Զի անդէն առ նըմին յաւէտ ընդ անձն իւր զարմանայ,
 Տեսեալ զի իւր իսկ երեսք ձըկտեալ ցըռկեալ ծիւրին ծըն-
 [գին,

Բազուկքն ի կողսըն մածնուռն, ազգեդք յերեարս առնուռն
 [ողորս,

Մինչև յոտիցն իսկ անկեալ՝ գլորի վիշապ սոսկավիթխար
 Ընդ պորաըն սողալով. ընդդէմ մըրցի, սակայն ի զուր.
 Զօրուծիւն մեծ զինքն ընկձէ՝ սա գատակընքին պատուհա-
 [սեալ

Ընդ նովին կերպարանօք՝ որով գործեալ իսկ զոճիրն էր:
 Խօսել ճըգնի, այլ երկձիւղ լեզուաւ առ նոյն երկձիւղ լե-
 Շըչիւն առ չըչիւն գարձուցանէ զարհուրագին. [զուս
 Զի էին գեք համօրէն առհասարակ այլանդակեալ, [սուն:
 Բընաւքն յօձ, իբրու զովողք յանգըգնագործ գըժնէ վնա-
 Սոսկալի էր շուինչ չըչմանցն անդ ի սրահին յոր զեռային
 Հրէչից եռանդըն [Թանձրախիտ շաղապատեալ գլուխս և աը-
 [տունս,

Կարիճ, քարք, իժ անողորմ, արքայիկ, ժանտ խարամանի,
 Եղջերիկ և ծարաւ, որպիսի ոչ ուրեք երբեք

Սողոնց Զուր խառնափընդոր հուաց յերկիր անդր ոռոգեալ

Յարենէն Գորգոնահան, կամ ի կըզդին Ոփիուսայ:

Էր և մեծն ի նոսին ինքնին դարձեալ ի վէշապ օձ
Անճոռնի և յազթանգամ քան զանհեգեգըն զայն Պիւթոն,
Ջոր արեգակն ի պիւթեան ծընաւ հոգտին ի մօրատայ.
Եւ թըւէր ոչ ինչ պակաս իշխանութիւն գեռ յայլս ունէլ:
Ջիւր ըզհետ բողորեքեան ելին ի դաշտ ազատ արձակ: [կալ,
Անդ էր այլ գուռնն ապրստամբ անկեալ յերկնից՝ ետեղա-
կամ կարգեալ ռազմի ճակատ, ակըն կալեալ զըւարթափա
Տեսանել զյազթանակ գալուստ իւրեանց վեհասպետին.
Բայց այլանդակ տեսին հանդէս՝ զազրակերպեալ օձից խու-
[ժան:

Ահ կալաւ զնոսա և զոյգ քրստմընափուշ աղապատանք.
Յոր հայէինն՝ յանկարծուստ փոխակերպեալ գարձան ինոյն:
Անկանին ծըղիք իւրեանց, տէգք և վահանքըն թօթափին,
Եւ նոցին տապալեալ թաւալագլոր ի նոյն ըշտապ՝
Սկըսանին և ինքեանք ըզնոյն շըջիւն զարհուրելի, [աեալ,
Ըզգեցեալք զահեղ տեսիլըն՝ ժանաագործ ազգմամբն ա.
Հաւասարք՝ որպէս ի մեղան՝ և ի պատիժ պատուհասին:
Վասն որոյ՝ զոր միանգամ պատրաստէինն օրհնից պայթին
Ի շառաչիւն փոխեցաւ շըջմանց՝ նըշան մեծ ձաղանաց
Ի շըրթանց իւրեանց ցայտեալ անգրէն յանձինըս իւրեանց:
Այս տեղեաւըն կայր մայրի մի ամբարձեալ յական քըթ.
Անդէն իսկ ի ժամու կերպարանացն այլափոխման՝ [թել
Ի կամացն ակնարկելոյ վերնախընամ թագաւորին,
Ի վրիժուցըն ծանրութիւն՝ լի էր ի նմա չըքնազ պըտուզ
Ի տեսիլ նըմանութեան այնմ որ ի գրախաըն բողորէր,
Ջոր ի կեր Եւայի ջամբեաց փորձիլըն հրապուրող:
Յայն ի նոր երևոյթ կառուցեալ գեք զաչըն հրացայտ,
Թուեցաւ նոցա թէ միոյ տընկոյն փոխան հրաժարելոյ
Բազմարիւրք իցեն բըզխեալ յամսթ իւրեանց կամ ի վը-
[տանգ:

Բայց տապախարշ ծարաւօզ կիզեալ, տանջեալ սոժալըրուկ՝
Որ նոցին արկան ի խաբ, անժոյժ գլորեալ լեռնակուտակ՝
Սողեալ ի ծառան ելանեն, յոյժ թանձրախուռն անդէն մա.
[Ժեալք

Քան օձիցն ոլորք ի գլուխըն Մեգերայ գանգուր խոպոպք:

Ալըթենն անյագարար զխայրիս նոցուն գեղեցկատեսս
Իբր առ նաւթի լըճիւն աճեալքն ուր հրատոչոր կորեաւ

[Սոգոմ:

Սա յաւէտ երս խաբու՝ զքիմննն պատրէ, զզըննելիս ոչ:
Յիմարեալ նոքա ի յոյս տալոյ քաղցուն իւրեանց յագուրդ՝
Փոխանակ ընդ մըրգոյ ծասքեն մոխիր գառնաճաշակ,
Ձոր կոկորդըն նողկացեալ թըքնու ճըչիւ ցայտեալ ցըն-

[ցուղս:

Առ սովոյն տաքնապի և ծարաւոյ՝ ի նոյն քարձեալք՝
Միշտ ի ժահըր գառնանան, և գարշանաց զազիր տաղտուկ
Խեղաթիւրէ զծամելիսն՝ ըզյափրացեալսն յաճիւն ուի

[Ճարպ:

Ի նոյն խաբս անկան ըստէպ, և ոչ մարդոյն ինչ հանգունակ
Ձաղելոյն ի նոցանէն, որ մի ևեթ անկաւ անգամ,
Տանջեալք այսպէս սովովչ հաշեալք երկայն անհատ շըջմամբ,
Մինչև յառնուլ հրամանաւ ըզկերպարանսն յորմէ անկան:
Աւանդի պատուէր եղեալ՝ ամի ամի մտանել նոցա
Ընդ աւուրս ինչ ի պատիժըս տարևոր անարգանացն,
Ի հարթել զեղջիւր նոցին և զպտարանաց մարդոյն խըն-

[Ճոյս:

ՄԻԼՅՈՒՆ

ԲԱՐԱՊԱՆԻ ԴԺՈՒՈՅ

Ի նախագրունս անգ Որկեայ՝ կան որջացեալ յանդաս-

[տակի

Ոգբ և հեռ քինախընդիր. ընակեն տըժգոյն ախտք և տը-

[խուր

Մերութիւն, երկիւղ և քաղց չարահրապոյր, և վատչըւէր
Կարօտութիւն, ահարկուք ի տեսանել. մահ և երկունք,

Ազցակից մահուն թըմբիր, և բերկրութիւն ժանտ ընդ չա-

[րիս:

Իսկ ի սեամս հանդիպակոյս՝ պատերազմսնք արիւնար-

[բուք,

Երկաթիք Եւմենեայց առնք, և խելագարն գրժառութիւն՝
Հերքն օձակերպք, ժապաւինօք զըսպեալ յարիւն Թաթա-
[ւելովք:

Անգ նըշքարի մեծ հովանուտ արածէ զոստըս վազեմիս,
Երազոց անէից համբաւի վայրն այն կայեան,

Մէն միոյ ընդ տերևովք իւրաքանչիւր կըռուելոյ:

Եւ այլ բազում հըրէշք ի գրուես անգ կերպ ի կերպ խառ-
[նագողանք

Ըզկայ աանուն, յուշկապարիկք և Ըսկիլայք երկկերպիք,
Բրիարեւս հարիւրածեուն, և ի շըչիւն զարհուրելի

Լեանեայն վիշապ, և Քիմերն բոցաշունչ, վըշկապարիք,

Եւ Արպեայք, և կերպարանք ըստուերակերպք եւանձ-
[նեայք:

Անգ Ենէաս ըմբռնեալ յանկարծակի զարհուրանօք,

Ըզսուր սայր սուսերի յարձակելոցն ունէր ընդգէմ:

Եւ եթէ ոչ ուղեկիցն իմաստուհի ազգէր նըմա [Քնք,

Զի Թափառուտք ընդ սին գիմօք էին հոգիք նուրբք անմար-

Զուր ի վերայ յարձակէր՝ սուսերք զըստուերսն հարկանել

Աստի ստորէջք են ի յալիս գրժոխայնոյն Ախերոնի:

Աստ յորձանք և պըտոյաք անդընդախորք պըզտորք ի տիզ՝
Եւացեալ, զաւազակոյտն ողջոյն ժայթքեն ի կոկիտան:

Պահակ ի ջուրս անգ և գետոյն զարհուրելի նաւավար

Քարոն տըժգոյն մահատիպ, ալիք ի կզակ իւր Թաւք խը-
[տուեալք,

Աչք հրացայտք, աղտեղի զօգեալ զուսովքն ի կախ զըբ-
[դլեակ,

Մըղէ զլաստըն ձողով, և զառագաստըն շըրջըրջէ,

Երկաթադոյն մակուկաւ կրելով զըստուերըս մեռելոց:

Մեր զառամեալ, այլ ծերուութիւն որպէս ըզդից ժիր և աւոյգ:
Խըռնէր ամբոխ բազմութեան ի գետեզերս անգըր խու-

[ժեալ,

Արք և կանայք և կենազրաւ մարմինք արի դիւցազանց:

Տըզպլք և բամբ օրիորդաց չև յառագաստ մատուցելոց,

Եւ պատանիք գէմ յանդիման ծնողացն եգեալք ի խարուկի,

Բազմահոյլք որչափ տերևք անկեալ յանաառըս Թաթափին
Ի նախկին ցուրտ աշնայնոյ, և որչափ հաւք երամովին

Ի խորոց անդընդոց խուռըն գիմն ի ծովեզերս,

Յորժամ ձըմեռն ի ծովէ վարէ զնոսա ի վայր ջերին :
 Բազկատարածք պաղատէին հանգիպակոյ ակփանն ըզձիւք
 Կանխեւքան զայլս ընդ յորձանուան ի չու , յանկոյս ան-
 [ցանեւ :

Այլ անողորմն նաւաստի մերթ ըզսոսա մերթ ըզնոսա
 Ընկալեալ , զայլքս մերժէր ի գետափնէ անախ ի բաց :
 Յայնժամ ապշեալ Ենէաս , և ընդ ամբոխն ի գութ շար-
 [ժեալ :

Ասէ . Ասա , ո՛վ կուսան , ընդէ՛ր խըռնի ամբոխդ ի գետ ,
 Եւ զի՛նչ հոգիքըդ պաղատին . էր աղագաւ կէսք ընկըրկին
 Յափանց գետոյդ , այլք թիակօք հերձուն ըզհունըդ տըժ-
 [գոյն :

Որում պառաւ ըն քըրմուհի պատասխանի ետ հակիրձ .
 Դիւցազն իսկապէս , ո՛վ անքիսեանըդ զաւակ ,
 Դու զկոկիտեանըն տեսանես լի՞՞ յորձախոր , և ըզձահի՞՞ն
 Ըստիւգեան՝ յոր գիք իսկ խիթան երգնուլ , և զօրութեան
 Նորա դըրժեւ . այդ ամենայն զոր տեսանես ամբոխ բազում ,
 Են չըբաւորք և անթաղք , և նաւավարդ այդ է Քարոն .
 Այդոքիկ՝ զորքս բարձեալ տանին ալիք՝ են ոգիք
 Թաղելոց . զի չէ օրէն ընդ գետեղերսըդ սոսկալիս
 Եւ ընդ յորձանսըդ կարկաջունըս նաւարկել ի յայնկոյս ,
 Որոց չիցէ ոսկերացն առեալ ի կայս իւրեանց հանգիստ .
 Թափառականք ի գետափունս աստ շուրջ յածին ամս հա-
 [րիւրեակ :

Ապա ուրեմն ընկալեալք ընդ ցանկալին նաւեն ընդ լի՞՞ :

ՎԻՐԳԻԼԻՈՍ . Ենէսիան :

ԱՐՁԱՆԱԳԻՐ ԴՐԱՆՑՆ ԴԺՈՒՈՑ

Ընդ իս մուտք են ի քաղտքն աղետաւոր .
 Ընդ իս մուտք են ի տանջանսն յաւիտենից .
 Ընդ իս մուտք են առ ժողովսրն կորչատեան :
 Ձարարողն իմ վեհ գըրգեաց արգարութիւն .
 Ած ի գոյ զիս զօրութիւնն աստուածեղէն .
 Գերագոյնն իմաստութիւն , սէրն առաջին :
 Արարածք յառաջ քան զիս չէացան այլք՝
 Բայց յաւէրժք . և կամ մընամ ես յաւիտեան .
 Ընկեցէք զամենայն յոյս՝ որ մըտանէքդ :

ՑԱՆԴԻ . ԴԺՈՒԿ :

Ք Ա Ր Ո Ն

Եւ ահա գալով ի մեր կոյս գայր նաւու
 Մերունի ոմն Հինօրեայ սպիտակահեր ,
 Գոչելով . Վայ՛ ձեզ հոգիք չարեացապարտք :
 Մի՛ կաջիք ակըն աեսանել զերկինս երբեք .
 Գալով գամ առ ի վարել յափն անգր ըզձեզ ,
 Ի խաւարն յաւիտենից , ի ջեր ւ՛ ի ցուրտ .
 Եւ գու , անձըն կենդանի , որ եսգ այգրէն ,
 Անջատեցիր ի մեռելոցրս յայսցանէ :
 Այլ տեսեալ զի ոչ ի բաց անջատէի ,
 Ած ի վերայ . Ընդ այլ շաւիղ , դ՛ այլ նաւակայո
 Խաղայցես յափըն , ոչ աստուատ . հարկ է զի նա
 Թեթեալագոյն ըզքեզ կալցի յանցուցանել :
 Եւ Առաջնորդն առ նա . Քարոն , մի՛ ինչ մոլիր .
 Կամք են այսպէս անդանօր՝ ուր կարելի
 Են կամք համայն , և մի խընդրեր ինչ առաւել :
 Ձոյգ բանին հանդարտեցին այտք ասրագեղք
 Ի նաւավարըն կապուտակ ծանծաղուտին ,
 Որոյ զաջօքն էին անիւք բոցավառեալք :
 Իսկ հոգիքն այն հողանիք և ոգեսպարտք

Ի լըսելն հազիւ ըզբանսըն դըժընդակս՝
 Զատամուռնսըն կըրճտեցին այլազուռնեալք .
 Զարարիչն և ըզծընողսն հայհոյելով,
 Զազգ մարդկային, ըզժամանակ, ըզվայր և զսերմ
 Իւրեանց սերման և սերընդոցն իւրեանցայնոց :
 Ըզկընի մեկուսացան միահամուռ .,
 Անհընարինս արտասուելով յափըն դըժնեայ .
 Որ կայ մընայ անպատկառից ի Բարձրելոյն :
 Քարոն քաջ՝ կայծակնացայտ ականողեօք
 Ակնարկեալ համախըմբէ զամենեօին ,
 Թե՛ւ ճակաւ ըզգանդազկոսան հարկանելով :
 Յաշնանի որպէս տերեք մի՛ստ միօջէ
 Վերանան՝ մինչև ըստեղըն բովանդակ
 Ընծայէ երկրի համայն զիւրըն ծածկոյթ .
 Հանգուռնակ խոտան սերուռնդն ագամային
 Մի առ մի թափին ի վայր ի դետափնէն
 Ըստ ականարկմանն՝ որպէս թըռչուն յիւրն ի հրաւեր :
 Այսպէս յառաջ վերաբերին ընդ մութ ալիս .
 Եւ մինչև ի ղեալք այդրէն ի հանդիպոյն ,
 Ժողովի այսրէն ամբսիս նոր վերըստին :
 Որդեակ իմ, յաւել Վարժիչն ազնըւագուլթ ,
 Որք ի Տեառն բարկութեան մեռանիցին՝
 Աստանօր համախըմբին հանուրց ծագաց .
 Եւ պատրաստք են ըստ գետակս անդր անցանել ,
 Զի մըտրակէ Արդարութիւնն ասսուածային
 Յայն օրինակ՝ մինչև երկիւղ գառնայ ի տենչ :
 Զիք ումեք ազնիւ հոգւոյ անդր անցանել .
 Եւ թէ՛ Քարոն գոռայ ընդ քեզ սըրտմըտագին՝
 Քաջ իսկ մարթիս առնուլ ի միտ զինչ բանքն իցեն :
 Ի վերջոյ գաշտադետինն աղջամըղըռու
 Սարսուեցաւ այնպէս ուժգին՝ զի արհաւրօք
 Միտք ի քիրտըն սակաւին զիս թաթաւեն :
 Երկիրն արտասուալից հոգմ՝ փոթորկեաց ,
 Ի կարմիր լուսանըշոյլ փայլատակեալ ,
 Որ ընկճեաց զըզգայութիւնս համաբոլոր .
 Եւ անկայ որպէս ըզմարդ ոք քընալից :

ԵՂՔ ԵՒՐԻԴԻԿԵԱՅ Ի ԴԺՈՒՈՑ

Առ այս՝ կիւսահրմայն այնուհետեւ ի մեծ տագնապ,
 Ըզհրացայտ աչսըն շըրջեալ յականողինն իւր ի ծաւիս,
 Սաստիկ կըրճըտմամբ եբաց բերան բախտիցն ի բաշտ.
 Ապսքէն գից իմն, ասէ, զքեզ հալածեն ցասման վըրէժք.
 Մեծամեծ տաս դատաստանս. եթէ չկալցին հրամանքն ըզ-
 [գէմ,

Պատուհաս զայդ ածէ քեզ՝ հէքն Որփէոս անպարտակիր,
 Փոխանակ առևանգին իւր ամուսնոյն մոլեալ գըժնեայ:
 Ոյր ի քէն մինչ փախուցեալ սուրայր ընդ գետըս գարաօ,
 Զանարի վիշապ առ ոտսըն դարունեալ առ դարափամբ
 Զեանս ի բոյս թաւաամուր՝ կոյս մտալուռ ի մահ նուիրեալ:
 Սակայն պարք հասակակից անտառասնունք յաւէրժհար.
 [տանց

Զայն առին բարձր ի լերինս, կական բարձին սարք ոգո-
 [պեան,

Եւ բարձունք պանգէականք և արիսեան Ռեսեսայ երկիր,
 Եւ գետացիք և Հեբրոս ուակախականն Ովրիթիա:
 Ինքն առեալ վին դողաւոր՝ բազմատըխուր սիրոյ սփոփանք,
 Ըզքեզ, քաղցր ամուսին, ըզքեզ միայն յսփն ամայի,
 Ըզքեզ յեւս արուսեկին, ըզքեզ ի մուսսըն նըւագէր:
 Եւ ի կիրճսըն աննարեան յանդընդախոր գրունըս մահաւ
 Եւ յանտառըն թափ անցեալ սեաւ արհաւրոք մառտիլս.
 [պոս,

Սանդարամետս էջ ի վիհ, մատեաւ առ պետըն սոսկալի
 Եւ առ այն որ ի մարգկան պաղատանաց սիրոք անողոք:
 Այլ երգովքըն վըրգովեալ յանգընդական խոր կայնիկ
 Նսուրբ ըստուերք և ուրուականք լուսատենչիկք ընթանս.
 [յիմ,

Զերդ տարմատարմ ի մայրիս բիւրք բիւրուց հաւք անկեալ
 [գիմն,

Երեկոյն կամ բըքբեր մինչ ի լերանց վարէ տարափ.
 Բազմութիւն արանց՝ կանանց և կենազթաւ իրանք քաջաց

Մեծահոգի գիւցազանց, պատանեկիկք, կոյս օրիորդք,
 Եւ հանգէպաչաց ծնողաց հուրք խարուկեալ երիտասարդք-
 Զորովք շուրջ մըրրատեսակ գայռ և գրձուձ խարձ Կոկի-

[տեայ

Եւ ալեօք ծանրագանգաղ լիճ պաշարէ ժանտատեսիլ,
 Եւ Ստիքս ինընպատիկ պատ անդ առեալ պարունակէ:
 Պակեաւ տունն իսկ, տարտարոսք ներքինք մահու և կորուս-
 Եւ օձիւք կապուտակօք գիտախրուիւքնն Կատաղիք: [տեան,
 Կերբեր բերանարաց սինկըղ սանձեաց զերրեակ որկորն
 Եւ եկաց հողմոյն անիւ շքրջանակին իքսիոնեան:
 Եւ ահա ի վտանգաց քաւեալնաւից դառնայր ընդ կրուկ,
 Եւ շնորհեալ Եւրիգիկէ գայր ելանէր յօգ արփենի՛
 Ըզհեատովք, քանզի օրէնս էր զայս տըւեալ Պերսեփոնէ.
 Անգէն յանկարծ ափշութիւն ընդ խօլ կալաւ ըզսիրելին,
 Ներելի արգարև՝ թէ գիտէին ներել դըժոխք:
 Ըզտեղի առ, և առ գուրս անդ լուսոյն յիւրն Եւրիգիկէ
 Յանըգգասարս, եղճւկ, յոգւոյն պարտեալ արկ զաջըս իւր:
 Անդ հասեալ ճիգըն բոլոր, և անողորմ բռնաւորին
 Դաշինք ցըրեալ և երիցս հընչեալ բոմբիւն յանդընդոց լիճ:
 Ո՛վ և զիս ճըչեաց նա, զթըշուառս և զքեզ կորոյս, Որփեւս.
 Զինչ այս մոլորութիւն, ահա կըրկին անգութ հրամանք
 Անգրէն կոչին և փակէ զնըւաղ ծըփեալ աչս իմ թըմբիր:
 Ողջ մընա, վարիմ ահա մեծ գիշերաւ պարածածուկ
 Զապիկար բազուկս առ քեզ ձըգելով, ո՛հ, ոչ ևս քոյին:
 Ասաց, և յաչացն անգէն զօրէն ծուխ ի նուրբ օդ
 Խառնեալ կորեաւ տարագէմ, և ոչ ևս սյլ ետես ըզնա,
 Որ զըստուերս ըմբընէր զուր, և բան բազում կամեր ասել:
 Եւ նաւապետ գըժոխոցն ոչ ևս անգրէն այնուհետև
 Թոյլ տայր անցանել ընդ անջըրպետն հեղեղավայր:
 Զինչ առնել էր, յո՛ գիմել՝ կըրկին կապտեալ ի յամուանոյն,
 Ո՛ր կոծով զսանգարամետս՝ որո՛վ ձայնիւ զգիսըն շարժէր.
 Ի սաիգեանն ի մակոյկ լիւզէր յայնժամ նա սարսուալի:
 Զեօթն ամիս ողջոյն ի բուն ասեն ըզնա յողքս համակեալ
 Ընդ բարձու քարածայռիւ, յալիս անշէնն Ըստրիմոնեայ,
 Եւ ընդ ցուրտ անձաւօք զայս ամենայն յեղյեղելով
 Ըզվագերս յողդք տծեալ և ըզկաղնիս երգովքն ի ճեմ:

Իբրու սոխակ անձկարեկ ընդ հովանեաւ կաղամօտին
 Զորգեկացն ողբայ կորուստ, զոր վայրենին արօրագիր
 Ի բունին նրկատեալ չև Թեաբուսիկ՝ առ և տարաւ.
 Իսկ նա լայ զգիշերն ի գլուխ, նըւագ նըւագս ողբեգական՝
 Յոստ մի նըստեալ գեղգեղէ, շուրջ լընու զվայրն յողորմ
 [Ճրբմունջ]:

Ոչ մի սէր, ոչ հարսանիք ինչ այլ ըզմիտսըն հաճեցին.
 Ի սառոյցըս հիւսիսոյ, ի ձիւնեղէնըն Տանայիս
 Եւ ընդ վայրս եղեմնապատ յաւերժացեալս ի պաղ սի.
 Շըրջէր մենացեալ՝ զլափըշտակեալն Եւրիգիկէ [պեան
 Եւ զանվաւեր ըզպարգևսըն գըժօխոց աշխարհելով:
 Յանձկալի մեծարանացն անարգեալ կոյսք կիկնունհիք,
 Ի գից տօնս և ի իընձոյս ցոյգապաշտօն Սպանդարմեօի
 Ըզպատանին գիշտաեալ արկին ի գաշաըս լայնաձիգս:
 Եւ անդ իսկ ի ձիւնափայլ պարանոցէն խըզեալ կառօփ
 Յիագրեանն Հերրոսի վարեալ ուզիտիցըն Թաւալչուր.
 Նոյն ինքըն ձայնն և լեզուն ցըրտասառոյց զԵւրիգիկէ
 Ի պարզել ոգւոցն, աւաղ, զԵւրիգիկէ կարգայր ըզհէր,
 ԶԵւրիգիկէ գեաեղբըք բուրր ընդգէմ կըրկնէին վանդ:
 ՎԻՐԳԻԼԻՈՍ • Մշակութիւն:

Դ Ե Դ Ա Լ Ո Ս

Դեգալոս յայնժամ ի ծանրատաղտուկ աքսորն ի կրեօէ
 Փակ էր անդընդովք և ի հայրենին կարօս ի յերկրէ:
 « Թէպէս ըզցամաք արգելու, ասէ, և զալիս ծովուն,
 Սակայն առաջի մեր բաց են երկինք. երթիցուք ընդ տոյն.
 Թէ և համայնից տիրեսցէ Մինովս, ոչ տիրէ օգոյս »:
 Ասէ, և անգէն նորոց արհեստից անկանի ի յոյզ:
 Փոխէ ըզբնութիւն, փեառուըս հաւու արկանէ ի կարգ:
 Զերկայն ըզփոքու յարելով ըզհետ ի կարձէն ցաւագ.
 Որ այնպէս գոգցես ի բնուստ էր աճեալ ի զառ ի վերակ,
 Իբր ի հովուական շարին յերգիոն տողազոյց վարօակք.
 Եւ լարով ընդ մէջ և զծայրսըն մամով պընգէ հաստասունն:

Գալարէ գուն ինչ՝ զի ճըշգրիտ ի տիպ գործեսցէ հաւուն :
 Մանուկն իկարէ կացեալ առննթեր, և բնաւ անգիտակ,
 Թէ անձամբ անձին ըզմահկանացուն հինէր ըզվտանգ .
 Զուարթերես գիմօք՝ մերթ ըզփափկահերս ընարէր ի փե-
 Յորոց ի շարժիւն բաւեսցէ շնչել հեղասիգ հողմոց, [արոց՝
 Եւ մերթ ըզխարտեալ մոմըն լըմելով բոյթ մատին ի ծայր՝
 Մանկաբար խաղուք ըզհօրն արգելոյր սըխրալի արար :
 Զեռնարկեալ գործոյն մինչ յամբոկ եհասկըչուեցաւ յայերս
 Ինքնին իսկ ճարտարն յեցեալ յերկոսին յիւրակերտ ի
 Ապա և զորդի դաստիարակեալ . « իկարէ որդեակ, [Թևս :
 Ընդ միջինն ընթա՛, խրատ տամ քեզ, ասէ, շաւիղ անվտանգ .
 Գուցէ ընդ խոնարհ թէ գնաս ընդ ուղի, յալեաց ծանրաւ

[ցին,

Եւ թէ ընդ բարձունս՝ խանձոտին փետուրքդ ի բոց հըրա-

[տին.

Ընդ երկաքանչիւր հետոցն ընդ միջին թըռիբ, որդեակ իմ :
 Ահա պատուիրեմ ջհայել քեզ համբուն ի գէմս Եղողին,
 Եւ ընդ արջըն մեծ կամ ընդ մերկանգամ ընդ Հայկեան նի.

[զակ

Մի ականարկեսցես . առաջնորդու թեանս իմլեր հետեակ » :
 Եւ նըմանապէս Թելագրեալ նըմին զօրէնս թըռչանաց,
 Անհըմուտ ուսոցն ապա զանծանօթ թևսըն յարմարեաց :
 Այլ զոյգ ընդ խրատուն թանան համօրէն երեսք ծերունիք,
 Եւ զոյգ ընդ գործոյն սասանին ի գող բազուկք հայրենիք :
 Համբոյր ետ անգարձ, և թևատարած թըռեաւ առաջին,
 Այլ սիրան երկիւղիւ գողայ տատանի ի տես ուղեկցին :
 Զոր օրինակ հաւ՝ որ առ ի բարձուէ ընտանի բունոցն
 Ըզմատաղ ձագուցն արձակէ երամ ընդ այերս օգոց,
 Զայնէր զիւր կընի և ի մահառիթըն մարդէր արհեսա .
 Բախէր թէք զիւր թևս, և զորդւոյն դիտէր բախիւն զու-

[բահետ :

Բայց այն ինչ մանուկն ըսկըսաւ խայտալ բուռն թըռչանօք,
 Մանկական աշխոյժք եթերաց բարձանց վառին տենչանօք .
 Եւ զառաջնորդին լըքեալ ըզշաւիղ թուուցեալ ի բարձունս,
 Ի սաստիկ ասօթոյն կակղի հոտաւէտ թևոցն ամբու թիւն :
 Հալեալ էր մոմոյն . ինքն ըզմերկանգամըն շարժէր զբազուկս

ի թևոց թափուր և ոչ գոյզն մի ընկալեալ ըզսիւք .
 Շըրթունք հայրակոչ յալիս կապուտակ ջուրցըն սուզանին ,
 Որ և յայսմանէ ընկալաւ այսօր զանուն ըզնորին :
 Եւ հայրն հիքացեալ , այլ ոչ և ըս հայր . « Իկարէ՛ , ասաց ,
 Իկարէ՛ , մւր ես , և կամ յոր գաւառ քեզ հանգիպեցայց .
 Իկարէ՛ . . . » ասաց , և ի ծուփս ալեաց փետուրս նըշմարէ :
 Անէծ զիւր արուեստ . ամփոփէ զմարմին . զանուն տեղն ասէ :
 ՌՎԻԴԻՈՍ . Այլբանոսիւնս :

ՄԻՅՈՒՄՆ ԱՔԻԼԼԵԱՅ ՀՆԴ ՍԿԱՄԱՆԻՐԻ

Ձայս ասաց . ի բարկութիւն Գեան ի սըրահն բըրգեցաւ
 կայր լինէր մըտախոհ , իբր ըզգիւցազնըն զԱքիլլէս [յոյժ .
 Ի մարտէն լըռեցուսցէ , և մերժեսցէ զժանան ի տրոճեանցս .
 Իսկ նա խաղաց ընթացաւ ի Պէտնեան ձիամարտիկս ,
 Որ գեռ ևս ի փախուստ ըզյորձանուա գնային գետաջի . . .
 Անգ ըսպան զԹերսիլոքոս , զԱստիպիլոս և ըզՄիդոն ,
 ԸզՄնեսոս , ըզԹրասիոս և զԷնիոս , զՈփեկեսասէս ,
 Եւ զյուլովս ևս սատակէր Պէտնացիս ժիրն Աքիլլէս՝ [գէժ
 Եթէ չէր սըրտմըտութեամբ գեան յորձախոր զառն առեալ
 Եւ ի խորոց պըտուտիցն արձակեալ ձայն և բարբառեալ .
 Ուժգին ես , ո՛վ Աքիլլէս , և քան զմարդիկ գործես .
 [Ճիրս ,
 Քանզի քեզ աստուածք ինքնին կան ի թիկունս յամենայն
 [ժամ :
 Թէ Ձըրուանեանն ետ քեզ ճեա՝ ըզտրոճացին բառնալ բնա .
 [Ընչ .
 Գէթ ի գուրս յինէն վարեալ երթ արա՝ նգ գաշան ըզսոս .
 [կալիտ .
 Ձի վըտակք իմ ցանկալիք արդ ևս լըցան մեռելուտովք ,
 Եւ ոչ ևս այլ հոսել կարեմ՝ զուխս իմ ի ծո՞ջն աստուածոս .
 Անձկացեալ ի գիականց , և գու վանգես ասհրապէս : [յին՝
 Այլ ազէ թոյլ աուր՝ զի ունի զիս ափշուրթիւն , ազանց իչ .
 Երագոտն Աքիլլէս պատասխանի տըւեալ ասէ . [խանգ :

Լիցիայդ քեզ, Սկամանդրէ գիւցասընունդ, որպէս ասեան,
Այլ ըզվէս արողացիսդ ի կոտորել ոչ վերջացայց,
Մինչև յոստան անգր արկեալ՝ ընդ Հեկտորի գէժ ախոյեան
Զփորձ առից՝ Թէ նա՛ նրկուն զիս առնիցէ, եթէ զնա ես:

Ընդ ասելն և խոյացաւ աստուածաբար ի արողացիան,
Եւ յայնժամ Գեան յորձնեռանգն առ Ապոլոն արձակեաց
[ձայն.]

Ո՛հ որդիդ Արամազդեզն, Արծաթազեզն, ոչ արարեր
Զկամբս վեհին Զըրուանեան զոր պատուիրեաց յաճախաւ
[գոյնս]

Առ ընթեր արողագացւոց կալ օգնական, մինչև գարձցի
Ընդ երեկոս արևն ի մայր, և անցէ ստուեր յանգս արգաւ
[ւանդ:]

Ասաց նա. իսկ Աքիլլէս կորովատէք ոստեաւ ի մէջն,
Անգր ընդ Թուսբըն վազելով. յարեաւ և ինքն ալիասաստ,
Եւ պըզտորեալ՝ ըզգըրգանսն ողջոյն զարթոյց, և զգիաւ
[կունսն]

Աղխազիեալ վարեաց՝ որ լի անդ յԱքիլլէայ սպանեալ կաւ
Եւ ընկէց ի ցամաք մըռընչելով իբրև ըզոսւլ, [յին.]

Եւ պահեաց ըզկենդանիսն յահանակիս ջուրցըն վրտակս՝
Ի պըռայտս անդ Թաքուցեալ ի մեծամեծս և յորձախորս:
Եւ անեզ գիզան ալիքըն խռովախուժ շուրջ զԱքիլլէաւ,
Վէտ վէտ յասպարն անկեալ մղէին, և ոչ կարէր կալ ի յու
[տաց.]

Բուռն հար յառայդ մեծ նըջար, որ տապալեալ արմատաւ
[խիլ՝

Զգարևանգն ողջոյն փըլոյզ, և Թանձրախիտ ոստովք իւրովք
Զգեղեցիկ հոստանսն արդել և զինքնին զքետըն կամբըջեաց
Անգ տապալ անկեալ ողջոյն. նա ի պտուտիցն ի բաց վաւ
[գեալ՝

Ճեպ ընդ հարթըն ետ Թըռչել երագ ոտիւք առ պահուցւ
[մանն:]

Ոչ ցածեաւ մեծն աստուած, այլ ի կապոյտ կոհակաց
[ծայրս]

Սմբարձաւ ի վեր ի վեր ըզգիւցազարմն Աքիլլիսիւ,
Նահանջել զինքն ի կըռուոյն և ի արովեանց հերքել զեղեան:

Իսկ Պելեանն ի բաց ոտեալ տէգընկեցի մի ասպարէզ
 Սըլացիւք սեւափետուր որսականի արծուոյն այնմիկ՝
 Որ սրածեւ և կաշմբուռն է յամենայն հաւուց թըռչնոց :
 Նըմին նըման որրացաւ, պըզինձն ի լանջն հընչէր ասնեզ,
 Եւ առ շեղ խոտորընթաց առ ի նմանի գնայր ի փախուստ :
 Իսկ նա զհետ գայր ի թիկանցն հեղեղատեալ մեծաւ գոշ,
 [մամբ :

Որպէս մինչ այր առուածու ի ծմակաջուր աղբերականց
 Ի պարտէզս իւր և ի գրախտ ուրգըս ուղեիցըն բանայցէ
 Ի ձեռին կալեալ ըզբահ՝ կոտորելով զկորեաց կաւառն,
 Ի վտակացն յառաջ խաղալ՝ կոպիճք ի գիւ գըրբին բշտըր,
 Խոխողեննդքս յընթացս իւրեանցընդ վայր ինչ զառ ի թափ,
 Եւ կանխեն երազելով զառաջնորդաւն իւրեանց անգամ :
 Նոյնպէս ցանգ զԱքիլեայ կըրթէին զհետ կոհակք ուղ,
 [խիցն,

Եւ գոյր իսկ ինքըն քաջարշաւ, այլ քան զմորդիկ գիքն են
 [հըզոր :

Եւ քանիցըս գուն զընէր երազընթաց քաջն Աքիլեոս
 Ի հակառակ մըտանել. առնուլ ի միս՝ թէ համօրէն
 Վանիցեն զինքն անմահք՝ անգորրաւէտ երկնից իշխանք,
 Նոյնքան կոհակ մեծողող յԱրամազգայ հոսեալ գետոյն՝
 Հարկանէր զուսնն ի վերուստ, և նա յոգի իւր որրամագին
 Վազվազէր ի վեր ստիւքն. իսկ ի ներքուստ սըրավար գետն
 Առ ի կողմըն թաւալեալ՝ ըզնորա ծունկսըն պարտասէր,
 Եւ սըկախառն ըզպիռնին գերպիէր ներքուստ գարշապարացն :
 Զայն երարձ Պելիսածինն ի լայն երկինս աչս ուղերձեալ :

Հայր Արամազգ, որպէս ի գից չեք ինձ հիքիս ոք ձեռըն
 Ի գետոյս զերծուցանել. որ զինչ և էն կրեցից ասպա. [առ
 Ոչ ոք այլ յերկնաւորաց այնպէս ընդ իս է վնասակար,
 Այլ մայրն իմ սիրելի, որ զիս սըտովք արկ ի պատրանս.
 Զի ասէր՝ ընդ պարըսպաւ պատեննազէն տրովագացուոց
 Երազաթեւ սըլաքօքն Ապոլոնի կորընչել ինձ :

Զի՛ էր թէ զիս էր Հեկտոր սպանեալ արին ասա աճնցուն,
 Յայնժամ քաջին սպանեալ լինէր, և ըզքաջի տարեալ կա
 [պուտ :

Իսկ արդ ես չանարդագուրդ մահու զբաւիմ վստախաւ
 [րակ,

Արգելեալ ի մեծըս գետ, որպէս մանուկ մի խողարած
 Ի ձորալիր հեղեղէ 'նկըլեալ յանցին ի ձմերանի:

Չայս ասաց, և Պոսիգոն և Աթենաս անդէն և անդ
 Հասեալ մերձ նրմա կացին ի մարգկեղէն մարմնոյ տեսիլ:
 Եւ կալեալ ձեռամբ ըզձեան հաստատեցին ըզնա բանիւք:
 Եւ խօսից ըսկիզբն արար գեանադըզորգըն Պոսիգոն.

Մի գու Պելիդգ յյոժ գեղևիր, և մի 'նչ ի խէթ ըմբըռ-
 [նիցիս.

Տէս որպիսիք ոք ի դից երկոքին մեք քեզ ձեռընտուք
 Հաճոյիւքն Արամազդայ ես և Պալլասն եմք Աթենաս.
 Քանզի չէ քեզ ի գետոյ նրկուն լինել ճակատագիր,
 Այլ գա փոյթ գազարեսցէ, և գու ինքնին ակասնիցես:
 Բայց խորհուրդ մի քեզ տացուք զիմաստութեան, թէ հա-
 [ւանիս.

Ե՛կ մի լինիր ձեռընթափ ի նմանավիշտ պատերազմէք
 Ձև արկեալ զամբոխ տրովեան յիլիոնի չբքեզ պարիսպն'
 Ո՛ր և ոք գամ մի զերծցի. գու զՀեկտորին հատեալ զարև
 Դարձ անդրէն ի նաւս արա. տացուք մեք քեզ ականուլ ըզ-
 [փառս:

Չայս նոցա խօսեցեալ՝ անցեալ գնացին յանմահից ջոկ:
 Ինքն ընդ գիւրն ընթացաւ, զի սաիպէր յյոժ դիցըն պա-
 [տուէր,

Եւ այն լի ծագէ ի ծագ ջուրցն հոսանօք էր ողողեալ,
 Եւ բազում զէնք գեղեցիկք կոտորելոց պաասնեկաց
 Եւ մարմինքըն ծըփէին. նորա զալիօք վազէին ծունկք
 Յետս ընդդէմ սուր յորձանացըն դիմելոց ընթացելոյն,
 Եւ չարգել գեան յորդագէմ, զի մեծ կորով արկ Աթենաս:
 Բայց և ոչ Լակամանդր ըզգօրութիւն իւր թուլացոյց,
 Չար ևս հեռայր ընդ Պելեանն և ամբառնայր զուղիսից կո-
 [հահան

Ի բարձունս ամբարտակեալ, ուի Սիմոյիս բառնայր խրա-
 [խոյս.

Չառնըգ զոյժ, սիրուն եղբայր, մեք երկոքին սանձեմք
 [անշուշտ.

Ձե զՊրիամոս արքային ահա զոստան մեծ քանդեսցէ.
 Իսկլարովեանք ի ճակատու կալ ժուժկալիլ բաւեսցեն ոչ:

Այլ եկ հաս շոյա յօգնութիւն, և լքցո զձորդ յազբերաց
 Եւ զառուսգ համօրէն վրտակահոսքս յարուսջիր. [Զուրց,
 Կառո մեծ ալեաց կուտակ, ամբոխութիւն գրբգեա բազում
 Կոճեղաց և վիմաց, ի խէթ ուի խուծ աանըդ վիրագ.

Զի փոքրը միւս ևս և յաղթէ աստուածօրէն ինչ արկեալ
 [յուշ:

Բայց ասեմ, ոչ ուժգնութիւն ինչ օգնեոցէ նըմին, ոչ գեղ,
 Եւ ոչ զէնքն չբքնաղք՝ որ ի վիրապ անգրնդախոր
 Անկցին ուրեք տրզմասիի, և ըզնա ինքն իսկ խորատոյզ
 Ընդ աւազ [Թաւալեցից՝ հեղեալ անհուն խիճ՝ ըզնովաւ,
 Մինչ զոսկերսն անգամ քաղել մի գիտասցեն արայեցիք,
 Այնչափ ծեփեալ յայն կարակում՝ հետախաղաղ կորուսից:
 Անդ լիցի իւր կափարուսն, և չիցեն պէտք հօգակուտի՝
 Զիեքն ի շիրմին մինչ ի [Թաղուսն արայեցիքն յուղարկեցին:

Ասաց՝ խուժեաց յԱքիլլեւ մըրբատեսակ մոլեալ ի վր,
 Փըրփրագէզ մըռմըռալով արիւնազանդ գիւսկուտիւ:
 Կապուտակ կոհակունք յԱրամազդայ գիմեալ գետոյն
 Կանգնէին լեւնակարկառ՝ ընկլուզանել զՊելիսածինն:
 Այլ Հերայ զարհուրեալ զԱքիլլիսէ՝ ուժգին գուչեաց,
 Գուցէ զնա շոպշոպիցէ մեծայաղթ Գեան անգրնդապատցա:
 Եւ անգէն առ Հեփեստոս սիրուն որդին արձակեաց ձայն.

Արի, Կաղոսն, իմ որդեակ. քանզի զՔսանթոսն ուզի.
 [նահա

Ախոյեան նըմանաւոր քեզ ճըշգրտեմք ի մըրցամարա.
 Օն արի փոյթ ի նըղասա, հան ի հանգէս բոց յարգարբր:
 Աւասիկ ես զԶեփիւռի և ըզտրաթեւըն Հարաւոյ՝
 Չորամ մըրրիկ ի ծովէն յարուցանել անհընարին,
 Որ հըրգեհ բորբոքախառն հարեալ կիզէ զարովագացոյ
 Ըզկառափունսն և ըզզէնս. իսկ գու զափամըքն Քսանթոսի
 Տոչօրեա զծառատունկս և լեր ի նա ինքն իսկ հըրձիգ.
 Մի զքեզ ողոք ինչ բանիւք և սպառնալեզք արգելուցու:
 Մի գըլար ի քո սաստից, բայց [Թէ ձայնեալ կարգացից ես,
 Անդ անդէն սանձակոծեա զանշիջանուա քո հրահոսանս:

Ասաց զայս, և ընկենոյր Հեփեստ ըզհուրն աստուածս.
 [վրժ:

Նախ ի գաշաըն բորբոքէր հրասն և այրէր ըզգիւսկունսն

Որ էինն անդ յոգնաթիւք յԱքիլլիսէ մատնեալք ի մահ .
 Գաշտն ողջոյն սարսառեցաւ , զիջան վէտ վէտ ալիք վըճիտք :
 Օրինակ իմն Հիւսիսակ աշնանային վաղ ցամաքէ
 Զնորոգօք արտորայն , և խրախ լինի մըշակ նորին ,
 Նոյն չորացաւ գիւրն համակ , և ըզմեռեալսըն հրակիղեաց .
 Եւ նա զբոցն արփիահրաա առեալ ի գեա անգըր գարձոյց :
 Այրէին նըշգարիք , մուշավայրիք և ուռեստան ,
 Խարակեալ խանձատէր ներգիւն , կընիւն , վաղամեռուկ ,
 Որ զլըստակ վըտակօքըն թանձրախիտ կային բուսեալ .
 Տագնապէին և ձըկնօձք և այլ կայաառք՝ որ ի պըրոյոս ,
 Որ ընդ ուխտն գեղեցիկս յայսկոյս յայնկոյս առնուին

[Ճախր ,

ի շընչոյն վըատնգեալք բազմահըմուան Հեփեստոսի .
 Կիզուին և կինք Գետոյն . և ձայն արկեալ բարբառեցաւ .
 Հեփեստէ , չիք ոք ի գից կալ առաջի քո բաւական ,
 Եւ ոչ ես ընդ քեզ հըրով բորբոքեւըւմդ այդպէս մար .

[տեսոյց :

Թող ըզհեռդ , և Աքիլլէս գիւցազն ընդ հուպ ըզարովացիս
 Յոստանէն անգամ խլեսցէ . իմ զի՞ կայ 'նդ կռիւ և ընդ օձան :
 Ասաց հըսյրեաց տոչորեալ , և եռային յըստակ հոսանքն ,
 Որպէս կաթասյ ներքուստ յեռանգն հարկանի հըրով մեծաւ
 Ի հալիւ ճննճերիւ ըզպարարակ խոզինւոյ ճարպ [ի շտապ
 Յամենուստ պըզպըջակեալ , և չոր կըրկուտք վառին ներքոյ .
 Սոյնպէս ուխք իւր գեղեցիկք հըրգեհէին , ջուրն եռանգնէր
 Եւ չկամէր սահել , այլ կայր և տագնապէր ըզնա շոգին՝
 Յոգնիմաստին Հեփեստեայ ի մեծազօր բըռնութենէն :
 Իսկ նա բազուամ աղերսեալ Հերայ՝ զթըռչուն խօսեցաւ

[բանս .

Հիմ որդիդ , Հերա , քան յայլ՝ եկն յուխս անկաւ տա .

[ապակ զիս ,

Ոչ այնչափ ապաքէն մնասակար ես իցեմ առ քեզ ,
 Որչափ այլք ամենեքին տրովագացւոց ձեռընկալուք :
 Իսկ թէ քո հրամանք իցին՝ դադարեցից ես յաներկբայս ,
 Բայց և սա դագարեսցէ . զայս ևս երգնուլ ես յաւելից ,
 Մի երբեք թօթափել ի տրովացւոց ըզժամըն չար ,
 Թէ և Տըոյս համօրէն ստասկչական հուրք խարուկեալ

Մախեսցի, և արիսեան կիզցեն մանկունք պբայեցւոց:

Զայն լըւեալ Հերայի սպիտակածղի աստուածուհւոյն՝
Նոյնհետայն աղաղակեաց առ Հեփեստոս որդին սիրուն:

Հանդարտեա, Հեփեսա որդեակ գերփառունակ: զի չի
[ի գէպ՝

Ակն առեալ մահկանացուայ՝ այսպէս տռչիլ զաստուածն
[անմահ:

Զայս ասաց, և Հեփեստոս շիջոյց ըզհրաան աստուածա-
[ոտսա,

Եւ ալիքն անդրէն ընդ կրուկ ի գեզեցիկ գնացին յատակս:
ՀՈՄԵՐՈՍ • Իւխիս:

ԱՐԿԱՆՔ ՆՈՎԱԲԱՅՑ

Պակեաւ ողջոյն Լիւգիա, և ընդ քաղաքսըն Փռիւդացւոց

Ընթանայր համբաւ իրին, և ընդ հանուր ծաւալէր զրոյց:
Նիովքէ գեռ ևս աղչիկ գողով մատաղ ճանաչէր զնա,

Մինչգեռ կոյսն ի Մէոնիա և ի Սիպիլ կայր բընակեալ:
Այլ ոչ ինչ ընդ Արաքնեայ իւր բնակակցին խրատեալ պ-
[տի՝

Ակն ածել յերկնաւորացն, ոչ մեծաբանըս բարբառել,
Բազմօք ի սիրա իւր փըքայր, այլ ոչ արուեստք իւր ամուս-

[նոյն,
Ոչ զարմ տոհմից երկոցուն, ոչ քաջազէնըն պետութիւն

Այնպիսի քաղցրանային, թէպէտ բընաւքն իսկ հեշտաբերք:

Զերդ զաւակացըն սերունդ, և Նիովքէ բարեբաստ գոյր

Քան ըզբընաւս ի կանանց, թէ ոչ ի սիրտ իւր մեծանայր:

Զի Մանտով կոյս Տիրեսեան, հանգերձեւըցըն կանխագէտ:

Լի վերինն ազգեցութեամբ՝ ընդ պողոտայս ձայնէր մոլեղ-
« Իսմենեանք, օն ելէք երամովին, և Լետովայ [ւեր-
Եւ երկեակ իւր ծընընդոց տուք ջերմ մազթանս խընկանը-
Ի սարգենիս հերքըդ հիւսցին, պատգամ յիմ շւրթն այս
[Լետովայ »:

Մըտադիւր հըպատակեալ Թեբայեցւոցըն համօրէն,

Ըզգըլիո՞վքն ըստ պատգամին ուրոս ածեն տերևախիտ,
 Ի սըրբանուէր արկեալ հրատ ընդ դալարեաց՝ խունկս ա-
 [զերոից :

Եւ ահա գայր Նիո՞վքէ ընդ ընկերացն երամ պայծառ,
 Գեղաշուք ի փռիւդացի արկանելիսն ոսկեճամուկ :

Ի՞ճեք անոյ՞՛ կէտ վառ ցասմամբ, շարժեալ գըլիո՞վքն նազելի
 Զհեր ծամիցն ի ծալ ծաւալ առաի անտի վէտ վէտ զուլամբ :
 Առ ըզտեզի, և զիւրե շուրջ բարձրայոն աչս ածելով,
 « Զինչ այդ շամբուշ մոլուծիւն, տակ, զաստուածան ական-
 [Զալուրս

Քան զակն յայտնիսն ընտրել դեր, կամ հի՞մ լիտով առցէ
 [պաշտօն :

Յերբ ինձ խունկք ոչ մատչիցին, եմ էս ծընունդ Տանտալուսի,
 Ում միայնոյ լոկ եհաս ընդ գիս բազմել խրախճանակից :

Ատլանգուհին է ինձ մայր, և նախահաւ Առլասըն մեծ,
 Որ զսըռնակն եթերական ի յուսըս իւր բարձեալ տանի :

Արամազդ երկրորդ ինձ հաւ, որոււմ պանծամ գոլ համազուն-
 Փաիւգացիք սարսեն յինէն, և եմ գըլիոյ տանըն կադմեան :

Եւ ի լարս երգոց փանգաւան իմ ամուսնոյս կանգնեալ պա-
 [Րիսպք

Եւ ազգք որ ի նոսա՛ կան ընդ մերովըս վարչութեամբ :
 Յոր և կոյս տանըս յարկաց զաչս իմ յածեալ դարձուցանեմ՝

Գանձք անբաւ դան ի տեսիլ, և է յիս ճահ շուք գիցուհւոյ :
 Յաւելցին ևս ի ոստին դըստերք իմ եօթն և եօթն ուստերք :

Եւ ընդ հուպ որ առ նոքօք երամք հարսանցն ընդ փեսայից :
 Տո՛ւք ինձ բան ուրեմն ապա թէ ոչ յիրաւս ինչ պարծիցիմ :

Եւ չգիտեմ ի՞ր հանդուրժէք դասել քան զիս նախապատիւ
 Ըլլեա՞ծ ըզտիտանեան կեւսայ զաւակ, որոււմ երբեմն

Յըմբըռնելն ի ցաւս երկանց չեա խուն տեղի երկիրըս մեծ :
 Երկնից յերկրէ յանդընգոց զըսարեալ ձերդ աստուածուհի

Մոլորէր ընդ համաշխարհ, մինչև ուրեմն ապա՝ Իելոս [գեհ,
 Իութ ամեալ թափառելում : Իու ընդ երկիր, ասէ, նրժ-

Եւ էս յանգունգս ի ծըփանի. և եա ըզվայրըն ծըփանուա :
 Նա անդէն ծընաւ երկուս, զեօթներորդ մասն իմ արգան-

[գիս :
 Երջանիկ եմ, ո՞վ ինձ զայս զլասցի ընդգէմ. եղէց իսկ միշտ :

Եւ զ' ընդ այս երկմբուէ զք, կամ յեց ի խումբս այս յողնա-
 Ո՛չ իւիք ինչ զօրեսցէ բազդըն լինել ինձ գամագիւս . [հոյլ .
 Զի որչափ հատցէ բազուժ, գեռ ըզշատ մասն առ իս կաւայց-
 Քաւ յինէն խէթ երկիւղի . այլ եգեալ իսկ թէ ինչ բարձցի
 ի բազմերամն ամբոխէ աստի իմոցըս զաւակաց ,

Բայց ոչ զուրկ յայլոց բնակից՝ երկուց ևեթ լինիցիմ մայր ,
 Հանգոյն լետովայ՝ որ չէ ընդհատ ինչ յանորդւոյ :

Փոյթ ի բագնացգ ելէք ի բաց , թողէք զըլորսըգ սարգե-
 [նեաց ր :

Նոցա թողեալ , և զնրւէրսն անդէն լըքեալ կիսակատար ,
 Որպէս ինչ մարթէրն յայնժամ՝ պաշտեն ըզգրօն ի մեզմ
 [մըմանձը :

Ըզարեալ աստուածուհւոյն , ի գարևանգ Ծայրից Կիւն-
 [թեայ

Բարբառեալ առ երկոսին ձայն առ որգիսն արկանէր զայս .
 « Ահա ես ձերոյին մայր , պատուեալ ձերովքգ Ծընըն-
 [գեամբ :

Եւ կամ թէ՛ թճզ ըզլէրա , ըզգիցուհեօքըն զանցուցեալ .
 Թէ իցեմն աստուածուհի՝ տարակուսեալ կամ արգարև :
 Ի բագնացըն նուիրական դարուց ի դարս յաւիտենիս
 Ահա մերժիմ ես , որգեակք , թէ չըսայցէք ձեռն օգնու-
 [թեան :

Ոչ այս լուկցաւ իմ սըրտիս , այլ զի յեզեռն այսօն յաւելեալ
 Իշխեաց ըզձեզ Տանտալեանն իւրոց որգւոցն յետագասել ,
 Կոչելով զիս անսրգի , որ օչ թէ գոյր ինքն անզաւակ ,
 Նըմանեալ ամբարըշտին իւրում ծնողին չարալեզուի ո :
 Զայսոսիկ խօսեալ լետով , նաև ազերս յօգել կամէր :

« Լուեցո գրողքգ , ասէ Փերոս , որով պատժոյն յապազէ
 Ըզնոյն և Աքտեմիս , և սրաթռիչ սահեալ ընդ օգ՝ [ժամ » .
 Ի գըզեակն հասին Կազմեայ , պատեալ ամպովք քօզտԾա-
 [ծակ :

Էր անգ առ պարըսպօքն հարթայարմար դաշտ լայնածիր
 Յոանատրոփ բախեալ գրընգիւն յանգադար վազս երիվա-
 [բաց :

Ուր գըռոյթ կառացն անուոց և սըմաւկացըն կարծրակուռ
 Փըխրեալ ըզհողակոշաս ընդ վայրն ի ցիր հարթեալ էին :

Անդ ԿՐԻՍՏՈՍԻ զՕՐՈՒԹԵԱՄԲ յԵՌԹԱՆՅ ՈՐԳԱՆՅ ԱՄԷԻԻՅՆԵԱՅ
 ԱՇՏԱՆԱԿԵՆ յԵՐԻՎԱՐ, ՃՐՆՆԵԱԼ զՔՐՄԱՆԿԸՍ ԿԱՐՄԱՂԱՐԳ՝
 Ի ԾԻՐԱՆԻՍ ՏԻՒՐԱԿԱՆՅ, և զԿՈՒՄ ՎԱՐԵՆ ՍԱՆՃԱ ՈՍԿԷԿԱՂՄԻ
 ՅՈՐՈՅ ՄԻՋԻ ԻՍՄԷՆՈՎԸ, ԵՐԿՆ ԱՌԱՋԻՆ ԾՆՈՂԻՆ ԻՒՐՈՒՄ,
 ՄԻՆՆ զԵՐԻՎԱՐՆ ՀՈՂՈՎԵԱԼ շՈՒՐՂ Ի ԱՂՏՈՅԱ ԲՈՂՈՐԱԾԻՐ
 ՍԱՆՃԷՐ զԿՐԴԱԿԸՆ ՓԸՐՓՐԵՐԵՐԱԽ, « Ո՛՛՛՛՛ ԻՆՃ ԵՂՈՒԿ », ԳՈՂԵԱՅ
 ԵՒ ՏԱՆԷՐ ԸՂՐՂԱՔՆ ԸՆԳ ՄԵՂ ԿՐՐԾԻՅՐՆ ԽՈՐԱՄՈՒԽ. [անդէն.
 ԵՒ Ի ՃԵՌԱՅ ԸՔՔԵՆՅ ԵՐԱՍԱՆԱԿԵՆ Ի ԲԱՅ զԵՐԾԵԱԼ,
 ԸՆԳ ԱՂ ՈՒՍ ԵՐԻՎԱՐԻՆ ՏԱԿԱԼ ԿՈՒՄԱՂԵԱԼ Ի ԿՈՂԱՆ ԿՆԿԱԼ:
 ԱՆԳ ՍԻԱԿԻՐՈՍ Ի ՇԱՂԻՆ ԱՆԵՐԵՆՅԹՐՆ ԿԱՊԱՐՃԻՅ [ՈՒՂԻՂ
 ԹՈՒՂԱԿԻ ԹՈՂԵԱԼ ԸՂՍԱՆՃ ՃԵԱՅ ՏԱՅՐ յՐՇՏՏԱՊ, զԵՐԳ ՆԱԼ-
 ՏԵՍԵԱԼ ՂԱՄԱՅ ԽՈՒՍԷ Ի ԲԱՅ՝ ԹՕՆՐՆԿԷՅԻՅՐՆ ԿԱՆԽԱՂԷԱ,
 Չ՛Ի ԿԻՒ ԱՊԱՐԸԵԱԼ ԱՌԱԳԱՍՏԱ ԸՆԳ ՔԱՂՅՐԱՇՈՒՆՆ ՄԻՂՄ՝
 [ՀՈՂՄՈՅ ՂԷՄ՝

Ի ՃԵԱԿԵՐՆ ՃԻԱԹԱՓԻ՝ ԹՐՈՒՄԵԱԼ ՆԵՄՆ ԱՆՓԱԽԷԼԻ,
 ԵՒ ՄՐԻԵԱԼ ՏԱՅՐ ԱՂՂԱՔԻՆ ԸՆԳ ԾԱՅՐ ՈՒՂԱՆՐՆ ՏԱՍՏԱՆՄԱՄԲ
 ԿԱՅՐ ՄՐՆԱՅՐ Ի ԿՈԿՈՐԴԻՆ ԵՐԿԱԹՐՆ ՄԵՐԿ ԳՐԵՂՈՒՄ Ի ԳՈՒՐԱ.
 ԻՆՔՆ ՈՐԱՔԷՍ ԷՐՆ ՀԱԿԵԱԼ ՄԵՍ, ԸՆԳ ԲԱՇԱ ԸՆԳ ՎԻՂ ՍՕՍ ՀՈՂՈ-
 [ՎԵԱԼ

ՀՈՍԷՐ ԹԱԼԱԼ, ԹԱԹԱԼԵԱԼ զԵՐԿԻՐ ԱՐԵԱՄԲՐՆ ՉԵՐՄԱՂԵՐՄԻ
 ՊԵՂԻՄՈՎԱ ՀԷՔՆ և ՏԱՆՏԱՂՈՍ, ԱՆՈՒՄՆ ՀԱՌՈՒՆ ԻՒՐ ԺԱ-
 [ԱՆԳՈՐԳ,

ՄԻՆՆ Ի ԿԱՍԱՐ ՀԱՍՈՒՄԵԱԼ զՐՆՏԵՂԱԿԱՆ ԽԱՂԱ ՀԱՆԴԻՍԻՅ,
 Ի ՄՐՐԿԱՆՐԱ ՄԱՆԿԱԿԱՆ՝ ՂԻՆՂ յՐՄՐՇԱՄԱՐՏՈՍ ԱՆԿԱՆԷԻՆ,
 ԵՒ ԼԱՆՂԱ Ի ԼԱՆՂԱ ԱԾԵԱԼ ԱԿՂՄ ԿԱՅԻՆ ՓԱՐԵԱԼ Ի ԳՈՒԱՊԱՐԱԾ,
 ՃԱՅԹԵԱԼ ՆԵՍ ԱՅԻՆԳ ԱՂԵՂԱՆ ԹԱՓԻ յԵՐԿՈՍԵԱՆՆ ԱՆԿԱՆԷՐ
 [ՇԷՇԱ:

ՉՈՅԳ ՀԵԾԵՅԻՆ ԵՐԿՈՔԵԱՆ, և զՈՅԳ ԱՌ ԳԱՒԱՆ ՀԱԿԵԱԼ ՄԱՐ-
 [ՄՆՈՎ

ՏԱՊԱԼԵՅԱՆ ԸՆԳ ՂԵԱՄԻՆ, և ԱՌ ՄԻՄԵԱՄԲՔ ԹԱԼԱԼԱՂՈՐ
 ԸՂՄԱՀԱՔՈՒՆ ԱՅՆ յԱԾԵԱԼ ԹՕԹԱՓԻՅԻՆ ՂՈՐԻՍՆ Ի ԲԱՅ:
 ԱՂԱՄՆՈՎՐ ԸՆԳ ԱՅՆ ՏԵԿԻՂ ԲԱԽԵԱԼ ԸՂԿՈՒՐԾԱՐՆ ԿԵՂԵՔՄԱՄԲ
 ՎԱՂԷՐ Ի ՃԵԱՅ ՏԱԳՆԱՊԻ ՓԱՐԵԼ ԸՂՅՈՒՐԱ ՄԱՐՄՆՈՎՔՆ Ի
 [ԴԻՒՐ.

ԱՂ ԱՆԿԱԼ յՐԱՊԱՍՐՆ ՍՈՒՐՐ. ՔԱՆՂԻ յԵՐԿԱԹ ՕՐՀԱՍՏԱՐԵՐ
 ԴԵԼԵԱՆՐՆ ԱՊԱՏԱՌԵԱՅ ԸՂՍՐՐՏԱԳՈՒՐԱՐՆ ԽՈՐԱՄՈՒԽ.

Զոր կորզեալ թեք սըլաքաւն ըզթոքոյն մասն ի գուրս խը-
[լէք,

Եւ ցընդէր զոգիսն ընդ օգ խառն ընդ արեանն ապաժուժի:
Այլ չանկաւ ի մի հարուած Դամաօթիկանն զպատանեակ,
Կարեվէր ի մասին ուր բարձք սրունիցն արձակեն ծայր
Եւ ուր ճապուկ յօգակապք են ընդ ազգերսն նեարգա-
[պատ.

Մինչ նա դեռ ջանայր ի բաց քարշել զաշաէն մահահամբոյր,
Միւս այլ նեա փետրոճք չափ ընդ փողս ուլանն վարոէր
[մուխ.

Զոր ժայթքեալ արիւնն ոստոյց, և բարձր ի վեր շէշտ ցայ-
[տելով

Քաջ ի բաց ընդ մէջ օգոյն սըփռեալ ցընդէր ցիր ծաւալ-
[մամբ:

Հուսկ վերջինն Իլիոնէոս ըզձեռս յերկինքս տարածեալ՝
Պազատէր անլըսելի, և «Ո՛վ, ասէր, աստուածքդ համայն,
Յիս, ո՛վ դիք» անգիտացեալ թէ չեն համայնքն լըսելիք:
ՅԱզիզնաւորն յուզեցաւ գութ, անգառնալին մինչ ճախրէր
[նեա.

Այլ անկաւ ոչ դառնավէր, ոչ խոր ընդ սիրան հարեալ ի
[սլաք:

Բօթ գուժին, ամբոխին ցաւ և իւրայոցն արտասուաց կոծ
Յանկարծադէպ աղէտիցն առ մայրն եղեն համբաւաբերք,
Որ կայրն ընդարմացեալ և զայրացեալ սըրամբուտութեամբ
Թէ իբր աստուածք մինչ ցայդ վայր հանգուրժիցեն գոլ
[ձեռընհաս:

Անգուստ և հայրն Ամփիոն հարեալ ի սիրտն երկաթով,
Շընչասպառ ընդ կենաց լուսոյն՝ ցաւոցն առնէր վախճան:
Ո՛վ քանի ի նախնոյն արգ փոփոխուամն ի Նիովթէ,
Որ ի բագնաց Լեռովայ ըզժողովուրդն ի բաց վարէր
Եւ ընդ մէջ քաղաքին նազաճնմէր սօս բարձրավիղ,
Իւրայոցն ասելի, արգ թըշնամեացն իսկ զըթալի: [յածմամբ
Հեղոյր զանձն ըզցուրտ մարմնովքն, և անխըտիր յախուած
Որգեկացն իւր համօրէն պաշտէր ըզհուսկ յետինն համբոյր-
Յորոց ապա զկապուտակ ծըղինն յերկինքս համբարձեալ,
«Իերկրեցիբր, անգութ Լեռով, ասէ, ցաւովքս իմ բեր-
[կրեցիբր.

Յագեսցի սիրագ աննըւէր, Վըշտօքս ազեքըգ յագեսցին:
Մեռանիմ եօթըն մահունս. խընդա ոսոխգ ինձ յազթական:
Այլ զինչ ասեմն յազթական. գու բարերաստգ ահա չես

[Ճոխ

Գան զիս ըզհիքացեալս, որ յետ այսչափ մահունցս յազ-
[Թեմ]:

Ի խօսեւ նորա այսպէս, ձիգ ազեզան շառաչեալ լար,
Բայց միայն ի նիսվրեայ՝ դողունն էարկ յամենեսին,
Որ առ չարեացն արկածից յանդըգնագոյնըս խիզախէր:
Գորքն հերարձակ թըխազգեստք կային զեղբարցըն դագա-

[ղօք.

Յորոց մին կորզեալ ի բաց զ'ի մած կըռուեալ յազինն ըզ-
[նեա,

Ձերեսսըն մահատիպ արկեալ յեղբայրըն պակասէր.
Միւսն այլ փութացեալ ըզչուառական մայրն ըսփոփեւ,
Լըռեաց յանկարծակի, զանխուլ վիրօքըն կորացեալ.
Եւ ոգւոցն ի պարզէլ կափուցանէր ըզըւրթն ամփոփ:
Էր որ նուազէր յընդվայր իւր ճեպ, էր որ առ քերքն ան-

[չընչանայր,

Սա աստ ծածկէր թաքըստիւ, նա անդ զոփայր քըսամնա-
[տարսուռ:

Վեցեցունցն այսպէս զրուեալ պէս պէս վիրօք, վերջինըն
[մնայր.

Ձորով մայրն համատարած փարեալ անձամբն և հանդեր-
[ձիւ,

« Ըզմիս զայս թո՛ղ ինձ, ասէ, ըզհուսկ կըրտսերս ինձ պա-
[հեսջիր.

Ի բազմացգ այտի ըզմին և ըզկըրտսերն ևեթ խնդրեմ ».

Այլ և նա սր վասն հայցէրն ազերսանօք, անկաւ մեռեալ:
Եւ նըստաւ անզաւակեալ ընդ մէջ որդւոցն, առն և գըս-
[տերց.

Աւ վըշտին մածեալ քըսամնեալ, և ոչ ի հոզմ ծածանին
[հերք:

Երեւք աըմոյն և գուհատ, ի աըխուր այտն անշարժ կան
[աչք.

Ձերեէր ի կերպարանսըն բնաւ նըշմար կենդանութեան:

Լեզուն իսկ ի ներքս անդ խոր և կարծրը քիմքն հարեալ է
[պազ,

Ուն, երակունք ապիկար ի խըլըրտուձն ուր մէտ դաշար.
Ապիկար շարժել ըզձեռն և կամ փոխել զոտն յոտանէ.
Եւ ի ներքս անդ փորոտիք իւր կարծրանան զիմաստաւեալ:
Այլ գեւ լայր. զորով պատեալ գոռ մըրըրկաց փոթորկա.
[շունջ

Շուպեցին ի բնիկն իւր վայր. ուր ի կատար ցըցուեալ լերին
Կողկողի ողբանըւէր, և ցարգ արասուրը կաթեն վէմք:

ՈՎԻԴԻՍՍ. Այլաբանութիւն:

Լ Ա Յ Ո Վ Ո Վ Ն

Մեծ և ո ինչ անդ և առաւել յոյժ ահարկու պատաշար
Դիպեալ հիբացըն՝ զանըզոյշ սիրաբն նոցա խըռովեցոյց.
Լայրկոյն զիճակաւ ընտրեալ ի քուրմ Պիսիգոնի,
Յորժամ եղն ի բագնի զենոյր ըստուար հրապարակաւ,
Ահա զիշապք երկու, սոսկուձն է ինձ պատմել, ի Տենեգեայ
Ընդ ծով հողմախազաղ վերաբազմեալ ի մըկանունս
Լայնասփիւռ ոլորտիւք գան զուգտհեա յեզերըս կոյս,
Ուղղաբերձք ի ծուփս անդ լանջք, գեր ի վերոյ քան զալիս
Բաշք հարթուցեալք արիւնաներկք, այլովք մասամբքն
[յեցք ի ծով:

Չանհեթեթ ըզարտունսրն պատ ի պատ գալարելով.
Հընչէր սոսաւիւն ընդ փըրփրադէզ ալիս ծովուն,
Եւ ահա շասեալ յերկիր՝ բոց ի հրացոյս յարիւնըսուշա
Սըփուեն յաչաց, և ըզըզող շըրթամբք ճապուկ ձօձեն լե.
[զուս:

Խոյս ի տեսոյն աըւաք ի ցուրտ հարեալ սարսափ. նոք
[գիմն

Դեպ ուղիզ ի Լայրկոյն, և ըզմատաղ նախ ըզմարձնով
Որգեկացն երկուց պատեալ՝ զանգամս հիբացըն խածասան.
Ապա և յինքն յարձակեալ, մինչ զէն առեալ գայր յօգնու.
[թիւն,

Կապեալ ըզնա ի պարոյրըս մեծամեծըս կաշկանգեն,
 Երկիցս ընդ մէջըս նորա, երկիցըս շուրջ զուլամբն արկեալ
 Ըզքընթըռնոցսըն թեփամորթ, և զպարանոց ի վեր ջը-
 [ցուեալ

Գըլխովին: Նա ըզհանգոյցըս մերթ խըզել ճըգնի ձեռօք,
 Վարսակալքըն թաթաւին ի ժահըր թուխ և ի շարաւ,
 Եւ մերթ սոսկալի բառնայ յաստեզս աղաղակ.
 Որպէս պոչիւն զըւարակի փախուցելոյ խոց ի բազնէ,
 Ըզգերևեալն ի հարուած հերքեալ ըզսակը յուլանէն:
 Ապա վիշապքըն երկոքին սողոսկելով բարձր ի գըղեակ
 Աննըւիրին արիտոնեան աստուածուհւոյն գիմեալ ի վեր
 Աւ ոտըս նորա ընդ ասպարաւն ապաւինին:

ՎԻՐԳԻԼԻՈՍ. Ենէտիս:

Ա Ղ Ե Ր Ս Ք

Քանզի են և Աղերսք Արամազդայ մեծին գըստերք,
 Կաղ սախւք, խորշոմերեսք և շիւ աչօք ակընկորեալք,
 Որ և զհեա Եզերան հոգածուլթեամբ կըրթին երթալ:
 Իսկ Եղեռն՝ հըզօր, ողջոտն, ոյր աղագաւ զամենեքումբք
 Յառաջեալ ընթանայ, և ժամանէ նգ երկիր ողջոյն
 Առ մարգկան փնասելոյ, և նոքա զկնի տանին գարման:
 Որ յերեսաց գըստերացըն պատկառէ Արամազդայ,
 Մեծապէս օգնեն նըմին, և յաղաչելն ունկըն գընեն:
 Իսկ որ կայն և անկուշէ և չառնու յանձըն կամակոր,
 Յայնժամ գնան պաղապին առ Արամազդըն Ջըրուանեան,
 Զի անկցի Եղեռն ընդ անձն իւր և առուժեալ լուծցէ վըրէժս:

ՀՈՄԵՐՈՍ. Իւլիսիս:

Հ Ա Մ Բ Ա Ի

Վաղ ընդ քաղաքըս մեծամեծըս Լիբիոյ գընայ համբաւ,
 Համբաւ չարագոյժ՝ քան զոր չիք ինչ երագընթաց • [Թիւն •
 Գնալով երթայ և ստուարանայ, աճէ գնացիւք ի զօրու •
 Դոյզն ի սկըզբան առ երկիւղի, յայերս ընդ հուլ վերամբ •
 [բառնայ •

Յածի ընդ երկիր, և յամպս ըզգլուի իւր ծըրարէ •
 Մայր երկիր ի ցասմանէ գիցըն գըրգեալ, ըստ զըրուցաց,
 Ենկեւադեայ և Կէոսի ծընաւ ըզնա քոյր կըրտսեր •
 Երագոան երագաթև հըրէշ ահեղ հըսկայաձև,
 Որոյ որչափ են փեատուրք՝ նոյնչափ հըսկեն աչք ընդ նոքք,
 Նոյնչափ լեզուք, նոյնչափ բերանք հընչեն, նոյնչափ լըսեն •
 [ահանջք •

Ոչ խոնարհէ զարտեանունըս քաղցր ի նինջ, բազմի ի տուէ
 Դէտ ի տանեաց բարձր ի գըմբէթ և յաշտարակըս բար •
 Արհաւիրս ի մեծամեծ քաղաքանին արկանէ, [ձրաբերձ,
 Մերթ եղերանց և կեղծեաց, մերթ հաւաստեաց պատգա •
 [մաւոր •

Վիրգիլիոս • Ենեւիան •

Թ Ա Տ Ե Ր Ա Կ Ա Ն Ք

Հ Ր Ա Ժ Ե Շ Տ Ս Ա Ռ Ա Յ Յ Ի Ս Ա Հ Ա Կ Ա Յ

Ս Ա Ռ Ա

Դառնակըսկիծ և հէք մայր,
Փոքրը միւս ևս, և չիցես մայր, եզուկ դու.
Սիրան անարատ հարեալ ի սայր սուսերի,
Ս- ի վերայ սեզանոյ
Հեզցի արիւն իւր անպարտ:

Ո՛հ, ըզսուսերըն զայն արգէն ըզքամ ի սիրտ իմ մըխեալ-
Ընկալ, ո՛վ Հայր ամենակալ, ըզվիշտ իմ քեզ ի հաճոյս,
Ի սըրտէ աստի իմմէ լիցի ըսկիզբըն զոհին.
Ո՛հ, քան զարեանըն զոր խընդրես՝ չիցէ Թերեւս նըւազ
Զոհս այս զոր քեզ նուիրեմ զիմոցս աղետից:

Սոռա, Իսահայի

Ի Ս Ա Հ Ա Կ

Մայր իմ:

Ս Ա Ռ Ա (Ի Ժ-Ժ-Ի)

Անուն ազիողորմ, ըզմայլելի կերպարան:

Ի Ս Ա Հ Ա Կ

Ո՛ւր է հայր իմ, չէ՛նա ընդ քեզ. երթայց այլուր ի խընդիր:

Ս Ա Ռ Ա

Անաս, լուր ինձ. յաւե՛լ ինձ, Տէր, զօրուԹիւն (Ի Ժ-Ժ-Ի):

ԻՍԱՀԱԿ

Ո՛չ գիտիցես զի պատրաստի արդ զո՛հ մեծ,
Եւ պարտ է ինձ կալ առ ընթերթի զօհին:

ՍԱՌԱ

Գիտեմ, որդեակ, գիտեմ զայդ:

Սառա, Իսահակ, Գամար

ԳԱՄԱՐ

Զի գանգաղիս, Իսահակ,
Փռութեմ, խընդրէ հայր քո զքեզ:

ԻՍԱՀԱԿ

Աւասիկ եմ. բարեաւ մընա, մայր իմ, մընա դու բարեաւ:

ՍԱՌԱ

Ո՛հ մեռանիմ. կաց դու վայրիկ մի, մի այսպէս թողուր զիս:

ԻՍԱՀԱԿ

Զի հառաչես, ընդէր լաս:

ՍԱՌԱ

Ո՛հ, անորդի մընամ ես:

ԻՍԱՀԱԿ

Գարձայց ընդ հուպ. իցէ՛ նախկին այս նըւագ՝
Զի զքեզ, ո՛վ մայր իմ, թողում:

ՍԱՌԱ

Ո՛հ, զայս նըւագ... ո՛հ, չիք ուրուք կըրեալ ազէս այս.
[պիտի:

ԻՍԱՀԱԿ

Զի է, Գամար, չիմանամ.
Սիրա իմ յերկուս տասանի,
Ընդ վիշտըս մօր և ընդ հրամանն հայրենի.

Կամիմ կալ աստ, միանգամայն և մեկնիլ.

Իմըս Գամար, գուռ որ եզեր և ես միշտ

Ինձ բարեկամ սիրելի,

Մինչև ի կուրծս իմ տալ գրլխոյ քու՛մ հանգիստ,

Խընամ կալիք ըզնըմանէ ցորչափ կացից ես ի բաց.

Լեր օգնական նրմա բանիւ և գործով.

Մայր իմ, ահա որգի քո,

Մինչև գարձայց ես այսրէն:

ՍԱՌԱ

Քանի խընամ, քանի գորով, քանի սէր:

ԻՍԱՀԱԿ

Այլ արտասուուես գուռ աակաւին, և զի՛նչ առնել իցէ ինձ.

Գիտես զի հայր իմ կամի...

ՍԱՌԱ

Այո՛ գիտեմ, որգեակ իմ, երթ լընուլ ըզկամս հայրենի.

Նոյն կամք են ինձ, թէ և սիրտ իմ մորմոքի.

Երթ... լուր... ո՛չ Տէր. ընկալ, որգեակ, ըզհամբոյր մօր

[քո և երթ:

ՄԵԹԱՍԹԱԶԻՈՅ. Իսահակ:

ՅՈՎՄԻՓ ՅԱՅՏԵՆԷ ԶԱՆՁՆ ԵՂԱՐՈՑ ԻԻՐՈՑ

Յ-վեթի, Առնէլ, Տանէլ, Յո-դա, Բենիամին ըսդ այլ ելբար-

Յ-վեթայ:

ՅԱՆԷԹ

Ահաւաստիք, սէր, առաջի քո յանցաւորք ածեալ կան:

ԱՍԱՆԷԹ

Ամենեքին անկեալ յերկիր յոտըս քո:

ՅԱՆԷԹ

Եւ ոչ խօսել ինչ ոք իշխէ ի նոցունց:

ՅՈՎՍԵՓ

Ձինչ են, անմիտք, իրքըդ զոր դուք գործեցէք.
Ոչ գիտէիք զի հմայելով հրմայե այք իբրեւ զիս:

ՅՈՒԴԱ

Ձինչ տացուք, տէր, պատասխանի. զինչ խօսեւ,
Ձինչ իրաւունքս ցուցանել կարիցեմք.
Յիշեաց Աստուած ըզձառայից քոց ըզմեզս,
Եհաս մեզ ժամ տալ զեղեռան մերոյ վրէժ:
Յաւիտենից Տէր, ճանաչեմ ըզձեռն քո վրէժ խընդիր:

Եւ տեսանեմ զարդարութեան քո զգաղտնիս
Ընդդէմ մեղաց սահմանեալ:
Վառես ի սիրտ չարագործին
Բոց՝ որ ըզտիւ և ըզքիշեր
Ծախէ զնորին երկամոռնս,
Մինչև լիցի նա խելամոռտ
Ձի իւ իւիք ոք մեղանչէ՝
Նոքիմքք տանջեալ պատուհասի:

ՅՈՎՍԵՓ

Մի, քաւ լիցի ինձ խըստանալ ձեզ ցայդ վայր.
Առ կըրտսերոյն գըտան գողօնքն, ապա նա ինքըն միայն
Կացցէ մնասցէ աստ ծառայ.
Իսկ դուք երթալք խաղաղութեամբ առ հայր ձեր:

ՅՈՒԴԱ

Այլ մեք որով երեսօք, տէր, դառնալ առ նա կարիցեմք:

ԲՆՆԻԱՄԻՆ

Յիս տէր, և զինչ. կացից ես աստ միայնակ:

ՅՈՎՍԵՓ

Գու միայնակ, այլք մեկնեսցին ճն ի բաց:

ԲՆՆԻԱՄԻՆ

Կացէք, լուարուք ինձ, ո՛հ, այսպէս կաս ի խոստման քում,
[Յուգա-
Գոնեա զհամբոյր հրաժարակամ ընկալարուք, եղբարք իմ.
Ահա մեկնիք դուք, ես մընամ աստ գերի:

Հայր իմ, զիմորդ ասուականցիս ի լռսել քո զգոյժըս զայս :

Եթէ իցէ ձեզ ի սըրտի
Գուժ ընդ եզբայր ձեր եզկեղի :

Գէթ դուք, եզբարք իմ, դուք ընդ իմ
Գողջիք նըմա զի ես կեամ,
Գողջիք զի զինքնն սիրեմ :
Այլ ասիցէք մի նըմա
Քէ յոր ազէպըս կամ աստ :

ՅՈՎՍԷՓ (ի Ծածոնի)

Համբեր, սիրտ իմ, վայրիկ մի և ըս ժուժեա :

ՅՈՒԴԱ

Իցէ Երբեք թէ զիջցի, տէր, սասա քոյին :

ՅՈՎՍԷՓ

Ետու հրաման, կացցէ, մի և ըս գարձցի :

ՅՈՒԴԱ

Լուր ծառայի քուժ, տէր, և մի բարկասցիս :

ՅՈՎՍԷՓ

Փուժս ասա, և զի՛նչ ասել ունիցիս :

ՅՈՒԴԱ

Յիշէս զի տէրդ ի գալ մերուժ ի սկըզբան... :

ՅՈՎՍԷՓ

Յիշեմ այո, հրամայեցի զԲենիամին ածել ինձ :

Եւ ասացէք զի Ծերունի հայր նորա՝
Ջուրկ ի նմանէ չըկարէր կալ, մեռանէր :
Եւ յաւելի սպառնալ ձեզ,

Առանց նորա զերեսս իմ մի երբեք յուսալ անսանել :

ՅՈՒԴԱ

Դարձաք այդու քո հրամանաւ առ հայր մեր :
Նա զմեզ դարձեալ յորժամ առ տէրդ յուզարկէր,
Ի ջուր է մեզ, ասեմք, գընալ՝ թէ չիցէ
Բենիամին ընդ մեզ եզբայր մեր կըրտսեր :
Ասէ ցըմեզ ծառայ քո հայր մեր լալով :

Ո՛հ, անզաւակ լիցի ուրեմն ինձ մընալ:
 Երկու միայն ի Հուպեիէ, գիտէք, եզեն ինձ որդիք:
 Քաղանակուր կորեաւ ինձ մին ի նոցանց,
 Դուք ինձ ըզգոյժըն ետուք,
 Ոչ ևս, աւաղ, տեսի զերեսըս նորա.
 Եթէ ըզսա ևս առնուցուք արդ յինէն,
 Եւ թէ արկած ինչ պատահէ զճանապարհայն գըմա չար,
 Ըզծերուծիւն իմ ի դըժոխըս քըրտամուծեամբ իջուսիք:
 Սասականայր սող, ըստիպէր հարկ, և զի՛նչ առնել էր նըմա.
 Եթէ առ իւր կամէր զորդեակն ունել՝ սովով կորընչէր,
 Իսկ թէ թողոյր նըմա մեկնել գալ՝ առ վըշտին մեռանէր:
 Սիրեցեալ հայր, ասեմ նըմա ի վերջէ,
 Հաւատա յիս զորդին քո.
 Եթէ առանց նորա լիցի ինձ դառնալ,
 Ձիս մեղապարտ այնուհետե կայցիս միշտ:
 Լըւաւ նա ինձ, և մեկնեցաք, տէր, ըզհրաման քո լըցի:
 Հայր ես և դու, եղետլ երբեմն և որդի.
 Ըզկիրս իմ արդ բեր առ վայրիկ մի յանձին.
 Ասա որո՞վ սըրտիւ առ հայր իմ գարձ առնել կարիցեմ,
 Առանց զորդեակն ինձ աւանդեալ ի միասին ածելոյ:
 Ո՛հ, մի լիցի, տէր. թող դարձցի Բենիամին առ Յակոր,
 Եւ ծառայ քո կացցէ մեասցէ աստ գերի,
 Չի մի տեսցեն աչք հիքիս
 Ըզհօրն աղէտըս վըշտաց:

ՅՈՎՍԷՓ (Ի Ծածուկ)

Սիրտ իմ գելու, մորմոքիմ:

ՅՈՒԴԱ

Ընդէր ծածկես զերեսըս քո, տէր, յինէն.
 Եթէ չիցեմ ես արժանի գըթուծեան,
 Կըթա ի հայրն աղիողորմ տառապեալ:
 Եթէ զյետին համոյրըս իւր տեսանէիր հայրենիս,
 Հոգի նորա ընդ սիրելոյ որդեկին
 Թըւէր յիւրմէ բաժանել.
 Ոչլ երթ ասէր և կըրկնէր,

Եւ հրաժարեալ՝ դարձեալ փարէր ըզնովաւ .

Էր զի միում ի մէնջ և էր զի միւսում

Ըստեպ ըզնա ապրտարէր յանձն առնէր .

Լայր և յիշէր ըզՀռաքէլ ,

Յիշատակէր ըզՅովսէփ ,

Եւ զերկոցունցն ըզկերպարան ի գէմս որդւոյն նըկատեալ ,

Ողբայր ի նմա զերկաքանչիւրցըն կորուստ .

Եւ զամենայն . . . այլ դու ընդէր արտասուես .

Թեբևս ի գուժ և զքեզ աղէտք մեր շարժեն . . .

Ամենակալ Տէր , գու ի սիրտ նորա յաւել ըզգորով :

ՅՈՎՍԷՓ

Ո՛հ , բաւ է արդ , ընկճիմ , ոչ ևս ունիմ ժոյժ .

Ի կեղծ սաստից աստի ստիպիմ դադարել .

Եկայք ի գիրկս իմ արդ , ես ինքն եմ Յովսէփ :

ՅՈՒԴԱ

Յովսէփ :

ԲԵՆԻԱՄԻՆ

Տէր աէր :

ՇՄԱԻՈՆ

Եղուկ զինև :

ՏԱՆԷԹ

Ո՛ հրաշք :

ԱՍԱՆԷԹ

Յապուշ հարկանիմ :

ՅՈՎՍԷՓ

Մի երկընչիք , մի՛ նգ վաճառել ձեր զիս , եղբարք իմ , հո .

Անտի եհաս Եգիպտոսի , և ձեզ իսկ [բայք .

Յեղեռանէ անտի եհաս փըրկուժիւն .

Յարքունիս այսըր վաղագոյն քան ըզձեզ

Յըղեաց զիս Տէր վասըն ձեր :

Դարձիք դուք արդ առ հայր իմ ,

Եւ պատմեցէք նըմա ըզփառըս որդւոյն .

Գողջիք նրմա զի եկեսցէ լինել հազարդս այնպիկ :
 Ո՛հ, զի՛ լրուէք, մի գուցէ գեռ կասկած էք .
 Խօսեաց Յաւքա, և գու Շմաւոն ըսկոփեաց ,
 Մատիր առ իս Բենիամին եղբայր իմ :

ՄԵԹԱՍԹԱՋԻՈՅ • ՅԵՆԷ՛՛ ԳԵՂԵ՛՛ՅԻ՛ :

ՈՐԵՍՏԷՍ ՅԱՅՏԵ՛ ԶԱՆՔՆ ԷԼԵԿՏՐՈՅ ՔԵՌ ԻՒՐՈՒՄ

ՈՐԵՍՏԷՍ, ԷԼԵԿՏՐՈՍ, ՊԱՐ

ՈՐԵՍՏԷՍ

Ո՛հ, ո՛հ, զի՛նչ ասացից . յո՞ր բանս եկից՝ վարանեալս ,
 Որ ո՛չ և ըս զօրեմ՝ բռնաւորել ըզլեզուս :

ԷԼԵԿՏՐՈՍ

Զի՛նչ վիշտք իցենք , զայդ առ իմե՛ ասացեր :

ՈՐԵՍՏԷՍ

Մի՛թէ այդ էլեկտրեայն իցէ տեսիլք չբքեզ :

ԷԼԵԿՏՐՈՍ

Նոյն իսկ ինքըն նա է , և կարի հէք չուառական :

ՈՐԵՍՏԷՍ

Արդ աւանզ ողորմելի թըշուառութեանըդ այգմիկ :

ԷԼԵԿՏՐՈՍ

Զի՛ է , ո՛վ հիւր , զի այգպէս հեծեծես յիմ վերայ :

ՈՐԵՍՏԷՍ

Ո՛վ մարմին , անասառուած ուանարգարար ծընգեցեալ :

ԷԼԵԿՏՐՈՍ

Ոչ զոք այլ ապաքէն , բայց զիս , ո՛վ հիւր , աւաղես :

ՈՐԵՍՏԵՍ

Աւազ ամուրի եւ եղկական քում կենաց:

ԵԼԵԿՏՐԱ

Ձի այգայեա արգեօք, ս՛վ հիւր, յիս նայեցեալ հաւաչես:

ՈՐԵՍՏԵՍ

Քանզի ոչ ինչ գիտէի յիմաց չարեացն հասեցոց:

ԵԼԵԿՏՐԱ

Իսկ յիմէ՛ իմեքէ յասացելոցքս ծանեար:

ՈՐԵՍՏԵՍ

Ձի բազում չարակրութեամբք նըշանաւոր տեսի զքեզ:

ԵԼԵԿՏՐԱ

Եւ սակայն ըզսակաւս ինչ նըմարես յիմ՝ զքչաաց:

ՈՐԵՍՏԵՍ

Իսկ զիարդ լինիցի գըժոխագոյն ինչ քան զայդ:

ԵԼԵԿՏՐԱ

Ձի սպանչաց եմ կենակից:

ՈՐԵՍՏԵՍ

Ո՛յր. և ուսաթ՛ զայդ ասես:

ԵԼԵԿՏՐԱ

Հօր իմոյ. և զի բըռնի սպաս հարկանեմ ես նոցա:

ՈՐԵՍՏԵՍ

Եւ ո՛վ այն ի մարգկանէ՛ որ ըստիպէ զքեզ յայն հարկ:

ԵԼԵԿՏՐԱ

Այն որ մայրն անուանի, և ոչ ինչ մօր նըմանէ:

ՈՐԵՍՏԵՍ

Ձինչ առնէ. ձեռօք արգեսք, թէ զկեանըս քո ծիւրեւո՛վ:

ԵԼԵԿՏՐԱ

Եւ ձեռօք և զըզուանօք և ամենայն գառնութեամբք:

ՈՐԵՍՑԷՍ

Սև քեզ չիք որ օգնական, և ոչ որ զնա կարձեսցէ:

ԷԼԵԿՏՐԱ

Սև ոչ որ. զի զոր էրն ինձ, դու զնա մոխիր մատուցեր:

ՈՐԵՍՑԷՍ

Քանիօն, ով անբաղդ, գըթամ ի քեզ հայեցեալ:

ԷԼԵԿՏՐԱ

Դու ևեթ ի մարդկանէ, գիտեա, զի այժմ յիս գըթաս:

ՈՐԵՍՑԷՍ

Ձի միայն ես եկի նըմանավիշտ քեզ յաղէտս:

ԷԼԵԿՏՐԱ

Մի՛ արգեօք յազգականացս ուտեմն իցես դու եկեալ:

ՈՐԵՍՑԷՍ

Ասացից զայդ ապաքէն, թէ մըտերիմք են գոքս:

ԷԼԵԿՏՐԱ

Է՛ և է մըտերմութիւն, առ ուխտապահս ասիցես:

ՈՐԵՍՑԷՍ

Արդ ի բաց գիր զայդ անօթ, զի զամենայն ինչ ուսցիս¹:

ԷԼԵԿՏՐԱ

Քեզ ի գիս տըւեալ երգումն, ընդ իս զայդ մի՛ տուներ, հիւր:

ՈՐԵՍՑԷՍ

Աղէ լուր ինձ որ ասեմս, և ոչ բընաւ ստըրջացիս:

ԷԼԵԿՏՐԱ

Վասն արբուն մանկութեանդ՝ ըզսիրելիս մի՛ բառնար:

ՈՐԵՍՑԷՍ

Չառնում՝ յանձն ի քեզ թողուլ:

¹ Ձի զտու աճիւն իւր ի ձեռս քեւնն՝ չարագուշակ համարի Որեւաէս՝ ի տալ նմա ծանօթս զանձնէն:

ԷԼԵԿՏՐԱ

Ո՛հ եղկելիս վասըն քո,
Որեստէս, եթէ ի քո գերեզմանէն զբրկիցիմ:

ՈՐԵՍՏԵՍ

Ա՛ռ ինձ ձայն բարեհըմայ, զի՛ստ արժանի ոչ հեծես:

ԷԼԵԿՏՐԱ

Ընդ եղբայր զբրաւամահ ի՛րր ոչ հեծեմ յիրաւի:

ՈՐԵՍՏԵՍ

Քեզ ինչ ոչ վայելէ զբարբառըդ զայդ արձակել:

ԷԼԵԿՏՐԱ

Եւ այդչափ ինչ անարգ յաչս իցեմ ես մեռելոյն:

ՈՐԵՍՏԵՍ

Ոչ ուրուք յաչս անարգ, այլ սակայն այդ չէ ինչ քո:

ԷԼԵԿՏՐԱ

Իսկ թէ այս Որեստեայն իցէ մարմին զոր կըրեմս:

ՈՐԵՍՏԵՍ

Եւ սակայն՝ ոչ Որեստեայ, բայց թէ բանիւք պաճուճեալ:

ԷԼԵԿՏՐԱ

Եւ ո՛ւր ուրեմն իցէ տառապելոյն գերեզման:

ՈՐԵՍՏԵՍ

Ո՛չ ուրեք. զի և չիք ինչ գերեզման կենդանւոյ:

ԷԼԵԿՏՐԱ

Ո՛վ որդեակ, զինչ ասացեր:

ՈՐԵՍՏԵՍ

Ոչ գոյ ինչ սուտ ի բանս իմ:

ԵԼԵԿՏՐԱ

Կենդանի ուրեմն է այրն :

ՈՐԵՍՏԵՍ

Եթէ և ես կենդանի :

ԵԼԵԿՏՐԱ

Ապա գու իսկ այն ես :

ՈՐԵՍՏԵՍ

Ձասըդ աղէ յայս արկեալ
 Ի հօրըն մատանի , ծանիր թէ սառնդ խօսիցիմ :

ԵԼԵԿՏՐԱ

Ո՛վ ըյս սիրատենչակ :

ՈՐԵՍՏԵՍ

Սիրատենչակ , վըկայեմ :

ԵԼԵԿՏՐԱ

Ո՛վ բարբառ , ուրեմն հասե՞ր :

ՈՐԵՍՏԵՍ

Մի խընդրեր այլ ինչ յայլուստ :
 (Փարի պերբ)

ԵԼԵԿՏՐԱ

Դու ի գիրկս իմ յայսոսիկ :

ՈՐԵՍՏԵՍ

Այսուհետև միշտ եղէց :

ԵԼԵԿՏՐԱ

Ո՛վ կանայք սիրելիք , քաղաքակից ո՛վ ընկերք ,
 Տեսէք զայս Որեստէս՝ մեռեալ հնարիւք մարթանաց ,
 Եւ այժմիկ ահա հնարիւք հայթհայթանաց պահեալ ողջ :

ԳԱՐ

Տեսանեմք , ո՛վ որդեակ , և ի վերայ գիպուածոցդ
 Աբուսարբ խընդրութեան զեռեալ յաչայս իջանէ :

ԷԼԵԿՏՐԱ

Ո՛վ բեղուն, բեղուն մարմնոց յոյժ սիրելեաց, եկիր արգ,
Հասեր, գըտեր առ որս անձուկն ունէիր:

ՈՐԵՍՏԷՍ

Աստ եմք աւասիկ, այլ կաց մընա լըռելեայն:

ԷԼԵԿՏՐԱ

Զինչ իցէ:

ՈՐԵՍՏԷՍ

Լաւ է լըռել, գուցէ լուիցէ ոք ներքուսա:

ԷԼԵԿՏՐԱ

Այլ երգուեալ յԱրտեմիս՝ յանփորձականն ի միշտ կոյս,
Ոչ ևս այլ արժանի համարեցայց գողուլթեան
Զվայրահար կոյտ ամբոխի կանանց որ անգ ի ներքս են:

ՈՐԵՍՏԷՍ

Սակայն յճշ, զի Արէս և ի կանայս գըտանի:
Քաջ հըմուտ ես և դու՝ զիրացն երբեմն առեալ փորձ:

ԷԼԵԿՏՐԱ

Վայ աւաղ. ի ներքս արկեր աղէտ անամպ, անփտրտա,
Արմուռաց ամենեին, որպիսի մերս ինչ եղև:

ՈՐԵՍՏԷՍ

Զայդ այո քաջ գիտեմ, այլ իրն յորժամ խօսեսցի,
Յայնժամ է մեզ արժան ըզգործըն զայն ածել յուշ:

ԷԼԵԿՏՐԱ

Ամենայն ժամանակ, ինձ ժամանակ ամենայն
Դէպ իցէ արդարապէս բարբառելոյ զայսոսիկ,
Զի հազիւ այժըմ հազ բերան ազտա ըստացայ:

ՈՐԵՍՏԷՍ

Այդմ և ես վըկայեմ. ուստի պահեա դու քեզ զայդ:

ԷԼԵԿՏՐԱ

Ի՞նչ իւրիք:

ՈՐԵՍՏԵՍ

Մի յանդէսս երկայնաբան լինելով:

ԷԼԵԿՏՐԱ

Եւ ո՛րք բանըս փոխեսցէ զարժանաւոր լըռութիւն
Յերևելքո. զի այժմիկ անազգ անյոյս տեսի զքեզ:

ՈՐԵՍՏԵՍ

Բայց տեսեր՝ յորժամ աստուածքըն շարժեցին զիս ի դաւ:

ԷԼԵԿՏՐԱ

Վէհագոյն ինչ ասացեր քան զերախտինն առաջին, [պարհ:
Թէ աստուած այսր ի մեր յարկըս քեզ հորդեաց ճանա-
Ես զայդ՝ առ բարեխնամ աստուածային ինչ ունիմ:

ՈՐԵՍՏԵՍ

Խըղձեմ արգելուլ ըզքընծութիւն քո ի քէն,
Սակայն ի հեշտութեամբ յոյժ պարտելոյք երկընչեմ:

ԷԼԵԿՏՐԱ

Ո՛վ որ ձիգ ժամանակաւ ըզցանկալի ճանապարհն
Արժանի համարեցար դաւ այսր առ իս երևել,
Մի գու մի այսպէս զիս բազմահառաջ յակն արկեալ...

ՈՐԵՍՏԵՍ

Զի՞նչ ինչ մի աւնիցեմ:

ԷԼԵԿՏՐԱ

Ազէ զիս մի զըրկեսցես՝
Ի քու մեջ երեսացդ հեշտութենէն անկանել:

ՈՐԵՍՏԵՍ

Եւ յայլոց թէ արգելցիս, սըրամըտեսցի բարկութիւնս:

ԷԼԵԿՏՐԱ

Հաւան ես:

ՈՐԵՍՏԷՍ

Եւ ընդէր ոչ:

ԷԼԵԿՏՐԱ

Ո՛վ սիրելիք իմ կանայք,
 Լըւայ ես ըզբարբառն որում ահն ոչ ունէի, [կելիս:
 Կալայ զկիրոս՝ անձայն անմոռունչ ունկընդրութեամբ եզ-
 Այժմ ըզքեզ՝ գէ՛մ յանգիման ունիմ տեսիլ փարելի,
 Զոր ոչ և յաղէտս ինչ մոռացայց ես երբեք:

ՍՈՓՈԿԼԷՍ. Էլէկտրա:

ՏԵՍՈՒԹԻՒՆ ԱԳԱՄԵՄՆԱՆԻ ԸՆԴ ԴՍՏԵՐՆ

Ագաթնոն, Իփիգէնի, Երիփիլէ

ԻՓԻԳԵՆԻ

Տէր, յո՛վ ընթանաս. և զի՛նչ ըշտապ տագնապի
 Գողանայ զքեզ ի գըրկաց մերոց անդէն առժամայն.
 Ո՛ւմ պարտիմ մեղքս գըրել զյանկարծակի զայս փախուստ.
 Մեծարանքս իմ ետ տեղի ուրախութեանց գըշխոյին.
 Վայրկեան մի և ինձ ո՛չ ներեսցի կալ ընդ քեզ,
 Եւ հըրճուանք իմ չիշխս: սցե՛ն ինչ երևեւ յաջքս քո:
 Զիցէ՛ մարթ...

ԱԳԱՄԵՄՆՈՆ

Օն մատիր, գո՛ւստր իմ, և զքո հայրն ողջունեա.
 Սիրէ նա միշտ ըզքեզ:

ԻՓԻԳԵՆԻ

Ո՛րպէս զի քաղցր է ինձ սերդ.
 Ո՛վ մեծի հեշտութեան՝ զքեզ տեսանել և գիտել
 Ի նորոգ փառքս յայս որով փայլես յաջքս իմ.

Ո՛վ պետիւ, ո՛վ զօրութիւն, վաղուց հըռչակ համբաւուն
 Նորապօսանց զըրուցիւք էր արարեալ զիս հըմուա .
 Բայց մօտուստ նրկատեալ զչքքնաղագեզ տեսիլս այս,
 Իմանամ զի ցընծութիւն և հիացումն իմ աճեն :
 Ո՛վ, որով սիրով մեծաւ հելլենաստան պատուէ զքեզ .
 Զինչ և ինձ բաղգ և պարծանք՝ դուստր այսքանոյ լինել հօր :

ԱԳԱՄԵՄՆՈՆ

Դուստր իմ, դու երջանկագոյն և ըս հօր ես արժանի :

ԻՓԻԳԵՆԻ

Եւ ո՞ր այն երջանկութիւն ի քում ըղձիցըն վրիպեալ .
 Իցէ՛ հնար թագաւորի մեծ ևս փառաց ակն ունեւ .
 Ես միայն շընորհս երկնից մատուցանել կարծէի :

ԱԳԱՄԵՄՆՈՆ (Ի Ժաժուի)

Դիք հըզօրք . պարտ իցէ զինքն յաղէտըս իւր պատրաստել :

ԻՓԻԳԵՆԻ

Թանգուզես յինէն, տէր, և հառաչել թըւիս ինձ .
 Աչք քո յիս իբր յակամայ կամս ինչ եկեալ հանգիպին .
 Անհրաման արգեօք ի քէն թողաք ելաք ըղՄիկէնս :

ԱԳԱՄԵՄՆՈՆ

Դուստր իմ, եո միշտ ի քեզ նովին աչօք ակնարկեմ .
 Այլ փոխեալ են ժամանակք, որպէս և վայրք իոկ տեղեացս .
 Աստ զըմբազ անագորոյն՝ է ի խընդիցս ապըստամբ :

ԻՓԻԳԵՆԻ

Ե՛հ, հայր, մոռա՛ զքո բարձ աւազութեան առ աչս իմ .
 Իմանամ ըզխըստութիւն յերկարաւոր անջատման .
 Եւ վայրիկ մի հայր լինել չիչխե՞ս առանց շիկնելոյ :
 Առաջի քո չիք ոք այլ՝ քան թէ բամբիշն օրիորդ,
 Առ որ ես պարծեցեալ էի զառ իս քո սիրոյդ .
 Բիւր անգամ խոստանալով զիմ խնամս և զքո բարութիւն՝
 Փառըս մեծ յաչըս նորա զերջանկութիւն իմ ցուցի .
 Այժըմ զինչ խորհեացի զանփոյթ մըտաց սըրտի քո :

Սընոտի՛ արգեօք յուսով փաղաքշէցի զսիրտ նորա :
Ըզճակատդ այդ արխրալի ո՛չ պարզեսցես դու ի լոյս :

ԱԳԱՄԵՄՆՈՆ

Ո՛հ , դուստր իմ :

ԻՓԻԳԵՆԻ

Խօսեսլիբ աղէ , ո՛վ տէր :

ԱԳԱՄԵՄՆՈՆ

Ոչ կարեմ :

ԻՓԻԳԵՆԻ

Կորիցէ՛ արովագացին պատճառ մերոյ խուովութեան :

ԱԳԱՄԵՄՆՈՆ

Այլ կորուստ իւր՝ յազթողին ծանր եղիցի արտասուաց :

ԻՓԻԳԵՆԻ

Հաճեսցին գիթ մանաւանդ լինել կենացդ հովանի :

ԱԳԱՄԵՄՆՈՆ

Ի՛իթ յաւուրց ինչ հետէ խուլ են առ իս և անգութ :

ԻՓԻԳԵՆԻ

Պատրաստէ կալքաս , ասեն , շքեղաճոխ պատարագ :

ԱԳԱՄԵՄՆՈՆ

Տայր ոք ինձ յառաջագոյն մեղկել զնոցին ժանտութիւն :

ԻՓԻԳԵՆԻ

Մատուցի՛ զոհն փութով :

ԱԳԱՄԵՄՆՈՆ

Քան զոր կամի՛մ փութագոյն :

ԻՓԻԳԵՆԻ

Ներեսցի՛ և ինձ արգեօք աղօթակից ձեզ լինել :

Ազգատոհմ՝ քո երջանիկ երևեսցի՛ առ բագնին :

Վճահ աւարտ:

ԻՓԻԳԵՆԻ

Լուս լինիս:

ԱԳԱՄԵՄՆՈՆ

Լիցիս անդ գու, գուստոր, ողջ եր: (Գնայ)

ՌԱՍԻՆ. ԻժԻԳԵՆԻ:

ԻՓԻԳԵՆԻ ԱՆՁՆԱՆՈՒԻՆԻ Ի ՋՈՂ

Ագամեհան, Կլիփեհեպրա, ԻժԻԳԵՆԻ

ԿԼԻՏԵՄԵՆԵՍՏՐԱ

Արի, գուստոր իմ, արի, զի քեզ միայն ըսպասեն,

Ե՛կ շընորհս ունեղ հօր՝ որ ի սըրտէ սիրէ զքեզ:

Եւ ինքնին կամի քեզ առաջնորդել ի բագինն:

ԱԳԱՄԵՄՆՈՆ

Ձինչ տեսիլ, բանք զինչպիսի: Ի՛նչ իմ գըստորիկ՝ արտասուէ՞ս,

Եւ զաչսըգ զանհանգիստ խոնարհես իմ առաջի:

Ձինչ վըրդով: Բայց ամենայն, և գուստոր և մայր, արտասուեն:

Վճահ, Արկաս (Թըղու առական, մատնեցեր զիս:

ԻՓԻԳԵՆԻ

Սակայն, հայր:

Հանգարտեա յամբոխմանէդ, ամենևին չես մատնեալ:

Աղէ տուր գու հրաման, ի հնազանդել կամ պատրաստ:

Կեանք իմ քո են պարգևք, կամիս առնուլ յետ անգրէն:

Գոյր առանց մեղմեխանաց ըզքո հրամանսդ տանել յայտ:

Նովին գոհ ակնարկուլթեամբ, նովին հըլու լի սըրտիւ

Որով զայն ընկալայ՝ զոր խոստացեալ էր քո ինձ,

Գիտացից , թէ պէտք իցեն , ի պատարագ հըպատակ
 Կարկառել զանմեզ գըլուխս ի Կալքասայն պողոկատ .
 Եւ սըրոյն առ ի քէն հրամայելու՛մ ակն ածեալ ,
 Կը-հրել քեզ զամենայն զարիւն՝ զոր գու ետուր ինձ :
 Իայց թէ այս մեծարանք , և եթէ այս հըլուծիւն
 Արժանի յաչսըգ թըւին պլում իմիք հատուցման ,
 Եթէ մօր ողբականի ցաւեն քեզ վիշտք և տագնասք ,
 Յանգըգնիմ ասել քեզ աստ , թէ յորում եմ գիճակի ,
 Մեծամեծ պատիւք արգեօք շուրջ պատէին ըզկեանս իմ՝
 Բաւականք ի փափսքել զի մի առցի այն յինէն ,
 Եւ ի իիսա ճակատագրին յափըշտակել յինէն զայն ,
 Մի այսպէս հուպ ի ծընունդ իմ լինիցի վախճան իւր :
 Դուստըր ես Ագմեմնոնի , ես նախ ըզքեզ , տէր իմ հայր ,
 Հայրակոչ եղեալ առ քեզ՝ քաղցր անուամբ հօր ձայնեցի .
 Ես եմ այն , որ ի վազուց գըտեալ աչացք հէշտուծիւն՝
 Ետու քեզ՝ վասն սյսր անուան՝ շընորհ՝ ունել անմահից ,
 Վասն որոյ բազում անգամ և քո շուայլեալ ի գըզուանս ,
 Քեզ զարեան տըկարուծիւնս չհամարեցար անպատեհ :
 Ո՛հ , տայի ես զուարճուծեամբ ինձ արկանել ի համար
 Զամենայն տեղեաց անուանս որոց գընայքըգ տիրել .
 Եւ այժմէն զիլիոնի գուշակելով պարտուծիւն՝
 Զգեղեցիկ յաղթանակին պատրաստէի ես ըզտօն :
 Զունէի ակըն թէ այն՝ առ նախ ըսկիզբն առնելոյ՝
 Յառաջ քան զամենայն գու զիմ արիւն հեղուցուս .
 Ոչ թէ ահ սուսերին՝ որ սպառնացեալ մընայ ինձ ,
 Յուշ ինձ ածիցէ զքո զառաջին բարուծիւնդ ,
 Մի քնաւ ինչ երկընչիւր , սիրտ իմ փառաց քոց խնամոտ ,
 Ըզհայր դք իբր ըզքեզ՝ ոչ ինչ յամօթ արասցէ .
 Եւ թէ ինձ ըզկեանս և եթ կայր ի վերայ պաշտպանել ,
 Գիտէի արգելուլ զայնպիսի քաղցր յիշատակ .
 Իայց ի բազդն իմ ողորմ , և գու իսկ քաջ գիտես , տէր ,
 Զիւրեանց երանուծիւն կապեալ են մայրս և սիրողս :
 Թագաւոր քեզ արժանի՝ տեսանել զօրն յուսացաւ ,
 Որում գոյր լուսաւորել զմեր մեծաշուք հարսանիս .
 Աներկմիտ ըզսըրտէս խոստացելոյ իւր սիրոյն ,
 Երջանիկ զանձն համարէր , և գու զնա ինձ խոստացար :

Գիտէ նա զխորհուրդըս քո, զազմուկ նորին իմա գու.
Առաջի քո մայրս ահա, և տեսանես զարտասուսն:
Եւ ներեա՛ գու փութոյս՝ որով ջանամ՝ և հնարիմ
Խափանել զարտասուս զոր յիմ վերայ հեզուցուն:
ՌԱՍԻՆ. ԻՒՒԳԵԼԻ:

ՄԱՀ ԵՒՐԻԴԻԿԵԱՅ ԵՒ ՈՂԲՔ ԿՐԷՈՎՆԵ

Ս-ՐԻԴԻԿԵ, ՀՐԵՄԻ, Պար

ԵՒՐԻԴԻԿԵ

Ո՛վ հանուր քաղաքացիք, ըզգրոյցըս ձեր լըւայ ես
Յելանեղն իմ ի դուրս՝ երթալ աղօթըս առնել
Առ Պալլաս աստուածուհին ուղերձելով պաղատանս:
Եւ պարզեալ զազիւրս գըրան փակաղակին, ահա ձայն
Ընտանի աղետից հարաւ յունկն իմ, և անկայ
Ջարհուրեալ յորսայս ի գիրկըս նաժըտաց և նուազեալ:
Այլ աղէ զինչ բանքդ էին, առեալ կըրկին ասացէք.
Ձի վըշտաց՝ չեմ ինչ անփորձ, կարեմ՝ լըսել և զայդ ևս:

ՀՐԵՇՏԱԿ

Ես, տիկին սիրեցեալ, անգ իսկ գիպեալս ասացից,
Եւ ոչ զանց ինչ ի բանից ճըմարտութեան արարեալ:
Ձի առ ինչ իցէ զքեզ ողորբել ինձ, յորս ապա
Սըտախօս երևիցիմք. միշտ է ուղիղ ստուգութիւն:
Եւ արդ, ես ուղեկից ըզհետ գնայի առնն քու՛մ
Մինչ ի ծագ սարահարթին՝ ուր տակաւին գընէր գեա
Գէշ անկեալ անողորմ Պոլինիկեայ մարմին՝ շանց.
Եւ զուղեաց և զգըժոխոց աստուածութիւնս աղերսեալ՝
Ջոխան ի մէնջ ցածուցանել և լինել հաշա և համբոյր,
Ջրովք սըրբովք զինքն ողողեալ զնըշխարսն ի թաւ ոտտայ.
Եւ դամբան ի հայրենի հողոյն կուտեալ ուզաբերձ, լրեմք,
Դարձ անդուստ արարեալ ի գըժոխոց հարսնարանն

Երթայք օրիորդին ի քարանձաւ խորասոյզ :
 Եւ ահա ի հեռուստ կականալի որդոց ձայն
 Լըւեալ ոք զանխընամ առագաստին, և եկեալ
 Ազդ առնէ յունկըն տեառըն Կրէոփնի արքային :
 Ի խաղալ նորա յառաջ և առաւել հուպ մատչել՝
 Անըշան ձայնին բարրառ քամ քան ըզքամ զօրանայ .
 Յայնժամ ճիչ բարձեալ հեծմամբ արտասուագոչ զայս ասէ .
 « Վահ զինև , գուշակ արդեօք իցեմ , արդեօք ընթանամ
 Ճանապարհ թըշուառագոյն քան զոր երբեմըն գնայի :
 Ձայն որդւոյս փարի զինև : Աղէ ճեպով , սպասաւորք ,
 Մատերուք ի գերեզմանն , և մինչ ի մոռտս անգր հասեալ՝
 Զընեցէք ընդ քարածերպ հողարըլոյն ընդ կըցուած ,
 Զէճմոնի՛ լըսեմ բարբառ , թէ զմիտս իմ դիք գողանան » :
 Ի զընին ի հրամանէ տեառն այսոցիկ մատուցեալ ,
 Եւ տեսաք կախեալ զաղջիկն ի խորշ շերմին զուլանէն՝
 Ագրամբըն կըտաւի հանգոյց ընդ անձն արկեալ խեղդ .
 Իսկ ըզմիւսն՝ անկեալ ի գլոր զմիջով նորա գըրկապինդ :
 Գոյժ առեալ ընդ կորուստ առագաստին ի դըժոխս ,
 Ընդ հօրն արարուածս և ընդ թըշուառ հարսանիսն :
 Յայն տեսիլ՝ դիմէ առ նա բազմատըխուր թառաջմամբ ,
 Եւ կական բարձեալ գոչէ . « Զինչ գործեցեր , այ չըւառ .
 Յինչ միտս , յինչ խորհուրդս , առ իմ վըշտի կորընչիս ,
 Որգեակ իմ , արի ել , աղերսագոչ պաղատիմ » :
 Վայրենի տիգօք աչաց՝ որդւոյն ի նա հայեցեալ ,
 Արձակեալ թուք ընդ երեսն և չըկըրկնեալ ինչ ընդգէմ ,
 Զերկսայրին ձըգեաց սուսեր , բայց ի հօրէն վրիպեցաւ ,
 Զի՛ փախուստ աճապարեաց , իսկ տառապեալ եղիւնին
 Յանձն իւր գազանացեալ , զսըրոփն երթեալ նոյնհետայն
 Յիւր ի կողսըն մըխեաց ըզգէնըն սուր կիսով չափ ,
 Եւ ըզգաստ դեռ թալացեալ բազկօք ի կոյսըն փարէր .
 Եւ յոգւոցըն հանեալ արձակէ շունչ իմըն բարկ
 Կայլաօք արիւնսոռոպ փըչեալ ի ծնօան ըսպիտակ :
 Եւ անկեալ գընի մեռեալ ըզմեռելով եզկելի ,
 Զհարսանեացըն կատարուէն առեալ ի տուր դըժոխոց ,
 Մեծագոյն՝ զանմըտութիւն յայտ արարեալ մարգոյ՝ չար :

(Երիտիկ գնայ)

ԳԱՐ

Զինչ արդեօք գուշակիցես, զի յեաս անդրէն գարձաւ կինն
Անբարբառ, ոչ բարի և ոչ ինչ չար խօսեցեալ:

ՀՐԵՏՅԱԿ

Եւ ես ինքնըս զարմացայ. սակայն ունիմ յոյս մի զայս,
Զի զաղէտս որդւոյն լըւեալ՝ չհամարեցաւ վայելուչ
Կոծել յուսկըն քաղաքիս, այլ անդ ինեբքս ընդ յարկաւ,
Աղախնանցն արկանել հեծել ըզուզն ընտանի.
Զի անփորձ ոք չէ մըտօքն՝ երթալ ի վրէպօ ինչ գըլել:

ԳԱՐ

Ոչ գիտեմ, այլ գըժընդակ իմն երևոյթ ինձ թըւի
Եւ կարի խոր լըռութիւն, և աղաղակ բազում զուր:

ՀՐԵՏՅԱԿ

Այլ ի յարկսըն մօտ երթեալ՝ աւցուք ի միտ թէ ունի՞
Ի ծածուկ ինչ թաքուցեալ ի բարկութեան անդ սըլտին:
Քաջ խօսիս. զի ահաւոր է և կարի լըռութիւն: (Գնայ)

ԳԱՐ

Այլ թագաւորն ինքն ահա գայ
Յիշատակ մեծ յիւրում ձեռին,
Եթէ ասել օրէն է զայս.
Ոչ օտարին վընաս, այլ իւր:

ԿՐԷՆՅ, ՊԱՐ

ԿՐԷՈՎՅ

Ո՛վ անմիտ խելաց մեղանք սաստիկք, մահարեբք:
Ո՛վ որ զըսպանողս և որ ըզմեռեալս
Ահնարկէք առհմայինս.
Ո՛վ յոգնաթըշուառ իմոց խորհըրգոց.
Ո՛հ որդեակ, որդեակ, առոյգ վաղամահ,
Աւաղ, աւաղ, մեռար լուծար,
Իմով՝ ոչ քով անմըտութեամբք:

ՊԱՐ

Ո՛հ, զի յամբ ուրեմն այսպէս զարգարութիւն նըշմարես :

ԿՐԷՈՎՆ

Ո՛հ, սուսայ չուառուութեամբ և անգ յայնժամ աստուած

Յայնժամ մեծ բարկութեամբ ի կառափն իմ եհար ,

Եւ ընկէց զիս , եղո՛ւկ , ի վայրագ ճանապարհս ,

Կործանեալ աքացի զխընդութիւնս , ո՛հ , աւաղ :

Ո՛վ մահկանացուաց վաստակք անվաստակք :

Կրէո՛ւն , Գոթիւն , Պար

ԳՈՒԺԿԱՆ

Ո՛վ տէր՝ զի յըզիացեալ ես ի ստացուածս աղէտից .

Ասա առ ձեռն , և զոր ի սանն եկեալ թըւիս տեսանել :

ԿՐԷՈՎՆ

Իսկ զի՛նչ ևս ի չարեաց բընաւ կայցէ չարագոյն :

ԳՈՒԺԿԱՆ

Տիկինըն , սերտիւ վախճանելոյդ մայր՝ մեռաւ .

Եղկելին , դեռ ևս իսկ այժմ՝ նորախոց հարուածովք :

ԿՐԷՈՎՆ

Ո՛վ դու գըժոխոց անքաւելի որջարան ,

Իսկ զի՛ զիս բընաւ սատակես , զի՛ բնաւ :

Ո՛վ ցաւոց բօթաբերդ ,

Դու բան զինչպիսի՞ գուժես առ իս բօթ .

Ո՛հ , դու զկորուսեալ այր մի զըտուեցեր ,

Զի՛նչ , ո՛վ մանուկ , ասես ցիս նոր .

Զըսպանդ տիկնոջս ընգ այս կորուստ :

ԳՈՒԺԿԱՆ

Նա՛ւանիկ և տեսանես , զի ոչ ևս է յաշուցս անդ :

ԿՐԷՈՎՆ

Ո՛հ , միւս այլ ևս աղէտս եղկելիս տեսանեմ :

Զքնչ ևս այլ, զինչ ինձ բազդ հանգերձեալ կայ մընայ.
 Ի ձեռին ունիմ անդ ևս զորդին իմ մեռեալ,
 Վա՛հ, և զմիւսըն՝ մեռեալ տեսանեմ յանգիման:
 Ո՛վ ողորմելի մայր, ողորմ որդեակ:

ԳՈՒԺԿԱՆ

Այլ նորա սուսերահար շուրջ ըզբազնօքըն գլտրեալ,
 Փակեաց զաչսըն թոյրաթուխս՝ ողբաձայնեալ զՄեգարեայ
 Ըզվիճակըն շքեզ զվաղամեռիկն եզելոյ,
 Եւ ըզկնի ապա զսորայն, և հուսկ ուրեմն ի քո գլուխ
 Անէծըս չուառանաց որդեսպանիդ կարգալով:

ԿՐԷՈՎԱՆ

Վայ աւանդ, յապուշ միտըս եղծանիմ յերկիւղէս,
 Երկսայրի ոք սըրով ընդէր չեհար զիս ի սիրտ,
 Ո՛հ հիբիս, ընդ սոսկալին միատարրիմ աղետից:

ԳՈՒԺԿԱՆ

Ի մեռեալ կնոջէ աստի չարեացապարտ դատեցար
 Եւ մահուցն այնոցիկ և իւր ինքեան օրհասին:

ԿՐԷՈՎԱՆ

Իսկ որով օրինակաւ լուծաւ մահուամբն ի կենաց:

ԳՈՒԺԿԱՆ

Հարեալ ընդ սընակուշտն իւրով ձեռամբ զանձըն իւր
 Իբրև այն ինչ զայն գիտաց գառնակըսիլիծ որդւոյն կիրս:

ԿՐԷՈՎԱՆ

Վայ ինձ վայ, այսոքիկ ոչ այլում ումեք մահկանացուի՝
 Յանցուածոցս իմոց արդիւնք՝ պատշաճեսցին բընաւ երբեք:
 Քանզի զքեզ ես ըսպանի, ես թըշուառս ես, ըստոյդ ասեմ:
 Օ՛ն բարձէք ըսպասաւորք՝ բարձէք փութով զիս ի միջոյ.
 Որ չեմ ինչ այլ, բայց ոչինչ:

ԳԱՐ

Թեւադիր լինիս զօգուտն, եթէ գոյ չահ ինչ յաղէտս.
 Զի յառ ոտս հասեալ չարեաց ընտրեւադոյն սուղքըն են:

ԿՐԷՈՎՆ

Եկեսցէ, եկեսցէ, երևեսցի յաղետիցս
Հուսկ յետինն որ ածէ զվախճանականն որ առ իս .
Եկեսցէ, եկեսցէ, զի մի ևս այլ տեսից որ :

ԳՈՒԺԿԱՆ

Այդոքիկ առյապաք, պարտ է գործել յորոց կանս .
Իսկ միւսոցն, որոց հոգ յանձն իցէ խնամոց, լիցի փոյթ :

ԿՐԷՈՎՆ

Այլ սակայն որոց ցանկամս՝ այնց և ուխտիւք փափաքեմ :

ԳՈՒԺԿԱՆ

Մի խընդրեր ինչ այժմիկ . քանզի և չիք ինչ երբեք
Ցաղետից ճակատագրին մահկանացուի փրկուածիւն :

ԿՐԷՈՎՆ

Յն առեալ աղէ բարձէք զայրն անպիտան ի միջոյ ձեր ,
Որ ըզբեզ յանկամս, որդեակ, սպանի և զքեզ ըզթագու-
[հիդ :
Ո՛հ, չէք յո՛վ ոք յերկոցունց հայիցիմ, յո՛վ ընթանայցեմ .
Զինև բնաւն է ձախողակ . բազդ անհնարին և դըժպընի
Ի գլուխս անկան այսոքիկ :

ԳԱՐ

Երջանկուծեան՝ իմաստուծիւն է պարտաւջ .
Եւ ոչ է պարտ ամպարըշտել բնաւ առ աստուածս :
Իսկ մեծարանք բարձրայօնիցըն մեծամեծս
Հատուցեալ վրէժս՝ իմաստնանալ տան յալևոյթ :

ՍՈՓՈԿԼԵՍ . Անդիգոնէ :

ՀԵՐԱԿԼԷՍ ՄԱԼԵԳԻՆ

Պարգամաոս, Պար

ԳՍՏԳԱՄԱՒՈՐ

Մինչդեռ նըւէրք մատչէին յԱրամազդայ ի բազին, Քաւել ըզտունըն շաղեալ յարեանց հեզման Լիւկասին, Ջոր ի տանէն հար վանեաց նահատակեալն Հերակլէս, Անգ առ բազնին կայր որգւոց գեղապարիցըն հանգէս: Կայր Մեգարէ, կայր և հայրն, և խան բեմին շուրջ յածէր, Եւ մեք սըրբեալք օրհնութեան ձայն հանէաք ի նըւէր: Այն ինչ առեալ ըզխանձողն աջով ձեռամբ Հերակլէս Բերէր մըխել ի սափորն՝ հանել նըւէր մաքրապէս, Ինքն անշըշունչ կաց, և հայրն անգ գանգաչէր ծերոունին, Եւ դասք մանկանց հիացմամբ ի հայրն յակձիւղս կային. Բայց Հերակլէս ոչ էր նոյն. եղծան նորա բիբք աչաց, Թեք տեսութեան բըլշացեալք յարիւնըուշան ի հոսմանց: Ի հերապանծ ի ծընօտն յուզեալ փըրփուրք կաթէին, Եւ ինք բարբառ արձակեաց ի ծաղք հատեալ մոլեգին. « Հայր, զի է ինձ յաշտ առնել մինչև հարեալ զԵւրիսթէս. Ընդէր ինձ այս հուր մաքրիչ և կըրկին քիրտն յայս հանգէս. Միով ձեռամբ մարթ է ինձ քաջ պըսակել զայս պաշտօն, Երբ ըզկառափն Եւրիսթեայ հարեալ բերից աստ ի ձօն, Ի նոյն յայնժամ լըւացայց ըզձեռս յարեանց ես ողջիկ. Հեղէք զազբիւրսն, և ըզխանս արկէք ի բաց, պատանիք: Ո՞ ինձ տացէ զիմ ազեզն, ո՞ և զիմ զէնն ի ձեռին. Ես ի Միւկէնս չու առնեմ, գուք հորդեցէք զիմ ուզին: Ի բուռն առնուլ ինձ զարգիս պէտք են նըգաց, փայտատաց. Դիմեալ հարից քանգեցից ըզկայս գագարս Կիկլոպայց. Ջոստանն յարեալ ի մըրձոց, և կանոնաց ի նօթից, Յերկաթագամ յեռարձէն նըգախարխար արարից »: Ասաց, յարեաւ. չունէր կառս, ասէր ունել նա ըզնոյն, Եւ ել իբրև վերելեակ նըստաւ կառացն ի բարձուն: Գանէր, վարէր, և յիւր ձեռն իբրու գանէր ի մըտրակ,

Յահ և ի ծաղր յայն տեսիլ կային կըրկին ըսպասեակք :
 Անդ հիացմամբ առ իրեարս այր բարբառէր ընկերի .
 « Խաչ ինչ արգեօք առնէ տէրս , եթէ յիրաւ մոլեգնի » :
 Իսկ նա ի վեր և ի վայր սողայր ի տան և մոլէր :
 Եկեալ ի մէջ յայրանոցն , հասեալ յոստան զինքն ասէր ,
 Յոստան Նիսեայ ասէր զինքն , յորժամ ի տուն անդր եմուտ .
 Առեալ բազմոց ի գեանի իբր անդ կազմէր հացկերոյթ ,
 Սուղ ժամանակ դեգերեալ յայրանոցին ի միջի ,
 Յանձաւս ասէր զինքն հասեալ անտառախիտն Իսթմոսի :
 Անդ մերկացեալ ըզկոճկէնն ընդ ոչ ումեք մարտընչէր ,
 Սահայն յաղթող զինք կարդայր . իսկ ո՞ յաղթեալն , ոչ ա-
 [սէր :

Բայց Եւրիսթեայ սպառնալիս անհաճայն որոտայր ,
 Եւ զինք կարծէր ի Միւկէնս գնացեալ առեալ ըզգադար :
 Հայրն անհաբեկ զքաջորդւոյն ձեռացն առեալ բարբառէր .
 « Զինչ կիրք իցեն , ո՞վ որդեակ , զինչ նորութեանս այս
 [պատկեր .

Միթէ արինն սպանելոցդ յանկարծ ըզքեզ ան մոլեաց » :
 Նա յայլոյ խելս՝ Եւրիսթէս դատեաց ըզհայրն առ ի կարծ .
 Թէպէտ և հայրն ողորէր , ըզձեռան անիւ փայփայէր ,
 Նա զնա մերժեաց , և զճապուկ կապարձս առեալ պատ-
 [րատէր .

Կազմէր զաղեզն , իւր որդւոց իբր Եւրիսթեանց մահ անել :
 Պակեալ մանկտին և յարեալ յայս կոյս յայն կոյս խուճաւ
 [պել .

Ոմն ընդ ձորձով թաքեալ մօրն , ոմն անց ընդ սեանն ըս-
 [տուերաւ ,

Ոմն ընդ բագնաւ զերթ թըռչուն ի դող հարեալ զօղեցաւ :
 Զայն եբարձ մայրն . « Ո՞ ծընող , զինչ , մահ անես զաւա-
 [կաց » :
 Զայն ամբառնայր ծերունին , ձայն և ամբոխն ընտանեաց :

Նա շուրջ ըզսեամբն հետամուտ կաց առ ոտիւք զաւակին ,
 Ի լեարֆն եհար սայրասուր ճախարակեայն ըզփըքին .
 Անկաւ մանուկն ի յորսայս և ըզվերջին շունչ փրչեաց ,
 Եւ ըզկոթողսն կըճեայս արեամբ իւրով ոռոգեաց :
 Իսկ նա խայտաց բարձրաձայն և զայս պանծայր առ խընգին .

« Վա՛շ վա՛շ, ասէր, ահ, անկաւ մին ի ձագուց Եւրիսթին.
 Լուծցէ ըզվրէժ առ ոտիւքս զԹշնամուլթեանն հայրենի :
 Ասաց, լարեաց զլայնալիճն յերկրորդ զաւակ շեշտակի.
 Սա ապաւէն փըրկուլթեան ունէր զեղջիւրս ըզբագնին,
 Սակայն կանխեաց հէք զաւակն առ ոտս անկաւ ծընողին,
 Առ պարանոցն, առ ծընօտն ըզձեռս ձրգեալ պաղատէր.
 « Ո՛հ, հայր, ասէր, հայր սիրուն, մի դու ի սպանդ զիս մտ.
 [նէր.

Քո եմ զաւակ, քո եմ ես, դու ոչ հարուս զԵւրիսթեայ :
 Նա այլ յայլմէ շքրջեաց զաչս անեղ հանգոյն Գորգոնայ :
 Ի մէջ մահու կայր մանուկն ի ձիգ կըռեալն ի նետէ.
 Նա զերգ դարբին որ վայրագ հրաշէկ զերկաթըն բախէ,
 Խարտիչագեղ զաւակին այնպէս փըքին մահաբեր
 Բախեալ ի գլուխն ի խարտեաչ ըզնետարունն հարկանէր :
 Փըջրեաց զոսկերսն, և հարեալ այսպէս զերկրորդ զիւր որ.
 [գին,

Երկուց մահունցն ի վերայ՝ դիմեաց ի սպանդ երրորդին :
 Անդ ի յարկին խուճապեալ մայրն հիքացեալ ան ընա.
 Կորզեաց զտըղայն յօրհասէն, փակեաց ըզգուրսն ի վերայ :
 Նա մոլեգին իբրու այն առ դուրս հասեալ Կիկլոպեանց,
 Թափ ի դրանդիս հար խըզեաց նըգախարխար ի հիմանց.
 Ըզբարաւորսն և ըզսեամն արկեալ գոռայր մեծասասա.
 Եւ ըզտըղայն և ըզմայրն ի մի փըքին արկ տապաստ :
 Այն ինչ ճեպէր ծերուհւոյն հօր իւր շողիլ և յարեան,
 Անդ յանկարծուսա գայր պատկեր ամենեցուն յերեան.
 Էր նա Պալլաս, որ ճօճէր ըզսայրասունն ըզնիզակ,
 Եւ եգ ի լանջս Հերակլեսայ վէմ ահագին դըժընդակ.
 Արգեւլ կարճեաց ի սպանդից, և ըզմոլեալըն հանգոյց,
 Եւ խոր ի քուն Թանձրուլթեան արկեալ ըզնա նիրհեցոյց :
 Անկաւ յայնժամ ի գետին խոնջ և վաստակ ի գոռման,
 Անկաւ և զուսըն բախեաց Թաւալագլոր մօտ առ սեան,
 Որ ի քանդելըն յարկին գլեցաւ ի կողմն յատակաց.
 Եւ ինքն ի մի ընդ ծերոյն հանգոյցս աունէր ըզսարեաց :
 Դարձ փախըստեայքս արարեալ կապեմք ըզնա պինդ ընդ
 [սեան,

Զի մի սթափեալ ի քընոյն վայրագացի միւսանգամ :

Արգ նա յարեանց իւրայնոց շաղեալ նընջէ գառն ըզքուն ,
 Եւ ոչ գիտեմ , ո՞ կայցէ մարդ քան ըզնա հիքագոյն :

ՊԱՐ

Ինձ ո՞ր լալուսն և ո՞ր կոծ , կամ երկրածնաց ո՞րն յողբոց .
 Արգեօք ըզպատն աստ կարգամ զՇահապետին դրժոխոց :
 Տեսէք ահա զերկրացիկս բարձրայարկին տապալեալ ,
 Տեսէք զմանկունս աղածրիս հօրն յանգիման տարածեալ :
 Հայրըն խոնջեալ ի յարեանց՝ կայ խոր ի քուն հիքապէս ,
 Բազմահանգոյց ի խեղդից սարեօք պըրկեալ պընգապէս .
 Իբր հաստարանք քաջամուրք շուրջ ըզմարմնովն Հերա-
 [կլեայ ,

Ամրապահեստք ի յարկին պատեն ըզսիւնս մարմարեայ :
 Իսկ սա իբրև ըզթըռչուն ցաւեալ յիւր ձաքս անփետուր
 Ասա գայ ի սիրտ գառնացեալ ծերս այս գողգող անձնա-
 [պուր :

ԵՐԻՒՊԻԴԵՍ . Հէրաիւս Դուրիս :

ՅԱՅՅՆՈՒԹԻՒՆ ԿԵՍԻՐԱՅ ԴՍՏԵՐ ԱՐԻՍՏՈՂԻՄՍԻ

ԿԵՍԻՐԱ

Աղմուկ կըրից ընկճէ զիս .

Ոչ ևս ուր կամըս գիտեմ . ո՞ր զօրութիւն
 Շարժէ զիս յարտասուս . ոչ իսկ կարեմ արտասուել .
 Զայն ի խորոց սըրաի լըսեմ , այլ զինչ ինձ այն ազգիցէ ,
 Աւետիս յուսոյ թէ գոյժ ինձ երկիւղի , ոչ գիտեմ :
 Վաստակաբեկ եմ , բազմեցայց , ոչ ևս յոտին կալ զօրեմ :

Ե-մէս , Կե-իբ (Մե-սի)

ԵՒՄԵՆՍ

Ահա , Եւմէ , եմք ի Մեսէնս . ո՞չ քանի խոնջ և անզօր
 Հասանեմ այսր ի Սպարտայ . այլ ուր ուրեմն հասանեմ :

Գոհութիւն ձեզ բարերար գիշ, որ կացուցէք զիս ազատ
 Ի սպարաական գերութենէ, խորտակեցիք ըզըզութայս՝
 Որ բովանգակ գողցես ըզկեանս իմ մինչև ցարգ մաշէին:
 Ի՛րր և զի՛ քաղցր է ինձ արդ ազատութիւն, տեսանել
 Ըզհայրենիս իմ անգրէն և ըզպարիսպս անձկալի.
 Բաբախէ սիրտ իմ առ խընդին. ընդ քեզ ևեթ ցաւէ ինձ,
 Արիստոգեմ, զի գամ ածել քեզ նոր առիթ արատասուց.
 Տեսցես զԵւմէոս, այլ ոչ և զգուսաւր քոյին.
 Ոչ հաճեցան երկինք զի զնա կեցուցանել կարէի,
 Ըզսիրելին քո զԱրգիա. այլազգ երկնից եղին կամք:
 Ո՞ զիս ածցէ արդ առ արքայ, ի ծանօթից չիք ոչ ոք.
 Թըւին արխուր և մայի ինձ արքունիքս ամենայն.
 Ընդ այս կոյս յառաջ մատեայց:

ԿԵՍԻՐԱ

Ո՞ է որ այսւր մատչի,
 Ներեա, ծերունիդ քաջ, էր իրիք գաս ի խընդիր:

ԵՒՄԷՈՍ

Խօսել ընդ արքայի կամիմ, ազնիւ օրինորդ.
 Ունիմ ասել ինչ՝ զոր չիցէ նրմա լըսել անհաճոյ:

ԿԵՍԻՐԱ

Ի չար ժամու հասեր այսր, արքայ ծածկեալ առ վըշտին.
 Ոչ ումեք երևի, չէ մարթ խօսել ընդ նրմա.
 Այլ աղաչեմ, եթէ չիցէ հարցուածս անդէպ, ո՞ ես գու:

ԵՒՄԷՈՍ

Թէ քո լըւեալ իցէ երթեք զանուն Եւմեայ, ես ինքն եմ:

ԿԵՍԻՐԱ

Եւմէոս. ամենակալ գիշ, ում չիցէ նա ծանօթ.
 Ո՞ ոչ գիտէ զի զքեզ յըզեաց Արիստոգեմ ի յԱրգոս,
 Ածել կեցուցանել անդ զիւր գըսարիկն զԱրգիա.
 Այլ գոյժ հասեալ էր այսր՝ ըզքեզ զոյգ ընդ մանկանն ըս.
 [պանեալ

Գընդի միոյ սպարաացւոյ ուր ի Լագոն խառնի Ալքեոս.

Հաւատաց Արիստոգեմ, և ողբս առեալ անգրատին՝
 Ողբայ տակաւին ըզմահ գրատեր իւրոյ ցարգ:

ԵԻՄԷՈՍ

Թէ կենդանի իցէ գրատրիկըն թըշուառ սւր և սրպէս,
 Չուենիմ ասել. այլ թըշնամւոյն՝ որ ինձ շնորհեաց ըզկեանս
 [իմ,

Քաջայոյս եմ զի և ի կեանս արդեօք նորին է խնայեալ,
 Ի գիտելըն մանաւանդ զի մեծագին են կեանք իւր:

ԿԵՍԻՐԱ

Իսկ գու զիտրգ ի մահուանէ զերծեալ, և իբր առնես գարձ:

ԵԻՄԷՈՍ

Յաշտարակի ուրեք կայի խաւարարգել ի բանտի.
 Ինքեանց և եթ բարբարոսացըն գիտելի իցէ այն՝ [Թողին.
 Առ ինչ զտնկեաց և զծանրաբեռն ինձ անդ ըզկեանս իմ
 Իմ վաղ ըզյոյս ազատութեան և զիզձ նորին կորուսեալ,
 Ըզգայի և եթ ազգու մն իմըն զանխուլ ի սըրտի,
 Որ ըզքաղցր հայրենիս տայր ինձ յիշել հանապազ,
 Յիշել զափուսն երանաւէտըս Պամեսեայ ցանկալիս,
 Եւ հառաչել ըստեպ ընդ քաղցըր տըխրախառն յիշատակ:
 Մինչ յուսայի այնուհետև զի ժամանէր ինձ օրհաս՝
 Յերկարատև վըշտակրութեանց իմոց հարեալ ի վըղձուկ,
 Տեսի յանկարծակի բացեալ ըզգրուներս բանտին, [Թեան,
 Լըւայ զի զբաւ առնէր քինու վաղեմւոյ՝ ուխտ հաշտու-
 Ջրաւ զինական թըշնամանաց ընդ Լսպարտաւ և ընդ մեզ.
 Եւ զի ուրուք ի լակոնիկ աւագանւոյն գիտացեալ
 Որ ինչ ընդ իս անցք անցին, և յարկածս իմ գըթացեալ,
 Խընդորեալ և ընկալեալ էր ինձ կանխաւ գերեզարձ,
 Առ նա իսկոյն երթեալ շընորհըս մատուցի, առաջին
 Համարեալ պարտ ըզգոհութիւն. և գըտի զնա ծերունի
 Պատկառելի գիմօք՝ որ կայր հիւանդագին մերձ ի մահ.
 Ի տեսանելըն զիս յարեալ, և ըզարկար անձն ի նիստ
 Վերառեալ յանկողնի, գիրկս ինձ արկեալ արտասուօք,
 « Մի, Եւմէ, ասէ, զվասն էրն հետազօտեր՝ թէ առ ինչ

Եկի զըզլթայս քո լուծանել. ի հասանելն ի Մեռէնս՝
Մանիցես դու զայն ընդ հուսպ. խընդիր արա անգանօր
վաղ ընդ փոյթ յանուանէ օրիսրգին կեսիրայ » :

ԿԵՍԻՐԱ

Կեսիրայ, ո՛վ գիբ :

ԵՒՄԷՈՍ

Այո՛ ամենեին, կեսիրայ .

« Եւ մատուցես նրմա զայս գիր » . ասաց, և զոյգ ընդ բանին
Հանեալ ըզգիրըն գողգողուն ձեռամբ, մատոյց ինձ . ասա...

ԿԵՍԻՐԱ

Յաւել, աղաչեմ, ասել զանունն նորա ինձ :

ԵՒՄԷՈՍ

Տալթիբիոս :

ԿԵՍԻՐԱ

Տալթիբիոս, և զի՛նչ լըսեմ ես, ո՛վ գիբ :

ԵՒՄԷՈՍ

Մանօթ թերևս իցէ նա քեզ :

ԿԵՍԻՐԱ

Հայր իմ է նա . ես ինքն եմ

Կեսիրա՛ զոր պատուիրեալն է քեզ խընդրել . ես ինքն եմ :

ԵՒՄԷՈՍ

Քաջ ի գէպ, թէ գու իցես, ընկալ զոր եան ինձ ըզգիր :

ԿԵՍԻՐԱ

Տուր ինձ զայն . (ընկէռնու) « Կեսիրա, ի վերծանել քո զայս
[գիր

վաղ իսկ մահուն բարձեալ իցէ զիս ի կենաց . չև մեռեալ՝
Քաղսնիս ծանունըս քեզ յայտնեմ . սիրով և ոչ այլ իւր
Եղէ քեզ հայր, Լիւսանգր ևեթ ըզհայր քո բնիկ ցուցցէ
[քեզ :

Ճանաչէ նա ըզհայր քոյին, այլ ի ծածոսկ ունի զայն,
 Զի թըշնամի է ի սըրտէ, զի է մատնիչ քո . ողջ լեր .
 Լըռեւ էրդուսն ինձ հարկ սունէ, սակայն Տալթիբ ոչ սը-
 Ո՛ւր իցեմ ես, զի՛նչ ընթեռնուամ: [տէ »:

ԵԻՄԷՆՈՍ

Այժըմ լինիմ խելամուտ,
 Դուստր իմ, վասն էր Տալթիբինս ի մեռանելըն իւրում՝
 « Զէր իմ յանկարծ պատրեալ զանմեղըն զայն », գոչէր ար-
 [տասուօք:

ԿԵՍԻՐԱ

Լիւսանդր ըզհայր քո ճանաչէ՛... այլ ի ծածոսկ ունի
 [զայն...
 Զի թըշնամի է ի սըրտէ... մատնիչ քո է... մատնէ՛ զիս...
 Ո՛ ապիրատ . ելցուք ըզհետ անօրինին ի խընդիր:

Լիւսանդր, Պալմէր, Կեօիբ, Եմէո

ԿԵՍԻՐԱ

Ի դէպ ժամու գաս, ընթերցիր:
 ԵԻՄԷՆՈՍ (ի ծածոսկ)
 Տեսեալ իցէ իմ աներկբայ
 Ըզկերպարանըզ զայդ այլուր . միտք իմ ածէք ինձ ի յուշ,
 Օգնեցէք ինձ:

ԼԻՒՍԱՆԴՐ

Սըտէ գիրդ այդ, ցնորի Տալթիբ:

ԿԵՍԻՐԱ

Ա՛յ դրուժան, Գնորի՛ Տալթիբ. չէ իսկ և չէ գիրդ այդ ոգւոյ ցնորելոյ:

ԵԻՄԷՆՈՍ (ի ծածոսկ)

Ոչ սըխալեմ, նա ինքն է, դիք արդարագատք, ոչ խարիմ:
 (Ար Լիւսանդր) Թոյլ արա ինձ խօսել ընդ քեզ, հայեաց ի
 Ճանաչե՛ս զիս: [գէմս իմ ուշիւ,

ԼԻԻՍԱՆԴԻՐ

Ոչ անծանօթ թըւին ինձ գէմք ծերունւոյդ.
Այլ ոչ յիշեմ:

ԵՒՄԷՆՈՍ

Ո՛չ յիշես դու՛ անգ ի խառնուրդ Լագոնի
Ըզջըստրիկն յափըշտակեալ:

ԼԻԻՍԱՆԴԻՐ (ի ծածուկ)

Մանեայ արգ, իբր և ո՛ւր կամ:

ԵՒՄԷՆՈՍ

Տէս, ես ինքն եմ, յորմէ դու բարձեր ի բաց ըզնա...

ԼԻԻՍԱՆԴԻՐ

Զ՛՛:

ԵՒՄԷՆՈՍ

ԶԱրգիս. (առ Պալամէր) դա ինքըն դա եբարձ յինէն զԱրգիս:

ՊԱԼԱՄԵՐ

Խօսեաց դու արգ, բարեկամ, թէ ոչ՛ ցուցից զամենայն:

ԵՒՄԷՆՈՍ

Ասա, տո՛ւր պատասխանի, և զինչ ընդ հէքն անցին անցք:

ԼԻԻՍԱՆԴԻՐ

Ոչ ևս օգնէ արգ թանգուղէլ. կորուսեալն այն Արգիս
Զոր խընդրէք, և զոր բարձի ես, դու ինքն ես կեսիրա:

ԵՒՄԷՆՈՍ

Գուշակէի իսկ զայն, բա՛րէ:

ԿԵՍԻՐԱ

Զինչ լըսեմ, իբր, ո՛վ եմ ես:

ԵՒՄԷՆՈՍ

Դու ողբացեալն ես Արգիս, դուստր արքայի. սիրա ի՛մ
[գնայր:

ԿԵՍԻՐԱ

Ե՛ս արքայադճուսար. իսկ դու անգուլթ անողորմ,
 Գիտէիր զայն և լըռէիր. ո՛վ վատ արանց, և ըս վատ
 Քան ըզժանտ կարակու՛մ՝ որ ընդ ոտամբըն կոխի:
 Խեղամուտ եմ խորհրդոցդ, այլ եղծին զայն արգար դէք.
 Կորիր ի բաց, սոսկու՛մն է ինձ ի գէմըս քո ակնարկել...
 Այլ զի՛կամ, հասից առ հայր իմ վաղ ի գիրկըս նորա,
 Ի ցընծուլթիւն զազէտըս իւր յեղաշըրջել, հասից օն:
 ՄՈՆԴԻ. Ագիտողի:

ՄԻՀՐԳԱՑ ՅԱՅՏԵՆԷ ՈՐԴԻՈՑՆ ԶԻՈՐՀՈՒՐԴ ԻՒՐ
 ԱՐԵԱԻԵԼՈՅ Ի ՀՌՈՎՄ

Միհրդար, Փառնայ, Քսիթար

ՄԻՀՐԳԱՑ

Մատերուք, որդեակք իմ. ահա եհաս ժամանակ
 Թաքնութեան խորհրդոցս երևելոյ յաչքս ձեր.
 Զամենայն ինչ տեսանեմ ազատ մըտացս համաշու՛նչ,
 Ոչ ինչ այլ մընայ ինձ՝ բայց յունկըն ձեր յայտնել զայն:
 Փախեայ ես. այսպէս զինէն գըժայրհի բողոքն ետ հրաման.
 Գիտելով չափ սակայն ձեր՝ զկենաց իմոց հանգամանս,
 Ոչ կարէք հաւատալ թէ թաքըստեան ընալ յերկար
 Յանապատս յայս մընացից, զի եկեացեն խընդրել զիս:
 Են մարտից յաջողուածք, են և ձախող պատահարք.
 Էր բազում անգամ երբեմըն զի՛նդ կրուկ դարձ արարեալ.
 Յորժամ թըշնամին պատրեալ իմով փախըտտեամք
 Զհետ կառաց իւրոյ յակճիռս կացուցանէր զամբոխ սին,
 Եւ ի պղինձ քանդակեալ ըզգաղփաղփո՛ւն յաղթանակսն՝
 Ըզպատկերս տշխարհաց իմոց յերկաթս արկանէր,
 Ետէս զիս Բոսփոր, զի նորահնար կազմութեամբք
 Ի Ճահճաց իւրոց անգրէն հանի ածի զահն և զհոյն.
 Եւ զՀուռմս հալածեալ ի պակուցեալն Ասիոյ՝
 Ի միում առուր ըզգործ տարւոյ միոյ քանգեցի:

Ի փոխել ժամանակաց փոփոխին հոգք. Արեւելք
 Տազնապետ՝ ոչ ևս ուժէ կըրկին մըրցմանն հանգուրժել.
 Զագարակս իւր տեսանէ զարգիս խըռնեալս Հոռոմոյք
 Զորըս մերովքըս տուժիւք ընչաւեաէ պատերազմ:
 Ազգաց մեծութեանց յափըշտակողք ծարաւիք,
 Ճոխութեանց մերոց հըռչակ զամենեսին հրապուրեաց,
 Դիմեն գան ամբոխասաստ, և նախանձկտք ընդ իրերս՝
 Յամայի զաշխարհ իւրեանց գընեն, և զմերս ողողեն:
 Ես միայն կամ նոցա նգդէմ. մըտերմութիւնս գըժողի՛
 Մանր է բնաւ սիրելեացըս նուաճելոց կամ խոնջից.
 Այր այր ի բեռանէ զգլուխ իւր կամի զերծանել:
 Մեծ անուն Պոմպէի յապահոյլէ զտէրութիւնն,
 Արհաւիրք է Ասիոյ. քաւ պատահել աստ նըմա.
 Ի Հուովմ, որդեակք իմ, ի Հուովմ կամիմ արշաւել:
 Այս խորհուրդ յապուշ միտըս կըրթէ զձեզ, և կարծէք
 Թէ թերևս անյուսութեան իցէ այսօր այն ծընունդ:
 Զըգնեմ մեղ մյւրորութեանդ. և ձեռնարկումն այսպիսի
 Զկատարումն պահանջէ առ ի վաւեր լինելոյ:
 Մի գընէք ի մաի ձերում թէ ի կողմանցս յայոցանէ
 Պատուարօք յաւիտենից իցէ Հըռովմ զատուցեալ:
 Ամենայն ընդ որս անցից ծանօթ են ինձ ճանապարհք.
 Եւ թէ մահ ոչ ժամանէ, խափանել զիս առ ժամայս,
 Զարգիւնըս բանից իմոց ոչ յոյժ յապաղեմ,
 Զձեզ յամիսս երիս կանգնեմ կապիտալին ի ստորոտ:
 Յերկուանայք թէ Եւքսինոս ոչ տարցի զիս երկօրեայ
 Ի տեղիսն յորըս Իանուք գայ վախճանէ զընթացս իւր,
 Թէ թիկանց գաշինք ուխտեալք ընդ Ապախտարս և ընդ
 Ի կողմանց անտի մուտս յԵւրոպիա չտայցեն ինձ: [Խ,
 Բանակ մեր ժողովեալ ի նաւակայս անդ նոցին՝
 Ըսպայիւն իւրեանց աճեալ՝ ըստուարասցի հետ զհետէ:
 Իսկեանք, Պաննոնացիք, Գերմանիա խրոխտապանծ
 Ակն ունին գըլխոյ միում՝ գոռողութեան կալ գիմակ.
 Տեսէք դուք՝ զի Սպանիա, Գալլիացիք մանաւանդ,
 Ընգդէմ այնց պարըսպաց, զորս և առին իսկ երբեմն,
 Ըզվրէժս իմ զարթուցին, և մինչ ի Յոյնըս անգամ
 Հրեշտակօք զհեղգութենէ իմմէ եղեն ամբաստան.

Գիտեն՝ զի այս հեղեղ՝ կազմ՝ ի զեզուլ ի նոսա՝
 Եթէ նգ. քարչ զիս տանիցի, ողողեսցէ զամենայն.

Տեսջիք գուք առհասարակ՝ զի քան զաւերն իւր կանխեալ
 կարապետ յիտալիս և զկնի հետոցս ընթացին :

Անդանօր, քան յամենայն ճանապարհին, մինչ հասջիք
 Գրաջիք ըզսոսկումն ի հռովմական անուանէն,

Եւ զողորմն իտալիս մրըրկեալ գեռ ևս ի ծուխ հրոյն,
 Զոր ի շունչ իւր յետին ազատութիւն իւր վառեաց :

Ոչ, արքայորդիք, ոչ թէ ի ծագս աշխարհի
 Մանրացեալ ճընչէ Հըռովմ ընդ երկաթեացըն բեռամբ :

Ի մօտուստ և ըս փրչեալ ըզսաստկագոյն սխից քէն,
 Ամհհի քո թըշնամիքդ առ գուրրս քո են, Հըռովմ :

Թէ կարող գըտան երբեմն ընտրել իւրեանց ազատիչ
 Ըզգերին Սպարաակոս, զանարգ սըրով մըրցամարտ,

Եթէ զհեա փողեն ի կռիւ ընդ վրէժիւնդիբ խաղմարարս,
 Յորպիսի եռանդըն մեծ կարծէք նոցա գալ կանգնել

Ընդ գրօշուք ամաց բազմաց յազթանակող արքայի,
 Որ զնախնիս իւր տեսանէ մինչ ի կիւրոս վերացեալ :

Թո՛ղ զայդ. յի՛նչ վիճակ ըմբըռնել զայն կարծիցէք :
 Թափուր ի գընդաց՝ որ կարիցեն պահել զայն,

Մինչ բոլոր բովանդակ ի հալածել զիս պընդի,
 Կարիցեն զգէմ իմ ունել կանայք նոցա և մանկտին :

Խաղասցո՛ւք, տարեալ արկցուք ի ծոցնորա զպատերազմ,
 Զոր նորա մոլուցք յըզեն ծագէ ի ծագ աշխարհի.

Ընդ գոռող աշխարհակալն ի տան իւրեանց կըռուեսցուք,
 Սարսեսցեն և նոքա յահէ երգոցն հայրենեաց :

Աննիթալ զեկոյց կանխաւ, անսասցուք առնըն մեծի.
 Ոչ երեք պարտեսցին հռովմայեցիք, բայց ի Հըռովմ :

Հեղձուսցուք զինքն յարեան իւրում հեղոյ իրաւամբք.
 Այրեսցուք ըզկապիտող որ գերութեանս ակն ունէր.

Վարեսցուք ըզփառն ազարտ, և սըրբաջունջ կորուսցուք
 Զհարիւրոց թագաւորաց զամօթ, թերևս և զիմս իսկ,

Եւ բոց ի ձեռին՝ եղծցուք զանուանս ամենայն՝
 Զորս Հըռովմ ճակատագրէր անդ ի նախատ յաւիտեան :

Այս ահա փառացն է տենչ որով սրարբեալ է հոգիս :
 Սակայն մի համարիցիք թէ հեռացեալ յԱսիոյ՝

Թողում զայն հռովմայեցւոց հանգրստաւէտ ըստացուած.
Գիտեմ՝ ուստի գրտեալ հանից նրմա պահպանիչս.
Կամիմ՝ զի Հռովմ շուրջ ի Թըշնամեաց պաշարեալ՝
Ի նանիր կոչեսցէ իւր յօգնութիւն զՊոմպէոս:
Պարթևն՝ իբրև զիս հռովմայեցւոց սարսափուսն՝
Յանձն առնու վարել իմովս արդարամէտ բարկութեամբ.
Յօժարեալ ի խառնել ընդ իս ըզքէն իւր և զազգ,
Ուստըր մի խընդրէ յինէն փեսայանալ ի գուստր իւր.
Այս պատիւ քեզ է անկ Փառնակ, և զքեզ ընտրեցի,
Արի երթ, և գու լիցիս երջանկաւէտն այն փեսայ:
Վաղիւ անյապազ կամիմ տեսցէ առաւօտն
Ըզնաւացն իմոց հանգէս անցեալ ելեալ ըստ Բոսփոր.
Դու՛ զի չիք ինչ քեզ խափան, ել և այժմէն իսկ մեկնեայ.
Եւ փութովք պընգութեան լեր ընտրութեանս արժանի:
Կատարեալ զհարսանիսդ, անցեալ յայնկոյս զԵփրատու
Յուցլիր Ասիոյ միւս ոմն եւս այլ Միհրրգատ:
Ի գալուկն հարցին մերս հասարակաց բռնաւորք,
Եւ համբաւն ի Հըռովմ մինչև առ իս եկեսցէ:

ՌԱՍԻՆ. ՄԻԿԻՏՅ:

ԱԳՐԻՊՊԻՆԱՅ ԳԱՆԳԱՑԱՆՔ ԵՒ ԲՈՌՈՍԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ
ՋԸՆԹԱՑԻՑ ՆԵՐՈՆԻ

Ագրիպպինա, Բոսոս, Ալբինա

ԲՈՌՈՍ

Ի դիմաց ինքնակալին գայի, տիկին, ազգ առնել
Ըզհրամանն որ նախ Թերեւս խռովեցոյց ինչ ըզձեզ,
Բայց է գործ իմաստութեան՝ զոր կայսրը ձեզ առնէ յոյս՝

ԱԳՐԻՊՊԻՆԱ

Եւ զի զայդ կամի, մըտցուք. զիս լաւ ևս ինքն ուստացէ:

ԲՈՌՈՍ

Ինքնակալն առ ժամանակ մի ոչ սւամիք երևի :
 Վաղագոյն ընդ գուռնն մի հասարակաց անծանօթ՝
 Երկոքին և ըս բըգեշիք առ քեզ, տիկին, կանխեցին :
 Այլ ներեա ինձ զի այդքէն դարձ արարից ի գոյն պէտս...

ԱԳՐԻՊՊԻՆԱ

Ոչ, ես ճշ ածեմ խանգար իւրոց մեծաց խորհրդոցն :
 Այլ արգեօք կամիցիս՝ զի փոքր մի համարձակ
 Խօսեացուք մի անգամ անկեզծաբար ընդ միմեանս :

ԲՈՌՈՍ

Բողոսի՛ առելի եղեալ է միշտ սըտուծիւն :

ԱԳՐԻՊՊԻՆԱ

Կամ իցէ ձեզ զինքնակալն յաւէժ յինէն գողանալ :
 Ոչ ևս այլ տեսից ըզնա՝ բայց իբրև ժիա ոք տաղտուկ :
 Առ այն ամբարձի ուրեմնն ես ըզձեր բազդ՝
 Զի պտտուար ընդ որդին իմ և ընդ իս կանգնեցից :
 Ոչ և մի վայրկեան իշխէք թողուլ ըզնա յիւր հաւասա :
 Սենեկա և գու մըրցիք խըլել ըզփառսն ի միմեանց,
 Թէ ո՞ զիս ի մըսաց նորա հանցէ վաղագոյն :
 Զինքն ի ձեզ յանձն արարի՛ զի ապերախտ կազմիցէք,
 Եւ յանուս նորա լիջիք ինքնիշխան տեսարք պետուծեան :
 Արգարև՝ որչափ խորհիմս՝ ոչ վըկայեն միտք իմ ինձ
 Թէ առ ձեր ձեռասուսն ոք ժըտիցիք ունել զիս :
 Դու՛ զոյր տենչ փառաց հընար էր ինձ թողուլ ցալևոյ թ
 Յանաւագ ինչ պատիւ գընդի միոյ բանսկին,
 Իսկ ես, որ գչեա նախնեաց իմոց ի գահ հետևեալ,
 Ես գուստր, և կին և քոյր և մայր տերանցըդ ձերոց...
 Յինչ ուրեմնն նըկըրտիք. համարիցիք թէ իմ կամքս
 Ինքնակալ զոք կացոյց՝ զի կանգնիցեմ ինձ երիս :
 Ներոնն ոչ ևս է մանուկ. չև՛ է նմա ժամ իշխելոյ :
 Յերբ կամիք զի յերեսացըդ ինքնակալն երկիցէ :
 Զմարթիցի՛ առանց ձերոց աչաց նըմա տեսանել :
 Միթէ ոչ ըզնախնիսն ունիցի իւր առաջնորդ :

Ընտրեսցէ, թէ կամի, կամ զԱւգոստոս կամ զՏիբեր,
 Թէ կարէ՝ լիցի նմանող Գերմանիկեայ հօր իմուծի
 Ընդ այնչափ դիւցազունս ոչ իշխեմ զանձն իմ կարգել,
 Սակայն ե՛ն ե՛ն արուժիւնք զոր ցուցանել կարեմ ես.
 Կարեմ գէթ ուսուցանել, մըտերմուծիւն իւր որչափ
 Ընդ ինքն և ընդ ծառայ պարտի թողուլ անջըրդեա:

ԲՈՒՈՍ

Իմ յայժմու ժամանակիս ոչ այլ ինչ էր յանձն առեալ,
 Բայց անպարտ զինքնակալն առնել զգործոյ միջէ.
 Այլ զի նմա ինձ ջատագով մըտանել ոչ ախորժեա,
 Եւ բոլոր վարուց նորա երաշխաւոր առնես զես,
 Տաց, տիկին, զպատասխանիդ ազատութեամբ զինուարի՝
 Որ չբգիտէ սընգուրել զըստուգութիւն ի չբպար:
 Զմանկութիւն ինքնակալին յիս ապաստան արարեր.
 Վըկայեմ, և պարտ է ինձ յիշող լինել այդքով միշտ.
 Բայց երդուեալ ինչ էր իմ քեզ՝ վըսարանգի տալ ըզնա,
 Ինքնակալ հանել՝ որ լոկ հնազանդ լինել գիտիցէ:
 Ո՛չ. առ այդ՝ ոչ և ըս քեզ պատասխանի պարտիմ տալ.
 Ոչ ևս է նա քոյդ որդի, այլ աշխարհի պետ և տէր.
 Պահանջիմ, տիկին, համարս առ Հոռոմոց տէրութիւնն,
 Որ զկորուստ կամ զիբրկութիւն իւր համարի յիս աւանդ:
 Ո՛հ, թէ հարկ ի ագիտութիւն ուսուցանել էր ըզնա,
 Ե՛ս միայն և Սենեկա կայաք ըզնա թիւրեւոյ.
 Ընդէր էր զմարդահաճոյսն յիւրոց շաւղացն քեցել.
 Եւ յաքսորս անդ Էր արժան խընդրել նըմին զեղծուցիք.
 Արքունիք Կլաւդիոսի հօծ պատարուն ըստրըկօք
 Փոխանակ երկուց ի պէտարդ նա հազարս ընձեռէր.
 Որ զմիմեամբք ի պատիւ վտտթարեւոյ զինքն ելցեն,
 Առնիցեն այլևորել նըմա յերկայն մանկութեան:
 Հիմ, տիկին, աըրտընջիցէք. կան մեծարանքդ անկապուտ.
 Իբր յանուն ինքնակալին՝ նոյն և ի մօրն է երդնուլ:
 Ապաքէն ոչ ևս գայ նա, հանապազ զոր ամենայն
 Զաշխարհն յոտարդ արկանել, և զքո խըռնել զարքունիք.
 Այլ արժան իցէ, տիկին, և սիրտ նորա շնորհակալ
 Անդ ևեթ երևիցի՝ ուր ի հարկի լուծ կայցէ.

Միթէ մշտ ցածուն Ներոն և յամենայն ժամ երկչտո՛
 Զիշիցէ լինել կեսար և Ալգոստոս՝ բայց յանուան :
 Ասացինք քեզ և զայս . Հըռովմ անպարտ առնէ զնա .
 Հըռովմ երկից ձերբազատ սարրկաց յերկար ծառայեալ ,
 Ոգի այն ինչ առեալ ի սամեաեացըն կրելոյ ,
 Հաշուի զիւր ազատութիւնն ի տիրելոյ Ներոնի .
 Զինչ ասեմ . և լաուութիւնք թըւին ծնանել վերջստին .
 Պետութիւն ոչ ևս ողոյն տեաան է միում կողուպուտ .
 Յարիսեան գաշա ժողովուրդն ինքն ընարէ զիւր ոստիկանս .
 Ինքնակալըն վկայութեամբ զօրուն կարգէ զօրազուխս .
 Թրասէաս յաանին , ի բանակին Կորբուլոն
 Տակաւին անմեղք են , հակառակ սուտ համբաւոյն .
 Անապատք՝ խըռնեալք երբեմն յաւագանւոյ խորհըրդեան՝
 Ի քըսու չարախօսաց նոցին են այժըմ բնտկեալք :
 Զի փոյթ է , թէ ինքնակալն անսայցէ մեզ հանապազ ,
 Թէ միայն ի նորա փառըս կըրթեսցին մեր խօրհուրդք .
 Թէ միայն յաւէժարար ընդ ծազկաւէտ տէրութիւնն
 Ազատ միշտ կացցէ Հըռովմ , և Կայսր՝ հըզօր յամենայն :
 Բայց Ներոն , տիկին , ինքնին է բաւական ի պէտս իւր .
 Հնազանդիմ , ոչ ի պատիւ ձըգտիմ ըզնա խրատելոյ :
 Ի նախնեաց իւրոց անշուշտ պարտի առնուլ օրինակ .
 Յուզիլ գործ՝ պարտի Ներոն անձինն և և թ նըմանել :
 Երանի թէ լաուութիւնք իւր ընդ միմեանց յաջորդեալ՝
 Զառաջին ամըս նորին ածիցեն ամ ըստ ամէ :

ԱԳՐԻՊՊԻՆԱ

Ապա ձեր ընդ հանգերձեալըն վըստահել չիշխելով ,
 Համարիք թէ Ներոն մոլորեսցի առանց ձեր :
 Սակայն գուք , մինչև ցայսօր զգործոյ ձերմէ գոհաբանք ,
 Որ եկեալ կայք տալ մեզ վըկայութիւն զլաուութեանցն ,
 Յայտնեցէք մեզ թէ առ ինչ , յափըշտակօզ երևեալ ,
 Ըզքոյր Սիլանոսի առևանգել տայ Ներոն .
 Յայս և և թ գէտ ունի զակն ի նախատինըս գրօշմել
 Ի նախնեացն իմոց արիւն ի Յունիա ցողացեալ .
 Յինչ ըզնա բասրիցէ , և իւ ոձիւր յանցանօք
 Օրիորդըն գտանիցի եզեռնաւոր քրէական .

Այն որ ցայն ժամ ի ցածուն պարկեշտուածեաննն սընեալ,
 ԸզՆերոն ոչ տեսանէր՝ Թէ հափափեալ չէր նորա,
 Նա և յերախտեաց նորին կարգէր համարի
 Ձերջանիկն ազատուծիւն ի տեսլենէն զըրկելոյ :

ԲՈՌՈՍ

Եւ ոչ մի զնրմանէ գիտեմ կասկած լեալ չարեաց :
 Բայց ցայս վայր, տիկին, ըզնա պարտաւորեալ չիք կայսր.
 Ձիք ինչ աստ անհաճոյ տեսանելոյ յաջըս իւր.
 Կայ նա յապարանս՝ որ լի իւրովքն է նախնեղք :
 Այլ գիտակ ես զի զոր նայն յանձին բերէ իբաւսունս,
 Իշխան մի ապրատամբ յայր իւր կոնգնել կարող են.
 Ձի արեան ինքնակալին ոչ է օրէն խառնել յոք,
 Բայց յորս ինքն ինքնակալքն հաճեսցի աւանդել.
 Դու ինքնին վըկայեսցես, զի չէ բնաւին ինչ արգար՝
 Հրաման տալ առանց իւր ըզթոռանէն Աւգոստեայ :

ԱԳՐԻՊՊԻՆԱ

Իմանամ, ուսուցանէ ինձ Ներոն քով բարբառով
 Թէ ի զուր ինչ յուսայ Բրիտանիկ յիմ ընտրուծիւն :
 Առ յիւրմէ հիքուծենէն դարձուցանել զաջըս իւր՝
 Ձուր ըզսէր իւր օղոքեալ եմ հարսանեզն յոր յուսայ .
 Առ յամօթ զիս առնելոյ՝ կամի Ներոն ցուցանել
 Թէ քան զկար իւր առաւել Ագրիպպինա խոստանայ :
 Հռովմ իմով պաշտպանելովս անհընարին վարանի,
 Նա սովին անարգանօք կամի ցըրել ըզպատրանան,
 Եւ զի բնաւ արեզերք ուսցին անիւ գողուծեամբ՝
 Մի ևս այլ զիմ օրդին և զինքնակալքն խառնել :
 Կարող է. այլ սակայն իշխեմ ասել գեռ առ նա,
 Թէ յառաջ քան զքաջուծիւնդ հարկ է պընդել զաթոռ իւր.
 Եւ զի հարկ ևս առնելով ինձ ի նեղի ուի կարուջ
 Ի հանդէս հանել ընդգէմ իւր զիմ արկար զօրուծիւնս,
 Ինքըն զիւրըն վըտանգէ. և Թէ ի լուծըս բարձցի,
 Անուն իմ Թերևս քան զոր կարծէն ծանր իցէ :

ԲՈՌՈՍ

Ձի՛նչ, տիկին. զմեծարանաց իւրոց համայն կասկածանք,

Եւ ոչ քայլ մի առնուցու թէ չլինիցի խեթահար :
 Կարծիցէ՞ ինչ ինքնակալն ըզքեզ ի թեր Յունիայ ,
 Կարծիցէ՞ միաբանեալս ըզրիտանիկ և ըզքեզ :
 Իսկ զիարգ . ի թիկունքս թըշնամեաց քոց կայցես՝
 Գամագիտ պատճառանաց լինել ըզնա բարեւոյ :
 Թէպէտ և գոյն ինչ բան որ խօսեսցի քեզ ի սողիւտ .
 Իցեն գու միշտ պատրաստ թագաւորել ընդ նրմա :
 Միշտ զանձանց խիթայցէք , և ընդ միմեանս ողջոյնք ձեր
 ի պարզել պարապիցեն և խի զիրաց ինչ մըթարս :
 Թ՛ո՛ղ անդր , ո՛հ , զգատախաղի գառն և դըժնեայ պընդու-
 Եւ զգեցիր զներողամիտ արգահատանս աղու մօր . [Թիւն ,
 Համբեր գուն ինչ ցըրտու-թեան , և մի զվայրօք զայն ածեր .
 Եւ մի տար արքունեաց լըքանելոյ զքեզ պատճառս :

ԱԳՐԻԳՊԻՆԱ

Եւ ո՛ր փառս անձին գրեսցէ յԱգրիպայինայ թեկն յենոււ ,
 Ուր ինքնին իսկ Ներոն ըզկործանումն իմ յայտնէ ,
 Ուր թըւի զիս յերեսաց իւրոց հանել տարագիր .
 Մինչ Բոռոս առ նորա գուրս արգելոււ զիս յանգըզնի :

ԲՈՌՈՍ

Տեսանեմ քաջ , տիկին , զի ժամ է ինձ լըռելոյ ,
 Եւ զի բանքս ազատախօս քեզ անհամիլ սկսանին .
 Անիրաւ իմն են ցաւք , և ամենայն իրաւունք
 Որ զայնս ոչ ողբիցեն՝ կասկածանացն են զայրուկք :
 Աւասիկ Բրիտանիկ . արդ ես տեղի տամ նրմա ,
 Եւ թողում ըզքեզ լըսել և բողբել ըզլարեացն ,
 Եւ թերևս ամբաստան զնոցա հնարիցըն լինել՝
 Յոյց և ոչ իսկ հարցեալ է ինքնակալըն խորհուրդ :

ՌԱՍԻՆ . ԲԻՒԳՈՒԿԻ

ԲՈՒՌՆԱՅ ԳՈՒԵԼ ԶՆԵՐՈՆ Ի ԽՈՐՀՐԴՈՑ

ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԲՐԻՑԱՆԻԿԵԱՑ

ՆԵՐՈՒ, ԱԳՐԻՊՊԻՆԱ

ՆԵՐՈՆ

Տիկին, քաջ է, կամիմ՝ զի յայսմհեաէ զգօրու(թիւնդ
 Ի սիրտս ամենայն շնորհակալիքս իմ գրեսցեն,
 Եւ այժմէն ըզբարեդէպ զայս ջըրտու(թիւն մեր օրհնեմ՝
 Որ զմերոյ սիրելու(թեանս յորդորելոց է զեռանգն .
 Որ զինչ և գործեաց, Պալլաս, շատ է, մոռանամ.
 Հաշտիմ ընդ Բրիտանիան, և զերկոցունցս օցտող աէրն
 Ապաստան ի քոյդ առնեմ ընտրու(թիւն, դո՛ւ գատեաջիբր:
 Օ՛ն արի, զայս աւետիս խընդու(թեան տար առ եզբայրս:
 Թիկնապահ՛ք, մօրն իմոյ հնազանգ լերուք հրամանաց:
 (Գիբիս ածեալ յօրն գնայ)

ՆԵՐՈՒ, ԲՈՒՌՆԱ

ԲՈՒՌՆԱ

Տէր, այս խաղաղու(թիւն և այս ողջոյնք առ միմեանս՝
 Տեսիլ սքանչելի մատուցանեն յայչքս իմ.
 Գու՛ր գիտես թէ ձայնս երբեք եզև՛ նըմին հակառակ,
 Ի սիրոյ նորա թէ բնաւ կամեցայ զքեզ որոշել,
 Եւ եղէ՛ արժանի այդմ անիրաւ բարկու(թեան:

ՆԵՐՈՆ

Ոչ շըն(թեմ ինչ քեզ, Բոուոս, բողոքէի ես ըզքէն,
 Կարծեցի ես ըզձեզ միաբանեալ զերկոսեան,
 Այլ նորա թըշնամու(թիւն վըստահ առնէ զիս ի քեզ:
 Յոյժ ճեպի նա, Բոուոս, կանգնել զինէն յաղթանակ.
 Գիրկս ածեմ ախոյանիս, այլ ի խեղդեւ զինքն անգէն:

ԲՈՒՌՆԱ

Զիա՛րդ, աէր:

ՆԵՐՈՆ

Շատ է արդ, հարկ է իւրով կործանմամբն
 Ի սաստիցն Ագրիպպինայ ազատանալ ինձ ի սպառ.
 Մինչև նա շքնիցէ՝ կիսակենդան եմ ի կեանս, [լեաւ.
 Ձանձրացոյց զիս տաղտկացոյց անուամբն այնուիկ ասե-
 Եւ չկարծեմ թէ վրիժապարտ յանգընութիւն իւր գար-
 Յաւելցէ միւսանգամ խոստանալ զիմ գահ նրմա: [ձեալ

ԲՈՌՈՍ

Արդ ուրեմն յետ սակաւուց ողբասցէ՞նա զԲրիտանիկ:

ՆԵՐՈՆ

Մինչ չև օրս այս վախճանեալ՝ ոչ ևս երկեայց ի գմանէ:

ԲՈՌՈՍ

Եւ ո՞վ ոք զայդ խորհուրդ առնիցէ քեզ ըզձակերտ:

ՆԵՐՈՆ

Փառքն իմ և սըռփանք և ամբուլութիւն և կեանք իմ:

ԲՈՌՈՍ

Ո՛չ, որ զի՛նչ և ասիցես, տէր, այդ խորհուրդ սոսկալի
 Ոչ է բնաւ, և ոչ երբեք ի քու՞մ ծոցիդ յըզացեալ:

ՆԵՐՈՆ

Բոռմս:

ԲՈՌՈՍ

Ո՛հ. ի բերանոյ քումմէ կարե՞մ լըսել զայդ.
 Դու ինքնին գըտա՞ր կարող անքաւքնելի լըսելոյ.
 Խորհիցին յո՞ր արիւն ըզձեռսըդ ես մըխեւոց:
 Ձանձրացա՞ւ թագաւորել Ներոն ի սիրտս ամենայն:
 Ձի՛նչ ըզքէն ասիցեն. զի՛նչ ի սըրտիդ են խորհուրդք:

ՆԵՐՈՆ

Եւ զի՛նչ. միշտ ի նախկի վառացն իմոց կաշկանդեալ՝
 Ունիցի՛մ յանդիման աչացըս սէր չգիտեմ զի՛նչ՝
 Ձոր առեալ բերէ գիպուած և կողոպտէ առ օրին:

Հրպատակ կամաց նոցա, իմոց ըզձիցս ոխերիմ,
 Ինքնակալ իցեմ նոցուն՝ միայն նոցին կամարար :

ԲՈՌՈՍ

Եւ չիցէ ինչ բաւական, տէր, ի հաճոյս սրբախի քո՝
 Ձի լիցի երջանկութիւն աշխարհի քոյդ երախտիք :
 Ի քո ձեռս է զայդ ընտրել, գու ինքն ես տէր տակաւին :
 Մինչև ցայժմ առաքինի, կարես լինել մինչ յապայս .
 Հորդ և կոկ է ճանապարհն, ոչ ինչ ըզքեզ խափանէ,
 Կայ մնայ քեզ զօրութենէ ի զօրութիւն գնալ միայն .
 Սակայն, թէ սրահողացըն քոց խրատուց անսայցես,
 Քեզ, տէր, հարկ լինիցի մեղաց ի մեզս ընթանալ,
 Ձսաստկութիւնսրդ այլովք անգըթութեամբք պահպանել,
 Եւ զբազուկսդ արիւնաներկըս լըւանալ յապաժոյժ :
 Բրիտանիկ ի մահուն՝ հուր վառեսցէ նախանձու
 Յոգիս բարեկամացն որք կազմ ի կռիւ կան ի նպատա :
 Վրէժխնդիրքս այս գըտցեն հետզհետէ այլ ձեռննտուա,
 Որոց յետ մահուն իւրեանց յաջորդք անգամ յարիցեն .
 Բոց անշէլ բորբոքես . տիեզերաց հաւաւորդ
 Երկիցես յամենայնէ . յաւէժ անդուլ պատուհաս,
 Յամենայն ժամ ի կամըս խորհրդոցդ ահ և գող .
 Եւ ծառայք քո՝ թըշնամեացդ ի համարի հաշուեցեալք :
 Վահ, ամաց քոց առաջնոց բարեբաստիկըն հանդէս,
 Ըզքեզ, տէր, յատելութիւն անմեղութեան քում ածէ :
 Խորհիցին յերանութիւնն որով եղեն անուանի .
 Յորպիսի հանգըստեան անցուցեր, ոհ, զայնոսիկ :
 Որպիսի ուրախութիւն՝ զմըտաւ ածել և ասել .
 « Յամենայն տեղիս այժմիկ օրհնաբանեն, սիրեն զիս .
 Ոչ երբեք երևի ամբոխն յանուն իմ խոովեալ .
 Յարտասուս նոցա երկինք ոչ լըսեն բնաւ զիմ անուն .
 Խաւարին ոսոխութիւն նոցա չխորչի յերեսացս,
 Ձամենայն սիրտ տեսանեմ թուուցեալ առ իս յանցըս իմ :
 Այս էին քո հեշտութիւնք . զինչ փոփոխումըն, ո՞վ գիք :
 Եւ անարգ արիւն անգամ՝ էր յաչըս քո պատուական .
 Եղև օր, ոչ մոռանամ, արգարագատըն գահչիճ՝
 Ըստիպէր ի մահ ուրումն յանցաւորի զքո ձեռնարկ,

Դու, տէր, խնայողութեան նոցա կայիր հակառակ.
 Սիրող անձամբ զանձն ի կարի անգըթուութիւն բամբասէր.
 Եւ զաղէարս պաշտամանց իշխանութեանն ողբալով,
 « Կամէի, ասէիր, թէ չգիտէի գիր համբուն » :
 Ո՛չ. այլ կամ ինձ անասացես, կամ թէ զչարեացդ այգոցիկ
 Խնայեսցէ մահ իմ յինէն ըզտեսութիւնն և ըզցաւս.
 Յետ փառաց քոց մի ոք զիս տեսանիցէ կենդանի :
 Եթէ գործ մի այսպիսի ես գործելոց ապիրատ, (անկանի յոսն)
 Աւասիկ կամ պատրաստ, աստի, տէր, չլ մեկնեալ քո՝
 Տուր ըզսիրտըս զայս խոցել, ում հաւանել չիք չընար.
 Զայնեա զանագորոյնսն որ զայդ ի քեզ չընչեցին.
 Սկեսցեն հանդէս առնել ձեռաց իւրեանց անփորձից...
 Տեսանեմ զի արտասուք իմ գորովեն զինքնակալս,
 Եւ սիրտն առաքինի մւրնչէ նգ նոցա մոլութիւն :
 Մի վատներ ըզժամանակ, զանուանան ասա զգրուժանից,
 Որ իշխեն զեզբայրագաւ խորհուրդըդ քեզ թեւադրել.
 Կոչեմք զեզբայրըն քո, ի գիրկըս իւր մոռասջիր...

ՆԵՐՈՆ

Ո՛հ, զի՞նչ պահանջես :

ԲՈՌՈՍ

Ո՛չ, ոչ ատեայ ինչ նա զքեզ,
 Նենգեն նըմա, տէր. զանմեղութիւն իւր գիտեմ,
 Ես կամ քեզ երաշխաւոր հնազանդութեանըն իւրում :
 Ընթանամ առնա, երթամ ճեպել ըզքաղցր հանգիստումդ :

ՆԵՐՈՆ

Ինձ ի յարկըս սենեկաց իմոց ընդ քեզ սպասեսցէ :

ՌԱՍԻՆ. ԲՐԻԳԻՆԻԿ :

ՄԱՀ ԱՔԻՄԵԼԵՔԱՑ

Սահող, Յոշաֆատ, Աբէնեբ, Ասիմէլէտ, Զորակատ :

ԱՌԵՆՆԵՐ

Տէր արքայ, չև ոխերիմ արեանն ինև հոսեալ ուխք,
 Թէ լինիմ քեզ յանդիման՝ մեծ ինչ պատճառք հարկեն զիս :
 Իաւիթ քաջն և կորովին՝ որով կանգնի յաղթուածիւն՝
 Զիք ուրեք. ժամ մի հազիւ ժամանակեալ կայ՝ մարտին :
 Զեռանդուն զօրուն լքեսս մոռնչեալ ընդ օդս աղաղակ,
 Եւ զերկիր թընգեալ ի գոգի երկաթակոռս սըմբակաց
 Բոցաշունչն երիվարաց, գոռք և խըրխինջք, զինուց փայլք,
 Եւ որսոք՝ ի հարկանել յետին վատաց իոգ խրախոյս :
 ԸզԻաւիթ՝ ո՞ տեսանէ. չիք ի միջի : Եւ արգ տես, —
 Արդարև երկնից օձան, — ո՛ կայցէ իւր փոխանակ.
 Սո՛ կայ ի ճամբարիս պատմուձանեալ ի սպիտակ
 Փափուկ ձորձըս կըտաւիս քահանայիցն օրինի.
 Քաղտասոյր այսր ի բանակ՝ բենեամինեանցն աւընթեր
 Թաքթաբուր կայր ի գողի. հաւաստիկ զառաջեաւդ,
 Հանրց ըզմեծ պատճառն որ զինքն առեալ՝ բերէ յայս վը-
 [տանգ :

ԱՔԻՄԵԼԵՔ

Արքայի եթէ ներէ ցասումն՝ ասեմ ըզպատճառս :

ՍԱԻՈՒՂ

Արքայի՛ ցասումն. ուրեմն ե՛ս արժանի, անօրէն :
 Ո՛վ ես գու : Ինձ թըլի ճարտար ըզքեզ ճանաչել :
 Ի յոխորտ ցընորական երամակէ անտի ես՝
 Ի Հռամայ տեսանողացն :

ԱՔԻՄԵԼԵՔ

Իմ է զեփուան ըզգեկնուլ :
 Ես, սըրբոյն Ահարոնի, յառաջագաս Ղևտացուց՝

Ի պաշտօնն աստուածային յոր զինքն ընտրեալ կացոյց Տէր,
 Յեա երկայն դասուց արդոյ քահանայից եմ յաջորդ,
 Ի Նոմբա բնակեմ ես՝ առ տապանակն ուխտին սուրբ,
 Որ և նա յայլ ինչ նըւադօ ի բանակիս օթանայր:
 Աւելորդ իմն է այժմիկ՝ թէ գըտցի անդ և թաքուն
 Պաշտօնեայն Աստուծոյ. զի ուր Սաւուզ հրամայէ՝
 Կարտօի եկամնւա է անդանօր քահանայ.
 Սահայն ոչ, ոչ է անդ՝ ուր Իսրայէլ գընէ մարտ,
 Աստուծով եթէ իցէ մեր յայթու(թիւն) որպէս միշտ: —
 Դու զիս ոչ ճանաչես. և զինչ զարմանք իցեն այս.
 Իսկ դու զքեզ ճանաչես: — Խոտորեցեր զօտըս քո
 Ի շաւղացն որ առ Տէր. իսկ ես անդէն կամ մընամ
 Ուր բնակէ մեծն Աստուած ի խորանի վկայու(թեան),
 Անդանօր՝ ուր ի վազուսա ըզՍաւուզ ոչ նըշմարեմք:
 Եւ անուն յորջորջական՝ Աքիմելէք ինձ կոչի:

ՍԱԻՈՒՂ

Յիս մատնիչ հընչէ անունդ. և այժմ ըզքեզ ճանաչեմ.
 Ի ժամու գաս զառաջիաւս. արդ ասա գու չիցես այն
 Որ Դաւթի տարագրելումն ետուր ամուր ապաւէն,
 Կերակուր և թաքըստոց և զէն. և զէն որպիսի.
 Ըզսուսերըն նուիրական զփըղըտացւոյն որ ի ձօն
 Կախեալ կայր Աստուծոյ ի վըրանի անդ ժամուն,
 Ուտի գու զայն քոյովըդ կորզեցեր պիղծ ձեռամբ.
 Եւ գու զայն ածեր ընդ մէջ խարդախողի թըշնամւոյն
 Տեառըն քո և միում միայնոյ քոյդ արքայի: —
 Եւ գու գաս, վիրագ չար, այսր ի բանակըս զօրուս.
 Ո՞րընաւ շուշտ կայցէ թէ մատնեառուր եկեալ կաս:

ԱՔԻՄԵԼԷՔ

Արգարև՝ զքեզ մատնել գամ, զի յադ(թու)թիւն գամ խըն,
 Զինուց քոց ի Տեառնէ՝ որ արգելու զայն ի քէն: [գրել
 Այո, ես եմ որ Դաւթի կարկառի ձեռըն սիրոյ:
 Բայց Դաւիթ միթէ չիցէ՞ փեսայ ի գուստր արքայի.
 Ոչ ի մէջ քաջացըն քաջ, հեղահամբոյր, գեղեցիկ,
 Եւ արդար քան զամենայն իսրայելեանըս զաւակ.
 Ոչ նա ինքն ի պատերազմ՝ քոյին բազուկ և խրախոյս.

Յարքունիս ի գուլ զինուց ոչ ինքն երգով որդաթ տեր .
 Սիրելին օրինորդաց, ժողովըրդեան խընդուծիւն,
 Թըշնամեաց արհաւիրք, ես այդմ եղէ կեցուցիւ:
 Եւ գու ինքն ոչ գարձուցեր զնա յառաջին իւր պատիւս,
 Ոչ և զինքն ընտրեցեր պատերազմի գառաջնորդ,
 Յաղթուծիւն անել գընդիդ, և փարատել ըզկասկած
 Խորտակման՝ զոր արհեւէ է Տէր Աստուած ի սիրտ քո: —
 Եթէ զիս պարտաւորես՝ գատապարտես անձամբ զանձն:

ՍԱՌՈՒՂ

Իսկ ուստի՞ գուծք ի ձեզ ի քահանայսդ, անողորմք,
 Ամպարիշտք, և արեան հանապազօր ծարաւիք:
 Թըւեցաւ Սամուելի եզեռն մեծ, այն զի ես
 Ձըցպանի զԹագաւորն Ամաղեկայ զձերբակալն
 Ի մարտի՞ զէն ի ձեռին, Թագաւոր մեծ քաջազէն,
 Քաջաբուն, քաջայանգուգն ազնւական շառաւիղ,
 Չանխայտ ի ծախս արեան իւրոյ ի նպաստ ամբոխին:
 Արքայ հէք. թմ առաջի խիստ կապանգը ձրգեալ գայր .
 Յուցանէր տակաւին, Թէպէտ կապեալ, յանձըն իւր
 Պերձուծիւն ազնւական, ոչ Թըշնամանք, ոչ ազերս:
 Յանցաւոր Սամուելի ժանտին Թուեցաւ արուծեամբն .
 Սուրբ ձեռամբն ի սիրտն անզէն մըխեաց երիցս ըզգաշոյն:—
 Այս են ձեր, ձեր այտքիկ պատերազմունք են, ո՞վ վատք:
 Իսկ որ գլուխ ընդդէմ իւրում տեառն ամբառնալ յողայցէ .
 Գըտանէ ի ձեզ Թիկունս և ապաւէն և ասպար .
 Ձեզ այլ հոգք, Թո՞ղ ըզսեղանն, են սիրելիք ամենայն:
 Ո՞վ էք գուք, գուք ո՞վ իցէք, ազգ ապիրատ և անգուծ,
 Որ զմերոցըս վըտանգաց յանքոյթ ամրի ծիծաղիք,
 Որ յանօսր ի կտաւ պատեալ՝ ժըպրհիք ըզմեք անցանել .
 Ըզմեք՝ որ ընդ քիրան և նդ ապաժոյժ գամք ի զէնս,
 Ըզմեք՝ որ ընդ արիւն, ընդ արհաւիրս և ընդ մահ՝
 Վասն հարսանց և զաւակաց և ձեր ինքնին իսկ անձանց
 Առուրըս սոսկալիս տառապագին վարեմք ցանդ:
 Եւ արգ գուք, վատք և տնգործք՝ ոչ ինչ ընդհատ ի կանանց,
 Արհամարհ գաւազանաւ և ի պաճոյճ մըրմընջոյ
 Նըւաճե՞լ նըկըրտիցիք ըզսուրըս մեր և ըզմեք:

ԱՔԻՄԵԼԷՔ

Իսկ գու զինչ, արքայ երկրի, այլ յաչքս Տեառն՝ ո՛վ արքայ :
Մո՛ւտ ի քեզ յանձնըդ, Սաւուղ. չես ինչ՝ բայց հող Թագաւ.
[զարգ. —

Ես ոչինչ իսկ եմ ինձէն, սակայն փայլակն եմ, մըրրիկ,
Փոթորիկ եմ՝ եթէ յանձն իմ Տէր Աստուած իջանէ,
Մեծն Աստուած քոյդ արարիչ՝ որոյ հազիւ հազ ի քեզ
Գամ մի տկն արկեալ հայել, և ո՛ւր գըտցի անդ Սաւուղ : —
Չարաչար գովես զԱգագ, և չարաչար գնաս ըզհետ
Ամպարիշտ շաւղաց նորա : Եղեռնաթիւր արքայի
Բաց ի սրոյ Թըշնամեաց գուցէ՞ ինչ այլ պատուհաս .
Միթէ սուր հարկանիցէ՞ եթէ ոչ Տէր կամեսցի :
Ըզվէժքս իւր Աստուած գըրէ յարձանքս կըճեայս,
Եւ որպէս ի փղըշտացին, նոյն յիսրայէլ աւանդէ : —
Սոսկացիր, Սաւուղ, ահա ի Թուխ ամպրոպ ի բարձունս
Սաւառնեալ հրեղէն Թեզք հայիմ՝ զհրեշտակըն մահու .
Մերկանայ միով ձեռամբ ըզհրաշէկ սուր վրէժիւնդիր,
Միւսով բուռն հարկանէ զալեաց գըլեոյդ անօրէն :
Դողացիր Սաւուղ. — Տես ո՛վ է որ ճեպէ զքեզ ի մահ .
Սա ինքն այս Արեւնէր, Սատանային հարազատ,
Որ ըզսիրտ քո զառամ կասկածանօք պըղտորէ,
Որ ըզմեծ պատերազմօղդ՝ առնէ նըւազ քան զմանուկ .
Դու պանդոյր՝ ըզբուռն բընիկ ասն քո նեցուկ և զամուր
Հալածես վըտարանդի : Ո՛ւր իցէ ասու Սաւուղայ .
Նա յալիս զայն հիմնեցոյց, ահա դըրրդի, անկանի,
Աւասիկ յաճիւն դառնայ, ահա մղեղեալ կայ յոչինչ :

ՍԱԻՈՒՂ

Մարդարէ իմոց չարեաց, այլ գու քոյոցդ ոչ եղեր .
Ի բանակըս չև եկեալ՝ թէ ի մահ գաս՝ չիմացար .
Ձայն քեզ էս պատմեմ կանխաւ, և Արեւնէր հանցէ յանդ :
Արեւնէրդ իմ մըտերիմ, էրթ արդ փոխես զամենայն
Ըզկարգածն անօրինին Դաւթի՝ յորս նենգ կայ ծածկեալ :
Յելանել արուսեկին վաղիւ տացի պատերազմ .
Ասողըն այն պայծառ՝ վրկայ գուպարածի կացցէ ինձ .
Խորհուրդ չար էր Դաւթի, արդ տեսանեմ, զի կացոյց

Ի մոռտս արեգական ի թըշնամին տալ գըռոյթ,
 Գոգցես իմն ի նըշան խոհարհեւոյ իմ բազկիս.
 Այլ տեսցուք: — Զամենայն ոգիս իմ յիս տեսանեմ
 Կազգուրեալս ի սպառնալեացդ, ես եմ վազիւ սպարապետ.
 Ար նախճիրսըն մեծամեծ զոր գործեցից առ վազիւ՝
 Տիւն ողջոյն կարճատեսցի: — Դու հասպա զայրդ, Արեններ,
 Յերեսաց իմոց քարշեա վազվազակի, և սպանցի:

ՅՈՎՆԱԹԱՆ

Ո՛վ երկինք, հայր՝ զի՛ գործես. հայր...

ՍԱԻՈՒՂ

Դու լուռ լեր. օն զենցի,
 Եւ արիւն իւր զազիր՝ ի գլուխս անկցի փղըշտացուց:

ԱՔԵՆՆԵՐ

Այժմէն նա ի մահ գընաց...

ՍԱԻՈՒՂ

Այլ նա սակաւ է յիմ վրէժ:
 Առաքեա ի Նոմբա զսըրամըտութիւն բարկութեանս,
 Այր և կին, անգեայ, Ծառայ, մանկտի և տուն ըսպանցէ,
 Այրեսցէ, փլուզցէ, ողջոյն զազգն ւամպարիշտ հոգեք առցեն:
 Այժմիկ քո քահանայք գոգցեն իրաւ՝ գոյ Սաւուզ:
 Բազո՛ւկ իմ ի ձէնը յաճախ յարիւն գըրգըռեալ՝
 Զհարկտնէր ըզձեզ. անտի անտի միայն իւր ձազանք:

ԱՔԻՄԵԼԻՔ

Զիս, արքայ, չկարէ ոք զըրկեւ յարգար մահուանէ.
 Վասն որոյ՝ քաղցր է ինձ մահ և ոչ սակաւ փառաւոր.
 Ըզբոյդ՝ Տեառն ի վաղուց տնդարձաբար է կընքեալ.
 Արեններ և դու ի սուր՝ անարգաբար երկոքին.
 Եւ ոչ եթէ ի սուր թըշնամւոյն, ոչ ի մարտի: — [ծոյ
 Օն երթամք. զվերջին պատգամս առ ամպարիշտն՝ յԱստու-
 Խօսեցայ, և խուլ գըտաւ. պաշտօնն իմ լի բովանդակ
 Վըճարեալ է արդ այժմիկ. ըզկեանս ուղիղ Ծախեցի:

ՍԱԻՈՒՂ

Օն ի մահ վարեսցի շոյտ. ի մահ գըժնեայ և ի տոկ:

ԱՔԻՆԻՐԻՑ Սաւուզ:

ՍԱԻՈՒՂ ԻՌՈՎԵՍԼ

Սառու, Մէջու

ՍԱԻՈՒՂ (Ի ցնորս)

Ոգի սըրտմըտեալ և սոսկալի, գաղարեա,
 Թոյլ տուր զիս. տես աւասիկ, յոտսըգ յերկիր անկանիմ.
 Յո՛ փախչիմ... յո՛ Թաքչիմ. հաշտեաց ահեղ ոգի ժանտ.
 Այլ նա խո՛ւլ է յաղաչանս և տագնապէ զիս անդուլ:
 Ո՛վ երկիր, պատառեցիր և կենդանւոյն կըլջես զիս.
 Ո՛հ, ո՛ տայր Թէ միայն ահաւորս այս հոգեգէշ
 Զայլոս իւր ըզգըժընդակս յիս նետաձիգ չարձակէր:

ՄԵԼԻՌՈՂ

Ո՛վ հայր, յուժե՛ փախչիս, չիք ոք որ զքեզ հալածէ.
 Դու զիս ո՞չ տեսանես, ո՞չ ճանաչես զիս այլ ևս:

ՍԱԻՈՒՂ

Ո՛վ գու մեծ քահանայդ, ո՛վ սուրբդ, ինձ կա՛լ կամիս աստ:
 Սամուէլ, ո՛վ ճըշմարիտ հայր իմ, զայդ գո՛ւ պատուիրես.
 Աւասիկ առ քո մեծ հրամանդ ի հող խոնարհիմ:
 Դու երբեմն յայս գըլուխ քով ձեռամբ Թագ կապեցեր,
 Պըճնեցեր գու զայն ինքնին, արդ զամենայն զարդ նորա
 Կողոպտեա, կոխեա նդ աթուր. այլ ըզսուսերն հրաշէկ
 Զստուածոյ զահագին՝ զոր յիս շողեալ նըշմարեմ,
 Դու կարողդ, դարձո զայն, ոչ յինէն ոչ, այլ յորդւոցս.
 Անմեղ են որդիքս յիմոց անտի յանցանաց:

ՄԵԼԻՌՈՂ

Նո՛ր զըմբող. հայր, աչքդ ուղիղ ոչ տեսանեն. առ իս գարձ:

ՍԱԻՈՒՂ

Արդ բերկրիմ. խաղաղեցան երեսք քո, ծեր անողոք,
 Լըսես փոքր ինչ զիմ աղերս. յոտից քոց ես ոչ յառնեմ,
 Թէ զորդեակս իմ յանողորմըս վրիժուց ոչ ազատես:
 Զինչ խօսիս. այ բարբառ. և Եւ քեզ որդի էր Դաւիթ,

Եւ դու զնա հալածեցեր, և սպանանել կամէիր :
 Ո՛հ, ինձ զինչ ընդդէմ գընես. անսա, կոց այժմ, յապաղես :
 Դաւիթ ո՛ւր է, խընդրեսցի, դարձցի սպանցէ զիս ըստ կամս,
 Աւցէ զԹագն, յորդիս միայն իմ գըլծասցի, տիրեսցէ : —
 Սահայն կաս անողոք. արիւնը ուշտ են աչք քո .
 Ձեռք և սուր քո՝ հրեղէն . ի լայն զընդանց բոց շընչես,
 Բոց պըղտոր, և ընկենուս յիս . արգ եհաս, և կիզու .
 Աւաղ, յո՛ վտախչիցիմ. ընդ այս դիմեալ, ապրեցայց :

ՄԵԼՔՈՒ

Ձիցէ՛ հնար քեզ գուլ գագար, ո՛չ գալ ի լոյս. լուր ինձ, արգ..

ՍԱԻՈՒՂ

Այլ ոչ. անգուստ խընու զընթացս հեղեղ մեծ արեան .
 Տեսիլ ժանտ. աստի անտի յափուկսն իւր յերկոսին
 Մեծամեծ գիզեալ խըրձուկք նորախողխող դիականց,
 Ոհ, անդ մահ է ամենայն . ընդ այս ուրեմըն վտախեայց :
 Ձինչ է այս. ո՛վ էք գուրք : — « Աքիմեւթայ եմք որդիք .
 Ես՝ եմ Աքիմեւթ . մեռիր Սաուղ, սատակեաց » :
 Ո՛հ, զինչ գոյժք. ճանաչեմ. դեռ նոր արեամբ կայլակէ,
 Եւ զարիւնս ըմպէ. իսկ ո՛ զհերացս ունի զիս յետուստ :
 Սամուէլ գո՛ւ. — զինչ ասէ. եթէ ի սուղ ինչ ժամու
 Ընդ իւր եմք լինելոց ամենեքին : Ես միայն,
 Միայն ես եղէց ընդ քեզ. բայց իմ որդիք . ուր իցեմ : —
 Կորեան, ի սուղ վայրկեան անհետացան ուրուականք :
 Ձինչ խօսիմ, ո՛ւր եմ ես, զինչ ինչ գործեմ. ո՛վ ես գու,
 Ձինչ շաչիւն է զոր լըսեմ. պատերազմի թըլին թուկք .
 Այլ դեռ ո՛չ լուսանայ. իրա՛ւ՝ մարտի է դըղորդ :
 Օն ի գուրս սաղաւարտ, ասպար, նիզակ առէք ինձ .
 Հակա զէնք, զէնք արքային . ընդ մահ կամիմ, այլ ի գաշտ :

ՄԵԼՔՈՒ

Ձե՛ գործես, հայր, հանդարտեաց, դըստերըդ քու՛մ սիրե .
 [ԼԵՍ...]

ՍԱԻՈՒՂ

Ըզկազմածըս կամիմ. զե՛ կայ դըստեր. հնազանդեաց .

Գլխանոց, տէր և վաչան. ահաւարդիկ իմ որդիք:

ՄԵԼԻՔՈՂ

Ոչ տամ թոյլ քեզ ես, ոչ. բընաւ ուրիք ոչ թողում:

ՍԱՒՈՒՂ

Ուժգնագոյն գոչեն փողք. ըն առեալ անգըր երթայց.
Շատ է ինձ իմ սուր միայն. ի բաց կայ գու, թոյլ տուր ինձ.
Հնազանդեաց, անգըր գիմեմ. զոր ես խընգրեմս՝ անդ է մահ:

ԱԼՓԻԵՐԻ. Սառսաղ:

ՋՐՈՒՅԱՏՐՈՒԹԻՒՆ ԳՈԹՈՂԻԱՅ ԸՆԴ ՅՈՎԱՍՈՒ

Յաւա, Յաւաբէլ, Գոթողիա, Զատարիա, Աբէնէր, Սաւմիւ,
Երիւ- Ղեփայի, Պարի, արբանեալի Գոթողիա

ՅՈՎԱՍԱԲԹ (առ Երիւս- Ղեփայի)

Ո՛վ գուք Տեառըն պաշտօնեայք, արթուն լերուք, հըսկե-
ի վերայ մեծագին սոցուռն մանկանց սիրելեաց: [ցէք

ԱՐՆՆՆԵՐ (առ Յաւաբէլ)

Աներկիւղ լեր, բամբիշն, յիս կան գոքին յերաշխի:

ԳՈԹՈՂԻԱ

Ո՛հ, երկինք, որչափ հայիմս յերեսըս իւր և զըննեմ...
Նոյն ինքն է: Վերըստին խլըրտին քըստմուռք ընդ ոսկերս:
Ամուսինդ Յովիդայեայ, գոյն այդ իցէ որդին քո:

(Յառեալ յՅաւա)

ՅՈՎԱՍԱԲԹ

Ո՛վ, տիկին. սա:

ԳՈԹՈՂԻԱ

Դա ինքնին:

ՅՈՎՍԱԲԵՔ

Ո՛չ. ոչ եմ ես սորա մայր:

Աւասիկ իմ որդեակն: (Յայտաւ Ղափարիս)

ԳՈԹՈՂԻԱ (ա- Յովս)

Իսկ գու, քո հայրն ո՞ւր էցէ:

Մանկիկ, ա՛ն՛ւր պատասխանի:

ՅՈՎՍԱԲԵՔ

Երկինք մինչև ցօրըս ցայս....

ԳՈԹՈՂԻԱ

Ձի՛ փռութաս պատասխանի տալ փոխանակ ընդ նորս.
Նըմին անկ է խօսել:

ՅՈՎՍԱԲԵՔ

Ի գեռաբոյս հասակէն

Ի՛մ իմիք տեղեկութեան կարես բընաւ ակն ունել:

ԳՈԹՈՂԻԱ

Այդ անմեղ է հասակ, և պարզութիւն իւր ինքնին
Տակաւին չայլայլէ զճըմարտութեան սեռնութիւն.
Թոյլ տուր ինքըն խօսեսցի որ ինչ պիտին զինքենէ:

ՅՈՎՍԱԲԵՔ (ի ծածուկ)

Հաճեաց, Տէր ամենակալ, գընել զիմաստգ յիւր բերան:

ԳՈԹՈՂԻԱ

Անուն զինչ կոչի քեզ:

ՅՈՎԱՍ

Ելիակիմ անուանիմ:

ԳՈԹՈՂԻԱ

Իսկ ապա հայրըդ քո:

ՅՈՎԱՍ

Ձրուցեն թէ որք մի եմ ես՝

Անգըստին ի ծնընդենէս անկեալ ի գիրկս Աստուծոյ,
Եւ զծընողս իմ բընաւ երբեք իմ չիք ծանուցեալ:

ԳՈԹՈՂԻԱ

Անհայր ես և անմայր :

ՅՈՎԱՍ

Ընդ վայր հարին զիս նոքա :

ԳՈԹՈՂԻԱ

Իսկ զիմրգ. յորմէ՞ հետէ :

ՅՈՎԱՍ

Յորմէհետէ ծընեալս եմ :

ԳՈԹՈՂԻԱ

Չիցէ՞ յայտ գէթ թէ յորմէ՞ ուստեք իցես աշխարհէ :

ՅՈՎԱՍ

Իմ աշխարհ՝ տաճարս է այս. այլ իմն երբեք գիտեմ ոչ :

ԳՈԹՈՂԻԱ

Յո՛վ ուրեք երբեք ասեն գըտեալ ըզքեզ ըստ բախտի :

ՅՈՎԱՍ

Անողորմ գայլոց ի մէջ՝ ճեպեցելոց ծախել զիս :

ԳՈԹՈՂԻԱ

Ըզքեզ ո՛վ եգ յայս տաճար :

ՅՈՎԱՍ

Կին ոմն ասեն, անծանօթ,

Որ զանուն իւր ոչ եցոյց, և ոչ ևս այլ տեսին բնաւ :

ԳՈԹՈՂԻԱ

Եւ ո՞ր ձեռք խընամ ածին քում առաջնոյ ազայուլթեանդ :

ՅՈՎԱՍ

Իսկ ելիք երբեք Աստուած ըզկարօտեալ որգիս իւր,

Որ ձագուց և ըս թըռչնոց նա տայ զնոցին կերակուր,

Բարուլթիւն իւր սըփուի զարարածովք համօրէն.

Ձնա կարգամ զօր ամենայն, և հայրախնամ գորովով

Ջամբէ ինձ ի նուիրացն ընծայելոց յիւր սեղան :

ԳՈԹՈՂԻԱ

Ձինչ այս նոր իմըն նըշան տագնապէ զիս և խռովէ .
Ձայն նորա հեշտախօսիկ և մանկութիւն և շընորհք
Ոխութեանս յանըզցաստից փոխանակեն աւասիկ . . .
Եւ իցե՞մ ես գիւրամուտ ողորմաղերս ինչ խանդից :

ԱՅԵՆՆԵՐ

Արդ , տիկին , ահաւասիկ է սոսկալի թըշնամին .
Սըտայօդ անըրջոցդ ակնընդերես են պատրանք .
Թէ միայն գըթուութիւն , որ զքեզ խռովելըն թըւի ,
Չիցէ սուրըն մահարեր՝ որ հարկանէր ի քեզ գող :

ԳՈԹՈՂԻԱ (առ Յ-վաս և Յ-վաբէի)

Գինւ՛յ կամիք :

ՅՈՎՈՒՄԲԵԹ

Եղեր բաղդին իւրում բարւոք խելամուտ .
Եւ տեսին իւր յերկար՝ թերևս արկցէ քեզ տաղտուկ :

ԳՈԹՈՂԻԱ (Առ Յ-վաս)

Ո՛չ . կացէք : — Ձինչ գործ իցէ քո զօրն ի գլուխ աստանօր :

ՅՈՎԱՍ

Ձճէր Աստուած մեր պաշտեմ , զօրէնսըն իւր մեկնեն ինձ ,
Ընթեռնուլ ուսուցանեն զաստուածեզէն իւր ըզգիրս ,
Եւ այժմէն իմով ձեռօք գրոշմեմ ի գիր զայնոսիկ :

ԳՈԹՈՂԻԱ

Ձինչ ասեն քեզ այն օրէնք :

ՅՈՎԱՍ

Թէ Աստուած սէր պահանջէ .

Ձսուրբ անուանն հայհոյելոյ զբէժ խընդրէ նդ փոյթ , թէ
[յամով .

է պաշտպան տարակուսեալ երկչոտ որբոյն անմեղի :
Ախոյեան գէ՞մ գողագին , մարդասպանին պատուհաս :

ԳՈԹՈՂԻԱ

Իմանամ. իսկ բոլոր ամբոխիդ. աստ կուտեղոյ
Ձինչ գոցին իցէ գործ :

ՅՈՎԱՍ

Գողել, օրհնել զինն Աստուած :

ԳՈԹՈՂԻԱ

Յամենայն ժամ կամիցի՛ Աստուած աղօթս և խոկմունս :

ՅՈՎԱՍ

Այլ ինչ գործ աշխարհական ի տաճարէս է ի տար :

ԳՈԹՈՂԻԱ

Իսկ քո զինչ են զուարճութիւնք :

ՅՈՎԱՍ

Առ սեղանոյն մերթ ի սպաս

Մեծի քահանային մատուցանեմ զխունկն և զաղ,
Եւ լըսեմ ի նուագս երգոց զանբաւ ըզփառսն Աստուծոյ.
Տեսանեմ ըզմեծաշուք հանգէս կարգի պաշտամանցն :

ԳՈԹՈՂԻԱ

Եւ զինչ, չեն քեզ այլ ինչ հեշտութեան ըզբօսանք :
Ողորմիմ հէք վիճակի մանկան մի քեզ նըմանեոյ .
Աղէ եկ յիմ արքունիս, ըզփառս իմ անդ տեսցես գու :

ՅՈՎԱՍ

Ձերախտեացն Աստուծոյ կորուսից ես զիշատակ :

ԳՈԹՈՂԻԱ

Ո՛չ. զայն ոչ կամիմ ստիպել ըզքեզ մոռանալ :

ՅՈՎԱՍ

Ձաղօթես առ նա գու :

ԳՈԹՈՂԻԱ

Իսկ քեզ տացի աղօթել :

ՅՈՎԱՍ

Սակայն՝ տեսանիցեմ՝ զի կարդայցես գու զայլ ոք :

ԳՈԹՈՂԻԱ

Է աստուած՝ զոր ես պաշտեմ, և ըզքոյդ գու պաշտիցես .
Յն երկու հըզօր աստուածք :

ՅՈՎԱՍ

Երկընչել պարտ է յիմէս .
Նա միայն է Աստուած, տիկին, և քոյդ է ոչինչ :

ԳՈԹՈՂԻԱ

Առ ինև զուարճութիւնք միահամուռ հասցեն քեզ :

ՅՈՎԱՍ

Չարաց երջանկութիւն իբրև զհեղեղ անցանէ :

ԳՈԹՈՂԻԱ

Եւ ոչք այն չարքն իցեն :

ՅՈՎԱՍԱՐԵԹ

Ներեա, տիկին, հէք մանկան . .

ԳՈԹՈՂԻԱ

Քաղցր է ինձ տեսանել՝ որպէս կըրթէք դուք ըզքա :
Հուսկ ուրեմն, Ելիակիմ, գըտեր շընորհս յաչս իմ գու .
Չես անշուշտ գու ի մանկանց հասարակաց մարդկանէ :
Տեսանես՝ զի գըշխոյ եմ, և ոչ գոյ ինձ ոք ժառանգ .
Ա՛րկ ի բաց ըզպատմուճանդ, և թո՛ղ զանարդ զայդ արուեստ .
Յամենայն ի մեծութեանցս հանել կամիմ մասըն քեզ .
Աղէ յայսմ օրէ զճաշակն աւջիր արդեանց աւետեաց . . .
Յամենայն տեղիս բազմեալ քո յիմ խընջոյս առ ինև՝
Կամ է ինձ ունել ըզքեզ որպէս որդի սեռն և սերտ :

ՅՈՎԱՍ

Չիս որպէս որդի քո :

ԳՈԹՈՂԻԱ

Վա՛յ, օն և օն . . . գու չո՛ւռ կաս :

ՅՈՎԱՍ

Եւ զոր հայր Թողից փոխան...

ԳՈԹՈՂԻԱ

Օն, մի զողեր:

ՅՈՎԱՍ

Ընդ ում մօր:

ԳՈԹՈՂԻԱ (առ Յուլիան)

Ուշ իւր է անդեգևուս. յամենայնի զոր ասէ՝
Ըզքոյդ և զՅովիգայ զմիտառն յայտնի տեսանեմ:
Այդպէս ձեր բըծաւորեալ ըզբարեմիտ մանկուծիւն՝
Երկոքին վարէք զհանգիստն յոր իմ ըզձեզ է Թողեալ:
Ըջնոցին այժմէն Թեքէք սըրամըտուծիւն և ըզքէն.
Ոչ տայք՝ առանց սոսկման՝ լըսել նոցա զանուն իմ:

ՅՈՎԱՍԱՐԵՔ

Ձազեաից մերոց զըրոյցս իցէ՛ պահել ի նոցունց.
Տիեզերք բոլոր գիտեն, գու ևս ի նոյնըս գովիս:

ԳՈԹՈՂԻԱ

Այո՛, իմ սըրամըտուծիւն արդար, ի սոյն պերճանամ,
Ի Թոռանց իմոց եհան ըզվրէժ իմոց ծընողացս:
Եւ զի՛նչ. տեսանէի՛ զհայրս և զեզբայրս ըսպանեալ.
Ըզմայրն իմ ի բարձանց տպարանիցն ընկեցիկ,
Խոշոչեալ միանգամայն և ի միում իսկ աւսուր,
Ո՛վ տեսիլ սոսկալի, արքայորդիս ուծանիւ չափ.
Եւ էրո՞ւմ. զմարդարէից ի վրէժ խընդրիւ չգիտեմ զոյց,
Ձորոց նայն պատուհասեալ էր զմոլուծիւն խակամիտ.
Եւ գըշխոյ ևս անդ անսիրտ, գուստըր Թափուր ի սիրոյ.
Գերեալ ի վատասիրտ և յընդունայն ի գորով,
Չկըչուէի՛ գէթ խօլական կատաղուծեանըն տրիտուր,
Սպանուծեանն ըսպանուծիւն, անարգանացն անարգանս,
Եւ Դաւթին ձերոյ ծնընդոց ո՛չ ընդ կառափն հանէի,
Ձոր ընդ հէք մընացորդս Աքաբուն անցուցին:
Ո՛ւր էի ես այսօր, Թէ տկարուծեանըս նըկուն՝

Ոչ ըզմօր դուժ և դորով յաղեացս իմոց խըլէի,
 Թէ ձեռին իմոյ, հեղեալ զարեանն իմոյ ճազճախիս՝
 Չէր ի նոյն արի հարուած ըզծածուկ գաւան ընգոտանեալ:
 Սուղ ասել. Աստուծոյն ձերոյ վըրէժք անողոք
 Յերկոցունց ի տանց մերոց լուծին զգաշինս ամենայն.
 Ատելի է ինձ Դաւիթ, և որդիք այնր արքայի՝
 Թէ և իմ արեան սերունդք, օտարախորթք են առ իս:

ՅՈՎՍԱՐԵՔ

Ամենայն քեզ յաջողեալ. տեսցէ Տէր, դատ արասցէ:

ԳՈՔԱՂԻԱ

Այն Տէր, որ վաղընջուց ձեր ապաւէնն է յուսոյ.
 Աղէ զինչ լինիցին ուխտիցն իւրոց աւետիք.
 Թող տացէ ձեզ զարքայն զոր խոստացեալն է ազանց,
 Չորդեակըն Դաւիթի, զակընկալիս ձեր և զոյս...
 Այլ տեսցուք անդրէն զմիմեանս. սղջ կաց. մեկնիմ գոհու-
 Տեսանել կամ էր, տեսի: [Թեամբ.

ԱՐԵՆՆԵՐ (առ Յովսէփի)

Չոր յերաշխի առեալս էր՝

Արդ առ քեզ դարձուցանեմ զհաւատացեալդ յիտ աւանդ:

ՌԱՍԻՆ. Գոթողիս:

ՄԱՐԳԱՐԷՆՈՒԹԻՒՆՔ ՅՈՎԻԴԱՅԵԱՅ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻ

Յովիտայէ, Յովսէփէն, Ալարիա, Պարն, և Բազմ Ղեկայիք

ՅՈՎԻԴԱՅԷ

Արդ աղէ, Ալարիա, տաճարս իցէ պընդափակ:

ԱԶԱՐԻԱ

Զամենայն առականել ետու զգուրսն իմ առաջի:

ՅՈՎԻԴԱՅԷ

Դո՞ւք միայն ի ներքս իցէք և գո՞նդըն ձեր սըրբանուէր:

ԱԶԱՐԻԱ

Ըզգաւթօքըս սըրբութեան երկիցս անգամ եկի շուրջ:

Փախեան ամենեքին՝ անգարձ ի բաց որոշեալք:

Ճահո՛ւկ թըշուառական՝ վայրավաանեալք առ ասին:

Սպասաւորք Աստուածութեան մընան միայն ցեղըն սուրբ:

Ժողովուրդս՝ յօրէ ելից փարաւոնեան բըռնութեան,

Երկիւղ այսպիսի՝ ոչ էր բընաւ երկուցեալ:

ՅՈՎԻԴԱՅԷ

Արգարեւ՝ ազգ վատըւէր՝ ծընեալ յողորմ գերութիւն,

Առ Աստուած միայն ժըպիրհ, Զգործ մեր յառաջ վարես:

Սակայն ո՛վ ունի զգըստերսըդ զայգոսիկ ի մէջ մեր: [ցուք:

ՄԻ Ի ԴՍՏԵՐԱՅ ՊԱՐՈՒՆ

Եւ իցէ ինչ մեզ հընար, ո՛վ տէր, մեկնել առ ի քէն:

Հի՛ւրք ոմանք իցեմք մեք ի տէրունեան տաճարիս:

Ասա ըզքև շուրջ առընթեր կան հարքըն մեր և եղբարք:

ԱՅԼ ՈՄՆ

Ո՛հ, ի վրէժ նախատանացն իսրայելի խընդրելոյ՝

Եթէ ձեռք մեր ոչ զօրեն, իբր անգ ուրեմն Յայելի,

Ձատելեացն Աստուծոյ ջաղխել զկառապին անօէն,
Այլ ըզկեանքս մեր կարեմք պատարագել գէթ նըմա:
Ի կըռուել բազկաց ձերոց յիւր ի վերայ տաճարին,
Արտասուօք մերովք կարեմք գոնէ կարգաւ առ նա մեք:

ՅՈՎԻԴԱՅԷ

Աւասիկ են վրէժխընդիրքդ՝ ի պատերազմ քո վառեալք,
Քահանայք և մանկըտեակք, իմաստութիւնդ ով յաւէժ.
Իսկ թէ դու ի ձեռն առնուս, ո՞տայ զնոսին ի դըզօրդ.
Ի շիրմէն՝ թէ կամիցիս, գիտես կոչել յետս ըզմեզ,
Հարկանես և բըժըչկես, կորուսանես և կանգնես:
Ձէ սոցա խրախուսեալ ի քաջութիւն ինչ անձանց,
Այլ յանունդ՝ յիւրեանց վերայ բազում անգամ կոչեցեալ,
Այլ յերգմուննարդ զոր երգուար սըրբոյն յիւրեանց թա-

[գաւորան,

Այլ ի սոյն տաճար զոր քեզ բնակութիւն սուրբ արարեր.
Եւ կալոց է՝ սա առուրց արեգական տեւոյոյ: —
Սակայն զի՞ է զի սիրտ իմ սարսափէ յերկիւղ սուրբ.
Հոգին աստուածեղէն ընդմըտանէ յիս արդեօք.
Նա է նա. յիս բոց շընչէ, խօսի և աչք իմ բանան,
Եւ մըռայլ յաւիտեանք փեռեկին իմ առաջի: —
Մատուցէք ինձ, Ղեւտացիք, ըզձեր նըւազըս ձայնից,
Ընգ աշխոյժըս շարժմանցն իւրոյ՝ և ձեր մասն հարեալ:

ՊԱՐՆ ՆՈՒԱԳԷ ԱՄԵՆԱՅՆ ԱՐՈՒԽՍՏԱԿԱՆՔ

Լիցի ձայն Տեառնն լըսելի.
Պատգամք նորա ի սիրտըս մեր
Լիցին որպէս ի գալարիս
Գարնայնի ցօղ վաղորդայնոյ:

ՅՈՎԻԴԱՅԷ

Լուր ըզբարբառ իմ, երկին: Երկիր՝ մատո՞ զունկըն քո:
Մի՞ ևս ասեր, ով Յակոբ, եթէ քո Տէրըն նընչէ:
Անհետ լերուք, մեղաւորք, ահաւասիկ զարթնու Տէր:

Դարձեալ արուեստաբանս, և իջէ

ՅՈՎԻԳԱՅԷ

Ոսկին մաքուր զիարդ յանարդ ի Թուխ կապար չըլացաւ .
 Ո՛վ իցէ այդ ի սուրբ տեղուջն արհիպպետ խողխողեալ .
 Կոճ դիր ողբա , Երուսաղէմ , ողբա , քաղաք նենդաւոր ,
 Աստուածային մարգարէից Թըշուառականդ ըսպանող .
 Ըզսէրն և զգուծն առ քեզ՝ եհան ընկէց Աստուած ի սըր-
 [տէն .

Կընդրուկք քո պիղծ են առաջի աչաց իւրոց աննըւէր ,
 Յո՛վ վարէք դուք ըղմանկտիդ և զկանայսդ :
 Աւերեաց Տէր ըզդըշխոյն քաղաքաց .
 Քահանայքն ի գերուծիւն վարեալ , արքայք իւր ընկեցիկք ,
 Ո՛չ ևս այլ սիրէ Աստուած՝ գալ ձեզ ի տօնս իւր ժողովել :
 Տաճար սուրբ , տապալելցիւր . արձակեցէք , մայրք , բոց հը-
 Գոյժ ցաւոց , Երուսաղէմ , ի սիրտ իմ : [րոյ .
 Ո՛ր ձեռն ըզգեզ քո զամենայն յաւուր միում կողոպտեաց .
 Ո՞ տացէ զա՛չս իմ՝ արտասուաց կըրկնավըտակ ինձ ազբերօ ,
 Ըզըւառուծիւնդ աշխարել լալ :

ԱԶԱՐԻԱ

Ո՛վ տաճար սուրբ :

ՅՈՎԱԲԵԹ

Ո՛վ Դաւիթ :

ՊԱՐՆ

Տէր Սիրովի , յիշեալի ,

Յիշեալի ի շնորհըս իւր՝ ըզխնամանք քո զառաջինս :
 Դարձեալ արուեստական , և զհեք իցէ

ՅՈՎԻԳԱՅԷ

Զինչ այս նորդ Երուսաղէմ

Ի խորոց անապատի լուռապայծառ յարուցեալ ,
 Եւ դըրողմ անմահութեան ի ճակատուն փայլ ի փայլ :
 Ժողովուրդք տիեզերաց՝ երգեցէք .
 Նոր ծնանի Երուսաղէմ՝ և ըս չըքնաղ և գեղապանծ :
 Յամենայն ծագաց ուստի՛ գան առ նա
 Այօ մանկունք՝ զոր չիք երբեք կըրեալ նորա ի ծոց իւրում :

Բարձրացո՛, Երուսաղէմ, ամբարձ ըզդլուխ քս պերճալի,
Յայս հայեաց ի Թագաւորս ընդ փառքս քո սքանչացեալս.
Թագաւորք ազգաց ազգաց՝ առ քեզ յերկիր խոնարհեալք
Ըզնոզ ոտից քոց համբուրեն.

Ըզմիմեամբք ելեալ ժողովք՝ գընան ի լոյս քոց երեսաց:
Երանի՛ որ սուրբ սիրով առ Սիոն
Տեսցէ զչոգին իւր ճենձերեալ:
Երկինք, ըզազ ձեր ցօղեցէք,
Եւ զիւր Փըրկիչն հանցէ երկիր:

ՅՅՎՍԱՐԵՔ

Ո՛հ, ուստի՛ եկեսցէ մեզ այս շընորհ վեհագոյն,
Մինչ դեռ Թագաւորք՝ յորոց Փըրկիչն է գալոց...

ՅՈՎԻԴԱՅԷ

Պատրաստեա, Յովսաբեթ, ըզըքեղ Թագն արքսունի,
Ջոր Դաւիթ ինքնին կըրեաց ի նուիրական ճակատուն:
(տա Ղեփոցիս)

Իսկ գուք, ի զէն վառիլ՝ զճետ իմ ելէք ի տեղիսն՝
Ուր պահին ի ծածուկ, հեռի յաչաց արտաքնոց,
Սոսկալե ահեղ մըթերքըն նիզակաց և սուսերց՝
Որ յարիւն փղըտացի մըխեալ երբեմըն ներկան,
Ջոր Դաւիթըն քաջայաղթ՝ ամբք փառօք պըսակեալ՝
Ետ ի նուէր պահապանին իւրում սըրբեւ Աստուծոյ՝
Ջայն ի գործ առնուլ գուցէ՛ յազնըւագոյն ինչ ի պէտս:
Օ՛ն արիք. կամիմ ինձէն ես բաժանեւ զայն ի ձեզ:

ՌԱՍԻՆ. Գոթողիտ:

ՄԱՀ ԳՈԹՈՂԻԱՑ

Գոթոզիա, Յովա, Յովերայէ, Յովաբէն, Աբէնէր,
ուղէկէր Գոթոզիայ:

(ՅՈՎԱՍԹ Ժածիէաւ ընդ Վարդապետաւ)

ԳՈԹՈՂԻԱ

Ա՛ւադիկ դու՛ հրապուրողդ,
Պաշանց և դաւանաց՝ եղեռնաւոր առաջնորդ,
Որ միայն ի խռովութիւնս ես կառուցեալ ըզքո յոյս,
Մըշտաբունս սիւերիմ՝ վեհագունից տէրութեանց.
Հանգուցեալ նըստէիր ի հովանի Աստուծոյդ,
Ըզպատարանս առէր ի միտ ըզսընոտի յուսոյ քո:
Ի բազուկ իմ ելիք նա՛ և զիւր տաճար և զքո կեանս.
Ինձ արժան էր ի սեղան անգր ուր քո ձեռնն զենու,
Ըզքեզ... այլ շատանալ հարկ է գընովքըն զոր տաս:
Արդ տեսլիր կատարել զսր խոստացեալ է քո ինձ.
Մանուկն այն և դանձ, զոր պարտ է յիս աւանդել,
Ո՛ւր իցեն:

ՅՈՎԻԴԱՑԻ

Սոյնհետայն ըցցին կամաց քոց հաճոյք.
Ձերկոսին միանգամայն ցուցանեմ քեզ աստանօր:
(Բանայ ղվարգոյն, գէսանի ՅՈՎԱՍԹ ի գահ, գայեաֆն ի գոռն
յաշէ, ԱԶԱՐԻԱ սուր ի յեռին՝ ի յաֆէ, և առ նմա ԶԱՔԱ
ՐԻԱ և ՍԱԼՈՎՄԻԹ ի Ժաննիս՝ յաշիճանս ախոռայն, Բաղնմ
ՂԵԻՑԱՑԻՐ ոռոտերաճիկ իարգեալս յայս իոյս և յայն)
Երևեաց, սիրուն մանուկ, զարմ արքայիցս արժանի:
Ճանաչե՛ս ըզպայաջաա սըրբագունին արքայից,
Ո՛վ գըշխոյ, Ժանիր գոնէ զըսպիս քոյոյ գաշնակիդ.
Ա՛ւասիկ է արքայդ, որդիդ, որդին Աբողեայ:
Ժողովուրդք, Աբեններ, Ժաներուք դուք ըզՅովաս:

ԱՐԵՆՆԵՐ

Ո՛վ երկինք:

ԳՈԹՈՂԻԱ (տո Յովդայէ)

Ա՛յ գաւառան:

ՅՈՎԻԴԱՅԷ

Տեսանէ՛ս զայս կին հըրեայ,
Ձերկիւղած, զորոյ գիտես՝ զի գիէր յայնժամ զըստինս.
Յովսաբեթ կորզեալ թափեաց ի զայրուցացդ ըզմանուկն.
Ընկալաւ տաճարս ըզնա, և Տէր Աստուած պահպանեաց:
Աւագիկ գաւթեան գանձուցն առ իս պահեալ մընացորդ:

ԳՈԹՈՂԻԱ

Նենգաւոր, գաւ թո լիցի գըլխոյ մանկանգ եզերան:
Յատելի ցնորից այտի ազատեցէ՛ք զիս ըսպալք:

ՅՈՎԻԴԱՅԷ

Ձինուորք Տեառն կենդանւոյ, պահպանեցէ՛ք զարքայն ձեր:
(Բանան խորս Թափերն, Էրեին Եբրիս գաճարին, և ՂԵՒՅԱ
ՅԻՔ ՂԻՆԵՎՅ՝ գան յամենասո ի փեսարանն)

ԳՈԹՈՂԻԱ

Ո՛ւր իցեմ, գաւ է գաւ. թըշուառականս ես գըշխոյ,
Ձինուք և թըշնամեօք շուրջ բոլորեալ պընդեալ կամ:

ՅՈՎԻԴԱՅԷ

Վայրապար խընգրեն աչք թո. կորեալ փախուստ թո ի քէն:
Եւ գիտաց Տէր յամենուստ ըզքեզ պատեալ պաշարել.
Տէրն՝ որ գուն գէմ խրոխտայիր՝ ըզքեզ ի ձեռս արկ ի մեր.
Տ՛ուր նըմա զհամար արեանցն որովք արբեալ շամբընցար:

ԳՈԹՈՂԻԱ

Իսկ զիմրդ. ա՛հ պախեցոյց ըզզօրականս անարժան.
Աբեններ, արտնց վատ, յո՛ր ծուղակ զիս փակեցեր:

ԱՐԵՆՆԵՐ

Դըշխոյ, քնձ Աստուած վըկայ...

ԳՈԹՈՂԻԱ

Թո՛ղ անգր ի բաց զԱստուած քո,
Եւ ըզվրէժ իմ հմն, գրուժան:

ԱՐԵՆՆԵՐ (անկեալ յոս Թովտոս)

Յիմէ՞ տեռնէ, Յովասայ:

ԳՈԹՈՂԻԱ

Գա՛մ Յովաս. գա քո՛յդ արքայ. տեսէք, տեսէք, անըզգամք,
Զի զձեզ զէնք իմ տակաւին ունին ի պահ պաշարման:
Ըզգորուս լըսեմ բարբառ՝ որ զիս կարգայ բարձրագոյ:
Ի Թիկունս ինձ հասանեն. գողացարո՛ւք, ապըստամբք:

Իմայել, Յովտ, Յովդայել, Գովուդիտ, և առաջինն ամենայնէ

ԻՍՄԱՅԷԼ (առ Յովդայել)

Տէր, տաճարս ազատեցաւ, և չիք ոք իւր Թըշնամի.
Այլազգին փախըստական, և հրէակողմն հրպատակ:
Որպէս հողմ ընդ ասպարէսն երկնից ըզծուի փարատէ,
Ահեղին ամենազօր ձայն հալածեաց զայն ճամբար:
Ղևացիք մեր ի բարձանց անդաստակացըս սըրբոց,
Ըզգաւակն Ոքողայ քարոզեցին ժողովոյն.
Պատմեցին ըզտղայուԹիւնն ի սուսերէն գողացեալ,
Եւ ըզդուստր Աքաաբու եկեալ անկեալ յորոգայԹ:
Ի նըմին ժամու հընչեաց աւագափողն յընդհանուրս.
Եւ այն գողք և աղաղակ նոցին ի զօրն անըզգաստ
Հարին խռով և ապշոպ, և զարհաւիրսն յանյուսից՝
Որով զվէսըն Մադիամ յապուշ գարձոյց Գեդէոնի:
Տիւրացիք, վահանընկէց և զէնընկէց նախ քան զայլս՝
Այլք ընդ այլ ճանապարհս անհետ եղեն և կորեան,
Արք ոմանք հրէաստանեայք խռովեալ դարձան ի փախուստ.
Իսկ մնացեալքըն մեծածայն ի Յովասուն եղին կողմ՝
Ընդ հանգէսն Աստուծոյ յանձին նորա սըխրացեալք:
Ի վերջէ, միով հողւով ամբոխն ողջոյն սըրաատրով,
Մերք, կանայք և մանկտի զմիմեամբք փարեալ խընդալից,

ԸզՏէր օրհնաբանեն և զոր նոյն ինքն առաքեաց,
 Նըւագեն ամենեքեան զորդին Դաւթի զյարուցեալ:
 Գարշէլն է Բահայ ի սրբանուէր ոստանիս,
 Ըզգրուան իսկ մեհնին խորտակեցին պըղծութեան,
 Եւ Մաթան փողոտեցաւ:

ԳՈՔՈՂԻԱ

Հրէից Աստուած, ընկճեցեր.

Դա Յովան է արգարև. ի զուր խաբել զիս շըզնիմ.
 Ճանաչեմ ըզանզին՝ յոր ետու զինքըն խոցել:
 Տեսանեմ զգիտակ մարմնոյն Աքողիայ և զարժուած.
 Ամենայն՝ յաչս իմ զարիւնըն զոր առեամ՝ նըկարէ,
 Դաւիթ, Դաւիթ ի վեր, ի վայր և եթ Աքաաբ:
 Անողորմ Աստուած, միայն գու զամենայն հորդեցեր,
 Դու ի խաբս արկեալ զիս գիւրահընար իմ վրիժուց,
 Իբեր անգամ յաւուրն եգիր անձին իմոյ զիս ոսոխ.
 Է ուրեք՝ զի նդ մանուկ մի յիս շարժեալ մըտաց խէթ,
 Եւ ուրեք՝ շըլացուցեալ զիս մեծագանձ մըթերիւքդ,
 Զոր երկեայ մատնել ի բոց հըրոյ ճարակ՝ և յաւար:
 Արգ մանուկդ այդ, քո խընամ և քո հաստուած, տիրեսցէ,
 Եւ նորոյ իշխանութեան իւրում ի փառս և ի շուք
 Թող ասցի մըխել նըմա զսուրըն սըրեալ ի սիրտ իմ.
 Ահա մայր իւր զյս նըմա ի մեռանելն աղօթէ.
 Զի աղօթս ասիցեմ. յուսով մեծաւ ակն ունիմ,
 Թէ նգվըզեալ ի լըծոյդ և յօրինացըդ նեղեալ,
 Արեանն Աքաաբու՝ զոր անն յինէն՝ հարազատ.
 Հանգունակ հաւուն իւրում և հօր իւրոյ նըմանող,
 Դաւթեան նըզովելի ժառանգ որդիդ պայազատ՝
 Ելքէ զփառըս քո ջընջել, ապականել ըզսեզանդ,
 Աւնուլ վրէժ ըզԳոթողեայ, զՅեզաբեայ, զԱքաբուն:
 (Ելանէ. զհէր նոս ԳԵՏԱՅԻՔ)

ՅՈՎԻԴԱՅԻ

Տի, օն անգր ի տաճարէն հանջիք արտաքս իսկ և իսկ,
 Եւ մի սըբաւթիւն տեղւոյն իւիք պըղծեսցի: [Թոյք,
 վրէժխընգիրք սուրբք բըռնամաճ արքայազանցդ, օն եր.

Ըզբողոք արեան նոցա իւրով մահուամբն հանգուցէք :

Թէ յանգուգն ոք խիզախեալ ելցէ նըմին ախոյեան ,

Մասնեացի և նա 'նգ նըմին' սըրամբաուծեան երկաթոյն :

ՌԱՅՈՒՆ . Գոթուխ :

ՊՈԼԻԿՏՈՍԻ ԻՐԱՒՈՑՍ Ի ՄԱՀ Ի ՎԵՐԱՅ ՔՐԻՍՏՈՍԱԿԱՆ
ՀԱՒԱՑՈՑ

ՊԵՒԻԴՐՈՍ , ՆԵՄԵՐՈՆ

ՆԵԱՐԻՈՆ

Յո՛ գիմեալ գնաս :

ՊՈԼԻԿՏՈՍ

Ի տաճար անդր ուր ինձ ի զոհն ակն ունին :

ՆԵԱՐԻՈՆ

Եւ խառնեացին գու ի նըւէրս ընդ ամբարիշտ խուժանին .

Քեզ մուսացո՛նք այդպէս եղեն զի քրիստոնեայ այժմիկդ ես :

ՊՈԼԻԿՏՈՍ

Մատակարար գու ինձ շնորհին կացեալ՝ զայն քաջ յիշես .
[ցես :

ՆԵԱՐԻՈՆ

Գարշիմ մերժիմ ես ի կըռոց :

ՊՈԼԻԿՏՈՍ

Գարշելիք են նոյնք և ինձ :

ՆԵԱՐԻՈՆ

Պաշտօն անարդ և ամպարիշտ :

ՊՈԼԻԿՏՈՍ

Եւ գըժոխոց հընարք պիղծ :

ՆԵԱՐԻՈՆ

Խոյս տուր ապա գու ի բագնեաց :

ՊՈԼԻԿՑՈՍ

Արկից ես զայնս ի կործանս .
 Կամ մեռայց անդ ի մեհենին , կամ զայնս ոտից տաց կոխան :
 Եկ . սիրելիդ իմ Նէարխոն , եկ ի հանդէս ելանեմք
 Խայտառակել գիցն ըզպաշտօն և ցուցանել ոյք իցեմք :
 Այսմ ի մէնջ ակն ունին երկինք , պարս է ի գլուխ զայն ա .
 [Ժեղ :

Դեռ ևս ըզնոյն ես խոստացայ . և արդ երթամ կատարել :
 Յոյժ շնորհապարս եմ Աստուծոյն , ում քև եզէ ես գիտակ ,
 Որ անպատումըն բարութեամբ կազմի կապել ինձ պըսակ՝
 Չայս վաղ ընդ փոյթ հաճեցաւ տալ պատեհ չքքնաղ առ ի
 Իւրոյ առ իս ձըրիատուր նորոյ շնորհին հաւատոց : [Փորձ

ՆԷԱՐԽՈՆ

Յոյժ է վառումըն նախանձուգ , անսա , գիր այնըմ պայման :

ՊՈԼԻԿՑՈՍ

Ո՞ր ճըշմարտին Աստուծոյ չափ է նախանձուռն և պայման :

ՆԷԱՐԽՈՆ

Ի մահ անձին գիմագրաւես :

ՊՈԼԻԿՑՈՍ

Մեռայց առ սէր իւր ըզձիւք :

ՆԷԱՐԽՈՆ

Իսկ զի՞նչ թէ սիրա քո սասանի :

ՊՈԼԻԿՑՈՍ

Ինքըն լիցի ինձ նեցուկ :

ՆԷԱՐԽՈՆ

Ձեն նորա կամք մեզ անձնամասան երթալ ի մահ վայրապար :

ՊՈԼԻԿՑՈՍ

Յոյժ առաւել է պատուական մահ՝ յոր գիմէ ոք յօժար :

ՆԷԱՐԽՈՆ

Շատ է սպասել մահու և կրել , չէ պարս գուլ այնմ ի խըն .
 [Գիր :

ՊՈԼԻԿՑՈՍ

Որ զանգիտէն գիմագրաւել՝ լիցի նմա մահ վըշտակիր:

ՆԵԱՐԻՈՆ

Այլ մահ անշուշտ ի տաճարի անդ դարանեալ քեզ մընայ:

ՊՈԼԻԿՑՈՍ

Այլ ինձ անշուշտ արդէն յերկինս անդ յաղթանակ պատ-
[բաստ կայ:

ՆԵԱՐԻՈՆ

Ձայն մեզ ի ճիգն առաքինի վարուց օրէն է ունել:

ՊՈԼԻԿՑՈՍ

Ձայն ի հրապոյրս անկեալ մեղաց՝ մարթ է ի վտանգ արկա-
[նել:

Իսկ առ իմէ՞ գնել զայն յերկրայս, զոր մահ գործէ աներկ-
[բայ:

Իցէ՞ իսկ այն գըժոխըմբեր որ զերկնից գրուեն ինձ բանայ:
Ես քրիստոնեայ եմ, Նէարիոն, և քրիստոնեայ իսկապէս.
Հաւատք զոր եսն արդ ընկալայ՝ խընդրէ զարդեանց ըզհան-
[դէս:

Որ խուսափէն՝ մեղի ի հաւատս է և մեռեալ յոյս նորին:

ՆԵԱՐԻՈՆ

Կենաց անձին խընամ կալլիր, փառքն Աստուծոյ զայդ կա-
[մին:

Կեանք քո լիցին պատըսպարան քրիստոնէից որ կան աստ:

ՊՈԼԻԿՑՈՍ

Այլ օրինակ մահուս լիցի նոցա մեծ և ըս նըպաստ:

ՆԵԱՐԻՈՆ

Մահո՞ւ ուրեմըն փափաքես:

ՊՈԼԻԿՑՈՍ

Կենաց տպա գու ցանկատ:

ՆԷԱՐԻՈՆ

Ծածկել է քէն ես ոչ կարեմ, դաս զըժուարին գու ինձ
[ասս.
Խիթամ ասիւ գուցէ նըկուսն զիս արտոցեն խիստ ասնջանք:

ՊՈԼԻԿՑՈՍ

Որ է հաստոջ առնու ըզկայ, անկանելոյ չիք վըտանդ.
Ամենազօր աջ Բարձրելոյն պահպանէ զնա ի վտանգի:
Որ զանգիտէ կալ է յուրաստ, է ուրացեալ է սըրտի,
Երկմըտի նա յանձին իւրում, է ի հաւատս իւր երկբայ:

ՆԷԱՐԻՈՆ

Որ խիզախէն յանդըգնութեամբ՝ յանձնապաստան իցէ նա:

ՊՈԼԻԿՑՈՍ

Այլ է նորին եմ ես ի շնորհս և ոչ թէ յիս քաջայոյս:
Բայց զոր է քէն ակն ունէի՝ Ինձ իցէ տալ քեզ խրախոյս.
Զք՝ քեզ այգբան երկիւղ ընդ մահ:

ՆԷԱՐԻՈՆ

Զի և Ատուած խոյ երկեալ:

ՊՈԼԻԿՑՈՍ

Այլ զանձն ի մահ եա. օն լիցուք ըզհետ նորին գիմագրու.
Սեղան նըմքն ի վերայ գիցըն կանգնեսցուք փլատակաց,
Զի պարտ է մեզ, դեռ ևս յիշեմ ըզբանըս քօ կանխասաց,
Առ սէր նորա արհամարհել ըզկին, ըզգոյս և ըզթագ,
Տալ է վերայ փառաց նորա զանձն և զարիւն բովանդակ:
Աւաղ, և սէր է այն քոյին եռանգն և սէր պատարուն,
Զոր գու երբեքն ինձ մաղթէիր, և արդ մաղթեմ քեզ ըզ-
[նոյն:

Թէ առկայծէ գեռ այն ի քեզ՝ ո՛չ գու շարժիս ի նախանձ
Ի տեսանել ըզնորակնուհքս յայնմիկ ըզքև գերազանց:

ՆԷԱՐԻՈՆ

Նորածնելումք յաւազանէն՝ առոյգ է յոյժ մեծազօր,
Սուրբ է մեղաց, որք ըզկտրով մեղկեն շնորհին երկնաւոր,
Եւ որ համայն հոգիացեալք ես ի նորին ճախուլթիւն,

Անհրնարինքն իսկ հեշտ թըւին քեզ ի բոց այնըր սիրոյն.
 Այլ յիս շնորհացն ըսկըզքնաձիր նուազեալ պարգևք երկ-
 [նատուր,
 Եւ զօրութիւն նորա՝ ստ մեղացս յոգունց մեղկեալ օր ա-
 Ոչ ևս իշխէ ի մեծամեծըս ձեռնարկել քաջաբար, [ւուր,
 Եւ ամենայն ինչ անկելումս յուժոյ թըւի անհրնար:
 Այս վատութիւն ամթապարտ և այս փախուստ անարի՛
 Գիտեմ զի խիստ է պատուհաս մեղաց իմոց արժանի.
 Այլ գըթութեանցըն Տէր յոր պարտ է մեզ ունել միշտ ըզ-
 [յոյս,
 Նախանձելի ինձ օրինակ բարեաց ըզքոյգ տայ խրախոյս:
 Ե՛կ, սիրելիք իմ Պղիկատ, ե՛կ ի հանդէս ելանեմք,
 Խայտառակել գիցն ըզպաշտօն և ցուցանել ո՛յք իցեմք.
 Իցի՛ր և ինձ գոյր արկանել ի քեզ նախանձ ի տոկալ,
 Որպէս դու ինձ ի գիմագրաւ տալ զանձն ի վտանգ կամա-
 [կար:

ԳՈՒԻԿՑՈՍ

Ի բարեբաղդ յերկնազգեցիկ յայդ փոփոխուժն սըրտի
 Ճտնաչեմ զիմըս Նէարխոն, և արտասուեմ առ խընդի:
 Զոհք ի բագնին կան ի զենուլ, չիք յամելոյ ժամանակ.
 Օ՛ն, Աստուծոյն ճըջմարտի անդըր ճեպեսցուք նահատակ.
 Երթիցուք տալ ըզխազալիկըն շանթ ոտից ի կոխան,
 Որով ըզփայտըն փուտ զինէ գիւրահաւատըն խուժան.
 Օ՛ն, երթիցուք բանալ ի լոյս զաչս առ ի մահ կուրացեալ,
 Եւ փըշրեսցուք ըզկուռսըն սուտ ըզկոփածոյ և զհրահալ.
 Երկնազգեցիկ ի մեզ հըրոյս լիցուք կենօք մեք ճարակ.
 Հարցուք զերկնից ըզպատերազմ՝ թողեալ ի նա զլազթա-
 [նակ:

ՆԷԱՐԻՈՆ

Օ՛ն, երթիցուք մեծահանդէս փառացն երկնից տալ ըզքոյց,
 Եղեալ գործօնք հաւատարիմք կամացն առ մեզ զոր եցոյց:

ԳՈՌՆԻՅԷ. Պ-ԼԻԿՈՍ:

ՋՐՈՒՑԱՅՐՈՒԹԻՒՆ ՊՈԼԻԿՏՈՍԻ ԸՆԴ ՊԱԼԿԵՆԱՑ

Ի ԲԱՆՏԻ

Պալիպոս, Պալիկէ, Չորակահ

ՊՈԼԻԿՏՈՍ

Առ Բնչ, տիկին, դալուսագ այսրէն. մարտ ինձ ազգէ,
 [Թէ խրախոյս:
 Ջրքնազ սիրոյդ ի պերճ հանգէս ընկճել՝ զիս գաս, Թէ
 [յիմ կոյս.
 Ատելու-Թիւն առեալ բերես, Թէ զհաշտու-Թեան սուրբ
 [ըզտեր.
 Պէս Թըշնամւոյ գիմեալ առ իս, Թէ սըրտակից իմ ընկեր:

ՊԱԿԻՆԷ

Քեզ Թըշնամի չիք բաց ի քէն. դու զքեզ առեաս, այլք սի-
 [րեն.
 Դու և զերազն իմ, դու միայն ի լրուսն ածես համօրէն:
 Մի դու զքոյին նիւ-Թեր կորուստ, կամեաց միայն՝ և կեցցես.
 Թէպէտ մեծ յոյժ ոճիւրբդ իցեն, խնայեա անձինդ՝ և քաւես:
 Յո՛ւշ քեզ լիցին յոյց յարենէ բողբոջեցար շառաւեղ, [քեզ.
 Յո՛ւշ արու-Թեանցդ հանգէս չըքնազ և լաւու-Թիւնքըդ չը-
 Խնքնակալին գոս մեծարոյ, ժողովրդեան ցանկալի,
 Եւ մարզպետի Հայաստանեայցըս դու փեսայ սիրելի:
 Ջրիշեմինչ զիմ քեզ հարմնու-Թիւն, որ ինձ բազդ մեծ՝ քեզ
 [չէ ինչ.
 Այլ արու-Թիւն քո, զարմ տոհմիկ և զօրու-Թիւն՝ աես գու
 [զինչ
 Ընծայեն յոյս, և մի Թողուր դահճաց ի ձեռս անձնաաուր
 Ջոր խոստանայն բազդ գեղեցիկ արգար ըզձից մեր ի լուր:

ՊՈԼԻԿՏՈՍ

Ինձ առաւելն իսկ է ծանօթ. ըզպարծանս իմ գիտեմ ես,
 Եւ ի նոցանց քաջարու-Թեամբք որ ինչ յուսալ իցէ մեզ.

Այլ յինչ, ազէ, յանգիցին այնք, բայց ի բարիս անցաւոր,
 Որոց ըզհեա գան բիւր վըտանգք, վըրդովեն հոգք բիւրաւ
 [ւոր.
 Բառնայ ի մէնջ մահ զամենայն, լինիմք բազգին խաղալիկ.
 Այսօր ի գահ արքունական, վաղիւ յարեան ճապաղիք.
 Գըգուեալքն ի բաղդ գեղանըսեհ եղեն տըժգոհք առաւել.
 Քանի՛ նուազունք ի կայսերաց կացին փառացն ի վայել:
 Է՛, է և յիս փառաց անձուկ ազնըւագոյն և վըսեմ. [գրեմ,
 Վաղանցիկ այդք են մեծութիւնք, զանանցականսըն խըն-
 քերջանկութիւն աներկեան, ոյր ոչ չափ է ոչ պայման,
 Որ մախանաց գեր ի վերոյ, գեր ի վերոյ բաշխից կան,
 Մի ծանրագնոյ լիցի ստանալ ինձ զայն ընդ այսըց կենսաց,
 Որ թէ կանուխ թէ անագան բարձցին յինէն յեղակարծ,
 Ոյց փախըստեայ են սուղ վայելք և կեղակարծ ապագայն:

ՊԱԻԼԻՆԷ

Քրիստոնէիցըդ ձեր երազք են այգոքիկ ծաղրական.
 Առասպելեաց հրապոյրք ըզձեզ տեսէք զիւրդ կախարդեն.
 Ոչ ինչ արիւնքըդ ձեր թըւին ընդ այնոցիկ փոխարէն:
 Այլ կարծիցէք տնօրէն ըստ կամս արեան ձերոյ գող և տէր.
 Չէ իսկ և չէ ըզկեանս հանգոյն ժառանգութեան առեալ
 [ձեր.
 Ապաքէն օրըն կենսատու ետ և պարտուց ձեզ պայման,
 Եւ աշխարհի և պետութեան և արքայի պարտիք զայն:

ՊՈԼԻԿՑՈՍ

Ձայն մըտադիւր գնէի ի մահ վասըն նոցա ի մարտի.
 Գիտեմ ըզժամն և ըզպայման և թէ որ փառքն են անտի:
 Հարց և հաւուց Դեկեայ պարծանքն ի ձէնջ գովեալ մեծաւ
 [պէս,
 Եւ սիրելի անունն այն ցարգ Հռոմայեցուցդ եղեալ ձեզ,
 Նա արգ ի գլուխ վեցեակ դարուց վերամբարձաւ ինքնակալ:
 Վասն արքայի և աշխարհի զարիւնս, այո, պարտիմ տալ,
 Այլ առաւել ևս Աստուծոյ իմոյ՝ որ զայն ինձ շնորհեաց.
 Թէ ի վերայ արքայի տալ զանձն իցէ բաղդ գերազանց,
 Իսկ քանի՛օն վասն Աստուծոյ որ զանձն ի մահ ոք թէ տայ:

ՊԱԻԼԻՆԷ

Ո՞ր այն Աստուած...

ՊՈԼԻԿՑՈՍ

Պաւլինէ, զգո՛յշ. ըզբանըս քո լըսէ նա.
 Զէ նա Աստուած հանգունատիպ կըռոյց քոց սին թարմա-
 [տար,
 Խոււլ, անըզգայ, համր և անշարժ, յոտից ձեռաց ապիկտր.
 Ոչ ոսկեձոյլ և կամ վիմարգ ըստ քիմըս ձեր կոփածոյ.
 Քրիստոնէից է նա Աստուած, նա և իմ է, նոյն և քո.
 Յերկինս ի վեր չէք այլ Աստուած և ոչ յերկիր ի խոնարհ:

ՊԱԻԼԻՆԷ

Երկիր գու պագ նըմա հոգւով, մի ի վերոյ ցոյց ինչ տար:

ՊՈԼԻԿՑՈՍ

Զի քրիստոնէայ՛ն և գիցապա՛շտ կամիս համայն թէ իցեմ:

ՊԱԻԼԻՆԷ

Կեղծեա առ ժամս՝ մինչև Սևեր քնասցէ աստի ասրագէժ,
 Եւ հօրն իմուժ լիցի պատե՛հ ըզգուժ ի քեզ ցուցանել:

ՊՈԼԻԿՑՈՍ

Ինձ ցանկալի է Աստուծոյն իմոյ գըթոյն հանգիպել,
 Որ կենցաղոյս զիս ի վտանգաց յափըշտակեալ ի վերոյ,
 Եւ ոչ թողեալ ինձ ժամանակ յեսա ընգ կըրուանին հայելոյ,
 Յասպարիզիս ի գլուխ կապէ ինձ գըթուժեամբ ըզպըսակ,
 Յանգորր ածեալ նաւահանգիսս ի նախկին շունչ աջողակ,
 Ըզնորածնեալս յաւազանէն յուղարկելով զիս ի մահ:
 Ո՛հ, Պաւլինէ, թէ գիտէիր զինչ կեանքս իցեն գիւրասահ,
 Եւ բարեբաղդ մահուս այս ո՞ր քաղցըր վայելք յաջորդեն...
 Այլ ծածկելոց գանձուց այս ճառք, աւանդ, ի զուրնոցին են,
 Զորոց չև ևս աստուածային շընորհ ըզսիրտսըն շարժեաց:

ՊԱԻԼԻՆԷ

Ո՛վ անողորմ գու, ժամ է արդ զի զկիրտանձին մերկացայց,
 Եւ ապաշնորհ սիրտ քո հարցի՛ ի կըշտամբանս իմ արգար:

Ա՛յս իցէ քո հարսանեկան սիրոյդ ինձ ցոյց զոր երգուար .
 Ա՛յս քո սըրտիդ գուժ կարեկիր զոր ցուցանես ինձ հիգիս .
 Լըռեցի ցարդ զոգորմ աղէտս յոր յուսահատ Թողուս զիս ,
 Կարծեալ Թէ շատ իսկ սէր ընդ իմ լիցի առ քեզ բարեխօս ,
 Որ զի և չեն իսկ ինձ հաճոյ աղապատանք բըռնազբօս :
 Այլ սէր անկեղծ , զոր խոստացար գու ինձ յաւերժ անյեղլի ,
 Եւ զոր կալայն ես միշտ առ քեզ ամրապահեսա ի սըրտի ,
 Իցէ Թէ գէթ ի լըքանելըդ զիս այսպէս առ ի մահ :
 Յօղեսցէ չիթ մի արտասուաց յոգւոց հանեալ ընդ իս , ան :
 Լըքանես զիս , ս՛վ ապաշնորհ , և գոհութեամբ լըքանես ,
 Ոչ ծածկեալ զայն , ըզխընդութիւն սըրտիդ ցուցեալ յայտ .
 [նապէս .

Անկարեկիր սիրտ քո իմոց դառն ալիտիցս ի կըսկիծ ,
 Երջանկութիւն ցնորէ անձին որում չիցեմ մասնակից :
 Տաղտո՛ւկ ուրեմըն հարսանիքըս մեր ածին քեզ յինէն .
 Հարսն ընծայեալ քեզ Պաւլինէ և ատեցա՛ւ նա ի քէն :

ՊՈԼԻԿՑՈՍ

Եզո՛ւկ :

ՊԱԻԼԻՆԷ

Քանի՛ գըժուարաշարժ բերին շըրթ ունքդ յայդ եզուկ .
 Այլ այդ Թէ սկիզբն էր շարժելոյ սըրտիդ գուշակ ի վըզ .
 [ձուկ ,
 Բըռնազբօսիկդ իսկ այդ քանի՛ քաղցր ինձ գոյին հառա .
 [չտնք : . . .
 Վա՛շ վա՛շ , յուզին գուժք իւր թհա , աչք ի յարտօսըր Թա .
 [նան :

ՊՈԼԻԿՑՈՍ

Թանան , այո , աչք իմ յարտօսր , և ո՛ այնց տայր զօրութիւն
 Զընգգիմամարտ խըստացելոյ սըրտիդ կակղէլ պընդութիւն :
 Ողորմ աղէտք յոր զքեզ Թողում են արտասուաց արժանիք ,
 Զոր կարեկից հոսէ գորով սիրոյն իմոյ հաւաստիք .
 Եւ Թէ երբեք մարթեն երկինք ցաւոց լինիլ ընգուանակ ,
 Լացից ես անդ , Լացից ըզքեզ ի յազիտիցդ յիշատակ :

Բայց յօթեանս անգ լուսաճեմ երանաւէտ խորանաց,
 Եթէ լուիցէ արդարադատ և բարերարն ինձ Աստուած,
 Թէ հաճեսցի ընդունել զուխտ հարսանեկան իմ սիրոյս,
 Ըզկուրութեանըդ քո խաւար փարատեսցէ յիւրն ի լոյս:
 Այո՛, ո՛վ Տէր, զայդ ի քումմէ բարութենէդ յուսամես,
 Ձի արժանի քրիստոնէի է ուղղութեանցն իւր հանգէս.
 Ձէ մարթ նըմա այսքան բարեօք գորով ի քէն ճոխացեալ,
 Ձըճանայել ըզքեզ, և ոչ զուրկ ի սիրոյ քումմէ կալ,
 Գերեալ յանլոյծ ի գլծոխոց սարիս ըստրուկ վառըւէր,
 Մընեալ ընդ խիստ նոցին լըծով և ի նըմին մեռանել:

ՊԱԻԼԻՆԷ

Ձմնչ բարբառիս, ո՛վ վատարախտ, և զինչ շըլթուհքդ ինձ
 [մազթեն:

ՊՈԼԻԿՏՈՍ

Ձոր բովանգակ արեանս ի գին ցանկամ առնուլ փոխարէն:

ՊԱԻԼԻՆԷ

Նա մանաւանդ...

ՊՈԼԻԿՏՈՍ

Մի վայրապար ըստահակիր գլծկամակ,
 Յեղակարծում շարժէ Աստուած ընկճեալ ըզսիրառս վայ-
 [բագ:

Ձև ևս իցէ երանաւէտ օրն այն և ժամ հասեալ արգ.
 Հասցէ անշուշտ, այլ երբ և ո՛ւր՝ գիտել այժմէն չէ ինձ մարթ:

ՊԱԻԼԻՆԷ

Թո՛ղ անդր ըզցնորս, և ցոյց ինձ սէր:

ՊՈԼԻԿՏՈՍ

Ըզքեզ սիրեմ էս, այո,
 Յոյժ քան զԱստուածն իմ ի ստորև, այլ յոյժ քան զիս ի
 [վերոյ:

ՊԱԻԼԻՆԷ

Երգմեկեցուցեալ ըզքեզ յայդ սէր, մի զիս անխնամ լըքա-
 [ներ:

ՊՈԼԻԿՑՈՍ

Ներգնեցուցեալ ըզքեզ յիմսէր, լիջեր ուղւոյս իմ ընկեր:

ՊԱԻԼԻՆԷ

Ո՛չ շատ իցէ թողուլ քո զիս, և կախարգէ՛լ իսկ հնարիս:

ՊՈԼԻԿՑՈՍ

Ոչ շատ է գնալ ինձ ի յերկինս, անձկամ լինել քեզ ընդ իս:

ՊԱԻԼԻՆԷ

Զառանցելո՛ց մըտաց ցընորք:

ՊՈԼԻԿՑՈՍ

Ճըշմարտութիւն երկնառատ:

ՊԱԻԼԻՆԷ

Ո՛վ կուրութիւն տարօրինակ:

ՊՈԼԻԿՑՈՍ

Յաւէրժ լուսոյն ճառագայթ:

ՊԱԻԼԻՆԷ

Ա՛յդպէս ուրեմն ընտրես ըզմահ քան զՊաւլինեայ գու ըզ-
[սէր:

ՊՈԼԻԿՑՈՍ

Ա՛յդպէս ապա սիրես զաշխարհ քան զբարութեանց գու
[ըզՏէր:

ՊԱԻԼԻՆԷ

Մ'ըթ, խըստասիրտ, ճեպեաց ի մահ, բնաւ իսկ գու զիս ոչ
[սիրես:

ՊՈԼԻԿՑՈՍ

Կաց բարեբաղչ գու ի յերկրի, և յանդորրու զիս թողցես:

ՊԱԻԼԻՆԷ

Թողից, այո, այժմ յանդորրու թողից ըզքեզ, հանդարտ
Ահա երթամ:
[լէր:

ԳՈՌՆԷՅԼ. Պալիքոս:

ՊԱՅԱՍԻԱՆԻ ՊՈԼԻԿՑՈՍԻ ԱՌ ԴԱՏԱԻՈՐՆ

Փելէոս, Պուլիբոս, Պաւլինէ, Զօրախոս

ՊՈԼԻԿՑՈՍ

Ըզմին միայն պաշտեմ ես Տէր՝ տիեզերաց արարող,
 Յորմէ սարսին երկինք, երկիր, սանգարամետք կան ի գող.
 Ըզմի Աստուած, որոյ սիրեալ ըզմեզ ի սէր անըսպառ՝
 Զանարգանաց մահ վասըն մեր ինքնայօժտար յանձն էառ.
 Եւ որ մեծի սիրոյն զեղման հրաշագործեալ յիշատակ՝
 Օր ըստ օրէ հաճի տալ զանձն ընդ մեր մեկաց պատարագ:
 Այլ ինձ զայնց մեղք են ձեզ ճառել, ոյց ոչ կարէք գող

[հասու:
 իսկ որպիսեաց, տեսէք, ցնորից կտլք գուք պաշտպանք զա-
 [չացու.

Ի զազրագործ ոճիրս անլուր նըշաւակէք ըզգիս ձեր.
 Պատուհասեալք ի ձէնը ոճիրք՝ յերկինս համայն ունին

[աէր.

Պոռնիկն և շուն, առևանգեալն և ազգապիղծ մըծղընեայն,
 Գողն, աւաղակ, և որ ինչ այլ ևս գարշելիքն են համայն,
 Յանմահ ի գիս ձեր նախատիպ ունին իւրեանց օրինակ.
 Զորոց մեհեանսըն պըղծեցի, զբագինս եգի հարժյատաակ,
 Որ թէ և այժմ ինձ առաջի կային՝ ըզնոյն առնէի
 Յայտ յանգիման քեզ Փիլիքսի, և յանգիման Սևերի,
 Եւ ծերակոյտ մեծ ատենին, դէմ յանգիման իսկ կայսեր:

ՓԵԼԻՊՍ

Արգար ցասման իմուժ ոչ ևս արդ ժուժեն կամք մարգա-
 Նոցին պաշտօն տար, կամ մեռիր:

[տէր.

ՊՈԼԻԿՑՈՍ

Քրիստոնեայ եմ:

ՓԵԼԻՊՍ

Անօրէն.

Քեզ ասեմ՝ դիցըն պագ երկիր, թէ ոչ՝ ընտրես մահ քեզէն:

ՊՈԼԻԿՑՈՍ

Քրիստոնեայ եմ:

ՓԵԼԻՔՍ

Քրիստոնեայ ես. ո՛վ խըստասիրտ գու յամառ: Օն, զօրականք, ածէք զառեայք յինէն հրաման ի կատար:

ՊԱԻԼՈՆԷ

Յո՞ղնա տանիք:

ՓԵԼԻՔՍ

Ի մահ:

ՊՈԼԻԿՑՈՍ

Ի փառս: Ո՛վ Պաւլինէ սիրելի, Ողամբ կացլիբ, և զյիշատակս անջինջ կացիս ի սրբոի:

ՊԱԻԼՈՆԷ

Սկից ընդ քեզ ուր և երթաս, և ի մահ իսկ՝ Թէ մեռցիս:

ՊՈԼԻԿՑՈՍ

Կաց, մի ընդ իս գար. և կամ Թող ի բաց ըզգիս քո սնոտիս:

ՓԵԼԻՔՍ

Առէք ըզտ յաչացս ի բաց, լքցցին հրամանք իմ ի գա. Զի ընդ կորուստ իւր կամեցաւ, գըտցէ զկորուստ իւր ապա:

ԳՈՐՆԵՅԼ. Պաւլիս:

ՄԱՂ ԿԻԻՋՄԱՆԱՑ

Աւարեղ, Զահր, Աւար, Աւնզա, Աւերիտայի, Սպանիտի

ԱՄՈՆՁՈՍ (առ Աւարեղ)

Առաջի քո բերեալ մատուցանեն զորգիդ հէք, Տէր, ի գիրկըս քո կամինա ի կենաց անցանել: Ժողովուրդն որ զնա սիրէր՝ մոլեգնոտեալ ամբոխիւ Շուրջ խըռնեալ ըզնովաւ, յարուցեալ գայ յագենալ Յարենէ հարսին իւրոյ և այրասպան խողշին:

Աւարեղ, Կիւղման, Մանդեղ, Զամբ, Ալլիբա,
Աւերիկայի, Զինար

ԶԱՄՈՐ

Փըրկեցէք, գուժք, զԱլլիբա, և ճեպ տուք յիմ պատուհասս:

ԱԼՋԻՐԱ

Մէ, այլ մահ սարսափելի զմեզ զերեսեան զուգեսցէ:

ԱԼՈՒԱՐԻՋ

Որդին իմ մեռանի, որդիս, ով ծայր աղետից:

ԶԱՄՈՐ (տա Կիւղման)

Որդ քեզ կամք են մինչ ի սպառ ըզմոլու(թիւնդ հանել յանդ,
Ե՛կ և տես զհեղուժն արեանս, մինչքեռ գու կետտ տակա-
Ե՛կ ուսիր մեռանել՝ նըկատելով ըզՋամոր: [Լին,

ԿԻԻԶՄԱՆ

Են են այլ արու(թիւնք՝ ուսուցանել ինձ ըզքեզ.
Զայլ իմն օրինակ պարտիմ ես քեզ, և տաց արդ:

(տա Աւարեղ)

Որ ըզմահ իմ կամի երկինք, և ցայժմ յապագեաց,
Հայր իմ, արդ ի ժամուս բերէ զիս քեզ զառաջեք:
Հողիս օրհասական և յանջատել յինէն մերձ,
Առաջի քո զտեղի առնու... լինել քեզ նման:
Մեռանիմ ես, առաքասան անկանի, նոր լոյս ծագէ.
Զանձն իմ ես ոչ ծանեայ՝ բայց ի վախճան ընթացիցս.
Մինչև ցայս ժամ որ զիսն իջուցանէ ի շիրիմ,
Մարդկու(թեան ետու հեծել գոռոզու(թեանս ընդ բեռամբ:
Վրէժ՝ առնուն երկինք զերկրիս. արդար է նա. և իմ կեանք
Ոչ կարեն հատուցանել զարիւնն յոր ձեռն իմ ներկաւ:
Կուրացոյց երջանկու(թիւն, լուսաւորեաց զիս արդ մահ:
Թողու(թիւն շնորհեմ ձեռինն՝ որով Աստուած զիս եհար:
Տէր էի ես ի անզուջս, ես գեռ ի սմա հրամայեմ,
Շնորհ առնել կարեմ ինձէն, և զայն առնեմ Զամորայ:
Կեանց յոխորտ (թըշնամի, ազատ լիջիր, և քեզ յու՛շ՝

Եթէ զինչ էին պարտք քրիստոնէի, և զինչ մահ :

(առ Մոսկէն ու յոս իւր անկանի)

Դու Մոնգէզ, ամերիկեանք, որ եղէքք իմ ողջակէզք
Յուշ անէք՝ զի գըթուլթիւնս անցոյց զանցոյց զյանցանօքս :
Ուսուցէք զԱմերիկա, դէք արքայիցն ի մըտի,
Թէ ծընեալ են քրիստոնեայք ի տալ օրէնըս նոցա :

(առ Ջամբ)

Ջատուծոյն՝ զոր մեք պաշտեմք՝ ի միտ առջիւր ըզխըտիր .
Քոյքըզ քեզ հրաման ետուն զըսպանուլթիւն և ըզվքեժ .
Իսկ իմս, յորժամ բազուկ քո գաւ երեր արևուս,
Հրամայէ արգահատել քեզ և զյանցանսըզ թողուլ :

ԱՆՈՒԱՐԻՁ

Ո՛հ որդեակ, քո լաւութիւնք հաւասարեն արութեանք :

ԱԼՋԻՐԱ

Աստուած մեծ, զինչ փոփոխուան և զինչ չըքնաղ այս բար-
[բառ :

ՋԱՄԱՐ

Ջինչ. կամիս գու ստիպել և զիս ինքնին ի զըզուան :

ԿԻԻՋՄԱՆ

Առաւել իմըն կամիմ. ստիպել ըզքեզ ի սէր իմ :
Ազգիրայ կեանք իւր եղեն թըշուառայեղց կարի յոյժ,
Թէ իմովս անգըթուլթեամբք, և թէ իմովս հարսանեօք .
Ըզնա ձեռքս օրհասականք տացեն անգրէն ի քո գիրկս :
Կեցլիք, մի զիս առեայք, խնամարկեցէք աշխարհիդ .
Ըզփառըս պարըսպացդ աւերակաց՝ կանգնեսլիք,
Ջանուան իմոյ՝ թէ հնար է՝ օրհնեցէք զխշատակ :

(առ Աւարեղ)

Հաճեաց՝ հայր լինել սոցա բարերաստիկ ամուսնացս,
Երկնաւոր լոյսըն խնամովք քով ի սոսա ծագեցէ .
Ի նըշոյլըս քրիստոսեան թէ բաց իցէ հոգի իւր,
Ջամոր քո է որդի, և կարկատէ զիմ խրամատ :

ՋԱՄՈՐ

Երկնտհար կամ անշարժ, վարանական, ծըփալի :

Իսկ արդ զինչ. իցե՞ն այսչափ ի քրիստոնեայս լաւութիւնք :
 Ո՛հ, օրէնք՝ որ զքեզ ի գոյն հարկեն յետին ճըգնութիւն,
 Սկըսանիմ հաւատալ թէ Աստուծոյ են օրէնք:
 Գիտեմ զինչ մըտերմութիւն է, պընդութիւն և հաւատ,
 Բայց այսքան մեծութիւն հոգւոյ՝ ի վեր է քան զիս,
 Լաւութիւնս այս զիս ճըգնէ, և ձըգէ զիս գեղ նորա:
 Ի վրիժուցս ամօթերես, սիրեմ ըզքեզ, հիանամ:
 (Ախնի յոգս նորա)

ԱԼՁԻՐԱ

Տէր ի Ծունկսրդ անկանիմ շառագունեալ ամօթով.
 Ալզիրա յայսրմ ժամու տենչայր ի մահ վասըն քո:
 Ի մէջ քո և Չամորայ՝ հոգիս յերկուս պատառեալ
 Անկանի յապաշաւ, յորոյ խայթից կեղէքի.
 Յանցաւոր զանձն իմ գառիմ, և սրխալանք իմ գըժնեայք...

ԿԻՒՋՄԱՆ

Ամենայն ինչ ձեզ քաւեալ, զի զարտասուսդ տկանեմ:
 Հայր իմ՝ զայս յետին նըւտգ՝ մտաիր առ իս մերձեցիր,
 Երջանիկ կեցցես յամայր, քեզ Ալզիրա սիրելի,
 Քրիստոնեայ լիջիր Չամոր. գոհ եմ արդ ես, մեռանիմ:

ԱՆՈՒԱՐԷՁ (ա- Մոնդէլ)

Տեսանեմ յաղէտըս մեր գրոշմեալ ըզմատն Աստուծոյ:
 Սիրա իմ յուսահաս հըպատակէ և թողու
 Չինքն ի կաման աստուածային՝ որ հարկանէ և ներէ:

ԿՈՒԴԷՌ. Աւետի:

ՄԱՀ ԻՐԾԷՆԳԱՐԴԱՅ ԱՐՁԱԿԵԼՈՅ ԿՆՈՋ ՄԵԾԻՆ ԿԱՐՈՂՈՍԻ

ԻՐԾԷՆԳԱՐԴԱ, յեղեւ յերկսս Օրիորդս, և ԱՆՍՐԵՐԳԱ

ԻՐԾԷՆԳԱՐԴԱ

Աստ ընդ Թըմբաւոյս հովանեաւ, աստ: (Ի խղճի լինի ի բազմոյն) Զիւրգ քաղցր է և անոյշ

Ճառագայթս այս գարնայնոյ. իբրը փարի զսաղարթուք: Այժմ իմանամ եթէ զիւրգ անձկով խընդրէ զարեգակն Այն որ ամօք ծանրաբեռնեալ ըզգայ զկենացըն փախուստ: (Աս Օրիորդս)

Շնորհ ունիմ ձեզ, որ նեցուկ լեալ կըթուցեալըս կողից, Օժանդակ եղէք ըզձից զոր ըզձացայ ես այսօր, Բողոքիլ միւսանգամ ևս ազաա օգովքս այս Մեղայ Զոր նախ շընչեցիս. և ՚նդ երկնիւքս իմ նըստել ինձ, Եւ տեսանել զայն բովանդակ՝ ցոր վայր և աչք նըշմարեն: — Ո՛վ քաղցըր քոյր, ո՛վ տիրանուէր մայր, ո՛վ գըթած Անսրերգա, (Կարկառէ զյեռն առ նա. օրիորդս Քիլի. Բազմ Անբերգա):

— Հոգոց քոց և իմ վըշտաց ահա մերձեալ է վախճան: Ո՛հ, չափով բաշխէ Տէր զայնս. ըզգամ հանգիստ իմըն խոնջ Կարապետ գերեզմանի. մանկուԹիւնս այս իմ ընկճեալ Ոչ ևս այլ պատերազմի ընդգէմ ժամուն Աստուծոյ. Եւ մեղմով քաղցրաբար, առաւել քան ըզկարծիս՝ Հինօրեայ ի ցաւս հոգիս՝ ի կապանաց զերծանի: Զյետին հայցեմ այժմ ի քէն շնորհս, միտ գիր բանիցըս [Կարևոր,

Լուր զուխաս ի մահ մերձեցելոյս, պահեա զնոսա ի սըրտի, Եւ սուրբ հասո յաւուր միում որոց յերկրի Թողում ես: — Մի խռովիր, ո՛վ սիրելի. մի հայր յիս այգալէս վըհատ: Զիմանան, զի այս գուԹ Տեսառն է: Կամէիր Թողուլ զիս Երկրի՛ մինչ յօրն յորում վերայ յարձակեսցին Բրեշխայ,

Մինչև ռուս ռք այգպիտի հասեալ գայցէ մերձեցի՞.
 Զի կալցի՞ նա զիս ասանէ յայս անպատու մ չարչարանս :

ԱՆՍՐԱՅԻՆ

Սիրելի չըւառական, մի զանգիտեր. տակաւին
 Դեռ հեռի են զէնք ի մէնջ. նգգէ՞մ վերոնայ և Պաւխայ,
 Արքայից և մարդկան հաւաարմաց ապաստանին,
 Ամբարիշտան ի գործ վարէ զամենայն զիւր զօրութիւնս,
 Այլ ակն ունի՞մ ի Տէր Աստուած զի նկուն եղիցի:
 Քեռորդին մեր ազնուական քաջայանդուզըն Բաւգոս,
 Անսվալ սուրբ եպիսկոպոսն, ըզպարսպօքս այսօքիւք՝
 Խըմբեցին զպատերազմողքս Բենակեայ և զձորոց.
 Եւ անյողգողքք կան գօտէպինդք մինչև ցըմհապաշտպանել:
 Վերոնա և Պաւխա եթէ անկցին կործանեալք,
 (Մի առներ, Տէր), նոր երկար կըսիւ... .

ԵՐՄԵՆԳԱՐԴԱ

Ես ոչ տեսից զայն .

Յերկրաւոր սիրոյ քակեալ և յամենայն երկիւղէ,
 Մեկուսի գըտայց ես ի գըժընդակ այգմ յուսոյ.
 Վասն հօր իմոյ ազօթեցից, վասն Արեւքեայ սիրելւոյն,
 Վասն քո, վասն այնոցիկ որոց նեղինն և նեղեն,
 Վասն բնաւից: — Միտ գիր արգ յօժարութեան իմ վերջին:
 Անսբերգա, հօրս և եղբօր, յորժամ տեսցես ըզնոսին, —
 Ո՛հ, ձեզ մի լիցի զըրկիւ ի բերկրանացս յայսցանէ, —
 Ասացես, եթէ մերձեալ ի հուսկ կենաց կատարած,
 Ի կէտն՝ յոր ամենայն ինչ անկան՝ ի մոռացօնս,
 Պահեցի քաղցր և հաճոյ ըզլիշատակ աւուրն այն՝
 Մարդասէր գործոյն, յորժամ առ գողգողունս և տարաամս
 Զկորովի և զգըթալիւր կարկառեցին ձեռս առ իս,
 Եւ զբարձի թողի եզեալքս ոչ յամօթ արարին.
 Ասացես, եթէ ազօթք իմ ամբարձան ջերմ, անդուլ,
 Առ աթոռ Տեառն Աստուծոյ՝ վասն յազթութեանըն նոցին.
 Եւ թէ նա ոչ լըւիցէ, մեծ իմն անշուշտ կայ խորհուրդ
 Խորագոյն ևս գըթութեան. և զ՝ ի մահուան անդ իմում
 Օրհնեցի զնոսին: — Ապա, քոյր... . ո՛հ, ինձ մի զլանար

[զայս... .

Գիտ զայր ոք հաւատարիմ, որ երբ կամ ուր և իցէ,
Աւ ահեղն այն թըշնամի ազգիս մերձեալ...

ԱՆՍՐԵՐԳԱ

Աւ կարճս:

ԻՐԾԷՆԳԱՐԳԱ

Դու ինքն ըզնա անուանեցեր, և ասասցէ նրմա զայս.
Անցանէ Էրմէնգարգա առանց քինու ինչ վրիժուց,
Եւ ոչ ինչ ի յերկրի ատելութեան թողու խէթ.
Եւ թախանձէ ըզՏէր յազագըս սակաւուն զոր կըրեաց,
Եւ յուսայ՝ եթէ ոչ պահանջեսցի ինչ համար,
Զ' ի ձեռաց անտի նորին նա զամենայն ընկալաւ:
Զայս նըմին ասասցէ, և... թէ ոչ կարի գառնալուր
Ունկանըն խըստամբակ հասանիցէ բարբառս այս... [զայս:
Թէ՛ թողութիւն նըմին շնորհմ: — Խոստանայցեն տանել

ԱՆՍՐԵՐԳԱ

Զվերջին զիմ բանս երկինք կալցին, որպէս ինձ սուրբ են
[բոլոր այդ:

ԻՐԾԷՆԳԱՐԳԱ

Սիրելիք, և վասն այլոյ իրիք ըզքեզ աղերսեմ. [նեաւ,
Մարմնոյս այսմ՝ որում խընամ տարեր գըթող այսքա-
Մինչ գոյր ի սմա շունչ կենդանի, քեզ մ'ի սոսկումըն
[լիցի

Եւ զյետին տանել խընամ. ամիոպեա զայն յանգորրու:
Մատանիս այս զոր ի մատն իմ յահեկի տեսանեսս,
Ի սափոր ընդ իւր մըտցէ. առ սեղանոմն ինձ առաւ այն
Յանդիման Աստուծոյ: Անշուք լիցի սափորն իմ. —
Փոշի եմք ամենքին. ես ին իւրիք պարծեցայց. —
Այլ սակայն կըրեսցէ նա զօրէնս պատուոյ գըշխոյի.
Կապ մի սուրբ զիս գըշխոյ արար, և քաջ իսկ գիտես,
Զի զպարզեւս Աստուծոյ ոչ ոք կապտել կարասցէ.
Որպէս կեանք, նոյն և մահ պարտի այդմիկ վըկայել:

ԱՆՍԲԵՐԳԱ

Ո՛հ, ի բայ տար ի քէն զցաւագին զայդ յիշատակս .
 — Հան ի գլուխ ըզզոհըն . լուր . տեղւոյս այսմիկ ապաւինի
 Յոր Աստուած էած ըզքեզ պանդուխտ, լեր արդ քաղաքացի :
 Եւ ք՛ եզիցի յայսմ հետէ քոյին հանգըստեան տուն :
 Ըզքեցի՛ր ըզսուրբ սըքեմն , և ընդ նըմին ըզհոգին ,
 Եւ մոռա՛ ըզմարդկեզէնըո ամենայն :

ԷՐՄԵՆԳԱՐԳԱ

Անսրերգա ,

Զինչ գրնես առաջի իմ, զի ստեցի՛ց ես առ Տէր :
 Զմըտաւ ած զի յանդիման եզէց նըմա հարսնօրէն .
 Հարսն անապական , սակայն մարդոյ մահացուի :
 — Երանի՛ ձեզ , երանի՛ ամենեցուն , որք ըզսիրտ
 Մատուցին արքայից արքային զերծ ի հոգոց ,
 Եւ ըզքօղըն նուիրական զաչօք իւրեանց իջուցին ,
 Մինչք և յառեալ յերես մարդոյ : — Այլոց եմես :

ԱՆՍԲԵՐԳԱ

Իցիւ չէիք :

ԷՐՄԵՆԳԱՐԳԱ

Ո՛հ, մի այգպէս . ըզլուսիզն՝ յոր կացուցին զմեզ երկինք ,
 Հատանել հարկ է ողջամբ , որ զի և է , մինչ ի սպառ :
 — Եւ եթէ ի գոյժ մահուան իմոյ նորոգ իմըն խորհուրդ .
 Ստըրջանաց և գըթութեան յորգորեսցին ի սիրտն այն .
 Թէ զըզմամբ ինչ անագան , այլ տակաւին քաղցուենի ,
 Ըզնըլիարքըզ ցըրտագին խընդրեսցէ՛ նա իբրև իւր
 Արքունի շիրմին ի գիր : Նընջեցեալք , մի Անսրերգա ,
 Է զի զօրեզագոյնք քան զկենդանիս գըտանին :

ԱՆՍԲԵՐԳԱ

Ո՛հ, նա զայդ ոչ արասցէ :

ԷՐՄԵՆԳԱՐԳԱ

Դո՛ւ բարութեան Այնորիկ ,

Դո՛ւ , մի ազնըւագութ , արկանես ստնձ անարգու ,

Որ յուզէ ըզսիրտ մարդոյ, որ ախորժէ, զի իւր շնորհք
ի գարման նախատանացն, այն որ արար, եկեացէ:

ԱՆՍԲԵՐԳԱ

Ոչ, Թըշուառ դու, նա ոչ արասցէ զայդ: — Ոչ կարէ:

ԷՐՄԷՆԳԱՐԴԱ

Զիա՞րդ. առ իմէ՞ ոչ կարիցէ:

ԱՆՍԲԵՐԳԱ

Սիրունդ իմ,

Մի հարցաներ անգրագոյն և ըս, մոռացքի:

ԷՐՄԷՆԳԱՐԴԱ

Օ՞ն խօսեաց.

Մի այսու երկբայուծեամբ զիս ի տապան առաքեր:

ԱՆՍԲԵՐԳԱ

Ո՛հ, զեզեռն իւր ամպարիշտն ի գլուխ եհան:

ԷՐՄԷՆԳԱՐԴԱ

Ասա՛, զի՞նչ:

ԱՆՍԲԵՐԳԱ

Մերժեա ի սըրտէ քու մմէ բնաւին զնա ի բաց:
Յանցեալ նա վերջստին նոր անօրէն հարսանեօք.
Անամօթն ի մարդկանէ և յԱստուծոյ՝ ակն յայտնի,
Զօրէն յաղթանակի, ածեալ ձըգէ յիւր բանակ
Զիւրըն զայն իլգէգարգէ... (Էրմէնգարդա նուաղի)

Դու աըժգուննիս, էրմէնգարգ.

Ո՛չ լըսես ինձ: Ո՛վ երկինք. փուլթացարո՛ւք, քորք, ընթա-
Ո՛հ, զի՞նչ արարի: (Մփանէն եբիո՝ օբիւրդոն և այլոք) [ցէք:
Ո՛հ, ո՞նքմին օգնեացէ:

Տեսանէք. ցաւն իւր առնէ զնա կըստամահ:

ԱՌԱՋԻՆ ՔՈՅՐ

Զօրացիք.

Շընչէ նա:

ԵՐԿՐՈՐԴ ՔՈՑՐ

Ո՛վ եղկելի, յայդըմ ախոց հաստակի,
Յայնպիսի անզուղ ծընեալ, և այսգունանկ չարչարել:

ՕՐԻՈՐԴ ՈՄՆ

Ո՛վ տիկինդ իմ անուշակ,

ԱՌԱՋԻՆ ՔՈՑՐ

Ահա բանայ զաչս ի լոյս:

ԱՆՍՐԵՐԳԱ

Որպիսի հայեցուածք: Ո՛վ երկինք, զի՞նչ լինիցի:

ԵՐՄԵՆԳԱՐԴԱ (ի ցևոյս)

Ի բաց վրտարեցէք զկինըն զայն, ո՛վ զինակիրք:

Ո՛հ, ո՛չ տեսանէք իբր համարձակ յառաջէ.

Եւ զարքային ձեռս հընարի ունել:

ԱՆՍՐԵՐԳԱ

ՍԹափեաց. ո՛վ Աստուած.

Մի խօսիր այսպէս, զգաստացիր. Թո՛ղ անդր ի բաց ըզը.

Կարգած զանունըն սուրբ:

[նորոգ.]

ԵՐՄԵՆԳԱՐԴԱ

Կարողոս, մի Թողուր զայդ.

Ահաւոր տիգօք աչսոց քոց ի վերայ նորին խաղա,

Եւ իսկոյն փախնուցու. ես ինքնին, ես հարսըն քո,

Եւ ոչ ի խորհուրդս իսկ մըտաց երբէք մեղապարտ,

Ոչ կարեմ նըմարել առանց բնաւին խռովելոյ: ... —

Ո՛վ երկինք, զի՞նչ տեսանեմ: դու ինքն առ նա ծիծաղե՛ս:

Ա՛խ, մի, գադարեա՛ յանապորոյն կատակէգ.

Տագնապէ սանջէ զիս, ոչ հանդուրժեմ ես այդմիկ: —

Մարթ է քեզ, ո՛վ Կարողոս, մեռուցանել զիս ցաւովք.

Այլ զի՞նչ քեզ անտի փառք. ցաւեսցէ այդ երբեմն և քեզ.

— Սոսկալի է սէր իմ, դու տակաւին ոչ գիտես:

Ո՛հ, դեռ քեզ ոչ յայտնեցի զամենայն. դու իմ էիր.

Անվըրդով յուրախուլութեան իմում ես լուռ և եթ կայի.

Եւ համբուն ոչ ժրտէին պարկեշտ շքութունքս այս ասել
 Զանխուլ որբաին իմոյ զարբեցութիւն բովանդակ: [քեզ,
 — Աղաչեմ, հալածեա՛ զգա. տե՛ս, երկընչիմ ի նմանէ
 Իբր յօձէ իմէքէ, սպանանեն զիս այք գորա:
 Միայն եմ ես և տըկար. չիցեն միակ իմ գու մտերիմ:
 Եթէ եղէ քո, եթէ հաս ինչ ինչ քեզ քաղցրութիւն,
 Ո՛հ, մի զիս ստիպեր այսպէս մատուցանել աղաչանս
 Առաջի ամբոխիս այս որ զինև ծաղբ առնէ...
 Ո՛վ երկինք. նա խոյս տայ ի բազուկս իւր... մեռանիմ ես:...

ԱՆՍԲԵՐԳԱ

Ո՛հ, և ընդ քեզ ինձ մեռանել տացես:

ԵՐՄԵՆԳԱՐԴԱ

Ո՛ւր է Բերտրագա.

Ըզքաղցրիկն այն զգըթալիրն ես կամիմ Բերտրագա:
 Ասա՛ ինձ. գիտիցեն զայդ գու զոր ես նախընտեսի,
 Զոր նախկին սիրեցի ես յայսըմ տանէս, գիտիցեն զայդ:
 Ընդ թըշուառս ընդ իս խօսեանց. ատեամ ըզձայն բարբառոյ
 Ամենայն մահկանացուի. այլ ի տեսիլ քոց դիմաց,
 Այլ ի բազուկըս քո գըթածըս ես ոգի կըլանեմ,
 Խընդութիւն իմըն գառըն որ սիրոյ նըմանէ:
 Թող ինձ ընդ քեզ հայել, թող ինձ նըստել մերձ առ քեզ.
 Կարի պարտասեալ եմ. առընթեր քո կամիմ կալ.
 Կամիմ թանդուզել զերեսս ի գիրկըս քոյին
 Եւ հեզուլ արտասուս. ընդ քիզ կարեմ արտասուել:
 Ա՛խ, մի մեկնիր. խոստացիր ինձ չբխուսափել առ յինէն,
 Մինչև ես արտասուօքս իմովք ելից արբեցեալ:
 Ո՛հ, չըմնայ քեզ համբերել ընդ երկար. զիս շատ սիրեցեր:
 Ո՛հ, քանիս ի միասին աւուրըս զուարթս անցուցաք.
 Յիշիցեն գու. ընդ լերինս անցաք ընդ գետս և նդ անտառս.
 Եւ աճէր առ ամենայն այդ ցընծութիւն արթնութեանս:
 Ո՛հ աւուրք, ո՛հ, մի՛, խօսիր ըզնոցանէ՛ պերսեմ:
 Գիտեն երկինք՝ եթէ ըզսիրտ մահկանացուի կարծէի
 Եթէ այնքան բերկրութիւն և այնքան վիշաղս տանիցի:
 Արտասուեն գու ընդ իս: Ո՛հ, ըսփոփե՛լ զիս կամիս.

Կարգած զիս գուսաւոր քո . ի յայս անուն ըզգամ ես
Նեղութեանց իմոց լըրումն , որ ըզսիրտ իմ ողողէ ,
Եւ արկանէ ի մոռացոնս : (Վէրսփին անխնի)

ԱՆՍԲԵՐԳԱ

Մեռանէ՛ր նա խաղաղիկ :

ԵՐՄԵՆԳԱՐԳԱ (ի ցնորս)

Իցի՛ւ թէ էր երազ , և այգ ցընդէր զայն իրրև մէգ .
Եւ ես զարթնուի արաստուածութում , վըշտագին ,
Եւ զպատճառն այնորիկ հարցանէր զիս Կարողոս ,
Եւ իբրու գող թերահաւատ զիս ժըպտելով կըշտամբէր :
(Անխնի ի Բմբուսիտ)

ԱՆՍԲԵՐԳԱ

Տիրուհի երկնից , հատ ի յօգնութիւն թախծելոյս :

ԱՌԱՋԻՆ ԳՈՅՐ

Ո՛հ , տես , անգորրութիւն գառնայ ի գէմըս նորին .
Ոչ ևս այլ ընդ ձեռամբ սիրտ իւր տրոփեալ գողգողէ :

ԱՆՍԲԵՐԳԱ

Էրմէնգարգած , էրմէնգարգած , քոյր :

ԵՐՄԵՆԳԱՐԳԱ (ի Տիտ ելիտ)

Ո՞ է որ զիս կողէ :

ԱՆՍԲԵՐԳԱ

Հայեսցց յիս . ես եմ Անարերգա . օրիորդք քո կան զքև շուրջ .
Ազնուագուծ քորք , որ վասըն քո խաղաղութեան ազօթեն :

ԵՐՄԵՆԳԱՐԳԱ

Օրհնեսցէ ըզձեզ երկինք : — Ո՛հ , արգարև , են գոքս
Երեսք խաղաղութեան և մըտերիմըն սիրոյ :
Ձարթնում յահեզ երազոյ :

ԱՆՍԲԵՐԳԱ

Ա՛յ հէք . խուղալից անգորրութիւնգ

Աշխատութիւն առաւել քան թէ հանգիստ քեզ երեր:

ԵՐՄԵՆԳԱՐԴԱ

Ստոյգ, նուազեալ է բնաւին շունչ. կանգնեալ զիս, ո՛վ սի-
[րելի,

ի մահի՞՞ն իմ մըտերիմ ածէք զիս դուք, ո՛վ բարեմոյնք.

Յետին է այս վաստակ աշխատութեան զոր տամ ձեզ,

Այլ թըւեալ է ամենայն յերկինս: — Մեռցուք յանգոր-
[րու.

Խօսեցար ո՛ւրք ինձ զԱստուծոյ, որ ահա զգամ զի հասեալ
[գայ:

ՄԱՆՑՈՆԻ. Արեւի:



ՅԱՆԿ

ԲԱՆԱՍՏԵՂԵՈՒԹԻՒՆ

Պատուէրք առ այս	Էջ 1
Յաղագս քերթողական արուեստի	4

ԱՌԱԿՔ

Գայլ և Գառն	12
Շուն պատրեալ	—
Քաղաքացի մուկն և գաշտեցի	13
Գառն և Իժնիկ	14
Գայլ և Հովիւ	15
Աղուէս և Արագիւ	—
Էջ և Առիւծ որսորդք	16
Գայլ և Կառննկն	—
Հպարտն ճայ և Սիրամարգ	17
Շուն և Գայլ	18
Սարգն և Միծառն	19
Սիրամարգ և Հերա	—
Կնտակք և Սանգր	21
Էջ և Սոխակ	—
Գորոք 'ի խնդիր Թագաւորի	22
Երաժիշտք	23
Փիղ և Շնիկ	24
Եղջերու և Արջառք	25
Կռիւ Շանց ընդ Կատուաց և Կատուացն ընդ Մկանց	26

ՀՈՎՈՒՆԵՐԳԱԿԱՆՔ

Դրուատ շինական կենաց	29
Մելիբեոս և Տիտիբոս	32
Գարուն	35
Եղբերու յափշտակեալ	37
Այգեկուծ	38
Երմինեայ ապաստանելն 'ի մայրիս	40
Մայրևորն	45

ՔՆԱՐՆԵՐԳԱԿԱՆՔ

Աւաւտու աղօթք 'ի Դրախտին	49
Մնունդ Տեան	51
Պենակոսակ	55
Աւ լոյսն	59
Թշուառութիւն մարդկան	61
Խորհուրդք յառանձնութեան	63
Կանթեղ գիշերի	64
Գերդաստան	68
Յիշատակ մանկութեան	69
Մանուկ յորրանի	71
Աղօթք մանկան զարթուցելոյ	73
Ագար յանապատի	75
Լուգովիկոս ծէ	79
Պոլիկոս 'ի բանտի	83
Դաւիթ երգէ զյաղթանակ և զհանդիսս Սաւուղայ	84
Պարք դստերաց ցեղին Ղևեայ 'ի տաճարին	88
Երգ աղքատի	96
Կին նաւավարին	97
Աւ լոսին	98
Ի կոտորած մանկանցն Բեթլեհեմի	99
Ջանգալ	100

ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆՔ

Նկարագիր Դրախտին	105
Ագամ և Եւա 'ի Դրախտին	110
Ստեղծումն Թուշոց և չորքոտանեաց	111
Նկարագիր վահանին Աբիլեայ	115
Կառարշաւ	120

Հանգէս յուզարկաւորութեան Պատրոկլէ	125
Տեսիլ Գոթողիայ	129
Գերեզմանք հանձարեղացն յԽտալիա	132
Յլամարա 'ի Սպանիա	134
Վաճառականն Վենետիկ	137
Գեանադամբանք	139
Բրգունք Եգիպտոսի	140
Գիւղն ամայի	141
Հրգեհ	145
Կատարած գեղազարդ աւուր գարնայնոյ	147
Մնունդք Գեաոց	148
Ովկէան	150
Մով	151
Մոց Պայեայ	153
Մանիշակ	155
Ձի	156
Օձ և Վիշապ	157
Պօս օձ	158
Գեանափոր դամբարանաց սրահ 'ի Սիկիլիա	—
Ամարասաունք 'ի Բրիտանիա	159

Պ ԱՅՄԱԿԱՆՔ

Աղամ պատմէ զստեղծումն իւր	162
Արտաբսուճն նախածնողացն 'ի Դրախտէն	167
Մահ Աբելի	169
Հեկտորի և Անդրոմաքեայ հանգիպումն և բանք	171
Հեկտորի ընդ Աբելեայ պատահումն և մահ	174
Կռիւ զմարմնովն Կերրիոնի և մահ Պատրոկլէ	182
Մահ Իպպոլիտայ	185
Մահ Սոկրատայ	187
Ոգիսեւս ընդ Կիկլոպայս	199
Աբիմեկիդէս 'ի ծովափունս Կիկլոպայց	209
Սկիլլա և Քարիբդէս	213
Նիսոս և Եւրիալ	217
Մենամարա Հերակլեայ ընդ Կակոսի	226
Վերջին ճակատամարտ Միհրդատայ ընդդէմ Հաով մայեցւոց	229
Արծիւն հաովմէական	232
Մենամարտութիւն Տանկրեգեայ ընդ Կլորինգայ	235
Մահ Իլքեգոնգայ	240

Կոմսն Ուգոլին	Էջք
Պննարարգ	246
	249

ԲԱՐՈՅԱԿԱՆՔ

Աստուած	255
Մանթուութիւն Աստուծոյ 'ի բնութենէ	260
Քաղաքար Աստուծոյ առ ամենայն ազգս	262
Մարգ	264
Հաւաք	266
Անմահութիւն	270
Անմահութիւն	274
Անմահութիւն հոգւոյ	276
Ազատութիւն, Ճշմարտութիւն, Սէր	282
Աղօթք հասարակաց	283
Մաղթանք երեկորին	288
Խաչ	290
Հրաշագործութիւնք Քրիստոսի	293
Ի չարչարանս Քրիստոսի	296
Յետին գառաստան	299
Բարեբանութիւն և աղերս առ Ս. Կոյսն	302
Մաղթանք առ Ս. Կոյսն	306
Վասն աղքատաց	308
Լուսինեան աղաչէ զգուստրն գառնալ 'ի հաւատս քրիստոնէութեան	310
Բոյնք թռչնոց	311
Ժըժմակ, Մըլիմն, Թիթեռն	313

ԵՂԵՐԵՐԳԱԿԱՆՔ

Ողբ նախածնողացն զկնի յանցմանն առաջնոյ	315
Ողբ ընտանեացն ընդ մահ Հեկտորի	322
Ողբ Էլեկարայ 'ի վերայ եգբօրն	326
Նարգէս	328
Գեթսեմանի կամ Մահ Յուլիայ	335
Նուագ զըջական 'ի ժամ մահուն	340
Օր մեռելոց	341
Ի զանդակն յօր մեռելոց	342
Բարեաւ մնայք	343
Նոր տարի է	—
Որբ մանկունք	345

Դոուսարն (Թշուառ	346
Մահ կաղնւոյ	348
Տերևն անտառի	351
Անկուսն տերևոց	—
Նոյեմբեր	353
Առ ծիծառն երգ բանտարկելոյ	—
Առ թիթեռնիկն երգ բանտարկելոյ	355
Ողբ Եւայի յարաաքսին 'ի Դրախտէն	357

ԱՅԼԱՐԱՆԱԿԱՆՔ

Դարձ Սագայելի առ իւրան և այլափոխիլ ամենեցուն նոցա յօձ	358
Բարապանք դժոխոց	363
Արձանագիր դրանցն դժոխոց	366
Քարոն	—
Ելք Եւրիգիկեայ 'ի դժոխոց	368
Դեղալոս	370
Մրցումն Աբիլլեայ ընդ Սկամանդրի	372
Արկածք Նիովբեայ	378
Լայոկոմն	384
Սղերսք	385
Համբաւ	386

ՔԱՏԵՐԱԿԱՆՔ

Հրաժեշտ Սառայ յԻսահակայ	387
Յովսէփ յայտնէ զանձն եղբարց իւրոց	389
Որեստէս յայտնէ զանձն Էլեկտրայ քեռ իւրում	394
Տեսու(թիւն Ադամնոննի ընդ դստերն	401
Իփիգենի անձնանուէր 'ի զոհ	404
Մահ Եւրիգիկեայ և ողբք Կրէոմնի	406
Հերակլէս մոլեղին	412
Յայտնութիւն Կեսիրայ դստեր Արիստոգեմի	515
Մինրդաա յայտնէ որդւոցն զԷորհուրդ իւր արշաւելոյ 'ի Հոռովմ	421
Ագրիպպինայ գանգատանք և Բոուոսի պաշտպանութիւն զընթացից Նիրոնի	424
Բոուոս Զանայ փոխել զՆերոն 'ի խորհրդոյ սպանութեան Բրիտանիկեայ	430
Մահ Աբիմեղեայ	434

	Եջ
Սաւուզ խոովեալ	439
Զրուցատրուծիւն Գոթողեայ ընդ Յովատու	441
Մարգարէութիւնք Յովեգայեայ քահանայապետի	449
Մահ Գոթողեայ	453
Պղեկասոսի խրախոյս 'ի մահ 'ի վերայ քրիստոսահան հաւատոց	457
Զրուցատրուծիւն Պղեկասոսի ընդ Պաւլինեայ 'ի բանտի	461
Պատասխանի Պղեկասոսի առ գատաւորն	468
Մահ Կիւղմանայ	469
Մահ Էրմէնգարգայ	473

This book should be returned to
the Library on or before the last date
stamped below.

A fine is incurred by retaining it
beyond the specified time.

Please return promptly.

